Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ ***http://www.armin.am***

էլ. փոստ՝ ***info@armin.am***

ԱՆՏՈՆ ՔՈՉԻՆՅԱՆ

ԱՆԱՎԱՐՏ ՀՈՒՇԵՐ

Կազմ. և խմբ.՝ Վլադիմիր Պետրոսյան

ՀԵՂԻՆԱԿԱՑԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ - 2008

ՀՏԴ 941 (479,25) : 342,5 (479,25)
ԳՄԴ 63,3 (2Հ) + 67.99 (2Հ)
Ք 824

Կազմեց և խմբագրեց
պատմական գիտությունների դոկտոր
Վլադիմիր Պետրոսյանը

Քոչինյան Անտոն Երվանդի
Ք 824 Անավարտ հուշեր /Կազմող և խմբագիր Վ. Պետրոսյան: - Եր.: Հեղինակային հրատարակություն, 2008 թ., 552 + 56 էջ ներդիր:

Գիրքը պարունակում է Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի առաջին քարտուղար Անտոն Քոչինյանի հուշերը: Հասցեագրված է Սովետական Հայաստանի պատմությամբ հետաքրքրվող ընթերցողներին:

ԳՄԴ 63,3 (2Հ) + 67.99 (2Հ)

ISBN 978-9939-53-218-9

© Վ. Պետրոսյան, 2008 թ.

ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ

Ընթերցող հասարակայնության ուշադրությանն է հանձնվում Անտոն Երվանդի Քոչինյանի «Անավարտ հուշեր» գիրքը:

Ավագ և միջին սերնդի մարդիկ հիշում են Անտոն Քոչինյանին, եղել են նրա ժամանակակիցը, շատ անգամ են տեսել ու լսել նրան: Նա մի քանի տասնամյակ եղել է Սովետական Հայաստանի ղեկավարության կազմում, աշխատել է հանրապետության կառավարության նախագահ, ընտրվել է Հայաստանի Կոմունիստական կուսակցության Կենտկոմի առաջին քարտուղար: Այդ տասնամյակներն ընդգրկում են 1939-1974 թվականները, շուրջ 35 տարի:

Եթե մտովի պատկերացնենք այդ ժամանակաշրջանը, ապա պետք է նկատի ունենալ 1937 թվականին հաջորդած տարիները, Հայրենական մեծ պատերազմը, 1949 թվականը և դրանց հաջորդած Սովետական Հայաստանի վերելքի ընթացքը:

Ահա այս հանգամանքն էլ նկատի ունենալով, անհրաժեշտ եմ համարում ընթերցողին համառոտ ներկայացնել Անտոն Քոչինյանի կենսագրությունը:

Անտոն Երվանդի Քոչինյանը ծնվել է 1913 թ. հոկտեմբերի 25-ին Երևանի Նահանգի Ղարաքիլիսայի գավառի Շահալի

(այժմ Լոռու մարզի Վահագնի) գյուղում հողագործ գյուղացու ընտանիքում: Նրա հայրը հողագործության հետ միասին մինչև 1917 թվականը բանվորություն է արել նաև երկաթուղում և Ալավերդու պղնձաձուլարանում:

Անտոն Քոչինյանը նախնական կրթությունը ստացել է հայրենի գյուղի դպրոցում, իսկ 1931 թ. ավարտում է գյուղական կոլերիտ դպրոցը: Նա 1928 թ. ընդունվում է կոմերիտմիության շարքերը և երկու տարի աշխատում իրենց գյուղի կոլտնտեսությունում: 1931 թ. նա աշխատանքի է անցնում կոմերիտմիության Ղարաքիլիսայի շրջկոմում: Այդ թվականին էլ Ա. Քոչինյանն ընդունվում է կոմկուսի շարքերը:

1932 թ. ուսումը շարունակելու ձգտումը պատանի Անտոնին տանում է Թիֆլիս, որտեղ ընդունվում է Ներսիսյան դպրոցի հիման վրա ստեղծված հայկական մանկավարժական տեխնիկում: Այստեղ Անտոնը սովորում է մեկ տարի, որից հետո վերադառնում է հայրենի գյուղ և աշխատում կոլտնտեսությունում:

1933 թ. աշխատանքում աչքի ընկած Անտոնին Ղարաքիլիսայի կուսշրջկոմը գործուղում է սովորելու Երևանի կոմունիստական բարձրագույն գյուղատնտեսական համալսարան, որն ավարտում է գերազանց գնահատականներով:

1935 թ. Ա. Քոչինյանը նշանակվում է Շամշադինի շրջանի «Շամշադինի կոլխոզնիկ» թերթի պատասխանատու քարտուղար, որից հետո առաջ է քաշվում և նշանակվում Ազիզբեկովի շրջանի «Ստալինյան ուղիով» թերթի խմբագիր: Մամուլի ասպարեզում աշխատելու տարիներն Ա. Քոչինյանի համար եղան արգասաբեր: Նա հնարավորություն ստացավ ոչ միայն մոտիկից ծանոթանալ գյուղի խնդիրներին, այլև հաղորդակից լինել մարդկանց հոգսերին, օգնել ու աջակցել նրանց:

1937 թ. Ա. Քոչինյանն ընտրվում է Ազիզբեկովի կոմերիտմիության շրջկոմի քարտուղար:

1939 թ. Ա. Քոչինյանն ընտրվում է ՀԼԿԵՄ կենտկոմի կադրերի գծով քարտուղար, ապա կենտկոմի առաջին քարտուղար:

Երբ սկսվեց Հայրենական մեծ պատերազմը, Ա. Քոչինյանը ներկայացրեց կամավոր ռազմաճակատ մեկնելու դիմում: Սակայն ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Գրիգոր Հարությունյանը մերժում է և Ա. Քոչինյանին առաջադրում է Երևանի Կիրովյան կուսշրջկոմի առաջին քարտուղար: 1943 թ. Ա. Քոչինյանն ընտրվում է Կոտայքի կուսշրջկոմի առաջին քարտուղար:

1945-1946 թթ. Ա. Քոչինյանը սովորում է ՀամԿ(բ)Կ Կենտկոմին կից կուսկազմակերպիչների բարձրագույն դպրոցում, որն ավարտելուց հետո ընտրվում է ՀԿԿ Կենտկոմի երրորդ, ապա նաև կադրերի գծով քարտուղար: 1952 թ. Ա. Քոչինյանն ընտրվում է նոր կազմավորված Երևանի օկրուգկոմի առաջին քարտուղար:

1952-1966 թթ. Ա. Քոչինյանն աշխատում է Սովետական Հայաստանի կառավարության ղեկավար՝ Նախարարների խորհրդի նախագահ: Այդ տարիներին էլ նա հեռակա կարգով սովորում և ավարտում է ՍՄԿԿ Կենտկոմին կից կուսակցական բարձրագույն դպրոցը:

1966 թ. ՀԿԿ Կենտկոմի բյուրոն, որի նիստին մասնակցում էր ՍՄԿԿ Կենտկոմի քարտուղար Ի. Վ. Կապիտոնովը, Ա. Քոչինյանին առաջադրում է Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար: Ա. Քոչինյանը Սովետական Հայաստանը ղեկավարեց մինչև 1974 թվականը:

Անտոն Քոչինյանը մահացել է 1990 թ. դեկտեմբերի մեկին:

Ահա չատ համառոտ Անտոն Քոչինյանի կենսագրությունը:

——...——

Փիլիսոփաներից մեկը նկատել է, որ հաճախ հուշագրությունների հեղինակները դժվարությամբ են հաղթահարում իրենց անձի մասին չատ խոսելու, իրենց անձը ներկայացնելու գայթակղությունը և դրա արդյունքով հուշագրությունը դառնում է ինքնագովերգություն ու կորցնում է ոչ միայն հետաքրքրությունը, այլև որպես սկզբնաղբյուր իր նշանակությունն ու արժեքը:

Սակայն, ի պատիվ Անտոն Քոչինյանի, պետք է հատկապես ընդգծել, որ նա իր հուշերի մեջ ոչ միայն հաղթահարել է այդ

գայթակղությունը, այլև խնամքով ու մեծագույն հարգանքով ներկայացրել է բոլոր նրանց, ովքեր իրենց ամբողջ ջանքերն ու եռանդը նվիրաբերել են Հայաստան հայրենիքի հզորացմանը:

Անտոն Քոչինյանի հուշերը յուրատեսակ, եզակի պատկերասրահ է, որտեղ արժանի տեղ են զբաղեցնում Սովետական Հայաստանի զարգացման գործում իրենց մասնակցությունը բերած բանվորն ու գիտնականը, գյուղացին ու պետական, կուսակցական, սովետական աշխատողը, ուսուցիչն ու գրողը, բժիշկն ու շինարարը: Անտոն Քոչինյանի հուշերին ծանոթանալով, ընթերցողը, համոզված եմ, անպայման ուշադրություն կդարձնի, որ աշխատավոր ու ստեղծագործող մարդու նկատմամբ ունեցած նրա հարգանքը ձևավորվել է վաղ պատանեկության տարիներին: Դա դարձել է նրա կենսակերպը:

Հիշեցնեմ երկու դիպված: Գարնանը, հայրը 5-6 տարեկան Անտոնին իր հետ դաշտ էր տանում: Փորձառու գյուղացին ձեռքն էր վերցնում հողակտորը, սեղմում էր մատներով և որոշում վար անելու ժամանակը: Այսպես անում են, սովորաբար, բոլոր գյուղացիները: Բայց Անտոնի հայրը դրանով չէր բավարարվում: Նա մի բուռ հող էր լցնում բերանը և այդ միջոցով էլ ճշտում էր հողի ջերմությունը:

1918 թվական: Լոռի էին ներխուժել թուրք զավթիչները: Գյուղ մտած թուրք զինվորները դաժանորեն ծեծում են Անտոնի հորը՝ Երվանդին: Դրա հետևանքով հայրը կորցնում է աշխատելու ունակությունը և տարիներ շարունակ մնում անկողնուն գամված: Այդ ժամանակից էլ 6-7 տարեկան Անտոնի վրա է ընկնում հորը փոխարինելու պարտականությունը:

Այստեղից էլ Անտոն Քոչինյանի մոտ հարգանքն աշխատանքի ու աշխատավոր մարդու նկատմամբ:

Այստեղից էլ Անտոն Քոչինյանի մոտ պատասխանատվությունը հարազատների կյանքի համար, մի հատկություն, որ նրա ամբողջ գործունեության ընթացքում վերածվեց պատասխանատվության Հայաստանի ու նրա ժողովրդի հանդեպ:

Այստեղից էլ Անտոն Քոչինյանի մոտ անհուն նվիրվածությունը Հայաստանին, իր երկրին, իր հողին, այդ երկիրն ու հողը

պաշտպանող ու շենացնող մարդկանց նկատմամբ:

Այստեղից էլ Անտոն Քոչինյանի արտասովոր համեստությունը, աշխատասիրությունը, առաքինի վարքագիծը, նաև ատելությունը սնապարծության ու կեղծիքի նկատմամբ:

Այս ամենի շնորհիվ Անտոն Քոչինյանը հիանալի գիտեր, որ ոչ մի քարոզ հիմարին խելոք չի դարձնի, իսկ սրիկան էլ ազնիվ չի դառնա:

Ասեմ նաև, որ Անտոն Քոչինյանի հուշերը միայն մարդկանց պատկերասրահ չէ: Նրա հուշերի մեջ մեծ տեղ է զբաղեցնում Հայաստանի խոշոր արդյունաբերական ձեռնարկությունների, ջրանցքների, մշակույթի բազմաթիվ օջախների կառուցման ու շահագործման, քաղաքների, շրջկենտրոնների ու գյուղերի կառուցապատման պատմությունը: Եվ որ ամենակարևորն է՝ այդ պատմության մեջ դարձյալ վեր է խոյանում դրանց ստեղծող հայ աշխատավոր մարդու կերպարը:

Եվ վերջապես Անտոն Քոչինյանի «Անավարտ հուշերի» մի կարևոր կողմի մասին: Դրանց միջոցով ծանոթանալով շատ փաստերի ու իրողությունների, համոզված եմ, որ ընթերցողներից շատերը կխոստովանեն՝ ասելով. «Ես չգիտեի, որ այդպես է եղել...»:

Ահա, իմ համոզմամբ սրանում է կայանում Անտոն Քոչինյանի հուշերի գլխավոր առանձնահատկությունը:

——...——

Ափսոսանքով ուզում եմ նշել, որ Անտոն Քոչինյանը չի հասցրել ավարտել իր հուշագրությունը: Դատելով նրա ձեռագրերի մեջ պահպանված մի ցուցակից, նա նպատակ է ունեցել անդրադառնալ Հայաստանի բոլոր շրջաններին, սակայն դժբախտաբար չի հասցրել ավարտել:

Բայց այն ամենը, ինչ Անտոն Քոչինյանը հասցրել է գրել, իրենից ներկայացնում է մի իսկական հանրագիտարան, որտեղ ընթերցողը հնարավորություն ունի ծանոթանալու մեր հանրապետության բնակավայրերի նորագույն ժամանակաշրջանի պատմությանը: Ընդ որում, ընթերցողը կհամոզվի, որ այդ

պատմությունը հայեցողական չարադրանք չէ: Դա իրադարձությունների մասին օբյեկտիվ վկայություն է:

Ասեմ նաև, որ գրելով այդ ամենի մասին Անտոն Քոչինյանը համեստաբար լռության է մատնել Սովետական Հայաստանի նվաճումների մեջ իր ունեցած եռանդուն մասնակցությունը: Եվ ոչ միայն մասնակցությունը: Նա մեր Հանրապետության նորագույն ժամանակաշրջանի պատմության կերտողներից է և այդ ասպարեզում զբաղեցնում է իր արժանի ու պատվավոր տեղը:

Ահա, այս հանգամանքն էլ նկատի ունենալով հարկ եմ համարում, որքան հնարավոր է համառոտ ներկայացնել ասվածը հիմնավորող մի քանի խնդիր, որոնց Ա. Քոչինյանն իր անավարտ հուշերում չի անդրադարձել:

——...——

Անտոն Քոչինյանի երկարատև աշխատանքային գործունեության արշալույսին, երբ նա Հայաստանի հեռավոր լեռնային շրջաններից մեկում վարում էր կոմերիտական աշխատանք, տեղի ունեցավ մի անսպասելի շրջադարձ: Շրջանային համեստ աշխատողին, որն աչքի էր ընկնում գործի նկատմամբ բարձր պատասխանատվությամբ ու անձնական կարգապահությամբ, նկատեց այն ժամանակվա Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի առաջին քարտուղար Գրիգոր Հարությունյանը:

Գրիգոր Հարությունյանը համարձակորեն առաջ էր քաշում երիտասարդներին, նրանց համար ստեղծում էր անհրաժեշտ պայմաններ իրենց ամբողջ ունակությունները դրսևորելու և դրանք Հայաստանի շենացմանն ու զարգացմանը ծառայեցնելու համար: Այդ երիտասարդների առաջին շարքումն էր նաև Անտոն Քոչինյանը:

Գրիգոր Հարությունյանի ղեկավարությամբ աշխատելը նաև լուրջ փորձություն էր, քանի որ Կենտկոմի առաջին քարտուղարը խստապահանջ էր թե՛ իր և թե՛ իր հետ աշխատողների նկատմամբ:

Գրիգոր Հարությունյանի նման խստապահանջ, կարգապահ,

բայց և արդարադատ, չիտակ ու ազնվագույն հատկություններով օժտված մարդու ղեկավարությամբ աշխատելն Անտոն Քոչինյանի մոտ հեշտ ստացվեց: Հեշտ ստացվեց, քանի որ նա մանկուց դաստիարակվել էր աշխատանքի նկատմամբ հարգանքով ու պատասխանատվությամբ, ստի ու կեղծիքի նկատմամբ անհաշտ վերաբերմունքով:

Դառնալով Հանրապետական մասշտաբի աշխատող, Անտոն Քոչինյանը չմեծամտացավ, երբեք չփոխվեց, միշտ մնաց մատչելի ու բաց՝ իր հետ առնչություն ունեցող մարդկանց հետ ունեցած փոխհարաբերություններում: Նա հավասար հարգանքով ու հավասար լրջությամբ զրուցում էր բանվորի ու կոլտնտեսականի, չինարարի ու գիտնականի, գրողի ու պետական աշխատողի հետ: Եվ այդ հատկությունը չինծու չէր, այլ գալիս էր նրա ներքին էությունից:

Աշխատանքի նկատմամբ պատասխանատվությունն Անտոն Քոչինյանի մոտ հատկապես խորությամբ դրսևորվեց Հայրենական մեծ պատերազմի տարիներին, երբ նա կարևորագույն հանձնարարությունները կատարելու համար օրերով, երբեմն շաբաթներով լինում էր Հանրապետության տարբեր բնակավայրերում, արտադրական ձեռնարկություններում ու կոլտնտեսություններում, օգնում էր մարդկանց մոտ առաջացած խնդիրները լուծելու համար:

Այդ երկարատև գործուղումների ժամանակ բազմաթիվ մարդկանց հետ անմիջական շփումների շնորհիվ Անտոն Քոչինյանը շատ մարդկանց ճանաչեց, իմացավ նրանց բնավորությունը, հանձնարարված գործի նկատմամբ պատասխանատվության մակարդակը: Բազմաթիվ մարդկանց հետ շփվելը նրա համար եղավ նաև մեծ դպրոց և շատ բան սովորեց:

Աշխատանքի բերումով Անտոն Քոչինյանը մշտապես լինելով Հանրապետության բնակավայրերում, ամենայն ուշադրությամբ ուսումնասիրում էր քաղաքների ու շրջանների, ձեռնարկությունների, գյուղերի ու կոլտնտեսությունների առանձնահատկությունները և գործնական օգնություն կազմակերպում առաջացած դժվարություններն ու խնդիրները լուծելու համար:

Ահա, այսպես Անտոն Քոչինյանը դարձավ Հանրապետության ժողովրդական տնտեսությունը բոլորից լավ իմացող գործիչը, որին նաև լավ ճանաչում էին նույնիսկ ամենահեռավոր գյուղի ուսուցիչն ու հովիվը: Անտոն Երվանդովիչը ֆենոմենալ հիշողություն ուներ: Եթե որևէ մեկի հետ տարիներ առաջ թեկուզ մեկ անգամ հանդիպել կամ ծանոթացել էր, ապա այլևս երբեք նրա անունը չէր մոռանում: Իսկ այդպիսի մարդիկ շատ ու շատ էին՝ հեռավոր գյուղերից մինչև մայրաքաղաք Երևան:

Վերոհիշյալը փաստելու համար կամենում եմ բերել հետևյալ օրինակը: 1960 թ. ես նույնպես ընտրվել էի Հայաստանի ուսուցիչների երկրորդ համագումարի պատվիրակ: Համագումարի ավարտման օրը, երեկոյան, Հանրապետության Գերագույն սովետի նախագահության շենքում պատվիրակների պատվին ընդունելություն էր կազմակերպվել: Շենքի ընդարձակ միջանցքներում պատվիրակները խումբ-խումբ հավաքված զրուցում էին՝ սպասելով Հանրապետության ղեկավարների գալստին:

Առաջինը եկավ Անտոն Քոչինյանը: Նա ժպտալով բարևեց մի քանի մարդկանց, հետո նստեց սրահի անկյունում դրված աթոռին: Ա. Քոչինյանին իսկույն շրջապատեցին պատվիրակները: Նրանցից շատերին անձամբ ճանաչում էր Անտոն Երվանդովիչը և ուղղակի դիմում էր անունով կամ ազգանունով ու հետաքրքրվում էր առողջությամբ, դպրոցի և այլ հարցերով:

Երբ ծանոթների հետ հարցուփորձն ավարտվեց, Ա. Քոչինյանը սկսեց դիմել իրեն շրջապատած մյուս պատվիրակներին: Ո՞վ է, ո՞ր շրջանից է եկել: Այս հարցերի պատասխանը լսելուց հետո Ա. Քոչինյանը մեկից հետաքրքրվեց. «Ավարտե՞լ եք դպրոցի տանիքի վերանորոգումը»: Լսելով դրական պատասխանը, ասաց. «Ապրեք»: Մյուսից հետաքրքրվեց. «Գո՞հ եք կառուցված կամուրջի ամրությունից»: «Այո», եղավ պատասխանը: Երրորդ պատվիրակից հետաքրքրվեց, տալով անունը. «Ինչպե՞ս է ձեր գյուղի դարբինը»: «Լավ է»: «Դիմացկուն մարդ է,-ասաց Ա. Քոչինյանը,- պատերազմի ժամանակ երկու որդի է կորցրել»:

Այս ամբողջ հարցուփորձի ընթացքում միայն մեկը եղավ, որին Ա. Քոչինյանն ասաց, թե դեռ չի հասցրել լինել նրա գյուղում և ժպտալով ավելացրեց. «Խոստանում եմ գալ»:

Ա. Քոչինյանին շրջապատած պատվիրակների մեջ էի նաև ես: Բոլորովին անսպասելի, նա դիմեց ինձ.

- Ջահել ջան, մի առաջ արի, տեսնեմ դու որտեղի՞ց ես եկել:

Շփոթմունքս մի կերպ հաղթահարելով, պատասխանեցի:

-Ի՞նչ է անունդ:

Պատասխանեցի:

-Ա, ուրեմն, դու ես Ապարանի մասին գրքույկի հեղինակը:

Գլխի շարժումով հաստատեցի:

-Ապրես:

Խոստովանում եմ, այն ժամանակ ես այս դիպվածին վերաբերում էի անձնական տեսանկյունից: Իսկ այժմ դրա մասին հիշելով, կամենում եմ փաստել, որ իսկապես, Անտոն Քոչինյանը բացի ֆենոմենալ հիշողություն ունենալուց, նաև լավ գիտեր Հանրապետությունն ու նրա մարդկանց, անկախ նրանց զբաղեցրած դիրքից, տարիքից ու պաշտոնից:

1951 թ. վերջերին արդեն պարզ էր դարձել, որ երաշտի հետևանքով Հանրապետությունում զգացվելու է անասնակերի պակաս և հնարավոր չի լինելու անասունների ձմեռացումն անկորուստ կազմակերպել: Ելնելով դրանից Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Գ. Հարությունյանը դիմեց ՍՍՀՄ Նախարարների խորհրդին, առաջարկելով ստեղծված վիճակը հաշվի առնելով, թույլ տալ Հայաստանում 1952 թ. առաջին կիսամյակի մսի մթերման պետական պլանի 80 տոկոսը կատարել հունվար-փետրվար ամիսներին: Դա հնարավորություն կտար պահպանել մայրական հոտի գլխաքանակը և անկորուստ անցկացնել անասունների ձմեռացումը:

1952 թ. հունվարի 14-ին ՍՍՀՄ Նախարարների խորհուրդը հաշվի առնելով Գ. Հարությունյանի առաջարկությունը, ընդունեց համապատասխան որոշում: Դրա հիման վրա Հայաստանի Կոմկուսի Կենտկոմը հանձնարականներ տվեց, որոնք իրականացնելու էր Հանրապետության Նախարարների խորհուրդը:

Սակայն Հանրապետության Նախարարների խորհրդի նախագահ Ս. Կարապետյանը, խախտելով Միութենական կառավարության որոշումը, բանավոր կերպով, առանց Կենտկոմի ղեկավարությանը տեղյակ պահելու, իշխանության տեղական մարմիններին ցուցում էր տվել ոչխարի գլխաքանակի հաշվին մսամթերումը չկատարել մինչև ոչխարների գարնանային խուզը: Այս ցուցումը կատարելու արդյունքում 1952 թ. հունվար-փետրվարին մսամթերման պլանը կատարվեց 69 տոկոսով, իսկ կոլտնտեսությունները կերի պակասի հետևանքով կրեցին խոշոր չափի վնաս, կորցնելով 116 հազար գլուխ ոչխար:

1952 թ. նոյեմբերի 4-ին ՀԿԿ Կենտկոմի բյուրոն քննարկեց վերոհիշյալ ու մի շարք այլ խախտումներ և ընդունեց հետևյալ որոշումը. «Նախարարների խորհրդի աշխատանքի ղեկավարումը չապահովելու համար ընկ. Ս. Կ. Կարապետյանին ազատել Հայկական ՍՍՀ Նախարարների խորհրդի նախագահի աշխատանքից»:

Գրիգոր Հարությունյանը, որը ուշադրությամբ հետևում էր Անտոն Քոչինյանի աշխատանքին, նրա ձեռք բերած արդյունքներին և արժանիորեն վաստակած փորձն ու հեղինակությունը հաշվի առնելով, նրան հաստատեց Սովետական Հայաստանի կառավարության ղեկավար՝ Հայկական ՍՍՀ Նախարարների խորհրդի նախագահ: Այս մասին 1952 թ. նոյեմբերի 4-ին ընդունվեց ՀԿԿ Կենտկոմի բյուրոյի հետևյալ որոշումը.

«Հայկական ՍՍՀ Նախարարների խորհրդի նախագահի մասին

Հայկական ՍՍՀ Նախարարների խորհրդի նախագահ հաստատել ընկ. Անտոն Երվանդի Քոչինյանին, ազատելով նրան Հայաստանի Կոմկուսի Երևանի օկրուգկոմի առաջին քարտուղարի պարտականություններից:

Խնդրել ՍՄԿԿ Կենտկոմին հաստատել:

Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի քարտուղար՝ Գ. Հարությունով»:

1952 թ. նոյեմբերի 6-ին Գ. Հարությունյանը նամակով Ստալինին հայտնեց թույլ տված սխալների համար Ս. Կարապետյանին աշխատանքից ազատելու որոշման մասին և «ՍՄԿԿ Կենտկոմ առաջարկություն է մտցնում Հայաստանի Կոմկուսի Երևանի օկրուգային կոմիտեի ներկա քարտուղար ընկ. Ա. Ե. Քոչինյանին հաստատել Հայկական ՍՍՀ Նախարարների խորհրդի նախագահ»:

Նույն ամսաթվով համանման բովանդակությամբ Գ. Հարությունյանը նամակ է ուղարկում նաև Գ. Մալենկովին, միայն ավելացնելով, որ մինչև Երևանի օկրուգկոմի քարտուղար աշխատելը, Ա. Քոչինյանը հինգ տարի եղել է Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի քարտուղար:

Հանրապետության կադրերի մեծամասնությունը հավանություն տվեց այդ նշանակմանը: Ա. Քոչինյանն ընդունելի էր ոչ միայն Հանրապետության ժողովրդական տնտեսությունը, դրա խնդիրներն ու զարգացման ուղղությունները լավ իմանալով, այլև իր մարդկային առաքինի, մեղմ ու նրբանկատ բնավորությամբ:

Բայց կային նաև մարդիկ, որոնք դժգոհ մնացին Ա. Քոչինյանի նշանակումից, բացառապես ղեկավարվելով միայն անձնական մղումներով. «Ինչո՞ւ Քոչինյանը և ոչ թե ինքը»: Իսկ Գ. Հարությունյանը բոլորին լավ էր ճանաչում, գիտեր մարդկանց կարողությունները և բոլորի մեջ գերադասեց Անտոն Քոչինյանին: Եվ չսխալվեց...

1953 թ. մարտի 5-ին մահացավ Ստալինը: Սովետական Միության մասշտաբով տեղի ունեցան խոշոր փոփոխություններ: Դրանք իրենց ոլորտն առան նաև Հայաստանը: 1953 թ. նոյեմբերին Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի պլենումն անհիմն մեղադրանքներով Գրիգոր Հարությունյանին ազատեց Կենտկոմի առաջին քարտուղարի պարտականություններից:

Օգտվելով ստեղծված վիճակից, Կենտկոմի պլենումում ելույթ ունեցողներից մի քանիսը, որոնք այդպես էլ չէին համակերպվել Ա. Քոչինյանի նշանակմանը, նրան մեղադրեցին որպես Գ. Հարությունյանի դրածո և պահանջեցին հանել Հանրապետության կառավարության նախագահի պաշտոնից:

Բարերախտաբար, Ն. Խրուշչովը, որի նախաձեռնությամբ էլ Գ. Հարությունյանը հանվեց աշխատանքից, հասկացավ, որ տվյալ պահին ոչ ոք այնպես լավ չի տիրապետում Հայաստանի ժողովրդական տնտեսության գործերին, ինչպես Ա. Քոչինյանը և նրան աշխատանքից ազատելու առաջարկությունները թողեց անհետևանք: Այսպես, Անտոն Քոչինյանը հնարավորություն ստացավ շարունակել աշխատանքը, բայց ավելի բարդ պայմաններում:

Գրիգոր Հարությունյանի փոխարեն Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար ընտրվեց Սուրեն Թովմասյանը, որը ցավոք, լավ չգիտեր Հայաստանի ժողովրդական տնտեսությունը: Ս. Թովմասյանը աշխատեց 1953-1961 թթ: Հետո նրան փոխարինեց Յակով Զարոբյանը, որը Կենտկոմի առաջին քարտուղար աշխատեց 1961-1966 թթ.: Յա. Զարոբյանն ընդհանրապես չգիտեր Հայաստանի ժողովրդական տնտեսությունը:

Եթե Ս. Թովմասյանը տարիներ շարունակ աշխատել էր Հայաստանում, ծառայել էր 89-րդ Հայկական Թամանյան դիվիզիայում և որոշ չափով ճանաչում էր հանրապետության կադրերին, ապա Յա. Զարոբյանը հանրապետության կադրերին ընդհանրապես չէր ճանաչում: Այստեղից էլ Յա. Զարոբյանի թույլ տված սխալները կադրային քաղաքականության ասպարեզում: Այդ սխալներին անդրադառնալը չի մտնում իմ նպատակի մեջ, ուստի բավարարվեմ ընդհանուր դիտողությամբ և շարունակեմ խոսքս:

Բայց հանրապետությունում կար մեկը, որը խորապես գիտեր ժողովրդական տնտեսության խնդիրները և լավ էր ճանաչում կադրերի գործնական հատկությունները: Դա Հայկական ՍՍՀ Նախարարների խորհրդի նախագահ Անտոն Քոչինյանն էր: Հենց դրա շնորհիվ էլ նախարարությունների, արդյունաբերական խոշոր ձեռնարկությունների, շինարարական կազմակերպությունների, գիտական, մշակութային հիմնարկությունների ղեկավարները, ինչպես ասում են, ստիպված էին իրենց «դարդն ու ցավը» կիսել Անտոն Քոչինյանի հետ:

Սովետական իշխանության տարիներին սահմանված կարգի

համաձայն բոլոր հարցերը լուծվում էին Կոմկուսի Կենտկոմի որոշումներով: Հայաստանում ստեղծված պայմաններում Անտոն Քոչինյանի վրա ավելացել էր մի ծանր պարտականություն ևս: Ժողովրդական տնտեսության ղեկավարման հարցերը լուծելիս Կոմկուսի ղեկավարությանը ճիշտ կողմնորոշել:

Անտոն Քոչինյանը ստանձնել էր նաև զանազան սուբյեկտիվ մոտեցումներից կադրերին պաշտպանելու պարտականությունը: Եվ պետք է ասել, որ Անտոն Քոչինյանին հաջողվում էր մեծամասամբ հասնել դրական արդյունքի: Իհարկե, պետք է նկատի ունենալ, որ այդ ամենը մի կողմից նպաստում էր Անտոն Քոչինյանի հեղինակության բարձրացմանն ու ամրապնդմանը, մյուս կողմից էլ ոմանց մոտ հարուցում էր անբարեհաճ վերաբերմունք:

Այդ ամենը լավ հասկանում ու զգում էր Անտոն Քոչինյանը: Բայց նա իր մեղմ ու չիտակ բնավորությամբ, մարդկային փոխհարաբերությունները հաստատելու գործում ճիշտ կողմնորոշվելու շնորհիվ, կարողանում էր չեզոքացնել իր շուրջը կուտակվող բացասական լիցքերը:

Աշխատանքի ընթացքում շատ շուտով ՍՄԿԿ Կենտկոմում և ՍՍՀՄ Նախարարների խորհրդում, ինչպես նաև Միութենական Պետպլանում ու ՍՍՀՄ նախարարություններում նկատեցին ու բարձր գնահատեցին Սովետական Հայաստանի ժողովրդական տնտեսության պրոբլեմները հասկանալու և դրանք լուծելու գործում Անտոն Քոչինյանի փորձն ու գիտելիքները:

Կարևոր ու ոչ պակաս վճռական դեր էր խաղում հանրապետության ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերի հետագա զարգացման համար նրա դրսևորած նախանձելի հետևողականությունը, երկրի բարձրագույն ղեկավարությանը համոզելու, իր առաջարկությունները հիմնավորելու կարողությունը և նպատակին հասնելու համառությունը:

Ահա, այս ամենը հաշվի առնելով, ինչպես նաև հանրապետությունում ու Սովետական Միության մասշտաբով վաստակած հեղինակությունը, 1966 թ. Յա. Զարոբյանից հետո Անտոն Քոչինյանն ընտրվեց Հայաստանի Կոմունիստական կուսակ-

ցության Կենտկոմի առաջին քարտուղար:

Ստանձնելով Սովետական Հայաստանի ղեկավարումը, Անտոն Քոչինյանը հնարավորություն ստացավ լիակատար կերպով դրսևորել իր ամբողջ տաղանդը, կազմակերպչական ունակությունները և հանրապետության ժողովրդական տնտեսությունը հասցնել զարգացման ավելի բարձր մակարդակի:

Անտոն Քոչինյանը Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտկոմի առաջին քարտուղար աշխատեց 1966-1974 թթ.:

Այդ ժամանակից անցել է շուրջ 35 տարի: Եվ այդ անցած ժամանակը մեզ հնարավորություն է տալիս հետադարձ հայացք ձգել Անտոն Քոչինյանի աշխատած տարիների ընթացքում կատարված գործերի վրա և գնահատել ձեռք բերված արդյունքը:

Իհարկե, Անտոն Քոչինյանի աշխատանքային գործունեության մեջ եղել են թերություններ, թույլ են տրվել սխալներ: Բայց մենք հիմա, 35 տարի անց, հնարավորություն ունենք նժարի վրա դնել Անտոն Քոչինյանի գործունեության ընթացքում կատարված դրականն ու թույլ տված սխալները:

Եվ ճշմարտությունը պահանջում է ասել, որ նրա գործունեության ընթացքում ձեռք բերված դրականն այնքան ակնառու է ու ծանրակշիռ, որ ստվերի տակ են մնում թույլ տված սխալները: Այդ սխալները պարզապես անէանում են և չարժե նույնիսկ դրանց մասին հիշել:

——...——

Ուզում եմ առանձնապես նշել, թե Անտոն Քոչինյանն ինչպիսի մասնակցություն է ունեցել երկու կարևոր իրադարձությունների անցկացմանը: Խոսքը վերաբերում է Հայոց ցեղասպանության զոհերի անմահ հիշատակը հավերժացնող հուշակոթողի կառուցմանն ու բացմանը, որը տեղի ունեցավ 1967 թ. նոյեմբերի 29-ին և 1968 թ. հոկտեմբերին Երևանի 2750-ամյակի տոնակատարությանը:

Ես այս երկու իրադարձություններն առանձնացնում եմ, նկատի ունենալով, որ դրանց Ա. Քոչինյանը չի հասցրել իր

հուշերում անդրադառնալ:

1965 թ. Հայոց ցեղասպանության 50-ամյակի նշումը, անշուշտ, անչափ կարևոր նշանակություն ունեցող իրադարձություն էր: Նախատեսվեցին իրականացնել զանազան միջոցառումներ, որոնց մեջ առանձնապես կարևորվեց առաջին անգամ Հայոց ցեղասպանության 50-ամյակը պետականորեն նշելը:

Այս կապակցությամբ ուզում եմ հիշեցնել հետևյալը: Երբ օպերայի դահլիճում տեղի էր ունենում եղեռնի 50-ամյակը նշելու արարողությունը, ներս խուժեցին մի խումբ մարդիկ, որոնք իրենց աղմկոտ վարքագծով իրարանցում առաջացրին: Այդ մարդկանց նպատակն էր խանգարել Հայոց ցեղասպանության պետականորեն նշումը: Բայց ինչո՞ւ, ինչո՞վ էին ղեկավարվում նրանք:

Հիմա, երբ տարիների հեռվից հիշում եմ այդ ամենը, վերլուծում նոր բացահայտված փաստերը, անպայման հարց է առաջանում. ո՞ւմ էր ձեռնտու պետական մակարդակով ցեղասպանության 50-ամյակի նշումը ձախողել և այն վերածել փողոցային անկարգության: Ո՞վ էր այդ մարդկանց ոգևորում, ովքե՞ր էին նրանց թիկունքում կանգնած:

Այժմ լրատվության միջոցներով, հեռուստատեսությամբ հանդես են գալիս մարդիկ, որոնք հիմա էլ պարծենում են 1965 թ. սարքած անկարգությունները կազմակերպելու կամ էլ դրանց մասնակցելու համար, իհարկե, իրենց արարքը ներկայացնելով որպես հայրենասիրություն:

Բայց այդ ամենը չխանգարեց, որպեսզի Սովետական Հայաստանի ղեկավարությունն առաջ տաներ սկսված գործը: Տպագրվեցին բազմաթիվ գրքեր և այլն:

Սակայն գլխավորը ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող հուշարձանի կառուցումն էր: Եվ ի պատիվ Անտոն Քոչինյանի, պետք է ասել, որ նրա նախաձեռնությամբ 1965 թ մարտի 16-ին Սովետական Հայաստանի Նախարարների խորհուրդն ընդունեց հետևյալ որոշումը.

«1. Սուլթանական Թուրքիայի կառավարողների կազմակեր-

պած հայկական կոտորածների հիսնամյակի կապակցությամբ, ընդառաջելով հանրապետության աշխատավորների ու հասարակական կազմակերպությունների ցանկություններին, Երևան քաղաքում կանգնեցնել կոթող՝ ի հավերժացումն 1915 թվականի եղեռնի զոհերի հիշատակի:

2. Հանձնարարել Հայկական ՍՍՀ Պետշինին հայտարարել կոթողի լավագույն նախագծի մրցանակաբաշխություն: Մրցանակաբաշխության ժամկետ սահմանել մեկ ամիս՝ սկսած հայտարարության օրվանից»:

Այս որոշման համաձայն Յա. Զարոբյանը, Ա. Քոչինյանը, Լ. Ղարիբջանյանը և Գ. Հասրաթյանը հուշարձանի կառուցման համար ընտրեցին Ծիծեռնակաբերդի բարձունքը: Նրանց ներկայությամբ էլ Երևանի Ծիծեռնակաբերդի գեղատեսիլ բարձունքի վրա դրվեցին ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող կոթողի հիմքերը:

Հուշարձանի կառուցմանն անձամբ հետևում էր արդեն Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար դարձած Ա. Քոչինյանը: Իսկ Երևանի քաղկոմի առաջին քարտուղար Լյուդվիգ Ղարիբջանյանն ու քաղսովետի գործկոմի նախագահ Գրիգոր Հասրաթյանը իրենց աշխատանքային օրվա մեծ մասն անց էին կացնում շինարարների մոտ:

Եվ, ահա եկավ բաղձալի օրը: Ավարտվեց շինարարությունը: Չորս ու կես հազար քառակուսի մետր տարածության վրա բարձրացել էր վեհապանծ հուշարձան-կոթողը: Կոմպլեքսի մեջ մտնում է 30 մետր տրամագիծ ունեցող շրջանաձև դամբարանը՝ դեպի կենտրոն խոնարհված 12 հսկա բազալտե պիլոններով: Դամբարանից քիչ հեռու վեր է խոյանում 40 մետրանոց երկնասլաց կոթողը, որը խորհրդանշում է հայ ժողովրդի վերածնունդը: Այդ հոյակապ կառույցի ստեղծողներն են տաղանդավոր ճարտարապետներ Արթուր Թարխանյանը, Սպարտակ Քալաշյանը և քանդակագործ Համլետ Խաչատրյանը:

Արթուր Թարխանյանը տողերիս հեղինակին պատմել է, թե Անտոն Քոչինյանը ինչպիսի ուշադրություն էր դարձնում հուշարձանի ստեղծմանը՝ նախագծումից մինչև շինարարության

ավարտը: «Մենք,- ասում էր Արթուրը,- նախագծի վրա աշխատելիս ղեկավարվում էինք Անտոն Երվանդովիչի հետևյալ խոսքերով. «Իմացեք տղաներ, դուք ստեղծում եք ոչ միայն հուշարձան, այլ համայն հայության համար ուխտատեղի»:

Հուշարձանի բացումը տեղի ունեցավ 1967 թ. նոյեմբերի 29-ին: Հավաքվել էր հսկայական բազմություն: Երևանի քիմիական կոմբինատից անմար ջահը զրահամեքենայով բերեցին քիմկոմբինատի ապարատավար, Սոցիալիստական աշխատանքի հերոս Սուրեն Պետրոսյանը, Շահումյանի շրջանի 22-րդ կուսհամագումարի անվան կոլտնտեսության կթվորուհի, Սոցիալիստական աշխատանքի հերոս Աշխեն Ավետիսյանը, բանաստեղծ Պարույր Սևակը, բժշկական գիտությունների դոկտոր Զավեն Դոլաբջյանը, ՍՍՀՄ ժողովրդական արտիստ Թաթուլ Ալթունյանը և ՀԼԿԵՄ Երևանի քաղկոմի առաջին քարտուղար Բաբկեն Վարդանյանը:

Բազմահազարանոց միտինգում ելույթ ունեցավ Անտոն Քոչինյանը:

«Այսօր.-ասաց նա,-նոյեմբերի 29-ին, երբ Հայաստանի աշխատավորները նշում են սովետական կարգերի հաստատման պատմական օրը, մենք հավաքվել ենք բացելու Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին թուրքական ռեակցիոն կառավարող շրջանների ազգայնամոլ քաղաքականության զոհերի, մեր ժողովրդի զավակների անմահ հիշատակը հավերժացնող կոթողը:

Այդ ողբերգությունից անցել է ավելի քան կես դար: Այժմ մեր նոր սերունդներին դժվար է անգամ մտովի պատկերացնել այն արհավիրքը, որ ապրեց հայ ժողովուրդն այդ օրերին...:

Հայ ժողովրդի արևմտյան հատվածի ոչնչացումը, որն, իրավամբ, եղեռն կոչվեց, հնարավոր դարձավ իմպերիալիզմի պայմաններում և հետևանք էր իմպերիալիստական տերությունների մարդատյաց քաղաքականության:

1915 թվականին երիտթուրքերի կառավարությունը օգտվելով համաշխարհային պատերազմի ընձեռած հնարավորություններից, պետական մասշտաբներով իրականացրեց հայ

ժողովրդի արևմտյան հատվածի ոչնչացման վաղեմի ծրագիրը: Ամենավայրենի մեթոդներով գործադրվող տեռորի զոհ դարձան մեկուկես միլիոն հայեր: Իրենց բնօրրանից տեղահանվեցին և անապատներ քշվեցին հարյուր հազարավոր անմեղ մարդիկ: Եղեռնը վերջին գործողությունն էր այն մեծ ողբերգության, որ ապրեց հայ ժողովուրդը օսմանյան լծի տակ, հարյուրամյակների ընթացքում:

Եվ եթե մեր ժողովրդի արևելյան հատվածի վրա չտարածվեց եղեռնի արհավիրքը, ապա դրանով նա պարտական է այն բանին, որ դեռևս անցյալ դարի սկզբներին Արևելյան Հայաստանը միացավ Ռուսաստանին»:

Այնուհետև բարձր գնահատելով տարբեր երկրների առաջադեմ մարդկանց բողոքի ձայնը ի պաշտպանություն հայ ժողովրդի, Ա. Քոչինյանն ասում է. «Իմպերիալիզմի դաժան պայմաններում հայ ժողովուրդը մնացել էր ահավոր վտանգին երես առ երես: Մեր ժողովրդի ճակատագիրը, որի մասին փարիսեցիական ճառեր էին ասում Արևմուտքի դիվանագետները, ոչ միայն չմտահոգեց իմպերիալիստական տերությունների, այլև դիվանագիտական առուծախի առարկա դարձավ:

Դեպքերի ողբերգական ընթացքը մի անգամ ևս ապացուցեց հայ ազգայնական կուսակցությունների քաղաքականության սնանկությունը, կուսակցություններ, որոնք մեր ժողովրդի բախտը և փրկությունը փորձում էին կապել իմպերիալիստական տերությունների հետ»:

Ա. Քոչինյանը հիշեցնում է, որ սովետական իշխանության 47 տարվա ընթացքում Հայաստանի բնակչությունը 750 հազարից հասել է 2 միլիոն 300 հազարի, այսինքն ավելացել է 3 անգամ:

«Հայ ժողովրդի աշխարհով մեկ սփռված տարագիր զավակները,- ասում է Ա. Քոչինյանը,- որոնք հեռավոր երկինքների տակ ապրում էին հայրենիքի կարոտով, բռնեցին հայրենիք վերադառնալու ուղին: Նրանցից 200 հազարն արդեն վերադարձել են Սովետական Հայաստան և ակտիվ մասնակցում են հայրենիքի ծաղկման ու բարգավաճման գործին»:

Իր ելույթի վերջում Ա. Քոչինյանն ասաց. «Պատմության անդարձ ճանապարհներին են մնացել մեր ժողովրդի այնպիսի դարավոր ուղեկիցներ, ինչպիսիք են կոտորածն ու ավերը, ազգային հալածանքը, թշնամական ասպատակությունները, արյունն ու արցունքը:

Հայ ժողովուրդը զգում է հայրենի հողի ամրությունը, ապրում է այսօրվա ու ապագայի նկատմամբ անսերեր հավատով, կառուցում ու չենացնում է հայրենի ոստանը, համոզված, որ ոչ ոք այլևս չի հանդգնի ավերել կառուցածը:

52 տարի առաջ կրած ծանր կորուստները չկարողացան և չէին կարող կոտրել մեր ժողովրդի հավատն ապագայի նկատմամբ, նրա կենսասեր ոգին, կենսախինդ բնավորությունը: Լացն ու կսկիծը, որոնք այնքան ժամանակ մաշել են մեր ժողովրդի սիրտը, թունավորել նրա կյանքն ու երջանկությունը, խորթ են այլևս նրան:

Այժմ խինդը, ուրախությունը, երջանկությունն են մեր ժողովրդի կյանքը բնութագրող հատկանիշները:...Այս կոթողը բողոք է ոչ միայն անցյալի, այլև այսօրվա իմպերիալիստական քաղաքականության դեմ, ցեղասպանության ամեն մի դրսևորման դեմ:

...Այսօր մենք մասնակցում ենք մի հուշարձանի բացման արարողությանը, որը խոր հարգանքի տուրք հանդիսանալով թուրքական ջարդարարների ոճրագործության զոհերի հիշատակին, միաժամանակ խորհրդանշում է մեր ժողովրդի սոցիալիստական վերածնունդը»:

Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին կառուցված կոթողի բացումից անցել է շուրջ 42 տարի: Այդ հուշարձանը ծառայում է իր նպատակին: Եվ դրա ստեղծման հեղինակները չեն սխալվել:

Ասվածի կապակցությամբ ավելորդ չեմ համարում հիշեցնել հետևյալը: Մի քանի տարի առաջ, դաշնակցության նորօրյա գաղափարախոս Ռ. Փիրումյանը իր կեղծիքներով լեցուն «Հայկական հարցի պատմություն» դասագրքում գրել է. «Հայաստանի ժողովրդի ազգային զգացմունքներին գոհացում տալու համար

և սփյուռքահայությանը դուր գալու նպատակով Զարոբյանը թույլ տվեց Երևանում, Ծիծեռնակաբերդի վրա կառուցել Եղեռնի զոհերի հիշատակին նվիրված հուշարձան-կոթող»: Սույն կեղծարարը մտածված կերպով չի էլ ուզում ասել, թե Զարոբյանը ո՞ւմ թույլ տվեց և ովքե՞ր ու ի՞նչ միջոցներով կառուցեցին հուշարձանը:

Ահա, թե որտեղ է թաղված շան գլուխը: Արդեն, կարծում եմ, ընթերցողին պարզ դարձավ, թե ովքեր էին կանգնած 1965 թ. պետական միջոցառումը խանգարողների թիկունքում: Նրանք շատ էին վախենում, որ ցեղասպանության պետականորեն նշումով կկորցնեն այն խաղաթուղթը, որով ինչ-որ կերպ շարունակում էին իրենց գոյությունը:

Այժմ անդրադառնանք Երևանի հիմնադրման 2750-ամյակի տոնակատարությանը: Իհարկե, Երևանի հիմնադրման տոնակատարությունն այժմ էլ է կատարվում, բայց հանիրավի մոռացության են տրվել դրա նախաձեռնողների անունները: Իբրև ասվածի օրինակ, ուզում եմ բերել միայն մի փաստ:

Տոնակատարության նախաձեռնողներից ու կազմակերպիչներից մեկն այն ժամանակվա ՀԿԿ Երևանի քաղաքային կոմիտեի առաջին քարտուղար Լյուդվիգ Ղարիբջանյանն էր:

Սրանից մի քանի տարի առաջ, կարծեմ 2003 թվականին, Հայաստանի մշակույթի, գիտության մի խումբ նշանավոր գործիչներ, հաշվի առնելով Լ. Ղարիբջանյանի դերը Երևանի հիմնադրման 2750-ամյակը նշելու և, ընդհանրապես, նրա աչքի ընկնող ծառայությունը Հայաստանի մայրաքաղաքի զարգացման գործում, Երևանի քաղաքապետին դիմել էին նամակով, առաջարկելով Լ. Ղարիբջանյանին ընտրել Երևանի պատվավոր քաղաքացի: Մինչև այսօր էլ այդ առաջարկությունը չի քննարկվել և թողնվել է անհետևանք:

Ինչևէ, վերադառնանք տոնակատարության կազմակերպմանը: 1967 թ. հունիսի 3-ին Հայաստանի Կոմկուսի Երևանի քաղաքային կոմիտեի առաջին քարտուղար Լ. Ղարիբջանյանը նամակով դիմում է Ա. Քոչինյանին: Կարևորելով այդ նամակը,

հարկ եմ համարում այն ամբողջությամբ ներկայացնել ընթերցողի ուշադրությանը:

«ՀԿԿ Կենտրոնական Կոմիտեի առաջին քարտուղար ընկ. Ա. Ե. Քոչինյանին

Ըստ Ուրարտական թագավոր Արգիշտի 1-ի թողած Խորխորյան (Վան քաղաքի մոտ) և Արին-բերդի արձանագրությունների, մեր մայրաքաղաքը հիմնադրվել է նույն թագավորի կողմից 782 թվականին (մ.թ.ա.)՝ Էրեբունի անունով, որը հետագայում հայերը կոչել են Երևան:

Հիմնադրման օրից ի վեր Էրեբունի-Երևանը միշտ շարունակել է գոյություն ունենալ իբրև բերդաքաղաք, բերդ ու գյուղաքաղաք և քաղաք: Այդ են ապացուցում Ուրարտական պետության անկումից հետո Արին-բերդում 6-4-րդ դ.դ. (մ.թ.ա.) վերաբերող ճարտարապետական կոթողների՝ Աբաղան կոչված չքեղ պալատի, կրակապաշտական տաճարների առկայությունը և ավելի ուշ շրջանին վերաբերող տարբեր երկրների բազմաթիվ ու բազմատեսակ դրամների, ինչպես և տարատեսակ իրերի ու գործիքների հայտնաբերումը քաղաքի տարբեր մասերում:

Երևանի պատմության ժամանակագրությունն այսպիսով ամենևին չի ընդհատվում մինչև 7-րդ դարը (մ.թ.), երբ այն մշտապես հիշատակվում է մեր պատմագիրների, գրիչների ու աշխարհագիրների մոտ և վիմագիր արձանագրություններում:

Այդ բոլորից հետևում է, որ մեր մայրաքաղաքը 1968 թվականին կբոլորի իր 2750 տարին: Նա աշխարհի այն հազվագյուտ հնագույն քաղաքներից մեկն է, որի հիմնադրման վերաբերյալ պահպանվում են ստույգ արձանագրություններ, ի տարբերություն հնագույն շատ ու շատ քաղաքների, որոնց հիմնադրման մասին պահպանվել են միայն սերնդե-սերունդ բանավոր հաղորդվող պատմական տեսակետից խիստ քննադատելի ու կասկածելի ավանդույթներ և առասպելներ:

Նկատի ունենալով վերոհիշյալը, խնդրվում է թույլատրել 1968 թվականի աշնանը նշելու մեր հանրապետության մայրաքաղաք Երևանի հիմնադրման 2750-ամյակը, մի տարեթիվ, որն առանց տարակուսանքի ընդունում են մեր ժամանակի բոլոր ու-

բարտագետները (Քյոնինգ, Մելիքիշվիլի, Պիոտրովսկի, Դյակոնով, Իսրայելյան, Հարությունյան, Հովհաննիսյան և ուրիշներ):

ՀԿԿ Երևանի քաղաքային կոմիտեի քարտուղար՝

Լ. Ղարիբջանյան»:

Լ. Ղարիբջանյանի առաջարկությունը մի քանի անգամ քննարկվեց Ա. Քոչինյանի մոտ: Ա. Քոչինյանը գտնում էր, որ Երևանի հիմնադրման տարեդարձի նշումը հարկավոր է այնպես կազմակերպել, որ դա ստանա միջազգային մեծ արձագանք ու հնչեղություն: Հենց այդ նպատակով էլ Ա. Քոչինյանը իր և Հանրապետության Նախարարների խորհրդի նախագահ Բաղալ Մուրադյանի ստորագրությամբ հետևյալ նամակն անձամբ տարավ Մոսկվա և ներկայացրեց Սովետական Միության ղեկավար Լ. Բրեժնևին: Ահա այդ նամակը.

«ՍՄԿԿ Կենտկոմ.

1968 թվականին լրանում է Սովետական Հայաստանի մայրաքաղաք Երևանի հիմնադրման 2750-ամյակը:

Քաղաք-ամրոց Էրեբունին (Երևան) հիմնադրվել է մեր թվարկությունից առաջ 782 թվականին: Հայ ժողովրդի պատմության շատ վառ էջեր անխզելիորեն կապված են Երևանի հետ, որը նշանակալի դեր է խաղացել հայ ազգի ձևավորման ու զարգացման գործում:

Սովետական իշխանության տարիներին Երևանը դարձել է Հանրապետության ինդուստրիալ և մշակութային կենտրոն, Սովետական Միության խոշոր, գեղեցիկ և բարեկարգ քաղաքներից մեկը՝ ավելի քան 700 հազար բնակչությամբ:

Այժմ քաղաքում կա Հանրապետության ամբողջ արդյունաբերական արտադրանքի երկու երրորդը թողարկող ավելի քան 300 ձեռնարկություն, 11 բարձրագույն ուսումնական հաստատություն, 6 թատրոն, 6 թանգարան, Գիտությունների ակադեմիա, տասնյակ գիտահետազոտական հիմնարկություններ:

Սովետական Հայաստանի մայրաքաղաքին են ուղղված աշխարհի շատ երկրներում ապրող հայերի հայացքները: Նրանք Երևանը համարում են հարազատ ժողովրդի վերածնման ու ծաղկման խորհրդանիշ:

Հայաստանի Կոմկուսի Կենտկոմը և Հայկական ՍՍՀ Նախարարների խորհուրդը խնդրում են հաշվի առնել վերը շարադրվածը և թույլատրել 1968 թվականի աշնանն անցկացնել Երևան քաղաքի հիմնադրման 2750-ամյակի տոնակատարությունը:

Նպատակահարմար ենք գտնում հոբելյանական հանդիսություններին հրավիրել Մոսկվայի, Լենինգրադի, Միութենական հանրապետությունների մայրաքաղաքների պատվիրակություններին, հյուրեր աշխարհի 10 հնագույն քաղաքներից, ինչպես նաև արտասահմանյան հայկական առաջադիմական կազմակերպությունների ներկայացուցիչներին և գիտության ու մշակույթի 100 նշանավոր գործիչների:

Խնդրում ենք քննարկել»:

Այս նամակին կից Ա. Քոչինյանը ներկայացրեց նաև ընդարձակ պատմական տեղեկանք, որտեղ հիշատակվում են Հայաստանի բոլոր մայրաքաղաքները և հատուկ կերպով շեշտվում, որ հայկական պետականությունը Ուրարտական պետականության շարունակությունն է:

Ա. Քոչինյանին հարկ եղավ հանդիպել նաև Սովետական Միության մյուս ղեկավար գործիչներին, որոնցից շատերի համար ուղղակի հայտնություն էր, որ Երևանը ստեղծվել է 2750 տարի առաջ, ավելի հին է, քան Հռոմը:

Ի վերջո, Ա. Քոչինյանը հասավ նրան, որ ընդունվեց ՍՄԿԿ Կենտկոմի որոշումը, որով ոչ միայն թույլատրվեց նշել Երևանի 2750-ամյակը, այլև հանձնարարվեց Միութենական բոլոր հանրապետություններին այդ կապակցությամբ իրենց մոտ կազմակերպել եղբայրական Հայաստանի մայրաքաղաքի հոբելյանին նվիրված հանդիսություններ: Միաժամանակ լրատվության կենտրոնական միջոցներին հանձնարարվեց լայնորեն լուսաբանել Երևանի հոբելյանը:

Երբ Մոսկվայում լուծվեցին բոլոր, այդ թվում նաև ֆինանսավորման հարցերը, 1967 թ. սեպտեմբերի 30-ին Ա. Քոչինյանի ներկայացմամբ ՀԿԿ Կենտկոմի բյուրոն Երևան քաղաքի հիմնադրման 2750-ամյակի տոնակատարության մասին ընդունեց հետևյալ որոշումը.

«Երևան քաղաքի հիմնադրման 2750-ամյակը լրանալու կապակցությամբ, ընդառաջ գնալով աշխատավորության ցանկությանը և հաշվի առնելով Երևան քաղաքի կուսակցական, արհմիութենական, կոմերիտական և մյուս հասարակական կազմակերպությունների առաջարկությունը, Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի բյուրոն որոշում է.

1. Երևան քաղաքի հիմնադրման 2750-ամյակի տոնակատարությունն անցկացնել 1968 թվականի սեպտեմբերի երկրորդ կեսին:

2. Երևան քաղաքի 2750-ամյակի տոնակատարության հետ կապված միջոցառումների նախապատրաստման համար ձևավորել հոբելյանական հանձնաժողով հետևյալ կազմով. Մուրադյան Բ. Հ. (նախագահ), Տեր-Ղազարյանց Գ. Ա., Արզումանյան Գ. Ա., Խաչատրյան Ռ. Հ., Ղարիբջանյան Լ. Գ., Առաքելյան Ս. Վ., Մովսեսյան Ս. Հ., Ստեփանյան Լ. Ա., Հասրաթյան Գ. Հ., Բախչինյան Մ. Մ., Դեմիրճյան Կ. Ս., Համբարձումյան Վ. Հ., Աղաբաբյան Գ. Գ., Բաղդասարյան Հ. Մ., Հայրյան Գ. Ա., Կիրակոսյան Ջ. Ս., Ութմազյան Հ. Մ., Թոփչյան Է. Ս., Միրզոյան Է. Մ., Աբեղյան Մ. Մ., Շահինյան Հ. Ա.:

Երևանի 2750-ամյակի տոնակատարության նախապատրաստման միջոցառումները ՀԿԿ Կենտկոմի բյուրոյի քննարկմանը ներկայացնել 1968 թվականի փետրվարի 1-ին»:

Սկսվեց եռանդուն աշխատանք Երևանի հոբելյանն արժանավայել նշելու համար: Երևան քաղաքի 2750-ամյակը նշվեց մեծ վերելքով: Ժամանակի մամուլը հանգամանորեն լուսաբանել է համաժողովրդական տոնակատարության ընթացքն ու դրա միջազգային արձագանքը:

Երևանի հիմնադրման 2750-ամյակի նշումը միայն տոնակատարություն չէր: Այդ տոնակատարությունն ուներ իր գաղափարախոսությունը, իր պատմագիտական ու քաղաքական նշանակությունը:

Առաջին. Միջազգային մասշտաբով վերստին հաստատել հայ ժողովրդի հազարամյակների պատմության հաջորդայնությունը, որ Հայոց պետականությունն Ուրարտական պետության օրգանական շարունակությունն է:

Երկրորդ. Հայ ժողովուրդը ձևավորվել է Հայկական բարձրավանդակում, այստեղից են գալիս նրա արմատները:

Երրորդ. Ապրելով ու գոյատևելով իր բնօրրանում, հազարամյակների ընթացքում հայ ժողովուրդը ստեղծել է իր ազգային մշակույթը, կարևոր մասնակցություն բերել մարդկային քաղաքակրթության զարգացման գործում:

Չորրորդ. Անցնելով հազարամյակների միջով, հայ ժողովուրդն ամուր կառչած մնալով իր պատմական հայրենիքին, տևական պայքար է մղել իր երկիրը ներխուժած բազմաթիվ զավթիչների դեմ: Չնայած բազում զրկանքներին, Մեծ եղեռնին, պատմական հայրենիքի մի զգալի հատվածի կորստին, հայ ժողովուրդը չի հուսահատվել: Նա շարունակել է պայքարել, համախմբել իր ուժերը և ստեղծագործ աշխատանքով ոչ միայն կերտել իր երկիրը, այլև նշում է իր մայրաքաղաքի 2750-ամյակը:

Հինգերորդ. Խթանել ու էլ ավելի ամրապնդել հայ ժողովրդի միասնությունը, նպաստել Հայաստան-Սփյուռք կապերի և հայապահպանման զարգացմանը:

Պետք է նշել, որ Երևանի հիմնադրման 2750-ամյակի նշումը, որը վերածվեց համաժողովրդական տոնահանդեսի, միանգամայն արդարացրեց առաջադրված նպատակները: Եվ այս գործում մեծ է Անտոն Քոչինյանի ոչ միայն մասնակցությունը, այլև տոնակատարության հետ կապված բոլոր հարցերի լուծումն ու ղեկավարումը: Այս առումով ուզում եմ հիշել մի կարևոր իրողություն, որի մասին քիչ է խոսվում:

Անհրաժեշտ է ասել, որ Ա. Քոչինյանը չբավարարվեց կատարվածով: Նա 1968 թ. հոկտեմբերի 4-ին ՍՄԿԿ Կենտկոմ ներկայացրեց նամակ Երևան քաղաքը Լենինի չքանչանով պարգևատրելու առաջարկությամբ: Այդ նամակում նշելով Երևանի ձեռք բերած հաջողությունների մասին, Ա. Քոչինյանը հայտնում է, որ Հոկտեմբերյան հեղափոխության 50-ամյակի նախօրյակին Երևան քաղաքում շահագործման է հանձնվել ՍՍՀՄ-ում խոշորագույն էլեկտրոնային օղակաձև արագացուցիչը:

Հարկ եմ համարում այդ նամակից հետևյալ հատվածը ներկայացնել ընթերցողի ուշադրությանը:

«Երևանի ձեռնարկություններն արդյունաբերական արտադրանքի հարյուրավոր տեսակներ են ուղարկում միութենական մյուս հանրապետություններ, այդ թվում և այնպիսի արդյունաբերական կենտրոններ, ինչպիսիք են Մոսկվան, Լենինգրադը, Կիևը, Բաքուն, Թբիլիսին, Գորկին, Սվերդլովսկը, Կազանը, Յարոսլավլը:

Միևնույն ժամանակ Երևանն արտասահմանյան ավելի քան 60 երկիր արտահանում է արդյունաբերական 140 տեսակի արտադրանք: Երևանի ձեռնարկությունների նշագրումով արտադրատեսակները Լեյպցիգի, Վիեննայի, Պոզնանի, Պլովդիվի, Զագրեբի, Իզմիրի, Դամասկոսի, Ռիո-դե-Ժանեյրոյի, Բուդապեշտի, Թեհրանի, Մոնրեալի և այլն միջազգային ցուցահանդեսներում և տոնավաճառներում նվաճել են հաջողություն:

Երևանի 300 հազարանց բանվորների և ծառայողների բանակն ամբողջ հանրապետության, առանց բացառության Սովետական Հայաստանի բոլոր քաղաքների, շրջանային կենտրոնների և բնակավայրերի սոցիալական և տնտեսական վերածնունդի որոշիչ ուժն է: Երևանի բանվոր դասակարգը հանրապետության բանվոր դասակարգի առաջատար ջոկատն է»:

Ավելացնեմ, որ այս նվաճումների մեջ անգնահատելի դեր է ունեցել նաև Ա. Քոչինյանը:

Երևանի 2750-ամյակին նախապատրաստվելու ընթացքում, հենց Ա. Քոչինյանի մոտ է առաջացել Երևանի հիմն ստեղծելու գաղափարը: Նա ոչ միայն տվեց գաղափարը, այլև կարծիք հայտնեց, որ Երևանի հիմնը կարող է լավ գրել միայն Պարույր Սևակը: Եվ Անտոն Քոչինյանը չսխալվեց: Պարույր Սևակի գրած «Երևան-Էրեբունի» բանաստեղծությունը Էդգար Հովհաննիսյանի երաժշտությամբ դարձավ Հայաստանի մայրաքաղաք Երևանի հիմնը:

Ասվածի կապակցությամբ, կարծում եմ, կարիք կա անդրադառնալ Պարույր Սևակի նկատմամբ Անտոն Քոչինյանի ունեցած վերաբերմունքին, նկատի ունենալով, որ այս խնդիրը չատ է չահարկվել ինչպես նախկինում, այնպես էլ հատկապես այժմ, երբ առանձին հեղինակներ փորձում են Պարույր Սևակի ողբերգական մահը ներկայացնել քաղաքական գունավորմամբ:

Ով քիչ, թե չատ ծանոթ է տասնամյակներ չարունակ Հայաստանի գրողների միությունում տիրող մթնոլորտին, գիտե այնտեղ տիրող բամբասանքի, նախանձի, միմյանց վարկաբեկելու, անվանարկելու մասին: Ով ծանոթ է նաև մինչսովետական տարիներին հայ գրական կյանքին, ապա նրան էլ է հայտնի մեր առանձին նշանավոր գրողների չուրջ ստեղծված խեղդուցիչ մթնոլորտը: Այսօր այդ հոռի բարքերն ավելի ցայտուն են դրսևորվում: Այնպես որ, Պարույր Սևակի չուրջ ստեղծված մթնոլորտի հեղինակներին պետք է փնտրել հենց Հայաստանի գրողների միջավայրում: Իսկ այդ միջավայրը հասարակությունից մեկուսացված չէր:

Պարույր Սևակին նախանձում էին ոչ միայն տաղանդի ու ընթերցող հանրության մոտ ունեցած հեղինակության համար, այլև հասարակության տարբեր շերտերի միջավայրում հաստատված ընկերական, բարեկամական կապերի համար: Այս առումով էլ ընդգրկուն էր Պարույր Սևակի միջավայրը՝ առևտրի աշխատողներից սկսած մինչև դատարան-դատախազության աշխատողները:

Այդ մարդկանց մեջ էլ քիչ չէին նրանք, որոնք Պարույր Սևակի հետ ունեցած մտերմությունը ճարպկորեն չահարկում էին իրենց դիրքերն ամրապնդելու համար: Եվ պետք է ասել, որ դա ոմանց հաջողվում էր: Պարույր Սևակի հեղինակությունն այնքան մեծ էր, որ երբեմն-երբեմն նրա անվան առջև կուսակցական, պետական, վարչական մարմինների որոշ ղեկավարներ նահանջում էին և տվյալ անձնավորության նկատմամբ վճռական միջոցի չէին դիմում...

Պարույր Սևակը գնել էր սեփական ավտոմեքենա, բայց չուներ վարորդական իրավունքի վկայական: Այդ իրավունքը ստանալու համար նա դիմում է այն ժամանակվա Երևանի միլիցիայի վարչության պետ Սերգեյ Մարտիրոսյանին: Վերջինս Սևակին

մերժում է ասելով. «Պարույր, դու պատկանում ես հայ ժողովրդին: Մինչև ավտոմեքենա վարել չսովորես, քեզ վարորդական իրավունքի վկայական չի տրվի»:

Պարույր Սևակը Ս. Մարտիրոսյանի մոտից հեռացել էր մի քիչ վիրավորված: Օգնության էին հասել նրա «ընկերներից» ոմանք վերոհիշյալ միջավայրից և Պարույր Սևակի համար, հայտնի չէ, թե ինչ ճանապարհով, ձեռք էին բերել վարորդական իրավունքի վկայական: Եվ Պարույր Սևակն ավտոմեքենան վարում էր առանց սովորելու, սիրողական մակարդակով: Նա միայն գիտեր ղեկը պտտեցնել և արագության լծակը փոխել: Ես նույնիսկ հիշում եմ վարորդական իրավունքի վկայական ձեռք բերած անձնավորության անունն ու աշխատանքի վայրը:

Ես Պարուր Սևակին հանդիպել եմ բազմիցս՝ գրողների միությունում, Երևանի քաղկոմում, որտեղ այն ժամանակ աշխատում էի: 1969 կամ 1970 թվականին, այժմ լավ չեմ հիշում, իմ ընտանիքը հանգստանում էր Աղվերանում գտնվող «Երքիմչին» տրեստի պանսիոնատում: Իսկ առանձին քոթեջում հանգստանում էր Պարույր Սևակի ընտանիքը:

Ինչպես ես, այնպես էլ մյուսները, այդ թվում նաև Պարույր Սևակը շաբաթ օրը մեկնում էինք Աղվերան՝ մեր ընտանիքների մոտ: Պարույր Սևակի զբաղեցրած քոթեջի առաջին հարկում տեղադրված էր բիլիարդի սեղան և նա միշտ ծխախոտի գլանակը բերանին, խաղում էր: Մենք ուշադրությամբ հետևում էինք նրա խաղին: Այդ խաղի ընթացքում հանկարծակի Պարույր Սևակի մոտ բռնկվում էր երկարատև ուժեղ հազի նոպա, որի ժամանակ նա գլուխը հենում էր բիլիարդի սեղանին ու մի քանի րոպե ցնցվում էր: Հազի նոպան աստիճանաբար մարում էր և նա նորից շարունակում էր խաղալ...

1971 թ. հունիսի 17-ին ավտովթարից զոհվեց Պարույր Սևակը: Այդ բոթը ցնցող տպավորություն թողեց բոլորիս վրա: Ես մտովի պատկերացրի ավտոմեքենա կանոնավոր վարել չիմացող Պարույր Սևակին ղեկին նստած՝ տանջալի հազի նոպայով: Կարճ ժամանակ անց, պարզվեց ավտովթարի իրական պատճառը, որի մասին պատմել էր բանաստեղծի որդի 13 տարեկան Արմենը:

Վերհիշելով այս ամենը, ես այսօր էլ համոզված եմ, որ Պարույր Սևակը դարձավ կույր պատահականության զոհ: Միաժամանակ ուզում եմ ասել, որ Պարույր Սևակին վարորդական իրավունքի վկայական տվող մարդկանց խղճին էլ է ծանրացած մեծ բանաստեղծի մահը:

Հայաստանի ղեկավար Անտոն Քոչինյանը բարձր էր գնահատում Պարույր Սևակին: Այդ նրա ցանկությամբ էր Պարույր Սևակն ընտրվել Հայաստանի գրողների միության վարչության քարտուղար: Մահացել էր ՍՍՀՄ Գերագույն սովետի պատգամավոր, անվանի գրող Ստեփան Զորյանը: Ո՞վ պետք է փոխարիներ նրան: Եվ 1968 թ. մարտին Անտոն Քոչինյանի ցանկությամբ Պարույր Սևակն ընտրվեց ՍՍՀՄ Գերագույն սովետի պատգամավոր:

Այսօրվա երիտասարդությանը, իհարկե, անծանոթ է Սովետական Հայաստանում հաստատված կարգը: Այն ժամանակ հանրապետությունում ոչ մի կարևոր հարց չէր լուծվում առանց Կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղարի համաձայնության, առանց նրա կամքի: Ճիշտ այնպես, ինչպես հիմա, երբ հանրապետությունում ոչ մի հարց չի լուծվում առանց հանրապետության նախագահի գիտության ու կամքի: Միայն այսօրվա վիճակը հրամցվում է որպես ժողովրդավարություն, իսկ սովետական իշխանության պայմանները՝ վարչահրամայական համակարգ:

Պարույր Սևակն իր տաղանդով, իր մտածողությամբ, իր հասարակական-գրական գործունեությամբ չէր կարող վտանգ ներկայացնել Սովետական Հայաստանի ղեկավարությանը, մասնավորապես Անտոն Քոչինյանին: Ընդհակառակը, ազգային որոշ խնդիրներ, որոնք հասկանալի պատճառներով հնարավոր չէր պաշտոնապես հնչեցնել, դա անում էր Պարույր Սևակը: Հիշենք այս առումով նրա «Անլռելի զանգակատունը», որի համար նա 1967 թ. հենց Անտոն Քոչինյանի նախաձեռնությամբ արժանացավ Հայկական ՍՍՀ Պետական մրցանակի:

Պարույր Սևակի ողբերգական մահից անմիջապես հետո սկսվեց իրարանցում: Նրանք, ովքեր միշտ նախանձից վարկա-

բեկում էին Պարույր Սևակին, անմիջապես փոխվեցին և իրենց փոխարեն սկսեցին այլ տեղ որոնել Պարույր Սևակի թշնամիներին: Աչալուրջ էին նաև Անտոն Քոչինյանի ծպտված հակառակորդները: Հենց նրանց մատուցմամբ էլ զգույշ կերպով չրջանառության մեջ դրվեց առասպելն այն մասին, թե բանաստեղծի մահը ձեռնտու էր հանրապետության ղեկավար Անտոն Քոչինյանին:

Աստիճանաբար չրջանառության մեջ դրվեց այն վերսիան, թե Պարույր Սևակն ընդունելի չէր սովետական իշխանության համար: Այդ կեղծիքի հեղինակները նույնիսկ նեղություն չկրեցին բացատրել կամ էլ հիմնավորել իրենց հնարած սուտը: Սովետական Հայաստանի վերացումից հետո հանդես են գալիս մարդիկ, որոնք կրկնելով չրջանառության մեջ դրված սուտը, անվիճելի տոնով պնդում են դա, չբերելով ոչ մի հիմնավոր փաստարկ:

Միաժամանակ, վերոհիչյալ անձինք մտածված կերպով անտեսեցին Պարույր Սևակի կողմից ավտոմեքենան վատ վարելու իրողությունը և որպես դրա հետևանք տեղի ունեցած ողբերգական ելքով ավտովթարը, առանց որևէ հիմնավորման, ներկայացնում են, պնդելով, թե իշխանությունները սպանեցին Պարույր Սևակին:

Պետք է ազնիվ լինել և մեծ բանաստեղծի ողբերգական մահը չօգտագործել իրենց նեղ, եսասիրական չահերի համար ու չմեղադրել մի մարդու, որը, իսկապես Պարույր Սևակի նկատմամբ դրսևորել է հոգատարություն, նրան համարելով ժամանակակից հայ գրականության նչանավոր դեմքերից մեկը: Որպես ասվածի ապացույց կարող եմ վերոհիչյալ փաստերին ավելացնել հետևյալ օրինակը:

1967 թ. նոյեմբերի 29-ին. տեղի ունեցավ Հայոց ցեղասպանության զոհերի հուչահամալիրի բացումը: Նախօրյակին քննարկվում էր Կիրովի անվան քիմիական կոմբինատից անմար կրակը բերելու խնդիրը: Կարևորելով այդ հարցը Անտոն Քոչինյանն առաջարկել էր այդ կրակը բերող խմբի կազմի ճիչտ ընտրությունը, նկատի ունենալով դրա խորհրդանչական լինելը: Նա

գտնում էր, որ պետք է ընտրել այնպիսի մարդկանց, որոնք օժտված են մեծ ու անվիճելի հեղինակությամբ:

Եվ այդ մարդկանցից մեկն Անտոն Քոչինյանի առաջարկությամբ Պարույր Սևակն էր: Եթե Ա. Քոչինյանը նկատի չունենար Պարույր Սևակին, ապա որևէ մեկը չէր կարող նրան նախատել ուրիչ թեկնածու առաջարկելու համար: Բայց Ա. Քոչինյանն ընտրեց Պարույր Սևակի թեկնածությունը, որովհետև նա բարձր էր գնահատում նրան, նրա դերը երիտասարդությանը հայրենասիրությամբ, դաժան պատմության ընթացքում կրած ազգային կորուստները վերականգնելու և ձեռք բերված արժանապատվորեն պահելու, պաչտպանելու պատասխանատվությամբ դաստիարակելու գործում

Այս է ճչմարտությունը: Եվ Պարույր Սևակի ողբերգական մահը իրենց ստոր կրքերին ծառայեցնող անձանց սպեկուլյատիվ պոպուլիզմը մի օր կավարտվի «քառասուն օրվա» վերջնակետին հասնելով...

Բայց դա բոլորը չէ: Անտոն Քոչինյանի հակառակորդները ճարպիկ կերպով չահարկեցին նաև Պարույր Սևակի «Եղիցի լույս» բանաստեղծությունների ժողովածուի առաջին հրատարակությունը կասեցնելու փաստը, որն իրականացվել էր Մոսկվա ուղարկված հենց իրենց մատնագրի արդյունքով:

Նրանք, այդ չահարկողները նկատի ունենալով Ա. Քոչինյանի հոգատար վերաբերմունքը Պարույր Սևակի նկատմամբ, իրավիճակն այնպես էին ներկայացնում, թե նացիոնալիստական, հակառուսական տրամադրություններ արտահայտող Պարույր Սևակին հովանավորում է Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Քոչինյանը: Այս հանգամանքն օգտագործում էին Ա. Քոչինյանի հակառակորդները, ինչպես Հայաստանում, այնպես էլ Մոսկվայում: Այդ նրանք էին, որ մեթոդիկ կերպով իրենց գործն առաջ էին տանում և ի վերջո հասան նպատակին:

1974 թ. նոյեմբերի 26-ին ՍՄԿԿ Կենտկոմի Քաղբյուրոն ընդունած որոշմամբ Անտոն Քոչինյանին ազատեց Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղարի պաչտոնից, ընդգծե-

լով, որ «լուրջ թերություններ կան Հայաստանի Կոմկուսի գաղափարախոսական-քաղաքական կյանքում, մասնավորապես անբավարար նպատակասլացությամբ է կազմակերպված պայքարը բուրժուական-դաշնակցական պրոպագանդայի դեմ, որը զանազան խողովակներով թափանցում է հանրապետություն: Երևանում և այլ քաղաքներում տեղ են գտել ՍՄԿԿ ազգային քաղաքականության հարցերի չուրջ ծայրահեղական դրսևորումներ և հարձակումներ»:

1974 թ. նոյեմբերի 27-ին տեղի ունեցած ՀԿԿ Կենտկոմի պլենումն ընդունեց հետևյալ որոշումը.

«1. Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի պլենումն ամբողջությամբ ու լրիվ հավանություն է տալիս ընդունված որոշմանը և այն ընդունում է անշեղ ղեկավարման համար:

ՀԿԿ Կենտկոմի պլենումը նշում է Հայկական ՍՍՀ-ում տնտեսական և մշակութային շինարարության ղեկավարման գործում, ինչպես նաև կուսակցական աշխատանքում գոյություն ունեցող լուրջ թերությունները: ՍՄԿԿ Կենտկոմին ուղղված դիմումում ընկ. Ա. Ե. Քոչինյանն ընդունել է դրանց համար իր անձնական պատասխանատվությունը և գտնում է, որ չի կարող այսուհետև կատարել իր վրա դրված պարտականությունները:

Հաշվի առնելով դա և նկատի ունենալով նրա առողջական վիճակը, ընկ. Ա. Ե. Քոչինյանին ազատել Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղարի և Կենտկոմի բյուրոյի անդամի պարտականություններից և բավարարել նրա խնդրանքը թոշակի անցնելու մասին»:

Ահա, այսպես Ա. Քոչինյանի հակառակորդները հասան իրենց նպատակին: Բայց նրանք չբավարարվեցին միայն դրանով:

Ա. Քոչինյանը Հայաստանի Կոմկուսի պատմության մեջ եղավ այն միակ առաջին քարտուղարը, որին ոչ մի աշխատանք չտրվեց: Անուշադրության մատնվեցին նրա բոլոր խնդրանքներն աշխատանքով ապահովելու մասին:

Անտոն Քոչինյանին ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղարի պարտականություններից ազատելու կապակցությամբ հարկ եմ

համարում նշել հետևյալը: Ա. Քոչինյանը, հաշվի առնելով ՍՍՀՄ Սահմանադրության նոր նախագծի քննարկումը, գտնում էր, որ հնարավոր է դրա ընթացքում նորից դնել Լեռնային Ղարաբաղը և Նախիջևանը Հայաստանին միացնելու հարցը:

1966 թ. սեպտեմբերի 30-ին Ա. Քոչինյանը և Հայկական ՍՍՀ Նախարարների խորհրդի նախագահ Բաղալ Մուրադյանը հետևյալ նամակն ուղարկեցին ՍՄԿԿ Կենտկոմ:

«ՍՄԿԿ Կենտկոմի Քարտուղարության հանձնարարության համապատասխան մենք քննարկել ենք ՍՄԿԿ 23-րդ համագումարին հասցեագրված Հայկական ՍՍՀ գիտության ու մշակույթի մի խումբ գործիչների նամակը:

Նամակում դրվում է Լեռնային Ղարաբաղը և Նախիջևանի ԻՍՍՀ-ն Հայկական ՍՍՀ-ին վերադարձնելու հարցը: Նամակի հեղինակները վկայակոչում են պատմական փաստերը և իրենց առաջարկությունը հիմնավորում են տնտեսական, քաղաքական և էթնիկական գործոններով:

Նամակում մատնացույց է արվում հանրահայտ պատմական փաստն այն մասին, որ 46 տարի առաջ Ադրբեջանական ՍՍՀ կառավարությունը հրապարակել է դեկլարացիա այդ տարածքները Հայկական ՍՍՀ տարածքի անբաժան մաս ընդունելու մասին, սակայն դրանց փաստացի վերամիավորումը ձգձգվել է:

Հեղինակների կարծիքով Հայկական ՍՍՀ-ին վերոհիշյալ հողերի վերադարձնելը կնպաստի ժողովուրդների միջև եղբայրության ու բարեկամության հետագա ամրապնդմանը, մեկ անգամ ևս կցուցադրի լենինյան ազգային քաղաքականության հաղթանակը:

Հայկական ՍՍՀ գիտության և մշակույթի մի խումբ գործիչների նամակում բարձրացված հարցերն առաջին անգամ չեն դրվում: ՍՄԿԿ Կենտկոմ և Հայաստանի Կոմկուսի Կենտկոմ հատկապես վերջին տարիներին բազմաթիվ նմանատիպ դիմումներով ու նամակներով դիմել են գիտնականների, ստեղծագործական աշխատողների, մտավորականության ներկայացուցիչների, բանվորների, գյուղատնտեսության աշխատողների, ուսանողության և այլ մեծ խմբեր: Այդ հարցերի առաջքաշումը

լայն արձագանք է գտել և հավանության արժանացել հանրապետության հասարակայնության միջավայրում: Նման տրամադրությունները բաժանելով Հայկական ՍՍՀ բնակչության ճնշող հատվածը ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր կերպով եռանդագին դնում են Ղարաբաղն ու Նախիջևանը Հայկական ՍՍՀ-ին վերադարձնելու հարցը:

Դրան հարկավոր է ավելացնել, որ նման տրամադրությունը լայնորեն տարածված է նաև Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի բնակչության մեջ, որի մասին վկայում են ԼՂԻՄ-ի աշխատավորության տարբեր խմբերից Հայաստանի Կոմկուսի Կենտկոմում ստացված բազմաթիվ նամակները:

Ուշադրությամբ ուսումնասիրելով այդ հարցերի բոլոր ասպեկտները և վերլուծելով այժմ հանրապետությունում ձևավորված իրավիճակը, անհրաժեշտ ենք համարում ՍՄԿԿ Կենտկոմին զեկուցել հետևյալի մասին:

Հայ ժողովրդի համար, ինչպես նաև մյուս ժողովուրդների համար տարածքային հարցերը միշտ էլ ունեցել են կենսական կարևոր նշանակություն:

Նրա համար խոշորագույն ազգային ողբերգություն էր Թուրքիայի կողմից Հայաստանի տարածքի ավելի քան 2/3 մասը կազմող արևմտյան մարզերի զավթումը, որն Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում ուղեկցվում էր մեկ ու կես միլիոն հայերի բնաջնջմամբ: Հենց դրանով պետք է բացատրել հանրապետության բնակչության հիվանդագին ռեակցիան գենոցիդի և հայկական հողերը զավթելու համար պատասխանատվություն կրելուց խուսափելու և պատմությունը կեղծելու փորձեր կատարող թուրքական դիվանագիտության խարդավանքի նկատմամբ:

Տևական ժամանակի ընթացքում Հայաստանի Կոմկուսը ժողովրդի մեջ տանում է բացատրական մեծ աշխատանք, պարզաբանելով պետությունների միջև խաղաղ գոյակցության սկզբունքների կենսագործման և ժողովուրդների միջև խաղաղության ու բարեկամության ամրապնդման ուղղությամբ մեր

կուսակցության ու կառավարության արտաքին քաղաքականությունը:

Աշխատավորության տրամադրությունը վկայում է Սովետական կառավարության և Կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի կողմից վարվող ճիշտ և իմաստուն արտաքին քաղաքականությունն ըմբռնելու մասին:

Սակայն, եթե Թուրքիայի կողմից զավթված տարածքների հարցը առաջ քաշելու աննպատակահարմարության մասին փաստարկին ներկա ժամանակ ժողովուրդն ըմբռնումով է մոտենում, ապա Լեռնային Ղարաբաղն ու Նախիջևանը Հայկական ՍՍՀ-ին վերադարձնելու հարցի կապակցությամբ մենք լուրջ դժվարություններ ենք կրում:

Գործը նրանումն է, որ իրականում Լեռնային Ղարաբաղի և Նախիջևանի տարածքները հնագույն ժամանակներից եղել են Հայաստանի բաղկացուցիչ մասերը:

Անցյալում ոչ մեկի կողմից կասկածանքի տակ չի դրվել Լեռնային Ղարաբաղի և Նախիջևանի պատկանելիությունը: Միայն 1918–1920 թվականներին Հայաստանի և Ադրբեջանի բուրժուական պետությունների ձևավորման ժամանակ և դրանցում դաշնակների և մուսավաթականների տիրապետության ժամանակ Նախիջևանի և Լեռնային Ղարաբաղի հողերը դարձել են Արևմուտքի իմպերիալիստական տերությունների և Թուրքիայի հետադիմական կառավարող շրջանակների պրովոկացիաների օբյեկտ:

Սովետական իշխանության հաստատումից հետո, Ադրբեջանում և Հայաստանում այդ արհեստականորեն ստեղծված տարածքային հարցի լուծման համար առաջանում են իրական պայմաններ ու հնարավորություններ և այդ ուղղությամբ ձեռնարկվում են պրակտիկ քայլեր:

Իսկապես, 1920 թ. դեկտեմբերի 1-ին, այսինքն Հայաստանում սովետական կարգեր հաստատելուց մեկ օր անց, Բաքվի սովետի հանդիսավոր նիստում, ողջունելով Հայաստանում սովետական կարգերի հաղթանակը, Ադրբեջանի հեղկոմի նախագահ, նշանավոր հեղափոխական գործիչ ընկ. Նարիմանովը

հրապարակեց Սովետական Ադրբեջանի կառավարության դեկլարացիան, որում ասվում էր. «Անտանտին ծախված մուսավաթիների ու դաշնակների կառավարությունները նրա ձեռքին ժողովուրդներին դարձրել էին կույր գործիք և իրենց իմպերիալիստական ձգտումներից ելնելով մի ժողովրդին հանել էին մյուսի դեմ, ստեղծելով Ղարաբաղի, Զանգեզուրի, Նախիջևանի և այլ տարածքային հարցեր, որոնք չէին կարող լուծվել դաշնակ-մուսավաթական հետադիմության ջանքերով:

Սովետական Ադրբեջանը...հայտարարում է, որ այժմյանից տարածքային հարցերը չեն կարող դառնալ երկու դարավոր հարևան ժողովուրդների փոխադարձ արյունահեղության պատճառ: Զանգեզուրի և Նախիջևանի գավառների տարածքը հանդիսանում է Սովետական Հայաստանի անբաժանելի մասը, իսկ Լեռնային Ղարաբաղի աշխատավոր գյուղացիությանը տրվում է ինքնորոշման լիակատար իրավունք...» (Ադրբեջանի կոմունիստական բոլշևիկների կուսակցության և Բաքվի կոմիտեների օրգան «Կոմունիստ» թերթ, 2-ը դեկտեմբերի 1920 թ. թիվ 178):

Այդ նիստում ընդունված բանաձևում մատնացույց է արվում. «Բաքվի սովետի, ԱզՀեղկոմի հանդիսավոր նիստը բանվորական և կարմիրբանակային բոլոր կազմակերպությունների հետ միասին, պրոլետարական անկեղծ ուրախության զգացմունքներով, նշելով Հայաստանում սովետական հեղափոխության հաղթանակի փաստը, ողջունում և ամբողջությամբ հավանություն է տալիս ընկ. Նարիմանովի հրապարակած պատմական դեկլարացիային, որն ընդմիշտ վերացնելով Հայաստանի և մահմեդական աշխարհի միջև դարավոր ազգամիջյան երկպառակությունները ու արյունահեղ պատերազմները, Անդրկովկասի և ամբողջ Արևելքի ժողովուրդների պատմության մեջ բացում է երջանիկ կյանքի նոր էջ» (նույն տեղը):

Ինչպես երևում է այդ դեկլարացիայից, Նախիջևանի գավառի տարածքն անվերապահորեն ճանաչվել է Սովետական Հայաստանի անբաժանելի մասը: Ինչ վերաբերում է Լեռնային Ղարաբաղին, ապա այդ տարածքի հանձնումը Հայաստանին, հետագայում ամրապնդվել է Հայկական ՍՍՀ ժողկոմսովետի նախագահ Ա. Մյասնիկյանի ստորագրությամբ 1921 թ. հունիսի 12-ին հրապարակված դեկրետով, որտեղ ասված է, որ Ադրբեջանի Սովետական Սոցիալիստական Հանրապետության Հեղկոմի դեկլարացիայի հիման վրա հայտարարվում է, որ այսուհետև Լեռնային Ղարաբաղը հանդիսանում է Հայաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետության անբաժանելի մասը:

Ադրբեջանական հեղկոմի դեկլարացիան արժանացավ Անդրկովկասի աշխատավորության, Հայաստանի Կոմկուսի և հատկապես հայ ժողովրդի ջերմ հավանությանը:

Այդ որոշումները լայնորեն հրապարակվել են մամուլում և ամբողջ աշխարհի առջև հռչակվել են որպես ազգային հարցի փայլուն լուծման նմուշ, որը հնարավոր է միայն սոցիալիզմի պայմաններում:

Սովետական Միության Կոմունիստական կուսակցության շատ նշանավոր գործիչներ Ս. Մ. Կիրովը, Գ. Կ. Օրջոնիկիձեն և մյուսները բազմիցս, ինչպես հրապարակային ելույթներում, այնպես էլ ՌԿ(բ)Կ Կավբյուրոյի նիստերում հավանություն են տվել Ադրբեջանի հեղկոմի դեկլարացիային և անվերապահորեն արտահայտվել են Նախիջևանն ու Ղարաբաղը Հայաստանի կազմում թողնելու օգտին:

Հետագայում այդ որոշումները մնացին չիրականացված:

Ինչ վերաբերում է Նախիջևանին, ապա դա կատարվել է Թուրքիայի պնդմամբ, որի կառավարող շրջանները Անդրկովկասում հետապնդում էին սովետական հանրապետությունների ժողովուրդների շահերի դեմ ուղղված իրենց սեփական պանթուրքական նպատակները:

Հենց սովետական հանրապետությունների գործերին Թուրքիայի միջամտության արդյունքում և Սովետական Ադրբեջանի ու Սովետական Ռուսաստանի դիրքորոշմանը հակառակ, Նախիջևանի մարզը չի մտցվել Հայկական ՍՍՀ կազմի մեջ:

Այդ ժամանակաշրջանում, 1921 թվականին, երիտասարդ Սովետական Ռուսաստանը ներքին և միջազգային բնույթի մի շարք պատճառներով (Կրոնշտադտում էսէռների խռովությունը,

արևմտյան իմպերիալիզմի ճամբար Թուրքիայի անցնելու վտանգը, Բաթումում Անտանտի նոր դեսանտի իջեցման վտանգը և այլն) ստիպված եղավ համաձայնվել Ադրբեջանի հովանավորության տակ Նախիջևանի մարզը հանձնելու մասին Թուրքիայի պնդմանը:

Սակայն, հարկավոր է նշել, որ նույնիսկ այդ պայմանագրով իրավաբանորեն Նախիջևանի մարզը չի մտցվել Ադրբեջանի կազմի մեջ, միայն որպես ինքնավար տարածք, հանձնվել է Ադրբեջանի «հովանավորությանը», որովհետև այն ժամանակ միանգամայն ակնհայտ էր, որ Նախիջևանի մարզը տարածքով ու տնտեսապես գտնվում էր Հայաստանի կենտրոնում և կազմում էր նրա անբաժանելի մասը և չէր կարող մտցվել Ադրբեջանի կազմի մեջ:

Ինչ վերաբերում է Հայկական ՍՍՀ կազմի մեջ Լեռնային Ղարաբաղի մտցնելուն, ապա դա նույնպես չիրականացվեց և Լեռնային Ղարաբաղը, չնայած իր գերակշիռ հայկական բնակչության (1924 թ. Ադրբեջանի պյուղատնտեսական մարդահամարի տվյալներով ԼՂԻՄ-ում հայերը կազմում էին բնակչության 94.4 տոկոսը), միակողմանի մտցվեց Ադրբեջանի կազմի մեջ Լեռնային Ղարաբաղի բնակչության դեպի Բաքու քաղաք տնտեսապես ձգտելու միակ փաստարկի հիման վրա:

Ադրբեջանական ՍՍՀ-ին Լեռնային Ղարաբաղի հանձնումից անցել է ավելի քան 40 տարի: Որոշումն ընդունելու պահին չի եղել որևէ իրավական ու քաղաքական կասկածանք Լեռնային Ղարաբաղը Հայաստանին պատկանելու վերաբերյալ: Այն ժամանակվա Հայաստանի ծայրահեղ տնտեսական հետամնացության պայմաններում այդպիսի հարցը, ինչպես դեպի Բաքու տնտեսապես ձգտումը կարող էր դրվել, բայց այդ հարցի լուծման ժամանակ չէր կարող գլխավորը լինել, քանի որ ոչ միայն Լեռնային Ղարաբաղը, այլև այն ժամանակ ամբողջ Հայաստանն էր տնտեսապես ձգտում դեպի Բաքու և Թբիլիսի:

Այժմ այդ միակ փաստարկը հանված է. առաջին, որովհետև Սովետական իշխանության տարիներին Սովետական Հայաստանը ռուս մեծ ժողովրդի անշահախնդիր օգնության շնորհիվ

դարձել է Սովետական Միության ինդուստրիալ առաջավոր հանրապետություններից մեկը և այժմ ամբողջապես ի վիճակի է ապահովել Լեռնային Ղարաբաղի տնտեսական հաջող զարգացումը:

Երկրորդ, որովհետև Ադրբեջանի կազմում Լեռնային Ղարաբաղի գտնվելու քառասուն տարին իրավունք է տալիս ասել այն մասին, որ դա չի ապահովել այդ երկրամասի տնտեսական և մշակութային անհրաժեշտ զարգացումը:

Վիճակագրությունը ցույց է տալիս, որ այդ տարիներին Ղարաբաղի բնակչությունը չի աճել: Ավելին, մարզի հայկական բնակչությունը վերջին 30 տարիներին (1926 և 1959 թթ.) պակասել է: Եթե 1926 թվականին Լեռնային Ղարաբաղում հաշվվում էր 111.694 հայ, ապա 1959 թվականին՝ 110.053 հայ:

Ղարաբաղի բնակչությունն այժմ էլ 85 տոկոսով կազմված է հայերից և հենց դրա հիման վրա այն ճանաչվել է որպես ազգային ինքնավարություն: Տարածքով մարզը սահմանակից է Հայաստանին, հանդիսանում է նրա օրգանական շարունակությունը:

Այսպիսով, ցանկացած տարածքային հարցի լուծման ժամանակ հիմնական փաստարկները խոսում են Հայկական ՍՍՀ-ին Լեռնային Ղարաբաղը միացնելու օրինաչափության մասին:

Կարծիքն այն մասին, թե հարկավոր չէ դնել Ղարաբաղն Ադրբեջանից Հայաստանին հանձնելու հարցը, քանի որ երկու տարածքներն էլ սովետական են, չի կարելի համարել հիմնավորված, որովհետև, եթե քաղաքական տեսակետից դա, իսկապես նույնն է, ապա բոլորովին էլ միևնույնը չէ, թե մշակութային և տնտեսական տեսակետից ինչպիսի հաջողությամբ է զարգանում սովետական այս կամ այն երկրամասը, որտեղ ապրում են սովետական մարդիկ: Ղարաբաղը Հայաստանին հանձնելով կլուծվեն նաև մի շարք այլ կարևոր հարցեր.

ա) լիովին հասկանալի է, որ հայկական սոցիալիստական մշակույթը, այսինքն Ղարաբաղի բնիկ բնակչության մշակույթը կարող է նշանակալիորեն լավ զարգանալ Հայկական ՍՍՀ-ի

մշակույթի ընդհանուր համակարգում: Ղարաբաղի արվեստը, մամուլը, ռադիոն, մշակութային-լուսավորչական հիմնարկությունները, գեղարվեստական ինքնագործունեությունը կարող են ավելի լիարժեք զարգանալ առնչվելով հայկական մշակույթին, երբ այժմ նույնիսկ Հայաստանից առանձին գաստրոլային խմբերի ելույթները Ղարաբաղում հանդիսանում են հազվադեպ երևույթ:

բ) Ղարաբաղի բնակչության միջնակարգ և բարձրագույն կրթության զարգացման համար ուսուցչական և այլ կադրերի ապահովման տեսակետից Հայաստանն ունի մեծ հնարավորություններ: Միջնակարգ դպրոցներն ավարտած Ղարաբաղի պատանիներն ու աղջիկները կստանան մայրենի լեզվով կրթությունը շարունակելու մեծ հնարավորություն:

Լեռնային Ղարաբաղի հանձնումը կվերացնի ստեղծված ոչ կանոնավոր վիճակը, երբ փոքրաքանակ հայ ժողովուրդը Սովետական Միության պայմաններում ունի երկու պետականություն. մեկը՝ Միութենական Հայկական հանրապետությունը, մյուսը՝ նրան սահմանակից ինքնավար ազգային մարզը, բայց այլ միութենական հանրապետության կազմում:

Վերը շարադրվածի հիման վրա և հաշվի առնելով հանրապետությունում ներկա իրավիճակը, գտնում ենք ծայրահեղ անհրաժեշտ քննարկել Նախիջևանը և Լեռնային Ղարաբաղը Հայկական ՍՍՀ-ին վերադարձնելու հետ կապված հարցերը:

Բարձրացված հարցերը քննարկելու ժամանակ, մենք ելել ենք Սովետական Միության ժողովուրդների և, մասնավորապես, հայ և ադրբեջանական ժողովուրդների միջև եղբայրական բարեկամության հետագա ամրապնդումն ապահովելու հիմնական ու գլխավոր խնդրից:

Այս հարցի լուծված չլինելը կուսակցական մարմինների գործունեության և հանրապետության բնակչության լայն շերտերում քաղաքական- դաստիարակչական աշխատանք տանելու մեջ ստեղծում է լուրջ դժվարություններ:

Մեր կարծիքով նպատակահարմար կլիներ քննարկել և դրականորեն լուծել Նախիջևանն ու Լեռնային Ղարաբաղը Հայկական ՍՍՀ-ին հանձնելու հարցը, դրա հետ միասին Նախիջևանի ԻՍՍՀ-ն կարող է պահպանել իր ինքնավարությունը Հայկական ՍՍՀ կազմում, որի տարածքում գտնվում է:

Սակայն, եթե ներկա փուլում Հայկական ՍՍՀ-ին Նախիջևանի վերադարձնելը կկապվի հայտնի բարդությունների հետ, ապա Հայկական ՍՍՀ-ին Լեռնային Ղարաբաղի վերադարձնելը կապված չէ որևէ դժվարության հետ և կարող է առանց ցավի իրականացվել:

Հնարավոր անցանկալի ռեակցիայից մտավախությունը զուրկ է հիմքից, քանի որ հարցը դրվում է ոչ թե Ադրբեջանական ՍՍՀ-ի տարածքից ինչ-որ հատված անջատելու, այլ միութենական հանրապետության հետ ինքնավար ազգային մարզը միավորելու մասին, որոնցում բնակչությունը միատարր հայկական է:

Այս հարցի դրական լուծումը կունենա բացառիկ կարևոր քաղաքական նշանակություն և կհանդիսանա մեր կուսակցության, Լենինյան կենտրոնական կոմիտեի և ՍՄԿԿ Կենտկոմի Քաղբյուրոյի իմաստուն ազգային քաղաքականության հաղթանակի նոր վկայություն»:

Այս նամակի կապակցությամբ նույնիսկ ՍՄԿԿ կենտկոմի քարտուղարությունը Լ. Բրեժնևի հանձնարարությամբ ընդունեց որոշում, որով հանձնարարվում էր Հայաստանի ու Ադրբեջանի ղեկավարների մասնակցությամբ քննարկել բարձրացված հարցը: Սակայն Սուսլովի ջանքերով ընդունված որոշումը թողնվեց անհետևանք:

Չնայած այդ հանգամանքին, Ա. Քոչինյանը չնահանջեց և շարունակում էր հետևողականորեն զբաղվել Լեռնային Ղարաբաղի և Նախիջևանի հարցով:

Ա. Քոչինյանը նույնիսկ մի կողմ դրեց ամեն ինչ և նորից այդ հարցը բարձրացրեց Լ. Բրեժնևի առջև, երբ վերջինս 1970 թ. նոյեմբերին այցելել էր Հայաստան: Սովետական Հայաստանի նշանավոր քաղաքական և պետական գործիչ, Երևանի քաղաքային սովետի գործկոմի նախագահ Մուրադ Մուրադյանը խմբագրությանը սիրով տրամադրել է այդ մասին հետևյալ

գրառումը, որը հարկ եմ համարում ներկայացնել ընթերցողի ուշադրությանը:

«ՍՄԿԿ ԿԿ Գլխավոր քարտուղար Լ. Ի. Բրեժնևի այցը Հայաստան՝ Հայաստանում Սովետական կարգերի հաստատման 50-ամյակի տոնակատարություններին մասնակցելու առիթով:

Հանդիսավոր արարողություններից հետո նոյեմբերի 29-ին կայացավ Լ. Ի. Բրեժնևի հանդիպումը Հայաստանի ղեկավարության հետ:

Մասնակցում էին՝ ՀԿԿ ԿԿ բյուրոյի և հանրապետության կառավարության ողջ կազմը՝ ՀԿԿ ԿԿ առաջին քարտուղար Ա. Ե. Քոչինյանի գլխավորությամբ:

ՀԿԿ ԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Ա. Ե. Քոչինյանի հանձնարարությամբ նախապատրաստվել էին բոլոր անհրաժեշտ նյութերը՝ Ղարաբաղի և Արևմտյան Հայաստանի տարածքների պատկանելիության մասին:

ԿԿ բյուրոյի նիստերի դահլիճում կախված էին Ղարաբաղի և Արևմտյան Հայաստանի մինչև 1920 թվականի քարտեզները, որոնց վրա Ա. Ե. Քոչինյանը հանգամանորեն բացատրեց պատմական այն բոլոր իրադարձությունները և տարբեր ժամանակաշրջանների այն քաղաքական իրավիճակները, որոնց պատճառով Հայաստանը կորցրել էր դարեր շարունակ իրեն պատկանող այդ տարածքները:

Եզրափակելով իր խոսքը, Ա. Ե. Քոչինյանը հարց բարձրացրեց ՍՄԿԿ ԿԿ Գլխավոր քարտուղար Լ. Ի. Բրեժնևի առաջ և խնդրեց ձեռնարկել հնարավոր բոլոր միջոցները՝ հայ ժողովրդի և սփյուռքահայության համար կենսական կարևոր նշանակություն ունեցող այս խնդիրը լուծելու համար:

Ա. Ե. Քոչինյանի հաղորդման ամբողջ ընթացքում Լ. Ի. Բրեժնևը նրան չընդհատեց, ոչ մի հարց չտվեց, միայն ծխում էր և ուշադիր լսում:

Միայն Ա. Ե. Քոչինյանի հաղորդումը վերջանալուց հետո նա արտասանեց ընդամենը մի նախադասություն՝ «Ребята - это война» («Տղաներ, դա պատերազմ է»):

Եվ սրանով ավարտվեց Լ. Ի. Բրեժնևի հանդիպումը հանրապետության ղեկավարության հետ:

Ճանապարհ գցելուց առաջ նա ցանկություն հայտնեց ԿԿ-ի չենքի բակում լուսանկարվել հանրապետության ղեկավարության հետ»:

Այդ ընթացքում փոխվել էր Ադրբեջանի ղեկավարությունը և Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար էր դարձել Հեյդար Ալիևը:

Հ. Ալիևը գործադրեց բոլոր միջոցները և հասավ նրան, որ Բրեժնևին ու Սուսլովին համոզեց, թե, առհասարակ, Լեռնային Ղարաբաղի ու Նախիջևանի հարց գոյություն չունի, որ այդ հարցը բարձրացրել են Հայաստանի նացիոնալիստները Կենտկոմի առաջին քարտուղար Ա. Քոչինյանի գլխավորությամբ: Ահա, այսպես ինտերնացիոնալիստի դիմակի տակ ծպտված մոլի նացիոնալիստ Ալիևին հաջողվեց կենտրոնում Ա. Քոչինյանին ներկայացնել որպես հայկական նացիոնալիզմի առաջնորդ:

Միևնույն ժամանակ Հայաստանի ներսում ակտիվանում էին Ա. Քոչինյանի հակառակորդները, նրա հասցեին տարածելով զավեշտի հասնող ստահոդ լուրեր: Հանրահայտ է, օրինակ, թե Ա. Քոչինյանը ինչպիսի ջանքեր գործադրեց Հայաստանում աղամանդ մշակող ձեռնարկություն հիմնադրելու գործում: Այդ ձեռնարկության գործարկումով Հայաստանի պետական բյուջեն զգալիորեն ավելացավ: Ես այս փաստը հիշեցի, որպեսզի ասեմ, թե Ա. Քոչինյանի հակառակորդներն ինչպիսի ստորության դիմեցին, նրան վարկաբեկելու համար, անվանելով՝ «Անտոն Բոլյանտիչ»:

Բայց Ա. Քոչինյանի հակառակորդները դրանով չբավարարվեցին: Նրանք Մոսկվան հեղեղել էին Ա. Քոչինյանին նացիոնալիզմի մեջ մեղադրող բազմաթիվ անստորագիր նամակներով: Ստեղծվել էր տարօրինակ վիճակ: Մի կողմից՝ Հ. Ալիևն էր Մոսկվայում տարածում և ամրապնդում Ա. Քոչինյանին նացիոնալիզմի մեջ մեղադրելը: Մյուս կողմից Հայաստանում նրա հակառակորդներն էին մեղադրում նացիոնալիզմի մեջ:

Ի՞հարկե, ես հեռու եմ այն մտքից, թե Հայաստանի ներսում Ա. Քոչինյանի հակառակորդները համագործակցում էին Հ. Ա-

լիևի հետ: Բայց փաստը մնում է փաստ: Նրանց նպատակը մեկն էր՝ ասպարեզից հեռացնել Ա. Քոչինյանին: Ալիևի նպատակն էր Ա. Քոչինյանին ասպարեզից հանելով՝ մոռացության տալ և ձախողել Լեռնային Ղարաբաղի ու Նախիջևանի հարցի արծարծումը: Հայաստանում էլ Ա. Քոչինյանի հակառակորդները գործում էին կարիերիստական մղումներով:

Այսպիսով Ա. Քոչինյանի հակառակորդները դրսում և ներսում հետապնդում էին տարբեր նպատակ: Բայց նրանց միավորում էր մարդկային բնավորության ամենավատ հատկությունը՝ ստորությունը:

Կարծում եմ, որ վերևում բերված Ա. Քոչինյանին աշխատանքից ազատելու որոշումն ասվածի պերճախոս վկայությունն է:

——...——

1939-1974 թթ. Ա. Քոչինյանը, գտնվել է Հանրապետության ղեկավար կազմի մեջ, որից 1952-1966 թթ զբաղեցրել է Հայկական ՍՍՀ Նախարարների խորհրդի նախագահի պաշտոնը, իսկ 1966-1974 թթ. անընդմեջ ընտրվել է Հայաստանի Կոմունիստական կուսակցության Կենտկոմի առաջին քարտուղար, դարձել Սովետական Հայաստանի փաստացի ղեկավար:

Բազմաբեղուն է եղել Ա. Քոչինյանի գործունեությունը վերոհիշյալ պատասխանատու պաշտոններում: Դրա մասին գրելու համար կպահանջվի մի քանի հատոր:

Ես այժմ իմ առջև նպատակ չեմ դրել լուսաբանել Ա. Քոչինյանի ամբողջ գործունեությունը: Նրա գործունեության լուսաբանումը մնում է մեր ապագա երիտասարդ պատմաբաններին ու հետազոտողներին, որոնք, համոզված եմ, որ ձերբազատված կլինեն գաղափարախոսական կանխադրույթների կաղապարներից և օբյեկտիվ ու անաչառ դիրքերից կգնահատեն Անտոն Քոչինյանի ժամանակն ու նրա գործունեությունը:

Անտոն Քոչինյանն ապրել է 77 տարի, որից 14 տարի վարել է Հայաստանի կառավարության նախագահի պաշտոնը, իսկ 8 տարի եղել է Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար: Ընդամենը 22 տարի:

Ի՞նչ է արել այդ տարիների ընթացքում Ա. Քոչինյանը Հայաստանի ու հայ ժողովրդի համար:

Այս հարցին պատասխանելու նպատակով հարկ եմ համարում ընդհանուր գծերով, այն էլ շատ համառոտ, ընթերցողի ուշադրությանը ներկայացնել մի քանի իրողություն:

Առաջին. Սովետական Հայաստանը դարձավ հսկայական շինհրապարակ: 1963 թվականին սկսվեց և մեծ թափով ընթանում էր Արփա-Սևան ջրատարի կառուցումը:

1967 թ. հունիսին Ա. Քոչինյանը ձեռնարկեց Երևանի մետրոպոլիտենի կառուցումը: Այդ կապակցությամբ Ա. Քոչինյանն ու Բ. Մուրադյանը հետևյալ նամակն են ուղարկել ՍՄԿԿ Կենտկոմ և ՍՍՀՄ Նախարարների խորհուրդ. **«Հայաստանի մայրաքաղաք Երևանը Սովետական Միության արագ զարգացող քաղաքներից մեկն է: Սովետական իշխանության տարիներին քաղաքի բնակչությունը 40 հազարից աճել է մինչև 700 հազար մարդու: Վերջին ժամանակներում բնակչության տարեկան աճը կազմում է 25-30 հազար մարդ:**

Կոմունիստական կուսակցության կենտկոմը և Հայկական ՍՍՀ նախարարների խորհուրդը միջոցներ են ձեռնարկում կանխելու քաղաքի հետագա չափից ավելի աճը: Սակայն, բոլոր հնարավոր սահմանափակումների դեպքում էլ քաղաքի բնակչությունը 1980 թվականին կհասնի մեկ միլիոն մարդու:

Արդեն այժմ կան մեծ դժվարություններ բնակչությանը քաղաքային տրանսպորտով ապահովելու գործում: Դրանք ավելի կմեծանան քաղաքի հետագա աճի չափով:

1966 թվականին մինչև 1980 թ. Երևան քաղաքի զարգացման տեխնիկատնտեսական հիմնավորման ու հաստատման ժամանակ ՍՍՀՄ Պետշինին առընթեր քաղաքացիական շինարարության և ճարտարապետության պետական կոմիտեն հաստատեց քաղաքում մեծ թողունակություն ունեցող արագաշարժ տրանսպորտի ստեղծման անհրաժեշտությունը:

«Կավտրանսնախագիծ» ինստիտուտը կազմել է Երևան քաղաքում արագաշարժ ռելսային տրանսպորտի շինարարու-

թյան տեխնիկատնտեսական հիմնավորումը: Մանրակրկիտ և գործնական հաշվարկները՝ հաշվի առնելով ռելիեֆի կտրուկ կտրտվածությունը (ծովի մակերևույթից բարձրությունը 850-ից մինչև 1350 մետր է), ցույց տվեցին, որ մետրոպոլիտենը հանդիսանում է ավելի նպատակահարմար, կենսականորեն անհրաժեշտ և շահաբեր արագաշարժ տրանսպորտի տեսակ:

Մետրոպոլիտենի առկայության դեպքում սահմանամերձ քաղաքի համար կլուծվեն նաև մի շարք կարևոր կենսական հարցեր. օդային հարձակման դեպքում բնակչության արագ պատսպարում, նրա արագ էվակուացում քաղաքի կենտրոնից, քաղաքի բոլոր հատվածներում փրկարար աշխատանքի կազմակերպում ու իրականացում և այլն:

Տեխնիկատնտեսական հիմնավորման լավագույն տարբերակը նախատեսում է Երևան քաղաքում 21 կիլոմետր երկարությամբ մետրոպոլիտենի կառուցումը: Շինարարության ընդհանուր արժեքն է 90 միլիոն ռուբլի, մեկ կիլոմետրի արժեքը՝ 4,2 միլիոն ռուբլի, որը նշանակալիորեն ցածր է երկրի մյուս քաղաքներում մետրոպոլիտենի շինարարության արժեքից:

Շինարարությունը նախատեսվում է իրականացնել երկու հերթով: Առաջին հերթը՝ 13 կմ երկարությամբ, օրական թողունակությամբ 400 հազար մարդ: Երկրորդ հերթը՝ 8 կմ երկարությամբ, օրական թողունակությամբ 600 հազար մարդ, 30 միլիոն ռուբլի արժողությամբ:

Մետրոպոլիտենի շինարարությունը կապահովվի թունելի հորատանցող կաղրերով, որոնք այժմ զբաղված են Արփա գետի ջրերը Սևանա լիճ տեղափոխող թունելի շինարարությամբ:

Հայաստանի Կոմկուսի Կենտկոմը և Հայկական ՍՍՀ Նախարարների խորհուրդը խնդրում են թույլ տալ 1967 թվականից սկսել Երևան քաղաքում մետրոպոլիտենի շինարարության նախագծումը»:

Մետրոպոլիտենի կառուցման խնդիրը միայն այս նամակով չլուծվեց: Ա. Քոչինյանը հսկայական ջանքեր գործադրեց, որպեսզի նախ՝ Միութենական կառավարությունը համաձայնվեր փոխելու այնքան դժվարությամբ ընդունված ստորգետնյա

արագընթաց տրամվայի կառուցման մասին որոշումը: Միաժամանակ Ա. Քոչինյանը նախագծողներին հանձնարարել էր իր պատասխանատվությամբ ստորգետնյա տրամվայի փոխարեն նախագծերը կազմել մետրոպոլիտենի համար:

Վերջապես Ա. Քոչինյանը հասավ նրան, որ Միութենական կառավարությունը ոչ միայն համաձայնվեց Երևանում մետրոպոլիտեն կառուցելու առաջարկությանը, այլև հատկացրեց պահանջվող գումարը: Հարկ է նշել, որ դա հեշտությամբ ձեռք չբերվեց: Բայց կարող եմ վստահաբար ասել, որ այսօր Երևանում գործող մետրոպոլիտենի համար մենք պարզապես պարտական ենք Ա. Քոչինյանին:

Սկսվեց եռուն աշխատանք մետրոպոլիտենի շինարարության համար: Մինչև աշխատանքից ազատվելը Ա. Քոչինյանը մշտապես հետևում էր մետրոպոլիտենի շինարարությանը:

Ասվածի կապակցությամբ ուզում եմ հիշել հետևյալ դեպքը: 1973 թ. փետրվարի 10-ին Լենինի պողոտայի (այժմ Մաշտոցի) 41, 43 և 45 շենքերի բնակիչների մի մեծ խումբ, որոնց մեջ էին ՍՍՀՄ ժողովրդական արտիստներ Առնո Բաբաջանյանը, Վարդան Աճեմյանը և Արուս Ասրյանը, դիմել էին Երևանի քաղսովետի գործկոմ, պահանջելով իրենց շենքերի բակից տեղափոխել մետրոպոլիտենի շինարարության համար դրված օդափոխիչ խողովակները, որոնց աղմուկը խանգարում էր ստեղծագործությամբ զբաղվող բնակիչներին:

Մեծ էր այդ դիմումը ստորագրողների հեղինակությունը և քաղսովետի գործկոմի նախագահի տեղակալ Արամ Արամյանի համար ստեղծվել էր դժվար կացություն՝ ոչ հնարավոր էր խողովակները տեղափոխել և ոչ էլ հնարավոր էր մերժել մեր արվեստի նշանավոր գործիչներին: Օգնության համար դիմեցին Ա. Քոչինյանին:

Ա. Քոչինյանը դեռևս Հայրենական մեծ պատերազմի տարիներից ճանաչում էր Վարդան Աճեմյանին: Նրանց միջև հաստատվել էին ջերմ հարաբերություններ: Եվ ահա, ուշ երեկոյան Ա. Քոչինյանը զանգահարում է Աճեմյանին:

–Վարդան, բարև:

Ա. Քոչինյանը սովորություն ուներ իր մտերիմներն դիմել անունով: Լսելով Վ. Աճեմյանի պատասխան ողջույնը, նա շարունակեց.

-Լսիր, Վարդան, ձեր տան հարևանությամբ կառուցվող մետրոյի կայարանն առաջարկում են կոչել «Ուսանողական»: Ուզում եմ քո կարծիքն իմանալ:

Վ. Աճեմյանը փոքր-ինչ մտածեց ու ասաց.

-Իսկ լավ չի՞ լինի, որ կոչենք «Երիտասարդական»:

-Ես էլ եմ այդպես կարծում:

Վարդան Աճեմյանը նրբանկատ մարդ էր: Նա ճիշտ էր հասկացել Ա. Քոչինյանի հեռախոսազանգի իմաստը: Բնակիչները դադարեցին բողոքել: Մետրոյի կայարանն էլ կոչվեց «Երիտասարդական»:

1973 թ. հունիսի 18-ին Ա. Քոչինյանը նախաձեռնեց Երևանի գլխավոր օդանավակայանն ընդարձակելու գործը, որը պահանջում էր հսկայական նյութական ու ֆինանսական միջոցներ: Այդ նպատակով նրա և Նախարարների խորհրդի նախագահ Գրիգոր Արզումանյանի ստորագրությամբ հետևյալ նամակն ուղարկվեց ՍՄԿԿ Կենտկոմ և ՍՍՀՄ Նախարարների խորհուրդ. **«Երևանի օդանավակայանի ապասասրահը կառուցվել է Քաղաքացիական ավիացիայի նախարարության կողմից՝ ժամում 200 ուղևոր թողունակությամբ: Փաստորեն 1972 թվականին օդանավակայանի ծանրաբեռնվածությունը եղել է չորս անգամ ավելի:**

ՍՍՀՄ Նախարարների խորհրդի որոշմամբ Երևանի օդանավակայանը 1972 թվականից համարվել է միջազգային օդանավակայան: Այստեղից թռիչքներ են կատարվում Բեյրութ, Ամման, իսկ 1974 թվականից կսկսեն Երևան ժամանել Լիբանանի ավիաընկերության օդանավերը:

Սպասասրահի ծայրահեղ նեղ պայմաններն արգելակում են ինչպես ներքին, այնպես էլ միջազգային ավիափոխադրումների հետագա զարգացմանը:

Այնինչ Քաղաքացիական ավիացիայի նախարարության նախատեսմամբ առաջիկա տարիներին Երևանի օդանավակայանում ուղևորների փոխադրումը կավելանա և կհասնի տարեկան մինչև 3-3,5 միլիոն ուղևորի (1972 թվականին եղած 1,5 միլիոն մարդու դեպքում):

Հաշվի առնելով ստեղծված իրավիճակը և Երևանի օդանավակայանից ավիափոխադրումների ավելացման հեռանկարը, Հայաստանի Կոմկուսի Կենտկոմը և Նախարարների խորհուրդը խնդրում են հանձնարարել ՍՍՀՄ Քաղաքացիական ավիացիայի նախարարությանը և ՍՍՀՄ Պետպլանին քննարկել և որոշել Երևանի օդանավակայանի վերակառուցման և ընդլայնման հարցը»:

Ահա, այսպես դրվեց Երևանի նոր «Զվարթնոց» օդանավակայանի շինարարության հիմքը, որի շահագործումն արդեն կատարվեց Ա. Քոչինյանի աշխատանքից ազատվելուց հետո:

Ա. Քոչինյանին հաջողվեց Հայաստանում դնել Ատոմակայանի հիմքը: Դա նրա հեռատեսության արդյունքն էր և մեծ ծառայությունը Հայաստանին: Ատոմակայանը իր գոյությամբ ոչ միայն նպաստում է Հայաստանի էներգետիկ անկախությանը, այլև իր նպատակային տեղադրմամբ ապահովում է Հայաստանի անվտանգությունը, զսպում է մեր երկրի նկատմամբ ոչ բարեկամաբար տրամադրված արտաքին ուժերի ախորժակը:

Այլապես ինչո՞վ պետք է բացատրել Եվրոմիության անհասկանալի պահանջը Հայաստանի ատոմակայանը փակելու վերաբերյալ, երբ հենց այդ նույն Եվրոպայում գտնվող մեծ ու փոքր երկրներում գործում են բազմաթիվ ատոմակայաններ, որոնց գոյության մասին չեն խոսում և դրանց փակման համար չեն աղմկում:

Անտոն Քոչինյանի հետևողականության և ջանքերի շնորհիվ կառուցվեցին Երևան- Սևան մայրուղին, «Հրազդան» մարզադաշտը, «Ռոսիա» կինոթատրոնը, Պուշկինի լեռնանցքի թունելը, Մխչյանի պոմպակայանը, Կապան-Գորիս ավտոճանապարհը և այլն, և այլն:

Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար աշխատելու տարիներին Ա. Քոչինյանի եռանդուն ջանքերի շնորհիվ շահագործման հանձնվեց 110 արդյունաբերական ձեռնարկու-

թյուն, ստեղծվեցին 32 արտադրական, գիտաարտադրական և արտադրատեխնիկական միավորումներ: Հանրապետության արդյունաբերական ձեռնարկությունները յուրացրին 300 նոր արտադրատեսակ: Ավարտվեց Երևանի, Հրազդանի և Կիրովականի ջերմաէլեկտրակայանների, Որոտանի կասկադի առաջնեկի՝ Տաթևի հիդրոէլեկտրակայանի կառուցումը: Շահագործման հանձնվեց Հրազդանի պետական շրջանային էլեկտրակայանի առաջին բլոկը՝ 200 հազար կիլովատ կարողությամբ:

Ա. Քոչինյանի ղեկավարության տարիներին Սովետական Հայաստանի արդյունաբերության առաջատար ճյուղերը դարձան էներգետիկան, էլեկտրատեխնիկական մեքենաշինությունը և այլն:

Կարելի է անվերջ չարունակել այն ձեռնարկությունների ցանկը, որոնց ստեղծման համար Անտոն Քոչինյանը ոչ միայն հսկայական ջանքեր է գործադրել, այլև հաղթահարել է հաճախ նաև անհաղթահարելի թվացող դժվարություններ ու խոչընդոտներ: Գրեցի այս տողերը և հիշեցի, թե Երրորդ հանրապետության իշխանություններն ինչպիսի դժվարությամբ համաձայնվեցին Երևանի Ջրվեժ թաղամասի բնակիչների խնդրանքին՝ իրենց փողոցն Անտոն Քոչինյանի անունով կոչելու ցանկությանը:

Երկրորդ. Անտոն Քոչինյանը մշտապես իր ուշադրության կենտրոնում էր պահում Հայաստանի գյուղերի խնդիրները: Նա գյուղը համարում էր մեր ազգային օրրանը, հայ ժողովրդի գոյատևման ու հավերժության հիմքը: Այդ նրա ջանքերի շնորհիվ էր, որ գյուղական բնակչության համար ստեղծվեցին բոլոր պայմանները: Նրա աշխատած տարիներին Հայաստանի գյուղերը կառուցապատվեցին: Ամենուրեք կառուցվեցին նոր բարեկարգ երկու, նույնիսկ երեք հարկանի տներ: Հայաստանի գյուղը կերպարանափոխվեց: Պայմաններ ստեղծվեցին գյուղական բնակչության կուլտուր-կենցաղային վիճակն արմատապես բարելավելու համար:

Այս ամենն Անտոն Քոչինյանի վարած քաղաքականության արդյունքն էր, Հայաստանի գյուղական բնակչության նկատմամբ նրա հոգատարության վկայությունը:

Եթե Ա. Քոչինյանն ուրիշ ոչինչ արած չլիներ Հայաստանի համար, ապա միայն մեր գյուղերում նրա հովանավորությամբ ու պաշտպանությամբ ծավալված հսկայական շինարարությունը բավական է, որպեսզի սերունդները նրան հիշեն երախտագիտությամբ, իսկ նորօրյա իշխանություններն էլ հետևեն նրա օրինակին և ամբողջ երեսով թեքվեն դեպի գյուղը և օգնեն գյուղացուն թեթևացնելու առաջացած բազում հոգսերը:

Ա. Քոչինյանը մեծ ուշադրություն էր դարձնում բնության պահպանմանը: Դրա շնորհիվ Հայաստանի շատ վայրերում ստեղծվեցին անտառաշերտեր, որոնք այսօր, ցավոք սրտի, մատնվել են անուշադրության:

Երրորդ. Ա. Քոչինյանն արտակարգ հոգատարությամբ էր զբաղվում մշակույթի, գիտության, կրթության հարցերով: Այս կապակցությամբ հարկ եմ համարում բերել միայն մի քանի օրինակ:

Կարևորելով Մատենադարանի դերը հայագիտության զարգացման գործում, Ա. Քոչինյանը նախաձեռնեց Մատենադարանի կարգավիճակի փոփոխում: 1959 թ. մարտի 3-ին նրա ստորագրությամբ ընդունված Նախարարների խորհրդի որոշմամբ Հին ձեռագրերի պետական պահոց Մատենադարանը վերակազմավորվեց Հայկական ՍՍՀ Նախարարների խորհրդին կից գիտահետազոտական ինստիտուտի: Մշակվեցին լրացուցիչ միջոցառումներ Մատենադարանի աշխատանքն ավելի արդյունավետ դարձնելու համար:

Ափսոսանքով պետք է նշել, որ Հայաստանի Երրորդ հանրապետության առաջին ղեկավարները չհասկացան Մատենադարանի նշանակությունը և կառավարության անմիջական ենթակայությունից հանեցին ու հանձնեցին կրթության նախարարությանը...

1962 թ. մայիսի 3-ին Հայկական ՍՍՀ Նախարարների խորհուրդն Ա. Քոչինյանի ստորագրությամբ ընդունեց որոշում Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակը նշելու մասին:

Այդ որոշմամբ Մատենադարանը կոչվեց Մեսրոպ Մաշտոցի

անվամբ և Մատենադարանի առջև կանգնեցվեց Մեսրոպ Մաշտոցի արձանը: Որոշվեց նաև Մեսրոպ Մաշտոցին նվիրված հուշասյուն կանգնեցնել Աշտարակի շրջանի Օշական գյուղում:

1964 թ. փետրվարի 8-ին Ա. Քոչինյանի նախաձեռնությամբ կազմակերպվեց Եղիշե Չարենցի տուն-թանգարան այն բնակարանում (Լենինի պողոտա, 45), որտեղ նախկինում ապրել էր հայ մեծ բանաստեղծը:

Մեծ է Ա. Քոչինյանի դերը Հայկական սովետական հանրագիտարանի ստեղծման գործում: Կարևորելով այդ, ստորև հարկ եմ համարում ընթերցողի ուշադրությանը ներկայացնել 1965 թ. հունվարի 15-ին Ա. Քոչինյանի ստորագրությամբ ընդունված Սովետական Հայաստանի Նախարարների խորհրդի հետևյալ որոշումը.

«1. Ընդունել Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի առաջարկությունը Հայկական սովետական հանրագիտարանի (ՀՍՀ) հրատարակության մասին:

2. Հայկական սովետական հանրագիտարանը պետք է հանդիսանա սոցիալ-տնտեսական և բնական գիտությունների, ինչպես նաև տեխնիկայի, գրականության և արվեստի վերաբերյալ գիտելիքների համահավաք ժողովածու: Դրա հետ միասին նրանում պետք է լայնորեն լուսաբանվեն հայ ժողովրդի պատմության ու մշակույթի հարցերը, հատկապես կոմունիստական շինարարության տարբեր բնագավառներում Հայկական ՍՍՀ նվաճումները:

3. Հայկական սովետական հանրագիտարանի հրատարակությունը նախատեսել 10 հատորով:

4. Հայկական սովետական հանրագիտարանը նախապատրաստելու, կազմելու և հրատարակելու ամբողջ գործը դնել Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի վրա:

5. Հանձնարարել Պետպլանին ՀՍՀ գլխավոր խմբագրության համար Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիային լրացուցիչ հատկացնել՝

ա) աշխատողների 22 միավոր 31,5 հազար ռուբլու աշխատավարձի ֆոնդով.

բ) սարքավորումների և գույքի ձեռք բերման համար լիմիտ՝ 15 հազար ռուբլի.

գ) 2,3 տոննա տպագրական թուղթ.

6. Հանձնարարել Հայկական ՍՍՀ Նախարարների խորհրդի գիտահետազոտական աշխատանքի կոորդինացման պետական կոմիտեին ՀՍՀ գլխավոր խմբագրության ծախսերը ֆինանսավորելու համար Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիային 1965 թվականի համար կոմիտեին տրված պահուստային ֆոնդից հատկացնել 48 հազար ռուբլի:

7. Սահմանել, որ Հայկական սովետական հանրագիտարանի հրատարակման նախապատրաստումը պետք է տարվի այն հաշվով, որպեսզի ՀՍՀ առաջին հատորը լույս տեսնի 1967 թվականին՝ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 50-ամյակին: ՀՍՀ ամբողջ հրատարակությունն ավարտել 1967-1972 թթ. ընթացքում»:

Հայկական սովետական հանրագիտարանը հրատարակվեց 12 հատորով և դարձավ հսկայական իրադարձություն Հայաստանի մշակութային կյանքում:

Ա. Քոչինյանի նախաձեռնությամբ հիմնադրվեց երիտասարդական հասարակական-քաղաքական, գեղարվեստական պատկերազարդ «Գարուն» ամսագիրը, որը կարևոր դեր խաղաց երիտասարդ գրողների կայացման գործում:

Յուրի Գագարինի առաջին տիեզերական թռիչքից հետո սովետական տիեզերագնացները մինչև թռիչքի իրագործումը Բյուրականի աստղադիտարանում անցնում էին համապատասխան դասընթացներ: Ա. Քոչինյանը պարտադիր կերպով հանդիպում էր Հայաստան ժամանած, ինչպես արդեն հայտնի դարձած, այնպես էլ դեռևս թռիչք չկատարած տիեզերագնացներին և նրանց բոլորի հետ հաստատել էր ջերմ հարաբերություններ:

Այս հնարավորությունն Ա. Քոչինյանը օգտագործեց Հայաստանում տիեզերագիտության ասպարեզում նոր գիտահետազոտական հաստատություն ստեղծելու նպատակով: Դրա արդյունքով 1965 թ. սեպտեմբերի 27-ին Հայկական ՍՍՀ Նա-

խարարների խորհուրդն Ա. Քոչինյանի ստորագրությամբ ընդունեց որոշում Գառնիում Բյուրականի աստղադիտարանի տիեզերական հետազոտությունների մասնաճյուղ կազմակերպելու մասին:

Հետագա տարիներին այս մասնաճյուղը հռչակավոր գիտնական Գ. Գուրզադյանի գլխավորությամբ ձեռք բերեց մեծ հեղինակություն և դարձավ Սովետական Միությունում տիեզերագնացության ասպարեզում առաջատար գիտական հաստատություններից մեկը...

1967 թ. մայիսի 7-ին Ա. Քոչինյանի ներկայացմամբ ՀԿԿ Կենտկոմի բյուրոն հաստատեց Կոմկուսի Կենտկոմի և Հայկական ՍՍՀ Նախարարների խորհրդի համատեղ որոշումը Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի ֆիզիկայի ինստիտուտ կազմակերպելու մասին:

1968 թ. սեպտեմբերի 18-ին լրանում էր Վիկտոր Համբարձումյանի ծննդյան 60-ամյակը: Այս կապակցությամբ Ա. Քոչինյանը աշխարհահռչակ գիտնականին ներկայացրեց Սովետական Միության Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչման: Իսկ 1968 թ հունիսի 18-ին ՀԿԿ Կենտկոմի բյուրոն ընդունեց հատուկ որոշում Վիկտոր Համբարձումյանի ծննդյան 60-ամյակն արժանավայել կերպով նշելու մասին:

Ա. Քոչինյանը բարձր էր գնահատում բոլոր այն գործիչներին, որոնք իրենց աշխատանքով ոչ միայն բազմապատկում էին Հայաստանի փառքը, այլև մեծ ներդրում ունեին ժողովրդական տնտեսության, գիտության ու մշակույթի զարգացման գործում: Նրա ներկայացմամբ Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչման արժանացան Հայաստանի հռչակավոր կոնյակի բազմաթիվ տեսակների ստեղծող Մարգար Սեդրակյանը, աշխարհահռչակ կոմպոզիտոր Արամ Խաչատուրյանը: ՍՍՀՄ Ժողովրդական արտիստի կոչման արժանացան Գուրգեն Ջանիբեկյանը, Ալեքսանդր Հարությունյանը, Առնո Բաբաջանյանը, Էրազմ Մելիք-Քարամյանը, Ստեփան Կևորկովը: ՍՍՀՄ բարձրագույն շքանշաններով պարգևատրվեցին Մարտիրոս Սարյանը, Աչոտ Հովհաննիսյանը, Արտեմ Ալիխանյանը, Երվանդ

Տեր-Մինասյանը, Հրաչյա Հովհաննիսյանը, Գևորգ Էմինը, Գագիկ Դավթյանը և շատ ուրիշներ:

Ընդհանրապես Ա. Քոչինյանը գիտության, մշակույթի շատ գործիչների հետ ստեղծել էր ջերմ հարաբերություններ, վայելում էր նրանց հարգանքը: Նրանցից շատերն իրենց լույս տեսած գրքերը ջերմ ու անկեղծ մակագրությամբ նվիրել են Ա. Քոչինյանին: Ահա, այդ կապակցությամբ մեկ-երկու օրինակ: 1956 թ. հուլիսի 21-ին իր նոր լույս տեսած «Հետադարձ հայացք» գիրքը Վահրամ Փափազյանը նվիրել է Ա. Քոչինյանին հետևյալ մակագրությամբ. «Սիրելի Անտոն Երվանդովիչ.

Այս գիրքը իմ սիրտն է, լավագույնը՝ ինչ որ ունեմ, ուզում եմ ասել, և գերազանցը՝ ինչ որ եմ:

Ահա թե ինչու այս գիրքը նվիրում եմ քեզ ինձանից հիշատակ, որպես արտահայտությունը քո անձիդ հանդեպ իմ ունեցած անդավաճան բարեկամության: Քո՝ Վահրամ Փափազյան»:

Մատենադարանի հրատարակած «Ձեռագրերի ցուցակ» գրքի վրա Մատենադարանի տնօրեն Լևոն Խաչիկյանը մակագրել է. «Մեծարգո ընկեր Անտոն Քոչինյանին Մաշտոցյան Մատենադարանի սրտով հովանավորին: «Ցուցակի» կազմողների անունից՝ Լ. Խաչիկյան, 10.01.1966»:

Ա. Քոչինյանը շատ նշանավոր գործիչների հետ ունեցել է նամակագրական սերտ կապ: Նրան դիմել են բազմաթիվ հարցերով, որոնց լուծմանն Ա. Քոչինյանը վերաբերվել է ամենայն ուշադրությամբ: Ահա մի քանի օրինակ այդ նամակագրությունից:

1956 թ. հունվարի 12-ին Ավետիք Իսահակյանը գրել է հետևյալ նամակը.

«Շատ Սիրելի Անտոն.

Տեղեկացա, որ վերադարձել եք Մոսկվայից, օգտվելով առիթից շնորհավորում եմ Ձեր Նոր տարին՝ ցանկանալով Ձեզ քաջառողջություն և նորանոր հաջողություններ Ձեր բարձր և պատասխանատու պոստում:

Սիրելի Անտոն, շատ ուրախ եմ, որ որոշել եք ընկեր Արամ Ինճիկյանին բնակարան հատկացնել, սակայն, ցավոք սրտի,

պիտի ասեմ, որ Ինճիկյանը քաղսովետում հաշվառման չի ենթարկված՝ չնայած 1954 թ. նրա դիմումը համապատասխան մակագրությամբ Դուք ուղարկել եք քաղսովետ: Այդ հանգամանքը կարող է դժվարություն առաջ բերել:

Ուստի խնդրում եմ, անկախ հաշվառման հանգամանքից, կարգադրեիք Ինճիկյանին տալ այն բնակարանը, որ հատկացված է քաղսովետի ֆոնդին՝ փոխարենը վերցնելով Ինճիկյանի այժմ զբաղեցրած բնակարանը:

Շատ եմ խնդրում Ինճիկյանին այս անգամ անպայման բավարարել, նրա վիճակը տարիներ չարունակ ծանր է եղել, որի պատճառը նրա ծայրահեղ համեստությունն է:

Թե նրա անտանելի վիճակը և թե երկարամյա արդյունավետ գործունեությունը լիովին հիմք են տալիս, որ նա, վերջապես, ունենա իր բնակարանը:

Ձեմ կասկածում, սիրելի Անտոն, որ Դուք չեք խնայի Ձեր ջանքերը իմ խնդրանքը կատարելու համար:

Ջերմագին բարևներով և հարգանքներով՝ Ավետիք Իսահակյան»:

Ստորև բերվող ծովակալ Հովհաննես Իսակովի նամակներից երկուսը վկայում են նրա նկատմամբ Ա. Քոչինյանի մեծ հոգատարության մասին:

1959 թ. օգոստոսի 29-ին Հ. Իսակովը գրել է.

«Խորապես հարգելի և թանկագին Անտոն Երվանդովիչ.

Ընդունեք իմ խորը երախտագիտությունը հեռագրում արտահայտած ուշադրության, ջերմ զգացմունքների և ցանկությունների համար:

Օլգա Վասիլևնան և ես անկեղծորեն ցանկանում ենք հետագա հաջողություններ Ձեր բազմազբաղ գործունեության մեջ: Զարմացած ենք Ձեր եռանդով ու համառությամբ, քանի որ պատկերացնում ենք, թե Ձեզ ինչպիսի հսկա աշխատանք է վիճակված կատարել:

Եղեք առողջ: Ձեզ, Մարիա Օհանովնային և ամբողջ ընտանիքին ցանկանում ենք երկար տարիների երջանկություն ու բարեկեցություն:

Ձեր՝ Իսակով:

Հ. Գ. Հանձնարարեք Ձեզ ցույց տան «Հայկական գրականություն» ամսագրի սեպտեմբերյան համարը, որտեղ տպագրված է իմ պատմվածքը: Դա մի փաստ է իմ կենսագրությունից: Դա Ձեզ մի քանի րոպե կզվարճացնի»:

1962 թ. հունվարի 10-ին Ա. Իսակովը գրելէ.

«Խորապես հարգելի և թանկագին Անտոն Երվանդովիչ.

Հայտնում եմ Ձեզ իմ խոր երախտագիտությունը Հայկական ՍՍՀ Ատլասի տեսքով աննման նվերի համար: Շնորհակալ եմ հիշելու և ուշադրության համար: Նվերը չատ առատ է ու արժեքավոր:

Առաջին տպավորությամբ Ատլասն արժանի է բարձր գնահատականի: Չնայած սահմանափակ ծավալին, նա մեր Սովետական Հայաստանի աշխարհագրական բնութագրումի հետ միասին տալիս է նրա քաղաքական-տնտեսական վիճակը, բնական հարստությունները, սոցիալական ու դեմոգրաֆիական տվյալները, վերջապես մեր ժողովրդի բուռն և հերոսական պատմության հիմնական փուլերը:

Որքանով ծանոթ եմ նմանատիպ հրատարակություններին, Հայկական ՍՍՀ Ատլասը հանդիսանում է (այդպիսի ծավալով) գիտնականների հիանալի կոլեկտիվի առաջին և գիտականորեն բարձր աշխատանք, որը կարող է օրինակ ծառայել մյուս հանրապետությունների համար:

Հենց որ առողջությունս ու ժամանակը թույլ տան, կաշխատեմ տպագրել գրախոսական: Առատորեն ուղարկված օրինակները կտրվեն արժանավոր գիտական-աշխարհագետներին և հիմնարկություններին:

Մեկ անգամ ևս ընդունեք շնորհակալությունս: Ձեր՝ Իսակով»:

1969 թ. փետրվարի 4-ին Արամ Խաչատուրյանը գրել է.

«Թանկագին Անտոն Երվանդովիչ.

Խնդրում եմ ներել ինձ այն բանի համար, որ դիմում եմ Ձեզ մի հարցով, որը Ձեր համար փոքր է, բայց ինձ՝ չատ հուզող:

Երևանի քաղսովետը Երևանի փողոցներից մեկը կոչել է իմ անունով: Դա ինձ համար մեծ պատիվ է: Արամ Խաչատուրյան փողոցի բնակիչները դիմել են ինձ՝ խնդրելով օգնել նրանց գազ ստանալու համար: Ամեն ինչ պատրաստ է, բայց գազ չկա: Այդ կապակցությամբ ես նամակ եմ գրել Ղարիբջանյանին և քաղսովետ՝ Հասրաթյանին: Վախենում եմ, որ այդ ընկերները տեղում չլինեն, իսկ ուրիշների ես չգիտեմ, ես դիմում եմ Ձեր օգնությանը:

Շատ եմ խնդրում Ձեր օգնականների միջոցով ցուցում տաք օգնել Խաչատուրյան փողոցի բնակիչներին գազ ստանալու: Պաշտպանեք իմ հեղինակությունը:

Ես շատ եմ ուզում, որ իմ այս խնդրանքը կատարվի:

Այժմ գտնվում եմ Կունցևոյի հիվանդանոցում: Իմ խնդրանքի բավարարումն ինձ համար լավ դեղամիջոց կլինի:

Այն մասին, որ Երևանում գտնվող իմ տունը շատ վատ վիճակումն է և ես չեմ կարող այդ տանն ապրել ու աշխատել՝ ես արդեն չեմ գրում:

Ընդունեք իմ ուշացած շնորհակալությունը նոր տարվա շնորհավորանքի առթիվ:

Խոր հարգանքներով՝ Արամ Խաչատուրյան»:

Ի պատասխան այս նամակի, Ա. Քոչինյանը 1969 թ. փետրվարի 14-ին գրել է.

«Թանկագին Արամ Իլյիչ.

Ուրախությամբ ստացա ու կարդացի քո նամակը:

Շատ եմ ափսոսում, որ դու դեռ գտնվում ես հիվանդանոցում: Սրտանց ուզում եմ, որ դու շուտով լավանաս և լինես առողջ:

Իմ անկեղծ ցանկությունը հաստատելու համար հայտնում եմ քեզ, որ քո առաջին խնդրանքը քո փողոցի տներին գազը միացնելու մասին, մոտ ժամանակում կկատարվի: Ամբողջ շինարարական-մոնտաժային աշխատանքն արդեն ավարտվել է: Ձգձգումը միայն գազի բացակայության մեջ է, քանի որ ցրտի պատճառով հանրապետությունը չի ստանում սահմանված չափաբաժինը:

Երևանում գտնվող քո տան հարցով ես հանձնարարել եմ զբաղվել Բաղալ Հմայակովիչին, հուսանք, որ որ այս տարում ամեն ինչ կարգին կլինի:

Թանկագին Արամ Իլյիչ, հայցում եմ քո ներողամտությունը պատասխանս մի քիչ ուշացնելու համար:

Օգտվելով առիթից, մեկ անգամ ևս, թանկագին Արամ Իլյիչ, ցանկանում եմ քեզ շուտափույթ առողջացում, կյանքում ամենայն բարիք, նոր հաջողություններ ստեղծագործական գործունեության մեջ:

Անկեղծ հարգանքներով՝ Ա. Քոչինյան»:

Նշանավոր կինոռեժիսոր Լև Կուլիջանովն Ա. Քոչինյանին ուղարկած նամակում գրել է.

«...Հայտնում եմ Ձեզ անկեղծ շնորհակալություն ինձ ցույց տրված հիանալի ընդունելության և հյուրընկալության համար: Հենց նոր եմ վերադարձել Իտալիա և Ֆրանսիա մեկամսյա ուղևորությունից, բայց այդ ամսվա տպավորություններն անկարող եղան խլացնել Դիլիջանի, բարեկամների հետ հանդիպումների, ընդհանրապես Հայաստանի մասին գեղեցիկ հիշողությունները: Ես շատ ուրախ էի նաև նրա համար, որ իրենց ամբողջ հիացմունքը ինձ հետ կիսեցին իմ կինն ու որդիներս, որոնք Մոսկվա վերադարձան որպես իսկական հայեր: Այդ ամենի համար, առաջին հերթին, թանկագին Անտոն Երվանդովիչ, Ձեզանից եմ շնորհակալ:

Շատ եմ ուզում տեսնել Ձեզ, որպեսզի պատմեմ այն զգացողության մասին, որը թողնում է Հայաստանում գտնվելը՝ հսկայական աշխատանքի, շինարարության, հիանալի վերելքի զգացողությունը, որը երևում է Հանրապետությունում կատարվող շատ բարի գործերում: Չեմ ուզում Ձեզ հոգնեցնել իմ հիացմունքով, որը միևնույն է խոսքով հնարավոր չէ արտահայտել...

Անկեղծ հարգանքներով՝ Լև Կուլիջանով»:

Ա. Քոչինյանը բազմաթիվ նամակներ է ստացել նաև Անաստաս Միկոյանից, Հովհաննես Բաղրամյանից Մարտիրոս Սարյանից, Դմիտրի Շոստակովիչից, Ռասուլ Համզատովից, Գուրգեն Ջանիբեկյանից, Եզրաս Հասրաթյանից և շատ ու շատ այլ նշա-

նավոր գործիչներից , որոնք բարձր են գնահատել նրա դերը Հայաստանի զարգացման գործում:

Ա. Քոչինյանը մեծապես կարևորում էր Հայաստանից դուրս ապրող գիտության, մշակույթի, զինվորական և այլ ասպարեզներում հայտնի հայազգի գործիչներին Հայրենիքի հետ կապելու գործը: Նրանցից շատերը Ա. Քոչինյանի հրավերով գալիս էին Հայաստան և եռանդով մասնակցում հանրապետության ժողովրդական տնտեսության տարբեր ասպարեզներում առաջացած խնդիրները լուծելու գործին:

Հայաստանի ղեկավարն ամեն անգամ Մոսկվայում լինելու ժամանակ, հանդիպում էր նշանավոր հայազգի գործիչներին և նրանց ոչ միայն տեղյակ էր պահում կատարված աշխատանքի ու ծրագրերի մասին, այլև նրանց հետ քննարկում էր դրանց կատարման հնարավորությունները:

Ա. Քոչինյանը դրանով չէր բավարարվում: Նա յուրաքանչյուր տարի երկու անգամ, ըստ կիսամյակների, Մոսկվայում կազմակերպում էր հանդիպում հայ ուսանողների հետ, որոնց մասնակցելու համար հրավիրվում էին Մոսկվայի համապատասխան բուհերի ռեկտորները և մյուս ղեկավարները:

Այդ հանդիպումները մեծացնում էին հայ ուսանողների պատասխանատվությունը: Իսկ բուհերի ղեկավարներն էլ զգում էին Հայաստանի ղեկավարի ուշադրությունն ու հոգատարությունը հայ ուսանողների նկատմամբ և իրենք էլ համակվում էին հարգանքով ու պատասխանատվությամբ: Ասեմ նաև, որ Ա. Քոչինյանի օրինակին հետևեցին Ադրբեջանի և Վրաստանի ղեկավարները;

Ափսոս, որ այդ, և ոչ միայն այդ, բարի ավանդույթն այժմ մեր հանրապետությունում մոռացության է մատնվել:

Ա. Քոչինյանն առանձնակի հարգանքով էր վերաբերվում Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինին: Կաթողիկոսի նկատմամբ ունեցած այդ վերաբերմունքն Ա. Քոչինյանն արտահայտել է 1968 թ. մարտի 21-ին ՍՄԿԿ Կենտկոմ ուղարկած հետևյալ նամակում:

«1968 թ. սեպտեմբերի 20-ին լրանում է Ամենայն Հայոց Կա-

թողիկոս Վազգեն Առաջինի ծննդյան 60-ամյակը:

Վազգեն Առաջինը (Վազգեն Պալչյան) ծնվել է 1908 թ. սեպտեմբերի 20-ին Բուխարեստ քաղաքում (Ռումինիա) արհեստավորի ընտանիքում: Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո, 1929 թվականից մինչև 1936 թվականը սովորել է Բուխարեստի պետական համալսարանի գրականության և փիլիսոփայության ֆակուլտետներում:

1935 թվականից մինչև 1945 թվականը Բուխարեստի հայկական դպրոցում աշխատել է որպես ուսուցիչ:

1943 թ. Վազգեն Առաջինն ընտրվել է հայկական եկեղեցու ռումինական թեմի առաջնորդ: Այս պաշտոնում նա մեծ աշխատանք է տարել տեղի հայերի շրջանում հայրենիքի՝ Սովետական Հայաստանի և ամբողջությամբ Սովետական Միության նկատմամբ հայրենասիրական զգացմունքների զարգացման ու ամրապնդման համար:

1955 թ. Վազգեն Առաջինն ընտրվում է Գերագույն պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոս:

Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվելուց և ՍՍՀՄ քաղաքացիություն ընդունելուց հետո Վազգեն Առաջինն ավելի լայնորեն ծավալեց իր հայրենասիրական գործունեությունը և նշանակալիորեն ակտիվացրել է հայ եկեղեցու մասնակցությունը ամբողջ աշխարհում խաղաղության և ժողովուրդների բարեկամության ամրապնդման համար մղվող պայքարում:

Արտասահմանյան երկրներ կատարած իր բազմաթիվ այցելությունների ժամանակ, ինչպես նաև կաթողիկոսի պաշտոնում իր ամբողջ գործունեությամբ Վազգեն Առաջինը եռանդով աջակցել է Սովետական պետության արտաքին քաղաքականությանը, պրոպագանդել է մեր երկրի նվաճումները, արժանի հակահարված է տվել ՍՍՀՄ-ում խղճի ազատության մասին թշնամական հերյուրանքներին, պաշտպանել է ժողովուրդներին ընդդեմ իմպերիալիզմի և գաղութատիրության, հանդես է եկել հանուն ժողովուրդների բարեկամության և պետությունների միջև խաղաղ գոյակցության, ամբողջ աշխարհում խաղաղության հաստատման համար:

Կաթողիկոս Վազգեն Առաջինը լայն աշխատանք է տանում արտասահմանյան հայերի շրջանում հայրենասիրական զգացմունքները ամրապնդելու և ուժեղացնելու, նրանց հայրենիքի՝ Սովետական Հայաստանի և Սովետական Միության շուրջը համախմբելու համար:

Նա հայկական եկեղեցու ջանքերն ուղղում է աջակցելու մեր կառավարությանը հայերի հայրենադարձությունը հայրենիք՝ Սովետական Հայաստան կազմակերպելու գործում:

Վազգեն Առաջինը Խաղաղության պաշտպանության Սովետական և Հայկական կոմիտեների անդամ է: Նա հանդիսանում է Մոսկվայում (1962 թ.) և Հելսինկիում (1966 թ.) տեղի ունեցած հանուն աշխարհում խաղաղության համաշխարհային կոնգրեսների Սովետական Միության հասարակայնության պատվիրակության անդամ:

Իր եռանդուն գործունեության և խաղաղությունը պաշտպանելու համար Վազգեն Առաջինը պարգևատրվել է Խաղաղության համաշխարհային խորհրդի Պատվո դիպլոմով և Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի Պատվոգրով:

Հայկական եկեղեցու ռումինական թեմի առաջնորդ եղած ժամանակ Վազգեն Առաջինը Ռումինիայի կառավարության կողմից պարգևատրվել է «Հանրապետության աստղ» շքանշանով: Նա նաև պարգևատրվել է Եթովպիայի և Հորդանանի բարձրագույն շքանշաններով:

Վերը շարադրվածը նկատի ունենալով Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի բյուրոն ընդունել է որոշում Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինին ներկայացնել Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով պարգևատրելու մասին և խնդրում է ՍՄԿԿ Կենտկոմին հաստատել»:

Ասվածին ավելացնեմ, որ քիչ մարդկանց է հայտնի, որ Ա. Քոչինյանի ու Վազգեն Առաջինի միջև փոխադարձ հարգալից հարաբերություններ հաստատվել են մինչև նրա Ամենայն Հայոց կաթողիկոս ընտրվելը; Այդ հարաբերություններն ավելի ջերմացան ու ամրապնդվեցին, երբ Ա. Քոչինյանը նշանակվեց Հայկական ՍՍՀ Նախարարների խորհրդի նախագահ: Հաճախ է

պատահել, որ նրանք միևնույն ամսին հանդստացել են Կիսլովոդսկում և միասին քայլել Տերենկուրի արահետներով, երկարատև զրույցներ ունեցել, որոնց ժամանակ քննարկել են հայ ժողովրդին հուզող բազմաթիվ հարցեր:

Հարազատների վկայությամբ Ա. Քոչինյանը ցանկություն է ունեցել իր հուշերի մեջ պատմել Վազգեն Առաջինի հետ ունեցած հանդիպումների մասին, բայց ափսոս, որ չի հասցրել դրանց մասին գրել: Ա. Քոչինյանը Վազգեն Առաջինին անվանում էր պետականորեն մտածող ազգային-եկեղեցական գործիչ:

Առանձնահատուկ կերպով ուզում եմ նշել այն հսկայական դերը, որ ունեցավ Ա. Քոչինյանը հայ ժողովրդի մեծ զավակներ Հովհաննես Թումանյանի ու Կոմիտասի ծննդյան 100-ամյա հոբելյանների կազմակերպման ու անցկացման գործում:

Ա. Քոչինյանը չբավարարվեց Հ. Թումանյանի և Կոմիտասի հոբելյանները նշելու մասին ՀԿԿ Կենտկոմի բյուրոյի որոշումներ ընդունելով (համապատասխանաբար 1966 թ. հունիսի 19-ին և 1968 թ. մայիսի 14-ին), այլև դիմեց ՍՄԿԿ Կենտկոմ, այդ հոբելյանները Միության միջոցով միջազգային մասշտաբով նշելու առաջարկությամբ:

1968 թ. մարտի 21-ին ՍՄԿԿ Կենտկոմ ուղարկած նամակում, հայտնելով 1969 թվականին Հ. Թումանյանի ծննդյան 100-ամյակը նշելու մասին, Ա. Քոչինյանը գրել է. «Հաշվի առնելով Հովհաննես Թումանյանի ստեղծագործության հսկայական նշանակությունը հայկական մշակույթի զարգացման գործում և համաշխարհային գրականության մեջ նրա բերած մեծ արդյունքը, ՍՄԿԿ Կենտկոմին խնդրում ենք.

1. Հովհաննես Թումանյանի ծննդյան 100-ամյակի կապակցությամբ Նախարարների խորհրդին կից ստեղծել հոբելյանական կոմիտե:

2. Հովհ. Թումանյանի հոբելյանի անցկացման հարցը դնել Խաղաղության համաշխարհային խորհրդի առջև որպես համաշխարհային մշակույթի տարեթիվ:

3. Հոբելյանի օրերին, 1969 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին Մոսկվայում անցկացնել հանդիսավոր նիստ

նվիրված Հովհաննես Թումանյանի ծննդյան 100-ամյակին:

4. Մոսկվայում կանգնեցնել Հովհաննես Թումանյանի հուշարձան և նրա անունով կոչել մայրաքաղաքի փողոցներից մեկը:

5. Թույլատրել Մոսկվայի, Լենինգրադի և միութենական հանրապետությունների գրողների հետ միասին Երևան հրավիրել սոցիալիստական երկրներից գրողների, արտասահմանյան հայ առաջադեմ գրողների, Արևմտյան Եվրոպայի երկրներից 3-4 հայագետների:

6. Հանձնարարել կենտրոնական հրատարակչություններին ռուսերեն տպագրել Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունները:

7. Հանձնարարել թերթերի և ամսագրերի խմբագրություններին հրապարակել հոդվածներ ու նյութեր Հովհաննես Թումանյանի մասին, ինչպես նաև մեծ գրողի ոչ մեծ ստեղծագործություններ»:

ՍՄԿԿ Կենտկոմը ոչ միայն ընդունեց Ա. Քոչինյանի բոլոր առաջարկությունները, այլև ի լրումն դրա 1968 թ. աշնանը որոշեց Սովետական Միության պատվերով Հարավսլավիայում կառուցվող խոշոր նավերից մեկը կոչել Հ. Թումանյանի անունով: 1970 թ. հունիսի 25-ին տեղի ունեցավ «Հովհաննես Թումանյան» նավի վրա սովետական դրոշի բարձրացման հանդիսավոր արարողությունը, որին մասնակցեցին Սովետական Հայաստանի ներկայացուցիչները:

Ժամանակին Հայաստանի և միութենական մամուլը լայնորեն լուսաբանել է Հովհաննես Թումանյանի և Կոմիտասի հոբելյանների անցկացումը:

1970 թ. Ա. Քոչինյանի նախաձեռնությամբ Փարիզում կազմակերպվեց «Հայաստանի արվեստը Ուրարտուից մինչև մեր օրերը» ցուցահանդեսը: Այդ կապակցությամբ 1970 թ. հուլիսի 9-ին ՀԿԿ Կենտկոմի բյուրոյում հաստատվեց Կենտկոմի և Հանրապետության Նախարարների խորհրդի համատեղ որոշումը:

Փարիզում կազմակերպված ցուցահանդեսը մեծ արձագանք ունեցավ: Առաջին անգամ միջազգային մասշտաբով արվեստի

միջոցով ցույց տրվեց, որ Ուրարտուն ու Հայաստանը նույն երկիրն են, որտեղ անհիշելի ժամանակներից ապրում ու ստեղծագործում է միևնույն ժողովուրդը՝ հայ ժողովուրդը:

Զորրորդ. Ա. Քոչինյանի երկարատև պետական ու կուսակցական աշխատանքում կարևոր տեղ է զբաղեցրել արտասահմանյան երկրներում ապրող մեր հայրենակիցների հետ կապերն ամրապնդելու գործը: Այս ասպարեզում խոշոր նշանակություն ունեցավ 1964 թ. մայիսի 26-ին Ա. Քոչինյանի ստորագրությամբ ընդունված Հայկական ՍՍՀ Նախարարների խորհրդի որոշումը Սփյուռքահայության մշակութային կապերի հայկական կոմիտե ստեղծելու մասին:

Սփյուռքահայության կոմիտեն իր հետագա ամբողջ գործունեությամբ անգնահատելի դեր ունեցավ Հայաստան-Սփյուռք կապերի ամրապնդման ու զարգացման գործում և լիակատար կերպով արդարացրեց իր ստեղծողների հույսերն ու նպատակները: Ափսոս, որ Երրորդ հանրապետության առաջին ղեկավարները, որոնք շատ էին խոսում Հայաստան-Սփյուռք կապերն ամրապնդելու մասին, առանց խորը մտածելու, վերացրին Սփյուռքահայության կոմիտեն և արտասահմանյան երկրներում ապրող մեր հայրենակիցների հետ ստեղծված կապերը դրեցին հետին պլանի վրա: Լավ է, որ բոլորովին վերջերս Հայաստանի իշխանությունները զգացել են, որ այլևս այդպես շարունակել չի կարելի և Հանրապետության արտաքին գործերի նախարարության համակարգում ստեղծել են վերոհիշյալ հարցերով զբաղվող պետական կոմիտե:

Դեռևս 1961 թ. օգոստոսի 12-ին ՍՍՀՄ Նախարարների խորհուրդը Սովետական Հայաստանի ղեկավարության առաջարկությամբ ընդունել էր որոշում, որով հաստատվել էին արտասահմանյան երկրներից հայերի վերադարձը կազմակերպելու միջոցառումները:

Ա. Քոչինյանը հետևողականորեն զբաղվում էր այդ որոշման կատարմամբ: 1966 թ. օգոստոսի 9-ին նրա ներկայացմամբ ՍՍՀՄ Նախարարների խորհուրդն ընդունեց հետևյալ նոր որոշումը.

1. Բավարարել ՀԿԿ Կենտկոմի և Հայկական ՍՍՀ Նախարարների խորհրդի միջնորդությունը և Հայկական ՍՍՀ Նախարարների խորհրդին թույլատրել կազմակերպել արտասահմանյան երկրներից յուրաքանչյուր տարի 5 հազար հայերի հայրենադարձություն:

2. Հանձնարարել ՍՍՀՄ Պետպլանին՝ ամենամյա պլանների մեջ բնակարանային, կոմունալ և կուլտուր-կենցաղային շինարարության համար Հայկական ՍՍՀ-ին ավելացնել կապիտալ ներդրումներն այն չափով, որքան անհրաժեշտ է արտասահմանյան երկրներից տարեկան 5 հազար վերադարձող հայերին ընդունելու և աշխատանքով ապահովելու համար:

3. Պարտավորեցնել ՍՍՀՄ ֆինանսների նախարարությանը 1966 թվականից սկսած Հայկական ՍՍՀ Նախարարների խորհրդին հատկացնել անհրաժեշտ չափով դրամական միջոցներ արտասահմանից վերադարձող հայերի տեղափոխման և տեղավորման հետ կապված ծախսերը ծածկելու համար:

4. Արտասահմանից վերադարձող հայերի վրա տարածել ՍՍՀՄ Նախարարների խորհրդի 1961 թ. օգոստոսի 12-ի որոշմամբ հաստատված արտոնությունները:

Այդ նույն որոշմամբ Հայկական ՍՍՀ Նախարարների խորհրդին հանձնարարվեց.

ա) հայրենադարձությունն արտասահմանյան երկրներից կազմակերպել հաշվի առնելով դրանցում գոյություն ունեցող քաղաքական իրավիճակը:

բ) նախապես պատրաստել բնակարաններ և արտասահմանից վերադարձող հայերին տեղավորել աշխատանքի՝ ըստ իրենց պրոֆեսիայի և մասնագիտության:

1970 թ. հունվարի 10-ին Ա. Քոչինյանը Լ. Բրեժնևին հանձնեց իր և Բ. Մուրադյանի ստորագրած նամակը, որտեղ դրվում էր հայրենադարձության ժամկետը երկարացնելու առաջարկությունը: Այդ նամակում նշվում էր, որ 20-րդ դարի սկզբին Արևմտյան Հայաստանի տարածքում բնակվող հայերը բռնությամբ տեղահանվել են հայրենի օջախներից և ցրվել աշխարհի տարբեր երկրներ: 1921 թվականից սկսած, մինչև ներկա պահը,

նրանցից հայրենիք են վերադարձել 210 հազար հայեր:

Այնուհետև նամակում ասվում էր հետևյալը. «Ըստ եղած տվյալների, այժմ արտասահմանյան երկրներում, մասնավորապես Իրանում, Սիրիայում, Իրաքում ապրող տասնյակ հազարավոր հայեր ուզում են տեղափոխվել Սովետական Հայաստան: Սովետական Միություն հայրենադարձվելու համար ցուցակագրված շատ հայեր վաճառել են իրենց ունեցվածքը և ընդունել են սովետական քաղաքացիություն, ինչն իրավասու մարմինների հաղորդումներով, այդ անձանց նկատմամբ առաջ է բերել տեղական իշխանությունների հալածանքը:

Իր վրա ուշադրություն է գրավում այն հանգամանքը, որ Սովետական Միությունում արտասահմանից հայերի ընդունման գործում վերջին տարիների որոշ սահմանափակումը նշանակալի չափով նպաստել է Մերձավոր Արևելքի երկրներից հայերի տեղափոխմանը դեպի ԱՄՆ, Կանադա և Ավստրալիա, հանգամանք, որը հակասովետական նպատակներով օգտագործվում է բուրժուական քարոզչության կողմից:

Ինչպես ցույց է տալիս փորձը, հայրենադարձների ճնշող մեծամասնությունը եռանդով մտել են հանրապետության հասարակական կյանքի մեջ և իրենց աշխատանքով նպաստում են մեր Հայրենիքի ժողովրդական տնտեսության և մշակույթի հետագա զարգացմանը:

ՍՍՀՄ արտասահմանյան երկրներից հայերի հայրենադարձությունը կատարվում է հանրապետության բյուջեի միջոցներով և լրացուցիչ հատկացում չի պահանջվում:

Հաշվի առնելով հայրենադարձության քաղաքական մեծ նշանակությունը և այն, որ այս տարի ավարտվում է ՍՍՀՄ Նախարարների խորհրդի 1966 թ. օգոստոսի 9-ի որոշմամբ սահմանված հայերի հայրենադարձության ժամկետը, Հայաստանի Կոմկուսի Կենտկոմը և Հայկական ՍՍՀ Նախարարների խորհուրդը խնդրում են թույլատրել արտասահմանից հայերի հայրենադարձությունը շարունակել 1970-1975 թվականներին և հետագա տարիներին»:

Կարծում եմ, որ այսօրվա ընթերցողին հայտնի չէ Հայաս-

տանի ղեկավարներ Ա. Քոչինյանի և Բ. Մուրադյանի անհանգստության բուն պատճառը:

Ուստի փորձեմ չատ համառոտ անդրադառնալ դրան: 1960-ական թվականների վերջին և 1970-ական թվականների սկզբին ստեղծվել էր ԱՆՁԱ կոչված կազմակերպությունը դաշնակցության աչքի ընկնող գործիչ Ջորջ Մարտիկյանի գլխավորությամբ: Գործելով Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հովանավորությամբ ԱՆՁԱ-ն դիմում էր խարդախության բոլոր միջոցների, որպեսզի Թուրքիայի հարևանությամբ գտնվող Մերձավոր Արևելքի երկրներից որքան հնարավոր է իրենց պատմական հայրենիքը չմոռացող արևմտահայության ժառանգներին հեռացնել ԱՄՆ, Ավստրալիա և այլ երկրներ: Դա նաև Թուրքիայի ցանկությունն էր, որին էլ ընդառաջելով ԱՄՆ-ը տրամադրել էր իր նավերը հայերին Մերձավոր Արևելքի երկրներից տեղափոխելու համար:

Ահա, թե ինչի համար էին անհանգստացած Սովետական Հայաստանի ղեկավարները և դա միանգամայն հասկանալի է: Բավարարվեմ ասվածով և ընթերցողին հայտնեմ, որ «ԱՆՁԱ» կազմակերպության հակահայկական գործունեությանն ավելի հանգամանորեն անդրադարձել եմ 2006 թվականին լույս տեսած իմ «Զմոռանանք...» աշխատության մեջ:

——...——

Խոսքս ավարտելուց առաջ մեկ անգամ էլ եմ ուզում ընդգծել, որ Անտոն Քոչինյանն ունի հսկայական ծառայություն Հայաստանի զարգացման ասպարեզում:

Անտոն Քոչինյանի անվան չուրջ միշտ բախվել են հիացական գնահատականն ու կրքոտ վարկաբեկումը: Նրա ծառայությունները ժխտողները հակված են եղել նսեմացնել նրա ունակությունները, կասկածանք հայտնել նրա ունակությունների չուրջ: Իհարկե, դժվար է ենթադրել, որ սովորական մարդը կարող էր իր նկատմամբ այդպիսի սևեռուն ուշադրություն ցուցաբերել: Եվ անտեղի են բոլոր նրանց ջանքերը, որոնք փորձում են ստվերի տակ թողնել հայ ժողովրդի արժանավոր զավակ

Ա. Քոչինյանի ժամանակը ու մոռացության մատնել նրա հայրենանվեր գործունեությունը: Այդ անձանց է վերաբերում Ջ. Օրուելի հետևյալ գնահատականը. «Ապագան պատկանում է անցյալին տիրապետող մարդուն»: Ավելացնեմ այդ խոսքերին՝ «անցյալին հարգանքով վերաբերվող մարդուն»:

Այդ «մոռացկոտ» անձանց կամենում եմ հիշեցնել նաև Հին աշխարհի փիլիսոփա Արիստոտելի հետևյալ խոսքերը. «Նույնիսկ աստվածներն անկարող են փոխել անցյալը»:

Եվ քանի որ նույնիսկ աստվածներն անկարող են փոխել անցյալը, ավելացնեմ նաև մոռացության մատնելը, ապա Ա. Քոչինյանի ժամանակն ու գործը մոռացողներն ու չգնահատողները պետք է լավ իմանան, որ ներկայի յուրաքանչյուր ակնթարթ իրենց ապագայի անցյալն է և այն պարզապես չպետք է ապականել...

——...——

Ինչպես արդեն ասվել է, Անտոն Քոչինյանն իր հուշերը չի հասցրել ավարտել: Առաջին հուշագրությունը, որն Անաստաս Միկոյանի մասին է, սկսել է գրել 1982 թ. հոկտեմբերից, բայց ցավոք, ավարտին չի հասցրել: Ա. Քոչինյանն իր հուշերը նորից սկսել է գրել 1987 թ. հունվարի 22-ից, ինչպես ինքն է նշում «կենսաթոշակի անցնելուց հետո իմ լավ բարեկամներն ու ընկերները խորհուրդ էին տալիս գրել հուշեր»:

Ինչպես հուշերի այս ընդհանուր տետրը, որը հեղինակը համարակալել է որպես «Առաջին գիրք», այնպես էլ մյուսները, թվով վեցը, հեղինակը գրել է տարբեր տարիներին, բայց ոչ մեկն էլ ավարտին չի հասցրել: Հենց այս պատճառով էլ հուշերի մեջ կան որոշ կրկնություններ, որոնք ընդհանուր տեքստի ամբողջականությունը չխախտելու նկատառումից ելնելով, խմբագրելու ընթացքում թողնվել են անփոփոխ: Անփոփոխ է թողնվել նաև ամբողջ չարադրանքը, ըստ «գրքերի», ավելի ճիշտ՝ հեղինակի կողմից համարակալված ընդհանուր տետրերի չարադրանքի: Խմբագրման ընթացքում կատարվել են միայն աննշան ուղղումներ:

Ա. Քոչինյանի զավակներ Ժաննայի, Գագիկի և եղբոր որդի Սամվել Քոչինյանի վկայությամբ նա նպատակ էր ունեցել ամբողջ հուշերն ավարտելուց հետո նոր անդրադառնալ դրանց վերանայմանն ու խմբագրմանը, բայց չի հասցրել իրականացնել այդ մտադրությունը:

Ինչպես նշվել է, Ա. Քոչինյանը չի հասցրել նաև գրել շատ ու շատ կարևոր դեպքերի ու իրադարձությունների մասին: Ուստի առաջացած բացը լրացնելու նպատակով անհրաժեշտ համարվեց «Հավելված» բաժնում ընթերցողների ուշադրությանը ներկայացնել Հայաստանի ազգային արխիվի առաջատար աշխատակիցներ Էմմա Հովսեփյանի և Ավագ Հարությունյանի կազմած ժողովածուից Ա. Քոչինյանի ժամանակակիցների հուշերը, որոնք սիրով խմբագրությանն է տրամադրել Հայաստանի ազգային արխիվի տնօրեն, պատմական գիտությունների դոկտոր Ամատունի Վիրաբյանը:

ՎԼԱԴԻՄԻՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ



ՆԱ ԿԱՌՈՒՑՈՒՄ ԷՐ ԻՐ ԵՐԿԻՐԸ

Այս տարի լրանում է Անտոն Քոչինյանի ծննդյան 95-ամյակը: Ավագ և միջին սերընդին հայտնի է Անտոն Քոչինյանի անունը:

Երբեմն զարմացնում, նաև զայրացնում է մարդկանց վերաբերմունքը իրենց անցյալից ստացված ժառանգության նկատմամբ: Նաև այն մարդկանց նկատմամբ, ովքեր իրենց ժամանակին մասնակցել են մեր հայրենիքի ծաղկման ու բարգավաճման գործին:

Հենց այդպիսի մարդ էր Անտոն Քոչինյանը:

Ա. Քոչինյանը թողել է բարի համբավ և եկել է նրա կատարած գործն արժանիորեն գնահատելու ժամանակը:

Անտոն Երվանդովիչը մեր հանրապետության քաղաքական գործիչների մեջ երկարակյացներից մեկն է հանդիսանում: Ամբողջ 14 տարի նա եղել է Սովետական Հայաստանի Նախարարների խորհրդի նախագահը: 9 տարի ղեկավարել է Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղարի պաշտոնը, դարձել Սովետական Հայաստանի ղեկավարը:

Հենց այդ տարիներին մեր հանրապետությունն ապրեց բուռն զարգացում: Այդ տարիներին Հայաստանում ընթանում էր լայնամասշտաբ շինարարություն: Կառուցվեցին բազմաթիվ

խոշոր արդյունաբերական ձեռնարկություններ, ժողովրդական կրթության, գիտության, առողջապահության ու մշակույթի բազմաթիվ հաստատություններ: Հսկայական ծավալի հասցվեց բնակարանային շինարարությունը:

Կարելի է հիշել մի քանի խոշոր կառույց, ինչպես օրինակ, Արփա-Սևանը, Երևան-Սևան մայրուղին, «Զվարթնոց» օդանավակայանը, «Հրազդան» մարզադաշտը և այլն, որոնցով մենք այսօր իրավամբ հպարտանում ենք:

Սովետական իշխանության տարիներին խոշոր օբյեկտների շինարարության համար առաջին հերթին հարկավոր էր հսկայական երկրի ղեկավարությանը համոզել դրանց անհրաժեշտությունը և Միութենական բյուջեից ստանալ անհրաժեշտ ֆինանսավորում: Անտոն Քոչինյանի անձնական հատկության շնորհիվ Հայաստանն այս ասպարեզում պրոբլեմ չուներ: Հենց նրա նախաձեռնությամբ սկսվեց Երևանի մետրոպոլիտենի շինարարությունը, դրվեց Մարզահամերգային համալիրի հիմքը և այլն:

Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղարի պաշտոնից ազատվելուց հետո Անտոն Երվանդովիչը հույս ուներ, որ իրեն կապահովեն աշխատանքով և կունենա զբաղմունք:

Բայց աշխատանք ստանալու մասին նրա բոլոր դիմումները մերժվում էին առանց որևէ բացատրության: Եվ տևական ժամանակ Ա. Քոչինյանը մնաց տանը, զբաղվում էր ընթերցանությամբ, հետևում ամառանոցի բակում եղած ծառերի խնամքին:

Այնպես պատահեց, որ հիվանդացավ Անտոն Երվանդովիչի մայրը, որը մոտենում էր իր 100-ամյակին: Բժիշկների խորհրդով նրան տեղափոխեցին Ծաղկաձոր: Ահա, այս հանգամանքն էլ առիթ ծառայեց, որպեսզի Անտոն Երվանդովիչը տանից դուրս գար և մեկներ Ծաղկաձոր՝ այցելելու մորը: Նա ամեն առավոտ մեկնում էր Ծաղկաձոր և մոր մոտից վերադառնում ուշ երեկոյան: Հաճախ էլ կատակում էր, ասելով՝ «գնում է աշխատանքի»:

Մոր մահից հետո նա այլևս տանը չէր մնում և սկսեց շրջագայել Հայաստանով մեկ: Իրերի բերումով ես հաճախ էի նրան ուղեկցում: Անտոն Երվանդովիչը լինում էր այն կառույցներում, որոնք սկսվել էին իր ժամանակ, հետաքրքրվում էր դրանց ընթացքով և սրտանց ուրախանում էր կատարված առաջընթացով: Ամենուր նրան ընդունում էին հարգանքով ու ջերմորեն ճանապարհում:

Անտոն Երվանդովիչի հետ եղանք Հայաստանի համարյա բոլոր քաղաքներում ու շրջաններում: Ամեն տեղ նույն ջերմ վերաբերմունքն էր ու Անտոն Երվանդովիչը դրանից շատ էր հուզվում:

Կյանքի վերջին տարիներին նա ապրում էր Ջրվեժի իր ամառանոցում: Նրա դուռը բաց էր բոլորի առջև: Այցի էին գալիս գիտնականներ, գրողներ, արդյունաբերության ու գյուղատնտեսության աշխատողներ, ինչպես նաև աշխատանքային ընկերներ: Նա բոլորին ընդունում էր սրտաբաց և հաճույքով առաջարկում իր ձեռքով պատրաստած գինին:

Անտոն Երվանդովիչը մինչև կյանքի վերջը չէր համակերպվում աշխատանք չունենալու հետ և ափսոսանքով էր խոսում, որ այդպես էլ չկարողացավ օգտակար լինել իր երկրին ու ժողովրդին:

Ա. Քոչինյանը դաստիարակել է երեք զավակ: Նրանցից Գագիկը մասնագիտությամբ բժիշկ է, մասնակցել է Արցախի ազատագրմանը և արժանացել «Արիության մեդալ»-ի: Դուստրը՝ Ժաննան աշխատում է ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի համակարգում: Մյուս տղան՝ Էդուարդը մահացել է 2004 թվականին:

2008 թվականի հոկտեմբերի 25-ին լրանում է Անտոն Քոչինյանի ծննդյան 95-ամյակը: Ահա, այս կապակցությամբ հրատարակվում է Անտոն Քոչինյանի «Անավարտ հուշեր» գիրքը:

ՍԱՄՎԵԼ ՔՈՉԻՆՅԱՆ

Սույն գրքի տպագրության ծախսերը հոգացել են Անտոն Քոչինյանի ազգականներ ու բարեկամներ՝

Սամվել Քոչինյանը *(բժիշկ),*
Հովիկ Քոչինյանը *(գեղանկարիչ, ԱՄՆ),*
Սմբատ Օհանյանը *(տնտեսագետ),*
Արմեն Դավթյանը *(չինարար, Սումբատ Քոչինյանի ծոռ),*
Էդիկ Բաղրամյանը *(չինարար),*
Սեյրան Ղազարյանը *(թոշակառու),*
Բաբկեն Քոչինյանը *(թոշակառու),*
Էդիկ Այդինյանը *(թոշակառու):*

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

Կենսաթոշակի անցնելուց հետո իմ բարեկամներն ու ընկերները խորհուրդ էին տալիս հուշեր գրել:

Այդ ժամանակից անցել է ավելի քան տասը տարի: Շատ բաներ փոխվեցին, և այժմյան իրավիճակը հարկադրեց տրամադրվել ու թղթին հանձնել այն ամենը, ինչն այսօր հնարավոր չէ թողնել մեկ ուրիշի:

Իմ հասակակիցներից և գործընկերներից շատերը չկան, իսկ ովքեր ապրում են, նրանք հանրապետության ղեկավար մարմիններից հեռացել են և, հետևապես, անտեղյակ են քաղաքական ու տնտեսական իրադարձություններին:

Այս բոլորը ստիպում են գրել իմ ապրած կյանքի և աշխատանքային ժամանակահատվածում մեր հանրապետության էկոնոմիկայի, մշակույթի և սոցիալական զարգացման որոշակի հարցերի մասին:

Ինչ խոսք, ես հավակնություն չունեմ ո՛չ գրողի և ո՛չ էլ պատմաբանի. այդ պատճառով էլ նպատակ չեմ դրել գրել այդ ժամանակահատվածի պատմությունը: Իմ նպատակն է գրել այն դեպքերի և քաղաքական իրադարձությունների մասին, որոնք, իմ կարծիքով, ինձ են հայտնի, փաստորեն, կենդանի վկան ես եմ: Զգիտեմ՝ որքանով ճիշտ եմ վարվում, երբ սկսում եմ ինքնակենսագրությունից, իմ մանկությունից:

* * *

Մանկությունս անցել է շատ ծանր պայմաններում, որը կհետաքրքրի ընթերցողին (եթե հաջողվի ընթերցել):

Ծնվել եմ Լոռվա գեղեցիկ բնաշխարհում՝ Վահագնի գյուղում (Նախկին Շահալի):

Երևի բոլոր մարդկանց համար էլ այդպես է, որ իր ծննդա-

վայրից գեղեցիկ և հմայիչ աշխարհ ոչ մի այլ տեղ գոյություն չունի: Ինձ թվում է՝ մեր լեռների, անտառների, դաշտերի ծաղիկների բույրը բոլորից տարբեր է և քաղցր: Գեղեցիկ են մեր լեռները, հիասքանչ անտառները, աղմկոտ, քչքչան առվակներն ու գետակները և սառնորակ աղբյուրները: Գետակների ու աղբյուրների անունները դիպուկ և պոետական են: Կաթնաղբյուր Սառցատների աղբյուրն այնքան սառն է, որ նույնիսկ ամռան կիզիչ արևի ժամանակ զնգիլներից սառույցի կտորներով է ջուրը հորդում:

Մեր գյուղում սովորություն էր դարձել, երբ որևէ մեկը հիվանդանում էր և սառը ջուր էր ուզում, գնում էին Սառցատների աղբյուրից ջուր ու սառույց բերում հիվանդների սիրտը հովացնելու համար:

Երբ խոսում եմ հայրենիքիս սիրո մասին, ակամայից հիշում եմ իմ հոր վերաբերմունքը, սերը դեպի հողն ու բնությունը:

Գարունը դեռ նոր էր բացվել, գյուղացիները երկնքին նայելով՝ որոշում էին, թե երբ պետք է ցանեն կարտոֆիլը, գարին, ցորենը: Հայրիկս երկար ժամանակ հիվանդ էր, որի մասին մանրամասն կասվի հետո:

Մի անգամ գնացինք մեր հողամաս, նա ուզում էր պարզել՝ ցանելու ժամանա՞կն է, թե՞ ոչ:

Հողամասի ծայրին կանգնեց, գլուխը վեր բարձրացրեց, նայեց երկնքին, խոր հառաչեց, ապա կռացավ, մի բուռ հող վերցրեց: Կոշտուկներով լի ձեռքում սեղմեց հողը, հոտ քաշեց ու ասաց. «Հողը չնչում է, հողը չաաա լավն է, ցանելու ժամանակն է»: Հետո մի կտոր հող գցեց բերանն ու նորից կրկնեց. «Իսկական ցանելու ժամանակն է»:

Ես զարմացած հարցրի, թե ինչո՞ւ հող լցրեց բերանն ու նոր որոշեց ցանելու ժամանակը: Նա ասաց. «Հողի սառնությունը բերանի խոռոչով ավելի լավ է որոշվում»: Հայրս հողի հետ զրուցում էր այնպես, ինչպես կարելի է զրուցել մարդու հետ: Ինձ թվում էր, թե հողը պատասխանում էր նրա բոլոր հարցերին: Նրանք՝ հողն ու հայրս, իրար լավ էին հասկանում: Ահա այսպես եմ հասկանում սերը դեպի հայրենի հողը:

* * *

Հայրս շատ էր սիրում Սիսի բերդը: Դա մեր սարն է: Այստեղ ամառանոց են գնում մեր ազգականները՝ Քոչինյանները: Երբ Դեբեդ գետից նայում ես Սիսի բերդին, քեզ թվում է՝ երկնքից կախված է, միշտ ամպերի մեջ խրված: Մինչև հիմա էլ մնացել են հին դարերից եկող բերդի մնացորդները՝ չարված պատերը, պատսպարվելու վայրերը և այլն:

Սիսի բերդում կա մի չքնաղ աղբյուր, որի մասին մինչև հիմա էլ ասում են. «Այս աղբյուրից ջուր խմողը երկար կյանք է ունենում»: Բերդի մասին խոսելիս ասում էին, թե մի գիշեր այնտեղ ապրողն անվախ և քաջ է դառնում: Պապս պատմում էր, թե ինչպես մեր ազգականներից մեկը բերդում գիշերել էր և իսկական քաջ դարձել:

Սարում ոչխար արածացնելու ժամանակ օձը խայթում է այդ քաջ հովվի բութ մատը: Լեռնցի քաջը դաշույնը հանում է ու քոթուկի վրա բութ մատը կտրում, արյունը թողնում, որ թույնը չտարածվի մարմնի մեջ, վառում, մոխիրը լցնում վերքի վրա, կապում ու գալիս է տուն: Հովիվն առողջանում է (ամեն ինչ կարգին է):

Միամիտ, հետաքրքրասեր հովիվը որոշում է գնալ տեսնել, թե ինչ եղավ իր կտրված բութ մատը: Երբ տեսնում է, որ իր փոքր մատը դարձել է բռունցքի չափ, ձեռք է տալիս կտրված մատին, և այն պայթում է, թույնը լցվում աչքերի մեջ, ու վախճանվում է մեր քաջ հովիվը: Այդ օրվանից այդ տեղը կոչվում է Մատի սար:

* * *

Ընդամենը չորս-հինգ տարեկան էի, երբ մեր ընտանիքին դժբախտություն պատահեց:

Հայտնի է, որ 1918-ին թուրքական զորքերը ներխուժեցին Լոռի: Մեր գյուղում տեղավորվեց մի ջոկատ, կոտորած ու ահուսարսափ տարածելով գյուղում: Փնտրում էին նրանց, ովքեր Պուշկինի լեռնանցքում կռվել էին իրենց դեմ: Ում տանը արյան հետքեր էին երևում, բնաջնջում էին բոլորին: Թուրքական զորա-

մասի գյուղ մտնելուց անմիջապես հետո հավաքեցին գյուղի բոլոր տղամարդկանց՝ 16-ից տարեկանից մինչև հարյուր տարեկաններին: Նրանց լցրեցին մարագներն ու գոմերը, և տանջամահ արեցին:

Քանի որ աշուն էր արդեն, հացահատիկը դաշտից բերում և կալսում էին: Ջավթիչները կարգ սահմանեցին՝ մինչև իրենց ցորենի բաժինը կալից չվերցնեն, գյուղացիներն իրավունք չունեն ցորենը կալից տուն տանել և ամբարել:

Մի անձրևոտ օր շատ դժվարությամբ մեր նահապետական ընտանիքը հացահատիկը կալսել, կալի մեջտեղում կուտակել, սպասում էր ասկյարների գալուն: Այդ ժամանակ ուժեղ անձրև սկսվեց, կալում կուտակված ցորենը թրջվում էր: Սալթան տատս, որը ընտանիքի ղեկավարն էր, կարգադրեց ցորենը ծածկել, մի մասը ջվալների մեջ լցնել, ծածկի տակ դնել, մինչև ասկյարները գան:

Շատ ժամանակ չանցած, հայտնվեցին երեք աժդահա թուրք զինվոր, որոնցից մեկը ավագը, հրամանատարն էր, իսկ երկուսը՝ շարքային:

Թուրքերի ավագը հայրիկիս թուրքերեն հարցրեց, թե ինչո՞ւ են խախտել սահմանված կարգը, ցորենը ծածկի տակ դրել՝ առանց իրենց բաժինը վերցնելու: Հայրս թուրքերեն լավ էր խոսում, բացատրեց, որ «անձրև էր գալիս, ցորենը չփչացնելու համար ծածկի տակ ենք պահել: Վերցրեք ձեր բաժինը, եթե չեք հավատում, տարեք բոլորը»:

Թուրքին չբավարարեց պատասխանը, նա սկսեց հայհոյել, երկու ասկյարները հորս բռնեցին, մերկացրին, կալի մեջտեղում պառկեցրին, նրանցից մեկը մտավ մոտակա բանջարանոցը մի խուրձ լոբու սարի բերեց և սկսեցին ծեծել հորս:

Առաջին հարվածից հետո արյունը թուրքի երեսին թռավ, նրանք ավելի գազազեցին, ծեծեցին հորս մինչև ուշաթափվելը: Մերոնք, բացի տղամարդկանցից, որոնք փախուստի մեջ էին, գոռում-աղաչում էին դադարեցնել ծեծը, իսկ մեծ քույրս Մարգարիտը, որն արդեն 18 տարեկան էր, խելագարության հասավ և տասն օր հետո մահացավ:

Ամեն ինչ հիշում եմ, բայց այն ժամանակ չէի հասկանում: Հետագայում, երբ հասունացա, հասկացա, ահավոր ապրումներ ունեցա: Թուրքերն ամբողջ հացահատիկը տարան, իսկ Սալթան տատս՝ այդ աժդահա դսեղցին, հայրիկիս տարավ տուն և սկսեց վերքերը մաքրել:

Երկու, թե երեք օրից հայրս ուշքի եկավ: Նրա առաջին հարցը եղավ. «Ցորենը լրի՞վ տարան, թե միայն իրենց բաժինը»: Երբ իմացավ, որ տարել են ամբողջը, սարսափելի ապրումների մեջ ընկավ, որովհետև կերակրվելու համար գրեթե ոչինչ չունեինք:

Այդ սարսափելի դեպքից հետո հայրս գրեթե տասը տարի հիվանդ էր, մեր ընտանիքի վիճակն ավելի ծանրացավ, որովհետև նա ընտանիքում, փաստորեն, միակ աշխատողն էր:

Մայրս շատ լավ բանջարանոց էր մշակում և ամբողջ տարին հացի փոխարեն եգիպտացորենով էր մեզ կերակրում: Ընդհանուր քաղցի հետ միասին աղքատությունն ավելի էր դժվարացրել մեր վիճակը: Քսանական թվականների սովը երբեք չմոռացվեց:

* * *

Սովետական իշխանության հաստատումից հետո մեր մեծ ընտանիքի դրությունը որոշ չափով բարելավվեց: ՆԷՊ-ի ժամանակ բավականին անասուններ ունեցանք, մի քիչ սկսեցինք լավ ապրել: Ընտանիքում սկսվեց անհաշտությունը և, 1924 թվականին, չորս եղբայրները բաժանվեցին: Ամեն մեկին մի քանի ոչխար բաժին ընկավ և մեկ եզ:

Քանի որ հայրս թուրքերի ծեծից հետո լրիվ չէր ապաքինվել, ուստի տան մեծը և աշխատող տղամարդը մնացի ես: Տասը տարեկան էի, գյուղացու բոլոր աշխատանքները կատարում էի, հայրս միայն խորհուրդներ էր տալիս, ինչպես ցորենը ցանել, հնձել, կալսել և այլն:

Շատ է պատահել, երբ տանը ուտելու ոչինչ չէր լինում, շալակով փայտ էի տանում Քոլագերան կայարան՝ պահակին էի տալիս, փոխարենը նա արևածաղիկի քուսպ էր տալիս: Մայրս այդ քուսպն աղում էր, դրանից ճաշ պատրաստում: Գյուղում մի

փոր հացի համար հարևանի անասուններն էի պահում:

Դպրոց ուշ եմ հաճախել, գրեթե 9 տարեկանում: Լավ էի սովորում և մեր վարժապետ Քիչմիչյանը շատ գոհ էր ու օրինակ էր բերում, որ ես կարողանում եմ հասցնել և՛ տան գործերը և՛ սովորելը:

Մեր գյուղում 7-րդ դասարան չբացվեց: Այդ պատճառով էլ երեխաները սովորելու էին գնում Դսեղ և Ջալալօղլի (այժմյան Ստեփանավան): Ես գնացի Դսեղում սովորելու, քանի որ մայրս դսեղցի էր: Ապրում էի տատիս տանը: Դսեղի դպրոցի շենքը չէր բավարարում և Ռամազանց Մեխակի մասնավոր տանը բացվեց 7-րդ դասարանը:

Այստեղ սովորելու էին գալիս հարևան գյուղերի պատանիները և աղջիկները: Ամենից շատ աշակերտներ կային Դեբեդ գյուղից: Բոլորը լավ էին սովորում, հատկապես Արմենակ Կիրակոսյանը, որը հետագայում դարձավ Կիրովականի շրջանի ժողկրթության բաժնի վարիչ, կուսակցության քաղկոմի քարտուղար, իսկ հետո իրենց Դեբեդ գյուղում զբաղվեց մանկավարժությամբ:

Ուսուցչական կազմը շատ պատրաստված էր, գրեթե բոլորը եկել էին Թբիլիսիից: Դպրոցի դիրեկտորը՝ ընկ. Մալումյանը, շատ պատրաստված մանկավարժ էր, ավարտել էր Թբիլիսիի Ներսիսյան դպրոցը և դասավանդում էր մի քանի առարկա:

Շատ խիստ, միաժամանակ բարի մարդ էր հայոց լեզվի ուսուցիչ Օրդոյան Վրույրը, որը հետագայում դարձավ մանկավարժական ինստիտուտի դասախոս:

Առաջին ամիսներին ինձ համար պայմանները տանելի էին: Գիշերում էի քեռիներիս տանը և առավոտյան շուտ դասի գնում, որովհետև պարապմունքները երկհերթ էին: Մի քանի ամսից հետո ինձ համար շատ ծանր պայմաններ ստեղծեց խորթ տատս: Քեռիներիցս ավագը 1918 թվականին կամավոր մեկնել էր ռազմաճակատ և չէր վերադարձել: Տատս գիշեր-ցերեկ սգում էր և ամենափոքր բանից խիստ զայրանում: Նա սպասում էր որդուն:

Բոլորս տեղավորվել էինք գյուղի փոքրիկ խրճիթում: Երբ

սկսում էի բարձր կարդալ, տատս զայրանում էր և ասում. «Գլուխս տարար, բավական է»: Իսկ, երբ սկսում էի մտքումս կարդալ, առիթը բաց չէր թողնում հայրիկիս գանգատվելու, թե «ամբողջ օրը մտքում փնթփնթում է, դրանից սովորող դուրս չի գա: Լավ կլինի, որ տանես գյուղ, ոչխար պահի, քեզ օգնի»: Իմ հարաբերությունները հորս հետ շատ պարզ ու մեծավարի էին: Հայրս հարցրեց, թե ինչո՞ւ չեմ կարդում, տատս բողոքում է: Ես ամեն ինչ պատմեցի և ասացի, որ այլևս նրանց տանը չեմ մնա:

Քեռիս՝ Վարդանը, լսելով այս բոլորը, եկավ դպրոց և ինձ տարավ տուն: Ճանապարհին ասաց, որ գոմում տեղ է պատրաստել, ճրագ է սարքել, որտեղ կարող եմ հանգիստ պարապել, ինձ ոչ ոք չի խանգարի:

Մի քանի ամիս այսպես գոմում պարապում էի, իսկ խրճիթում գիշերում: Վարդանը (գոհվեց Հայրենական պատերազմում) իմ կարդալուց մեծ թվով ոտանավորներ էր սովորել, ինքը կիսագրագետ էր: Շատ գեղեցիկ էր արտասանում Չարենցի «Ամբոխները խելագարված» պոեմը:

Մի քանի օր հիվանդացա, ջերմում էի, մայրս եկավ տարավ գյուղ՝ Շահալի: Ապաքինվելուց հետո սկսեցի հաճախել դպրոց, բայց այս անգամ երկրորդ հերթ: Շահալի գյուղից ամեն օր ոտքով գնում էի Դսեղ, մասնակցում դասերին, դպրոցում դասերս պատրաստում էի, երեկոյան վերադառնում գյուղ: Այս 10 կիլոմետր տարածությունը ինձ համար սովորական էր դարձել:

Հաջորդ տարին Շահալի գյուղում բացվեց միջնակարգ դպրոց և ինչպես մեր գյուղացիները, այնպես էլ շրջակա գյուղերի պատանիներն ու աղջիկները գալիս էին սովորելու մեր դպրոցում:

* * *

1928 թվականին կուսակցության շարքերի զտման ժամանակ արժանավորներին ընդունում էին կուսակցության և կոմերիտմիության մեջ: Ինձ ևս ընդունեցին կոմերիտմիության շարքերը: Այդ ժամանակվանից սկսվեց իմ հասարակական ակտիվ աշխատանքը:

20-ական թվականներին մեր հարևանի բակում չարք էին կանգնացրել գյուղի լավագույն մարդկանց և հարցնում էին, թե ո՞վ է ցանկանում կուսակցության չարքերն անցնել:

Հիշում եմ, մի քանիսը գրվեցին և հետագայում իրենց հին բոլշևիկ էին համարում, իսկ շատերը հրաժարվեցին: Հիշում եմ մեկին, Քոչինյան Սիրեկանն էր: Շրջկոմի ներկայացուցիչը հարցրեց. «Ցանկանո՞ւմ ես կուսակցության չարքերն ընդունվել», նա պատասխանեց. «Եթե հրացան տաք, կգրվեմ»: Բայց չընդունվեց:

Գյուղի կուսակցականներից շատերը գրել, կարդալ չգիտեին, սակայն նվիրված, աշխատասեր մարդիկ էին, բայց, դժբախտաբար, անգրագետ էին կամ լիկկայանի միջոցով կիսագրագետ: Իհարկե, դա նրանց ոչ թե մեղքը, այլ դժբախտությունն էր:

Երևի հենց դա էր պատճառը, որ 1929 թվականին ինձ ընտրեցին կոմերիտմիության բջիջի քարտուղար և նույնիսկ կուսակցական դռնփակ ժողովներին ինձ հարավիրում էին արձանագրությունը գրելու: Այդպես շարունակվեց մինչև գյուղից իմ հեռանալը:

Պատասխանատու ժողովների ժամանակ ամեն մի ելույթ ունեցող պարտադրում էր կարդալ իր ելույթի տեքստը: Մեծ անախորժություն էր լինում, եթե մեկի ելույթը լրիվ չէր գրվել կամ, իր կարծիքով, ճիշտ չէր արձանագրվել:

Մի անգամ բջիջի քարտուղար Սարգիս Օհանյանը տեղից երկու խոսք ասաց ու քնեց. դա նրա հիվանդությունն էր: Մյուս օրը եկավ խրճիթ-ընթերցարան և պահանջեց կարդալ ժողովում իր ելույթը: Բացեցի արձանագրությունը և ասացի. «Դուք շատ կարճ խոսեցիք, երևի երկու խոսք, գրելու անհրաժեշտություն չկա»: Գիշերը մտածել էր, թե ինչ պետք է ասեր. սկսեց պահանջել, որ արձանագրության մեջ ավելացնեմ իր ելույթը: Կուսակցականներից շատերը հաստատեցին, որ նա չի խոսել: Այնուամենայնիվ, հաջորդ ժողովին ինձ զրկեցին քարտուղարությունից, առաջարկվեցին այլ թեկնածուններ: Բոլորը հրաժարվեցին: Ստիպված նորից ինձ հանձնարարեցին՝ զգուշացնելով, որ ուշադիր լինեմ:

30-ական թվականների սկզբներին դպրոցական և արտադրական կոմերիտմիության կազմակերպությունների համար ընտրում էին կոլեկտիվ բյուրոյի քարտուղար: Գյուղում ինձ ընտրեցին կոմբյուրոյի առաջին քարտուղար: Կոմերիտական աշխատանքի համար, բացի դպրոցից, պետք է պատասխան տրվեր կոլտնտեսության կոմերիտական կազմակերպության աշխատանքի համար:

Այդ կապակցությամբ հարկ եղավ, որ դպրոցի պարապմունքները վերջանալուց հետո կոլտնտեսությունում աշխատեի Բարսեղ Վարդումյանի մոտ որպես հաշվետար: Երկար ժամանակ կոլտնտեսության հաշվապահ աշխատեց փեսա Բարսեղը, որը յուրահատուկ ընդունակությունների տեր մարդ էր: Նա դեռ ողջ է, 100 տարեկանից ավելի է:

Բարսեղը կոլտնտեսության բոլոր հաշիվները պահում էր իր մտքում, գրքերում գրանցված թվեր չուներ, անհրաժեշտության դեպքում միայն ինքը պետք է գար և ասեր որևէ տվյալի, թվերի մասին:

Մի անգամ շրջանային մարմիններից կոլտնտեսության աշխատանքի վերաբերյալ տվյալներ էին պահանջում: Կոլտնտեսության նախագահ Սահակ Հովհաննիսյանը պահանջեց, որ ուղարկելու համար պահանջվող տվյալները ես լրացնեմ:

Համապատասխան գիրքը բացեցինք, որտեղ ոչինչ գրված չէր, իսկ Բարսեղը հիվանդ էր, աշխատանքի չէր գալիս: Ստիպված գնացի նրա մոտ, թելադրեց բոլոր տվյալները. լրացրեցինք, ուղարկեցինք: Կոլտնտեսության նախագահ Սահակ Հովհաննիսյանն այն ժամանակ կոլտնտեսության աշխատանքները հասկացող, պարտաճանաչ ու բարեխիղճ մարդ էր, Հայրենական պատերազմում զոհվեց: Գյուղում, նրա մասին միշտ դրական են արտահայտվել:

Գյուղի կոլերիտդպրոցը (այն ժամանակ միջնակարգ դպրոցն այդպես էր կոչվում) ուներ գյուղատնտեսական թեքում և ավարտելուց հետո երիտասարդը ստանում էր կրտսեր գյուղատնտեսի կոչում:

Կոլերիտդպրոցն ավարտելուց հետո մեկնեցի Թբիլիսի սովո-

րելու: Երազում էի ընդունվել Թբիլիսիի Անդրկովկասյան երկրաբանական ինստիտուտ: Այդ նպատակով գործերս պատրաստեցի, բայց, ցավոք, հենց նույն տարին Թբիլիսիի երկրաբանական ինստիտուտի հայկական բաժինը փակվել էր, իսկ ես հնարավորություն չունեի ռուսական բաժին դիմելու, որովհետև լեզուն չգիտեի:

Ստիպված մի քանի ընկերներով դիմեցինք Թբիլիսիում բացված մանկավարժական տեխնիկում, որը բացել էին Ներսիսյան դպրոցը փակելուց հետո: Իմ ընկերների հետ գործերը տվեցինք Հայկական մանկավարժական տեխնիկում: Մենք դիմել էինք 2-րդ կուրսի համար, բայց ընդունեցին 1-ին կուրս՝ պատճառաբանելով, որ մանկավարժը պետք է անցնի տեխնիկումի լրիվ կուրսը, մանավանդ, որ Ներսիսյան դպրոցի գրեթե բոլոր ուսուցիչներին փոխադրել էին այդ տեխնիկում՝ Ֆիզիկոս Էլբակյանը, Ն. Սարգսյանը, Սողոմոն Սարիբեկյանը, գրող Մարգարը, Ազատ Մանուկյանը և ուրիշներ:

* * *

Մինչև Թբիլիսի գնալը, գյուղում ինձ ընդունեցին կուսակցության մեջ՝ որպես թեկնածու: Դա 1931 թվականին էր: Այդ ժամանակ գյուղում համատարած կոլեկտիվացման վերաբերյալ լոզունգներ էին տարածել: Երբ հիշում եմ այդ օրերը, զգում եմ, թե ինչպիսի անհեթեթություններ էին կատարվում:

Գյուղում պետք է հրավիրվեր ընդհանուր ժողով՝ կոլեկտիվացման հարցը քննարկելու համար: Բայց ժողովատեղ չկար, մնում էր եկեղեցին, որտեղ հնարավոր էր որոշ չափով տեղավորել ժողովականներին: Սակայն կոմունիստները գտան, որ եկեղեցին չի կարելի դարձնել նման կարևոր հարցի քննարկման համար հասարակական ժողով հրավիրելու վայր:

Գտնվեց մեկը, որն այդ հարցը շատ արագ լուծեց, առաջարկելով եկեղեցու զանգակները հանել և նոր միայն ժողով հրավիրել: Այդպես էլ արեցին: Հավաքվեցին կուսակցականներն ու կոմերիտականները, տարեցների բուռն անեծքի տակ բարձրացան գմբեթ, հանեցին զանգակները, որով կրոնական բոլոր նախապաշարումները վերացվեցին և հրավիրվեց գյուղի հասարակության ընդհանուր ժողովը:

Ժողովին առաջին հերթին եկել էին գյուղի բատրակները, չքավորները, կոմունիստներն ու կոմերիտականները:

Այս պայմաններում կոլեկտիվ տնտեսության մեջ (կոլխոզ) պետք է մտնեին առաջին հերթին կոմունիստները և կոմերիտականները, ապա՝ մյուսները:

Գյուղի կոմերիտական կազմակերպության քարտուղար լինելով՝ պետք է առաջիններից մեկը ես լինեի, բայց հայրս կտրականապես հրաժարվեց, չցանկացավ կոլխոզ մտնել:

Վիճակս անասելի ծանրացավ, որպես կուսակցության անդամության թեկնածու և կոմերիտմիության քարտուղար՝ պետք է առաջիններից մեկը լինեի, օրինակ հանդիսանայի, հակառակ պատկերն էր ստացվում:

Մեր ընտանիքի ունեցած-չունեցածը մի եզ ու մի այծ էր, ուրիշներն ապրուստի տեր էին, չէին ցանկանում ընկերանալ աղքատների հետ, դա ինչ-որ տեղ հասկանալի էր, իսկ դու, Երվանդ Քոչինյան, ինչո՞ւ չես ցանկանում կոլտնտեսություն մտնել: Մայրս աղաչում, պաղատում էր, խնդրում հորս համաձայնվել կոլխոզի մեջ ընդգրկվելու համար:

Մայրս շատ էր վախենում, որ, եթե մենք կոլտնտեսության մեջ չմտնեինք, ինձ կուսակցությունից կհեռացնեն, իսկ այդ սպառնալիքը, իրոք, միշտ կար: Կուսակցական կազմակերպությունը գյուղի հեղինակավոր մարդկանցից մեկին հանձնարարեց խոսել հորս հետ, իսկ ես, արդեն իմ կամքով, առանց ունեցվածքի, ցուցակագրվեցի, ինչպես մյուս բատրակները:

Հորս հետ երկար զրուցեցին: Նա բացատրեց, թե ինչու չի ցանկանում կոլտնտեսություն մտնել: Երվանդի միակ անհանգստությունը նրանում էր, որ չէր ցանկանում մայրս դաշտում աշխատի, շատ էր սիրում նրան՝ Սիրանույշին, ինչպես ասում են, վարդի պես էր պահում: Քանի որ ասվել էր, որ կոլտնտեսությունում բոլորը՝ կին, թե տղամարդ, պետք է միասին դաշտում աշխատեն, հայրիկիս համար դա միանգամայն անընդունելի էր: Երվանդին խոստացան, որ Սիրանույշ ձալոն դաշ-

տում չի աշխատի, որից հետո համաձայնվեց կոլխոզ մտնել:

Իմիջիայլոց ասեմ, որ անցան տարիներ, մայրս էլ գնաց դաշտում աշխատելու: Երվանդը մայրիկիս նստեցրել էր եզան վրա, որ մեզանում շատ անպատվաբեր էր կնոջ համար, նկարել էր տվել և ուղարկել էր ինձ Ազիզբեկովի շրջան, որտեղ այդ ժամանակ աշխատում էի՝ որպես թերթի խմբագիր: Հայրս նկարի տակ գրել էր. «Ահա ձեր խոստումը»:

Եթե գրող լիներ, վերոհիշյալ ժողովի մասին կարելի էր մի հաստափոր վեպ գրել:

Սկզբնական շրջանում դա կոլխոզ չէր, այլ կատարյալ ծաղրանք. կոլխոզը ո՛չ գործիքներ ուներ, ո՛չ սերմ և ո՛չ էլ քաշող ուժ: Հետագայում պետությունն օգնեց, միջակ գյուղացիներին ընդգրկեցին և որոշ չափով վիճակը բարելավվեց:

* * *

1932 թվականին Հայաստանում կատարվեց կոմերիտմիության տոմսերի փոխանակում: Այդ ժամանակ Ղարաքիլիսայի կոմերիտմիության շրջկոմը, որի քարտուղարը շատ հարգելի Երեմ Գաբրիելյանն էր, ինձ նշանակեց շրջկոմի հաշվառման բաժնի վարիչ. և մինչև տոմսերի փոխանակման վերջը մնացի Ղարաքիլիսայում:

Այդ ժամանակվանից էլ սկսվեց իմ աշխատանքային գործունեությունը: Կուսակցության շրջկոմի 1-ին քարտուղարն էր հին բոլշևիկ, շատ զարգացած, աշխատասեր, պարզ ու հաճելի վարքի տեր Նահապետ Կուրղինյանը:

Այս նվիրված ու ազնվագույն մարդուն հետագայում մեղադրեցին տրոցկիզմի մեջ և 1937 թվականին բանտարկեցին:

Ղարաքիլիսայում ապրում էի շրջկոմի շենքում: Մի պայծառ առավոտ ինձ կանչեցին շրջկոմի քարտուղար Կուրղինյանի մոտ: Նա ասաց, որ ինձ ուղարկելու են կոմհամալսարան՝ սովորելու, բայց մինչ այդ մի կարևոր հանձնարարություն կար, որ պետք է կատարեի, որից հետո կուղարկեն: Միաժամանակ ավելացրեց, որ այդ հանձնարարությունից է կախված գործուղումը կոմհամալսարան:

Նա պատմեց, թե ինչպես մի քանի օր առաջ գործադիր կոմիտեի նախագահ Արթուր Հակոբյանին ուղարկել են Քոլագերան՝ գյուղում կոլխոզ կազմակերպելու, գյուղի կանայք եղաններով ու մահակներով ծեծել են նրան ու հեռացրել գյուղից:

Մեր ունեցած տեղեկությունների համաձայն՝ այդ բոլորի կազմակերպիչը քրոջս ամուսինն էր Աշոտը: Վերջինս գյուղի տիրացուն էր՝ միակ գրագետ մարդը: Երբ գյուղի տերտերն ու տիրացուն մահացել են, Աշոտին տիրացու էին կարգել: Այժմ Աշոտը կոլխոզի կազմակերպմանը դեմ է, իսկ գյուղացիները հետևում էին նրա օրինակին:

Քոլագերանում կոլխոզ կազմակերպելու համար գյուղ մեկնեցինք միջահասակ մի զինվորական ընկերոջ՝ Ստեփանյանի հետ: Գնացքով եկանք Շահալի կայարան, որտեղից պետք է մեկնեինք Քոլագերան: Ճանապարհն անտառի միջով էր անցնում, շատ տեղերում՝ փոքրիկ արահետներով:

Դժվար թե կարողանամ նկարագրել այն գեղեցիկ ճանապարհը, որն անցնում էր Շահալիից Քոլագերան: Բարձր լեռնեը ծածկված էին կուսական անտառներով, ամեն մի փոքր ու մեծ ձորից քչքչան աղբյուրներ ու գետակներ էին հոսում: Շահալի կայարանից, երբ բարձրանում ես, շատ լավ են երևում Սիսի բերդը և սարը, Քամալվի (Շամալվի) կամուրջը, իսկ խոր ձորում աղմկում է Փամբակ գետը, որը մի քանի կիլոմետրից հետո խառնվում է Դեբեդ գետին և գահավիժում դեպի մեծ Թումանյանի նկարագրած վայրերը:

Ուշ երեկո էր, երբ հասանք Քոլագերան, ես լավ գիտեի քրոջս՝ Աշոտի տունը, և երկուսով գնացինք նրանց հյուր:

Քույրս՝ Սոնան, շատ ուրախացավ, ուրախությունից լաց եղավ, համբուրեց և անմիջապես անցավ խոհանոց՝ ուտելիք պատրաստելու հյուրասիրության համար: Փեսա Աշոտը շատ ջերմ բարևեց ինձ և նույնքան սառը Ստեփանյանին, հարցնելով՝ ո՞վ է այս ընկերը, ես պատասխանեցի, որ իմ ընկերն է, եկել ենք իրենց հյուր:

Ինձ թվաց, թե Աշոտը կռահեց մեր գալու նպատակը, բայց ոչինչ չասաց, քրոջս պատրաստած ընթրիքը ճաշակելուց հետո

Աչոտն ինձ դուրս կանչեց և հրամայական տոնով հարցրեց. «Ինչո՞ւ եք եկել»: Ասացի, որ եկել ենք կոլխոզ կազմակերպելու: Աչոտը շատ զայրացավ և պահանջեց հեռանալ, պատճառաբանելով, որ գյուղացիները շատ զայրացած են և չեն ցանկանում կոլխոզ կազմակերպել, կարող են տհաճ բաներ լինել և խորհուրդ տվեց գնալ մեր գյուղ՝ Շահալի, որը Քոլագերանից ընդամենը մի քանի կիլոմետր էր հեռու:

Առարկելով նրան՝ ասացի, որ ես կուսակցության թեկնածու եմ և ինձ կուսշրջկոմը, անձամբ ընկեր Կուրղինյանն է հանձնարարել, չեմ կարող չկատարել, երկրորդ, ընկերոջս մենակ չեմ թողնի: «Դուք գիտեք,- ասաց Աչոտը,- կրակի հետ եք խաղում, կարող է ավելի վատ լինի, քան եղավ գործկոմի նախագահ Հակոբյանի հետ»: Ես համառելով համառելով պատասխանեցի. «Փեսա՛, այս բոլորը քո ձեռքին է, եթե դու ցանկանաս, ամեն ինչ խաղաղ կանցնի և՛ իմ համար, և՛ քեզ համար լավ կլինի»: Աչոտը շատ տխրեց, որ Կուրղինյանը գիտեր, թե այդ բոլորը կատարվում էր իր միջոցով:

Առաջին օրը գյուղում չկարողացանք հավաքել մարդկանց: Գյուղի կատարածուն ինչքան էլ կոկորդը պատռեց, ոչ ոք գյուղամեջ չեկավ: Գրասենյակում երկար նստելուց հետո նորից եկանք քրոջս տուն: Սենյակում շատ տխուր, գլուխն ափերի մեջ առած՝ նստած էր իմ շատ հարգելի փեսան:

Երբ մեզ տեսավ, տեղից վեր կացավ, ձեռքը մեկնելով Ստեփանյանին՝ հարցրեց. «Ժողով արեցի՞ք»: Ստեփանյանն ասաց. «Մարդիկ հավաքվեցին, բայց ինչպես կարող էինք ժողով անել առանց քեզ, հետաձգեցինք մինչև վաղը, որ դու մասնակցես, չէ՞ որ գրագետ մարդը դու ես, պետք է ցուցակագրել, հաշվի առնել ունեցվածքը, այդ բոլորը պահանջում է քեզ նման փորձված, գրագետ մարդ»:

Պետք է խոստովանեմ, որ ինչ-որ չափով Աչոտը շոյված զգաց և սկսեց կոլխոզի պայմանների, դրվածքի մասին հարցուփորձ անել: Այդ երեկոն անցավ ավելի հանգիստ, երևում էր, որ Աչոտի հոգին ինչ-որ չափով հանդարտվել էր: Երեկոյան մենք ունեցած համեստ ընթրիք էինք վայելում, Աչոտը տնից դուրս ելավ, գնաց գյուղամեջ, հետո վերադարձավ: Հավանաբար հանդիպել էր գյուղացիների հետ:

Մենք վախենում էինք, որ նա կազմակերպում էր տհաճ գործեր: Քույրս՝ Սոնան զգաց մեր անհանգստությունը, մոտեցավ ու ասաց, որ այդպիսի բան չի անի, քանի դեռ ես այստեղ եմ:

Վերջին անգամ դուրս գալուց հետո Աչոտը եկավ կեսգիշերին: Դուրս կանչեց ինձ և ասաց. «Ձիերը պատրաստ են, նստեք, գնացեք Շահալի, վաղը կարող է շատ ծանր վիճակ ստեղծվի ձեզ համար»: Սենյակ մտա ու Աչոտի ասածները հայտնեցի Ստեփանյանին: Վերջինս կտրականապես հրաժարվեց, ասելով, որ մենք հանձնարարություն ունենք շրջկոմից և պետք է կատարենք ինչ գնով էլ ուզում է լինի:

Գիշերը գրեթե ոչ ոք չքնեց, ո՛չ մենք և ո՛չ էլ Աչոտը, իսկ քույրս աթոռին նստած՝ ամբողջ գիշեր լաց եղավ: Նա սարսափում էր Հակոբյանի հետ կատարված դեպքից:

Առավոտյան վեր կացանք, քույրիկս ձվածեղ պատրաստեց, կերանք, պետք է գնայինք գյուղի գրասենյակ՝ ժողով հրավիրելու համար: Աչոտը խնդրեց մեզ սպասել տանը, մինչև ինքն իմաց կտա: Մի քանի ժամ անց մի երեխա եկավ և հրավիրեց մեզ գյուղխորհրդի գրասենյակ:

Աչոտի տնից դուրս գալուց տեսանք, որ գյուղխորհրդի գրասենյակի առաջ հավաքվել է ամբողջ գյուղը, այստեղ էին տղամարդիկ և կանայք, երեխաներ ու զառամյալ ծերեր:

Սկզբից շատ վախեցանք այդ բազմությունից, հետո երբ մեզ ճանապարհ տվեցին դեպի գրասենյակ, որոշ չափով հանգստացանք:

Կուսակցության բջիջի քարտուղարը, եթե չեմ սխալվում, Դարմիլն էր, ժողովը բացեց, նախագահ, քարտուղար ընտրեցին, ձայն տվեցին շրջանի ներկայացուցիչ Ստեփանյանին: Ելույթի ժամանակ ժողովականների մեջ շատ անսովոր լարվածություն էր նկատվում: Ճառն ավարտելուց հետո սկսվեց ցուցակագրումը. առաջինը գրվեցին կուսակցականները, որոնց թիվը շատ քիչ էր, ապա անցան գյուղացիներին: Ժողովի նախագահն առաջին հերթին անուններով կանչում էր չքավորներին, ապա՝ միջակ գյուղացիներին:

Մի քանի չքավորներ, բատրակներ ևս գրվեցին, բայց դրանով կոլխոզ կազմակերպել հնարավոր չէր, նրանք բոլորն էլ աղքատ էին, ո՛չ եզ ու կով ունեին, ո՛չ գութան ու արոր, ո՛չ սերմացու, հաց ու կարտոֆիլ: Փաստորեն նրանք էին, որոնք ոչինչ չունեին:

Ժողովի նախագահը լավ հասկանալով այդ բոլորը, դիմեց միջակ ու նույնիսկ ունևոր գյուղացիներին: Բարձր ձայնով ժողովի նախագահը ասաց.

–Քեռի՛ Նահապետ, արի՛, գրվի:

Նահապետը պատասխանեց.

– Թող Սարգիսը գրվի, հետո ես:

Գրիգորը մատնացույց արեց մեկ ուրիշին. այսպես գրեթե ամբողջ գյուղը մեկը մյուսին առաջարկելով կոլխոզ չեն գրվում: Երկար լռությունից հետո մեկը կանգնեց և ասաց.

–Թող Աշոտը գրվի, մենք բոլորս կգրվենք:

Աշոտը կարծես ամբոխից դուրս կանգնած՝ քարացել էր, մեկ էլ տեղից վեր թռավ, արագորեն մոտեցավ ամբոխին, ամբոխը ճեղքվեց, տեղ տվեց նրան՝ մոտենալու գրասեղանին: Աշոտը գիրքը քաշեց դեպի իրեն և ցուցակի վերևում գրեց իր անունն ու ազգանունը՝ հայտարարելով. «Ինչպես բոլորը, այնպես էլ ես»: Այս բոլորից հետո գյուղացիները ցուցակագրվեցին, ընտրեցին նախագահ և հաշվապահ: Աշոտ Գևորգյանին ընտրեցին կոլտնտեսության հաշվապահ ու մինչև Հայրենական պատերազմի սկսվելը Քոլագերանի հաշվապահն էր:

Իմ խեղճ փեսան գնաց բանակ և հերոսի մահով ընկավ մարտի դաշտում:

Խորհրդային իշխանության հաստատման, ամրապնդման ժամանակ ամենածանր, դժվարին գործընթացը գյուղի կոլեկտիվացումն էր:

Քանի՞-քանի՞ մարդ զոհվեց, բանտերում փտեց կոլտնտեսության դեմ կռվելու, տնտեսավարության այդ ձևի հետ համամիտ չլինելու պատճառով: Թացը չորի հետ խառնեցին, բանտերը լցրին:

Կուսակցության շրջկոմում շատ գոհ էին մեր աշխատանքից:

Քոլագերանում կազմակերպվեց մի նոր հանրային տնտեսություն: Անհրաժեշտ է նշել, որ այժմ Գուգարքի շրջանի ամենաառաջավոր տնտեսությունն է:

* * *

Կուրղինյանը հաջորդ օրը կանչեց և կարգադրեց գործերս պատրաստել Երևանում նոր բացված կուսակցական գյուղատնտեսական բարձրագույն դպրոցում սովորելու համար: 1932–1933 ուսումնական տարում Ղարաքիլիսայում ուսանողներ էր հավաքագրում և մոբիլիզացնում Մարո Իսաբեկյանը: Մյուս ընկերների հետ իմ գործերը ևս վերցրեց, և այդ տարի ընդունվեցի կուսակցական գյուղատնտեսական բարձրագույն դպրոց:

Այս ուսումնական հաստատության առավելությունն այն էր, որ գյուղատնտեսական և անասնաբուժական ինստիտուտների գրեթե բոլոր դասախոսները միաժամանակ դասավանդում էին մեզ մոտ, բացի դրանից, հասարակագիտական առարկաները կարդում էին լավագույն մասնագետները: Դասախոսներից հայտնի գիտնականներ և հետագայում ակադեմիկոսներ դարձան պրոֆեսոր Թումանյանը, Երիցյանը, Աղաջանյանը, Ասլանյանը և շատ ուրիշներ:

1935 թվականին գերազանց գնահատականներով ավարտեցի դպրոցը: Դպրոցի ղեկավարությունը երաշխավորեց ինձ ուղարկել Մոսկվա՝ ժուռնալիստիկայի ինստիտուտում սովորելու:

Ուրախությանս չափ ու սահման չկար, որ պետք է գնայի Մոսկվայում սովորելու, բայց այդ ուրախությունը երկար չտևեց: Գյուղից վերադառնալուց հետո ինձ հրավիրեցին կենտրոնական կոմիտեի մամուլի սեկտորի վարիչ Ռաֆիկ Շիրոյանի մոտ: Նա հայտնեց, որ կենտրոնական կոմիտեն որոշել է ինձ ուղարկել Շամշադին որպես թերթի պատասխանատու քարտուղար:

Երբ պատմեցի, թե գործերս ուղարկել եմ Մոսկվա՝ ուսումս շարունակելու, Շիրոյանն ասաց, որ ինքը ոչինչ անել չի կարող ու ինձ ուղարկեց պրոպագանդայի բաժնի վարիչ ընկեր Արիսյանի մոտ: Միջահասակ, գեղեցիկ հագնված տղամարդ էր: Արիսյանն

այն ժամանակվա զարգացած մարդկանցից էր, ավարտել էր Մոսկվայի կարմիր պրոֆեսուրայի դասընթացները, ավելին, նա միաժամանակ եղել է այդ պրոֆեսուրայի կուսակցական կազմակերպության քարտուղարը:

Շիրոյանը զեկուցեց, որ ես հրաժարվում եմ Շամչադին գնալուց: Արիսյանը շատ հանգիստ լսեց իմ պատճառաբանությունը և առաջարկեց գնալ Շամչադին, մեկ տարի աշխատել, որից հետո խոստացավ ուղարկել Մոսկվա՝ սովորելու:

Արիսյանը շատ համակրելի մարդ էր, միանգամայն վստահ էի, որ նա իր խոստումը կկատարի, բայց, ավա՜ղ, մեկ տարի հետո նա արդեն աքսորված էր:

Կարծես մի անգամ հանդիպելն ու զրույցը շատ թռուցիկ է, բայց Արիսյանի հետ իմ հանդիպումն անջնջելի տպավորություն թողեց, և երբ լսեցի, որ նրան բանտարկել են, ծանր ապրումներ ունեցա:

Ադո Ադոյանը մեր դպրոցում քաղաքատնտեսություն էր դասավանդում, նրա բանտարկությունն ևս անհասկանալի էր և վերին աստիճանի ծանր: Երբ մարդուն չես ճանաչում, կարծում ես երևի մեղք է ունեցել, պատժել են, բայց երբ ինչ-որ չափով գիտես և լսում ես դժբախտության մասին, շատ լուրջ հոգեկան ապրումներ ես ունենում:

* * *

Երևանում սովորելու ժամանակ մեր ուսանողներին շատ հաճախ էին հրավիրում հավաքների, կուսակցական ակտիվի նիստերի, և դա հասկանալի էր: Այդ թվերին Երևանի ամենախոշոր կազմակերպությունը մերն էր: Ինձ բախտ է վիճակվել մասնակցել Երևանի կուսակցական կազմակերպության ակտիվի ժողովներից մեկին, որն արժանի է նշել. այդ մասին չեմ կարող չհիշատակել:

Դա կուսակցական ժողով չէր, այլ մի խելագարված ամբոխ: Թե ինչ հարց էր քննարկվում, չեմ հիշում, բայց երկրորդ ճառախոսից հետո սկսեցին քննադատել Կենտկոմի առաջին քարտուղար Աղասի Խանջյանին: Նրան մեղադրում էին այն բանում, որ

վատ է կազմակերպում պայքարը ժողովրդի թշնամիների դեմ, և բերում էին մարդկանց ցուցակներ, ազգանուններ, որոնք աշխատում էին ուսումնական հաստատություններում և այլն:

Փաստորեն Կենտկոմի քարտուղարին անվստահություն էին հայտնում: Ցավն այն էր, որ Կենտկոմի քարտուղարներից Ակոպովը մասնակցում էր այդ ակտիվին, բայց քար լռությամբ տարավ այդ բոլորը: Այդ այլանդակ ժողովի կազմակերպիչը և զրպարտությունների հեղինակը Աղասի Մարտիրոսյանն էր, 1907 թվականից հին բոլշևիկ:

Խանջյանն այդ ժամանակ բացակայում էր քաղաքից, հետո նրան հրավիրում են Երևան՝ մասնակցելու ակտիվի ժողովին, որին ես չեմ մասնակցել. այդ մասին ինձ պատմել է մասնակցած Վաչե Զախարյանը:

Խանջյանը զեկուցում է ժողովրդի թշնամիների դեմ պայքարի ընթացքի մասին և պաշտպանության տակ վերցնում մի շարք գիտնականների և պետական գործիչների: Իր զեկուցման վերջում Խանջյանը շատ զայրացած ավելացրել է՝ «Ես կարող եմ այսքանը կատարել, իմ ուժերն այս են. ի՞նչ եք ուզում ինձանից»:

Ելույթից անմիջապես հետո առանց ձայն խնդրելու մեկը դահլիճի վերջից գալիս, բարձրանում է ամբիոն և դիմում Խանջյանին. «Աղասի, ասում ես, ի՞նչ ենք ուզում քեզանից, իմացի՛ր, մենք քեզնից ղեկն ենք ուզում»:

Կուսակցական ակտիվը կողմնորոշելով, թե ինչ է կատարվում, անցնում է Ա. Խանջյանի կողմը, պահանջելով պատժել այդ զրպարտչին: Այդ ժամանակ ժողովականներից մեկը՝ Գողթ գյուղացի Գրիգորյանը, բարձրանում է բեմ և հռետորի օձիքից բռնած՝ ցած է իջեցնում: Այդ մարդը 1907 թվականից բոլշևիկ ղափանցի Աղասի Մարտիրոսյանն էր, ամեն ինչով ապականված մի անձնավորություն: Դրանից հետո նրան անվանում էին «Ղեկ Աղասի»:

Զմոռանամ նշել, որ երբ Երևանի Կիրովյան շրջկոմի քարտուղար էի, Մարտիրոսյանին կենցաղային այլանդակության համար խիստ պատժի ենթարկեցինք: Իսկ նրա հարազատ տղան

փորձել էր սպանել, փախավ և մինչև կյանքի վերջը ապրեց Ղափանում:

Որքան ցավալի է, որ այդպիսի խլուրդները հեշտությամբ կարողանում են ջուրը պղտորել և շատ հաճախ իրենց նպատակներին հասնել:

Խանջյանին հանդիպել եմ երկու անգամ և մեծ համակրանքով եմ լցվել: Այդ գեղեցիկ վանեցին նվիրված էր իր հայրենիքին և կուսակցությանը: Անաստաս Միկոյանը պատմում էր, թե ինչպես Լենինգրադում շրջկոմի քարտուղար եղած ժամանակ Խանջյանը մեծ պայքար է տարել տրոցկիզմի դեմ, որ այդ շրջանի կոմունիստներն ու աշխատավորությունն ինչպիսի քնքշությամբ և հարգանքով են վերաբերվել իրենց քարտուղարի նկատմամբ:

Հայաստանում Խանջյանը մեծ հեղինակություն էր, դա բոլորին հայտնի էր, բայց ինչպե՞ս պատահեց, որ Մարտիրոսյանի նման տականքները կարողացան հասնել այն բանին, որ մայրաքաղաքի կազմակերպությունն անվստահություն հայտնեց իր շատ հարգված քարտուղարին:

Այս բոլորը Անդրերկրկոմի, Բերիայի կազմակերպած սև գործն էր: Բերիային դուր չէր գալիս Խանջյանի մասսայականությունն ու մեծ հարգանքն աշխատավորության շրջանում: Խանջյանի դրությունն ավելի վատացավ, երբ Հայաստանի կոմկուսի երկրորդ քարտուղար նշանակվեց իսկական տականք Ամատունին:

Խանջյանի պես նրբազգաց մարդը չկարողացավ դիմանալ բոլոր կողմերից եկող հալածանքներին: Մի բան, որի վրա հենվում և համոզված էր դրանում, իր երկրի կուսակցական կազմակերպությունների վստահությունն էր: Բայց այստեղ էլ Բերիան հասավ իր նպատակին՝ քաղաքային կազմակերպության տխրահռչակ ժողովում:

Բացի դրանից հանրապետությունում քաղաքական մթնոլորտը Է՛լ ավելի չիկացավ, երբ գյուղի աշխատավորության մի մասը կոլխոզից խուսափելու համար զենք վերցրեց և դուրս եկավ գյուղից՝ կռվելով կոմունիստների դեմ, իհարկե, եթե

վերջիններս չէին միացել ապստամբներին, ինչպես արեցին Դարալագյազում, Արփայում և մի շարք ուրիշ գյուղերում:

Անդրերկրկոմի ղեկավարությունն օգտագործեց այս առիթը և շատ անմարդկային ճնշում գործադրեց հանրապետության ղեկավարների, առաջին հերթին Ադասի Խանջյանի վրա: Կոլխոզային կարգերի դեմ այս շարժումը բացատրում էին կուսակցական-քաղաքական թույլ աշխատանքով և ոչ թե ձախության սխալներով: Հասկանալի է, որ այս բոլորը կուտակվեց և ծանր նստեց Խանջյանի վրա: Շատ ցավալի է, որ հայրենասերի սիրտը չդիմացավ այս ամենին:

...

Կենտրոնական կոմիտեում արդեն ամեն ինչ որոշված էր. ես պետք է գնայի աշխատելու որպես «Շամշադինի կոլխոզնիկ» թերթի պատասխանատու քարտուղար:

Եկա իմ սիրելի հայրենիքը, որտեղ ինձ օրորել, սնել ու մեծացրել են ծնողներս և շատ բարեհաճ իմ ժողովուրդը: Ես կարծես մեծացել էի, ինձ հետ հաշվի էին նստում գյուղի ծերերը և կուսակցականները՝ Սահակ Հովհաննիսյանը, Սարգիս Օհանյանը, Լևոն Ներսիսյանը, որոնք միաժամանակ ինձ երաշխավորել էին կուսակցության շարքերն ընդունվելու:

Գյուղից չէի կտրվել: Ամեն տարի ուսանողական արձակուրդների ժամանակ գալիս էի գյուղ և կոլխոզում աշխատում, մեծ մասամբ հունձ էի անում, երկու ամսում գրեթե 100 աշխօր վաստակում, թողնում ծնողներիս, որ կարողանան ապրել: Նրանք արդեն ծեր էին, չէին կարողանում կոլխոզում սահմանված մինիմումը կատարել, իսկ մինիմումը չկատարողներին այն ժամանակ լուրջ նեղություն էին տալիս: Գյուղ գալու մեծ նպատակը նաև այն էր, որ ես չկտրվեցի հայրենակիցներից, մասսաներից ընդհանրապես:

Գյուղացիները շատ էին բողոքում 1937 թ. կատարվածից, երբ գյուղի աշխատասեր և գրագետ բոլոր մարդիկ այս կամ այն պատճառով բանտարկվել և ոչնչացվել էին: Հասկանալի պատճառներով ես ևս նրանց հարցերին պատասխան տալ չէի կա-

ղող, չատ հաճախ դժգոհում էին.

– Այտա, դու էլ չգիտե՞ս, թե ինչ է կատարվել:

Նրանցից ովքեր կենդանի մնացին, կուսակցության 20-րդ համագումարից հետո իմացան բոլոր պատճառներն ու մեղավորներին:

Ինձ համար իմ կամքին հակառակ էր, բայց պետք է մեկնեի Շամշադին, նշանակումն արդեն ստացել էի: Երևանից գնացք նստեցի, որ գնամ Թբիլիսի, իսկ այնտեղից՝ Բաքվի գնացքով մինչև Թովուզ կայարան, որտեղից ոտքով պետք է գնայի շրջկենտրոն՝ Բերդ գյուղը:

Գնացքով Երևանից ժամանելիս մեր գյուղի կայարանում՝ Շահալիում ինձ դիմավորելու էին եկել բարեկամներս, ծնողներս, ընկերներս, մի չարք տարիքով կուսակցականներ: Այն ժամանակ մեր կայարանում գնացքը, չգիտես ինչու, երկար էր կանգնում: Ընկերներս և հատկապես տարեց կոմունիստներից ամեն մեկն իր խորհուրդն էր տալիս: Բոլորն ասում էին, որ այնտեղ դեռ բանդիտիզմը չի վերջացել, հարկավոր է զգույշ լինել, իսկ նրանցից մեկն առաջարկեց վերցնել իր նագանը:

Չգիտեմ ինչու, այդ բոլոր խոսակցություններն անլուրջ ընդունեցի, չատ հանգիստ էի: Գնացքն արդեն պետք է շարժվեր, հրաժեշտ տվեցի բոլորին. մայրս՝ Սիրանույշը, ձեռքս բռնեց ու ասաց, որ Շամշադինում կոմունիստներին գնդակահարում են, կուսակցական տոմսս տամ, ծոցում պահի, մինչև վերադառնամ: Ես ծիծաղեցի, ուզում էի տղաներին ասել, մայրս ավելացրեց. «Բեաբուռ մի՛ անի»: Քոչար բիձեն խիստ հավանություն տվեց մայրիկիս ասածին և լրջորեն պահանջեց, որ կուսակցական տոմսը թողնեմ՝ անվտանգության համար:

Թբիլիսի հասանք ուշ երեկոյան: Այստեղ բարեկամ-ծանոթներ չատ ունեինք, թե՛ իմ, թե՛ հայրիկիս կողմից: Ես գնացի դերձակ Արամ Քոչինյանի տուն: Նա չատ լավ ընդունեց ինձ: Երբ պատմեցի, թե ուր եմ գնում, ինչ աշխատանքի, Արամ բիձան սկսեց պատմել, թե ինչքան ցարական գեներալների համար որքան զգեստներ է կարել: Նրա գլուխգործոցը եղել է Վարանցով-Դաշկովի համար զինվորական բաճկոն կարելը: Արամ բի-

ձան հետագայում ուզում էր անհատական թոշակ ստանալ քանի որ Կիևում եղած ժամանակ հեղափոխականների համար զգեստներ է կարել և հատկապես Պետրովսկու համար:

Ամբողջ երեկո խոսեց այդ և չատ ուրիշ դեպքերի մասին, առանձնապես մեր գյուղի մարդկանց, նրանց դժվարին ու չարքաշ աշխատանքի մասին:

Մյուս օրը հարազատներս ճանապարհեցին դեպի Բաքու: Շատ ծանր տպավորություն ստացա Վրաստանի սահմանն անցնելուց հետո: Ադրբեջանի բոլոր գյուղերը կեղտոտ, գետնափոր էին, կարծես ավերակների միջով էի անցնում: Ավելի մղձավանջային տպավորություն էին թողնում անապատում կառուցված գյուղերը. ջուր չկար, բուսականության մասին խոսք անգամ լինել չէր կարող: Ամբողջ գյուղում մի ծառ անգամ չէիր գտնի: Այն ժամանակվա համար լավ տպավորություն էր թողնում Ղազախ-Աղստաֆան: Խոսք չկա, որ ոռոգելի ջրով ապահովելուց հետո այդ անապատները դրախտավայր են դարձել՝ անծայրածիր խաղողի այգիներ, սուբտրոպիկ կուլտուրաների պլանտացիաներ:

* * *

Օրվա առաջին կեսին հասա Թովուզ կայարան, գնացքը դիմավորող գրեթե չկար: Երբ այն շարժվեց, մնացինք երկու հոգի՝ ես և անվանի գիտնական՝ Կարո Ղաֆաղարյանը: Հարց ու փորձով իմացանք, որ երկուսս էլ գնում ենք Շամշադին՝ Կարոն գիտական ուսումնասիրությունների, ես՝ մշտական աշխատանքի համար:

Երկուսս էլ ճանապարհը չգիտեինք. Կարոն ասաց, որ Շամշադինը լեռներում է, ուրեմն պետք է գնալ դեպի լեռները: Այնուամենայնիվ, սկսեցինք հարց ու փորձ անել, ադրբեջանցիները հայերեն չէին պատասխանում, իսկ հայերի չհանդիպեցինք: Վերջապես երկար որոնումներից հետո Թովուզ գյուղից մի հիանալի սայլապան հանդիպեց, որը եկել էր կայարանից չինանյութ տանելու: Նրա անունը Վասիլ էր: Նա ցույց տվեց՝ ուր գնալ, և ինքը սայլը քշեց դեպի բազան, որտեղից ապրանք պետք

էստանար, և միասին մեկնեինք:

Ճամպրուկները վերցրած եկանք նշված վայրը, որտեղ պետք է հանդիպեինք Վասիլին: Երկար սպասելուց հետո, վերջապես նա եկավ: Մեր ունեցած ծանրոցները դրեցինք սայլի վրա ու ճանապարհ ընկանք: Այդ ժամանակ էլ ճանաչեցի Ղաֆադարյանին՝ հիանալի մարդուն և գիտնականին:

1935 թվականի հունիսի վերջն էր. այս վայրերում երկնքից կարծես կրակ էր թափվում, պատսպարվելու տեղ չկար, հիմնականում այրված դաշտեր էին, իսկական անապատ: Մենք մի կերպ պաշտպանվում էինք գլխարկներով, երբեմն էլ հերթով սայլին նստում, հանգստանում էինք, նորից շարունակում ճանապարհը:

Դրությունն ավելի ծանր էր եզների համար: Սայլը ծանր էր, դժվար էին քաշում, խեղճ Վասիլը հուսադրում էր, որ շուտով կհասնենք Թավուշ գետին, ջուր կխմենք: Արևն արդեն մայր էր մտնում, երբ հասանք մի աղրբեջանական գյուղ, որտեղ ծառ ու կանաչ երևաց՝ իսկական օազիս: Վասիլը բացականչեց. «Ահա և մեր Թավուշ գետի հրաշքները, ծառ ու ծաղիկ, խաղող, ծիրան և այլ մրգատու ծառեր»:

Իրոք, հասանք մի փոքրիկ առվակի, որտեղ վեր էր խոյացել մի չքնաղ չինարի ծառ: Այդ ծառը կարծես հին դարերից էր մնացել: Մի քանի տասնյակ քառակուսի մետր տարածության վրա թանձր ստվերն էր սփռել:

Կիզիչ արևից հետո կարծես դրախտավայր ընկանք, ագահությամբ սկսեցինք ջուր խմել. սայլապանը զգուշացրեց՝ չխմել, միայն կարելի է լվացվել, բայց խմել չի կարելի: Պարզվեց, որ այս գյուղում բնակիչներն ամեն գործ առվում անում են: Մեր հանգստանալու վայրն էր այստեղ. Վասիլը եզներին արձակեց, կեր տվեց, իսկ մենք լվացվելուց հետո քնեցինք:

Արդեն մութն ընկնում էր, երբ նորից ճանապարհ ընկանք, հով էր, արևը մայր էր մտել, բացի դրանից՝ գնում էինք դեպի լեռները, փաստորեն, անապատից դուրս էինք եկել: Ուշ երեկո էր, երբ հեռվում լույսեր երևացին. ուրախացանք և հարցրեցինք Վասիլին՝ ինչ լույսեր են դրանք, «Դա մեր գյուղն է՝ Թավուշը»,-

պատասխանեց նա: Հին գյուղի պատմական անունը Թավուշ է, երևի Թուրքերը Թավուշն աղավաղել են ու Թովուզ դարձրել:

Ղաֆադարյանի հետ մենք պետք է գնայինք Բերդ, իսկ Թավուշ գյուղի տակից ճանապարհը բաժանվում էր: Վասիլը շատ խնդրեց, որ գնանք իրենց տանը գիշերենք, առավոտյան մեզ ձիով ճանապարհ կդնի: Չգիտեմ ինչու, չհամաձայնվեցինք:

Ի զարմանք մեզ՝ ամբողջ ճանապարհին Վասիլը ոչ մի անգամ հարցուփորձ չարեց, թե ո՞վ ենք մենք, ու՞ր ենք գնում, և ինչի՞ համար:

Այս հանգամանքն անհանգստացնում էր: Հետագայում շատ մտերիմ ընկերներ դարձանք Վասիլ Մաճկալյանի՝ առաջավոր բրիգադիրի, կոլտնտեսության լավ նախագահի, իսկական ռանչպարի հետ:

Բերդ հասանք կեսգիշերին. կարծես անբնակ մի քանդված վայր լիներ: Մի քանի ժամ առաջ այստեղ հորդ անձրև էր տեղացել, որից հետո Բերդի փողոցներով քայլելն ուղղակի անհնար էր: Շատ դժվարությամբ գտանք գործադիր կոմիտեի և կուսակցության շրջկոմի շենքը: Պահակը մեզ մի սենյակ հատկացրեց մինչև առավոտ:

* * *

Հունիսի 29-ին վաղ առավոտից Ղաֆադարյանը գնաց իր գործին՝ հնությունների, պատմական հուշարձանների ուսումնասիրման, իսկ ես ներկայացա կուսակցության շրջկոմի առաջին քարտուղար Արտաշես Գևորգյանին: Նա բավական գրագետ մարդ էր, բայց տպավորություն թողնելու համար աշխատում էր խոսել ռուսերեն և հետո թարգմանել հայերեն:

Ընկեր Գևորգյանը կարծես այնքան էլ ինձ սրտաբաց չընդունեց, բայց վերցրեց կենտրոնական կոմիտեի մամուլի սեկտորի վարիչի ուղեգիրը և ասաց. «Գնա աշխատի՛ր, խմբագրությունը տեղավորված է նույն շենքի ներքևի հարկում»: «Ո՞րտեղ պետք է ապրեմ» հարցս զայրացրեց նրան: «Դրանով էլ թող զբաղվի խմբագիրը»,- զայրացած տոնով բացականչեց խմբագիր Բերոյանի ազգանունը:

Ինձ հասկանալի դարձավ, որ նրանց երկուսի հարաբերությունները այնքան էլ նորմալ չեն: Երբ որոշ չափով շրջկոմի քարտուղարը հանգստացավ, ասաց, որ այստեղ՝ շրջկենտրոնում, պետական տուն գրեթե չկա, ծառայողների մեծ մասն ապրում է մասնավոր տներում, պետք է փնտրել հարմար տուն, հետո խոստացավ հանձնարարել կուսակցության շրջկոմի հրահանգիչ Գուրգեն Բաբասյանին՝ օգնել ինձ:

Առաջին հերթին իջա խմբագրություն՝ «Շամշադինի կոլխոզնիկ» թերթի խմբագիր Բերոյանի մոտ: Վերջինս շատ ուրախացավ, երբ ներկայացա: Թերթը կազմակերպվել էր տարեսկզբին և դեռ կարգին չենք չուներ. խմբագրությունը և տպարանը տեղավորված էին մի ոչ մեծ սենյակում: Խմբագիրը մենակ էր աշխատում, փորձված գրաշար չուներ, ընդունել էին մի կնոջ, այն էլ կաղ, որը նոր էր սովորում: Այդ պատճառով էլ Բերոյանը և՛ գրում էր, և՛ խմբագրում, սրբագրում, շատ հաճախ էլ, ինչպես ինքն էր ասում, «պատասխանատու հոդվածները ես եմ շարում, որպեսզի նույնիսկ գրաշարը չիմանա բովանդակությունը, թող կարդան, երբ լույս տեսնի թերթը»:

Առաջին ամիսներին տեղավորվեցի հանրակացարանում, մինչև պետական շենքում մի սենյակ ազատվեց առանց կոմունալ հարմարությունների: Մինչև շրջանից գնալը ապրեցի այդ սենյակում և շատ գոհ էի, որովհետև ուրիշները դրանից էլ էին զուրկ:

* * *

Խմբագիրը հանձնարարեց գնալ գյուղերը և նյութեր բերել թերթի համար: Սկսվեց ոտքով շրջագայությունս Շամշադինի գյուղերում: Առաջին շրջանում խմբագիրը շատ գոհ էր գրածս հոդվածների և թղթակցությունների համար:

Սակայն դա երկար չտևեց: Մի օր, թերթը կազմելու ժամանակ, ես առարկեցի Գուրգեն Բաբասյանի վերաբերյալ գրած զրպարտանքը տպագրելու դեմ: Վեճը ծայր աստիճան սրվեց: Բաբասյանին ես արդեն ճանաչում էի, նա ինձ օգնել էր բնակարանի հարցը լուծելու: Վերին աստիճանի համեստ և բարեկիրթ

մարդ էր, հետագայում դարձավ գործադիր կոմիտեի նախագահ, Ղրղիի կոլտնտեսության նախագահ և այլն:

Իմ վեճը խմբագրի հետ լուծելու համար դիմեցի շրջկոմի երկրորդ քարտուղար Թանգյանին: Նա իր մոտ հրավիրեց Բերոյանին, պահանջեց ցույց տալ հոդվածը, ասելով, որ մեր հրահանգիչն է, ինքը պետք է իմանա, եթե նամակ կամ բողոք կա, պետք է ստուգել և հաստատվելու դեպքում միայն կարելի է տպագրել: Այս խոսակցությունից հետո խմբագիր Բերոյանն ամպրոպի նման պայթեց Թանգյանի գլխին՝ նրան մեղադրելով ժողովրդի թշնամիներին պաշտպանելու մեջ: Թանգյանին ոչինչ չէր մնում, քան համաձայնվել տպագրել հոդվածը՝ հետագայում շրջկոմում քննարկելու պայմանով:

Այն, որ հոդվածը պետք է քննարկվի շրջկոմի բյուրոյի նիստում, խմբագրի տրամադրությունը գցեց և համաձայնվեց ոչ թե այդ օրը, այլ ստուգելուց հետո տպագրել: Խմբագրությունում դեռ մի քանի օր չաշխատած՝ իմ հարաբերությունները վատացան խմբագրի հետ, բայց շատ նորմալ հարաբերություն ստեղծվեց շրջկոմի ապարատի և հատկապես Սեդրակ Թանգյանի ու Գևորգյանի հետ: Այս դրությունը լավ էր զգում խմբագիրը և շատ զգուշությամբ էր վարվում ինձ հետ:

Շամշադին մեկնելիս Թբիլիսիում ինձ համար զգեստներ գնեցի, որ կարելի էր հագնել փողկապով: Զանցավ երկու ամիս, երբ խմբագիրս սկսեց տարածել, թե ես կուլակի տղա եմ, դա երևում է իմ հագուստից, ամեն օր փողկապ և արդուկված շորեր եմ կրում և այլ անհեթեթություններ:

Այս հարցում շատ խելամիտ վերաբերմունք ցույց տվեց շրջկոմի առաջին քարտուղար Գևորգյանը: Շրջանային կուսակցության ակտիվի նիստում մի շարք հարցեր քննարկելուց հետո նա անդրադարձավ մարդկանց, ակտիվի հագնվելու խնդրին և խիստ քննադատության ենթարկեց Բերոյանին: Ճիշտ է, ինձ համար մի կողմից լավ էր, բայց մյուս կողմից՝ վատ: Խմբագիրս ավելի վատ տրամադրվեց իմ և կուսակցական շրջկոմի իմ ընկերների նկատմամբ:

Այսպիսի տականքների մասին հարկ չկա երկար գրել, բայց

ստիպված եմ: Նախօրոք ասեմ, որ Խաչիկ Բերոյանին Ալավերդիում զրպարտության համար դատապարտեցին 10 տարով. նա մահացավ բանտում: Սարսափում եմ, երբ հիշում եմ, թե որքան անմեղ մարդկանց արյուն է պղտորել, վարկաբեկել, կուսակցությունից հեռացնել, իսկ շատերին էլ բանտարկել տվել: Ճիշտ է ասված. «Շունը չան մահով պետք է սատկի»:

* * *

Մի քանի ամսում ես ոտքով շրջեցի Շամշադինի բոլոր գյուղերը, ավելին՝ նրանց ամառանոցները՝ Մարդած, Խալբոլատ, Իծաքար և այլն: Շատ գյուղերում եղա մի քանի անգամ: Գեղեցիկ է Շամշադինի բնաշխարհը: Ով գեթ մեկ անգամ եղել է այնտեղ, չի կարող մոռանալ մեր այդ հին և նոր գեղեցիկ շրջանը:

Երևի հեթանոսական շրջանի անվանումներից մեկն է Դաշամ շաղին, այսինքն՝ արևապաշտներ: Այստեղ ոչ մի գյուղ մյուսի նման չէ, նույնիսկ մարդիկ:

Մի անգամ շրջկոմի հանձնարարությամբ մեկնեցի Ղողալի-Այգեձոր՝ մթերումների ընթացքը քննարկելու և կազմակերպելու: Հասարակական ժողովում զեկուցեցին կոլտնտեսության և գյուղխորհրդի նախագահները: Ի տարբերություն այն ժամանակ իմ տեսած մյուս շրջանների, այստեղ կենցաղը շատ բարձր էր, բոլոր գյուղերում կային հասարակական բաղնիքներ, շատ տեղերում կային համեմատաբար կահավորված խրճիթ-ընթերցարաններ ու ակումբներ:

Ակումբում հավաքվել էին գյուղի աշխատավորները: Գյուղին պարտադրվել էր ձվի մթերման պլան, այն դեպքում, երբ կոլտնտեսությունը հավ չէր պահում: Այսպես մի շարք մթերքների մթերման պլաններ էին պարտադրվում, բայց գյուղացիները չունեին և հրաժարվում էին:

Շատերից բուրդ էին պահանջում այն դեպքում, երբ այդ գյուղացին ոչխար չէր պահում: Գյուղխորհրդի նախագահը կարդում էր անունները և պահանջում՝ հանձնել մթերումը: Շփոթված գյուղացին աղաչում էր, թե ինքը ոչխար չունի, բրդի պլանը ինչպես կատարի: «Իմ գործը չէ, պլան կա, պետք է կա-

տարել, գնա գնի բեր հանձնի»: Նախագահ քեռու պատասխանը սա էր: «Քեռի» էին անվանում Միրզոյանին, որը երկար տարիներ գյուղի ղեկավարն էր՝ կոլտնտեսության նախագահը:

Ինձ պես անփորձ մարդու համար սարսափելի և վերին աստիճանի տհաճ էր նման երևույթը: Ժողովում ես խոսք չասացի, իրոք, չէի կարող. կանանց աղմուկը և աղերսանքը շատ ծանր էր նստել հոգուս վրա:

Ժողովը վերջացավ կեսգիշերին, բոլորը ցրվեցին, գնացին իրենց տները, գրասենյակում մնացի ես և պատի տակ, անկյունում նստած մի ծեր մարդ: Ես կարծեցի պահակն է, դիմեցի նրան՝ թույլատրել գիշերել գրասենյակում: Նա տեղից վեր կացավ՝ ասելով. «Ես քեզ եմ սպասում, պետք է գնանք մեր տուն»:

Բանից պարզվեց, որ Ղահրաման քեռին, երբ տեսնում է բոլորը գնացին, գրասենյակում մնացել եմ մենակ, վերադառնում է՝ ինձ տուն հրավիրելու: Ղահրամանն այդ գյուղի հին բոլշևիկներից էր, նա կուսակցության շարքերն էր ընդունվել Բաքվի նավթահանքերում աշխատելու ժամանակ, այժմ թոշակառու էր և ապրում էր գյուղում:

Գրեթե ամբողջ գիշեր Ղահրամանը պատմեց իր հեղափոխական գործունեության, Ստեփան Շահումյանի հետ ունեցած հանդիպումների մասին: Ամենից շատ վրդովված էր անցած ժողովից, հարկային քաղաքականության սխալ դրվածքից:

Այգեձորն իսկական այգիների ձոր է. գյուղի միջով հոսում է աղբյուրներից սկիզբ առնող պարզ ու վճիտ մի գետակ:

Անտառներով պատված սարերի ստորոտում փռված այս գյուղը նման է չվեդական գյուղերին, կարմիր կղմինդրով ծածկված բոլոր տանիքները յուրահատուկ տպավորություն են թողնում: Կարմիրը կանաչ այգիների մեջ արտակարգ հաճելի երանգ է տալիս:

Շրջկենտրոն վերադառնալուց հետո Բերոյանին զեկուցեցի ժողովի մասին: Առաջին հարցը, որ նա ուղղեց ինձ, հետևյալն էր. «Բերե՞լ ես ազգանուններն այն մարդկանց, որոնք հրաժարվում էին հարկ մուծելուց»,- զայրացած բացականչեց Բերոյանը և շարունակեց. «Քեզնից մամուլի աշխատող դուրս չի գա,

կարելի՞ է այդպիսի առիթը բաց թողնել, երբ մարդիկ հրաժարվում են հարկ տալուց»:

Հակառակ Բերոյանի կարծիքին՝ շրջկոմի առաջին քարտուղար Գևորգյանը համաձայնվեց, որ այդ գործում անճշտություններ շատ կան:

Ինչպես մի քանի ամիս էի աշխատում, շատ լավ ընկերական հարաբերությունների մեջ մտա կոմերիտական շրջկոմի քարտուղար Բալաչյանի, գործադիր կոմիտեի նախագահ, հին բոլշևիկ Հրաչիկ Վարդանյանի և շատ ուրիշների հետ: Նրանք ինձ օգնում էին գյուղեր գնալ ձիով, իսկ դա շատ կարևոր էր, հասցնում էի շատ ավելի հաճախ լինել գյուղերում:

* * *

Մի անգամ, վաղ առավոտյան, իմ սենյակ մտավ խմբագիր Բերոյանը և հայտնեց, որ օրերս Պառավաքար գյուղում ջրաշինարարական մեծ աշխատանք է սկսվելու, հարկավոր է մեկնել գյուղ և այդ մասին թերթի համար նյութեր պատրաստել: Պետք է ասել, որ Թովուզի ժողովի մասին գրած իմ ակնարկը շատ լավ ընդունելություն էր գտել ընթերցողների շրջանում, միաժամանակ շատ էր դուր եկել իրեն՝ խմբագրին, դրա համար էլ հանձնարարեց գրել այդպիսի հոդված: Գործերս խմբագրության տպարանում վերջացնելուց հետո ոտքով ճանապարհ ընկա դեպի Պառավաքար:

Քանի դեռ անցնում էի անտառով, չոգը չէի զգում, միանգամայն տանելի էր, իսկ անտառը վերջանալուց հետո սարսափելի և անտանելի չոգ էր: Երկար քայլելուց հետո հասա գետակին, լվացվեցի, հանգստացա, վեր կացա՝ շարունակելու ճանապարհս: Հանկարծ նկատեցի, որ դիմացի լանջին, գետակի ձախ ափին, կիզիչ արևի տակ սևազգեստ մի կին է նստած: Հիշեցնեմ, որ օգոստոս ամիսն էր, Պառավաքարը Շամշադինի ամենաչոգ գյուղն է:

Կինն այնպես էր նստել, կարծես ձուլվել էր քարի հետ և հեռվից արձանի տպավորություն էր թողնում: Ես չէի կարող անտարբեր անցնել, չմոտենալ, չհարցնել, թե ինչո՞ւ է այս կիզիչ

արևի տակ գլխիկոր նստել: Դանդաղ մոտեցա նրան, աչքերը փակ էր, ես կարծեցի մահացած է, մի պահ սարսափ ապրեցի, ոտքերիս ձայնից նա բացեց իր թախծոտ, սև խոշոր աչքերը: Ավելի մոտեցա, բարևեցի, բայց պատասխան չստացա: Նա շատ վշտալի աչքերով նայեց ինձ և գլխով բարևի նշան արեց:

Սկսեցի հարցուփորձ անել, թե ինչու է այս չոգին նստել այս քարի վրա:

-Երևի վա՞տ եք զգում, եկեք, ես ձեզ օգնեմ, գնացեք տուն:

Նա գլխի շարժումով բացասական պատասխան տվեց:

Իմ մեջ առանձնակի հետաքրքրություն առաջացավ: Նստեցի սևաչոր մայրիկի մոտ և փորձեցի զրուցել: Երկար ժամանակ չէր խոսում: Մեկ էլ խոր հոգոց հանեց և արտասվեց, կարծես որոշ չափով հանգստացավ ու սկսեց պատմել 1915 թվականին իր գլխին եկածը:

-Այդ տարին շատ ուժեղ երաշտ էր,- ասաց Սաթենիկ մայրիկը (որոշ նկատառումներով իսկական անունը չեմ գրում),- մենք ունեինք այս փոքր այգին. միջչարային տարածություններում ցանել էինք գարի: Մեծ վտանգ էր սպառնում այգուն, վախենում էինք չորանա, եթե ինչ-որ պատճառով գեթ մի անգամ չոռոգեինք: Ունեինք երեք փոքր անչափահաս երեխա, գիշերները չէինք քնում, անդադար մտածմունքների մեջ էինք: Գետը հոսում էր գյուղի միջով, բայց իրավունք չունեինք օգտվելու, այն պատկանում էր Թովուզի խան Հասանին, որի անունով էլ կոչվում էր Հասանսու: Ջրից օգտվելու համար խանը սահմանել էր անմարդկային կարգ, ավելին, ամռան ընթացքում նույնիսկ դույլերով իրավունք չունեինք գետից ջուր վերցնել: Հասանսուն և Ծաղկավան գետը դարձել էին իսկական դժբախտության աղբյուր: Ով ցանկանում էր որոշ ժամանակով գետից ոռոգման ջուր օգտագործել, նա պետք է իր ընտանիքի գեղեցկուհուն՝ կնոջը, հարսին կամ աղջկան ուղարկեր խանի մոտ՝ մեկ ամիս «աշխատելու» և կնություն անելու: Այս դաժան պահանջներից շատերը հրաժարվեցին և սովամահ եղան:

-Մի գիշեր,- շարունակեց նա,- ամուսնուս հետ երկար մտածելուց հետո որոշեցինք, որ ես պետք գնամ՝ հանուն մեր դեռա-

հաս երեխաների կյանքի: Ես ամուսնուս խոստացա, որ ամեն ինչ կանեմ խանին չհանդիպելու, չենթարկվելու համար, հակառակ պարագայում վերջ կտամ իմ կյանքին: Վաղ առավոտյան վեր կացա, մեկնեցի Թովուզ, իսկ ամուսինս մյուս օրն արդեն պետք է ոռոգեր այգին:

Մայրիկը մի քիչ լռեց, հետո ասաց.

– Ես նոր էի հասել խանի ապարանքները, ներկայացել ծառաներին, նրանք հրաման տվեցին, որ ամուսինս մեկ օր կարող է օգտագործել ջուրը: Ամուսինս, թույլտվություն ստանալով, այգին ջրում է, երեխաներին կանչում է, ցույց տալիս, որ բերք է լինելու, իրենք կապրեն, չեն մեռնի սովից: Վերջացնելուց հետո գալիս կանգնում է այս քարի վրա և դաշույնով ինքնասպան լինում: Սարսափելի լուրն ստանալուն պես վերադարձա, և հենց այս քարի տակ էլ թաղեցինք սիրելի ամուսնուս: Ահա քսան տարի է, ես ամեն օր գալիս եմ աղերսելու ամուսնուս գերեզմանի վրա: Ինձ համար այլևս արև չկա, ամեն ինչ սևացած է, նույնիսկ այս կիզիչ արևը չեմ զգում:

Այս պատմությունը ցնցեց ինձ, գյուղի միջոցառումների մասին չկարողացա գրել: Ինչ գրում էի, աչքիս առաջ սև արձանի նման նստած էր Սաթենիկը: Հոդված գրեցի, բայց միաժամանակ պատմեցի վերը նշվածը, խմբագրին դուր չեկավ, չնայած հոդվածի վերջում գրել էի, որ միայն խորհրդային կարգերի հաստատումից հետո վերացվեցին նման անարդարությունները:

Շատ տարիներ հետո, երբ Մինիստրների խորհրդի նախագահ դարձա, այդ զարհուրելի պատմությունը հիշելով, խոշոր ջրաշինարարական աշխատանք ծավալեցինք: Նախ ոռոգելի դարձան Պառավաքարի ենթաշրջանի երեք գյուղերի հողերը: Ծաղկավանում կառուցվեց փոքր հիդրոէլեկտրակայան, ջրամբար, որը հնարավորություն է տալիս ոռոգել համարյա բոլոր հողերը:

Այժմ Պառավաքարը մեր հանրապետության լավագույն գյուղերից է՝ խաղողի լավ այգիներով և հարուստ ոռոգելի տարածությամբ:

Շամշադինի շրջանը մեր հանրապետության ոռոգելի ջրով

ապահովված շրջաններից մեկն է: Կառուցվեցին և գործում են Բերդի, Այգեձորի և Ծաղկավանի ջրամբարները, ջրհան կայաններ են կառուցվել Ղրղիում, Զորաթանում, Մովսեսում, Այգեձորում, Վերին և Ներքին Կարմիր աղբյուր գյուղերում և այլն, և այլն:

Ինձ շատ է ուրախացնում այս բոլորը:

Իջևանից Շամշադին նոր ճանապարհ կառուցելու ժամանակ շինարարների հետ միասին եղա Պառավաքարում, տեսա այն քարը, որի վրա նստել էր Սաթենիկը: Տարեց մարդկանց հարցուփորձ արեցի, ասացին, որ այդ կինը մահացել է և նույնպես թաղված է այդ սև քարի տակ:

* * *

Շամշադինի կլիմայական պայմանները շատ մոտ են մերձարևադարձային կլիմայական պայմաններին: Այստեղ լավ են աճում մերձարևադարձային գրեթե բոլոր կուլտուրաները՝ նուռը, նուշը, ընկույզը, տխիլը, զկեռը, ծիրանը, դեղձը, խաղողը և այլն:

Այս շրջանի ժողովուրդը ևս իր կլիմայի նման շատ մեղմ ու հյուրասեր է, բարի: Եվ ահա այսպիսի ժողովուրդը 30-ական թվականներին ըմբոստացել էր, կռիվ հայտարարել կոլխոզային կարգերի դեմ: Գյուղացիները շրջանից դուրս քշեցին կուսակցական և խորհրդային մարմինների ղեկավարներին: Շրջանային կոմիտեի առաջին քարտուղար Լևոն Շահբազյանն այնքան էր չփոթվել, որ շրջանի ղեկավար աշխատողներից շատերին չէր հասցրել Իջևան ուղարկել: Շրջանում էին մնացել կոմերիտմիության շրջկոմի առաջին քարտուղար Արև Եսայանը և շատ ուրիշներ:

Ինչպես ասացի, Շամշադինի շրջանի գյուղերը շատ գեղեցիկ են և մեկը մյուսի նման չեն, իրար չեն կրկնում, իսկ գյուղերից երկուսը հեքիաթային գեղեցկություն ունեն իրենց դիրքով և կառույցներով: Դրանք Ղրղին և Նավարն են: Վերջիններս խոր ձորերի և կիրճերի վրա են կառուցված, այս գյուղերն ինչ-որ տեղ նմանվում են Գորիսի շրջանի Խնձորեսկին և Շինուհայրին, միայն

մի տարբերությամբ՝ Ղրղին և Նավարը ձորերում, թե ժայռերի վրա, կառուցապատված են երկհարկանի գեղեցիկ տներով, հեռվից ամրոց-ապարանքի են նմանվում, հիանալի տպավորություն է թողնում ամեն մի բնակարան՝ այգիներով ծածկված, որոշ տեղերում՝ գեղեցիկ անտառներով շրջապատված: Այս բոլորին եթե ավելացնենք, որ այն ժամանակ տների տանիքը ծածկում էին կարմիր կղմինդրով, կարմիր- կանաչի զուգակցումը հրաշալի տպավորություն էր թողնում:

Հակառակ դրան Գորիսի գյուղերը՝ նախկին Խնձորեսկն ու Շինուհայրը, տեղավորված էին քարայրներում և գետնափոր խցիկներում: Այս գյուղերն ավելի շուտ թանգարանի տպավորություն էին թողնում:

Շամշադինի գյուղերն ու հիանալի բնակիչներն այնպիսինն են, որ միշտ քաջաբար են կռվել և պաշտպանվել օտարերկրյա զավթիչներից:

Իրոք, երեսնական թվականներին կոլտնտեսություններին հողի պետական ակտի հանձնումն իսկական համաժողովրդական տոնակատարություն էր:

Ես բախտ եմ ունեցել ներկա լինել Թովուզ գյուղում հողի պետական ակտի հանձնման արարողությանը: Այն իսկական համաժողովրդական տոնակատարություն էր: Եվ դա հասկանալի էր, քանի որ նախկինում կալվածատերերի և խաների կողմից օգտագործվող հողերը տրվում էին համայնքներին, կոլտնտեսությանը՝ ընդմիշտ օգտագործելու նպատակով:

Ահա այդպիսի տոնակատարություն էր Թովուզ գյուղում ամռան մի գեղեցիկ օր: Այդ երեկոյի մասին «Շամշադինի կոլխոզնիկ» թերթում գրել եմ մի ակնարկ՝ «Ծիծաղկոտ լուսնի տակ» վերնագրով: Չեմ կարծում, թե պահպանված լինի, անցել է ավելի քան 50 տարի, բայց եթե լիներ, մեծ հաճույքով մեջբերում կանեի և, իմ կարծիքով, շատ հետաքրքիր կլիներ: Ժամանակին այդ հոդվածը, որը շատ մեծ ընդունելություն գտավ Շամշադինի շրջանում, գրված էր ծածկանունով և դրա հետևանքով միշտ հարցնում էին, թե ո՞վ է գրել:

Գյուղի համայնքի ժողովում կուսակցության շրջանային կոմիտեի առաջին քարտուղար Գևորգյանը շատ հակիրճ և պարզ զեկուցեց հողն առհավետ գյուղին և գյուղացիներին հանձնելու մասին, քարտեզի վրա ցույց տվեց հանրային և անհատական օգտագործման հողերի, հարևան գյուղերի հետ ունեցած սահմանները:

Ժողովականների ցնծությանը սահման չկար, շատերը խոսեցին, հավանություն տվեցին, շնորհակալություն հայտնեցին կուսակցությանը և կառավարությանը: Խոսողների թվում էր նաև իմ առաջին ծանոթը՝ Մաճկալյանը: Պաշտոնական բաժինը վերջանալուց հետո գյուղի կոլխոզի կալերում կանայք նախօրոք սեղան էին բացել, ընդ որում, ուտելիքն ու խմիչքն ամեն մեկը բերել էր իր հետ: Խմիչքը, որպես կանոն, հոնի օղի կամ կարմիր գինի էր:

Տղամարդիկ տեղավորվեցին սեղանի շուրջը, իսկ կանայք ու աղջիկները սպասարկողի դերում էին: Գյուղացիներից բացի, սեղանի պատվավոր տեղում նստեցին կուսշրջկոմի քարտուղար Գևորգյանը և գործադիր կոմիտեի նախագահ Հրաչյա Վարդանյանը ու շրջկենտրոնից ժամանած մի շարք այլ աշխատողներ: Մի քանի բաժակաճառից հետո (մեծ մասամբ շնորհակալության խոսքեր էին ասվում), մի տարեց մարդ պահանջեց սազ բերել՝ նվագելու և երգելու համար: Մի չիկահեր պատանի նախապես սպասում էր դրան: Նա սազը մեկնեց այդ կոլտնտեսականին:

Սկսվեց նախադեպ չունեցող մի հիանալի խնդություն. ամեն մեկը նվագում, երգում կամ արտասանում էր մի քառյակ և սազը փոխանցում հաջորդին: Սեղանի շուրջը նստած էին 300-ից ոչ պակաս մարդ, առանց բացառության՝ բոլորը նվագեցին կամ երգեցին: Իմ կարծիքով, դա անկրկնելի մի երեկո էր: Այդ հոյակապ երգեցողությունից հրաժարվեցին Գևորգյանը և Վարդանյանը: Այնուհետև սկսվեց պարի հանդեսը, շուրջպարի մեջ մտան նաև կանայք, պատանիներն ու աղջիկները:

Գյուղում զուռնա նվագողներ շատ կային, ինձ թվում էր, թե մեկը մյուսից լավ էր նվագում: Զուռնայի հնչյունների և ծիծաղկոտ լուսնի տակ արտասովոր տպավորություն էր թողնում շուրջպարը:

Կոլտնտեսության նախագահի պատվերով զուռնաչիները նվագեցին պարի եղանակ, շրջկոմի քարտուղարին հրավիրեցին պարել: Գևորգյանը շատ վիրավորվեց, ասելով, թե ինքը գյուղի համար դերասան չէ, լքեց երեկոն և գնաց: Պետք է խոստովանեմ. որ Գևորգյանի հասցեին բարի խոսքեր չասվեցին, չնայած դրան, ուրախությունը շարունակվեց մինչև ուշ գիշեր: Անմոռանալի երեկո էր:

* * *

Ինչ ցավալի է, որ մենք բոլորս, այդ թվում, առաջին հերթին գյուղացին, չէինք պատկերացնում, որ հողի պետական ակտի հանձնումով պայմաններ են ստեղծվում իրենց աղքատացման, փաստորեն, ճորտացման համար:

Ամենուրեք կազմակերպվեցին, ավելի ճիշտ, բռնի ուժով համայնացրին գյուղացիների ունեցած ցանքը, հողը հանձնեցին կոլտնտեսություններին, միաժամանակ ստեղծեցին պետական այնպիսի կառուցվածք, որ խեղճ գյուղացին ամբողջ տարին աշխատում էր, բայց ոչինչ չէր ստանում: Այն կարևոր պայմանը՝ անձնական շահագրգռվածությունը, որը փաստորեն, հանդիսանում էր զարգացման շարժիչ ուժը, լրիվ վերացվեց: Շարժիչ ուժ համարեցին, այսպես կոչված, սոցիալիստական մրցությունը, բոլորը դատարկախոսություն:

Կոլտնտեսություններ կազմակերպելուց հետո ստեղծվեց մի հզոր պետական կազմակերպություն՝ մեքենատրակտորային կայաններ՝ իրենց ուռճացած ապարատներով, քաղբաժիններով:

Այս կազմակերպությունը շատ շուտ համոզեց գյուղացուն, որ վաղ թե ուշ պետք է հողից կտրվի:

Այս միջոցառումը գյուղացուն լրիվ կտրեց հողից:

Սովխոզում աշխատող գյուղացին ստանում էր իր աշխատավարձը՝ անկախ աշխատանքի արտադրողականության բարձրացումից և վերջնական արդյունքից: Գյուղացին դարձավ բանվոր հողի վրա: Աշխատավարձի ցածր լինելու պատճառով բանվոր-գյուղացին ստիպված էր դիմել այլ միջոցների՝ ընտանիքը պահելու համար, բերքի մի ստվար մասը թալանվում էր: Այդ

պատճառով սովխոզների մեծ մասն աշխատում էր վնասով, նորից վարկին դիմելով՝ սովխոզները ևս սնանկացան, գյուղացու աշխատավարձը բարձրացնելու փոխարեն այն իջավ: Որքան էլ ցավալի լինի, պետք է ասել, որ մեր արդար, ազնիվ ու բարեխիղճ գյուղացիներին գողություն անել սովորեցրին:

Ստալինի մահից հետո Խրուշչովը շատ եռանդուն զբաղվեց գյուղի հարցերով, կատարվեցին մի շարք բարեփոխումներ, որոշ չափով ավելացավ գյուղատնտեսական մթերքների արտադրությունը: Վերացվեցին մեքենատրակտորային կայանները, կոլտնտեսություններին և սովխոզներին հնարավորություն տրվեց համեմատաբար մատչելի գներով ձեռք բերել անհրաժեշտ մեքենաներ ու գյուղգործիքներ:

Ցավով պետք է նշեմ, որ Խրուշչովը ևս չրջանցեց հիմնական հարցը՝ աշխատողի, գյուղացու անձնական շահագրգռվածության բարձրացումը: Ավելին, նա հորինեց մի նոր ահավոր տեսություն՝ վերացնել տնամերձները և գյուղացու ունեցած չնչին քանակությամբ անասունները՝ պատճառաբանելով, որ գյուղացին կարող է իր պահանջմունքները բավարարել կոլտնտեսությունների ու սովխոզների հաշվին: Ինչ միամտություն:

Կոլտնտեսություններն ու սովխոզներն աշխատում էին վնասով, չէին կարողանում իրենց պարտքերը փակել, գյուղացին իր ապրուստի միակ միջոցը գտնում է անձնական սեփականությունից ստացած եկամուտներից՝ հույսը կտրելով հանրային տնտեսությունից: Այս պայմաններում մեծ աշխատանք էր տարվում կուսակցական օրգանների կողմից, որպեսզի գյուղացին հրաժարվի իր եկամտի վերջին աղբյուրից:

Դժվար չէր պատկերացնել, թե ինչպիսի ծանր ապրումների մեջ էր տասնյակ միլիոնավոր գյուղացիությունը:

Այս կապակցությամբ փորձեր կատարվեցին, բայց պարզ է, հաջողություն չունեցան:

Կոլտնտեսային պատմության ընթացքում՝ 50-ական թվականներին, առաջին անգամ Խրուշչովի նախաձեռնությամբ որոշում ընդունվեց թույլատրել կոլտնտեսություններին և սովխոզներին ցանել և մշակել այն կուլտուրաները, որոնք հողակլի-

մայական պայմաններին համապատասխան են և ավելի շատ բերք են տալիս:

Պետք է ասեմ, որ ավելի հեռատես մարդիկ կոլտնտեսությունները կազմակերպելու ժամանակ, վարելահողի մեծ մասը թողել էին գյուղացուն և ինչքան էլ անհաջողություն ունեցավ հանրային տնտեսությունը, նա իր տնամերձի հաշվին փառահեղ ապրեց: Օրինակ՝ մեր հարևան Վրաստանում վարելահողերի մոտ 70%-ը տնամերձ հողեր էին: Խոսք անգամ լինել չէր կարող, որ այս պայմաններում ինչ էլ որ լիներ, գյուղացին չէր լքի իր բնակավայրը:

Ավելին, բանը հասավ նրան, որ պատերազմից հետո սկսեցին գյուղերում հանրային տնտեսությունների քայքայման պատճառ փնտրել և Ստալինի հատուկ որոշմամբ ով աշխատանքի մինիմումը չէր կատարել, կոլտնտեսությունում չէր աշխատել, աքսորվում էր Սիբիր:

Ցավոք, ես այդ աքսորին մասնակցել եմ: Կուսակցության Կենտկոմի որոշմամբ ինձ ամրացրել էին Մարտունու շրջանին: Ներկա եմ եղել Լիճքի կոլտնտեսության ժողովին: Ովքեր կոլտնտեսությունում չէին աշխատել, հրապարակվեցին նրանց ազգանունները: Ժողովում մեկ-մեկ քննարկվում էր, թե ով պետք է աքսորվեր գյուղից:

Հերթը հասավ Նշեի տղաներին, որոնք արհեստավորներ էին և աշխատում էին տարբեր վայրերում: Այս ծեր կինը մի ահավոր աղմուկ բարձրացրեց, պատմեց իր կյանքի մասին: Ծնվել էր Քյավառում, երիտասարդ տարիքում կորցրել էր ամուսնուն, տղաները մեծացել, արհեստ են սովորել: Երբ զգացել են, որ կոլտնտեսությունում հնարավոր չի ապրել, գնացել են ուրիշ վայրեր՝ փող վաստակելու: Իսկ այժմ նրա զավակներին Սիբիր են աքսորում:

Ժողովը որոշեց աքսորել այդ, իրոք, աշխատասեր մարդկանց, հույս ունենալով, որ մյուսները կաշխատեն և նորմալ կապրեն:

Ինչպես հայտնի է, նման աքսորը ևս չօգնեց, Լիճքի ժողովուրդը մնաց քաղցած, դարձան կատարյալ մուրացկաններ, որովհետև ճորտատիրական օրենքներն էին գործում, իսկ անձնական շահագրգռվածություն չկար, ամեն ինչ կատարվում էր վարչական միջոցներով:

Բանը հասավ նրան, որ գյուղացին՝ ազգի ու բնության իսկական պաշտպանը, որն ամենից շատ էր սիրում իր հողն ու ջուրը, ծառն ու քարը, իր նախնիների գերեզմանը, լքում էր իր ծննդավայրը, փաստորեն, դեմ կանգնելով, այսպես կոչված, սոցիալիզմին: Իսկ սոցիալիզմը կոչ էր անում մարդու իրավունքների պաշտպանում, առատություն և բնության կատարյալ վերափոխում դեպի լավը, մարդուն կատարյալ ստեղծագործ է դարձնում:

Մեզանում այդ բոլորը հակառակ ընթացք ստացավ. մարդը ստրկանում, դառնում է ընչազուրկ՝ մի կերպ քարշ տալով իր և զավակների գոյությունը՝ ստալինյան բռնապետական սոցիալիզմով:

Շատ հաճախ ենք խոսել սոցիալիզմի առավելությունների մասին. որո՞նք են դրանք: Ուրիշ երկրներ զարգանում և բարգավաճում են, իսկ մենք գնում ենք դեպի քայքայում: Ո՞ւմ էր պետք նման սոցիալիզմը: Եթե Մարքսը մի հրաչքով կենդանանար ու տեսներ այս սարսափելի վիճակը, անպայման սիրտը կպայթեր:

Մարքսին թողնենք հանգիստ և օրինակ վերցնենք կապիտալիստական երկրներից և երկիրը դուրս բերենք այս ահավոր ծանր վիճակից, այլապես երկիրը Հռոմեական կայսրության բախտին կարժանանա:

Կարծում եմ՝ ավելորդ չի լինի մի երկու խոսք ասել կոլտնտեսությունների կազմակերպման մասին:

Դեռ նոր էի ընդունվել կուսակցության շարքերը՝ որպես թեկնածու, բուռն թափով սկսվեց կոլտնտեսությունների կազմակերպումը: Դա 1931 թվականն էր: Կոլտնտեսությունների կազմակերպումը բողոքի լուրջ շարժում առաջ բերեց. ՆԷՊ-ից հետո գյուղացին չէր ցանկանում իր փոքր սեփականությունից հրաժարվել: Ավելին, հեռատես մարդիկ գտնում էին, որ ուժի և վարչարարական մեթոդներով ստեղծված տնտեսությունները

հեռանկար չունեն, դրանով վերջիվերջո գյուղացին կկտրվի հողից և կաղքատանա:

Կուսակցությունը, սակայն իր, այսպես կոչված, կոոպերատիվ պլանը, բռնի ուժով իրագործում էր: Կոլտնտեսություններ գրվեցին առաջին հերթին չքավորներն ու բատրակները, միջակ գյուղացիները երկար ժամանակ դիմադրեցին: Կուսակցությունը դիմեց ահավոր միջոցի՝ նույնիսկ միջակ գյուղացիներին կուլակաթափ արեց և աքսորեց գյուղերից՝ ահաբեկելով մյուսներին, որոնք ստիպված, ճարահատյալ կոլտնտեսությունների շարքերն էին մտնում:

Շատերը զենքը ձեռներին սկսեցին կռվել կառավարության դեմ՝ լիկվիդացնելով կազմակերպված կոլտնտեսությունները: Այդ շարժմանը մասնակցում էին նույնիսկ կուսակցականներ ու կոմերիտականները:

Դարալագյազում գրեթե բոլոր գյուղերում վերացվեցին կոլտնտեսությունները: Արփայում, Գորադիզում, Գնդեվազում, Խաչիկում, Մարտիրոսում և մյուս գյուղերում հատուկենտ կուսակցականներ ու կոմերիտականներ էին մնացել, իսկ մյուսները զենքը ձեռքներին կռվում էին խորհրդային իշխանության դեմ՝ պահանջելով կոլտնտեսություններ և սովխոզներ չկազմակերպել: Այդպիսի կայուն կոմունիստներից էին Հմայակը Արփայից, Ապետնակ Թադևոսյանը՝ Գորադիզից, Հովհաննես Միրզոյանը՝ Ալմալուից և շատ ու շատ ուրիշներ:

Բանը հասավ նրան, որ 1933 թվականին Հայաստանի Կուս. կենտկոմը Փաշալույի շրջանի կուսակցական կազմակերպությունները ցրեց: Այդ հակակոլտնտեսային շարժումը ճնշվեց բանակի կողմից, իսկ հազարավոր ազնիվ և քաջարի գյուղացիներ աքսորվեցին Սիբիր: Նրանցից շատերն այդպես էլ չվերադարձան:

Մեր հանրապետության գրեթե բոլոր շրջաններում նման դիմադրություններ տեղի ունեցան: Դարալագյազից հետո համեմատաբար ուժեղը Լոռու գյուղացիների ավելի կազմակերպված պայքարն էր: Այն ղեկավարում էին Բարանայի (այժմ Նոյեմբերյանի) շրջանի Կոթի գյուղի մի խումբ գյուղացիներ՝ Սա-

բատիկովները: Նրանց ղեկավարը գրագետ ու խելացի Վանիչկան էր, օգնականներն էին քաջարի Համբոն, Վարչոն և շատ ուրիշներ:

Այս խումբն այն ժամանակվա հնարավորությունների պայմաններում լավ զինված էր, շրջում էր Լոռվա գյուղերը և առանց արյուն թափելու՝ վերացնում կոլտնտեսությունները:

Ինչպես դարալագյազցի, այնպես էլ լոռեցի խռովարարների կյանքը, սակայն, երկար չտևեց, պետական օրգանները Վանիչկային Թբիլիսիի մոտ գնացքում խփեցին, իսկ մյուսներին բանտարկեցին:

Նույն վախճանին արժանացան Շամշադինի Բայի գյուղի խռովարարները: Շամշադինում գյուղացիները շրջանից դուրս քշեցին կուսակցության շրջկոմին և գործադիր կոմիտեին: Խռովարարներն այնպիսի արագությամբ էին գրավել շրջկենտրոնը, որ շրջկոմի քարտուղար Լևոն Շահբազյանը չէր հասցրել բոլորին տեղափոխել Իջևան: Շատ աշխատողների հետ միասին շրջկենտրոնում էր մնացել կոմերիտմիության շրջկոմի առաջին քարտուղար Արև Եսայանը, որին խռովարարները նստեցին ձի և ուղարկեցին Իջևան՝ ասելով թող կոմունիստները Շամշադին չգան:

Հայտնի է, որ կուսակցության կոոպերատիվ պլանի կատարումը շատ ծանր վիճակ ստեղծեց գյուղացիության համար՝ բատրակն ու չքավորը չհարստացան, իսկ միջակը սնանկացավ, ունևորներին աքսորեցին, շատերին ոչնչացրեցին:

Հիշում եմ մեր գյուղի կոլտնտեսության կազմակերպումը: 1931 թ. կոլտնտեսության մեջ գրվեցին միայն բատրակներն ու չքավորները, որոնք ոչինչ չունեին համայնացնելու: Նրանք նույնիսկ հացահատիկի և կարտոֆիլի սերմացու չունեին, պետությունից էին վարկ վերցնում և անգամ գյուղգործիքներ չունեին, որ աշխատեին:

Հայրս ունևոր չէր. ուներ մեկ ձի, մեկ կով և մեկ եզ: Եղբայրներից բաժանվելուց հետո այդքան բաժին էր հասել: Ես արդեն կուսակցության թեկնածու էի, բնականաբար, ինձ ստիպում էին մտնել կոլտնտեսության մեջ, բայց հայրս կտրականապես հրա-

ժարվում էր՝ պատճառաբանելով, որ եթե կոլտնտեսության մեջ մտնի, ղեկավարությունը կստիպի կանանց մասնակցել դաշտային աշխատանքներում, իսկ նա իր կնոջը դաշտ չէր ուղարկի: Կոլտնտեսության վարչության նախագահ Ալեքսան Վարդանյանը գրավոր պարտավորվեց, որ մորս դաշտային աշխատանքի չի ուղարկի, դրանից հետո մենք մտանք կոլտնտեսության մեջ:

Գյուղում մի քանի անգամ կուսակցական և կոմերիտական ժողովներ հրավիրվեցին՝ որոշելու կուլակներին, կազմելու ցուցակը՝ հասարակական ժողովներում քննարկելու համար: Ես այդ ժամանակ կոմերիտմիության բջջի քարտուղարն էի:

Կուսակցականների կողմից հասարակությանը ներկայացրած ցուցակը մերժվեց: Մեր գյուղից մարդ չաքսորվեց, այնուամենայնիվ մի քանի հոգու կուլակաթափ արեցին՝ բռնագրավելով ունեցվածքը, իսկ ունեցվածքը մի քանի կով էր, երկու լուծ եզ, ձի և մինչև 50 ոչխար:

Պետք է ասեմ, որ մեր գյուղացիները չատ վատ էին ապրում, կլիմայական պայմանները երկրագործության համար չատ անբարենպաստ էին, մեծ մասը բատրակության էին մեկնում Վրաստանի մոտակա շրջանները, հատկապես Բորչալու (այժմյան Մառնեուլի շրջան):

Շրջանի ղեկավարությունը չատ դժգոհ էր մեր հասարակությունից, քանի որ գյուղից մարդ չէին աքսորել, կուլակաթափ չէին արել:

Հետագայում տեղի ունեցավ մի սարսափելի դեպք. գյուղում հրդեհվեցին կոլտնտեսության խոտի դեզերը: Այդ առիթով սկսեցին բանտարկել գյուղի ամենալավ աշխատող և խելացի մարդկանց, որոնցից էին Քոչինյան Եգորը, որն ամբողջ կյանքում հովիվ էր եղել, Այվազյան Մակարը, գյուղի միակ նալբանդ Ղազարյան Հակոբը՝ աշխատավոր մի անշառ մարդ: Նրանց բոլորին «տրոյկայի» որոշմամբ գնդակահարեցին:

Նշեմ, որ դեզեր հրդեհողը «չհայտնաբերվեց», իսկ վերը նշված մարդիկ հետագայում արդարացվեցին:

***

Շամշադինի մասին խոսելիս անհրաժեշտ եմ համարում մի քանի խոսք ասել տնտեսության զարգացման վերաբերյալ: Հայտնի է, որ այս շրջանը հանրապետության ծխախոտագործության շրջաններից է և գրեթե հիմնական եկամուտը ստանում էր դրա մշակումից: Երկար ժամանակ շրջկոմի քարտուղար աշխատեց Միլիտոս Հարությունյանը, որը բավականին բարեխիղճ և աշխատասեր մարդ էր, բայց նրա ժամանակ Շամշադինը առաջխաղացում չապրեց, ինչպիսին կար, այնպես էլ պահպանվեց:

Հակառակ դրան՝ իր աշխատած ժամանակ լուրջ գործունեություն ծավալեց Աքշալույս Փոլադյանը: Փոլադյանը նախ սկսեց արագ թափով զարգացնել այգեգործությունը և խաղողագործությունը: Ամեն ինչ արվում էր, որ կրճատվեն ծխախոտի ցանքատարածությունները:

Միգուցե հարց առաջանա, եթե ծխախոտը եկամտաբեր է, ինչու կրճատել ցանքատարածությունները: Բանն այն է, որ Շամշադինում, նաև ուրիշ շրջաններում, ծխախոտի մշակումը հնարավոր չէր մեքենայացնել: Ավելին, կանայք թունավորվում էին նիկոտինից, որի հետևանքով Շամշադինում կանանց ծննդաբերությունը մեծ չափով պակասել էր հանրապետության մյուս շրջանների համեմատությամբ: Քանի դեռ ծխախոտի մշակման տեխնոլոգիան այդ մակարդակին էր, անհրաժեշտ էր առանց հապաղելու կրճատել ծխախոտի ցանքատարածությունները:

Շամշադինի ապագան այգեգործությունն էր, մանավանդ ոռոգելի տարածություններում: Մերձարևադարձային կլիմային համապատասխանող այս շրջանը պետք է հատուկ ուշադրության արժանանա և իր արժանի տեղը գրավի հանրապետությունում, ինչպես Իջևանի և Նոյեմբերյանի շրջանները:

* * *

1935 թվականի սեպտեմբերի առաջին կեսին էր, երբ ասացին, որ շրջկոմի առաջին քարտուղար Գևորգյանը ինձ կանչում է իր մոտ: Դա ինձ համար չատ անսպասելի էր: Երբ մտա քար-

տուղարի առանձնասենյակ, նա անմիջապես մեկնեց Հայաստանի կուսկենտկոմից ստացված գրությունն այն մասին, որ ես նշանակվել եմ «Ազիզբեկովի կոլխոզնիկ» թերթի ժամանակավոր խմբագիր: Ժամանակավոր բառը նրա համար էր, որ կուսակցության անդամ չէի: Կուսակցության շարքերի ընդունելության փակման պատճառով դեռ թեկնածու էի:

Գևորգյանին խնդրեցի, որ թույլատրի խոսել Կենտկոմի մամուլի սեկտորի աշխատողների հետ և խնդրել թողնել Շամշադինում: Նա հայտնեց, որ իմ փոխարեն արդեն մարդ են ուղարկել, որն արդեն Շամշադինում է, ուստի խոսելն ավելորդ է: Ես ուրիշ աննլիք չունեի, բացի մեկնելուց՝ նախ Երևան, ապա՝ Ազիզբեկով:

Պետք է խոստովանեմ, որ շրջկոմի երկրորդ քարտուղար Սեղրակ Թանգյանը առաջին քարտուղարին խիստ նախատել էր այն բանի համար, որ եթե ինձ ուղարկում են ուրիշ շրջան՝ որպես խմբագիր, ապա պետք է իմ փոխարեն ազատեին Բերոյանին: Ի զարմանս՝ Բերոյանը ևս դեմ էր իմ տեղափոխմանը: Առանձնապես պատրաստվելու բան չունեի, միայն մեկ անկողին և մայրիկիս գործած կարպետը, որի մեջ փաթաթել էի անկողինս:

Հաջորդ օրը հրաժեշտ տվեցի ընկերներիս՝ Բաբասյանին, Գրիգորյանին, Բալաչյանին, Միրզոյանին, Արամյանին և շատ ուրիշների: Ընկերներս հոգ տարան, որ ձիով գնամ թովուզ կայարան: Այստեղ ուղեբեռս հանձնեցի և նստեցի Թբիլիսի մեկնող գնացքը:

Ջմոռանամ ասել, որ անկողինս և մայրիկիս գործած կարպետը մինչև հիմա չեմ ստացել, անհայտ կորավ:

Երբ հայտնեցին, որ գնում եմ Ազիզբեկով, չփոթվեցի, որովհետև այդ անունը բոլորովին նոր էր, և չգիտեի, որ Փաչալու շրջանը վերանվանվել էր Ազիզբեկով:

Չէի իմանում ո՞ր եմ գնում, բայց միաժամանակ ամաչում էի հարցնել մինչև կուսկենտկոմ գնալը: Կենտրոնական կոմիտեում մամուլի սեկտորի վարիչ Ռաֆիկ Շիրոյանը շրջանի մասին խոսելով՝ ցույց տվեց քարտեզի վրա Ազիզբեկովը: Մարմնովս սարսուռ անցավ, որովհետև մինչ այդ լսել էի, որ մեր ընկերներից մեկին ուղարկել էին Փաչալու՝ որպես թերթի

խմբագիր, նա թողել փախել էր:

Ուրիշ ելք չունեի, պետք է գնայի: Կենտկոմում ասացին, որ Ազիզբեկով շրջկոմի առաջին քարտուղար են ուղարկել Շմավոն Առուշանյանին և մի քանի այլ պատասխանատու աշխատողներ:

Այս փոփոխությունները կատարվել էին Անդրերկրկոմի հայտնի որոշումից հետո: Անդրերկրկոմը քննարկել էր Հայաստանի լեռնային շրջանների մասին հարցը, այդ թվում Ազիզբեկովի շրջանում կադրերի ամրապնդման խնդիրը:

Ազիզբեկով հասնելու համար անհրաժեշտ էր գնացքով գնալ Նորաշեն, այնտեղից էլ պատահական փոխադրամիջոցով, լավագույն դեպքում՝ սայլով: Երբ գնացքով հասա Նորաշեն, սկսեցի հետաքրքրվել իմ ծանրոցի հարցով: Որտեղ դիմեցի, ասացին չի ստացվել, ստիպված առանց իրերս ստանալու՝ սկսեցի փնտրել մարդկանց, որոնք գնում էին Ազիզբեկով:

Ադրբեջաներեն չգիտեի, հայերեն ում դիմում էի պատասխան չէի ստանում, եթե նույնիսկ պատասխանում էին, չէի հասկանում: Երկար որոնումներից հետո հանդիպեցի մի շատ գեղեցիկ և հետաքրքիր մարդու. այն հարցին, թե ո՞ր է գնում, նա պատասխանեց հարցով. «Դու մեր նոր խմբագիրը չե՞ս»:

–Այո՛, – պատասխանեցի,– բայց որտեղի՞ց գիտես:

–Ես վաղուց եմ լսել, որ պետք է գաք, բայց մինչև հիմա չկայիք: Ձեզ որ տեսա, անմիջապես կռահեցի, որ այս անծանոթ մարդը երևի մեր շրջան է գալիս: Տե՛ս, սայլն առջևից գնում է, ես դիտավորյալ հետ ընկա՝ պարզելու ձեր ով լինելը, – ասաց զրուցակիցս:

Այդ գեղեցիկ ու բարի մարդը Ազիզբեկովի շրջանի գործադիր կոմիտեի բաժնի վարիչ Արտավազդ Մարգարյանն էր, որը հետագայում դարձավ գործադիր կոմիտեի նախագահ: Պատերազմի ժամանակ կամավոր մեկնեց բանակ և զոհվեց...

Ճանապարհը շատ երկար էր (մոտ 120 կիլոմետր), իսկ մենք զրուցելով գնում էինք ոտքով: Սայլապանը սկզբում շատ էր շտապում, ես Արտոյին հարցրի, թե ինչո՞ւ է այդքան եզներին ծեծում, նա ասաց, որ մինչև մեր հանրապետության սահմանը

ուզում է հասնել ցերեկով, որովհետև «այստեղ շատ հաճախ հարձակվում են ավազակները, թալանում, բայց դո՛ւ մի՛ վախեցիր, ես էլ, սայլապանն էլ զինված ենք», և ցույց տվեց իր նագանը: Վերջապես լույսով հասանք Արփա (Արենի) և այստեղ գիշերեցինք:

-Ա՛յ մարդ ոտքդ խերով է. այստեղ առանց բացառության բոլորի վրա հարձակվում են, իսկ այսօր ոչինչ չպատահեց,- ասաց Արտոն:

Արենում մեզ բոլորիս իր տուն հրավիրեց Մարգարյանի ընկեր Հմայակը: Արտավազդը նախօրոք պատմել էր Համոյի մասին. նա 1931 թվին միակ կոմունիստն էր եղել, որ մնացել էր գյուղում ու բանդիտների հետ չէր գնացել, մի խոսքով, շատ վստահելի մարդ էր:

Համոն երեկոյան մեզ լավ հյուրասիրեց ու պատմեց իրենց գյուղի մասին, թե ինչպես գյուղացիների հետ միասին իրենք՝ կոմունիստները, հրացան վերցրած կռվում էին սովետական իշխանության դեմ: Կուսակցության բջիջը Կենտկոմի որոշմամբ ցրվել էր, միակ կոմունիստը մնացել էր ինքը՝ Համոն: Քաջ տղա էր Համոն, մասնակցեց Հայրենական պատերազմին, բազմաթիվ շքանշաններով վերադարձավ: Նրան ընտրեցին Արենի գյուղի կոլտնտեսության նախագահ, լավ աշխատանքի համար արժանացավ հերոսի կոչման: Հետագայում, որտեղ տնտեսության դրությունը վատանում էր, շրջանի ղեկավարությունը նրան էր ուղարկում գործերը կարգավորելու:

Արենիից Արտավազդը փոխադրամիջոց գտավ և մինչև Ազիզբեկով գնացինք ձիերով: Ճանապարհին՝ Մալիչկա գյուղում, մեզ դիմավորեց գյուղում և շրջանում հայտնի հյուրասեր Կոնոսը: Նա երեխա չուներ, տանն ինքն ու կինն էին: Նա նստում էր ճանապարհին և եկող-գնացողին անպայման հյուրասիրում: Մենք ևս ընկանք նրա «թակարդը»:

Այդ տարի Դարալագյազում խիստ երաշտ էր եղել, մարդիկ ուտելիք չունեին, մի խոսքով, կատարյալ սով էր: Դա, կարծես, չէր վերաբերում Կոնոսին, նրա տանն ամեն ինչ կար հյուրասիրելու համար: Չնայած Համոն վատ չէր հյուրասիրել, բայց քաղ-

ցած էինք, արևն արդեն մայր էր մտնում: Կոնոսը չափավոր ուտելիք դրեց սեղանին, բայց մեզ հրավիրեց մառան և գինիները փորձելով՝ հարցնում էր, «Ո՞ր գինին պետք է խմենք»:

Այնքան գինի փորձեցինք, որ արդեն գինովցել էինք: Ընթրիքից հետո ճանապարհը շարունակելու մասին խոսք անգամ չէր կարող լինել: Քուրսու շուրջը անկողին գցեցին, և մենք քնեցինք: Արթնացանք մյուս օր մայրամուտին:

Արտավազդը շատ էր անհանգստանում, որովհետև նրան շրջանում սպասում էին, իսկ ես դեռ չէի ներկայացել և իմ մասին մտածող չկար: Ուշ գիշերին հասանք Փաչալու՝ Ազիզբեկովի շրջկենտրոն: Դա սարսափելի հետամնաց գյուղ էր, բոլոր տները գետնափոր էին: Ես գնացի գիշերելու Արտոյի մոտ, նա ապրում էր մենակ՝ մի փոքրիկ հողածածկ սենյակում: Կարգին անկողին չուներ. գնաց հարևանից մի վերմակ բերեց և մի կերպ տեղավորվեցինք փայտե մահճակալին: Արտոյի ծնողներն ապրում էին Մարտիրոս գյուղում, շատ աղքատ վիճակում: Ծնողների միակ ուրախությունն ու հարստությունը Արտոն էր, որի համար ամեն ինչ արել էին կրթության տալու: Դա նրանց հաջողվել էր և ամեն ինչից գոհ էին:

* * *

Մյուս օրը ներկայացա կուսակցության շրջկոմի առաջին քարտուղար Շմավոն Առուչանյանին: Ուշադիր կարդաց կենտրոնական կոմիտեի որոշումն ինձ աշխատանքի նշանակելու վերաբերյալ և ասաց.

-Այս էլ քանիերորդն են ուղարկում, բայց բան դուրս չի գալիս: Գնա՛, ծանոթացիր: Ներքևի հարկում տեղավորված է խմբագրությունը:

Ամբողջ շրջանում միայն երկու փոքրիկ շենք էր կառուցված. մեկում տեղավորվել էին շրջանի բոլոր հիմնարկությունների աշխատողները, մյուսում ապրում էին շրջկոմի քարտուղարները և գործադիր կոմիտեի նախագահը:

Խմբագրություն կոչվածը մի սենյակ էր, որտեղ նստում էր Թերթի քարտուղար Թևոս Խաչատրյանը: Իմ առաջին հարցին,

Թե որտե՞ղ է տպարանը, Թևոսը պատասխանեց. «Տպարան չունենք, թերթը տպագրում ենք Քեչիքյանդի (այժմ Եղեգնաձոր) տպարանում, նյութերը պատրաստում, տանում ենք տպել տալիս և տիրաժը բերում, շրջանում տարածում»:

Մի անգամ բոլոր նյութերը պատրաստեցինք և ես վերցրի, տարա Քեչիքյանդ: Թերթի վերջին էջում տպագրել տվեցի երկտող. «Այս տպարանում թերթը տպագրվում է վերջին անգամ»: Բերեցի շրջան: Տիրաժը լրիվ բաժանվել էր. անհամբեր սպասում էի, որ Առուշանյանը կկանչի և շրջանից ինձ կվոնդի. նա դա կարող էր անել: Առուշանյանն երկար սպասել չտվեց, հեռախոս չկար, մարդ եկավ և կանչեց:

Գրասենյակ մտնելուց անմիջապես տեղից վեր կացավ թերթը ձեռքին մոտեցավ և պահանջեց, որ ասեմ, թե որտեղ պետք է այն տպագրվի: Շատ հանգիստ, առանց վրդովելու ասացի, որ պետք է տպագրվի «Ազիզբեկովի կոլխոզնիկ» թերթի տպարանում: «Մենք չունենք, պետք է կազմակերպել», պատասխանեցի ես:

Մինչև հանդիպելը շատ էի վախենում, բայց երբ հանդիպեցի երկրորդ քարտուղար Վանյա Ղազարյանին, ինձ հանգստացրեց և խորհուրդ տվեց. «Պահանջի՛ր տպարանի կազմակերպումը, ես քեզ կօգնեմ»:

Բավական երկար զայրանալուց հետո Առուշանյանը շատ հանգիստ հարցրեց, թե ինչպես եմ ուզում կազմակերպել տպարանը: Մնդրեցի ինձ ուղարկել Երևան՝ հատուկ երաշխավորությամբ: Կուսակցական շրջկոմը գրություն գրեց Կենտկոմի մամուլի սեկտորի վարիչ Խորունուն: Իսկ Առուշանյանը նամակ գրեց իր բարեկամ Մեսրոպին, որն աշխատում էր տպարանում որպես բաժանմունքի վարիչ:

Այս գրություններով զինված, չարչարանքով ճանապարհ ընկա: Գրեթե բոլոր տեղերից մերժում ստացա, բոլորը միաբերան ասում էին՝ « Տառ չունենք», «Ձուլել հնարավոր չէ», «Կարելի է մեկ տարուց հետո անդրադառնալ»:

* * *

Ընկերներս ասացին, որ Ժողկոմխորհրդի նախագահ Տեր-Գաբրիելյանն առանց հերթի ընդունում է շրջանի աշխատողներին: Որոշեցի դիմել նրան: Նախագահի քարտուղարին հայտնեցի իմ խնդրանքը: Նա ասաց, որ ես կարող եմ ինքս զեկուցել: Երևի իմ շատ վտիտ լինելը դեռահաս պատանու տպավորություն թողեց նախագահի վրա:

-Դո՞ւք եք խմբագիրը,- հարցրեց նա:

- Այո,- ասացի:

Հարցրեց, թե քանի տարեկան եմ,

- Քսանմեկ,- պատասխանեցի ես:

Մի փոքր հապաղելուց հետո պահանջեց միջնորդության փաստաթղթերը, նրանցից մեկի վրա մակագրեց տպարանի դիրեկտորին. «Առանց հերթի կոմպլեկտավորել Ազիզբեկովի շրջանային թերթի տպարանը, որպես լեռնային շրջան»: Ուրախությանս սահման չկար, քիչ էր մնում համբուրեի Տեր-Գաբրիելյանին, բայց ամաչելուց միայն չփոթվել էի, չէի հասկանում ինչ անել:

Տեր-Գաբրիելյանը տեսավ չփոթված, կանգնած եմ, ասաց. «Գնա՛, եթե դժվարանաս, կգա՛ս ինձ մոտ»: Տեր-Գաբրիելյանի հետ մեր հանդիպումը առաջինն ու վերջինն էր: Այդ թախծոտ աչքերով մարդուն այլևս չտեսա:

Շատ դժվարությամբ համաձայնեցին, որ տպարանի սարքավորումներ տան, բայց ասացին, որ իրենք հնարավորություն չունեն տառերը ձուլելու, դրանք կարող է ձուլել Թբիլիսիում «Զարյա Վոստոկա» թերթի տպարանը:

* * *

Հանրապետության տպարանի ղեկավարության գրությամբ մեկնեցի Թբիլիսի: «Զարյա Վոստոկա» թերթի տպարանի ղեկավարությունն ուղարկեց Անդրերկրկոմի մամուլի բաժին: Ես մի քիչ գիտեի վրացերեն, ինձ շատ օգնեց երկրկոմի չենք մտնելուն: Մամուլի բաժնում ես հանդիպեցի մի գեղեցիկ տղամարդու, Հովհաննես Թումանյանի կրտսեր որդին էր՝ Համիկը:

Ինչպես ասում են, բախտս բերեց: Համիկը ուշադրությամբ լսեց իմ խնդրանքը և ասաց, որ երեք օրից հետո գնամ տպարան:

Թբիլիսիում բարեկամներ ու ընկերներ շատ ունեի: Երեք օր նրանց հետ անցկացնելուց հետո գնացի տպարան, ասացին, որ ամեն ինչ պատրաստ է, միայն չեկայից մարդ պետք է գա՝ հանձնելու համար: Երկար սպասելուց հետո եկավ մի միջահասակ ռուս ընկեր: Երևում էր տպարանում նրան լավ էին ճանաչում, գրեթե բոլորն էլ նրա հետ մտերմաբար էին խոսում:

Սկսվեց տառերի հանձնման և ձևակերպման աշխատանքը: Տառերը մեկ–մեկ հաշվելուց հետո յուրաքանչյուր տառի տեսակի համար կազմվում էր հատուկ ակտ, որի տակ ստորագրում էինք երեքով՝ տպարանի աշխատակիցը, ես և հատուկ աշխատողը (այդպես էին կոչում չեկայի աշխատողին):

Տառերը ստանալուց հետո գնացի իմ բարեկամներից մեկի՝ Արամ բիձայի տուն, տառերը տեղավորեցի այն սենյակում, որտեղ պետք է քնեի: Հիշեցնեմ, որ այնպիսի վախ էին ներշնչել ինձ, որ, եթե մի տառ պակասի, ինձ կբանտարկեն: Տառերը գնացքով բերեցի Երևան, հանձնեցի մեր տպարանին: Նույն աբարողությունը տեղի ունեցավ մեր տպարանում, տառերը հաշվեցին, նորից երեք ստորագրությամբ հանձնեցի մեր տպարանի ցեխի վարիչ Մեսրոպին: Տպարանի մյուս սարքավորումներն արդեն պատրաստ էին, անհրաժեշտ էր գնացքով ուղարկել Նորաշեն, որտեղից սայլով պետք է տանեինք Ազիզբեկով:

* * *

Մի քանի օրից հետո տառերը կրկին ընդունեցի հատուկ ստորագրությամբ և գնացքով ճանապարհ ընկա դեպի Նորաշեն: Երևանից ես հեռագիր էի տվել չրջկոմի քարտուղար Առուշանյանին՝ փոխադրական միջոց ուղարկելու խնդրանքով: Նորաշենում տառերն իջեցրեցի և սպասում էի դիմավորողին, բայց ոչ ոք չկար: Տառերը վերցրեցի, դրանք բավական ծանր էին, ավելի քան 50 կիլոգրամ: Գնացի Նորաշենի կուսչրջկոմ՝ զանգահարելու Ազիզբեկով: Շատ դժվարությամբ կապվեցի Առուշանյանի հետ, բայց բոլոր չարչարանքներս ապարդյուն անցան: Նա ասաց. «Ոչ մի փոխադրամիջոց չկա: Ինչպես ուզում ես, ե՛կ, պատասխանատուն դո՛ւ ես»:

Ուրիշ ելք չկար, պետք է տառերը վերցնեի և ոտքով ճանապարհ ընկնեի: Երկար քայլել չէի կարողանում: Ուշ երեկոյան մի կերպ հասա Արփա գյուղը, նորից գնացի Համոյի մոտ հյուր: Նա շատ զարմացավ, որ այդքան տառերով, առանց փոխադրականի համարձակվել եմ գալ Նորաշենից: Վաղ առավոտյան, զգացի, որ ջերմություն ունեմ, բայց այդ մասին Համոյին ոչինչ չասացի: Առավոտյան Համոն հոգ էր տարել և բերեց մի ձի. «Կգնա՛ս Ազիզբեկով,- ասաց նա,- ձին կթողնես Թևոսի մոտ, մարդ կուղարկեմ, ձին կբերեն»:

Ի տարբերություն Շամշադինի չրջանի, Դարալագյազի լեռները մերկ են, մանավանդ ամռանը, ուղղակի խանձված լեռներ են, ճանապարհներ չկան, մեծ մասամբ արահետներ են, տեղ-տեղ կանաչ տեղեր կան, դա կամ աղբյուրի մոտակայքում է, կամ Արփի գետի հովիտն է, որտեղ աճել են փարթամ այգիներ ու բուսականություն, մի խոսքով, Վայոց ձորը հեքիաթային տպավորություն թողեց ինձ վրա:

1935 թվականի հոկտեմբերին հիմնադրեցինք տպարանը, որպես գրաչար՝ ընդունեցինք տեղի տղաներին, որոնք շատ արագ սովորեցին, տպագրիչ դարձավ Մամիկոն Աղաջանյանը, որը հետո գնաց սովորելու և երկար ժամանակ չրջանում աշխատեց որպես ֆինանսական բաժնի վարիչ: Գրաչար Խաչիկը մասնակցեց Հայրենական պատերազմին և չվերադարձավ:

Թերթն արդեն հրատարակում էինք սեփական տպարանում՝ հնարավորություն ստանալով ավելի հաճախակի լինել տեղերում՝ կոլխոզներում, գյուղերում:

* * *

Կոլտնտեսությունները, որպես կանոն, տնտեսապես շատ թույլ էին: Շատ տնտեսություններ նույնիսկ սայլեր չունեին, փոխադրական միջոցները ձիերն էին, ջորիները և էշերը: Գրեթե բոլոր գյուղերում հանրային անասունների համար գոմեր չկային, անասունները պահվում էին իրենց նախկին տերերի մասնավոր

գոմերում, գյուղացիներից շատերը չէին զգում, որ անասունները հանրայնացվել են, ցերեկը հովիվը դաշտ էր տանում, իսկ երեկոյան այծերն ու ոչխարները վերադառնում էին իրենց նախկին տերերի մոտ:

Պետք է ասեմ, որ այն ժամանակ շրջանում խոշոր եղջերավոր անասունները շատ քիչ էին, հիմնականում ոչխար ու այծ էր: Դա հասկանալի է. այդ լեռնային շրջանում անասնակերի սակավ պայմաններում ավելի հեշտ էր պահել մանր եղջերավորներ: Տեղական ցեղի ոչխարը և այծը շատ դիմացկուն էին, քիչ պահանջկոտ, ավելին, ոչխարից և այծից ավելի մեծ քանակությամբ էին կաթ ստանում, որից էլ պատրաստում էին Դարալագյուղի հայտնի պանիրը: Գյուղացիների կողմից շատ ցավոտ ընդունվեց կոլխոզներում հանրային գոմերի կառուցումը և ոչխարներին այլևս իրենց հին տերերի մոտ չվերադարձրին:

Հանրապետության բոլոր շրջաններում կոլխոզների կազմակերպումը մեծ դժվարությամբ իրականացվեց: Դա համեմատաբար առավել ցավոտ և դժվարությամբ անցավ Դարալագյազի երկու շրջաններում: Կոմունիստներից շատերը հրաժարվեցին կուսակցությունից՝ կոլխոզ մտնելու կապակցությամբ, իսկ մյուսներին հեռացրեց Կենտկոմը:

Այդ պատճառով գյուղերի մեծ մասում կուսակցական կազմակերպություն չկար, շատ տեղերում մնացել էին մեկ–երկու կոմունիստ: Այդպիսի գյուղերից էին Գնդեվազը, Գորադիզը, Ղուշչին և մի շարք աղրբեջանական գյուղեր: Գնդեվազում կոմունիստներ կային՝ գյուղի ղեկավարներ Եղոյանները, Վարազ Հարությունյանը, Գորադիզում՝ Թադևոսյանները և Գերասիմ Բաղալյանը, Ղուշչիում՝ Հուստիկ Մկրտչյանը և այլն: Այս մարդիկ իրենց ուսերի վրա էին տանում կոլխոզի աշխատանքի ամբողջ ծանրությունը:

Իրանից սահմանն անցել էին մի խումբ թուրք բանդիտներ, միացել շրջանում գործող բանդիտական փոքր ջոկատին և լուրջ վնասներ էին պատճառում գյուղերին, ահաբեկում կոլտնտեսությունների կուսակցական կազմակերպությունների ղեկավարներին: Օրը ցերեկով սպանեցին միլիցիայի բաժանմունքի

պետ Միհրանին, մի շատ նվիրված մարդու, որն իր համեստությամբ վայելում էր շրջանի աշխատավորության համակրանքը: Շրջանի ակտիվիստներից շատերին զենք էին տվել՝ հարկ եղած ժամանակ կռվելու բանդիտների դեմ:

Բոլոր ակտիվիստներին հնարավոր չէ թվարկել, բայց նրանցից ամենաաչքի ընկնողներին ցանկանում եմ նշել: Բացի շրջկենտրոնի ակտիվիստներից գյուղերից ակտիվ մասնակցում էին. Մարտիրոսից՝ Հակոբ Դիստիարյանը, Ավագ Ավետյանը, Մարգարյանը, Արտավազդ Խանամիրյանը և ուրիշներ, Ալմալուից՝ Հովակիմ Միրզոյանը, Գորադիզից՝ Թադևոսյանները, Գերասիմ Բաղալյանը, Աղասի Միքայելյանը, Բարգրանուց՝ Ալավերդյանը, Ախաչից՝ Վարդանյան եղբայրները, Հովհաննիսյան եղբայրները և շատ ուրիշներ:

Ահա այն կորիզը, որի վրա հենվելով՝ գյուղում կազմակերպվում էր տնտեսական ու քաղաքական աշխատանքը:

Հայտնի է, որ 1935–1938 թվականներին, Ստալինի վարած քաղաքականության հետևանքով շատ անմեղ մարդիկ տուժեցին:

Ազիզբեկովում անմեղ տեղը բանտարկվեցին շատ կոմունիստներ: Անստորագիր նամակները սարսափելի չափերի էին հասնել, շատ դեպքում առանց ստուգելու, խորանալու՝ մարդկանց բանտարկում էին: Այդպիսի անստորագիր զրպարտանքի զոհ գնաց շրջկոմի հրահանգիչ Մուկուչ Վարդանյանն ու իր ավագ եղբայրը՝ հին կոմունիստ, հիանալի աշխատող:

Աշխատանքի փոխարեն շրջկոմում նստածներից շատերն զբաղված էին անստորագիր զրպարտանքի ստուգումով: Այնպես էր ստացվել, որ եղբայրը չէր վստահում եղբորը: Ով ապրել է այդ օրերը, միայն նա կարող է հասկանալ այն սարսափը, որ կատարվեց 1937 թվին:

Պետք է խոստովանեմ, որ եթե չլիներ շրջանային կոմիտեի երկրորդ քարտուղար Վանյա Ղազարյանը, Ազիզբեկովում շատ ավելին կլիներ տուժողների թիվը: Դրանք իրականում կասեցնում էր երկրորդ քարտուղարը, այնուամենայնիվ տուժածների թիվն ուրիշ շրջաններից պակաս չէր:

Բանն այն է, որ այստեղ նոր էր վերջացել բանդիտական չարժումը, գյուղացիները հիմնականում վերադարձել էին գյուղ, լայն հնարավորություն էին ստացել անստորագիր նամակներ գրել գյուղի ղեկավարների, այն կոմունիստների դեմ, որոնք կռվել էին այդ անվստահելի մարդկանց դեմ: Իսկ չատ հաճախ առանց այդ անստորագիր նամակները հիմնովին ստուգելու՝ պատժվում էին ակտիվիստները: Նամակների այն մասը, որ ընկնում էր Ղազարյանի ձեռքը, ստուգվում էր մինչև վերջ և արդարացի վճիռներ կայացվում: Բայց քանի որ Ղազարյանին այդպիսի նամակները չատ քիչ էր հասնում, հետևաբար տուժողների թիվը մեծ չափերի էր հասնում:

Առուչանյանն իր սարսափելի ձախությամբ հանդերձ՝ աչխատում էր գիչեր-ցերեկ, անսահման նվիրվածությամբ:

Այդ տարիներին հնարավորությունները չատ սահմափակ էին, գրեթե միջոցներ չէին տրվում չրջանի զարգացման համար: Նույնիսկ այդ պայմաններում մի չարք ջրաչինարարական աչխատանքներ էին կատարվում գյուղերում: Կառուցվեց ու չահագործման հանձնվեց Սոլյանի ջրանցքը, որն անցնում է Ազիզբեկովի այժմյան չրջկենտրոնով: Մի չարք գյուղերում կառուցվեցին փոքրիկ ջրամբարներ, ուր կուտակվում էին գարնան ջրերը և օգտագործվում ամռանը:

Գետերը և գետակները հոսում են խոր ձորերով, տեխնիկայի բացակայության պայմաններում հնարավոր չէր ջուրը վեր բարձրացնել: Շրջանում չկար էլեկտրականություն, նույնիսկ չրջկենտրոնը չուներ, միակ միջոցը մնացել էր փոքր ջրամբարների կառուցումը:

Շրջանի ակտիվին հիմնականում կցել էին կոլտնտեսություններին և, փաստորեն, ակտիվը կոլխոզներից դուրս չէր գալիս:

Ես ամրացված էի Ղուչչիի կոլխոզին: 1936 թվականին Ազիզբեկովի չրջանում սարսափելի երաչտ էր: Ղուչչի գյուղի դաչտերի միջով հոսում է Որոտան գետից սկիզբ առնող Շանգիրովի առուն, բայց կոլխոզն իրավունք չուներ այդ ջրից օգտվելու, որովհետև այդ ջուրը գնում էր Նախիջևան՝ բամբակի դաչտերը

ոռոգելու: Բամբակը համարվում էր պաչտպանական կուլտուրա, որի պատճառով այդ ջուրն արգելվում էր օգտագործել: Իրականում բացի բամբակից, Նախիջևանում ոռոգում էին բոլոր կուլտուրաները:

Կոլտնտեսության ժողովում գյուղացիները զայրույթով բարձրացրեցին այդ հարցը, ինչո՞ւ իրենք չպետք է օգտագործեն այդ ջուրը, երբ առուն ժամանակին կառուցել են իրենց գյուղացիները, իսկ հիմա արգելում են օգտագործել:

Ժողովում ամենից հիմնավոր ու համոզիչ ելույթ ունեցան Ն. Մկրտչյանը, կոլտնտեսության հաչվապահը և գյուղխորհրդի նախագահ օպորտունիստ Խաչոն (նրան այդպես էին անվանում):

Գյուղում հեռախոս չկար, թե չէր աչխատում, լավ չեմ հիչում, ստիպված էի մի փոքրիկ խնդրագիր ուղարկել չրջկոմի քարտուղար Առուչանյանին՝ թույլատրելու որոչ ժամանակով օգտագործել ջուրը:

Վստահ լինելով, որ դրական պատասխան կստանամ, ես գյուղացիներին թույլ տվեցի ոռոգել ցանքերը:

Սակայն Առուչանյանից ստացվեց նախատինքով լի խիստ պատասխան, որով կտրուկ արգելվում էր գետից ջուր վերցնելը:

Երեկոյան նորից հավաքեցինք կոլտնտեսականներին, հայտնեցինք արգելման մասին: Առանց լուրջ առարկության ժողովականները համաձայնվեցին.: Նրանց այդ վերաբերմունքը ինձ և՛ ուրախացրեց, և՛ զարմացրեց:

Հետագայում իմացա, որ ժողովում համաձայնվեցին, բայց միաժամանակ կազմակերպեցին գիչերը մասսայաբար օգտվել ջրից և մյուս օրը լրիվ վերջացրել էին տարածությունների ոռոգումը :

Նախիջևանից բողոքներ ստացվեցին ջուրը կտրելու մասին, իսկ Առուչանյանը անտեսել չէր կարող, բյուրոյի նիստում քննարկեց իմ հարցը և լուրջ դիտողություն արեց:

Այդ տարին ղուչչեցիները լավ բերք հավաքեցին: Գյուղացիների ուրախությանը սահման չկար:

* * *

Ազիզբեկովում իմ աշխատանքի ամենածանր տարիներն էին: Թերթի մեկ էջը լույս էր տեսնում ադրբեջաներեն, բաժինը ղեկավարում էր մի հիանալի երիտասարդ՝ Հեյդար Ջաֆարովը: Այդ ժամանակ ադրբեջանցիները գրում էին լատինական տառերով և ես որոշ չափով սովորել ու կարդում էի: Երբ հետագայում նորից փոխվեցին տառերը, անցան ռուսական տառագրության, այլևս հնարավոր չէր թերթի միջոցով ադրբեջաներեն սովորել:

Իմ խնդրանքով շրջկոմն ինձ ամրացրեց ադրբեջանական Ջողի գյուղի կոլտնտեսությանը, որտեղ շատ ծանր պայմաններում որոշ չափով սովորեցի ադրբեջաներեն խոսել: Ադրբեջաներեն սովորելու գործում լուրջ օգնություն էր ցույց տալիս Հեյդարը, որը խմբագրությունում հայերեն չէր խոսում, չնայած լավ գիտեր: Պիտի ասեմ, որ նա այդ շրջանում միակ ադրբեջանցին էր, որ գիտեր հայերեն:

Խմբագրությունը չուներ փոխադրամիջոց՝ ոչ ձի, ոչ էլ ջորի, գյուղերը գնում էինք ոտքով: Մի տարի աշխատելուց հետո Հեյդարի ծնողները խմբագրությանը նվիրեցին մի ձի, որի անունը Բայլար էր: Արդեն հեշտ էր գյուղերի հետ կապ պահպանել: Հաճախ լինելով տեղերում՝ թերթը մեծ հեղինակություն ձեռք բերեց: Եթե առաջ այն լույս էր տեսնում երկու էջով, 1937 թվականից արդեն բաղկացած էր չորս էջից՝ չաբաթական երեք անգամ:

Այս տարիներին աղետալի «ջարդ» էր կատարվում կադրերի հետ: Մի փոքր զանցանք, նույնիսկ թշնամու մեղադրանք էին ստանում, բանտարկում էին կամ «լավագույն» դեպքում՝ հեռացնում աշխատանքից: Այդպես վարվեցին Ցոլակ Ասատրյանի հետ: Վերջինս Շիրակի գյուղերից էր, բանվորի տղա, հայրն աշխատել էր մեքենավար: Լենինականի կայարանի կուսակցական կազմակերպությունը Ցոլակի հորը մեղադրել էր տրոցկիզմին հարելու համար: Կուսակցությունից չէին հեռացրել, բայց պաշտոնի փոփոխություն էին կատարել: Այսքանը բավական էր, որ Ցոլակին չվստահեին կոմերիտմիության շրջկոմի քարտուղար աշխատելու: Կոմերիտմիության Ազիզբեկովի շրջկոմի պլենումը Ասատրյանին անվստահություն հայտնեց և ազատեց քարտուղարի պարտականությունից:

Կոմերիտմիության շրջկոմի առաջին քարտուղար ընտրեցին ինձ: Երկար ժամանակ ես էի կատարում շրջկոմի քարտուղարի և խմբագրի պարտականությունները: 1938 թվականի սկզբներին շրջկոմի առաջին քարտուղար Առուշանյանին նշանակեցին հողժողկոմ, կուսակցության շրջկոմի առաջին քարտուղար ընտրեցին Վանյա Ղազարյանին:

Պետք է խոստովանել, որ շրջանում մթնոլորտը միանգամից փոխվեց, մարդիկ սկսեցին միմյանց վստահել, եթե ոչ բոլորովին, ապա մասնակի, մեծ չափով պակասեց անստորագիր նամակների քանակը:

Կոլտնտեսությունները համեմատաբար տնտեսապես ամրացան: Իմ խնդրանքով Ղազարյանը ինձ ազատեց խմբագրի պարտականություններից և մնացի միայն շրջկոմի քարտուղար:

Այսպիսով 1937 թվականին սկսվեց իմ կոմերիտական աշխատանքը, սկզբում շրջկոմում, իսկ հետագայում՝ կոմերիտմիության Կենտկոմում:

* * *

30-ական թվականներին Ազիզբեկովի շրջանում ոչ մի արդյունաբերական ձեռնարկություն չկար, ավելին, այդ լեռնային շրջանում նույնիսկ շինարարության համար քար չէին արտադրում:

Գյուղերն անբարեկարգ էին, մշակութային միջոցառումների համար չենքեր չունեին, հավաքները կատարվում էին գոմերում կամ մեծ մասամբ դրսում:

Հնուց մնացած մի գեղեցիկ սովորություն կար Դարալագյազում: Հավաքույթների ժամանակ աթոռ չլինելու պատճառով երկար նստարաններ էին դնում, մասնակիցների մի մասը նստում էր, իսկ մեծամասնությունը մնում էր կանգնած: Որպես կանոն՝ կանանց նստեցնում էին նստարանների վրա, իսկ տղամարդիկ մնում էին կանգնած: Շատ անգամ եմ ականատես եղել, երբ աղջիկը ներս է մտել ժողովարան, տարեց մարդը տեղը զիջել է աղջկան:

Ամբողջ շրջանում երկհարկանի տուն չէիր գտնի, բոլորը գետնափոր կամ փոքր քարերով շարված խարխուլ տներ էին: Դեռ այն ժամանակ մեծ հեռանկար էր խոստանում Ջերմուկի հանքային ջուրը: Մի քանի անգամ շրջանի բժիշկների անունից հոդվածներ էինք տպագրել, կուսակցական ակտիվում խոսվում և արձանագրվում էր խնդրանքներ վերադաս մարմիններին՝ միջոցներ տրամադրել հանքային ջուրն օգտագործելու համար:

1937 թվի փետրվարին Ազիզբեկովի շրջան եկավ «Պրավդա»-ի թղթակից Կոտլյարովը: Նրա առաջին պահանջը եղավ ցույց տալ Ջերմուկը: Թղթակցի հետ փետրվարին ձիերով մեկնեցինք Ջերմուկ: Այն ժամանակ բնական ջուրը՝ Պրիստավի աղբյուրը, դուրս էր հորդում հարթավայրում, հիմնականում ձորի մի փոքրիկ փոսում բխում էր տաք ջուր և կեղտոտ ցեխ: Շատ դժվարությամբ հասանք ձորի աղբյուրին, այդտեղ ցեխը շատ շատ էր, և ձիերը հազիվ էին քայլում:

Ձիերից իջանք, Կոտլյարովը նայեց աղբյուրին, մի կում խմեց ու սկսեց հանվել: Ես կարծեցի, թե ուզում է տաք ջրի մեջ մտնել, փոսը խորն էր, կարելի էր: Նա տաք ջրի փոխարեն գետի սառույցը կոտրեց և մտավ գետի մեջ, լողացավ, եկավ մտավ այդ տաք ջրի մեջ, հետո՝ նորից մտավ գետի մեջ, ապա ստիպեց, որ սպիրտով մարմինը չփեմ: Այդ բոլորից հետո մի բաժակ սպիրտ խմեց, ապա հաց ու պանիր կերանք ու վերադարձանք: «Պրավդայում» շատ լավ հոդված լույս տեսավ, որից հետո մեր հանրապետությունում սկսեցին գործի անցնել: Առաջին հերթին լուրջ աշխատանք սկսեց սոցիալական ապահովագրության ժողկոմատը, այն ժամանակ ժողկոմն էր Զորապետ Գալստյանը:

Միջոցների պակասության և հատկապես փոխադրական միջոցների և ճանապարհների բացակայության պատճառով շինարարությունը շատ դանդաղ էր ընթանում: 1936 թ. գարնանը Ջերմուկ եկավ բժիշկ Բեգլարյանը: Հանքային աղբյուրի մոտ վրաններ խփեց և սկսեց հիվանդներ ընդունել: Հանրապետության տարբեր շրջաններից ծանր հիվանդներ էին գալիս, բուժվում և վերադառնում էին: Ջերմուկի հեղինակությունն օրեցօր բարձրանում էր: Ավելի մեծ հոսք սկսվեց աղրբեջանցիների կողմից (քոչվորները վաղուց գիտեին), բժշկի ներկայությունն ավելի ուժեղացրեց հոսքը:

Բավական չէր, որ Թուրքերի դաժան ծեծից հայրս դեռ չէր ապաքինվել, մայրս հիվանդացավ ռևմատիզմով և դարձավ անկողնային հիվանդ: Երբ տեսա Ջերմուկի ջրերի բուժիչ հատկությունը, խնդրեցի բժիշկ Բեգլարյանին, որպեսզի հիվանդ մայրիկիս ընդունի և բուժի:

Ազիզբեկովում ֆինբաժնի վարիչ էր աշխատում Աշոտ Ներսիսյանը, շատ կազմակերպված և գործունյա մարդ, հետագայում դարձավ գործադիր կոմիտեի նախագահ: Նրա մայրը ևս տառապում էր հոդացավով: Երկուսով Ջերմուկի կիրճում վրան խփեցինք և մեր մայրերին տեղավորեցինք այդ վրանում: Մայրիկս այնքան ծանր էր, որ ձորի գլխին ձիուց իջեցրինք, ոտքով չկարողացավ իջնել, ստիպված երկու ընկերներով ձեռքերի վրա իջեցրել և տեղավորել ենք վրանում:

Բեգլարյանի հսկողության ներքո մայրս հանքային ջրերում 10–12 անգամ լողացավ, միաժամանակ ցեխի վաննաներ ընդունեց, առանց որևէ բուժօգնության, այդ հրաշագործ ջուրը ոտքի կանգնեցրեց երկու մայրերին՝ իմ և Ներսիսյանի: Մայրս դրանից հետո այլևս հոդացավով չհիվանդացավ և ապրեց 101 տարի: Ջերմուկը երկար ուսումնասիրվեց, իսկ ուսումնասիրելուց հետո շատ դժվար և երկար կառուցվեց:

* * *

Ես նպատակ չունեմ խոսելու Ջերմուկի ջրերի բուժիչ օգտակարության մասին, այդ արդեն կյանքն է ապացուցել, այստեղ այժմ ամեն տարի բուժվում են տասնյակ հազարավոր մարդիկ: Ճիշտ չէր լինի, եթե մի քանի խոսք չասվի Ջերմուկի կառուցման մասին:

Ես վերևում ասացի, որ Ջերմուկի շինարարությունը կատարվում էր շատ դժվարին պայմաններում: Ճանապարհների բացակայությունը, ավելի քան երկու հարյուր կիլոմետր մայրաքաղաքից հեռու գտնվելը, միջոցների պակասը անասելի դժվարություններ էին ստեղծում:

Ջերմուկի շինարարությունը մեծ թափով սկսվեց Հայրենական պատերազմից հետո: Առաջին հերթին, անհրաժեշտ էր ճանապարհ կառուցել, որպեսզի հնարավոր լիներ շինանյութեր փոխադրել: Ջերմուկի շինարարության վրա հատուկ ուշադրություն էր դարձնում Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի առաջին քարտուղար Գրիգոր Հարությունովը:

Նրան շատ էր մտահոգում, թե որտեղից պետք է անցնի ճանապարհը՝ Գնդեվանքի բարձրավանդակո՞վ, թե՞ Արփի գետի խոր կիրճով: Մասնագետների հետ խորհրդակցելով՝ եկավ այն եզրակացության, որ կիրճով արագ կլինի և կստացվի շատ գեղեցիկ ու հեքիաթային ճանապարհ:

Այդպես էլ եղավ: Գնդեվանքի ձորով կառուցված ճանապարհը, իրոք, շատ գեղեցիկ է: Մինչև ճանապարհի կառուցումը այս կիրճում ես շատ եմ եղել, դեռևս Ազիզբեկովում աշխատած ժամանակ: Այստեղ բազմաթիվ արշավների ենք եկել կոմերիտականներով՝ կոմունարների հիշատակը հավերժացնելու համար:

1920 թվին դաշնակները բարբարոսաբար սպանեցին հիանալի կոմունարների, որոնք հերոսաբար կռվում էին սովետական իշխանության հաստատման համար: Այժմ այս կիրճում կառուցվել է աղբյուր-հուշարձան: Ամեն մի անցորդ գլուխ է խոնարհում նրանց հիշատակի առաջ, որոնք զոհվեցին հետնորդների վառ ապագայի համար:

Հարությունովն ավելորդ չհամարեց ինձ հրավիրել և հարցնել ճանապարհի կառուցման մասին: Քաջատեղյակ լինելով այդ վայրերին, խորհուրդ տվեցի և խնդրեցի ճանապարհը կառուցել Արփի գետի գեղատեսիլ կիրճով: Գ. Հարությունովն ինչքան էլ համոզված լիներ որևէ հարցում, սովորություն ուներ մի ավելորդ անգամ իմանալ ուրիշների կարծիքը:

Այն ժամանակ բոլորը գտնում էին, որ չնայած շատ դժվար է ձորով ճանապարհ կառուցելը, բայց պետք էր կառուցել Արփի գետի աջ ափով՝ բնության հրաշալի, անկրկնելի գեղեցկությունը ցույց տալու մարդկանց: Գ. Հարությունովը հանձնարարեց

ինձ, որ հրավիրեմ նախագծողներին և հայտնեմ իր կարծիքը, այն է՝ ճանապարհը կառուցել ձորով:

Նախագծային աշխատանքները դեռ չավարտված՝ սկսվեց ճանապարհի շինարարությունը: Շինարարական աշխատանքը հանձնարարվեց Եղեգնաձորի ճանապարհաշինարարական կազմակերպությանը, որի ղեկավարն էր Անուշավան Հակոբյանը: Կառուցման աշխատանքը դանդաղ էր ընթանում շատ պարզ պատճառով:

Նախ՝ տեխնիկան գրեթե բացակայում էր, ամեն ինչ կատարվում էր ձեռքի աշխատանքով, ավելին, կիրճում չէր թույլատրվում պայթեցումներ կատարել և այլն: Մի խոսքով, այս շինարարությունը մարդկանց համար դարձավ տաժանակիր աշխատանք: Հաղթահարելով բոլոր տեսակի դժվարությունները և խոչընդոտները՝ ճանապարհը կառուցվեց և Արփի գետի գեղատեսիլ կիրճով հնարավոր դարձավ ապրանքատար և մարդատար մեքենաների երթը:

Այս ճանապարհն ավելի գեղեցիկ դարձավ, երբ կառուցվեց Կեչուտի գեղեցիկ ջրամբարը՝ Արփա-Սևան ջրատարի կառուցման կապակցությամբ:

Խոր ձորից փրփրադեզ գետի ափով դուրս ես գալիս մի բարձունք, քո առջև բացվում է մի հիասքանչ տեսարան՝ կապույտ լիճ Դարալագյազի և Զանգեզուրի լեռների գրկում:

Ջերմուկի շինարարությունը հիմնականում սկսվեց Հայրենական պատերազմից հետո: Ճիշտ է, պատերազմում մեր երկիրը հաղթեց, բայց ինքը ևս քայքայվեց: Բոլոր տեսակի միջոցները հատկացվում էին ավերված հանրապետությունների և մարզերի տնտեսությունը վերականգնելու համար, մյուս հանրապետություններին շատ քիչ միջոցներ էր տրվում:

Դա հասկանալի էր. հարկավոր էր վերականգնել քայքայվածը, ապա նոր միջոցներ տալ մյուսներին:

Այս պայմաններում Ջերմուկում լայն շինարարություն սկսելը գրեթե անհնար էր: Առողջարանի շինարարությունը սկսվեց տեղական միջոցների հաշվին: Ճանապարհի կառուցումը որոշ չափով հեշտացրեց շինանյութերի տեղափոխման գործը:

Հարությունովը հատուկ խորհրդակցության հրավիրեց մինիստրությունների և գերատեսչությունների ղեկավարներին և խնդիր դրեց ամեն մեկի առջև՝ մասնակցել առողջարանի կառուցմանը:

Սկզբնական շրջանում մեծ աշխատանք կատարեցին սննդի, տեղական արդյունաբերության և սոցիալական ապահովության մինիստրությունները: Սննդի արդյունաբերության մինիստրությունը, որի մինիստրն Արամ Փիրուզյանն էր, կառուցեց մի շարք շենքեր, որոնք հետագայում վերածվեցին առողջարանների: Տեղական արդյունաբերության մինիստրությունը, որի մինիստր էր Իվան Սոչինսկին, կառուցեց մի շարք օբյեկտներ կենցաղային սպասարկման համար: Սոցիալական ապահովության մինիստրությունը շարունակում էր առաջին առողջարանի շինարարությունը: Անտառային տնտեսության վարչությունը որոշակի աշխատանք էր կատարում առողջարանն անտառապատելու համար: Այս բոլորը առաջին քայլերն էին, բայց գործը, կարծես, տեղից չէր շարժվում:

Իրոք, միայն տեղական միջոցներով հնարավոր չէր կառուցել Ջերմուկը: Միութենական մինիստրությունների մասնակցությունն ապահովելու նպատակով Գ. Հարությունովը գեղեցիկ բարձունքի վրա կառուցել տվեց ընդունարանի մի շենք, որպեսզի հյուրեր հրավիրեր կենտրոնից, որոնք կհամոզվեն և միջոցներ կտրամադրեն շինարարության համար: Մինչև հիմա էլ տեղացիները այդ շենքը անվանում են Հարությունովի ամառանոց:

Պետք է ասել, որ այդ ճարտարապետական ուրույն ոճով կառուցված գեղեցիկ շենքն իր դերը կատարեց: Այստեղ մենք ընդունեցինք բազմաթիվ մեծապաշտոն մարդկանց, որոնք օգնեցին շինարարությանը, կառուցեցին առողջարան (էներգետիկներ, առողջապահության մինիստրություն և այլն):

Ջերմուկի շինարարությունը պահանջում էր հատուկ վերաբերմունք և ամենօրյա օգնություն: Չնայած օգնությանն ու օժանդակությանը՝ մինչև 1957 թ. շինարարությունը ընթանում էր շատ դանդաղ: Կադրերի բացակայությունը, ինչպես նաև շինանյութերը ժամանակին չփոխադրելու պատճառով ամեն տարի պլանները չէին կատարվում, առողջարանները գտնվում էին շատ անբարեկարգ պայմաններում:

* * *

Մի քանի խոսք Ջերմուկի շուրջը կանաչ գոտի ստեղծելու և առողջարանում զբոսայգի հիմնելու մասին:

40-ական թվականների վերջին և 50-ական թվականների սկզբին անտառային տնտեսության վարչությունը ղեկավարում էր Լևոն Հովսեփյանը՝ մի շատ պատկառելի անձնավորություն: Այդ վարչությանը հանձնարարված էր զբոսայգու հիմնադրումը և առողջարանի անտառապատումը: Երկար ժամանակ գործը տեղից չէր շարժվում:

Գ. Հարությունովը եղել էր Ջերմուկում: Այնտեղից վերադառնալով՝ հանձնարարեց ինձ՝ հրավիրել Հովսեփյանին և պարզել, թե՝ ինչու ոչինչ չի արվում անտառապատման ուղղությամբ: Այդ տարիներին ես աշխատում էի կուսակցության Կենտկոմում՝ որպես կադրերի գծով քարտուղար: 1949 թ. փետրվարին հրավիրեցի խորհրդակցություն՝ պարզելու Ջերմուկում անտառապատման աշխատանքները ձախողելու պատճառները:

Վարչության պետ ընկեր Հովսեփյանը նախօրոք ասել էր, որ մասնագետները առարկում են Ջերմուկում աճեցնելու այլ ծառատեսակներ և գտնում են, որ հնարավոր է միայն տեղական ծառատեսակներ աճեցնել, քանի որ Ջերմուկը գտնվում է ծովի մակերևույթից ավելի քան 2000 մետր բարձրության վրա: Այլ խոսքով, Ջերմուկի անտառ-պուրակի հարցը պետք է հանել օրակարգից և բավարարվել եղածով:

Խորհրդակցությունում լսեցինք մասնագետների կարծիքները, որոնք, իրոք, միաբերան պնդում էին, որ այդ բարձրության վրա կարող են աճել միայն ու միայն տեղական ծառատեսակները: Խորհրդակցությունում Հովսեփյանի բոլոր խոստումները, թե կտրամադրենք ամեն ինչ՝ կատարելու Հարությունովի պահանջը, մասնագետները միանշանակ մերժեցին՝ ասելով, թե իրենք ավելորդ միջոցներ կծախսեն, բայց արդյունքը չենք տեսնի:

Երբ այս ամենի մասին տեղյակ պահեցինք Հարությունովին, նա շատ զայրացավ և պահանջեց գտնել մի մասնագետ, որը կհամաձայնվի աշխատել Ջերմուկում: Նախօրոք ես բանակցել էի Կիրովականի, Ստեփանավանի և Ղափանի անտառտնտե-

սությունների մասնագետների հետ:

Իմ հավանությանն արժանացավ Ստեփանավանի անտառտնտեսության գլխավոր մասնագետը՝ Կիրիլ Դրեպալոն: Կենտկոմում ես առաջարկեցի նրա թեկնածությունը, Հովսեփյանը առարկեց, ասելով, որ նա միայն պրակտիկ է, կրթություն չունի, բայց Գ. Հարությունովը պահանջեց կանչել նրան իր մոտ:

Ստեփանավանից հրավիրեցինք Կիրիլ Սերգեևիչին: Նրան ասացի նպատակը (նա կարծես տեղյակ էր գործի էությանը), առանց երկար մտածելու՝ պատասխանեց, որ հնարավոր է աճեցնել ցանկացած ծառատեսակ, եթե Հայաստանի պայմաններում ոռոգման ջուր լինի:

Գ. Հարությունովին շատ դուր եկավ Կիրիլ Սերգեևիչը: Հովսեփյանը Դրեպալոյին Ստեփանավանից փոխադրեց Ջերմուկ և նշանակեց անտառ-պուրակի կազմակերպման դիրեկտոր: Ի զարմանք բոլորի՝ այս աշխատասեր, խելացի մարդը մեկ-երկու տարում ստեղծեց մշտադալար ծառատեսակների ոչ մեծ տնկարան և կատարեց որոշ տնկումներ: Հինգերորդ տարում արդեն բոլորն էլ համոզվեցին, որ խելացի աշխատանքի դեպքում Ջերմուկում կաճեն և աճում են շատ այլ ծառատեսակներ:

Այդ ժամանակ Կիրիլ Սերգեևիչն անտառ-պուրակում դեռ գործ չէր անում, միայն փորձում էր, թե ծառատեսակներից որը կարելի է վստահորեն տնկել, որ դիմանա այդ բարձրության կլիմայական պայմաններին:

Ջերմուկի զբոսայգու հիմնադրումը սկսեցինք 1954 թվականից: Ես արդեն աշխատում էի Մինիստրների խորհրդում: Կիրիլի բոլոր պահանջները կատարում էի առանց բացառության և հապաղելու: Ջերմուկում ստեղծեցին այնպիսի զբոսայգի, որ ցանկացածդ կուրորտային քաղաք կարող է նախանձել, այստեղ աճում են բազմատեսակ ծառատեսակներ, նույնիսկ հսկա սեքվոյան, էլ չեմ խոսում կեչիների, արծաթագույն եղևնիների և այլնի մասին: Մի խոսքով, հուլիս ամիսն այս զբոսայգին իսկական դրախտավայր է՝ գեղեցիկ ու հոտավետ ծաղիկներով: Ի դեպ, պետք է ասեմ, որ այս բարձրության վրա նույն ծաղիկներն ավելի գունեղ և հոտավետ են, քան դաշտավայրում:

Զբոսուղիներն այնպես են կառուցված, որ բոլորը տանում են դեպի խմելու ջրի գալերեա, կուլտուրայի պալատ և գեղեցիկ լանջից հոսող սառնորակ աղբյուրներ:

Այս կուրորտային քաղաքը չրջապատված է կովկասյան գեղեցիկ սոճիներով, որոնք առանձին գեղեցկություն են տալիս Ջերմուկ քաղաքին, որտեղ տարեկան հանգստանում ու իրենց առողջությունն են վերականգնում տասնյակ հազարավոր քաղաքացիներ և գյուղացիներ, երեխաներ ու պատանիներ:

Ջերմուկն ավելի գեղեցկացավ ու բարեկարգվեց, երբ կառուցվեցին նոր հյուրանոցը և հատկապես Արփա գետի կիրճի վրա աղեղված գեղեցիկ կամուրջը, որը կիրճի երկու ափերը կապեց առողջարանների, օդանավակայանի և բնակելի թաղամասի հետ: Այս վայրը հեքիաթային գեղեցկություն ունի, կամուրջն ավելի գեղեցկացրեց և մարդկանց համար մատչելի դարձրեց օգտվելու բնության այդ հրաշալիքից:

Ջերմուկ քաղաքը և առողջարանը կառուցվել են մեր հանրապետության միջոցների հաշվին: Քաղաքի կառուցման և առանձնապես բարեկարգման գործում շատ ջանքեր թափեց կոմունալ տնտեսության մինիստր Նունիկ Թախիկյանը և քաղաքային սովետի գործկոմի նախագահ Զավեն Վարդանյանը: Առողջարանների կառուցմանը որոշ մասնակցություն ցուցաբերեցին Միության առանձին մինիստրներ:

* * *

60-ական թվականների սկզբներին մեր հանրապետությունը էր ժամանել Միության էլեկտրակայանների շինարարության մինիստր Իգնատի Նովիկովը: Վերջինիս հետագայում նշանակեցին Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ և Պետշինի նախագահ:

Հիդրոէլեկտրակայանների շինարարությանը ծանոթանալուց հետո ես խնդրեցի ծանոթանալ Ջերմուկի հետ: Որոտանի կասկադի շինարարությունը ուսումնասիրելուց հետո միասին եղանք Ջերմուկում: Առողջարանն անջնջելի տպավորություն թողեց նրա վրա: Այդ ժամանակ արդեն պատրաստ էին

Արփա-Սևանի ջրանցքի շինարարության նախապատրաստական աշխատանքի նախագծերը, որոնք կատարվել էին հանրապետության միջոցների հաշվին:

Ծանոթանալով այդ նախագծերի հետ՝ Նովիկովը շատ ոգևորվեց, հարցրեց , թե ինչո՞վ կարող է օգնել: Մեր նպատակն էր՝ թեկուզ մեր հանրապետության սուղ միջոցների հաշվին սկսել նախապատրաստական աշխատանքը, դրանով շահած կլիներինք մեկ տարի: Ջրանցքի նշանակության մասին երկար խոսվեց և, իմ կարծիքով, նա հասկացավ դրա կարևորությունը Հայաստանի էկոնոմիկայի զարգացման և ընդհանրապես մեր ժողովրդի գոյատևման համար:

Շինարարության նախապատրաստական աշխատանքները սկսելու համար անհրաժեշտ էր «Հայէներգոշինի» ղեկավարի կարծիքը:

Այդ ժամանակ «Հայէներգոշինի» կառավարիչ էր աշխատում Վազրիկ Սեկոյանը: Վերջինս դրական կարծիք տվեց և, որ կարևոր է, ընդգծեց, որ մինիստրությունից միջոցներ չի պահանջում, և այս ամենը տարեկան պլանի կատարման վրա չի անդրադառնա:

Այսքանից հետո Նովիկովին ոչինչ չէր մնում, քան տալ իր համաձայնությունը, ընդ որում, Սեկոյանը առանց այդ էլ մեր խնդրանքով կատարել էր որոշ նախապատրաստական աշխատանք:

1964 թվականին սկսվեց Արփա-Սևանի շինարարությունը: Սկզբում աննկարագրելի դժվարությամբ էր ընթանում աշխատանքը, կադրեր չկային, տեխնիկապես զինված չէր շինարարական կազմակերպությունը, համապատասխան շինանյութեր չկային և այլն: Մի խոսքով, մեծ գործը լուրջ դժվարություններ էր ստեղծում: Մեզ հաջողվեց աստիճանաբար հաղթահարել դրանք և կանոնավոր հունի մեջ դնել Արփա-Սևանի շինարարությունը: Սրան դեռ մենք կանդրադառնանք:

Իգնատի Նովիկովի այցելությունը մի ուրիշ օգուտ ևս տվեց: Նրա կարգադրությամբ Ջերմուկում էներգետիկների համար սկսվեց մի գեղեցիկ առողջարանի կառուցում: Հայէներգոշինարարները շատ անչնորհք գտնվեցին այս հարցում, նախ՝ կառուցումը շատ ձգձգեցին, ապա մինչև վերջ չհասցրեցին այդ հիանալի օբյեկտի շինարարությունը և այն հանձնեցին օդաչուներին: Այնուամենայնիվ, առողջարանը հիմա գործում է և գտնվում է նոր կամրջի կողքին:

* * *

Ջերմուկի առողջարաններից ամենագեղեցիկը 4-րդ վարչության առողջարանն է, որի կառուցմանն իր ակտիվ մասնակցությունն է ցուցաբերել (կարելի է ասել նախաձեռնողը), Միության առողջապահության մինիստրության 4-րդ վարչությունը, որի պետն այն ժամանակ հանդիսանում էր այժմյան ՍՍՀՄ առողջապահության մինիստր Եվգենի Զազովը:

Հայաստանի առողջապահության մինիստրության 4-րդ վարչության պետն էր տաղանդավոր կազմակերպիչ, առողջապահության գործի մեծ գիտակ Գրիգոր Տիգրանի Սիմոնյանը, որի հրավերով Զազովը ժամանեց Երևան: Երևանից Սիմոնյանի ուղեկցությամբ Զազովը մեկնեց Ջերմուկ:

60-ական թվականների սկզբներին Սովետական Միության և Չեխոսլովակիայի հարաբերությունների մեջ սառնություն էր մտել և չեխերը հրաժարվում էին Կարլովի Վարի առողջարանների ուղեգրեր տալ:

Զազովի հետ ես հանդիպեցի Երևանում, նա նոր էր վերադարձել Ջերմուկից: Իմ հարցին, թե ինչ կարծիքի է Ջերմուկի մասին, պատասխանեց. «Դա հրաշք է»:

Հենց այդ ժամանակ էլ պայմանավորվեցինք, որ նա Ջերմուկում իրենց միջոցների հաշվին պետք է կառուցի բոլոր հարմարություններով մի առողջարան՝ 250 մահճակալով: Մոսկվայի նախագծային ինստիտուտները նախագծեցին և մի տարի հետո սկսվեց շինարարական աշխատանքը: Չնայած Ջերմուկում ստեղծել էինք հատուկ շինարարական տրեստ, այնուամենայնիվ, շինարարությունն անհանդուրժելի դանդաղ էր ընթանում: Իմ բոլոր ջանքերը չոչափելի արդյունք չէին տալիս:

Ճիշտ է, 1968 թվականից հետո տարեկան Ջերմուկում իրաց-

վում էին 10–12 անգամ ավելի միջոցներ և կառուցվում էին չատ օբյեկտեր՝ օդանավակայան, բնակելի շենքեր, կամուրջ, մանկական այլ առողջարաններ, բայց, ինչպես ասացի, չատ դժգոհ էինք մեր աշխատանքից:

Շինարարության ձգձգման պատճառով, թե ուրիշ պատճառ կար, չգիտեմ, բայց մեզ հայտնի դարձավ, որ Միության 4-րդ վարչությունը հրաժարվում էր առողջարանի շինարարությունը ֆինանսավորել: Հանրապետության շինարարության ֆինանսավորման գործը իր վրա վերցրեց Գրիգոր Սիմոնյանը: Նրա տաղանդի ու ջանքերի շնորհիվ հնարավոր եղավ ավարտել ճարտարապետական ինքնատիպ ոճով և հարմարություններով այս չատ լավ առողջարանը:

Զորրորդ բուժվարչության ու էներգետիկների այս երկու խոշոր առողջարանները, որոնք կառուցվել են դեմ դիմաց կամուրջի մոտ, կարծես գեղեցիկ կամրջի և Արփա գետի կիրճի կախարդական քարանձավների դարպասը լինեն:

Ջերմուկն այժմ դարձել է մեր Միության գեղեցիկ առողջարաններից մեկը, կառուցվել են բազմաթիվ առողջարաններ, սպասարկման այլ օբյեկտներ, առևտրական հիմնարկներ, գետի աջ ափին վեր են խոյացել գեղեցիկ բնակավայրը, օդանավակայանը, միգուցե հանրապետության ամենագեղեցիկ հյուրանոցը և այլն: Կարող եմ սուբյեկտիվ լինել, որովհետև առողջարանի կառուցման վրա չատ ջանքեր եմ թափել, բայց որքան էլ սուբյեկտիվ լինեմ, չեմ կարող այս առողջարանի բոլոր առավելությունները թվարկել:

Այնուամենայնիվ, անհրաժեշտ է նշել բնության կողմից պարգևած և մարդու կողմից ավելի գեղեցկացրած ջրվեժը, որը կիրճին մի առանձին գեղեցկություն է տալիս: Լեռան բարձունքից հոսող աղբյուրները, կախարդական կիրճն իր քարանձավներով, Ջերմուկի ջրամբարը յուրահատուկ գեղեցկություն են, որոնց կողքով մարդ անտարբեր անցնել չի կարող:

Երբ նոր էր սկսվում Արփա-Սևան ջրանցքի շինարարությունը, անհրաժեշտ էր բանվորների, շինարարների համար կառուցել հանրակացարաններ և կուլտուր-կենցաղային օբյեկտներ:

Քանի որ այդ կառույցները պետք է լինեին ապագա ջրամբարների ափին, որոշեցինք հիմնական տներ կառուցել, որպեսզի հետագայում օգտագործվեն որպես առողջարան: Այդպես էլ եղավ: Այժմ ջրամբարի աջ ափին գեղեցիկ առողջարան է, իսկ ձախ ափին Կեչուտ գյուղն է՝ քաղաքի նոր գեղեցիկ թաղամասը:

Ջերմուկը հայտնի է ոչ միայն առողջարաններով, այլ նաև խմելու ջրով: Ի տարբերություն Զելենոսլովակիայի հայտնի Կարլովի Վարի ջրերի՝ Ջերմուկի հանքային ջրերը չատ օգտակար են նաև խմելու համար: Այդ նպատակով էլ կառուցվել է հանքային ջրերի գործարան, որը տարեկան արտադրում է մի քանի տասնյակ միլիոն շիշ ջուր:

Հանքային ջրերի արտադրությունը չատ ավելի կավելանա, երբ Վարդենիսի լեռնանցքով ավարտվի երկաթուղու կառուցումը: Առհասարակ երկաթգծի մուտքը Ջերմուկ քաղաքին և առողջարաններին նոր շունչ կտա, որովհետև մինչև հիմա էլ Ջերմուկի սպասարկման, կառուցապատման գործը չատ է դժվարանում տրանսպորտի պատճառով:

Ջերմուկը, կարելի է ասել, դեռ պատմություն չունի, այսպիսի քաղաքները և առողջարանները ստեղծվում են հարյուրամյակների ընթացքում, իսկ նա դեռ մանուկ է:

Իրոք, չատ բան է արվել, լավ հիմք է դրվել, կարելի է կատարվածով հպարտանալ, որ մի սերունդ այդպիսի դժվարին պայմաններում այդքան գործ է արել: Դեռ չատ անելիքներ կան այս առողջարանում, որը ժամանակ է պահանջում: Ես համոզված եմ, որ այս արարիչ ջուրը, լեռնային միանգամայն առողջ կլիմայական պայմանները խելացիորեն կօգտագործվեն՝ ի բարօրություն ապագա սերունդների:

* * *

Հայ ժողովրդի միջնադարյան մշակույթի և վարչական կենտրոններից մեկը՝ Վայոց Ձորը, Սյունիքն իրենց հայտնի կենտրոններով՝ Գլաձորով ու Տաթևով, Մարտիրոսով ու Անգեղակոթով, վերջին դարերում չատ հետ էին մնացել:

30-կան թվականներին Ազիզբեկովի ամբողջ շրջանում մի դպրոցական շենք չկար, մշակութային օջախների մասին խոսք լինել չէր կարող: Մարդիկ բնակվում էին հիմնականում գետնափոր տներում, իսկ շատ տեղերում՝ անասունների կողքին:

Շամշադինից հետո, որտեղ գրեթե բոլոր գյուղերը բարեկարգ էին, ունեին նաև բաղնիքներ, այստեղ՝ Ազիզբեկովի շրջանում շատ դժվար էի ընտելանում:

Առաջին անգամ քուրսին տեսա այստեղ: Խոսք չկա, Արևմտյան Հայաստանում քուրսին սովորական բան էր, բայց ես՝ լոռեցիս, առաջին անգամ էի տեսնում, որ մարդիկ հավաքվում են քուրսու շուրջը, ճաշում և քնում: Գյուղերում շատ տնտեսություններ չգիտեին ինչ է գդալը, պատառաքաղը: Այս բոլորն ինձ համար շատ տարօրինակ էր, չնայած պետք է խոստովանել, որ ես շատ չուտ ընտելացա:

Շատ հավանեցի քուրսին, ձմռան ցուրտ եղանակներին կարծես նույնիսկ առողջարար է:

* * *

1937 թվականի վերջին, նոր սահմանադրության համաձայն, տեղի ունեցավ, ՍՍՀՄ Գերագույն խորհրդի դեպուտատների ընտրություն:

Մեր օկրուգից առաջադրվել էր երկու թեկնածու՝ ազգությունների խորհրդի համար հողժողկոմ Շմավոն Առուշանյանը, իսկ Միության խորհրդի համար՝ լուսժողկոմ Բալաբեկ Մարտիրոսյանը: Պետք է տեսնեիք, թե ինչպիսի խանդավառություն էր ապրում ժողովուրդը: Հնարավոր չէ նկարագրել, ամենուրեք երգ ու երաժշտություն, կատարյալ ցնծություն: Կասկածից վեր է, որ ժողովուրդը մեծ հույսեր էր կապում փակ գաղտնի քվեարկության և դեմոկրատացման հետ: Հենց այդ տարվա՝ 1937 թվականի հոկտեմբերին էր, երբ սկսվեց Հայաստանի կոմերիտմիության տասներորդ համագումարը:

Ես կոմերիտական աշխատանքի համար նոր մարդ էի, նոր էի ընտրվել Ազիզբեկովի կոմերիտմիության շրջկոմի առաջին քարտուղար և 10-րդ համագումարի պատգամավոր:

Քանի դեռ չէի եկել համագումար, ինչ կատարվում էր 1936-1937 թվականներին, բոլորը համարում էի ճիշտ, համոզված էի, որ դրանք բխում էին ժողովրդի և կուսակցության շահերից: Տասներորդ համագումարը կարծես բացեց աչքերս, և դրանից հետո այլ կերպ էի նայում և վերաբերվում դեպի կատարված դաժանությունները:

Ազիզբեկովի կոմերիտական կազմակերպությունը 1937 թվականին թվով փոքրաքանակ էր: Բանդիտական շարժման ժամանակ կոմերիտականներից շատերը դուրս էին մնացել, իսկ ընդունելությունը գրեթե դադարել էր: Այդ պատճառով մեր պատվիրակության կազմում ընդամենը չորս հոգի էին: Ես առաջին անգամ էի մասնակցում համագումարի, ուստի այդ պատճառով էլ սրտատրոփ սպասում էի նրա բացմանը: Համագումարը բացվեց հոկտեմբերի 20-ին ֆիլհարմոնիայի փոքր դահլիճում:

Այդ օրերին հանրապետությունում շատ լարված դրություն էր, ամեն օր հայտնում էին ժողովրդի նոր «թշնամու» բանտարկության մասին, և այդ լարված քաղաքական վիճակն իր կնիքն էր դրել համագումարի ընթացքի վրա:

Մի քանի ամիս առաջ բանտարկել էին կոմերիտմիության Կենտկոմի քարտուղար Շարբաթյանին: Համագումարում հաշվետվությամբ հանդես եկավ Արշակ Սեյրանյանը: Նա իր զեկուցման հենց սկզբից հայտարարեց, որ ինքը կապ չունի Շարբաթյանի և ժողովրդի այլ թշնամիների հետ, որ ինքը Լիպարիտ Բարսեղյանի կադրն է, իսկ Բարսեղյանն այդ ժամանակ աշխատում էր կուսակցության Երևանի քաղաքային կոմիտեի քարտուղար:

Համագումարը նոր էր բացվել, դեռ նոր էին ավարտվել զեկավար մարմինների ընտրությունները, երբ դահլիճից ինչ-որ մեկը առանց ձայն խնդրելու՝ ամբիոն բարձրացավ և հայտարարեց, թե ոտնձգություն է կատարվել առաջնորդի նկատմամբ. Ստալինի անունը «Ավանգարդ» թերթում տպագրել են փոքրատառով:

Բարձրացավ մի աներևակայելի աղմուկ-աղաղակ, մթնոլոր-

տը չիկացավ: Վերջապես առաջարկվեց «Ավանգարդ» թերթի խմբագիր Նազարյանին զրկել համագումարի մանդատից և դուրս հրավիրել նիստից: Առանց առարկության՝ Նազարյանին զրկեցին մանդատից և դուրս հրավիրեցին: Դա եղավ անարդարությունների և հետագա խայտառակությունների սկիզբը:

Սեյրանյանը մի կերպ ավարտեց հաշվետվության ընթերցումը: Դահլիճը չէր ենթարկվում նախագահությանը, բայց երբ խոսվեց Կոմերիտմիության Կենտկոմի «սև կասսայի» մասին, փոքր-ինչ լռեցին: Այդ էր պատճառը, որ Սեյրանյանի զեկուցման մեծ մասը «սև կասսայի» մասին էր:

Մտքերի փոխանակությունը վերածվեց կատարյալ ջարդի: Ելույթների հիմնական բովանդակությունը ժողովրդի թշնամիների դեմ թույլ պայքարի հարցն էր: Այդպիսի մեղադրանքով համագումարի պատգամավորի մանդատից զրկեցին Լևոն Սարգսյանին, Աչոտ Մանուկյանին և ուրիշների: Ճիշտ է, հետագայում Սարգսյանն ու Մանուկյանն արդարացվեցին և ուղարկվեցին կուսակցական աշխատանքի:

Համագումարում ում անունը չոչափվում էր, ՀամԼԿԵՄ Կենտկոմի ներկայացուցիչ Մինցն անմիջապես կանչում էր մի առանձնասենյակ և քննում նրան: Մինցը մի սարսափելի անձնավորություն էր, իսկական սադիստ:

Լենինականից Լիպարիտ Կարապետյան անունով մի երիտասարդ, առանց ձայն խնդրելու՝ բարձրացավ ամբիոն և հայտարարեց, որ ինքը Քոչինյանին լավ է ճանաչում, նա կուլակի զավակ է և, որ կարևոր է, Լիպարիտը իրը եղել է մեր բատրակը: Այդ ժամանակ ելույթ ունեցավ Կիրովականի կոմսոմոլի շրջկոմի առաջին քարտուղար Ավետիք Բագոյանը, որը շատ լավ էր ճանաչում մեր ընտանիքին, հայտնեց, որ դա զրպարտություն է և պահանջեց ստուգել: Մի քանի րոպե անց ինձ կանչեց Մինցը: Երկու ժամից ավելի քննում էր:

-Ես խնդրում եմ հրավիրել այդ ընկերոջը, եթե նա ինձ ճանաչում է, ապա համարեք, որ նա ճիշտ է,- ասացի ես:

Այդ փոքրիկ սենյակ հրավիրեցին մի քանի այլ երիտասարդների և Լիպարիտ կոչեցյալին: Մինցը հարցրեց, թե ում է ճանաչում ներկաներից, նա ասաց՝ ոչ մեկին: Ես ասացի, որ Քոչինյանը ես եմ:

-Դու ո՞ւմ տղան ես,- հարցրեց նա:

-Երվանդի,- պատասխանեցի ես:

Ո՛չ, ես կոմիսարի տանն եմ եղել բատրակ:

Կարծես ամեն ինչ բարեհաջող անցավ, բայց Մինցը դեռ շարունակում էր պնդել, որ մենք անհարազատներ ենք:

-Գնացեք գյուղից վկայական բերեք, որ դուք անհարազատ չեք:

-Ես կուսակցական եմ, ինձ ընդունել են այդ գյուղի կազմակերպությունում , միթե՞ դա բավական չէ,- ասացի ես:

Այդ ժամանակ չգիտեմ ով հայտնեց, որ Լիպարիտ Բարսեղյանին բանտարկել են որպես ժողովրդի թշնամի:

Համագումարը սկսեց քննարկել Արշակ Սեյրանյանի հարցը, որն իր զեկուցման սկզբում հայտարարեց, որ ինքը Լիպարիտի կադրն է: Կուսակցության Կենտկոմից մարդ չէր մասնակցում և համագումարը պահանջեց Գ.Հարությունովին, բայց նրա փոխարեն եկավ Կենտկոմի քարտուղար Մարգարյանը: Վերջինս որքան էլ ցանկացավ Սեյրանյանին պաշտպանել, հնարավոր չեղավ, նրան զրկեցին մանդատից և դուրս հրավիրեցին: Դժվար է նկարագրել այն մթնոլորտը, որի պայմաններում տեղի էր ունենում համագումարը:

Առհասարակ շատ ծանր քաղաքական ժամանակաշրջան էր 1937 թվականը, նույնիսկ ամենաազնիվ մարդը դժվարանում էր ճիշտ կողմնորոշվել: Ազնիվ մարդիկ լավագույն դեպքում ձեռնպահ էին մնում:

Երկրում ստեղծված էր այնպիսի դրություն, որ ամեն մեկը թշնամի էր փնտրում և կասկածում էր անգամ ինքն իրեն: Ահավոր դրություն էր, թող այլևս չկրկնվի:

Համագումարից հետո Կենտկոմի պլենումը կոմերիտմիության Կենտկոմի առաջին քարտուղար ընտրեց Սուրեն Միքայելյանին:

Հայաստանի կուսակցության Կենտկոմի նոր ղեկավարությունը Գրիգոր Հարությունովի ղեկավարությամբ մեծ փոփո-

խություն մտցրեց անտեղի տուժած մարդկանց նկատմամբ, չատերին վերականգնեցին կուսակցության շարքերում, գրեթե դադարեցին բանտարկությունները:

Այս բոլորը, անշուշտ, իր ազդեցությունն էր թողել կոմերիտմիության գործիչների վրա: Տասներորդ համագումարը չատերի համար դաս եղավ, երբ բոլորովին անմեղ մարդկանց, կոմունիստներին զրկում էին համագումարի մանդատից և դուրս հրավիրում դահլիճից: 1938 թվին սկսվեց վերանայվել նախկինում հեռացվածների գործերը, չատերին արդարացրին, իսկ մի մասն արդարացվեց հետագայում:

...

Հայտնի է, որ Ազիզբեկովի շրջանը գյուղատնտեսության զարգացման համար, համեմատած մյուս շրջանների հետ, քիչ հեռանկար ուներ, այդ պատճառով էլ շրջկենտրոնում և մի քանի գյուղերում կազմակերպեցինք արդյունաբերական ձեռնարկություններ, որտեղ աշխատում էին մի քանի հարյուր մարդ:

Սովետական կարգերի հաստատումից հետո Ազիզբեկովի շրջանը մի քանի անգամ վերացվել և նորից է կազմակերպվել: Այդ պատճառով էլ շրջկենտրոնը բոլորովին նոր պատմություն ունի:

Վաթսունական թվականների սկզբին Ազիզբեկովի շրջանն անջատվեց Եղեգնաձորի շրջանից: Այս կապակցությամբ առաջացավ նոր շրջկենտրոնի հարցը: Հայտնի է, որ նախկին շրջկենտրոնը գտնվում էր Զառիթափ գյուղում, որտեղ զարգացման հնարավորություն գրեթե չկար:

Երկար քննարկումից հետո որոշվեց շրջկենտրոնը փոխադրել Սոյլան, Արփի գետի աջ ափին հիմնել, որը բոլոր կողմերով հարմար էր: Այժմ այս շրջկենտրոնը հանրապետության մյուս շրջաններից հետ չի մնում: Ավելին, չատ շրջաններից էլ բարեկարգ է:

Հետաքրքիրն այն է, որ բացի պետական շենքերից, թույլատրեցինք անհատական շինարարություն՝ տիպային շենքերով: Մեկ-երկու տարվա ընթացքում կառուցվեց մի բարեկարգ գեղեցիկ ավան:

Որպեսզի մարդկանց կարողանայինք ապահովել աշխատանքով, այստեղ կազմակերպեցինք մի շարք արդյունաբերական ձեռնարկություններ և Երևանի խոշոր ձեռնարկությունների մասնաճյուղեր: Առաջին հերթին, տեղական շինանյութերի բազայի վրա կազմակերպվեց տարբեր իրերի և սայլերի արտադրությունը, որտեղ աշխատեցին մի քանի հարյուր մարդ:

Մի խոսքով, Վայոց ձորի այս գեղատեսիլ հատվածում՝ Արփի գետի ափին, վեր է բարձրացել մի գեղեցիկ քաղաքատիպ ավան՝ իր կինոթատրոններով, հիվանդանոցով, ակումբներով և գեղեցիկ փողոցներով ու պտղատու այգիներով: Ազիզբեկովի և Եղեգնաձորի շրջաններն ավելի արագ կզարգանան, եթե այստեղ հասնի երկաթուղին:

Վայոց ձորը, որին հաջողությամբ կարող ենք անվանել Հայոց ձոր, ունի գյուղատնտեսության ինտենսիվ զարգացման հիանալի հեռանկար, որովհետև հնարավոր է ոռոգելի դարձնել բարձրադիր դաչտերը, իսկ այստեղ ջրի առկայության պայմաններում քարերը ևս բարեբեր են դառնում:

Ավելին, Վայոց Ձորի լեռները դեռ երկրաբանների կողմից լրիվ չեն ուսումնասիրվել, այստեղ կան հազվագյուտ մետաղների բավարար պաչարներ: Մի խոսքով, գիտատեխնիկական զարգացման այժմյան պայմանները հնարավոր դարձրեցին Վայոց Ձորը վերածել Հայոց Ձորի:

Այստեղ մարդիկ քաջ են և դժվարություններին դիմացող, հյուրասեր և լեռնցիների նման ունեն պարզ սիրտ:

Այսքանը գրելով չեմ կարող չանդրադառնալ 1930-ական թվականների Դարալագյազի մարդկանց: Արտավազդ Մարգարյան, որի մասին վերը նչվեց, Եղեգնաձորից Արա Առաքելյան՝ կոմերիտմիության շրջկոմի քարտուղար, հետագայում Միկոյանի շրջանի գործադիր կոմիտեի նախագահը և վերջում մի փոքր վեճի համար՝ ռազմաճակատ, որտեղ էլ հերոսի մահով զոհվեց:

* * *

1938 թվին ինձ ընտրեցին ՀԼԿԵՄ Կենտկոմի կադրերի գծով քարտուղար: Այդ ժամանակ Կենտկոմի առաջին քարտուղար էր ընտրվել Սուրեն Միքայելյանը, երկրորդ քարտուղար՝ Սարգիս Սարգսյանը:

Միքայելյանն իր հիշաչար բնավորությամբ Կենտկոմի աշխատողների հետ միշտ վեճի և կռվի մեջ էր: Նա ամենից շատ վիճում և նույնիսկ հայհոյում էր Դարչո Հովհաննիսյանին, որն աշխատում էր Կենտկոմում՝ որպես բաժնի վարիչ: Տասներորդ համագումարից հետո կոմերիտմիության Կենտկոմի կազմը լրիվ փոխվել էր, բոլորովին նոր մարդիկ էին առաջ քաշվել: Բաժնի վարիչ էին աշխատում Եղիշե Աղաջանյանը, որը մինչ այդ աշխատում էր Ալավերդիում կոմերիտմիության շրջկոմի առաջին քարտուղար, Երվանդ Հարությունյանը, որը հետագայում դարձավ Կենտկոմի դպրոցական գծով քարտուղար, Երվանդ Մելքոնյանը, որ հետագայում երկար ժամանակ աշխատեց կուսակցական ղեկավար մարմիններում և շատ ուրիշներ:

Նրանք, բոլորն էլ, որոնք առաջ էին քաշվել ստորին օղակներից, առանց բացառության, հետագայում անցան կուսակցական պատասխանատու աշխատանքի: Միայն Երվանդ Հարությունյանն էր, որ պատերազմն սկսվելուց անմիջապես մեկնեց ռազմաճակատ և Ղրիմում զոհվեց հերոսի մահով:

Կոմերիտմիության Կենտկոմում աշխատելն ինձ համար շատ դժվար էր, քանի որ գյուղական շրջանից առաջադրվելով, բոլորովին անծանոթ էի կենտրոնական ապարատի աշխատանքին, մանավանդ, երբ Կենտկոմի առաջին քարտուղար Սուրեն Միքայելյանն իր անտանելի բնավորությամբ բոլորի հետ կռվում էր: Առանձնապես շատ վատ էր նրա հարաբերությունները քաղկոմի առաջին քարտուղար ընտրված Կենտկոմի բյուրոյի անդամ Դարչո Հովհաննիսյանի հետ: Շատ հաճախ բյուրոյի նիստերը վեր էին ածվում բացարձակ կռվի, մի խոսքով, անհանգիստ, ոչ գործարար մթնոլորտ էր:

Միքայելյանի հարցը մի անգամ քննարկել էր ՀԼԿԵՄ Լենինականի քաղաքային կոմիտեի սկզբնական կազմակերպությունը և հակառակ կանոնադրության՝ որոշել էր հեռացնել կոմերիտմիությունից: Այս կապակցությամբ կուսակցության կենտրոնական կոմիտեի քարտուղար Գ. Հարությունովը կոմերիտմիության Կենտկոմի բոլոր քարտուղարներին հրավիրեց իր մոտ, և շատ հակիրճ բացատրեց, որ նրանք այդ իրավունքը չեն ունեցել, դա կանոնադրության կոպիտ խախտում է, պետք է գնալ Լենինական, հրավիրել կազմակերպության ժողով:

Բանից պարզվեց, որ մյուս բոլոր քարտուղարները Շիրակից էին և չէին ցանկանում գնալ Լենինական: Ուստի ուղարկեցին ինձ:

Պետք է լինեիք այդ ժողովում և լսեիք, թե ինչպիսի հայհոյանքներ էին հնչում Միքայելյանի հասցեին: Ավելին, կոմերիտմիության քաղկոմի սկզբնական կազմակերպության ժողովը պահանջում էր նրան հեռացնել աշխատանքից:

Կուսակցության քաղաքային կոմիտեի օգնությամբ (այն ժամանակ քաղկոմի առաջին քարտուղար էր աշխատում Ա. Իսրայելյանը) կոմերիտական կազմակերպության որոշումը փոխվեց: Դրանից հետո պետք էր հրավիրել Լենինականի կոմերիտական կազմակերպության ակտիվի նիստ և հայտնել այդ որոշման մասին:

Գ. Հարությունովը լավ գիտեր, որ մթնոլորտը շատ էր չիկացած, ակտիվը կարող էր հակառակ որոշում ընդունել: Լենինական եկավ կուսակցության կենտրոնական կոմիտեի երկրորդ քարտուղար Խաչիկ Հակոբջանյանը: Այս համակրելի, փորձված մարդը մեծ դժվարությամբ ակտիվին համոզեց չեղյալ հայտարարել կոմիտեի որոշումը:

* * *

Լենինականից Հակոբջանյանի հետ միասին վերադարձանք իր արտասահմանյան մեքենայով: Այդ վերջին ճանապարհորդությունն էր նրա հետ, պատերազմի հենց առաջին օրը մեկնեց բանակ որպես դիվիզիայի կոմիսար և այնտեղ էլ զոհվեց հերոսաբար:

Խաչիկ Հակոբջանյանը պրակտիկ աշխատանքի մեծ փորձ

ուներ և հիանալի գիտեր մեր հանրապետությունը: Գ. Հարությունովին այդպիսի մարդ էր պետք, քանի որ նա մարդկանց և հանրապետությունն ընդհանրապես չէր ճանաչում: Շատ անհասկանալի պատճառով հենց մի փոքր ամրապնդեց իր դիրքերը, Գ. Հարությունովը բաժանվեց Հակոբջանյանից, և նրա փոխարեն ընտրեցին Աղասի Սարգսյանին, որը գրագետ ինժեներ էր, բայց կուսակցական և պետական աշխատանքի փորձ չուներ:

Ես արդեն աշխատում էի կոմերիտմիության Կենտկոմի առաջին քարտուղար, իսկ Սուրեն Միքայելյանին առաջ էին քաշել, աշխատում էր Կենտկոմի կուսակցական օրգանների բաժնի վարիչ:

Ա. Սարգսյանը, որպես երկրորդ քարտուղար, զբաղվում էր կոմերիտական հարցերով: Շատ հաճախ կուսակցության Կենտկոմի բյուրոյում քննարկվում էր կոմերիտմիությանը վերաբերող հարցեր: Որպես կանոն՝ որոշման նախագիծը նախօրոք կարդում էր Սարգսյանը: Սկզբնական շրջանում ինչպիսի նախագիծ էլ ներկայացնեինք, Սարգսյանին դուր չէր գալիս և վերադարձնում էր վերամշակման, գրեթե առանց դիտողության: Մենք՝ երիտասարդներս, օրերով չարչարվում էինք, նորը կազմում, ներկայացնում: Միայն այդ ժամանակ նա հավանություն էր տալիս, որից հետո ներկայացնում էինք Կենտկոմի բյուրոյին քննարկելու:

Մի անգամ շատ չփոթված Սարգսյանի մոտից վերադառնալիս, հանդիպեցի Սոչինսկուն, որն այդ ժամանակ աշխատում էր Կենտկոմում էներգետիկայի գծով քարտուղար: Նա հարցրեց, թե ինչո՞ւ եմ հուզված: Պատասխանեցի, թե ինչքան որոշման նախագիծ եմ ներկայացնում, Սարգսյանը հետ է վերադարձնում: Ահա, այսօր էլ այս պարզ հարցը նորից չընդունեց և հանձնարարեց կրկին մշակել:

Նախագիծը վերցրեց Սոչինսկին և ասաց. «Վաղը կգաս կվերցնես, ես նրա ցավը լավ գիտեմ, քեզ կօգնեմ»:

Մյուս օրը վաղ առավոտյան զանգեցի Սոչինսկուն և խնդրեցի որոշման նախագիծը: Նա շատ ուրախ ասաց, որ պատրաստ

է նախագիծը, կարող եմ վերցնել: Որոշման նախագիծը վերցրեցի կարդացի, ոչ մի փոփոխություն չէր կատարել: Շատ հուզվեցի և ասացի.

–Այսօր քննարկվելու է, այլևս ժամանակ չի մնում, ես ե՞րբ հասցնեմ վերամշակել:

Նա ծիծաղեց և ասաց. «Տա՛ր, ցույց տուր, ասա խմբագրել ենք»: Որոշման նախագիծը ձեռքիս՝ ներս մտա Սարգսյանի մոտ, մեկնեցի նրան և շփոթված սպասում էի, թե ինչ կասի: Նա ուշադիր կարդաց և ասաց. «Այ, հիմա հասկանում եմ, որ լավ եք աշխատել»: Դրանից հետո միշտ այդպես էինք վարվում և ընկեր Սարգսյանի հավանությունն էինք ստանում:

Պրակտիկ աշխատանքից կտրված՝ ամբողջ օրը որոշման նախագիծ էր կարդում: Սարգսյանը հետագայում դարձավ Մինիստրների Խորհրդի նախագահ, որի մասին հետո կգրեմ:

Աղասի Սարգսյանի մասին խոսելիս անհրաժեշտ է նշել, որ նա կուսակցական ղեկավար աշխատանքի փորձ չուներ և Հակոբջանյանից հետո նրան դժվար էր աշխատել կուսակցության կենտրոնական Կոմիտեում: Նա լավ մասնագետ էր, միշտ աշխատել էր գյուղջրաշինարարության բնագավառում, մի խոսքով, ավելի լավ էր փոխադրեին տնտեսական աշխատանքի: Դրան նպաստեց և արագացրեց Սուրեն Միքայելյանի «հեղինակավոր» բամբասանքը:

Միքայելյանն այդ ժամանակ աշխատում էր կուսակցական մարմինների բաժնի վարիչ: Աղասի Սարգսյանին նշանակեցին Հայաստանի Մինիստրների խորհրդի նախագահ, իսկ նրա փոխարեն երկրորդ քարտուղար ընտրվեց Սուրեն Միքայելյանը՝ հասնելով իր նպատակին: Կադրերի նկատմամբ ունեցած իր ոչ օբյեկտիվ վերաբերմունքով Միքայելյանը շատ մարդկանց դժբախտացրեց:

Ստալինյան քաղաքականության հետևանքով 1937 թվականի արհավիրքներից հետո երկիրը, ինչ-որ չափով դադար ապրեց: Սկսվեց էկոնոմիկայի որոշ չափով նորմալ զարգացումը: Դրա շնորհիվ էլ 1939 թվականին երկրում գյուղատնտեսական մթերքների առատություն էր ստեղծվել: Դա միակ տարին ե-

ղավ, երբ չուկայում կար ամեն ինչ, բայց ցավով պիտի նշեմ, որ դա երկար չտևեց: 1940 թվականին սկսվեց ֆիննական պատերազմը, որի հետևանքով կյանքը նորից դժվարացավ, մանավանդ, երբ սկսվեց Հայրենական մեծ պատերազմը:

* * *

Աղասի Խանջյանի մահից հետո գրեթե մեկ տարի կուսակցության Կենտկոմի առաջին քարտուղար աշխատեց Ամատունին: Այս կարճ ժամանակում մեծ մղձավանջ ապրեց հանրապետությունը:

Անհիմն մեղադրանքներով բանտարկվեցին ու աքսորվեցին քաղաքական, տնտեսական շատ աշխատողներ, գրողներ: Գ. Հարությունովի գալուց հետո գրեթե ոչ ոք չի տուժել, ընդհակառակը, Հայաստանի կուսակցության համագումարում Հարությունովին մեղադրում էին «թշնամիների» դեմ թույլ պայքարի համար:

1938 թվականն «Պրավդա» թերթի թղթակից Կոտյարովի գլխավորությամբ մի խումբ երիտասարդներ Գ. Հարությունովին սարսափելի մեղադրանք էին առաջադրում «թշնամիների» դեմ թույլ պայքարի համար: Այդ երիտասարդներից էին Մացո Նահապետյանը, սպորտկոմիտեի նախագահ Միսակը և շատ ուրիշներ:

Այդ մարդիկ հետագայում շատ զղջացին իրենց անվայել արարքի համար, բայց ամեն ինչ անցած էր:

Պետք է խոստովանել, որ երբ Գ.Հարությունովն ընտրվեց Կուսակցության Կենտկոմի առաջին քարտուղար, հանրապետությունում պատրաստի կարող կադրեր չկային: Նոր ղեկավարությունը ստիպված էր կուսակցական և խորհրդային աշխատանքի համար առաջ քաշել բոլորովին նոր մարդկանց՝ արտադրությունից, ստորին օղակներից:

Հայտնի է, որ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ ընտրվեց Մացակ Պապյանը, որն աշխատում էր Ստեփանավանի կոլտնտեսության նախագահ: Նա այդ ժամանակ պարգևատրվել էր Լենինի շքանշանով: Նրա ղեկավարած

կոլտնտեսությունն առաջավորներից մեկն էր: Պապյանը բնական խելքի տեր, իսկապես, կատարյալ, առաջադեմ գյուղացի էր: Գյուղական բնակչությունը նրան շատ հարգում էր, մեծ համակրանք էր վայելում: Պապյանի թերությունն այն էր, որ չունենալով համապատասխան կրթություն՝ չկարողացավ բարձրանալ նախագահի մակարդակին, իսկ դա նրա մեղքը չէր, այլ դժբախտությունը:

Արդարացի չի լինի, եթե չասենք, որ պատերազմի տարիներին Մ.Պապյանը գյուղատնտեսության համար շատ գործ արեց՝ պրակտիկ կերպով կապված լինելով գյուղացիների հետ:

Մի անգամ Պապյանը գնում է Մարտունի և մասնակցում Զոլաքարի կոլտնտեսականների ժողովին: Կոլտնտեսականները բողոքում են, ասելով, որ իրենց նախագահը թալանչի է, վատ է աշխատում: Ժողովի վերջում ելույթ է ունենում Պապյանը և խիստ քննադատում Պետիկ կոչված նախագահին և ասում. «Որտեղ Պետիկ, այնտեղ չկա հացահատիկ»: Ժողովում նախագահ Պետիկին հանում են աշխատանքից: Հաջորդ օրը Պապյանը մեկնում է Եղեգնաձոր: Ճանապարհին հանդիպում է Պետիկին: Վերջինս կանգնեցնում է ավտոմեքենան և խնդրում է միասին մի կտոր հաց ուտել: Պապյանը չի մերժում: Երբ նստում են հացի, Պապյանը հարցնում է.

–Այս միսը որտեղի՞ց է:

–Կոլխոզից,– պատասխանում է Պետիկը:

– Իսկ ինչպե՞ս ես ձևակերպելու:

Պետիկը պատասխանում է.

–Կգրենք, որ գայլերը կերել են:

Պապյանը սարսափելի զայրանում է, հայհոյում , թողնում է սեղանը և հեռանում՝ ասելով.

–Ես քեզ համար գայլ եմ, ի՞նչ է:

Մինիստրների խորհրդի նախագահի պաշտոնում առաջ քաշվեց Ալավերդու պղնձաքիմիական գործարանի երիտասարդ տնօրեն Արամ Փիրուզյանը: Արամի աշխատանքի մասին կարելի է միայն գովեստի խոսքեր ասել: Նա տաղանդավոր կազմակերպիչ էր և հանրապետության համար շատ բան է արել

կառուցելու, նորը ստեղծելու գործում: Փիրուզյանն առանձնապես լավ աշխատեց սննդարդյունաբերության մինիստրի պարտականությունները կատարելիս:

Փիրուզյանի ժամանակ էր, որ կառուցվեցին պահածոների և մի շարք գինու գործարաններ: Սննդարդյունաբերության ձեռնարկություններն ապահովեց նորագույն սարքավորումներով, իհարկե, այն ժամանակվա մակարդակով:

Սննդարդյունաբերության ձեռնարկությունների կառուցման և սարքավորումների վերազինման գործում շատ մեծ օգնություն էր ցույց տալիս Անաստաս Միկոյանը: Փիրուզյանը աշխատեց նաև առևտրի մինիստր, Հունաստանում ՍՍՀՄ արտաքին առևտրի մինիստրության ներկայացուցիչ: Նա ամենուրեք պատվով կատարեց իր պարտականությունները:

* * *

Գրիգոր Հարությունովի՝ Հայաստան գալուց հետո քաղաքական հողի վրա գրեթե բանտարկություններ չեն եղել:

Կենտկոմի նոր ղեկավարությունը իր հիմնական խնդիրը համարեց Հանրապետության տնտեսական, մշակութային և սոցիալական զարգացումը: Հանրապետությունում, հատկապես, Երևանում ստեղծվեցին նոր ձեռնարկություններ, ինչպես Պոլիվինիլացետատ և մի շարք այլ գործարաններ:

Կոլտնտեսություններն ամրապնդվեցին տնտեսապես: 1939 թվականը մեր Հանրապետության կոլտնտեսային պատմության մեջ ամենահաջող տարին էր: Ճիշտ է, դեռ հնարավորությունները քիչ էին արտադրական օբյեկտների կառուցման համար, բայց, այնուամենայնիվ, նյութական վիճակը կոլտնտեսություններում կարելի էր բավարար համարել:

Նոր թափով սկսեցին զարգանալ արվեստը, մշակույթը, գրականությունը: Ստեղծվեցին բազմաթիվ գրքեր մեր ժողովրդի պատմության վերաբերյալ: Տպագրվեցին բազմաթիվ գեղարվեստական գրքեր: Մի խոսքով, այդ տարիներին մեր գրականությունը նոր վերելք ապրեց:

Կարելի է վստահությամբ ասել, որ նախապատերազմյան

գրականության զարգացումը լավ նախապայմաններ ստեղծեց հետպատերազմյան գեղարվեստական գրականության զարգացման համար: Շատ կարևոր էր նախապատերազմյան շրջանի գրականության զարգացումը նաև այն պատճառով, որ 30-ական թվականներին ստալինյան քաղաքականության հետևանքով բանտարկվել, իսկ մի մասն էլ գնդակահարվել էին Չարենցի և Բակունցի հետ միասին:

Հիանալի զարգացում ապրեց երաժշտությունը Արամ Խաչատրյանի, Ազատ Մանուկյանի, Կարո Զաքարյանի, Թաթուլ Ալթունյանի, Աչոտ Սաթյանի և շատ ուրիշների ստեղծագործություններով:

1939 թվականին ավարտվեց օպերային թատրոնի շենքի մի մասի կառուցումը: Ժողտան թատրոնի բաժնի շինարարության ավարտը նոր թափ հաղորդեց սովետահայ երաժշտությանը: Հենց այդ տարին էր, որ հայ արվեստի տասնօրյակը նշվեց Մոսկվայի տարբեր թատրոնների բեմահարթակներում: Արվեստի և գրականության տասնօրյակը մի նոր աստիճանի բարձրացրեց մեր մշակույթի զարգացումը:

Հիրավի, Մոսկվայի հանդիսատեսը հիացած էր մեր արտիստների, գրողների ու նկարիչների գործերով և արվեստով: Մեծ հաջողություն ունեցան Հայկանուշ Դանիելյանը, Տաթևիկ Սազանդարյանը, Շարա Տալյանը, Պավել Լիսիցյանը: Դասական բեմադրությունների կողքին իր արժանավույն գովասանքին և համակրանքին արժանացավ Արամ Խաչատուրյանի «Գայանե» բալետը:

Օպերային շենքի կառուցման ավարտը նոր խթան հանդիսացավ օպերային արվեստի զարգացման համար: Բեմ բարձրացան, մինչ այդ հայտնի դասական ներկայացուցիչների հետ միասին Զուխաջյանի «Արշակ Երկրորդը», «Լեբլեբիջին»՝ հանճարեղ կոմպոզիտորի, փաստորեն, կորած գործերը: Զուխաջյանի ստեղծագործությունները բեմ բարձրացրեցին Արմեն Գուլակյանը և մեծ երաժիշտ ու դիրիժոր Միքայել Թավրիզյանը, Զարեքյանը և ուրիշները:

Մոսկվայում իր փայլուն հաջողությունն ունեցավ դրամա-

տիկ թատրոնի տաղանդավոր կոլեկտիվը: Իմ կարծիքով, մեր դրամատիկական թատրոնի պատմության մեջ ոչ մի անգամ միանգամից այդքան փայլուն աստղեր չեն եղել՝ համախմբվելով մեկ բեմում. Հրաչյա Ներսիսյան, Վահրամ Փափազյան, Վաղարշ Վաղարշյան, Ավետ Ավետիսյան, Գուրգեն Ջանիբեկյան, Գուրգեն Գաբրիելյան, Դավիթ Մալյան, Արուս Ոսկանյան, Օլգա Գուլազյան, Թաթիկ Սարյան, Հասմիկ, Մանվել Մանվելյան, ռեժիսորներ Արմեն Գուլակյան, Վարդան Աճեմյան և շատ այլ երիտասարդներ: Այսպիսի համաստեղությամբ ներկայացված բեմադրությունները հիացմունք էին առաջացնում:

Պակաս հաջողություններ չունեցան կերպարվեստի ներկայացուցիչները Մարտիրոս Սարյանի գլխավորությամբ:

Տասնօրյակի նախօրեին Գ. Հարությունովը Երևան էր հրավիրել Մոսկվայի մեծ թատրոնի գլխավոր դիրիժոր Ալեքսանդր Մելիք-Փաշաևին, Վախտանգովի անվան թատրոնի տնօրեն Ռուբեն Սիմոնովին: Օպերային թատրոնում նայում, լսում էին ներկայացումները: Այն ժամանակ ես աշխատում էի կոմերիտմիության Կենտկոմի առաջին քարտուղար և ի պաշտոնե պետք է ներկա լինեի այդ փակ ներկայացումներին:

Մի շարք ներկայացումներ լսելուց հետո թատրոնի տնօրենի աշխատասենյակում խորհրդակցության էին հավաքվել թատրոնի դերասանները, մշակույթի բնագավառի շատ գործիչներ: Մասնագետների ելույթից հետո Գ. Հարությունովը դիմեց Մելիք Փաշաևին և Ռուբեն Սիմոնովին, խնդրեց նրանց հեղինակավոր կարծիքը: Լավ հիշում եմ Մելիք-Փաշաևի կարծիքը, որն ասաց. «Թավրիզյանի առկայության պայմաններում ես ասելիք չունեմ» և շատ բարձր գնահատեց ներկայացումների բեմադրությունը: Սովետական Հայաստանի մշակույթը շատ ծաղկուն տարիներ էր ապրում, երբ վրա հասավ Հայրենական պատերազմը:

Պատերազմը կասեցրեց էկոնոմիկայի, մշակույթի և սոցիալական զարգացումը:

Ամեն ինչ ռազմաճակատի համար: Ամեն ինչ հաղթանակի համար:

Մինչև պատերազմի սկսվելը մեծ ծավալի աշխատանք սկսվեց ջրաշինարարության ասպարեզում: Սկսվեցին Ներքին Զանգվի, Արզնի-Շամիրամի, Թալինի ջրանցքների շինարարական աշխատանքները: Այս ջրանցքների շինարարության ավարտը գրեթե կրկնապատկեց ոռոգելի տարածությունները: Իսկ Հայաստանի համար, թե ինչպիսի խոշոր նշանակություն ունի ջուրը, հայտնի է բոլորին: Առանց ջրի կյանք չկա: Այս ջրանցքների շինարարության ավարտից հետո ոռոգելի տարածություններում կազմակերպվեցին նոր սովխոզներ և կոլտնտեսություններ:

Հարյուրավոր կոլտնտեսություններ ջուր ստացան և արագ թափով ամրապնդեցին տնտեսությունները, մարդիկ սկսեցին լավ ապրել, նկատելիորեն բարձրացավ գյուղացիների կենսամակարդակը, նյութական վիճակը բարելավվեց: Գյուղացին գետնափոր և չթրծված աղյուսի տների փոխարեն կառուցեց նոր բնակարաններ՝ բոլոր հարմարություններով: Ցավալի է, որ պատերազմը խափանեց ամեն ինչ:

1938-1940 թվականներին կառուցվեցին մի շարք փոքր ջրանցքներ: Կառուցվեցին և շահագործման հանձնվեցին Սիսիանի, Սպիտակի, Լոռվա-Օձունի ջրանցքները, որոնք շատ կարևոր նշանակություն ունեցան այդ շրջանների համար: Կենտկոմի ղեկավարությունը, անձամբ նրա քարտուղար Գրիգոր Հարությունովը, լավ հասկանալով ջրաշինարարության նշանակությունը հանրապետության գյուղատնտեսության զարգացման գործում, ամեն ինչ անում էր ջրանցքների և ջրամբարների կառուցման համար:

Ցավով պետք է նշեմ, որ խոշոր ջրանցքների շինարարությունը դադարեցվեց Հայրենական պատերազմի սկսման պատճառով: Միայն պատերազմի ավարտից հետո մեծ թափով սկսվեց Արզնի-Շամիրամի, Թալինի, Ներքին Զանգվի և մյուս ջրանցքների շինարարությունը: Ջրաշինարարական մեծ ծավալի աշխատանք կատարվեց 50-ական թվականներին, առանձնապես ջրամբարների կառուցման պատվավոր գործում:

Պատերազմը կանգնեցրեց սկսված բոլոր աշխատանքները, ստեղծվեց նոր իրադրություն՝ ամեն ինչ ռազմաճակատի հա-

մար: Հենց առաջին օրերից զինվորագրվեցին գրեթե բոլորը: 18-ից 40-տարեկանները զորակոչվեցին զինվորական կոմիսարիատներ, կազմավորվեցին մի շարք դիվիզիաներ ու գնդեր: 1941-1942 թթ., երբ Թշնամին Կովկասյան լեռնաշղթան էր պաշարել և մի շարք տեղերում արդեն լեռների արահետներով անցել էր դեպի Սև ծով, հայերից կազմվեցին ազգային զորամասեր:

Պատերազմը վերջանալուց հետո պարզվեց, որ տոկոսային հարաբերությամբ հայերն ավելի շատ կորուստներ էին տվել, քան մյուս ժողովուրդներն ու ազգերը: Հայրենական պատերազմում յուրաքանչյուր հայ կռվում էր քաջաբար՝ համարելով, որ կռվում է Հայաստանի հողի ու ջրի համար:

Պատահական չէ, որ այս փոքր ազգը պատերազմի ժամանակ երկրին տվեց այդքան մարշալներ և ծովակալներ, գեներալներ ու այլ հրամանատարներ: Մենք կարող ենք ասել, որ յուրաքանչյուր հայ հպարտանում է իր քաջարի զավակներով՝ Սովետական Միության հերոսներով:

Ռազմաճակատ մեկնեցին կուսակցական, խորհրդային և կոմերիտական աշխատողները, հանրապետության ակտիվի լավագույն մասը: Ռադիոյով հաղորդումը պատերազմը սկսելու մասին՝ ցնցեց բոլորին, յուրաքանչյուրն աշխատում էր ավելի շուտ հայտնել իր ցանկությունը՝ ռազմաճակատ մեկնելու համար:

Պայծառ կիրակի օր էր 1941 հունիսի 22-ը: Ժողովուրդը չէր հավատում այդպիսի ուխտադրուժ հարձակմանը: Ավելին, մենք դաստիարակվել էինք այն ոգով, որ եթե պատերազմ լինի, մենք պետք է կռվենք Թշնամու հողում, որ մեր օդանավերը թռչում են ամենից արագ ու բարձր, որ մեր զորքերը զինված են ժամանակակից տեխնիկայով: Մի խոսքով, մեր երկիրն անպարտելի է:

Բոլոր զորակոչվածներն այդ տրամադրությամբ էին գնում զինկոմիսարիատ: Ցավով պետք է նշել, որ պատերազմի սկսման հենց առաջին օրից երևաց, որ Սովետական Միությունը պատրաստ չէ պատերազմելու, որ զինծառայության կանչված միլիոնավոր մարդիկ առանց զենքի են: Բոլորին հնարավոր չէր զենքով ապահովել:

Թիկունքում, հիրավի, հերոսական աշխատանքի լծվեցին կանայք, ծերերը և պատանիները:

* * *

Պատերազմը սկսվելիս անմիջապես կոմերիտմիության կենտկոմի քարտուղարներով, դիմումները ձեռքներիս, մտանք Գրիգոր Հարությունովի աշխատասենյակ և խնդրեցինք ինձ և Երվանդ Հարությունյանին ուղարկել բանակ: Հարությունովը կարդաց իմ դիմումը և ասաց. «Մենք ձեր տեղը գիտենք. գնացեք աշխատեք, երբ հարկ լինի, կկանչենք»:

1941 թ. օգոստոսի վերջերին ռազմաճակատ մեկնեց Երևան քաղաքի Կիրովյան շրջկոմի առաջին քարտուղար Հայկ Մելքոնյանը: Կուսակցության Կիրովյան շրջկոմի առաջին քարտուղար ընտրեցին ինձ՝ ժամանակավորապես չազատելով ՀԼԿԵՄ Կենտկոմի առաջին քարտուղարի պարտականություններից:

Կուսակցության շրջկոմի հին աշխատողները պատմում էին այն մասին, թե ինչպես 1937 թ. դեպքերի ժամանակ Համկ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոն ուղարկում էր իր ներկայացուցիչներին հանրապետություններ, մարզեր և երկրամասեր՝ անվստահելի անձանց պատժելու համար: Ականատեսներից մեկը պատմել է այն մասին, որ երբ Ստալինին ներկայացրել են այն մարդկանց ցուցակը, որոնք պետք է մեկնեն տեղեր կուսակցության քաղաքականությունն իրագործելու, այն է՝ «թշնամիներին» հայտնաբերելու և պատժելու, Ստալինն ասել է. «Հայաստան մարդ ուղարկելու անհրաժեշտություն չկա, նրանք իրենք իրենց կբերեն»: Սարսափելի գնահատական է, բայց, ցավոք, այդպես էլ եղել է: Բոլորից շատ տուժեցին մեր կուսակցական, խորհրդային կադրերը և մտավորականությունը:

Գրեթե այն ժամանակվա՝ 1936-1937 թվականների կուսակցության շրջկոմի առաջին քարտուղարներից ոչ մեկը չազատվեց այդ սարսափելի պատժից: Բոլորին բանտարկեցին, իսկ մեծ մասին գնդակահարեցին, որոնց թվում Նահապետ Կուրղինյանին, Գավրոշ Քալանթարյանին, Մարտունու շրջկոմի քարտուղար Կարո Գրիգորյանին, Հրանտ Ղարիբյանին և շատ ուրիշների:

Կոմերիտական աշխատանքից փոխադրվելը շատ հաճելի էր, մանավանդ այդ տարիներին: Կոմերիտական աշխատանքն անառարկայական աշխատանք էր և կոմերիտական ղեկավար աշխատողի հիմնական պարտականությունը ճառ ասելն էր ու տեղեկություններ հավաքելը: Մի խոսքով, վերացական աշխատանք էր:

Այն աշխատողները, որոնք կոմերիտմիության բնագավառում երկար էին աշխատում, նրանք պրակտիկ աշխատանքի համար գրեթե պիտանի չէին: Իրականում կոմերիտական աշխատանքում մարդկանց, կադրերին պետք էր պահել մասսաների հետ աշխատելու փորձ ձեռք բերելու համար, որից հետո պիտի փոխադրեին պրակտիկ կուսակցական-տնտեսական աշխատանքի: Այսպիսի կադրերը, իրոք, շատ պրակտիկ և ստեղծագործ աշխատանք էին կատարում: Ահա թե ինչու եմ ասում՝ ես շատ ուրախացա, երբ ինձ կուսակցական աշխատանքի փոխադրեցին:

Երբ աշխատող ձեռքերը մեկնել էին ռազմաճակատ, Թիկունքի ամբողջ աշխատանքը մնացել էր կանանց, աղջիկների, պատանիների հույսին: Պարզ է, որ, մանավանդ, առաջին ամիսներին, արտադրությունը գրեթե կանգ էր առել: Այդ ամենը գնալով չտկվեց և մեր հարգելի կանայք շատ շուտ տիրապետեցին մասնագիտություններին և հասան ոչ միայն նախապատերազմյան մակարդակին, այլև շատ տեղերում գերազանցեցին հինը:

Զարմանալի հայրենասիրություն ցուցաբերեց մեր ժողովուրդը բանակին օգնելու գործում: Մեր փոքր հանրապետությունն ավելի շատ տաք շոր և այլ իրեր նվիրեց ռազմաճակատին, քան մի շարք ավելի մեծ հանրապետություններ:

1943 թվականին, երբ դրությունը ռազմաճակատում ավելի ծայրահեղ էր դարձել, երբ թշնամին արդեն Կովկասյան լեռնաշղթան էր անցնում, մեր հանրապետության տարեց մարդիկ նույնպես մեկնեցին ռազմաճակատ:

Այդ օրերին գունավոր մետաղների կարիքն ավելի էր շատացել, մենք ստիպված էինք տներից պղնձյա կաթսաներ և այլ

իրեր հավաքել: Կուսակցության Կիրովյան շրջկոմի 3-րդ քարտուղար Սոս Գրիգորյանն էր զբաղվում այդ հարցերով:

Գրիգորյանը մտնում է համալսարանի դասախոս, պրոֆեսոր Շահինյանի բնակարանը և խնդրում, թե ինչով կարող են օգնել: Մայրը մերժում է, ասելով, որ իրենք ոչինչ չունեն, այսինքն՝ պղնձյա իրեր չունեն:

Հարևանները հայտնում են, որ նա ունի մի շատ մեծ կաթսա՝ բերված Արևմտյան Հայաստանից: Ստիպված, ես դիմեցի ընկեր Շահինյանին, որին շատ էի հարգում որպես լավ դասախոսի: Շահինյանը մի փոքրիկ երկտող գրեց մորը, որպեսզի նա հանձնի կաթսան: Մայրն ասաց. «Եթե հաղթանակը կախված է այս կաթսայից, ես նվիրում եմ»:

Մեր ժողովուրդն իր վերջին իրն էլ էր նվիրում հաղթանակի համար: Գյուղերում և քաղաքներում մարդիկ սովից մահանում էին, բայց ռազմաճակատ էին ուղարկում իրենց վերջին միջոցները: Դա իսկապես սխրանք էր, հերոսություն:

* * *

Հանրապետության արդյունաբերությունն աշխատում էր շատ լարված և իր բոլոր պլաններն ու առաջադրանքները կատարում ու գերակատարում էր: Պատերազմի ժամանակ ֆաշիստների կողմից Ուկրաինան գրավելուց հետո կարբիդ արտադրում էր միայն մեր հանրապետությունը: Սևանի կասակադի էլեկտրակայաններից աշխատում էր միայն Քանաքեռի ՀԷԿ-ը, այն էլ ոչ լրիվ կարողությամբ: Հենց այդ պատճառով էլ կրկնակի, նույնիսկ եռակի անգամ ավելի շատ ջուր էին բաց թողնում Սևանա լճից, որպեսզի ավելի շատ կարբիդ արտադրվեր Կիրովականում և Երևանում:

Անհրաժեշտ է ասել, որ պատերազմի ավարտից հետո էլ, երբ երկրում դեռ կարբիդի արտադրության այլ օբյեկտներ չէին կառուցվել, Սևանա լճից ջրի ծախսն ավելի շատացավ, հատկապես, երբ կառուցվեց Սևանի ստորգետնյա էլեկտրակայանը: 1949-1950 թվականներին տարեկան լճից բաց էր թողնվում մեկ միլիարդ յոթ հարյուր հազար խորանարդ մետր ջուր: Դա սար-

սափելի էր, բայց ուրիշ ելք չկար: Այսպիսին էր Սևանի ինտերնացիոնալ պարտքը:

Պատերազմի առաջին օրերին և ամիսներին մեր բանակի անհաջողությունները շատ ծանր իրավիճակ էին ստեղծել ռազմաճակատում և թիկունքում: Մինչև պատերազմի սկսելը սովետական կառավարության ղեկավարները վստահեցնում էին, որ եթե պատերազմը սկսվի, ապա այն անպայման տեղի է կունենա միայն թշնամու հողում: Այս համոզմունքը վատ ազդեցություն ունեցավ: Հետևաբար հասկանալի է, թե ինչպիսի ապրումների մեջ էինք գտնվում, երբ երկու ամսից հետո թշնամին գրավեց Կիևը, իսկ մի քանի ամիս անց թշնամու զորքերն արդեն գտնվում էին Մոսկվայի մատույցներում:

Հաղթանակը, իհարկե, շատ փոխեց ժողովրդի տրամադրությունը, բայց անժխտելի է այն փաստը, որ հաղթող կողմն ավելի շատ զոհեր է տվել ու տնտեսապես քայքայվել, քան պարտվողը:

* * *

1944 թ. աշնանը Հանրապետության մի շարք կուսակցական աշխատողների հետ միասին ինձ ևս ուղարկեցին Մոսկվա՝ կուսակցության ղեկավար աշխատողների բարձրագույն դպրոցում սովորելու: Այդ ժամանակ ես աշխատում էի կուսակցության Կոտայքի շրջկոմի առաջին քարտուղար:

(Այստեղ ձեռագիրն ընդհատվում է. **խմբ.**):

* * *

Հայրենական պատերազմից հետո լուրջ իրադարձություններ տեղի ունեցան մեր Հանարապետության քաղաքական կյանքում: Պատերազմի ժամանակ մեր ժողովրդի քաջարի զավակներն իրենց սխրագործություններով բարձրացրել էին հայ ազգի հեղինակությունը: Կասկածից վեր է, որ այս պայմաններում դրականորեն էր գնահատվում և խոսվում Հայաստանի կուսակցական կազմակերպությունների և նրա ղեկավարության, կուսակցության Կենտկոմի փորձված ղեկավար Գ. Հա-

բությունովի մասին: Հայաստանի կուսակցության Կենտկոմի ղեկավարության հեղինակությունն էլ ավելի բարձրացավ, երբ նրա ջանքերով պատերազմից հետո սկսվեց զանգվածային հայրենադարձությունը:

Պետք է պատկերացնել, որ պատերազմի հետևանքով քայքայված երկրում ընդունեցինք մոտ 100 հազար մարդ: Իրոք, դա մեծ հայրենասիրություն էր:

* * *

Աշխատանքի այս խաղաղ ժամանակը երկար չտևեց: 1947 թվականից սկսվեցին մասսայական բողոքների և դիմումների հոսքը ԽՄԿԿ Կենտկոմ՝ Հանրապետության ղեկավարության դեմ: Դիմում-բողոք գրողներին միացավ այն ժամանակվա Մինիստրների խորհրդի նախագահ Աղասի Սարգսյանը, որը Գ. Հարությունովին մեղադրում էր մայրենի լեզվին չտիրապետելու և մասսաներից կտրված լինելու մեջ: Ճիշտ է, Սարգսյանին ուղարկեցին կուսակցական բարձրագույն դպրոցում սովորելու, բայց դրանից հետո էլ բողոքները չդադարեցին:

1947 թվականից սկսվեցին համատարած ստուգումներ ԽՄԿԿ Կենտկոմի կողմից: Աղասի Սարգսյանի դիմումը մեր կազմակերպությունը չի քննարկել, կուսակցության Կենտկոմի քարտուղարությունը քննարկեց և որոշեց նրան ուղարկել սովորելու: ԽՄԿԿ Կենտկոմն ուղարկեց մի հանձնաժողով, որը ղեկավարում էր Կենտկոմի տեսուչ Լարիոնովը, որի իրավունքները հավասար էին բաժնի վարիչի իրավունքներին: Հանձնաժողովի մեջ էին նաև Ֆեդոսեևը, հետագայում ակադեմիայի փոխպրեզիդենտ և ուրիշներ:

Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտկոմում հրավիրվեց խորհրդակցություն, որին մասնակցում էին բյուրոյի անդամ-թեկնածուները և հանձնաժողովի անդամները: Այս խորհրդակցությունում Լարիոնովը շատ վիրավորական տոնով ասաց, որ Լենինականի տեքստիլ կոմբինատը պլանը կատարում է 20%-ով, իսկ մենք աշխատասենյակից դուրս չենք գալիս:

Այդ օրը մի բրիգադ ուղարկվեց Լենինականի տեքստիլ կոմ-

բինատ: Բրիգադի ղեկավար նշանակեցին ինձ, անդամներ՝ կոմբինատի նախկին տնօրեն Առաքելովին, կուսակցության Կենտկոմի էլեկտրաֆիկացման գծով քարտուղար Սոչինսկուն և կոմերիտմիության Կենտկոմի քարտուղար Գրիգոր Հովհաննիսյանին:

Մեզ հանձնարարվեց Լենինականից չվերադառնալ մինչև տեքստիլ կոմբինատն իր պլանները չկատարի: Մինչ մեր գնալը, կոմբինատը օրական արտադրում էր 20 հազար մետր բյազ, իսկ պլանը՝ 70 հազար էր: Խնդիրը ծայրահեղ դժվար էր՝ կարճ ժամանակում հասնել պլանի կատարմանը, բայց ուրիշ ելք չկար: Մեր բրիգադը հենց առաջին օրվանից կուսակցության Լենինականի քաղկոմի հետ (այդ ժամանակ քաղկոմի քարտուղարն էր Անդրանիկ Սավոյանը), հրատապ միջոցներ ձեռնարկեցինք. առաջին հերթին գողությունը կանխել, ապա վերացնել մեքենաների պարապուրդը: Գործվածքային արտադրամասում կազմակերպվեց առանձին բաժին, որտեղ աշխատում էին կալանավորները, որովհետև պակաս էր բանվորների քանակը:

Առաջին տասն օրում նկատելի դարձավ, որ հնարավոր է կոմբինատի վիճակը բարելավել և հասցնել պլանների կատարմանը մեկից երկու ամսվա ընթացքում: Այդպես էլ ստացվեց, երկու ամսից հետո կոմբինատը սկսեց օրական արտադրել 70-75 հազար մետր գործվածք:

ԽՄԿԿ հանձնաժողովը Երևանում և հանրապետության մյուս շրջաններում ու քաղաքներում սարդի նման ցանցը գցել և փնտրում էր քաղաքական լուրջ սխալներ, որոնք թույլ էին տվել հանրապետության ղեկավարները:

Լարիոնովի և հանձնաժողովի խորհրդատուն ու թույնով սնողը ՊԱԿ-ի մինիստր Կրիմյանն էր: Վերջինս Լարիոնովի հետ աշխատել էր մի ուրիշ մարզում: Մի խոսքով, նրանք իրար լավ էին ճանաչում և հասկանում:

Չեմ կարող առանձին երկու խոսքով չասել այդ երկու անձնավորությունների՝ Լարիոնովի և Կրիմյանի մասին: Լարիոնովը Երևան գալուց անմիջապես խորհրդակցությունից հետո հրավիրեց Հայաստանի կուսակցության Կենտկոմի բյուրո՝ հանձնա-

ժողովի բոլոր անդամների մասնակցությամբ: Այստեղ աշխատանքի բաժանում կատարվեց, թե ով որ շրջանի գործերը պետք է ստուգի: Ինքը՝ Լարիոնովը, ընտրեց Երևան քաղաքը և Արտաշատի շրջանը: Գ. Հարությունովն ասաց, որ Արտաշատ կգնա նաև ինքը, բայց Լարիոնովն առարկեց, ասելով. «Դուք մնացեք Երևանում»:

Հաջորդ օրը Գ. Հարությունովը կանչեց և հանձնարարեց, որ Լարիոնովի հետ ես գնամ: Օրը չեմ հիշում. առավոտ վաղ Կրիմյանի մեքենան եկավ իմ ետևից, և մենք երեքով մեկնեցինք Արտաշատ:

Արտաշատում եղանք երկու կոլտնտեսությունում՝ Վերին Արտաշատում ու Յուվայում: Երկուսն էլ առաջավոր տնտեսություն էին: Տնտեսությունների ղեկավարները պատմեցին իրենց հաջողությունների մասին, Յուվայի կոլտնտեսության նախագահ Խաչատրյանին, որը Սոցիալիստական աշխատանքի հերոս էր, Լարիոնովը հարցրեց.

-Այդ աստղդ ի՞նչի համար ես ստացել:

Խաչատրյանը բացատրեց. «Տնտեսությունն այդ տարի ունեցել է բարձր ցուցանիշներ, որի համար էլ ինձ պարգևատրել են»

-Մի խոսքով,- ասաց Լարիոնովը,- դուք պարգևատրվել եք հանրային տնտեսության հաջողությունների համար, բայց ոչ անհատական տնտեսությունների սեփականության աճի համար, իսկ մասնավոր սեփականությունը պակաս արագությամբ չի աճում: Կովերի գլխաքանակը մասնավորների մոտ ավելի շատ է, քան կոլտնտեսությունում:

Խաչատրյանն առանց վարանելու պատասխանեց, որ ինքը դրա համար շատ ուրախ է, գյուղում սկսվել է անհատական շինարարություն, որովհետև միջոցներ ունեն:

Լարիոնովը չարացած դեմքով, բայց շատ զուսպ ասաց.

-Այս նախագահի գլխում մասնավոր սեփականությունն է գերակշռում, հանրային սեփականությունը կարծես եղած-չեղած մեկ է:

Թարգմանում եմ ես, բայց Խաչատրյանը լրիվ հասկանում էր

ու բարձր ձայնով ասաց. «Ընկեր Լարիոնով, դուք սխալվում եք, ես աշխատում եմ, որ սեփականության երկու ձևերն էլ հավասար զարգանան»:

Լարիոնովը, որը խրուշչովյան հայտնի դրույթներից մեկի մշակողն ու կիրառողն էր, երկար ժամանակ չէր հանգստանում Խաչատրյանի վերաբերմունքից:

Հայտնի է, որ Լարիոնովը հետագայում ազատվեց Ռյազանի մարզկոմի առաջին քարտուղարի պաշտոնից, որտեղ նա հակաժողովրդական քաղաքականություն էր իրականացնում: Նա ամեն տարի տալիս էր 25-30 տոկոս խոշոր եղջերավորների գլխաքանակի աճ ի հաշիվ կոլտնտեսականների և խոշոր տնտեսությունների բանվորների սեփականության: Մի քանի տարուց հետո, երբ պարզվեց, որ Ռյազանի մարզի բնակիչները սովի են մատնվել հենց այդ քաղաքականության հետևանքով, Լարիոնովն ինքնասպան եղավ:

Մինիստր Կրիմյանի մասին կարելի է ասել, որ իսկական ժողովրդի դահիճ էր: Ստալինի մահից հետո նրան դատապարտեցին գնդակահարության:

Հանձնաժողովը մեկ ամսից ավելի ստուգումներ կատարելուց հետո կուսակցության Կենտկոմում շատ մակերեսորեն զեկուցեց, որ հանրապետության էկոնոմիկան հետ է մնում, նացիոնալիստական տարրերը պատերազմից հետո աշխուժացել են և կադրային քաղաքականության մեջ թույլ են տրվել լուրջ սխալներ:

Զեկուցագիրը չքննարկվեց, հաղորդեցին, որ այն կքննարկվի ԽՄԿԿ Կենտկոմում:

ԽՄԿԿ Կենտկոմի քարտուղարության նիստում քննարկեցին Լարիոնովի հանձնաժողովի ստուգման արդյունքները՝ Գ. Հարությունովի մասնակցությամբ: Ստուգող հանձնաժողովը որոշման նախագիծ էր կազմել Գ. Հարությունովին Կենտկոմի առաջին քարտուղարի պարտականություններից ազատելու մասին: ԽՄԿԿ քարտուղարության նիստում, որը վարում էր Մալենկովը, պաշտպանում է Գ. Հարությունովին, և որոշում է ընդունվում ամրապնդել Հայաստանի կուսակցության Կենտկոմի ղեկավար կադրերը:

Այդ որոշումից հետո 1947 թվականին Հայաստան ուղարկվեցին մի շարք ղեկավար կադրեր, այդ թվում կուսակցության Կենտկոմի երկրորդ քարտուղար նշանակվեց Հ. Վ. Պողոսովը, որը մինչ այդ աշխատել էր Մոսկվայում՝ որպես շրջկոմի առաջին քարտուղար: Ի դեպ, պետք է ասել, որ նրան կուսակցության Կենտկոմում խոստացել էին, որ որոշ ժամանակից հետո կդառնա Հայաստանի Կենտկոմի առաջին քարտուղար՝ Գ. Հարությունովի փոխարեն:

Առաջին իսկ օրերից Պողոսովը իրեն պահում էր որպես առաջին քարտուղար, շատ դեպքերում նույնիսկ չէր հարցնում առաջին քարտուղարի կարծիքը: Եվ ցավն այն էր, որ միշտ սխալվում էր, որովհետև անծանոթ էր հանրապետությանը և հատկապես կադրերին և մարդկանց:

Այդ բոլորը շատ լավ նկատում էր Գ. Հարությունովը, բայց միշտ ցուցաբերում էր անտարբերություն և կարծես չէր նկատում: Պողոսովն աշխատեց մի քանի տարի, ըստ իրեն անում էր ամեն ինչ, որպեսզի հեղինակություն ձեռք բերի կուսակցական ակտիվի և աշխատավորության շրջանում:

Գ. Հարությունովը քաջ գիտակցում էր, որ Պողոսովը ոչ միայն լայն հեղինակություն չի վայելում, այլև քանի գնում, կորցնում է հեղինակությունը: Այս պայմաններում Գ. Հարությունովը շատ որոշակիորեն սկսեց դիտողություններ անել Պողոսովին, որը շատ ցավոտ էր ընդունում:

Առաջին դիտողությունը, որ արվեց, հետևյալ հարցի շուրջն էր: Պողոսովի պահանջով (Մոսկվայի օրինակով) արտադրական ձեռնարկությունները, հատկապես սննդարդյունաբերական ձեռնարկությունները, իրացրած արտադրանքի տեսակները բերում էին իր մոտ: Այս բանը նկատելով՝ Գ. Հարությունովը լուրջ դիտողություն արեց և պահանջեց Պողոսովի աշխատասենյակում հավաքված ապրանքները չտապ վերադարձնել: Պողոսովը դա շատ ցավոտ ընդունեց, ասելով, որ Մոսկվայում իր աշխատած ժամանակ բոլոր շրջկոմները վարվել են այդպես: Այնուամենայնիվ Գ. Հարությունովի պահանջը կատարեց և բոլոր իրերը վերադարձրեց ձեռնարկություններին:

Պետք է ասել, որ Պողոսովը կուսակցական աշխատանքի փորձ ուներ և սկզբնական շրջանում լավ էր աշխատում, քանի դեռ հույս ուներ, որ Գ. Հարությունովը պետք է գնա, և ինքը, ըստ խոստումների, կդառնա Կենտկոմի առաջին քարտուղար:

Տարիներ անցան: Պողոսովը, երբ հույսը կտրեց, սկսեց խմել, ինչպես ինքն էր ասում, մոսկվացիների պես: Իր վարքագծով նա հեղինակազրկվեց: Մի անգամ էլ Ջերմուկում էր լավ խմել և այն ժամանակվա սոցապ մինիստր Զորապետ Գալստյանի ու Միկոյանի կուսշրջկոմի առաջին քարտուղար Արտաշես Բաբայանի հետ մեքենայով վերադառնում են Երևան:

Ճանապարհին, առջևից ընթացող մի պատահական մեքենա ճանապարհը չի զիջում կառավարական մեքենային: Պողոսովը սարսափելի զայրանում է, վերցնում է Բաբայանի ատրճանակը և հենց Արտաշատ քաղաքում սկսում է կրակել առջևից գնացող մեքենայի վրա: Բարեբախտաբար չի դիպչում մեքենային: Սակայն ամբողջ քաղաքը ոտքի է կանգնում: Այս բոլորը, երբ հայտնի դարձավ, Կենտկոմի բյուրոյում քննարկվեց Պողոսովի հարցը: Նրան հայտարարվեց խիստ նկատողություն և ազատվեց աշխատանքից:

Հայաստանի կոմկուսի Կենտկոմի բյուրոյի որոշումը Մոսկվայում հաստատեցին և Պողոսովին նկատողության փոխարեն հեռացրին կուսակցությունից: Այս հարցում ակտիվություն ցուցաբերեց այն ժամանակվա Մոսկվայի քաղկոմի քարտուղար Ֆուրցևան, որը Պողոսովին ճանաչում էր դեռ Մոսկվայում աշխատած ժամանակվանից:

* * *

1947 թ. հայտնի որոշումից հետո Պողոսովի հետ միասին Հայաստանի կոմկուսի քարտուղար ուղարկեցին Կարոս Բարիգյանին, որը մինչ այդ աշխատել էր Վրաստանում՝ որպես հանրապետության կոմունալ տնտեսության մինիստր: Բարիգյանի թեկնածությունն առաջարկել էր ինքը՝ Գ. Հարությունովը: Ստացվեց այնպես, որ երեք քարտուղարներն էլ հայերեն չէին խոսում, աշխատավորների հետ դժվարանում էին հաղորդակցվել, մանավանդ գյուղական շրջաններում:

Ամենամեծ սխալն այն էր, որ Բարիգյանին հանձնարարվեց գյուղատնտեսության բնագավառի ղեկավարությունը, որից բառիս լայն իմաստով նա ոչինչ չէր հասկանում: Երևի դա էր պատճառը, որ նա հետաքրքրվում էր մշակույթի հարցերով, բայց ոչ գյուղատնտեսության: Այդ պատճառով էլ շատ կարճ ժամանակում ճանաչեցին նոր քարտուղարին և սկսեցին ծաղրել:

Գ. Հարությունովը դա շատ շուտ նկատեց և սկսեց օգնել, բայց արդյունքը շատ քիչ էր: Երևի հենց դա էր պատճառը, որ Բարիգյանն այլևս գյուղ չէր գնում: Իրոք, նրա համար շատ ծանր էր, երբ հայերեն չէր կարողանում խոսել, իսկ գյուղացիներից շատերը ռուսերեն չէին իմանում: Կուսակցության կենտրոնական կոմիտեում, այսպես կոչված, կադրերի ամրապնդումից հետո էլ աշխատանքը չբարելավվեց, հակառակը, որքան գնում, այնքան վատանում էր մթնոլորտը:

Պետք է նշել, որ 1937 թվից հետո հանրապետություն որքան կադրեր են բերել դրսից, բացի մեկից՝ Ղուկասովից, որը շուտ մահացավ և Հրանտ Մարտիրոսյանից, գրեթե բոլորն էլ իրենց չեն արդարացրել, չեն կարողացել ընկալել մեր հանրապետության դժվարությունները: Սովոր լինելով այլ պայմանների աշխատանքին, նրանք պրակտիկորեն շարքից շուտ դուրս են եկել:

Քառասնական թվականների վերջում և հիսունական թվականների սկզբին կուսակցության Կենտկոմի կողմից կատարված ստուգումների արդյունքներն ինչքան էլ քննարկվեցին Մոսկվայում, այնուամենայնիվ, մեր հանրապետությունում, եթե կարելի է այդպես ասել, «աջ» ուժերը ոչ մի առիթ բաց չէին թողնում, որպեսզի ելույթներ ունենան Գ. Հարությունովի ղեկավարության դեմ:

Այդ առիթներից մեկը հանդիսացավ 1953 թ. Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտկոմի հուլիսյան պլենումը, որտեղ քննարկվում էր ժողովրդի թշնամի Բերիայի հակակուսակցական, հակապետական հանցավոր գործողությունների մասին ԽՄԿԿ Կենտկոմի որոշումը:

Շատ սուր ելույթ ունեցավ Շմավոն Առուշանյանը՝ զրպարտելով Գ. Հարությունովին ժողովրդի թշնամի Բերիայի հետ ունեցած կապերի համար: Այս պլենումում ելույթ ունեցած ավելի քան քսան ընկերներ դատապարտեցին Առուշանյանին, նրա ոչ ճիշտ, փաստորեն, զրպարտիչ ելույթի համար:

Գ. Հարությունովն ասում էր, որ իր կապերը Բերիայի հետ եղել են որպես կուսակցության քաղբյուրոյի անդամի և երկրի ղեկավարներից մեկի, այն էլ ոչ չարքային, երբ Ստալինը, փաստորեն, Բերիային էր հանձնել երկրի ղեկավարությունը:

-Սա դեռ չի նշանակում,- ասաց Հարությունովը,- որ ես նրա դրածոն եմ և ունեմ առավել մոտ հարաբերություններ:

Այնուհետև նա ասաց, որ ինքը Բերիայի հետ չատ մոտ լինել չէր կարող, քանի որ երեսնական թվականներին դահիճ Բերիան իր մեծ եղբորը բանտարկել տվեց և այնուհետև գնդակահարեց: Նույնը կատարեց կուսակցական ակտիվ աշխատող կնոջ եղբայր Գեուրկովի (Գևորկով) նկատմամբ:

-Այս բոլորից հետո երբ ինձ մեղադրում են Բերիայի հետ իմ քաղաքական կապերի համար, ես դա չեմ ընդունում և համարում եմ զրպարտություն,- միշտ կրկնում էր Գ. Հարությունովը:

Ստալինի թաղման պատվիրակության մեջ էի նաև ես, երբ Կարմիր հրապարակում ելույթ էր ունենում Լ. Բերիան: Գ. Հարությունովը տասն անգամ կրկնեց. «Աստված ոչ անի, եթե նա կանգնի ղեկավարության գլուխը, երկիրը կտանի դեպի ֆաշիզմ»:

Խոսք չկա, որ Բերիան Գ. Հարությունովի բարեկամներին, կուսակցական ակտիվ աշխատողներին գնդակահարելուց հետո իր, այսպես կոչված, օբեկտիվությունը ցույց տալու համար Հարությունովին առաջ քաշեց՝ (նշանակելով Թբիլիսիի կուսակցության քաղկոմի երկրորդ քարտուղարի պաշտոնում), ապա երաշխավորեց Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար: Այս բոլորը ահավոր քաղաքականություն էր, բայց ինչ կարող ես անել, երբ այդպիսին է իրականությունը:

Հուլիսյան պլենումի արդյունքները զեկուցվել էր Ն. Ս. Խրուշչովին, որ այն ժամանակ վարում էր Կենտկոմի քարտուղարի պարտականությունները: Խրուշչովն ասում էր. «Այն, ինչ իրեն է վերաբերում, նա երբեք չի մոռանում»: Իսկապես, Խրուշչովը չէր մոռացել Գ. Հարությունովի հոդվածը «Պրավդա» թերթում՝ ագրոքաղաքների խրուշչովյան պլանների դեմ:

Կենտրոնական կոմիտեի ներկայացուցիչ Տուրկինի զեկուցումից հետո Խրուշչովը Մոսկվա հրավիրեց Հայաստանի կուսակցության Կենտկոմի մի շարք աշխատողների, այդ թվում Գրիգոր Հարությունովին, Բերսաբե Գրիգորյանին, Հրաչյա Մարգարյանին, Սուրեն Թովմասյանին և ինձ:

Կուսակցության Կենտկոմի պատասխանատու աշխատողները զեկուցեցին քարտուղարությանը Հայաստանում տիրող իրադրության մասին: Առաջինը խոսք տրվեց Հայաստանից ժամանած ընկերներին: Չեմ հիշում առաջինը, թե երկրորդը ելույթ ունեցավ Հրաչիկ Մարգարյանը և մեղադրեց Հարությունովին, որ նա նացիոնալիստներին չի պատժում և իրը օրինակ բերում է Սամսոն Ղազարյանին, որը ժողովում հայտարարել էր, որ ինքն ատում է թուրքերին, քանի որ սպանել են իր հարազատներին: Իսկ Հարությունովը նրան չպատժեց և նույնիսկ հարցը չքննարկեց:

Այդ ժամանակ Խրուշչովը միջամտեց և ասաց. «Եթե որևէ մեկը սպանի իմ հարազատներին, ես նրանց տանել չեմ կարողանա, սա ի՞նչ նացիոնալիզմ է, չեմ հասկանում»:

Մարգարյանը լռեց և այլևս խոսք չասաց:

Կուսակցության Կենտկոմի քարտուղարության նիստում Խրուշչովի ելույթը մի ահավոր զրպարտանք և սպառնալիք էր: Բանը հասավ այնտեղ, որ Հարությունովը միջամտեց Խրուշչովին և ասաց.

-Դուք կարող եք ինձ հեռացնել նույնիսկ կուսակցությունից, բայց անձնական վիրավորանք հասցնելու իրավունք չունեք, խնդրում եմ ձեր որոշումը կայացրեք, բայց իմ ինքնասիրությունը չչոչափեք:

Պետք է խոստովանեմ, որ Խրուշչովը չատ մեղմացավ և ասաց, թե հարցը կուղարկվի Հայաստանի կուսակցական կազմակերպության քննարկման:

Այս նիստից հետո հանձնարարվեց կուսկենտկոմի կուսակցական օրգանների բաժնի վարիչ Զուրաևին մեկնել Հայաստան, քննարկել Հարությունովի հարցը:

Այս բոլորից հետո Զուրաևը մեծ խմբով եկավ Հայաստան՝ նախապատրաստելու Հայաստանի Կենտկոմի պլենումը, որից հետո պետք է գար Կենտկոմի քարտուղար Պոսպելովը:

Զուրաևի Հայաստանում գտնվելու օրերին մի ահավոր դրություն էր ստեղծվել: Կենտկոմի գրեթե բոլոր անդամներին նա մեկ-մեկ կանչում էր, ահաբեկում և հանձնարարում բացասաբար խոսել Հարությունովի մասին: Մի խոսքով, նա կատարում էր Խրուշչովի հանձնարարությունը՝ օգտագործելով բոլոր միջոցներն ու պետական մարմինները:

Ցավով պետք է նշեմ, որ Զուրաևը լսում և խորհրդակցում էր Զարոբյանի հետ: Նրանք Խարկովում աշխատել էին միասին: Եվ մի անգամ չէ, որ այդ Զուրաև կոչվածը Թովմասյանի և իմ ներկայությամբ հայտարարել է. «Ձեզ մոտ միակ ինտերնացիոնալիստը Զարոբյանն է, դուք բոլորդ նացիոնալիզմի ոգով եք դաստիարակված»:

Այն պլենումը, որը տեղի ունեցավ 1953 թ. նոյեմբերի 28-29-ին, մեր կուսակցության պատմության մեջ մի աննախադեպ երևույթ էր: Գրեթե բոլոր ելույթները նախօրոք գրված ու համաձայնեցված էին Զուրաևի՝ այդ սևհարյուրակային ճիվաղի հետ: Հենց այդ պատճառով էլ երբ կարդում ես պլենումի սղագրությունը, երևում է, թե պլենումում ելույթները ինչ սինխրոնիկ են ընթացել:

Սկզբում Պոսպելովը տրամադրված էր շատ մեղմ ելույթ ունենալ, բայց այստեղ ևս Զուրաևն իր սև գործը կատարեց: Նա մինչև Պոսպելովի ելույթը, նրան հայտնում է, որ ինքը Խրուշչովի հետ կապվել է և վերջինս խնդրել է հայտնել Պոսպելովին, որպեսզի նա մերկացնի «բերիականին»: Ինչպիսի ստորություն:

Իրականում նա Խրուշչովի հետ չէր կապվել և այդպիսի հանձնարարություն չէր ստացել: Պատահական չէ, որ նույն Խրուշչովի ղեկավարած քաղբյուրոն Գ. Հարությունովին կուսակցությունից չհեռացրեց, այլ հայտարարեց նկատողություն:

Այս բոլորից հետո ընթերցողին թող չթվա, որ Գրիգոր Հարությունովը սխալներ չի ունեցել, որ իր աշխատանքի տարիների ընթացքում բացթողումներ չի ունեցել և այլն:

Գրիգոր Հարությունովի գրեթե բոլոր սխալները և բացթողումները տվյալ ժամանակի ստեղծված ոչ ճիշտ ղեկավարության արդյունքն էին: Շատ հաճախ, ինչ կատարում էր կենտրոնական ղեկավարությունը, տեղերում բառացիորեն կրկնում էին հանրապետությունների ղեկավարները: Դա օգտակար էր հանրապետությանը, թե ոչ, նշանակություն չուներ: Ամեն ինչ արվում էր, որ Մոսկվան իրենցից դժգոհ չլինի:

Հայտնի է, որ Հայաստանում հողերի 94 տոկոսը համայնացված էր, պատկանում էր կոլտնտեսություններին ու սովխոզներին, անհատական օգտագործման համար մնացել էր 6 տոկոս: Իսկ, ասենք, Հարևան Վրաստանում վարելահողերի 25 տոկոսն էր միայն համայնացված:

Այսպիսի պայմաններում ստացվում էր, որ Վրաստանն ավելի քիչ հարկ էր վճարում պետությանը, քան Հայաստանը, քանի որ հանրային հողերից Հայաստանն ավելի շատ եկամուտ է ստանում, քան Վրաստանը: Այսպիսով մինչև 1956 թ. Հայաստանի կոլտնտեսություններն ու սովխոզները մեկ հեկտարից երկու անգամ ավելի հարկ էին վճարում, քան մյուս հանրապետություններից շատերը: Այս բանը շատ քաջ հայտնի էր Գ. Հարությունովին և հանրապետության մյուս ղեկավարներին, բայց անհարմար էին զգում այս հարցը բարձրացնել Միության կառավարության առջև: Միայն այս պատճառով մեր խեղճ գյուղացիները տասնյակ տարիներ տուժեցին:

Այս հարցը բարձրացվեց հանրապետության ղեկավարների կողմից միայն 1955 թ., և երկար քննարկելուց հետո Միության կառավարությունը կարգավորեց:

Պետք է ասել, որ 1953 թ. նոյեմբերյան պլենումը մեր կուսակցության պատմության մեջ մնաց որպես մի սև էջ: Այդ պլենումում գրեթե ոչ մեկն իր ցանկությամբ կամ համոզմունքով չխոսեց, իսկ մի մասն էլ խոսում էր գյուղական առածի սկզբունքով. «Ծառը, որ ընկնում է, կացնավորը շատանում է»: Շատերն

էլ խոսում էին այն մասին, որ Հարությունովը 17 տարիների ընթացքում հայերեն չսովորեց: Իհարկե, դա նրա մեղքը չէր, այլ նրա դժբախտությունը: Նա ծնվել էր Վրաստանի Թելավ քաղաքում, որտեղ հայկական դպրոց չի եղել, սովորել են վրացերեն և ռուսերեն:

1954 թվականից հետո երկրում սկսվեց էկոնոմիկայի վերականգնման և վերակառուցման մեծ աշխատանք: Հայաստանում էկոնոմիկայի զարգացումը սկսվեց նոր 7-ամյակի պլաններով:

(Այստեղ առաջին գրքի ձեռագիրն ընդհատվում է.- **խմբ.**):

ԵՐԿՐՈՐԴ ԳԻՐՔ

Հայտնի է, որ պատերազմը ծանր վիճակի հասցրեց երկրի էկոնոմիկան: Ինչպես գիտեք, արդյունաբերությունը վերակառուցվել էր ռազմաճակատի պահանջների բավարարման համար:

Պատերազմի ավարտից, սովետական բանակի, մեր երկրի ժողովուրդների հաղթանակից հետո պահանջվում էր ոչ միայն վերականգնել պատերազմի հետևանքով ավերված, այլև ամբողջ արդյունաբերությունը վերակառուցել նոր պահանջմունքների բավարարման համար:

Մեր հանրապետության արդյունաբերությունը պատերազմի ահեղ տարիներին որոշ զարգացում ապրեց: Այդ տարիներին կառուցվեցին 30 նոր ձեռնարկություններ, հարյուրից ավելի արդյունաբերական տեղամասեր, յուրացվեց չուրջ 300 նոր արտադրատեսակ, որոնց թվում ռազմական և այլն:

Կասկածից վեր է, որ պատերազմի հետևանքները վերացնելու համար պահանջվում էր շատ ավելի միջոցներ՝ էներգիա, մարդկային նոր զոհաբերություններ՝ խաղաղ աշխատանքի ճակատում: Կուսակցությունը խնդիր դրեց ամենաարագ կարգով վերականգնել պատերազմից տուժած քաղաքները, մարզերը, հանրապետությունները և այդ նպատակով էլ կապիտալ միջոցների մեծ մասը 4-րդ հնգամյակում տրամադրվեց այդ շրջանների վերականգնմանը:

Այսօր արդեն կարելի է ասել, թե որքան ճիշտ և իմաստուն քաղաքականություն էր տարվում երեք քաղաքներում՝ Երևանում, Լենինականում, Կիրովականում: Արդյունաբերության զարգացումն այդ քաղաքներում, բնականաբար, բնակչության հոսք առաջացրեց գյուղերից և այլ բնակավայրերից հատկապես դեպի Երևան:

Հասկանալի է, որ այդ գործընթացն այնքան էլ հաճելի և ցանկալի չէր: Պարզ պատկերացնելու համար ցանկանում եմ բերել մի քանի տվյալներ: Եթե 1939 թ. Երևանում բնակվում էր 198.985 մարդ, ապա 1950 թ. արդեն այդ քանակը հասել էր 301.333-ի: Լենինականում համապատասխանաբար՝ 67729-ից չուրջ 85 հազարի, Կիրովականում՝ չուրջ 18 հազարից 32 հազարի:

Արդյունաբերության արտադրության 90 տոկոսն արտադրվում էր այդ երեք քաղաքներում:

Պետք է նկատի ունենալ, որ պատերազմի հետևանքով բնակչությունը խիստ պակասել էր մեր հանրապետությունում:

Նոր պայմաններում արդյունաբերության զարգացումը պահանջում էր առհասարակ արտադրողական ուժերի ճիշտ և նպատակահարմար տեղաբաշխում:

Մեր սակավահող հանրապետության պայմաններում անհրաժեշտ էր արտադրողական ուժերը տեղաբաշխել այնպես, որպեսզի հանրապետության բոլոր շրջաններն էլ զարգանան հավասար չափով՝ նկատի ունենալով յուրաքանչյուր շրջանի բնակլիմայական պայմանները, բնական հարստությունները, աշխատող ուժի առկայությունը և մյուս անհրաժեշտ գործոնները՝ արտադրողական ուժերի ռիթմիկ զարգացման համար:

Ելնելով այս ծրագրային հիմնական խնդրից՝ Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեն, Մինիստրների խորհուրդը ձեռնարկեցին միջոցառումներ արտադրական ձեռնարկությունները տեղաբաշխել հանրապետության բոլոր շրջկենտրոններում: Դա սկիզբն էր ինչ-որ չափով կասեցնելու մեծ քաղաքներում արդյունաբերական նոր ձեռնարկությունների կառուցումը, նվազեցնելու արտադրության տեսակարար կշիռը հանրապետության ընդհանուր արտադրությունում:

Եթե 1950 թ. հանրապետության երեք քաղաքներն արտադրում էին այնքան արտադրանք, որը կազմում էր ընդհանուրի 90%-ը, ապա 1955 թվին այն կազմում էր ընդհանուր արտադրանքի 75-85%-ը: Պարզ է, որ այդ բոլորը միայն առաջին քայլերն էին այն մեծ աշխատանքի, որը պետք է իրագործվեր, կատարվեր ապագայում մեր հերոսական ժողովրդի կողմից:

* * *

Հասկանալի է, որ նոր ձեռնարկությունների կազմակերպումը հանգեցնում էր նոր բնակավայրերի, քաղաքների կառուցման ու ստեղծման: Առաջին մեծ գործը կատարվեց եղած փոքր հնարավորություններն օգտագործելու միջոցով: Սևան-Հրազդան կասկադի շինարարության ժամանակ ստեղծվեց մի քանի անբարեկարգ բանվորական բնակավայր:

Ինչպես ասացի, առաջինը Գյումուշ ՀԷԿ-ի կառուցման ժամանակ հիմնադրված Լուսավան բանվորական ավանն էր: Սևան-Հրազդան կասկադի շինարարության ժամանակ շատ բան կատարվեց երկրի էկոնոմիկան փոխելու, նրա զարգացումն արագացնելու համար: Այդ շինարարության ընթացքում որպես շինարար ու մարդ, իրեն փայլուն դրսևորեց Գ. Ն. Աղաբաբյանը: Նա, լինելով փորձված հիդրոշինարար, մեծ ջանքեր գործադրեց՝ արագացնելու կասկադի շինարարության աշխատանքները և երևի դա էր պատճառը, որ բանվորական ավանները հիմնականում կառուցվում էին ժամանակավոր բնակության համար: Հետևապես դրանք, որպես կանոն, միշտ անբարեկարգ էին լինում:

Լուսավանը մյուս բնակավայրերից ավելի մեծ էր, և ամենակարևորն է, այստեղ կառուցվում էր մեքենաների և մեխանիզմների վերանորոգման գործարան: Այս գործարանը կիսավարտ վիճակում էր, երբ Գյումուշի շինարարության աշխատանքներն ավարտվեցին: Բնական է, որ գործարանի տերը չկար, բայց այն կառուցվում էր:

Այս բանավանի բարեկարգման մասին երբ խոսք էր բացվում, շինարարության ղեկավարը, մեզ համար շատ հարգված անձնավորությունը՝ ընկեր Աղաբաբյանը միշտ պատասխանում էր, «Ես էլեկտրական եմ կառուցում, իսկ բանվորական ավանները կառուցվում են հետագայում քանդվելու նպատակով, իսկ եթե դուք ցանկանում եք երկար օգտագործել,

ապա ինքներդ բարեկարգեք»:

Այդպես էլ եղավ: Գյումուշի չինարարության ավարտից հետո կառավարությունն իր ձեռքը վերցրեց Լուսավանի բարեկարգման և կառուցման աշխատանքները:

Պետք է խոստովանել, որ շատ մեծ ջանքեր գործադրվեցին, որպեսզի այս ավանում նոր ձեռնարկություն կառուցվի: Մեր միակ նպատակն էր այստեղ չավարտված գործարանի տեղում կառուցել մի նոր գործարան, որը երկրին կտա նոր արժեքավոր արտադրանք, դրանով իսկ հնարավոր կլինի օգտագործել տեղի ազատ բանվորական ուժը, որոնք հիմնականում այստեղ բնակություն էին հաստատել ընտանիքներով և ցանկություն չունեին հեռանալու:

Առաջին ձեռնարկությունը եղավ ներտաչ հաստոցների գործարանի հիմնադրումը: Մեր խնդրանքով Երևան եկավ ԽՍՀՄ հաստոցաշինության արդյունաբերության մինիստր Ա.Ն. Կոստոուսովը, որին շատ պարտական ենք հանրապետության հաստոցաշինության բուռն զարգացման համար:

Մեր երկար բանակցություններն ու խնդրանքն այն էր, որ հանրապետությունում պատերազմից հետո առաջացել էր ծանր վիճակ, չաշխատող բնակչության թիվն ավելանում էր օրեցօր, մանավանդ, պատերազմից անմիջապես հետո, կուսակցության կենտրոնական կոմիտեի և անձամբ Ստալինի թույլտվությամբ, հայրենիք էին վերադարձել ավելի քան 100 հազար հայեր: Կասկածից վեր է, որ վերջիններիս համար ևս պետք է ստեղծվեին աշխատատեղեր:

Մեր ունեցած արդյունաբերությունը զարգացել էր էներգատար և քիչ աշխատուժ պահանջող միջոցներով, ուստի այս պայմաններում հաստոցաշինության զարգացումը բխում էր կյանքի անհրաժեշտ պայմաններից:

Այս վիճակը վերաբերում է, իհարկե, 50-ական թվականներին: Մեզ անհրաժեշտ էր, որ մինիստրը համաձայնվեր եղած արտադրական տարածությունների վրա կազմակերպել նոր ձեռնարկություններ, որոնք անմիջապես աշխատանքով կապահովեն մարդկանց:

Այդ ժամանակ հիմնադրվեցին մի քանի նոր ձեռնարկություններ, որոնց մասին կանդրադառնամ ավելի ուշ:

Այժմ Լուսավանի մասին: Կոստոուսովը համաձայնվեց այդպիսի չհարմարեցված շենքերում նոր ձեռնարկություններ կազմակերպել: Առաջնեկը Լուսավանում եղավ ներտաչ հաստոցների գործարանը: Շենքի տանիքը դեռ չկար, բաց երկնքի տակ գործարանի նոր ղեկավարներ Ավանյանը և Զաքարյանը առաջին հաստոցը թողարկեցին:

Դա կատարյալ հրաշք էր, քանի որ ոչ ոք չէր հավատում, որ այդպիսի ծանր պայմաններում, փաստորեն բաց երկնքի տակ հնարավոր է արտադրանք տալ, այն էլ Լուսավանի պայմաններում, որտեղ, բացի չինարար բանվորներից, չկային որակյալ մասնագետ կադրեր. բանվորների մեծ մասը մոտակա Բջնի, Արզական, Ալափարս և Սոլակ գյուղերից էին:

Գործարանի տնօրեն Ավանյանը Լենինգրադից էր եկել և, արտադրության մեծ փորձ ունենալով, Երևանից մասնագետներ հրավիրեց ու կոլեկտիվի ընդհանուր ջանքերով արտադրանք տվեց: Առաջին հաստոցի ստացումը շատ բան փոխեց մինիստրության ղեկավար աշխատողների մոտ: Նրանք համոզվեցին, որ մեր մարդիկ նույնիսկ այդպիսի ծանր պայմաններում ընդունակ են երկրին նման արտադրանք տալ:

Պետք է նախօրոք ասեմ, որ հաստոցաշինության արդյունաբերության զարգացման մեծ գործում իր պատվավոր տեղն ունի հանրապետության պետական ու կուսակցական շատ բարեխիղճ գործիչ Ի. Ի. Սոչինսկին:

Զմոռանամ նշել մեր պատվարժան Գարեգին Աղաբաբովին, որին շատ մոտիկից ճանաչում էի դեռ Երևանի օկրուգում աշխատելիս: Երբ առաջին անգամ Լուսավանում արտադրության կազմակերպման մասին խոսք բացվեց, ես առաջարկում էի, որ նոր կառույցները լինեն ավելի ֆունդամենտալ, կապիտալ շենքերով, Գարեգին Հարությունիչը հումորով ասում էր. «Քաղաք ես կառուցելու, ինչ է, կարո՞ղ է Լոնդոն է լինելու»:

Այս փոքր հումորը փաստում է, որ շատերը չէին հավատում, թե հնարավոր է այդպիսի վայրերում նոր քաղաքներ և մեր

մարդկանց ապրելու և ստեղծագործելու համար նորմալ պայմաններ ստեղծել:

Լուսավանի (Զարենցավանի) հետագա գործարանների ստեղծումը փոխեց ինչպես քաղաքի պատկերը, այնպես էլ մարդկանց հոգեբանությունն ու տրամադրությունը: Այստեղ այժմ գործում են շատ կարևոր ու անհրաժեշտ բազմաթիվ ձեռնարկություններ: Դրանց թվին են պատկանում ձուլարանը, գործիքաշինական գործարանը, լիզինի արտադրության գործարանը, որը, փաստորեն, երկրի առաջնեկն է:

Այժմ Լուսավանում (Զարենցավանում) բնակվում է շուրջ 20 հազար բնակիչ: Ընդհանրապես, արտադրողական ուժերի զարգացման քաղաքականության մեջ երեք քաղաքներից բացի, իր պատվավոր տեղն ունի Հրազդանի շրջանը, որն այժմ հանդիսանում է հանրապետության արդյունաբերական կենտրոններից մեկը և շատ լուրջ նշանակություն ունի մյուս շրջանների զարգացման համար:

* * *

50-ական թվականներից ի վեր, երբ գործարկվեցին Գյումուշ և Աթաբեկյան հիդրոէլեկտրակայանները, Հրազդանի շրջանի տեսակարար կշիռը շատ բարձրացավ, բայց ամենից ավելին եղավ, երբ որոշվեց Հրազդանում կառուցել լեռնաքիմիական մեծ կոմբինատ, որի համար էլ այստեղ սկսվեց Անդրկովկասի ամենախոշոր ՀԷԿ-ի և ՋԷԿ-ի շինարարությունը:

Շատ մեծ վիճաբանություններ էին գնում լեռնաքիմիական կոմբինատի կառուցման վայրի շուրջ: Այդ կոմբինատի տեղը որոշելիս ելակետը եղել է այն, որ հումքը՝ նեֆելինյան սիենիտները, գտնվում են Հրազդանի թեժ սարում և, որ ամենագլխավորն է, մեզ անհրաժեշտ էր տնտեսապես, տնտեսագիտական հաշվարկներով հիմնավորել Երևան-Ազստաֆա երկաթգծի կառուցման անհրաժեշտությունը:

Այդ երկաթգիծը մեզ համար ունի շատ կարևոր տնտեսական և ստրատեգիական նշանակություն: Մինչև Սևան երկաթգիծը կառուցվեց Սևանի կասկադի շինարարության հաշվին, իսկ

մինչև Մեղրաձոր՝ լեռնաքիմիական կոմբինատի հաշվին: Հետագայում հնարավոր եղավ Միության երկաթուղային տրանսպորտի մինիստրության միջոցներով շարունակել այդ շինարարությունը:

Քանի որ երկաթգծի մասին խոսք բացվեց, ցանկանում եմ մի քանի խոսքով անդրադառնալ նրա շինարարության պատմությանը: Ինչպես հայտնի է, Երևան-Ազստաֆա երկաթուղու շինարարությունը դեռ 30-ական թվականներից էր սկսված: Այն ժամանակ այդ կառույցը համարվեց տեղայնության դրսևորում և վնասարարություն ու կոնսերվացվեց:

Ավելին, երկաթգծի շինարարության նախաձեռնողներին՝ հանրապետության ղեկավարներ Խանջյանին և Տեր-Գաբրիելյանին քաղաքական մեծ մեղադրանք առաջադրվեց: Նրանք, փաստորեն, տուժեցին դրանից: Ահա այժմ՝ 50-ական թվականներին, հարց բարձրացվեց, բայց մեծ դժվարությամբ ընդունեցին, այդ շատ կարևոր կառույցի վերսկսման անհրաժեշտությունը:

Առաջին անգամ իմ կողմից հարց դրվեց Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ և մինիստր Կագանովիչի առջև: Պետք է խոստովանեմ, որ այդ կարևոր կառույցը, որը սկսվել էր 30-ական թվականներին՝ չաբաթօրյակների ձևով, չուներ հաստատված, հիմնավորված նախագիծ, իսկ ընդհանրապես մեր լեռնային պայմաններում հնարավոր չէր շինարարության մասին խոսք անգամ բացել:

Այնուամենայնիվ, առանց լրջորեն խորանալու, Կագանովիչը խոստացավ սկսել շինարարությունը և, որ շատ կարևոր է, ասաց, թե կարելի է մի երեք տարում կառուցել: Շատ էի ուրախացել, ես դեռ անփորձ էի, կարծում էի արդեն ամեն ինչ որոշվել է:

Երբ դուրս եկա աշխատասենյակից, Կագանովիչի օգնականներից մեկը, որի ազգանունը չեմ հիշում, ինձ հարցրեց. «Ի՞նչ ասաց»: Ես շատ մեծ ուրախությամբ նրան պատմեցի մեր զրույցի մասին: Նա շատ ուշադիր լսեց և ասաց, որ ինքը շատ լավ տեղյակ է այդ շինարարության պատմությանը, որ չունի կազմված

նախագիծ, տնտեսական հիմնավորում, որ միայն այդ աշխատանքը կպահանջի ոչ պակաս հինգ տարի, ինչպե՞ս կարելի է երեք տարում ավարտել կառուցումը:

Այդ շատ բարի մարդը մանրամասն բացատրելուց հետո խորհուրդ տվեց կապվել տրանսպորտային նախագծային ինստիտուտի և ապա մինիստրի առաջին տեղակալ ընկեր Բեչչևի հետ: Առաջին այցելությունս նախագծային ինստիտուտ Իշխանովի հետ էր: Մենք այնտեղից դուրս եկանք շատ ծանր տպավորության տակ:

Ինստիտուտի ղեկավարները, փաստորեն, հրաժարվեցին նախագծային աշխատանք կատարելուց, պատճառաբանելով, որ այդ կառույցը չունի տեխնիկատնտեսական հիմնավորում, ուստի նախագծման մասին խոսք լինել չի կարող: Ավելին, կառույցը չի ֆինանսավորվում:

Երբ ես խոստացա, որ Հայաստանի Մինիստրների սովետը ֆինանսավորումը վերցնում է իր վրա, միայն այս պայմանով մինիստրության կարգադրության առկայության դեպքում նրանք կարող են հանձնարարել Թբիլիսիի իրենց բաժանմունքին՝ կազմելու տեխնիկատնտեսական հիմնավորումը, որից հետո միայն հնարավոր է նախագծելու մասին խոսք բացել: Իմանալով այս վիճակը, խնդրեցի Բեչչևին ինձ լսել:

Զմոռանամ ասել, նախագծային ինստիտուտում կային աշխատողներ, որոնք իրենց կարծիքը հայտնել էին դեռևս 1936-1937 թվերին չինարարության աշխատանքը դադարեցնելու օգտին: Այս հանգամանքից ևս, իհարկե, ոչ բացարձակ, բայց պարզ երևում էր նրանց ոչ ցանկալի վեաբերմունքը:

Ահա այսպիսի պայմաններում եղավ մեր առաջին հանդիպումը մինիստրի առաջին տեղակալ Բեչչևի հետ: Պետք է ասել, որ Բեչչևը, ի տարբերություն Կագանովիչի, շատ ուշադիր լսեց մեզ՝ ինձ և Պետպլանի նախագահ Լևոն Խաչատրյանին, հրավիրեց նախագծային ինստիտուտի աշխատակիցներին:

Մանրամասնորեն ուսումնասիրելով, Բեչչևը խոստացավ օգնել տեխնիկական և տնտեսական հիմնավորում կազմելու գործում, բայց միաժամանակ պահանջեց կրկին անգամ զեկուցել

Կագանովիչին: Բացի դրանից, ասաց, որ իրենք կապիտալ միջոցներ չունեն, այդ գումարները պետք է տրամադրի Հայաստանի Մինիստրների խորհուրդը, որի հետ ուզած-չուզած համաձայնվեցինք:

Երկրորդ անգամ Կագանովիչի հետ հանդիպումը շատ տհաճ խոսակցության առիթ տվեց: Թե ինչ էր պատահել, մինչև հիմա էլ չեմ ուզում ենթադրություններ անել: Բայց ի տարբերություն առաջին հանդիպման, այս անգամ նա Երևան-Աղստաֆա երկաթգծի չինարարությունը համարեց անիմաստ և տնտեսապես չհիմնավորված, որ մեր հանրապետությունն ապահովված է երկաթգծով, այդ պահանջով պետք չէ շտապել: Եթե հնարավոր լինի կառուցել, ապա, ըստ նրա, պետք է սկսել Կովկասյան լեռնաշղթայի վրայով ստրատեգիական շատ կարևոր նշանակություն ունեցող ճանապարհի կառուցումը:

Դժվար է պատկերացնել իմ դրությունը. մի կողմից անսահման ուրախություն երկաթգծի չինարարության աշխատանքը սկսելու համար համաձայնություն ստանալու առիթով, մյուս կողմից երեք ամիս հետո, նույն մարդը, որն այն ժամանակ այդ հարցը որոշում էր միայն ինքը, ոչ միայն մերժեց, այլև համարեց անիմաստ և ոչ անհրաժեշտ:

Կասկածից վեր է, որ իմ ապրումներին սահման չկար, բայց չհուսահատվելով, մենք թույլտվություն վերցրեցինք ընկ. Բեչչևից՝ նախագծային ինստիտուտի Թբիլիսիի մասնաճյուղին մեր հանրապետության հաշվին պատվիրել տեխնիկատնտեսական հիմնավորումը և ապա սկսել նախագծերի կազմումը: Ավելին, մենք խոստացանք, որ հանրապետության նախագծային ինստիտուտները կօգնեն այդ աշխատանքին:

Բարեբախտաբար հետագայում Բեչչևը դարձավ մինիստր և իրերի դրությունը փոխվեց դեպի լավը:

Տեխնիկատնտեսական հիմնավորման ժամանակ հարց առաջացավ ունենալ այնպիսի արտադրանք, որը պետք է փոխադրվի հանրապետությունից դուրս, այն էլ միայն այդ երկաթգծով:

Ահա, թե ինչու լեռնաքիմիական կոմբինատը գտավ իր տե-

դը Հրազդանում: Ինչպես ասացի, այդտեղ է գտնվում հումքը, միաժամանակ տարեկան 600-800 հազար տոննա արտադրանք պետք է փոխադրվի այդ կոմբինատից: Ավելին, այստեղ էլեկտրակայանների համար պետք է դրսից բերվի հազարավոր տոննա վառելիք:

Իհարկե, երկաթգծի կառուցումն արագացնելու հիմնավորման համար պակաս նշանակություն չունեցան Իջևանի բենտոնիտային կավահողերի նոր հանքավայրի հայտնաբերումը և Իջևանում հումքի վերամշակման խոշոր գործարանի կառուցման հարցի լուծումը:

Մինչև այս վերջին պարագայի առաջացումը, արդեն մենք ունեինք տեխնիկատնտեսական հիմնավորումը և հիմնական նախագիծը: Ավելորդ չեմ համարում նշել, որ այդ նախագծի հաստատումը չափազանց մեծ դժվարությունների հանդիպեց, մանավանդ, որ մինիստրության ապարատում դեռ մնացել էին Երևան-Աղստաֆա երկաթգծի շինարարության հակառակորդները: Չպետք է մոռանալ, որ Երևան-Սևան հատվածի շինարարությունն ավարտված էր Սևան-Հրազդան կասկադի շինարարության կապակցությամբ և այդ էլեկտրակայանների նախահաշվի հաշվին:

Չեմ մոռանում Կենտկոմի առաջին քարտուղար Գ. Հարությունովի և «Հայհիդրոշին» տրեստի կառավարիչ Աղաբաբովի հետաքրքիր զրույցը, կարելի է ասել, վեճը: Գ. Հարությունովը, չափազանց շահագրգռված լինելով Երևան-Սևան ճանապարհի շինարարությամբ, պահանջում էր, որ պլանով նախատեսված միջոցներն անպայման հատկացվեն երկաթգծի շինարարությանը: Իսկ Աղաբաբովը միշտ կրկնում էր. «Ես հիդրոկայան եմ կառուցում, ոչ թե երկաթգիծ, երկաթգիծը թող կառուցեն մասնագիտացած կազմակերպությունները»:

Կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Գ. Հարությունովն իր 17 տարիների աշխատանքի ընթացքում, հիրավի, շատ բան է արել հանրապետության էկոնոմիկայի, կուլտուրայի, գիտության զարգացման գործում: Համոզված եմ, որ պատմությունը չի շրջանցի նրա աշխատած ժամանակահատվածը,

ինչպես այժմ արվում է որոշ մարդկաց կողմից: Նա իր տեղը կգտնի մեր հայրենիքի փառապանծ պատմության մեջ:

Գ. Հարությունովը պահանջում էր, որ երկաթգծի շինարարության համար հատկացված միջոցները իրացվեն ամեն տարի: Պետք է նշել, որ Աղաբաբովի աշխատանքի տարիներին երկաթգծի շինարարությունը չավարտվեց, այն ավարտվեց Սեկոյանի աշխատելու ժամանակ:

Հետագայում երկաթգիծը շատ դժվարությամբ ընդունվեց երկաթուղային ճանապարհների մինիստրության կողմից:

Այսպիսով երկաթգծի այս հատվածի և Աղստաֆա-Իջևան հատվածի շինարարության, Հրազդան-Մեղրաձոր հատվածի կառուցման ավարտը լեռնաքիմիական կոմբինատի հաշվին, հնարավորություն տվեց Երևան-Աղստաֆա շատ կարևոր երկաթուղու շինարարությունը մտցնել ընդհանուր պլանի մեջ և կառուցել:

Կասկածից վեր է, որ մեր հանրապետությունն ունի ստրատեգիական և տնտեսական շատ անհրաժեշտ երկաթուղի, որը միաժամանակ մեծապես կնպաստի այդ շրջանների ընդհանուր զարգացմանը:

...

Հրազդանը վերածվել է հանրապետության արդյունաբերության խոշոր կենտրոնի: Իհարկե, կարևորն այստեղ լեռնաքիմիական կոմբինատն է, բայց ոչ պակաս նշանակություն ունեն էլեկտրակայանները, նախատեսված մետալուրգիական գործարանի կառուցումը, որը երկրին կտա առանց դոմնային պրոցեսի բարձրորակ պողպատ՝ հանքաքարի ուղիղ վերականգնման մեթոդով:

Հաշվի առնելով, որ այս կոմբինատներն իրենց հետ կբերեն այլ ձեռնարկություններ, ապա միանգամայն հասկանալի է դառնում, թե մեկ տասնամյակ հետո ինչպիսի խոշոր արդյունաբերական հանգույց կդառնա Հրազդանը. նոր քաղաք, նոր պայմաններ ապրելու համար:

Այսպիսի արդյունաբերական կենտրոնների ստեղծումը, ինչ խոսք, իր հետ բերում է մշակույթի արագ զարգացում, բնակ-

չության նյութական և կուլտուրական մակարդակի արագ բարձրացում: Կառուցված կուլտուրայի նոր տները, հիվանդանոցները, նոր դպրոցները կարող են նախանձ առաջացնել ցանկացած երկրի բնակչի մոտ:

Եթե մեկ-երկու տասնամյակ առաջ Հրազդանի շրջանում մատների վրա կարելի էր հաշվել ինժեներներին, գյուղատնտեսական և բժշկական մասնագետներին, ապա այժմ նրանց թիվը մոտ հազարի է հասնում: Միայն Հրազդան քաղաքում 1970 թ. բարձրագույն, թերի բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցողների թիվը հասնում է չորջ հազարի:

Այս դեռատի քաղաքի մասին պատկերացում ունենալու համար կարելի է բերել միայն մի քանի թիվ: Այժմ Հրազդանի էլեկտրակայանները տարեկան արտադրում են ... էներգիա: Այս քանակությամբ էներգիայի արտադրման համար, անշուշտ, անհրաժեշտ է տեղափոխել տասնյակ հազարավոր տոննա վառելանյութ: Մի քանի տարի հետո՝ 10-րդ հնգամյակի վերջին, լեռնաքիմիական կոմբինատը կարտադրի մոտ 1,800 հազար տոննա ցեմենտ, հարյուրավոր տոննա մետասիլիկատ նատրիում, մետասիլիկատ կալցիում:

* * *

Քանի որ լեռնաքիմիական կոմբինատի արտադրանքի մասին խոսք բացվեց, ապա ընթերցողի ուշադրությունը ցանկանում եմ հրավիրել այս շատ կարևոր կառույցի վրա:

Ես քաջատեղյակ եմ, որ հատկապես մտավորականներից շատ շատերը, քիչ ծանոթ լինելով հարցի բուն էությանը, շատ են դատափետում Հրազդանի լեռնաքիմիական կոմբինատի շինարարության կապակցությամբ:

Բանն այն է, որ այս կոմբինատը, չնայած երկար ժամանակ նախագծվում էր և կառուցվում մի քանի տասնամյակ, այնուամենայնիվ, նա մնում է որպես առաջատար տեխնիկայի շատ լավ օրինակ: Մեր հանրապետությունը շատ հարուստ է նեֆելինյան սիենիտների նման ապարներով, հրաբխային չլակներով, պեռլիտներով և այլն, բայց նրանց օգտագործումը, ես կասեի, դեռ

բարբարոսաբար է կատարվում: Թող ների ընթերցողը, չգտա ուրիշ հարմար բառ դրա համար:

Դարեր շարունակ օգտագործում ենք պղնձաքարը, իսկ մի քանի տասնյակ տարի է, ինչ օգտագործում ենք մոլիբդենի հանքաքարը: Այս հանածոների ապարներն իրենց մեջ պարունակում են մեկուկես տասնյակ կարևոր հանածոներ, գունավոր հազվագյուտ մետաղներ: Ցավով պետք է նշել, որ դրանցից միայն մեկ-երկուսն են կորզվում, պղնձաքարից՝ պղինձը և որոշ չափով՝ արծաթը, մոլիբդենից՝ մոլիբդեն և պղինձ: Իսկ 10-ից ավելի շատ անհրաժեշտ մետաղներ թափոն են դառնում, կուտակվում հետագա դարերի համար:

Լեռնաքիմիական կոմբինատի տեխնոլոգիան սկզբունքորեն տարբերվում է մինչև հիմա գոյություն ունեցող հանքաքարերի մշակման տեխնոլոգիայից: Այստեղ քիմիական վերամշակման եղանակով հանքաքարի ամբողջ պարունակությունը, ինչպես ասում են, բաժանվում է և ստացվում է շատ կարևոր արտադրանք: Միայն նեֆելինյան սիենիտներից ստացվում է 10-ից ավել տեսակի շատ կարևոր արտադրանք: Պատկերացրեք, որ այս կոմպլեքս տեխնոլոգիայով ապարների և հրաբխային զանգվածների վերամշակմամբ, իրոք, ամենահարուստ երկիրը կդառնա մեր շատ սիրելի Հայաստանը:

Համոզված եմ, որ գալիք սերունդներն ավելի խելացիորեն կօգտագործեն մեր ունեցած ընդերքի հարստությունները: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ այդ տեխնոլոգիայով կարելի է ստանալ մեծ քանակությամբ ապակի՝ հատկապես օգտագործելով պեռլիտները:

Դարեր շարունակ հայ աշխատավորը տանջվել է քարքարոտ հողերի մշակման ժամանակ: Քարերը հանդիսացել են խոչընդոտ շատ բերք ստանալու կամ արոտներ ունենալու համար: Մի խոսքով, քարը եղել է մեծ դժբախտություն, ապա տեխնիկայի զարգացման պայմաններում, նոր դարում քարը դառնում է հարստության և բարիքների բազմապատկման աղբյուր: Մանավանդ նոր տեխնիկայի զարգացման պայմաններում հնարավոր կդառնա հանածոների կոմպլեքս վերամշակումը և

կկորզվեն այն բոլոր կարևոր տարրերը, որոնք պարունակվում են հանքաքարում:

Պետք է ասեմ, որ շատ-շատերը գրում և արտահայտվում են, թե մեր չինանյութերի պաշարներն անսպառ են, որ ինչքան էլ օգտագործենք, այն պրակտիկորեն չի վերջանա: Ես պետք է ասեմ, որ դա միանգամայն սխալ կարծիք է, որը միաժամանակ տեղիք է տալիս շռայլելու մեր հիանալի չինանյութերը: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ տուֆերի, բազալտների, գրանիտների, շլակների, պեղլիտների պաշարներն այնպիսին են, որ մենք մեր պլանները կազմելիս և օգտագործելիս պետք է խնայողաբար և հոգատարությամբ վերաբերվենք այդ հարստությանը:

Վերջին տասնամյակներում չինարարության ընդարձակման հետ միասին մենք անտնտեսվար, անխնա ենք վերաբերվել բնական չինանյութերի օգտագործման նկատմամբ, ուստի պետք է նոր պայմաններում հաշվի առնել այն և վերացնել այդ լուրջ թերությունը:

* * *

Սևանա լճի շուրջը գտնվող շրջանների էկոնոմիկայի զարգացմանն անչափ նպաստեց այդ շրջանների գազաֆիկացումը և հատկապես Սևան-Զոդ երկաթգծի կառուցումը:

Զոդի ոսկու ծննդավայրի հայտնաբերումը և այժմ շահագործումը ունի շատ հետաքրքիր և ուսանելի պատմություն:

Նախ երկու խոսք այդ ծննդավայրի հետազոտման մասին: Ըստ ուսումնասիրության, Զոդի ծննդավայրն ունի նախնադարյան պատմություն: Մի քանի հազար տարի առաջ մեր նախնիներն այդ հանքավայրը շահագործել են շատ ծանր, նույնիսկ կարելի է ասել անմարդկային պայմաններում: Վերջին դարերում այդ հանքավայրը մոռացվել էր և միայն 50-ական թվականներին սկսվեց նրա հետազոտման աշխատանքը: Դա կատարում էր «Վրացոսկի» հետազոտական կազմակերպությունը: Բավական միջոցներ ծախսելուց հետո հարց բարձրացվեց գունավոր մետալուրգիայի մինիստրի առջև՝ փակել, կոնսերվացնել այդ հանքավայրը, իբրև հեռանկար չունեցող ոչ արդյունավետ հան-

Սևան (վերևում) վտակաշղթա վտակներից մեկ

Անտոն և Մարիա Քոչինյաններ

Ա. Քոչինյանը հիանալի ձայն ուներ և կատարում էր Կոմիտասի մշակած երգերը

Դուստր Ժաննայի հետ

Գրիգոր Հարությունյանի հետ

Միծեռնակաբերդում
ծառատունկի ժամանակ

Ա. Քոչինյանը Ռոբերտ
Խաչատրյանի, Վլադիմիր
Ղալումյանի և Լյուդվիգ
Ղարիբջանյանի հետ

Հեյդար Ալիևի հետ
(համաձայնության չեկան)

Որոշվում է Ապարանի
ջրամբարի տեղը

Երևան-Աչտարակ տարածքը
մաքրվում է քարերից

Անաստաս Միկոյանի դիմավորումը Իջևանում

Անաստաս Միկոյանի դիմավորումը Երևանում

Անաստաս Միկոյանը ատոմակայանում

Ա. Միկոյանի հետ Ալավերդի քաղաքում

Ա. Միկոյանի հետ Գորիսում

Ա. Միկոյանի հետ Սիսիանում

Ա. Միկոյանի հետ Կոնդում

Ա. Միկոյանի հետ Ջերմուկի ձորում

Ա. Քոչինյան, Ա. Միկոյան, Բ. Մուրադյան

Ա. Միկոյանի հետ Էրեբունի ամրոցում

Ա. Միկոյանի հետ Քարահունջ գյուղում

Ա. Միկոյանի հետ Եղեգնաձորում

Միկոյանը մեկնում է Երևանից

Հայկական ՍՍՀ-ից ընտրված ՍՍՀՄ Գերագույն սովետի պատգամավորների հետ (1970 թ.)

ՍՄԿԿ 22-րդ համագումարում

ՍՍՀՄ Գերագույն սովետի նստաշրջանում

Ա. Քոչինյանը ելույթ է ունենում ՍՄԿԿ համագումարում

Հայոց ցեղասպանության զոհերի հուշարձանի բացումը



Դրվում է ատոմակայանի հիմքը

Ա. Քոչինյանի առաջադրանքով կազմված
Հյուսիսային պողոտայի նախագիծը

քավայր: Մինիստր Պյոտր Անդրոպովը համաձայնվել էր հետախույզների այդ առաջարկի հետ:

Մինիստրների սովետին օգնության համար դիմեց երկրաբանության վարչության պետ ընկեր Եգոր Հարությունովը, խնդրելով բացառության կարգով ազդել մինիստրության վրա մեկ տարի ևս ֆինանսավորել այդ ծննդավայրը և որ ամենակարևորն է, հետախուզման աշխատանքը հանձնարարել հայկական երկրաբանական վարչությանը:

Մոսկվայում եղած ժամանակ Ե. Հարությունովի հետ միասին, մինիստր Անդրոպովից խնդրեցինք հետախուզական աշխատանքը հանձնարարել մեր վարչությանը և միջոցներ տրամադրել այդ աշխատանքը վերսկսելու համար:

Պարզ է, որ աշխատանքը դադարացնելուց հետո շատ դժվար էր նորից վերսկսել: Բայց պետականորեն շատ բարձր կանգնած Անդրոպովը հավատաց, համաձայնվեց մեր երկրաբանների կարծիքի հետ ու, հարգելով իմ և Եգոր Միրզոյևիչի խնդրանքը՝ վերականգնեց Զոդի ոսկու ծննդավայրի հետախուզական աշխատանքը:

Այս ժամանակ էր, որ հետախուզման խմբի պետ նշանակվեց Սամվել Մաթևոսյանը: Անցան տարիներ, աշխատանքը ցույց տվեց, որ նախկին հետախուզողների տվյալները ճիշտ չեն եղել, որ այս հանքավայրը շատ մեծ հեռանկար ունի:

Մեր հանրապետություն այցելեցին Անդրոպովը, «ԳԿԶ» պետ Մալիշևը և ուրիշ խոշոր երկրաբան մասնագետներ: Նրանք շատ բարձր կարծիք հայտնեցին հանքավայրի մասին և միջոցների քանակն ավելացրեցին՝ հետազոտման աշխատանքն արագացնելու համար: Հետագայում պետական մարմիններում պաշարները հաստատելուց հետո հարց բարձրացվեց հանքանյութի վերամշակման ձեռնարկություն կառուցելու մասին:

Կոմբինատի նախագծման աշխատանքը հանձնարարվեց Մոսկվայի գունավոր մետաղների և ոսկու նախագծային ինստիտուտին: Նախագծային աշխատանքի ժամանակ շատ մեծ վճռառաջացավ կոմբինատի տեղի ընտրության շուրջ: Անշուշտ, նախագծողները պնդում էին, որ կոմբինատը պետք է կառուցվի

Զոդում՝ հանքավայրին մոտիկ, որը տնտեսապես ավելի հիմնավորված էր և ճիշտ: Շատ դժվար էր նման հիմնավորված առաջարկությանը դեմ դուրս գալ կամ տնտեսական այնպիսի հիմնավորում գտնել, որը մրցունակ լինի Զոդի տեղամասի հետ:

Երբ վերջնականապես մշակվեց գործարանի տեխնոլոգիան, կառուցվեց փորձնական գործարանը, այդ ժամանակ հայտնի դարձավ, որ հանքաքարի վերամշակման ժամանակ օգտագործվելու է ցիանկալցի նյութ, որը, ինչպես հայտնի է, շատ թունավոր է և երկար ժամանակ պաշտպանում է իր թունավոր հատկությունը:

Այս դեպքում հարկ եղավ ուսումնասիրել, թե ինչպիսի ազդեցություն կարող է ունենալ Սևանի ջրերի վրա, եթե գործարանը կառուցվի Զոդում: Մասնագետների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ թույնը կարող է աղտոտել Սևանա լճի ջրերը, որ մեծ վտանգ է սպառնում, մի խոսքով, մեծ ռիսկ է այդտեղ կոմբինատի կառուցումը: Այսպիսի պայմաններում, համարձակությունը, ռիսկը շատ լավ բան են, բայց քանի որ խոսքը վերաբերում էր Սևանի ջրերի մաքրությանը, ապա ուրիշ որոշում լինել չէր կարող, քան կոմբինատի չինարարության փոխադրումն այլ տեղ:

Ավելորդ չեմ համարում ընդգծել, մեր հանրապետությունում, բացի Զոդից, ոսկու պաշարներ կան շատ այլ վայրերում՝ Մեղրիում, Լոռի-Փամբակում, Հանքավանում, Զանգեզուրում և այլն: Ուրեմն, գործարանը պետք է կառուցվեր այնպիսի վայրում, որ հետագայում հնարավոր լիներ օգտագործել մյուս հանքավայրերը ևս, երկրորդ, այնպիսի տեղում, որ թափոնները վնաս չհասցնեն երկրին:

Այդպիսի տեղ ընտրվեց Արարատը, որը շատ հարմար է և համապատասխանում է կոմբինատի և մեր հանրապետության պահանջներին: Կոմբինատի նախագծումը Զոդից Արարատ տեղափոխելու գործը շատ դժվար էր, մանավանդ տնտեսապես շատ դժվար էր հիմնավորել, բայց մեզ օգնություն ցույց տվեց նախագծային ինստիտուտի տնօրեն Գ. Մ. Լեզգինցևը, որը շատ զարգացած մարդ էր և հրաշալի երկրաբան, միաժամանակ լավ

գրող, սովետական գրողների միության անդամ էր:

Ընկ. Լեզգինցևը պաշտպանեց մեր կարծիքը: Ելնելով Սևանի շահերից՝ ամեն ինչ արեցինք և ՍՍՀՄ կառավարությունը նոր որոշում կայացրեց կոմբինատի չինարարության տեղի վերաբերյալ: Ընդունվեց Արարատի տեղամասը: Այս դեպքում հարց առաջացավ հանքաքարի տեղափոխման մասին:

Բոլոր հաշվարկները ցույց էին տալիս, որ հանքաքարի տեղափոխման միակ օգտավետ միջոցը երկաթուղին է, որի կառուցումը կոմբինատն իր վրա վերցնել չէր կարող, քանի որ այն շատ թանկ էր: Որքան էլ դժվար լիներ, միակ ելքը երկաթգծի կառուցումն էր: Մեզ օգնության հասավ Շորժայում գտնվող կավերի օգտագործման հարցը: Մինիստրների սովետում և Կենտրոնական կոմիտեում մանրամասն քննարկելուց հետո մեր հանրապետությունն իր բյուջեի հաշվին կառուցեց երկաթգծի՝ մինչև Շորժայի հատվածը: Իսկ Շորժայից Զոդ հատվածը կառուցվեց՝ ոսկու կոմբինատի հաշվին:

Երևան-Զոդ երկաթուղու կառուցումը շատ կարևոր նշանակություն ունի այդ շրջանների տնտեսական զարգացման համար: Բացի դրանից, նոր հնարավորություններ են ստեղծվում Վարդենիս-Զանգեզուր երկաթգծի կառուցման համար, որը, իհարկե, շատ ավելի հսկայական նշանակություն կունենա Զանգեզուրի՝ հետագայում էլ ավելի զարգանալու և ունեցած բնական հարստություններն ի սպաս դնելու երկրին:

Ես նկատի ունեմ Սվարանցի երկաթի հանքի օգտագործումը: Ճիշտ է, այս հանքավայրն այնքան էլ հարուստ չէ, բայց նրա այլ պարունակությունները դարձնում են միանգամայն նպատակահարմար և տնտեսապես շատ օգտավետ: Իրոք, շատ հեռանկարային է այս ասածը, բայց միանգամայն ռեալ է ու իրականացվող: Ինչ վերաբերում է երկաթգծի առկայության դեպքում Զանգեզուրի ընդհանուր զարգացմանը, իմ կարծիքով, դա բացատրության և մեկնաբանության կարիք չունի:

* * *

Իջևանի և Դիլիջանի զարգացումը մեծապես պայմանավորված էր երկաթուղու կառուցմամբ: Այստեղ հիմնվեցին այնպիսի ձեռնարկություններ, որոնք, մի կողմից նպաստեցին երկաթգծի կառուցման հիմնավորմանը, մյուս կողմից այս քաղաքների զարգացմանը:

Այժմ նախկին Քարվանսարան դարձել է ժամանակակից, մշակութային քաղաքներից մեկը, որտեղ գործում են բազմաթիվ արտադրական ձեռնարկություններ և խոշոր երկաթուղային կայարան: Այդ ձեռնարկություններից կարելի է նշել գորգագործական կոմբինատը, որը տարեկան արտադրում է շուրջ 700.000 քառակուսի մետր բարձր որակի գորգեր: Այդ գորգերի անունն արդեն հայտնի է դարձել աշխարհին, քանի որ նրանցից մի քանի տեսակները, ինչպես «Զանգեզուրը» և «Լոռին», մասնակցել են միջազգային ցուցահանդեսներին ու գրավել պատվավոր տեղ:

Գորգագործական կոմբինատի ստեղծումն ունի շատ հետաքրքիր պատմություն: Ինչպես մեր շատ շրջաններում և հատկապես Երևան քաղաքում, որի մասին հետո կխոսենք, գործազրկությունն անհանդուրժելի չափերի էր հասել: Գյուղատնտեսությունը հնարավորություն չուներ ընդգրկելու, զբաղեցնելու բանակից վերադարձած մարդկանց, իսկ արդյունաբերությունը զարգացել էր մի քանի խոշոր կոմբինատների հաշվին, որոնց աշխատատեղերը սահմանափակ էին: Հայտնի է, որ դրանց թվին էին պատկանում Կիրովի անվան, Կիրովականի քիմիական կոմբինատները կամ ավելի ճիշտ՝ գործարանները, Ալավերդու և Ղափանի պղնձահանքերն ու ձուլարանը, Լենինականի տեքստիլ կոմբինատը: Բացի վերջինից, մնացած բոլոր ձեռնարկություններում զբաղված էր մինչև 1000 մարդ:

Հասկանալի է, որ այս պայմաններում գործազրկությունը անխուսափելի էր: 1954 թ. մոտավոր հաշվարկներով միայն Երևան քաղաքում գործազուրկների թիվը հասնում էր շուրջ 40 հազարի: Ահա թե ինչու միաժամանակ Միության կառավարության առաջ հարց էր դրվում նոր ձեռնարկությունների կազմակերպումը, աշխատավորներին տեղավորելու խնդիրը: Նոր ձեռնարկություններ կառուցելու, արտադրական տեղամասեր բացելու գործում անգնահատելի օգնություն ցույց տվեց այն ժամանակ Մինիստրների խորհրդի նախագահի առաջին տեղակալ Ալեքսեյ Կոսիգինը:

Ահա մի անգամ նա պետք է մեկներ Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետություն: Զրույցի ժամանակ ասաց, որ Գերմանիայում կարելի է գնել գորգագործական կոմբինատի սարքավորում: Եթե ցանկություն կա, ապա կարող է իր հետ գնա մեր ներկայացուցիչը, որը կպայմանավորվի սարքավորումների, հաստոցների առաքման հարցերի շուրջ:

Մենք որպես ներկայացուցիչ՝ առաջադրեցինք Գառնիկ Դարբինյանին, և նա ընկեր Կոսիգինի հետ մեկնեց Գերմանիա: Կնքվեց համապատասխան պայմանագիր, իհարկե, ընկեր Կոսիգինի անմիջական միջամտության շնորհիվ՝ կարճ ժամանակում, մեկ տարվա ընթացքում:

Բայց ցավով պետք է նշեմ, որ շինարարները ձգձգեցին գործարանի շինարարությունը, որի համար շատ անգամ հանդիմանություններ էինք ստանում անձամբ Կոսիգինի կողմից: Վերջապես կառուցվեց այդ գործարանը, այժմ աշխատում է և համարվում է թեթև արդյունաբերության համակարգի առաջավոր ձեռնարկություններից մեկը: Այս կոմբինատի գործարկումով արդեն լուծվեց Իջևանի աշխատավորության ճիշտ զբաղվածության շատ կարևոր խնդիրը:

* * *

Այս տեսակետից դրությունն ավելի ծանր էր Դիլիջանում: Հայտնի է, որ Դիլիջան քաղաքը զրկված էր մարդկային աշխատուժն օգտագործելու ամենափոքր հնարավորություններից: Ռողջարանների, հանգստյան տների թիվը շատ քիչ էր, և նույնիսկ միջնակարգ դպրոցն ավարտած պատանիները և աղջիկները, որոնք չէին կարողանում բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումը շարունակել, շատ ծանր դրության մեջ էին ընկնում՝ աշխատանքի տեղ չլինելու պատճառով:

Մեր մի շարք միջոցառումները չլուծեցին Դիլիջանի բնակչության տարրական պահանջները: Կարծես փոքր բան է միայն մեկ գործարանի կառուցումը, բայց այս միջոցառումով լուծվելու էին մի քաղաքի բնակչության կենսական կարևորագույն հարցերը:

ՍՍՀՄ Ռադիոէլեկտրոնիկայի մինիստրությունը պետք է նոր գործարաններ կառուցեր երկրի տարբեր վայրերում:

Պետպլանի նախագահ՝ Լևոն Խաչատրյանի հետ մեր այցելությունը մինիստր Կալմիկովին կարծես դրականորեն էր լուծելու հեռակապերի ապարատների արտադրության մեծ գործարանի կառուցման հարցը:

Պետք է նշել, որ միութենական մինիստրությունները, որոնք ցանկություն էին հայտնում, ձեռնարկություն կառուցել, միշտ որպես կանոն, տեղն ընտրում էին մեծ քաղաքներում՝ խուսափելով նոր վայրում գործարան կառուցելուց: Իրենց հաշիվներով մեծ քաղաքներում համեմատաբար ավելի էժան էին նստում կոմունիկացիոն ծախսերը և քիչ միջոցներ էին պահանջվում բնակարանային, հատկապես կուլտուր-կենցաղային պայմանների համար:

Երբ Վալերի Դմիտրիովիչ Կալմիկովին առաջարկեցինք նոր գործարան կառուցել Դիլիջանում, նա կտրականապես հրաժարվեց, պնդելով գործարանը կառուցել կա՛մ Երևանում, կա՛մ Կիրովականում: Մեր բոլոր պատճառաբանություններով կարողացանք համոզել մինիստր Կալմիկովին, բայց չկարողացանք համոզել մինիստրի տեղակալ Նիկոլայ Գրիգորևիչ Ֆեոդրովին, որը մինչև վերջ էլ դեմ էր գործարանը Դիլիջանում կառուցելուն: Միայն Կալմիկովի կատեգորիկ պահանջից հետո որոշվեց և գործարանը կառուցվեց Դիլիջանում:

Այս բոլորը կարող է փոքր թվալ և միգուցե անհետաքրքիր, բայց այս մեկ գործարանի կառուցումով Դիլիջանը չունչ առավ, կարծես մեռած տեղից արթնացավ և բոլորովին փոխվեց քաղաքի պատկերը: Արտադրությանն անհրաժեշտ էին բարձրորակ կադրեր, որի համար Դիլիջանում մինչև գործարանի գործարկումը ստեղծվեց մասնագիտացված տեխնիկում: Արտադրանք

տալու առաջին իսկ օրվանից տեխնիկումի պատրաստած կադրերը կանգնեցին հաստոցների դեկի մոտ:

Ռադիոտեխնիկական գործարանն այնպիսին է, որ պահանջում է ոչ միայն բարձր որակավորում ունեցող միջնակարգ, այլև բարձրագույն կրթությամբ ինժեներական կադրեր: Այդպիսի քանակությամբ կադրեր դրսից բերել հնարավոր չէր: Ավելին, այդպիսի ինժեներական կադրերի թիվը հանրապետությունում քիչ էր, եղածն էլ աշխատում էր Երևանի գործարաններում, որոնց կարիքն այստեղ ևս, իրոք, շատ էր:

Նկատի ունենալով այդ բոլորը և մի շարք այլ հանգամանքներ, Դիլիջանում հիմնվեց պոլիտեխնիկական ինստիտուտի մասնաճյուղ, որը պատրաստում է բարձրորակ կադրեր ինչպես Դիլիջանի, այնպես էլ հարևան շրջանների և քաղաքների համար: Այս մասնաճյուղի առավելությունը նրանում է, որ հին Դիլիջանը միշտ էլ հագեցած է եղել հումանիտար մասնագիտական կադրերով: Այժմ դրանք համալրվեցին տեխնիկական նոր, բարձր զարգացած կադրերով, որոնք նոր փոփոխություն մտցրին սոցիալ-մշակութային զարգացման մեջ:

Դիլիջանը տեղավորված է բնության գեղատեսիլ վայրերից մեկում՝ իր հայտնի առողջարաններով, և այս հիանալի նվերը բոլորովին փոխեց քաղաքի պատկերը: Այժմ այստեղ կառուցվել են հանգստյան նոր տներ, առողջարաններ, որոնք բնության հրաշալիքների հետ միասին գեղեցիկ ու հաճելի պատկեր են կազմում:

Երկաթուղու շինարարությունը արագ թափով առաջ էր գնում, և հեռու չէ այն օրը, երբ էլեկտրաքարշը կանցնի Դիլիջանով, խախտելով լեռների անդորրը, բայց նոր, ավելի լայն պայմաններ կստեղծի քաղաքի արագ և համաչափ զարգացման համար:

* * *

Երևան-Աղստաֆա երկաթուղին բացի այդ շրջաններից՝ միացնում է նաև Կիրովականը, դրանով հիանալի ճանապարհային օղակ է ստեղծում, Համզաչիմանը դառնում է հանգուցային կայարան:

Նախկին Ղարաքիլիսա-Կիրովականի՝ հետամնաց գյուղաքաղաքի դեմքը, որոշ չափով փոխել էր քիմիական գործարանը, բայց Կիրովականը անճանաչելի դարձավ պատերազմից հետո, և այժմ ամենաարագ զարգացող քաղաքներից մեկն է:

Կիրովականի կյանքում խոշոր նշանակություն ունեցավ արհեստական թելերի գործարանը, որի սարքավորումները գնվեցին Անգլիայից: Այս գործարանի կառուցումն ունի, եթե կարելի ասել, շատ հետաքրքիր պատմություն:

Հայրենական պատերազմից հետո Կիրովականի քիմկոմբինատ էին բերվել Գերմանիայից ապամոնտաժված որոշ սարքավորումներ, տարբեր խեժեր՝ հատկապես արհեստական թելերի հումք ստանալու համար: Պատճառը հանդիսացան այս սարքավորումները, որպեսզի մենք հարց դնեինք Կիրովականում կառուցելու արհեստական թելերի արտադրություն: Երկար վեճերից և հիմնավորումներից հետո պարզվեց, որ այդ սարքավորումը պիտանի չէ, հնացած է և չարժե դրա հիման վրա գործարան կառուցել:

Պատերազմի տարիներին Հանրապետությունում ստեղծվել էին մի շարք տրիկոտաժի ֆաբրիկաներ, որոնք հումք չունենալու պատճառով չէին աշխատում կամ աշխատում էին կիսատպռատ: Բամբակի տարածությունների ավելացման համար չկար ոչ մի հնարավորություն: Ավելին, բնակլիմայական պայմանների աննպաստ լինելու հետևանքով պետք է Հայաստանից հանվեր բամբակի ցանքը: Ոչխարաբուծության նոր զարգացումը սահմանափակ էր, այլ հանրապետություններից պատրաստի բրդյա կամ բամբակյա թել ստանալը՝ չափազանց դժվար:

Ահա այս հանգամանքը թելադրում էր արհեստական թելերի ֆաբրիկա կառուցելու անհրաժեշտությունը: Սա այն ժամանակվա համար շատ լուրջ հարց էր, որը մի քանի անգամ քննարկվեց ընկեր Կոսիգինի մոտ՝ Հայաստանի մշտական ներկայացուցիչ Սուրեն Մելքումյանի մասնակցությամբ:

Առանց միութենական կառավարության որոշման՝ հնարավոր չէր որոշում ընդունել, քանի որ սարքավորումը պետք է գնվեր անգլիացիներից: Հարցը նախապատրաստում էր Պետ-

պլանի նախագահի տեղակալ Ժմերինը, որը, պետք է նշեմ, սկզբից մինչև Կոսիգինի անմիջական միջամտությունը, դեմ էր: Նա բոլոր տեսակի բացասական պատճառաբանություններով առարկում էր, նույնիսկ օգտագործում էր այնպիսի փաստարկ, ինչպիսին այն էր, որ հանրապետությունը գտնվում է սահմանին մոտ, հետևաբար նման չատ կարևոր և թանկարժեք գործարանը չի կարելի տեղադրել Հայաստանում:

Մի անգամ Կրեմլի մեծ դահլիճում ընդունելություն էր արտասահմանյան հյուրերի պատվին, հրավիրված էի նաև ես: Դահլիճում հանդիպեցի Կոսիգինի հետ և կանգնած զրուցում էինք բոլորովին այլ թեմայի մասին: Այդ ժամանակ մոտեցավ Ժմերինը և Կոսիգինին չատ հեգնանքով հարցրեց. «Ի՞նչ է, Քոչինյանը նորից ացետատի մետաքսի գործարանի հարցե՞րն է պարզաբանում»:

Այդ ժամանակ Կոսիգինը չատ զայրացավ և կտրուկ, բայց կիրթ տոնով պահանջեց, որպեսզի վաղը ներկայացվի որոշման նախագիծը՝ գործարանը Կիրովականում կառուցելու և սարքավորումները արտասահմանից գնելու մասին: Իրոք. հաջորդ օրը ընկեր Ժմերինը ներկայացրեց այդ որոշումների նախագիծը, և կառավարությունը որոշում ընդունեց այն կառուցել Կիրովականում:

Քանի որ այսպիսի ծանր պայմաններում որոշվեց գործարանի կառուցման հարցը, մեզնից պահանջվում էր շինարարական աշխատանքը կատարել ամենակարճ ժամկետում: Այդպիսի խնդիր դրեց ընկեր Կոսիգինը և մենք խոստացանք ամեն ինչ անել արագ կառուցելու համար:

Իրոք, Կիրովականի արհեստական թելերի գործարանը կառուցվեց մեծ արագությամբ: Գործարանի շինարարության պետ Սամվել Հակոբյանը տաղանդավոր շինարար էր և իր կարողությունը ներդրեց այս կառույցի վրա: Նա գիշեր-ցերեկ շինարարության հրապարակից չէր հեռանում, որի շնորհիվ չուրջ մեկ տարում հիմնական շինարարական աշխատանքներն ավարտվեցին և սկսվեց մոնտաժումը: Այն ժամանակվա համար, այսինքն 60-ական թվականների սկզբին, նման տեմպը կարող էր

ուրախացնել և չափազանց գոհ էին քիմիական օբյեկտների շինարարությամբ զբաղվող ղեկավարները, առանձնապես հաճելի էին ընկեր Կոսիգինի խոսքերը:

Պետք է ասել, որ շատ կոնկրետ, ամենօրյա ղեկավարություն և օգնություն ցուցաբերեցին Կիրովականի քաղաքային կոմիտեի աշխատողները, առանձնապես, քաղկոմի առաջին քարտուղար Մանիկ Բախչինյանը, քաղաքային սովետի գործկոմի նախագահ Շավարշ Վարդումյանը, որին մինչ այժմ էլ հիշում են որպես լավ նախաձեռնողի:

Արհեստական թելերի գործարանի աշխատանքի համար հարկավոր էր համապատասխան հումք՝ ցելյուլյոզ: Այս նպատակով Երևան քաղաքում պոլիվինիլացետատ գործարանում կառուցվեց արտադրամաս՝ ցելյուլյոզ արտադրելու համար: Այս տեղամասի համար սարքավորումները գնվեցին Ֆրանսիայից: Արտադրամասի կարողությունն այնպիսին էր, որ պետք է ապահովեր Կիրովականի արհեստական թելերի առաջին և երկրորդ հերթափոխին, որի շինարարությունը շուտով ավարտվելու էր և պահանջները լրիվ կբավարարվեին: Այսինքն, Կիրովականի գործարանի առաջին հերթի նորմալ աշխատանքի համար՝ պահանջվում էր 7,5 հազար տոննա հումք, երկրորդ հերթի համար նույնքան, իսկ պոլիվինիլացետատ գործարանի տեղամասի կարողությունը կազմում էր 15 հազար տոննա:

Արհեստական թելերի գործարանի աշխատանքի հենց առաջին օրերից պահանջվեց Հանրապետությունում օգտագործել և ստանալ բարձր որակի ապրանք: Կիրովականի, Երևանի, Լենինականի, Կամոյի, Գորիսի, Ստեփանավանի, Ալավերդու և այլ գործարաններ աստիճանաբար սկսեցին աշխատել արհեստական թելերի բազայի վրա: Գործարանի առկայությունը լայն հնարավորություն տվեց արագ թափով զարգացնել թեթև արդյունաբերության մինիստրության տրիկոտաժի ճյուղը, և այսօր միութենական հանրապետություններից այն ամենազարգացած ճյուղերից մեկն է:

Կիրովականը սկսեց զարգանալ ոչ միայն քիմիական ու թեթև արդյունաբերությամբ, այլև մեծ թափով զարգացան մեքենաշինությունը, հաստոցաշինությունը և էլեկտրատեխնիկական արդյունաբերությունը: Գրենցիոյան հաստոցների բարձր որակը հայտնի է մեր՝ սովետական՝ երկրի սահմաններից դուրս: Այս գործարանը կազմակերպվեց «Զագոդզեռնոյի» պահեստների բազայի վրա և շատ կարճ ժամանակում անուն հանեց մեր հանրապետությունում, ապա նրա սահմաններից դուրս: Հետագայում նրա հաստոցներից մեկը Կանադայի ցուցահանդեսում շահեց ոսկե մեդալ:

Շատ հիանալի ձեռնարկություններ են քիմիական և գունավոր մետալուրգիայի արդյունաբերության ավտոմատացման գիտահետազոտական ինստիտուտը, ավտոմատիկայի գործարանը, Երևանի էլեկտրալամպերի գործարանի մասնաճյուղը, որը կազմակերպվեց նախկինում սովետական զորամասերի կողմից կառուցված շենքերում: Դա, իհարկե, հետագայում հիմնովին վերակառուցվեց, ապա նորը կառուցվեց «Դիմաց» կոչվող տեղամասում:

Այս ձեռնարկության կազմակերպման գործում շատ մեծ աշխատանք կատարեցին «Հայէլեկտրալույս» միավորման նախկին գլխավոր դիրեկտոր Ռոբերտ Ամիրյանը՝ հիրավի տաղանդավոր կազմակերպիչը և այժմյան մասնաճյուղի տնօրեն Հակոբյանը:

«Ավտոմատիկա», «Ավտոգենմաշ» գործարանները, մի շարք ինստիտուտներ, ինչպես գիտահետազոտական, այնպես էլ բարձրագույն հաստատություններն ամբողջովին փոխել են նախկին Ղարաքիլիսայի պատկերը: Այս գեղատեսիլ քաղաքի պողոտաները, հրապարակները, զբոսայգիները և բնական անտառներն իրականում դրախտավայրի են նմանվում:

Վերջին 20 տարում Կիրովականի քիմիական կոմբինատը բոլորովին փոխվել, ընդարձակվել է, կառուցվել են շատ արտադրական տեղամասեր: Մի խոսքով, նախկին կոմբինատից մնացել է միայն կարբիդի արտադրական տեղամասը, որը, իհարկե, պետք է վերակառուցվի և ստեղծվեն նոր արտադրական վառարաններ, որով Կիրովականում կվերացվի ծուխը:

Կիրովականն իսկապես սոցիալիստական ժամանակաշրջա-

նի քաղաք է, որի բնակչությունը վերջին տասնամյակում ամենից արագ, բարձր աճ է ունեցել: Քաղաքը 70-ական թվականներին բոլորից չատ է հայրենադարձ հայեր ընդունել և նրանք իրենց անմիջական մասնակցությամբ չենացրել, բարեկարգել են Գուգարաց աշխարհի այդ չքնաղ քաղաքը, որը կարող է ցանկացած երկրի զարդը լինել:

Վերացնելով Կիրովականի քիմիական կոմբինատի ծուխը և թափոնները, որը չատ հնարավոր է, և որի մասին լուրջ հոգ է տարվում, չուտով այն կդառնա Հանրապետության ոչ միայն արդյունաբերական և մշակութային կենտրոններից մեկը, այլև այն կհանդիսանա մեր Հանրապետության առողջարաններից լավագույնը: Մանավանդ, որ այստեղ՝ ուղիղ քաղաքի կենտրոնում, «Ավտոգենմաչ» գործարանի կողքին, երկրաբանները հայտնաբերել են հանքային ջրեր, որոնք ունեն կարևոր բուժիչ նշանակություն:

Կասկածից վեր է, որ Արամյանցի ամառանոցի վրա գործող հանգստի տունը կդառնա մեր երկրի կարևոր առողջարաններից մեկը: Հանքային ջրերից մեկը Ջերմուկի կրկնությունն է: Հայտնի է, որ ոչ բոլոր հիվանդներն են, որ կարող են օգտվել Ջերմուկից, նրա բարձր դիրքի պատճառով: Ջերմուկը ծովի մակերևույթից 2000 մետրից ավելի բարձր է, իսկ Կիրովականը 1400-1800 մետր:

Կիրովականում ամենանչանակալիցն այն է, որ վերջին տարիներին ձևավորվել է սոցիալիստական տեխնիկական մտավորականության մի հսկայական բանակ, որն իր բարերար, դրական ազդեցությունն է թողել քաղաքի բնակչության մշակութային զարգացման մակարդակի վրա: Այստեղ որոշվում և իրենց լուծումն են ստանում գիտական չատ պրոբլեմներ, որոնք ունեն խոչոր նչանակություն: Այդ առումով չատ կարևոր աշխատանք է տանում՝ Տեր-Ղազարյանի անվան սոսինձների գիտահետազոտական ինստիտուտը:

Ընդամենը երկու տասնամյակում Կիրովականը դարձել է Հանրապետության արդյունաբերական, գիտական ու գիտահետազոտական կենտրոններից մեկը: Կադրերի պատրաստման

իսկական դպրոց են դարձել Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի մասնաճյուղը և մանակավարժական ինստիտուտը: Այժմ այս և մի չարք այլ միջնակարգ մասնագիտական տեխնիկումներ կադրեր են պատրաստում ոչ միայն Կիրովականի, այլև ամբողջ հյուսիսային շրջանների համար, մանավանդ, երբ նման կադրերի խիստ պահանջ են զգում զարգացող Ստեփանավանի, Կալինինոյի, Ալավերդու, Նոյեմբերյանի, Իջևանի, Դիլիջանի և Շամչադինի շրջանները:

* * *

Կադրերի օգտագործման մեծ պահանջարկ ունի, իհարկե, Ստեփանավանը: Հին Ջալալօղլին սովետական իշխանության հաստատումից հետո մինչև 50-ական թվականները ոչ միայն չէր զարգանում, այլ որոշ առումով հետ էր մնացել իր հասակակիցներից՝ Կիրովականից և Դիլիջանից: Միայն 50-ական թվականներից հետո, ավելի ստույգ՝ 60-ական թվականներին, մեծ ջանքեր գործադրվեցին՝ վերակառուցելու և զարգացնելու Ստեփանավան՝ Ստեփան Շահումյանի անունը կրող քաղաքը: Ստեփանավանում, նոր հանգստի օջախներ կառուցելուց, քաղաքը հիմնովին վերակառուցելուց բացի բնակչության քանակին համապատասխան զարգացավ արդյունաբերությունը:

Առաջնեկներից մեկը հանդիսացավ կապի սարքավորումների արտադրության համամիութենական գործարանը, այնուհետև էլեկտրատեխնիկական, գուլպաների գործարանները և մի չարք ուրիշներ: Ստեփանավանն ավելի արագ և արդյունավետ սկսեց զարգանալ, երբ ավարտվեց Պուշկինի լեռնանցքի տակով անցնող թունելի չինարարությունը: Այս խճուղային ճանապարհի կառուցումը միանգամայն փոխեց, հեչտացրեց կապը մայրաքաղաք Երևանի և, առաջին հերթին, Կիրովականի հետ:

Մինչև թունելի կառուցումը Ստեփանավանի, հատկապես Կալինինոյի բնակչությունն ամիսներով կտրվում էր Երևանից և Կիրովականից: Միակ կապի ճանապարհը մնացել էր երկաթգիծը, որը, իհարկե, մեր դարում այնքան էլ մասսայական չէ: Հենց

առաջին տարում կրկնապատկվեց ամռանն այստեղ հանգստանալու եկող մարդկանց քանակը: Լոռվա չքնաղ բնությունն ու նրա բարիքները օգտագործում, վայելում են շատերը:

...

Հանրապետության արդյունաբերության հին կենտրոններից մեկը Ալավերդին է: Նախապատերազմյան ժամանակվա Ալավերդիից քիչ բան է մնացել: Ամբողջովին վերակառուցվել է պղնձաքիմիական գործարանը, կրկնապատկվել, եռապատկվել է երկրի համար շատ կարևոր արտադրանքի արտադրությունը:

Հիսունական թվականներին, երբ հարց էր դրված գործարանի վերակառուցման և ծծմբաթթվի արտադրության կազմակերպման մասին, հանրապետության կառավարությունը ՍՍՀՄ մետալուրգիայի մինիստրության առջև խնդիր դրեց՝ նոր ձեռնարկություն կառուցել այլ տեղում, մասնավորապես Ղափանում՝ նկատի ունենալով Ալավերդու գործարանի տեղի անհարմարությունը, կոմբինատի ընդարձակման համար ուղղակի տեղ չունենալը:

Եթե դրան ավելացնենք կլիմայական, աշխարհագրական դիրքի բոլորովին անբարենպաստ պայմանները, առաջին հայացքից թվում էր, թե մեր ճիշտ առաջարկի հետ կհամաձայնվեն մեր մինիստրության հարգարժան ղեկավարները, գունավոր մետալուրգիայի մինիստր Պ. Ֆ. Լոմակոն և հետագայում նրա տեղակալ Ստրիգինը:

Ցավով պետք է ասեմ, որ նրանք շատ անուշադիր գտնվեցին հանրապետության առաջարկի քննարկման ժամանակ, գտնելով, որ իբր Ալավերդիում տնտեսապես ավելի օգտակար է կառուցել, քան այլ տեղում՝ նոր սարքավորումներով և տեխնոլոգիայով:

Զմոռանամ ասել, որ հետագայում պրակտիկան, կյանքը ցույց տվեցին, որ գործող կոմբինատի վերակառուցումն ավելի թանկ նստեց, քան եթե կառուցվեր նոր տեղում: Ավելի քան երկու տասնամյակ տևեց Ալավերդու պղնձաքիմիական գործարանի վերակառուցումը և մինչ այժմ էլ չի ավարտված կոմբինատի չինարարության աշխատանքը:

Այսպիսի ձգձգումը, միանգամայն անպատասխանատու վերաբերմունքի պատճառով, կոմբինատի կիսավարտ աշխատանքները հսկայական վնասներ հասցրեց շրջանի այգեգործությանը և անասնապահությանը: Ճիշտ է, երկիրը ստանում էր մեծ քանակությամբ գունավոր մետաղներ, որը շատ անհրաժեշտ էր մեր խորհրդային երկրին, բայց չէր կարելի հաշվի չառնել, թե ինչ գնով էր ավելացվում այդ մետաղը:

Ցավով պետք է ասեմ, որ մինիստրության ղեկավարները, առանձնապես Լոմակոն, այդ բոլորին նայում էին մատների արանքով: Հանրապետության, շրջանի ղեկավարների, բնակչության բազմաթիվ բողոքները մնում էին անհետևանք և կոմբինատի թափոնները անխնա ոչնչացնում էին բնության հրաշալիքները՝ անտառները, այգիները, հողը, ջրերը: Համոզված եմ, որ այս բոլորին վերջ կդրվի և Ալավերդու պղնձաքիմիական կոմբինատը կաշխատի նորմալ, երկրին կտա շատ կարևոր արտադրանք:

* * *

Երկրորդ կարևոր ձեռնարկությունը կառուցվեց ու գործարկվեց 60-ական թվականներին: Դա Ախթալայի ֆլոտացիոն ֆաբրիկան է: Երկար ժամանակ ծանր վիճակում էր Շամլուղի հանքավայրը՝ հանքաքարը հանվում էր, բայց ձուլարանի բացակայության պայմաններում, փաստորեն, չէր օգտագործվում: Անհրաժեշտ եղավ կառուցել ոչ մեծ ֆաբրիկա, որը լրիվ կօգտագործեր Շամլուղի հանքաքարը և կոնցենտրատը կհանձներ պղնձաքիմիական կոմբինատին:

Հիանալի ձեռնարկության բազայի վրա կառուցվեց նոր բանվորական ավան՝ ճոպանուղիով կապելով երկաթգծի հետ: Ալավերդին տարիներ շարունակ օգտագործվել է, և հակառակ շատերի կարծիքի, Ալավերդին իր ունեցած պաշարներով դեռ երկար է ծառայելու մարդկությանը:

Լոռվա ձորի մասին խոսելիս չեմ կարող չհիշել մի զրույց այն ժամանակվա ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահի առաջին տեղակալ Անաստաս Միկոյանի հետ: 1954 թվականին Մի-

կոյանը եկավ Հայաստան՝ իր ընտրողների հետ հանդիպում ունենալու: Կենտկոմի քարտուղար Ս. Թովմասյանի հանձնարարությամբ ես և Հայաստանի կուսակցության Կենտկոմի այն ժամանակվա երկրորդ քարտուղար Հ. Մարգարյանը պետք է նրան դիմավորեինք հանրապետության սահմանի վրա: Միկոյանը գալիս էր գնացքով՝ իրեն հատկացված սալոն-վագոնով:

Մենք Միկոյանին հանդիպեցինք Այրում կայարանում: Առաջին հարցը, որ նա մեզ տվեց, այն էր, թե երբ պետք է Լոռվա ձորի անդորրությունը խախտվի, և ինչ-որ կենդանություն մտցվի, շատ է խուլ ու տխուր, մանավանդ, երբ անցնում ես գիշերով: Միկոյանը մեր ուշադրությունը հրավիրեց այն բանի վրա, որ ոչ մի լույս չէր երևում:

Հայտնի է, որ այդ տեղերում գյուղերը գտնվում էին բարձունքների վրա և նրանց լույսերը երկաթգծից չէին երևում: Իրոք, շատ մռայլ էր:

Այդ ժամանակ դեռ չէր ավարտվել Նոյեմբերյանի սովխոզների կազմակերպումը: Այդ հարթավայրը նման էր իսկական անապատի՝ համարյա անմարդաբնակ, չորացած: Մի խոսքով, պատկերը բավականին անհրապույր էր: Նոր էին սկսվել պահածոների գործարանի շինարարության աշխատանքները, ավարտված չէր Այրումի փոքրիկ հիդրոէլեկտրակայանը, որը կառուցվում էր Զուռալայի և Լամբալուի հողերի իրացման, պոմպակայանների աշխատանքի և էլեկտրաէներգիա մատակարարելու համար: Ճիշտ է, դա այժմ ծիծաղելի է, որովհետև պոմպակայանների աշխատանքի համար օգտագործվում է մի քանի տասնյակ անգամ ավելի շատ էներգիա, քան Այրումի հիդրոկայանի հզորությունն է, այնուամենայնիվ, այդ է եղել կայանի կառուցման նպատակը: Դեռ չկար Ախթալայի հարստացուցիչ ֆաբրիկան և այլն:

Ահա այս պայմաններում Ա. Միկոյանի վրա շատ ծանր տպավորություն էր թողել իր ծննդավայրի՝ Լոռվա հիասքանչ բնության այդ ձորը: Իրոք, երբ Թբիլիսիից դուրս ես գալիս, հարթավայրի վրա խիտ բնակեցված գյուղերը լավ տպավորություն էին թողնում: Իսկ երբ հասնում ես մեր սահմանը, առաջին լույսերը, որ երևում են, բացի կայարանների լույսերից, դա Արճիս գյուղի հեռու լույսերն են, որոնք կարծես, երկնքից են կախված, քանի որ այդ գյուղերը գտնվում են բարձր լեռների հարթության վրա, խոր ձորի պռունկին:

Իսկ այժմ, երբ գալիս ես Թբիլիսիից, լինի ցերեկ, թե գիշեր, անջնջելի տպավորություն է թողնում մարդաշատ և լրիվ կերպարանափոխված Լոռվա գեղատեսիլ ձորը: Թբիլիսիից գալու ժամանակ կարելի է տեսնել նոր սովխոզներ, նախկին անապատների փոխարեն՝ նոր այգիներ, նոր քաղաքատիպ բանավաններ, հսկայական ջրաշինարարական կառույցներ, որոնք կարող են պարծանք հանդիսանալ ցանկացած զարգացած երկրի համար:

Իրականում կարելի է ասել, որ այս՝ կարծես օազիսի նման տեղը դրախտավայր է: Այգիներին և հինգ քաղաքատիպ ավաններին անմիջապես հաջորդում է պահածոների նոր, հիանալի խոշոր գործարանը՝ իր բանվորական ավանով: Այս ավանն իր աշխարհագրական դիրքով առանձին տպավորություն է թողնում մարդու վրա: Դեռ այս այգիների ու կառույցների տպավորությունից դուրս չեկած՝ քո առաջ բացվում են Ախթալայի գեղատեսիլ կառույցները:

Հնում այստեղ կարող էիր տեսնել անցյալ դարում կառուցված Մանթաշովի ամառանոցը, որը վերածվել է հանգստի տան: Ներկայումս նրա դեմ դիմաց վեր է խոյացել բազմահարկ շենքերով փոքրիկ քաղաք՝ կիպարիսներով շրջապատված, բարձունքներից իջնող ճանապարհով, որը մի յուրահատուկ ներդաշնակության մեջ է մտնում բնության հետ:

Ալավերդին, որի մասին վերևում խոսվեց, նախկին Մանեսը չէ: Քաղաքը տեղափոխվել է Սանահինի հարթավայր, այն Սանահինը, որը մեր պատմության մեջ փառավոր տեղ ունի: Հիմա վերափոխվել, բարեկարգվել է և հիանալի տպավորություն է թողնում: Նոր բանավան-քաղաքը միացել է Սանահին գյուղին: Այն հայտնի է իր միջնադարյան ճարտարապետական կոթողով՝ վանքով, որը համարվում է այդ քաղաքի զարդը:

Սանահինից հետո Ձաղի ձորում (ձաղ- Լոռում ներկի մի տե-

սակ է) իր հիանալի տեղն ունի Թևոսյանի անվան հրակայուն աղյուսի կոմբինատը իր բանավանով: Հայտնի է, որ այս բանավանը կառուցվել է մինչև Հայրենական պատերազմը: Բանավանն ու գործարանը արտաքին աշխարհի հետ կապված էր միայն երկաթգծով, խճուղային ճանապարհի բացակայությունը շատ ծանր դրություն էր ստեղծել գործարանի համար:

1953-1954 թթ. սուր կերպով բարձրացվեց՝ Կիրովականը և Ալավերդին խճուղային ճանապարհով միացնելու խնդիրը: Իրոք, Կիրովական, Սաղախլո, այնուհետև եղբայրական Վրաստանի մայրաքաղաքի հետ Լոռվա ձորով, գետերի ափերով ճանապարհ ունենալը կյանքի, տնտեսության համար կարևոր նշանակություն ունեցող հարց էր:

Այդ տարիներին, բնական է, պատերազմը նոր էր ավարտվել, երկրի վերականգնման համար շատ միջոցներ էին պահանջվում: Իսկ ճանապարհաշինության համար միանգամայն անբավարար միջոցներ էին տրամադրվում: Այդ ժամանակ մեր հանրապետության ճանապարհների մեծ մասը, հատկապես մայրուղիները գտնվում էին անմխիթար վիճակում: Ուստի մեզ անհրաժեշտ էր փնտրել այլ միջոցներ և սկսել Կիրովական-Սաղախլո շատ անհրաժեշտ ճանապարհի շինարարությունը: Այդ աղբյուրները հանդիսացան Լոռվա ձորում գործող ձեռնարկությունների շահագրգռվածությունը և նրանց մասնակցությունը այդ կառույցին: Վերոհիշյալ հարցով առաջինը դիմեցինք ԽՍՀՄ Մինիստրների խորհրդին ու ԽՍՀՄ սև մետալուրգիայի մինիստր՝ ընկ. Ի. Թ. Թևոսյանին:

Մոսկվայում ես բախտ ունեցա առաջին անգամ հանդիպել Ի. Թևոսյանի՝ այդ մեծատաղանդ կազմակերպչի, մասնագետի և սովետական երկրի խոշորագույն պետական և կուսակցական գործչի հետ:

Մինիստրների խորհրդին ուղղված նամակում մենք խնդրել էինք, այն ժամանակվա դրամի կուրսով, 10 միլիոն ռուբլի՝ ճանապարհաշինության համար:

Ի. Թևոսյանը շատ սիրալիր լսեց իմ պատճառաբանությունները, խնդրանքի իմաստն ու ջերմորեն հավանություն տվեց, ա-

վելացնելով, որ ամենափոքր բեռի տեղափոխման համար մինիստրությունը ստիպված է լինում հատուկ վագոններ պատվիրել:

Ամեն ինչ շատ լավ էր ընթանում, ճանապարհի կառուցումը ոչ ոքի մոտ կասկած չէր հարուցում, բոլորը հավանություն էին տալիս: Բայց, երբ հարցը հասնում էր միջոցներ տրամադրելուն, այստեղ ամեն ինչ կանգ էր առնում: Իրոք, միջոցներ չկային: Հրակայուն աղյուսի գործարանի մասնակցությունը յուրահատուկ էր: Գործարանի ղեկավարությունը բոլորից շատ էր շահագրգռված և ցանկանում էր մասնակցություն ունենալ ճանապարհների շինարարությանը:

Թևոսյանը կարդաց մեր նամակը և հանձնարարեց առաջարկություն տալ, ընդ որում կարգադրեց անպայման տրվի դրական առաջարկություն: Հաջորդ օրը, երբ ես նորից բախտ ունեցա հանդիպել ընկ. Թևոսյանին՝ իմանալու պատասխանը, նա բարձր տրամադրությամբ, ծիծաղելով ասաց, որ մեր պահանջն ավելի շատ է, քան գործարանի կառուցման վրա է ծախսվել:

-Երևի դուք նոր նախագահ եք,-ասաց նա,- հաշվի չեք առել այդ հանգամանքը, ես ևս չէի կարծում, որ դուք կարող եք հաշվի չառնել այդ հանգամանքը: Մի խոսքով, ինչ կարող եմ ասել, ձեզ անհրաժեշտ է կառուցել ճանապարհը, այդ պատճառով ձեր պահանջն եք ներկայացնում:

Հիշում եմ, ներս հրավիրեց իր օգնական ընկ. Բարդակովին և ինչպես վայելել է իրեն, կարգադրեց նպատակային առանձնացնել 10 միլիոն ռուբլին, որով դրվեց այդ ճանապարհի շինարարության սկիզբը:

Հետագայում, իհարկե, մենք ուրիշ աղբյուրներից էլ միջոցներ տրամադրեցինք: Այդ գեղատեսիլ ձորով ճանապարհը շատ դժվարությամբ կառուցվեց, բայց հնարավոր դարձավ տնտեսական մեծ օգուտ ստանալ և Լոռվա ձորի բնակավայրերը խճուղային ճանապարհով կապել մեր մայրաքաղաք Երևանի և Թբիլիսիի հետ:

Մինչև 1960 թ. Ալավերդի քաղաքը զարգանում էր պղնձա-

քիմիական կոմբինատի բազայի վրա, նրա հաշվին: Հայտնի է, որ այս կոմբինատում մեծ մասամբ օգտագործվում էր միայն տղամարդկանց ուժը և ահա 60-ական թվականներին կանանց ազատ ձեռքերն օգտագործելու պահանջն ավելի հրատապ դարձավ:

Քաղաքը, փաստորեն, կառուցվում և զարգանում էր միայն մեկ կոմբինատի կարիքների համար, եթե դա թույլատրվում է այդպես ասել: Այս բացը վերացնելու համար սկզբում շատ պրիմիտիվ պայմաններում, հիմնադրվեց տրիկոտաժի ֆաբրիկան, որի տնօրենը Միկոյանի քույրն էր: Հետագայում, իհարկե, կառուցվեց ժամանակակից, խոշոր մի ֆաբրիկա, որը ոչ միայն բավարարեց Ալավերդի քաղաքի բնակիչների պահանջները, այլև հարկ եղավ հարևան գյուղերից կանանց բերել ֆաբրիկա՝ աշխատելու:

Այժմ Ալավերդիում ստեղծված սննդի, կենցաղային մյուս օբյեկտների հետ միասին աշխատանքի ապահովվածությունը շատ բարձր է: Ավելին, արդեն տասը տարի է, բանակից մի խոշոր ջոկատ է աշխատում շինարարության վրա: Այս հանգամանքը շատ մեծ օգնություն էր շինարարներին, որոնք կարողացան կարճ ժամանակում այդքան մեծ գումարներ իրացնել ինչպես կոմբինատի վերակառուցման, այնպես էլ մյուս կառույցներում:

Երբ կառուցում էինք կարի խոշոր գործարանը, ինչպես հայտնի է, այս նեղ ձորում շատ դժվար էր տեղադրել: Միակ տեղը, որտեղ հնարավոր էր մի կերպ, շատ դժվարությամբ տեղադրել, Սանահին գյուղի Կածածք կոչվող տեղամասն էր, նրա նախկին այգիները:

Բնականաբար, գյուղացիները, հատկապես սովխոզի տնօրենը, որը Միկոյանի քրոջ տղան էր, բանակում ծառայած գնդապետ, շատ հարգարժան անձնավորություն էր, բայց գյուղատնտեսությունից անտեղյակ էր և դժվար էր նրա հետ խորհրդակցել գյուղի այս կամ այն չլուծված գործերի, խնդիրների մասին: Միայն մի բան շատ լավ էր պատկերացնում՝ ամեն գնով խոչընդոտում էր հողերի չռայլմանը:

Սա նրա դրական կողմն էր, բայց երբ կարի գործարանի

տեղն էր որոշվում, իհարկե, առանց խորանալու հարցի էության մեջ, մեծ աղմուկ բարձրացրեց՝ բողոքելով Անուշավան Միկոյանին: Վերջինս շատ մոտ էր ընդունում իրենց գյուղի հարցերը: Նույնիսկ պատերազմի ծանր օրերին նա գյուղի համար շատ անհրաժեշտ նյութական օգնություն էր կազմակերպում:

Զցանկանալով գնահատական տալ Անուշավան Միկոյանին, քանի որ նա արդեն գնահատվել է Խորհրդային Միությունում իր տաղանդի, իր ծառայությունների շնորհիվ, հայտնի էր նույնիսկ աշխարհին: Ասեմ միայն, որ Անուշավանը շատ սրտամոտ, բարի, մի խոսքով, մարդկային լավագույն հատկություններով օժտված անձնավորություն էր, մեծ գիտնական ու ակադեմիկոս:

Գիտնականի հետ նա գիտնական էր, սովորական մարդ՝ շարքային մարդկանց հետ: Այս հոյակապ մարդն այնքան էր զայրացել, երբ լսել էր, որ իրենց պապերի այսպես կոչված, նախկին այգին քանդում են, տեղում գործարան կառուցում, հեռախոսով զանգահարեց: Իհարկե, նա այնքան տակտով մարդ էր, որ զայրույթը չէր կարող արտահայտել հեռախոսազրույցի ժամանակ, բայց ես արդեն կռահում էի, թե ինչի մասին է լինելու նրա խոսքը:

Զմոռանամ նշել, որ երբ լսեցի այդ վիճաբանության մասին, անմիջապես մեկնեցի Ալավերդի, որտեղ ծանոթացա այդ խնդրին: Երբ եղա տեղում, ցանկացա տեսնել, թե որտեղ է այդ այգին, որ նախագծողները հաշվի չեն առել դրա առկայությունը:

Սովխոզի տնօրենը շատ անհարմար դրության մեջ ընկավ և ասաց, որ ինքը չի բողոքել այգին քանդելու համար, այլ ասել է, որ նոր այգի տնկեն, որպեսզի պապերի այգին վերականգնվի: Անուշավանի հետ երկար զրուցեցինք հանրապետության գործերի մասին. նա շատ հմուտ տնտեսագետ էր, շուտ կողմնորոշվող, անսպասելի ու արագ, զարմանալիորեն ճիշտ եզրակացություններ էր անում:

Ընդ որում, ուրիշների նման խորհուրդ չէր տալիս, իր կարծիքը կարգադրություն չէր դարձնում, միայն արտահայտում էր

իր տեսակետը և բավարարվում դրանով: Ինչ խոսք, նրա այդպիսի խորհուրդները շատ անգամ ենք հաշվի առել, հատկապես ռադիոէլեկտրոնիկայի ձեռնարկությունների կառուցման գործում:

Վերջապես Անուշավանն իր միտքը լրիվ արտահայտեց Ալավերդու գործարանի կառուցման վերաբերյալ: Այս վերջին խոսքերի մեջ զգացվում էր ինչ-որ զայրույթի նշան, բայց նորից պահպանելով տակտը, հարցրեց ինձ, արդյոք տեղյա՞կ եմ այդ բոլորից, թե ոչ:

Երբ մանրամասն բացատրեցի և ասացի, որ արդեն տեղում եղել եմ, մանրամասն ուսումնասիրել եմ այդ հարցը և գտնում եմ, որ նախագծողներն իրավացի են, քանի որ՝ ուրիշ հարմար տեղ չկա, ավելին, այնտեղ այգու հետքեր անգամ չկան: Նա շատ հաճելի ծիծաղելով հիշեց, որ ինքն այնտեղ է եղել 1922 թվականին, հետո չի տեսել և ավելացրեց՝ երևի ես ճիշտ եմ:

Նա ավելի ուրախացավ, երբ հայտնեցի, որ գործարանի կառուցումը հնարավորություն է ընձեռում Ստեփանավանի բարձրորակ աղբյուրների ջրերը խմելու համար բերել Ալավերդի: Նա ասաց, որ մենք ավելի մոտ ենք այդ հարցերին և ավելի ճիշտ ենք դրանք լուծում:

Այդ նույն տարի Անուշավանն արձակուրդ եկավ Հայաստան, իր լավ բարեկամ գեներալ-մայոր Գայ-Հայկ Լազրևիչ Թումանյանի հետ:

* * *

Անուշավան Միկոյանն այն մարդկանցից էր, որն արտաքուստ կարծես քիչ էր կապված հանրապետության հետ, բայց իրականում շատ մոտ էր կանգնած և տեղյակ էր հանրապետության բոլոր գործերից: Նա շատ էր ձգտում իր ընկերներին ևս կապել մեր գործերի հետ և լավի, առաջադեմի համար ուրախանում էր: Կրքոտությամբ բացատրում էր իր ընկերներին և շատ էր հպարտանում այդ գործերով, իսկ թերությունների, բացերի համար մահու չափ վշտանում էր:

Հայկ Թումանյանը Թբիլիսիից գնացել էր, դարձել զինվորական և երկար ժամանակ չէր եղել Հայաստանում: Այս անգամ Անուշավանի խնդրանքով ես ևս պետք է գնայի իրենց գյուղը: Ընդորում, նա դեռ չէր մոռացել իրենց կամուրջի պահպանության հարցը և ցանկացավ իր աչքերով տեսնել ու համոզվել:

Մենք եղանք հանրապետության շատ շրջաններում, այնուհետև իրենց գյուղում: Նրանց վրա անմոռանալի, անջնջելի տպավորություն էին թողել նորակառույց գյուղերը, հատկապես շինարարության մասշտաբները: Անուշավանը շատ ուրախացավ՝ նախագծերում տեսնելով գործարանի կառուցման տեղը:

Ուշ էր, երբ վերադարձանք Երևան:

Մի գեղեցիկ երեկո մայրաքաղաքում լավ շրջելուց, տեսարժան վայրերը այցելելուց հետո, Անուշավանը բուռն ցանկություն հայտնեց հանդիպելու Վարպետին՝ Ավետիք Իսահակյանին: Գիշերվա ժամը մեկն էր, նման ցանկություն կատարելը կարծես շատ անհարմար էր, և խնդրեցի, որ տեսակցությունը տեղի ունենա հաջորդ օրը, որ նա կարող է մի օր ուշ մեկնել, նրանք կհանդիպեն և կզրուցեն:

Ես առարկում էի երկու պատճառով. նախ, իրոք, շատ ուշ էր, բացի այդ, ցանկանում էի երկարացնել նրանց այցը մեզ մոտ: Այնուամենայնիվ Անուշավանը խնդրեց զանգահարել Վարպետին: Զանգահարեցի Վարպետին, ներողություն խնդրեցի և ասացի զանգահարելուս պատճառը: Վարպետը ինձ հանդիմանեց ներողության համար և մեծ ցանկություն հայտնեց տեսնել թանկագին հյուրերին՝ Հայկին և Անուշավանին:

Գիշերվա մոտ ժամը երկուսն էր, մենք երեքով գտնվում էինք Վարպետի բնակարանում: Տնեցիները քնած էին, իսկ ինքը սենյակի մեջ քայլելով՝ դիմավորեց մեզ: Այդ երեկոն շատ անմոռաց էր, զրույցն ընթանում էր տարբեր թեմաների շուրջ: Վարպետն իր սովորության համաձայն խոր փիլիսոփայական հարցեր էր տալիս, ապա հարցնում Անաստասի մասին:

Վերջապես հետաքրքրվեց Անուշավանի կոնստրուկտորական գործերով: Նրա հարցերից մեկը այն էր, թե ճիշտ է արդյո՞ք, որ նրա նախագծած օդանավով կարելի է մեկ ժամում Մոսկվայից Երևան հասնել: Անուշավանը հաստատեց, ասելով, որ նոր

կոնստրուկցիայի օդանավերը մեկ ժամում կարող են անցնել 3000 կմ.:

Այդ ժամանակ Վարպետը, կարծես առանց մեծ զարմանքի, մտախոհ հարցրեց. «Ո՞ւր եք չտապում, մարդը մեկ անգամ է ապրում և ուզում է երկարացնել իր կյանքը, իսկ դուք ձեր հնարավորություններով արագացնում եք ամեն մի գործողություն, կարծես դրանով կարճացնում եք կյանքի տևողությունը»: Ավետիք Իսահակյանը երազանքի նման սկսեց վերհիշել անցյալը և օրինակ բերեց անցյալից, երբ մարդիկ Պետերբուրգից մինչև Անդրկովկաս անցնում էին ամիսներով:

-Ճիշտ է,- ասում էր Վարպետը,- միգուցե դա շատ դանդաղ էր, բայց ձեր արագությունն արդեն գերազանցում է մարդկային երևակայությունը:

Վարպետը մեզ հյուրասիրեց սուրճով, այնուհետև զրույցն ավելի հետաքրքիր դարձավ, երբ խոսք բացվեց Թբիլիսիում իրենց ապրած տարիների մասին, որին քաջ տեղյակ էին Հայկն ու Անուշավանը:

Նրանք խոսում էին Թումանյանի և իրենց հանդիպումների մասին. մի խոսքով, վերհիշելու շատ բան կար և հայոց հարցերն այնքան շատ էին, որ առավոտյան ժամը 6-ին դեռ Վարպետի տանն էինք:

Երբ խոսակցություն եղավ մեկնելու մասին, Վարպետը նորից կրկնեց իր նույն միտքը. «Մի չտապեք, եթե գնում եք, գնացեք գնացքով, այդ ավելի տանելի է, միանգամայն ընդունելի»:

* * *

Առավոտյան հրաժեշտ տվեցինք Վարպետին ու դուրս եկանք նրա տանից: Արտյոմը մի քանի անգամ կրկնեց, թե ինչ լավ էր, որ հանդիպեցին Վարպետին, որ ինքը երևի այլևս չի տեսնի նրան, կամ ինքը չի լինի, կամ Վարպետը: Նաև շնորհակալություն հայտնեց ինձ այդ հանդիպումը կազմակերպելու համար:

Այնուհետև գնացինք օդանավակայան, և Մոսկվա ճանապարհեցի իմ երկու լավ ընկերներին, մեր ժողովրդի արժանի զավակներին: Ցավով պետք է նշեմ, որ Վարպետը չուտով հրաժեշտ

տվեց կյանքին: Ես այդ ժամանակ գտնվում էի Չինաստանում՝ Պեկինում: Այնտեղից ցավակցության հեռագիր ուղարկեցի: Ակամայից հիշեցի Վարպետի խոսքերը կյանքի մասին, նրա փիլիսոփայական մտքերը:

Դաժան մահը նույնիսկ այդքան կենսասեր, անգամ չչտապող մարդուն չխնայեց, դաժանորեն խլեց, տարավ:

Վարպետին ես շատ մոտիկից էի ճանաչում, մեր մեջ փոխադարձ հարգանք կար դեռ կոմերիտական աշխատանքի ժամանակներից: Նա հաճախ էր գալիս կենտրոնական կոմիտե և զրուցում, մտքեր էինք փոխանակում: Անկեղծորեն պետք է ասեմ, որ ես դեռ երիտասարդ էի, շատ բան, հատկապես մեր ժողովրդի պատմության վերաբերյալ, չգիտեի: Եվ հաճախ մեր զրույցը չէր ստացվում:

Հետագայում, երբ Մինիստրների խորհրդում էի աշխատում, արդեն Վարպետն այլ վերաբերմունք ուներ իմ նկատմամբ: Մեր հանդիպումները շատ ավելի բովանդակալից էին դառնում և Վարպետի ամենափոքր դիտողությունն իսկ կամ կարճ միտքն ինձ հասկանալի էր: Վարպետն այդ տարիներին ինձ հետ խոսում էր շատ մեծ զգուշությամբ: Ես այդ հասկանալով, շատ ասոիթներ էի տալիս, որ նա ավելի պարզ խոսեր, ինչպես ասում են, «բացվեր»:

Ստալինը նոր էր մահացել: Հանրապետության պատվիրակության կազմում ես էլ էի մասնակցում նրա թաղմանը: Ինչպես հայտնի է, մեր երկրի բոլոր մարդիկ ծանր տարան առաջնորդի մահը:

Մինիստրների խորհրդի նախագահի աշխատասենյակում նստած էի, երբ հայտնեցին, որ Վարպետը եկել է և տեսակցություն է խնդրում: Անմիջապես տեղիցս վեր կացա և սպասասրահից ներս հրավիրեցի Վարպետին՝ նեղանալով, թե ինչու նախօրոք չի զգուշացրել:

Վարպետն ասաց, որ գործով եկել է մոտակա հիմնարկներից մեկը և հանկարծ որոշել հանդիպել ինձ հետ:

Մեր խոսակցությունն սկսվեց այն բանից, թե ինչու եմ տխուր: Ես նրան ասացի, որ ուրախանալու կամ ուրախ լինելու

հիմք չկա, ինչպես տեսնում եք քաղաքում սննդամթերքի խիստ պակաս է զգացվում, մեր հանրապետությունում դեռ չենք հասել այն բանին, որ մարդիկ իրենց հետաքրքրող աշխատանք գտնեն: Եվ, վերջապես, տխրության պատճառը, ինչպես գիտեք, դա առաջնորդի մահն է:

-Որբացանք, Վարպե՛տ, դժվար կլինի երկրի համար,- ասացի ես:

Ուշադրությամբ ինձ լսելով՝ Վարպետը նախ ասաց, որ կյանքը հարթ ճանապարհով չի ընթացել, միշտ էլ եղել են դժվարություններ: Պետք է սթափ նայել այդ ամենին, պետք է միշտ մտահոգվել, միջոցներ գտնել դժվար վիճակից դուրս գալու համար: Հետո կատակելով նկատեց.

-Ասում ես հերթերը շատ են անհանգստացնում, մարդիկ քաղցած են: Դա ճիշտ է, բայց նկատի ունեցիր, այդ վիճակում նրանց ղեկավարելը հեշտ է: Եթե բոլորը կուշտ լինեն և լավ ապրեն, ապա դժվար կլինի մասսաներին ղեկավարել:

Այս կատակից հետո Վարպետը շատ լրջացավ և խոսեց այն մասին, որ ինքը Ստալինին երբեք չի սիրել, որ նրա 70-ամյակին գրած նամակը չափածոյի վերածելը կատարել է Կենտկոմի հանձնարարությամբ, որի մասին ես քաջատեղյակներից մեկն էի: Վարպետի կարծիքով Ստալինը շատ վատություններ է արել մեր ժողովրդի բախտորոշման գործում:

Չնայած այդ բոլորին, Վարպետի կարծիքով Ստալինը Սովետական Միության համար, իր սխալներով հանդերձ, այնքան բան է արել սովետների կարմիր դրոշը բարձրացնելու, աշխարհի դիտակետին հասցնելու համար: Նրա հետ հաշվի են նստել բոլորը:

Այնուհետև Վարպետն ընդգծեց, որ Ստալինն ընդարձակեց սովետական երկիրը, բայց նրա մահից հետո կլինեն մարդիկ, ովքեր կփորձեն շտկելու պատրվակով, վարկաբեկել նրան, հետևապես երկրի քաղաքականությունը:

-Իմ կարծիքով,- ասաց Վարպետը,- պետք է նրա սխալները շտկել շատ զգուշությամբ՝ կարմիր դրոշի հեղինակությունը չշոշափելով: Դա դժվար է, բայց ամենից ճիշտն է իմ կարծիքով:

-Ճիշտ է,- շարունակեց Վարպետը,- դուք այստեղ ոչինչ անել չեք կարող, ավելին, ձեր դեմքի արտահայտությունից կռահում եմ, որ դուք միանգամայն դեմ եք և իմ ասածը բոլորովին անսպասելի է:

Իրոք, ինձ համար դա միանգամայն անսպասելի և անհավատալի էր: Ես Մոսկվայում տեսա Ստալինի թաղումը, բազում մասսաների վերաբերմունքը, քաղբյուրոյի անդամների երդումները, Լենինի դամբարանում Ստալինի դիակի տեղադրումը և այլն և այլն: Այս բոլորից հետո, իհարկե, Վարպետի ասածները, նրա մտքերը ես համարեցի իրականությունից հեռու, վերացական:

Միայն մի ուրիշ արտահայտություն ևս ինձ ստիպեց ավելի լուրջ մտածել այդ մասին և ինչ-որ տեղ գտնվել սպասողական դրության մեջ:

Երբ Կարմիր Հրապարակում Բերիան ճառ արտասանեց. Կենտկոմի առաջին քարտուղար Գ. Հարությունովը, որոշ չափով կենտկոմի առաջին քարտուղար Գ. Հարությունովը, որոշ չափով չփոթված ասաց. «Աստված ոչ անի, որ նա առաջին մարդը դառնա երկրում»: Թե ինչ էր պատճառը, իհարկե, հետագայում ինձ պարզ դարձավ, թե՛ Բերիայի ով լինելը և թե՛ նրա սև գործերը մեր երկրում:

Այս բոլորից հետո, իհարկե, առիթ կար խորհելու: Եվ այսօր կատարվածից հետո պարզ է դառնում Վարպետի մեծությունը քաղաքականության ասպարեզում: Այնպես, ինչպես ենթադրում էր Վարպետը, այդպես էլ եղավ: Կյանքը հաստատեց նրա փիլիսոփայական կանխատեսումը:

* * *

Գյուղատնտեսության աշխատատար պրոցեսների մեքենայացման հետևանքով գյուղում աշխատող ձեռքերն ազատվում էին և շատերն այդ դրությունից դուրս գալու համար աշխատանք էին փնտրում իրենց հարազատ բնակավայրերից դուրս: Շատերը գնում էին քաղաքներ, իսկ մի մասն էլ սեզոնային աշխատանքի էր մեկնում Ռուսաստան, այսպես կոչված, դեպի խոպան հողերը:

Կառավարությունը և Կենտրոնական կոմիտեն անհանգրստացած լինելով ստեղծված դրությունից՝ միջոցներ ձեռնարկեցին նոր արտադրական ձեռնարկություններ կամ խոշոր գործարանների մասնաճյուղեր ստեղծելու այնպիսի գյուղական շրջաններում, ինչպիսիք են Կալինինոյի, Անիի, Մարտունու, Ազիզբեկովի, Եղեգնաձորի շրջանները և այլն:

Մի շարք գյուղական խոշոր բնակավայրերում արդեն գործում էին խոշոր կոմբինատների մասնաճյուղեր: Այդպիսի գյուղերից են Մարտունու շրջանի Վարդենիկը, Կալինինոյի շրջանի Շահնազարը, Կամոյի շրջանի Սարուխանը, Եղեգնաձորի շրջանի Ելփինը և շատ ու շատ գյուղեր:

Այս քաղաքականությունը, ինչ խոսք, շատ մեծ օգուտ տվեց բնակչության արտահոսքը սահմանափակելուն, վերակառուցելու գյուղերը, բնակավայրերը: 50-ական թվականներին Շահնազար խոշոր գյուղում անպլան կառուցված գրեթե գետնափոր տներ էին, որոնք միայն ծխի միջոցով էին որոշվում: Մի խոսքով, այս խոշոր գյուղի դիրքը հաշվի չառնելով, շատ ողորմելի, ցավալի տպավորություն էր թողնում: Առաջին արդյունաբերական ձեռնարկությունը կազմակերպվեց դեռ 50-ական թվականներին: Դա գորգագործական ֆաբրիկան էր, հետագայում այստեղ կառուցվեց էլեկտրատեխնիկական գործարանի մասնաճյուղը:

Որպեսզի մարդ համոզվի այս ասածներին, հարկավոր է միայն տեսնել, թե ինչպիսի հիանալի բնակարաններ են կառուցել շահնազարցիները, ինչպես է կերպարանափոխվել գյուղը: Այժմ Շահնազարը նմանվում է մի փոքրիկ գեղեցիկ քաղաքի: Իրականում այժմ Շահնազարում բնակվում է մոտ 7-8 հազար մարդ: Գեղեցիկ լանջի վրա տեղավորված գյուղը կարող է նախանձ առաջացնել շատերի մոտ: Իրականում միայն Շահնազարը չէ, որ այսպես կերպարանափոխված է, ինքը՝ շրջկենտրոնը, Նորաշենը, Ղարաքիլիսան և, առանց չափազանցնելու, բոլոր գյուղերն անճանաչելի են դարձել վերջին 10 տարիների ընթացքում:

Եթե առաջ Ստեփանավանի գյուղերն իրենց բարեկարգվածությամբ, տների կառուցվածքով շատ ավելի կուլտուրական և առաջադեմ էին Կալինինոյի համեմատությամբ, ապա այժմ Կալինինոյի գյուղերը շատ ավելի գեղեցիկ, բարեկարգ ու հարմարավետ բնակարաններ ունեն: Որպես կանոն՝ այստեղ բոլորը կառուցում են երկհարկանի բնակարաններ՝ իրենց մառաններով: Բարեկարգման տեսակետից մի փոքր-ինչ ետ է մնում շրջկենտրոնը: Այժմ այնտեղ արագ թափով ընթանում են կառուցապատման աշխատանքներ, և կասկածից վեր է, որ այդ հետամնացությունը շուտով կվերացվի:

* * *

Հանրապետության ընդհանուր զարգացման մեջ իր ուրույն տեղն ունի Սպիտակ քաղաքը: Սպիտակը՝ նախկին Համամլուն, մեր Հանրապետության հետամնաց շրջաններից էր: Սպիտակի զարգացման գործում կարևոր դեր խաղաց շաքարի գործարանի կառուցումը: Ահա մի քանի տասնյակ տարի է, ինչ Սպիտակի գործարանն աշխատում է և լրիվ չափով մշակում Հանրապետության երկու շրջաններում արտադրվող շաքարի ճակնդեղը:

Այժմ այստեղ կառուցվել և գործում են մի շարք խոշոր ձեռնարկություններ: Առաջիններից է վերելակի արտադրության գործարանը: Սպիտակում այս գործարանի կառուցելն ունի շատ հետաքրքիր պատմություն:

Դեռ հիսնական թվերին մեր հայրենակից Աշոտ Պողոսովը, որն աշխատում էր նյութատեխնիկական մատակարարման համամիութենական վարչության պետի տեղակալ, ուզում էր կառուցել մի գործարան, որը պետք է արտադրեր գործարանային սառնարաններ: Այս գործարանի շինարարությունը սկսվել էր և մի քանի տեղամասեր կառուցված էին սառնարաններ արտադրելու նպատակով:

60-ական թվականներին, երբ Միության մեջ վերակառուցվեց նյութատեխնիկական մատակարարման ամբողջ կառուցվածքը, այդ ժամանակ անավարտ գործարանն ունեցավ նոր տեր:

Նոր համակարգում հրաժարվեցին գործարանային սառնարաններ արտադրելու մտքից և տրվեց նոր առաջադրանք: Վերակառուցվեցին արդեն ավարտված տեղամասերը, սկսվեց նոր տեղամասերի կառուցումը՝ վերելակների արտադրության համար: Այժմ իր պրոֆիլով գործարանը լուրջ դեր է խաղում քաղաքի զարգացման գործում:

Շատ կարևոր նշանակություն ունի ալրաղացը՝ հանրապետության բնակչության պահանջմունքները բավարարելու համար: Սկզբում պլանավորվել էր ալրաղացը կառուցել Կիրովականում: Իհարկե, այժմ զգում ես, որ տեղն ընտրված էր ճիշտ, մի կողմից մեծ նշանակություն ունի Սպիտակի զարգացման գործում, մյուս կողմից՝ Կիրովականում այդպիսի հարմար տեղ չկար:

Սպիտակն ունի սննդի և կենցաղի շատ այլ ձեռնարկություններ, որոնք մեծ գործ են կատարում քաղաքի բնակչության սպասարկման համար: Վերջին տարիներին, հատկապես Սեդրակ Մխիթարյանի՝ կուսակցության շրջկոմի առաջին քարտուղար եղած ժամանակաշրջանում, քաղաքը լավ բարեկարգվել է:

Երբ նայում եմ Սպիտակ քաղաքին, ակամայից հիշում եմ 1927 թվականը: Մեր դպրոցի աշակերտներով փետրվար ամսին եկել էինք Համամլու (Սպիտակ)՝ էքսկուրսիա: Տները նման էին գետնափոր գոմերի, որոնց տարբերելու համար հարկավոր էր իրիկնամուտին կանգնել մի փոքր բարձունքի վրա և տեսնել, թե որտեղից է դուրս գալիս ծուխը, ուրեմն դա բնակարան է, և ընտանիք է ապրում: Իրականում մղձավանջի էր նմանվում:

Այսօր փոփոխությունն այնպիսին է, որ դժվար է նույնիսկ համեմատել մեր բոլոր բնակավայրերը: Ավելին, քաղաքները կարծես մոխրակույտերից բարձրացել, դարձել են ժամանակակից քաղաքներ և բնակավայրեր, որոնք զարդարում են բնությունը՝ նոր պուրակներով ու լայն պողոտաներով, իսկ գյուղացիների տները, իրոք պալատների են նմանվում: Ինչպես չուրախանալ, ինչպես չհպարտանալ:

Իհարկե, թող ոչ ոք չկարծի, թե այսպիսի հրճվանքով եմ

գրում, ուրեմն ես այն կարծիքին եմ, որ ամեն ինչ արվել է, և այլևս անելիք չունենք: Ո՛չ, այս բոլորը կառուցման և զարգացման միայն սկիզբն է:

Երանի նրան, ով այս դարավերջին կտեսնի մեր հայրենիքը և, եթե խաղաղասիրական ուժերը հասնեն այն բանին, որ պատերազմի վտանգը վերացվի, ապա կարելի է պատկերացնել մարդկանց ապրելու բարձր մակարդակի մասին:

* * *

Մինչև սովետական իշխանության հաստատումը՝ Հայաստանում ամենից ծանր կյանքը, դժբախտություններն ու աղետները տեսել է Շիրակի հարթավայրի բնակչությունը՝ գաղթ, սով, կոտորած, աղքատություն: Սովետական իշխանության հաստատումից հետո էլ Շիրակի բնակչության կյանքում փոփոխությունը շատ դանդաղ տեղի ունեցավ:

Ճիշտ է, Շիրկանալի կառուցումը անգնահատելի նշանակություն ունեցավ հարթավայրի երկրագործության զարգացման գործում, բայց այնուամենայնիվ, Շիրակը վերափոխվում էր շատ դանդաղ: Միայն պատերազմից հետո զարգացման արագ թափ ստացան Շիրակի հարթավայրը և նախալեռնային շրջանները:

Որպես օրինակ՝ կուզենայի հակիրճ կանգ առնել Անիի, նախկին Աղինի շրջանի էկոնոմիկայի զարգացման և սոցիալ-տնտեսական վերափոխումների վրա:

Մինչև յոթանասունական թվականները, այժմյան Անիի շրջանը կոչվում էր Աղինի շրջան: Միայն մի փոքրիկ երկաթուղային կայարանն էր կոչվում Անի: Մեր միջավայրում բնականորեն առաջացավ մի պահանջ, որը վերաբերում էր նախկին մայրաքաղաքի հավերժացման հարցին:

Անշուշտ, ավելի նպատակահարմար միջոց չկար, քան Աղինի շրջանը վերանվանել Անիի շրջան և այն լուրջ կերպով վերափոխել, զարգացնել, հավերժացնել և միջնադարյան այդ հիանալի քաղաքի անունը չկորցնել:

Ահա այս մտքերով լի, շրջանի ղեկավարության և շրջկոմի

առաջին քարտուղար Սպարտակ Նազարյանի խնդրանքով ու նախաձեռնությամբ Կենտրոնական կոմիտեն և կառավարությունը Աղինի շրջանը վերանվանեցին Անիի շրջան, կենտրոնը թողնելով Մարալիկը: Անիի շրջանն այժմ մեր հանրապետության առաջավորներից մեկն է, շատ արագ կերպով վերակառուցվեց: Շատ արագ կառուցապատվում է ինչպես Անի քաղաքը, այնպես էլ ամբողջ շրջանը:

Մարալիկի զարգացման լավագույն պայմաններից մեկը հանդիսացավ Արթիկից դեպի Անի երկաթուղու կառուցումը, որը լայն հնարավորություն է ընձեռում մեծ կառույցներին մի կողմից, մյուս կողմից՝ նպատակահարմար օգտագործվեցին նրա բնական հարստությունները՝ տուֆը և պեմզան:

Մարալիկում կառուցված արդյունաբերական ձեռնարկություններից առաջնեկը մագնիսային արագացուցիչների գործարանն էր, որը հետագայում դարձավ էլեկտրալամպերի միավորման «Հայլուս»-ի մասնաճյուղը և հիանալի էր աշխատում: Մեծ նշանակություն ունեցավ հիդրոապարատների գործարանի կառուցումը:

Ինչպես տնտեսական մյուս գործոնները, այնպես էլ արդյունաբերական ձեռնարկությունների կառուցումն ու կազմակերպումը Մարալիկին անճանաչելի դարձրեցին: Հիանալի մայրուղին լուսավորված է ցերեկային լամպերով, կառուցվել են վարչական շենքեր, կինոթատրոն, մշակույթի տուն, բանվորական և սովխոզային ակումբներ, որոնք առանձին շուք են տալիս Անիի շրջկենտրոնին: Կարծես վերականգնվել է մեր պատմական Անին:

Եթե դրան, գումարենք մյուս գյուղերի զարգացումը, նոր ջրամբարների, խճուղային մայրուղիների, Հոկտեմբերյան-Լենինական-Երևան ժամանակակից ճանապարհի կառուցումը, որոնք անցնում են Անիի շրջանով, բոլորովին նոր շուք են տալիս և նպաստում այդ հիանալի շրջանի արագ զարգացմանը:

Չի կարելի երկու խոսք չասել ջրի հիմնախնդրի մասին, որի կարիքն այնպիսի սրությամբ էր զգում Անիի շրջանը: Հայտնի է, որ նա ոչ միայն զուրկ էր ոռոգելի ջրից, այլև խմելու ջուր գրե-

թե չուներ: Շատերն ամռան ընթացքում ստիպված էին տակառներով ջուր բերել՝ բնակչությանը մատակարարելու: Կարծում եմ ավելորդ կլինի բացատրել, թե ինչպիսի դժվարություններ էին հաղթահարում բնակիչները, ինչպիսի աղետների էր ենթարկվում նախկին Աղինի շրջանը, հատկապես Մարալիկը, Զիթհանքովը, Բաղդաչենը և առհասարակ սահմանին մոտ գտնվող գյուղերը: Ջրի միակ աղբյուրը, որն օգտագործում էին, հանդիսանում էին Սառնաղբյուրի, Զլքանների, Թագավորական գյուղի և մի շարք այլ գյուղերի ստորերկրյա ջրերը: Իսկ ոռոգման նպատակով առաջինը կառուցվեց Սառնաղբյուրի ջրամբարը, որը պետք է ոռոգեր շուրջ 200 հեկտար տարածություն:

Այժմ այդ մասին չէ խոսքը: Խոսքը վերաբերում է, առաջին հերթին, խմելու ջրի խնդրի լուծմանը: Ոռոգման հարցին ես մտադիր եմ անդրադառնալ առանձին: Ուստի խմելու ջուրն այժմ առաջնահերթ լուծում էր պահանջում: Իրական դրությունն այնպիսին էր, որ շատ գյուղեր հարց էին բարձրացրել վերաբնակվել այլ վայրերում: Դրանցից մեկն էլ այդպես էլ վարվեց, տեղափոխվեց Նոյեմբերյանի շրջանի Զեյթուն սովխոզ:

Մենք ստիպված էինք սկսել Արագածի Զլքաններ կոչվող աղբյուրներից ջուրը հավաքել և խողովակներով տեղափոխել Անիի, Թալինի սովխոզներ: Երկար տարիների ուսումնասիրություններից հետո կառուցվեց Զլքանի ջրամբարը, որը, չատ ցավով պետք է նշեմ, չի բավարարում ինչպես Անիի, այնպես էլ Թալինի բնակչության պահանջմունքները:

Ես՝ ինքս, անձամբ ուսումնասիրեցի Զլքանների ջրատարի ռեալ լինելը, երբ ուզում էինք կառուցել այդ օբյեկտը: Դա օգոստոսի 18-ին էր: Շատ դժվարությամբ բարձրացանք սկզբից Թագավորական գյուղ, իսկ հետո Զլքաններ: Ես համոզված էի, որ Զլքանների ջրերը, մեր պայմաններում օգոստոսից հետո չեն բավարարի: Դրանք Արագածի ձյան հալոցքից առաջացած աղբյուրներն են: Երբ ձյունը հալչում և հեռանում է լեռան ստորոտը, աղբյուրի ջրերը պակասում են, և ահա թե ինչու օգոստոսից հետո խողովակներում ջուր չէր լինում:

Իմ կարծիքով անհրաժեշտ էր Զլքանները թողնել միայն Թա-

լինի սովխոզներին, իսկ Թագավորական գյուղի առվով, որը դարեր առաջ օգտագործել են մեր նախնիները, ջուր բերել Անիի շրջանի համար: Միջոցների սղության պատճառով սկսվեց Զլքանների ջրատարի կառուցումը, ապա Մանթաշի, Թագավորական գյուղի ջրատարը՝ Անիի համար:

Այս ջրատարի կառուցման աշխատանքները դեռ չեն սկսվել և կարծում եմ, որ երբ միջոցներ լինեն ջրատարը կկառուցվի: Դա արմատապես կլուծի Անիի շրջանի գրեթե բոլոր գյուղերի բնակչության պահանջմունքները և շատ կարևոր նշանակություն կունենա այս շրջանի բնակչության համար՝ մշտապես մնալու իրենց ծննդավայրում:

Թագավորական գյուղ գնալու ժամանակ, ես մեկնեցի Արթիկ: Այցելեցի շրջկոմի առաջին քարտուղար Ավետիքին: Այդ լեռը բարձրանալու համար չունեինք համապատասխան մեքենա: Շրջկոմի քարտուղարը մեզ մեքենա տրամադրեց, որն անսարք էր և դրա հետևանքով դժվարությամբ բարձրացանք Թագավորական գյուղ կոչվող բարձունքը: Թագավորական են անվանում այն պատճառով, որ հին դարերում Մանթաշի ձորի աղբյուրներից լեռան լանջով առվով ջուր են բերել այս բարձունքը և լիճ ստեղծել: Ծերերը պատմում են, որ իբր Թագավորի կարգադրությամբ է կառուցվել այդ լիճը, որի հետևանքով էլ կոչվում է Թագավորական լիճ:

Այս բարձունքից, երբ նայում ես Շիրակի դաշտին, քեզ թվում է, թե տեսանելի է ողջ հեռաստանը, բայց ամենից տպավորիչը Ալաջայի սարն է, որի ստորոտում է եղել մեր պատմական Անին, կարծես Արագածն ու Ալաջան խոսում են իրար հետ: Այս լեռնապարի վրա շարված են մեր գյուղերն ու քաղաքները՝ Արթիկն ու Մարալիկը, Բագարավանն ու Ձիթհանքովը, Լանջիկն ու Սառնաղբյուրը, Թալինն ու Աչնակը, իսկ Խարկով ու Ղոջավանքը վկա են, պահակ են կանգնած Անիի ավերակներին:

Մեր գյուղերն ու քաղաքները, որոնք մեծ մասամբ 20-ական թվականներին տեղափոխվել են, գաղթել են Ախուրյանի աջ ափից, այժմ Արագածի լեռնապարի վրա մարգարիտի նման զարդարում են Իսահակյանի սիրած Արագած լեռան կուրծքը: Ինչ

խոսք, այս բոլորը, բնականաբար, ուրախություն են պատճառում բոլորիս:

* * *

Քանի որ խոսք բացվեց Արթիկ քաղաքի մասին, ապա ավելորդ չեմ համարում կանգ առնել այս յուրահատուկ քաղաքի զարգացման խնդիրների վրա: Առհասարակ Արթիկն այն քաղաքներից է, որը մեծ նշանակություն է ունեցել հանրապետության կառուցապատման գործում:

Եթե այսօր մարդիկ նայում են հանրապետությանը, ասում են՝ այն կառուցված է վարդագույն քարից: Իհարկե, դա Արթիկի տուֆի առկայությունն է, դա արթիկցիների մասնակցությունն է հանրապետության գյուղերի և քաղաքների կառուցապատմանը:

Արթիկն ավելի շատ է զարգացել, քան նրա հարևան շրջկենտրոններն ու քաղաքները: Այժմ քաղաքում տեղակայված են բազմաթիվ ժամանակակից ձեռնարկություններ: Էլեկտրատեխնիկական մինիստրության ձեռնարկություններից բացի, Լենինականի տեքստիլ գործարանի մասնաճյուղը, տուֆաբլոկների խոշոր ձեռնարկությունը, վակուումային էլեկտրավառարանների յուրահատուկ գործարանը խոշոր չափով նպաստեցին քաղաքի արագ զարգացմանը: Բարեկարգված գեղեցիկ քաղաքին լայն փողոցները, բարեկամության այգին, իրոք, յուրահատուկ տեսք են տալիս:

Այժմ լուրջ փոփոխություններ են տեղի ունեցել մարդկանց կենցաղում, մարդիկ բարձրացել են իրենց կուլտուրայով, կենցաղավարությամբ: Արթիկում նոր ինտելիգենցիա է առաջացել, որն իր բարերար ազդեցությունն է թողնում բնակչության կուլտուրական մակարդակի բարձրացման վրա:

Վերջին տարիներին տնտեսության զարգացման ասպարեզում Արթիկի շրջանը շատ առաջ է գնացել: Մի կողմից դա արդյունք է արդյունաբերության զարգացման, մյուս կողմից՝ գյուղի վերափոխումը, բերքատվության բարձրացումը պետք է վերագրել, իհարկե, Մանթաշի և Հոռոմի ջրամբարներին: Այժմ վարելահողերի գրեթե ամբողջ տարածությունները ոռոգվում են և,

բնականաբար, մեծ չափով բարձրացել է գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվությունը:

Առհասարակ Շիրակը մեր հանրապետությունում բոլորից ուշ սկսեց գյուղերի վերակառուցումն ու կառուցումը: Մինչև վերջին տարիները նույնիսկ այնպիսի շրջան, ինչպիսին Ախուրյանն է, գյուղացիությունն ապրում էր բնակարանային շատ ծանր պայմաններում: Ավելին, մի շարք գյուղերում բնակարաններն առանձնացված չէին գոմերից: Այս հանգամանքը, ինչ խոսք, շատ էր անհանգստացնում մեզ:

1966 թվականից հետո մի շարք արդյունավետ միջամտությունները Շիրակը բոլորովին անճանաչելի դարձրեցին, գյուղերը պլանավորված կերպով արագ վերակառուցվում են: Քանի որ գյուղերն այստեղ շատ մեծ են և մարդաշատ, ապա իրականում դրանք իսկական քաղաքի տպավորություն են թողնում:

Իրոք, գրեթե բոլոր գյուղերն ունեն մշակույթի պալատներ, հիվանդանոցներ, մանկապարտեզ-մանկամսուրներ, մեկ կամ ավելի դպրոցներ, կինոթատրոններ: Գյուղի կենցաղի մեջ է մտել էլեկտրականությունը, ռադիոն, հեռուստատեսությունը, գազը, բաղնիքները և այլն, գրեթե այն ամենը, ինչ անհրաժեշտ է մարդուն, դա լինի քաղաքում, թե գյուղում:

Այժմ կարելի է ասել, որ Շիրակի հինը չի փոխվել, այլ գեղեցկացել է: Երկար տարիներ Ախուրյանի շրջանում կուսակցության շրջկոմի քարտուղար աշխատեցին Ասատրյան Անուշավանը և Կարո Մովսիսյանը: Այս երկու ընկերները վերջին 30-35 տարիներին մեծ ծառայություն ունեն Ախուրյանի զարգացման գործում:

Մի դեպքի մասին անհրաժեշտ եմ համարում նշել: Պատերազմի տարիներին, նույնիսկ պատերազմից հետո շատ կորուստներ էր լինում հացահատիկի բերքահավաքի ժամանակ: Կոլտնտեսությունները ստիպված էին լինում կազմակերպել հատուկ օղակներ, գերազանցապես երեխաներից՝ հասկահավաքի համար: Ավելին, հանրապետությունից պատասխանատու աշխատողներին ուղարկում էին այդ աշխատանքներն ստուգելու և կազմակերպելու:

Մի անգամ Գերագույն սովետի նախագահության նախագահ Մացակ Պապյանին ուղարկում են Ախուրյանի շրջան՝ այդ աշխատանքները ստուգելու: Պարզ է, կադրեր չկային, տղամարդիկ ռազմաճակատում էին, եղած տեխնիկան շատ հին և մեծ մասամբ անսարք էր: Իրոք, հացի կորուստը հասնում էր շատ մեծ չափերի:

Շրջկոմի քարտուղար Ասատրյանը տեղյակ էր Պապյանի գալստյան մասին: Նա ստուգում է դաշտերը և նկատում, որ հացահատիկի հնձից հետո մի դաշտում շատ մեծ կորուստ է եղել: Փորձում է կազմակերպել հասկահավաք, չի հասցնում և մարդ չլինելու պատճառով հրաժարվում է այդ դաշտի հասկահավաքից: Որոշում է ոչխարի հոտը բաց թողնել՝ այդ դաշտում արածելու, իսկ ոչխարի համար դա հիանալի կեր էր:

Երբ գալիս է Պապյանը, Ասատրյանը նրան տանում է հենց այդ դաշտը, համոզված լինելով, որ ոչխարի հոտն իր հասկահավաքն արդեն կատարել է: Իրոք, դաշտը շատ մաքուր է լինում և Պապյանը մեծ գոհունակությամբ ընդգծում է ախուրյանցիների գերազանց աշխատանքը, օրինակ բերելով Ազատանի դաշտը:

Երբ վերադառնում են Երևան, Ասատրյանին Մացակը հարցնում է.

-Ռիժի՛կ, ասա, այդ ինչպես ես կազմակերպել, որ այսքան մաքուր է հավաքված ցորենի դաշտը:

Ասատրյանը խոստովանում է, որ չեն հասցնում ձեռքով հավաքել, ստիպված են եղել ոչխարի հոտը մտցնել դաշտ: Դրանից հետո Մացակն ուր գնում էր, օրինակ էր բերում Ռիժիկին. այդպես էր նա անվանում Ասատրյանին:

Մեր ժողովուրդն այդ օրերը կարծես մոռացել է, այժմ այնպիսի տեխնիկա է ստեղծված, որ հասկահավաք բառը լիկվիդացվել է, դուրս եկել շրջանառությունից:

* * *

Թալինի շրջանն այն շրջաններից է, որն իր արագ զարգացումով կարող է հիացմունք պատճառել բոլոր նրանց, ովքեր սի-

րում են իրենց հայրենիքը և նրա զարգացման ամեն մի հաջողության համար ուրախանում են ու իրենց կյանքի ամբողջ իմաստը դրա մեջ են տեսնում:

Թալինի շրջանի բնակչության մի ստվար մասը 1918-1920 թվականներին գաղթել է Արևմտյան Հայաստանից և բնակության համար շատ անհարմար վայրերում գյուղեր կառուցել: Քարից հաց են ստեղծել և չարքաշ կյանք վարել: Թալինն այն շրջաններից է, որ գրեթե ամեն տարի երաշտի ահավոր աղետն իր սև գործն է կատարում:

Հետպատերազմյան տարիներին առաջին խնդիրը Թալինի պապակ հողերին ոռոգման ջուր հասցնելն էր: Իսկ այստեղ բացի Ախուրյան գետից ջրի ուրիշ աղբյուր չկար: Դեռ պատերազմից առաջ սկսվել էր Թալինի ջրանցքի շինարարությունը: Բայց պատերազմի տարիներին, հասկանալի պատճառներով, ջրատարի շինարարությունը դադարեցվեց: Միայն պատերազմի ավարտից հետո այն նորից արագ թափով վերսկսվեց և 1953 թվականին արդեն հիմնականում ավարտվեց:

Այսպիսի ջրանցքի կառուցումն այն պայմաններում, երբ բացի ձեռքի գործիքներից ուրիշ մեխանիզմ չկար, հերոսական աշխատանք էր: Շինարարության աշխատանքներին պարտադիր կերպով մասնակցում էին Արթիկի, Աղինի, մասամբ Ախուրյանի շրջանի աշխատավորները:

Այն ժամանակ նշված շրջանների աշխատավորների մասնակցությունը պատճառաբանվում էր նրանով, որ, երբ ավարտվի ջրատարի շինարարությունը, նրանք պետք է տեղափոխվեն ու բնակվեն նոր յուրացված ու ոռոգելի տարածքներում:

Ինչպես Թալինի ծանր պայմաններում գտնվող գյուղերը, այնպես էլ Արթիկի, Աղինի (այժմյան Անիի), մի շարք բնակավայրեր պետք է տեղափոխվեին Թալինի ջրանցքի տարածքում գտնվող խոպան հողերը մշակելու:

Դեռ ջրատար առուն պատրաստ չէր, մնացել էին ավարտել թունելը և ներքին ցանցի կառուցումը. կառավարությունը սկսեց բնակավայրերի կառուցումը, միաժամանակ որոշ գյուղերի տեղափոխումը:

Անասելի ծանր պայմաններում կատարվեց այս գործընթացը, գյուղացիները չէին հավատում, որ ջուրը այդտեղ կհասնի, որ հնարավոր կլինի այդ հողերում այգիներ հիմնել և բերք ստանալ: Իրոք, անծանոթ մարդը չէր կարող պատկերացնել, որ հնարավոր է այդ քարքարոտ տարածությունները վերածել ծաղկուն այգիների:

Գ. Հարությունովի առաջարկությամբ սննդարդյունաբերության մինիստրությունը պետք է կազմակերպեր հինգ այգեգործական սովխոզներ: Այդ կապակցությամբ ես մեկնեցի Մոսկվա՝ բանակցելու սննդարդյունաբերության մինիստրության հետ:

Մինիստր Զոտովը շատ լավ ընդունեց, և առաջին զրույցից հետո կարգադրեց կազմել հրամանի տեքստը՝ կոլեգիայում հաստատելու համար: Երբ հրավիրեց գյուղատնտեսության բաժնի վարիչին և հայտնեց իմ խնդրանքը ու իր դրական վերաբերմունքը, վարիչն իր թղթապանակից հանեց մի քանի նկարներ և դրեց ընկեր Զոտովի առաջ:

Ես սկզբից ոչինչ չկռահեցի, որ դա կարող էր վերաբերել մեր հարցին: Սովորական լուսանկարներ էին: Զոտովը երկար նայելուց հետո զարմանքով նկարները դրեց իմ առջև և նեղացած ձայնով ասաց. «Անիմաստ բան է, այստեղ սովխոզ կազմակերպելով՝ խոշոր միջոցներ պետք է ծախսենք և ոչինչ չստանանք»:

Դրանք Թալինի ապագա սովխոզների դաշտերի նկարներն էին: Պետք է խոստովանել՝ ահավոր տպավորություն էր թողնում, ծանոթ, թե անծանոթ մարդ չէր կարող սարսափով չնայել, մանավանդ, որ բացարձակապես բացակայում էր տեխնիկան:

Ես որքան հնարավոր էր, բացատրեցի և համոզեցի, որ նախ բոլոր դաշտերը չեն, որ այդքան քարքարոտ են, երկրորդ՝ այդ քարերը մակերեսային են, այսինքն հնարավոր է հեշտությամբ մաքրել, մշակելի դարձնել:

Ես ամեն մի սովխոզի համար առանձին կազմված քարտեզներ էի տարել: Դրանք շատ մեծ օգուտ տվեցին, չնայած բաժնի վարիչն անձամբ էր եղել Թալինի շրջանում, մանրամասն

ուսումնասիրել և նկարել էր: Քարտեզների միջոցով հնարավոր եղավ համոզել, որ նա փաստորեն, լավ հողերը չի տեսել, քանի որ առավել լավ տարածությունները գտնվում են խորքերում և այլն:

Բանն այն է, որ մինչև իմ Մոսկվա գնալը՝ Փիրուզյանը, որն այն ժամանակ սննդարդյունաբերության մինիստրն էր, նախօրոք գրություն էր գրել, խնդրել սովխոզների կազմակերպման համար գումարներ տալ, իսկ մինիստրության ներկայացուցիչները եկել, ուսումնասիրել ու հրաժարվել էին միջոցներ տրամադրելուց:

Այս բոլորից հետո, իհարկե, շատ դժվար էր Զոտովի համար խնդիրը դրականորեն լուծել: Այդ օրը հարցը չորոշվեց, պայմանավորվեցինք հանդիպել մյուս օրը:

Մինչև մինիստրություն գնալը, այցելեցի ընկ. Միկոյանին: Նա պատվիրեց, որ հարցի որոշումից հետո զեկուցեմ իրեն: Ընկ. Միկոյանը լսեց այդ բոլորի մասին և ժպտալով ասաց. «Իսկ Հայաստանում, որտե՞ղ քար չկա»: Երկար չպահեց ինձ, ասաց, որ վաղն առավոտյան լինեմ Զոտովի մոտ:

Երևանից նոր տվյալներ խնդրեցի, տեխնիկատնտեսական հիմնավորումը պահանջեցի և մյուս օրը լրիվ զինված նոր նյութերով՝ գնացի մինիստրություն: Զոտովի սպասարանում 5 րոպե նստելուց հետո ինձ ներս հրավիրեցին: Երբ ներս էի մտնում, մինիստրի մոտից դուրս եկավ այն բաժնի վարիչը, որը նկարներն էր ցույց տվել:

Զոտովը ռուս մարդու դրական պատկերն էր, վերին աստիճանի բարեհամբույր, գեղեցիկ ու բնական մեծ խելքի տեր անձնավորություն: Նրա հետ ամեն անգամ հանդիպելիս, մի առանձին բավականություն էի ստանում: Հետագայում ես շատ անգամներ եմ գործ ունեցել նրա հետ:

Երբ այս անգամ էլ, ներս մտա, տեղից վեր կացավ, սիրալիր ժպիտով բարևեց ու առանց հապաղելու ասաց. «Հրամանը պատրաստ է: Եթե այստեղից մեծ օգուտ չստանաք, Նոյեմբերյանի սովխոզները կծածկեն այդ ծախսերը»: Ես անմիջապես պատասխանեցի. «Խնդրում եմ չանհանգստանալ, այս տնտեսություններն իրենց եկամտաբերությամբ չեն զիջելու Նոյեմբերյանի սովխոզներին: Թող այդ քարերը Ձեզ չվախեցնեն, մենք՝ հայերս, լավ գիտենք նրանց հետ վարվելու ձևերը, դրանք կամ չինանյութ կդառնան, կամ այնպիսի կույտեր, որոնք չեն խանգարի երկրագործությանը»: Մի խոսքով, վստահեցրի, որ ամեն ինչ կարգին կլինի: Այդպես էլ եղավ:

Երբ առավոտյան նա ինձ ընդունեց, հրամանն արդեն պատրաստ էր: Ես, իհարկե, անմիջապես հասկացա, որ ընկ. Միկոյանն արդեն խոսել է Զոտովի հետ, այնուամենայնիվ, չհամբերեցի և հարցրեցի, թե ընկ. Միկոյանը խոսե՞լ է, թե՞ ոչ:

Զոտովն պատասխանեց, որ Անաստաս Իվանովիչն իրեն ասել է, թե «Հայաստանում որտեղ կարող ես գտնել մի այնպիսի վայր, որը քարքարոտ չլինի: Երբ կա արևը և ջուրը, հայ գյուղացին կարող է հրաշքներ գործել»:

Իրոք, Թալինի սովխոզների կազմակերպումը, այդ քարքարոտ հողերի մշակումը, նոր այգիների տնկումը, բնակավայրերի բարեկարգումը փոխեցին շրջանի պատկերը, մարդիկ դարձան ավելի վստահ իրենց վաղվա օրվա նկատմամբ: Միանգամից ավելացան շրջանի եկամուտները: Այդ նախալեռնային շրջանը, որն իր պատմության ընթացքում հաջողություններ չէր տեսել, ունեցավ իր հիանալի այգիները և դարձավ հանրապետության խաղողագործական շրջաններից մեկը:

Երբ դեռ այգիները նոր էինք հիմնում, մասնագետների մեջ տարակուսանք առաջացավ. այդ տարածություններում կարելի՞ է խաղողի այգիներ տնկել, թե՞ ոչ: Ավելին. առարկողներն ավելի շատ էին, քան կողմնակիցները:

Տեխնիկատնտեսական հիմնավորումը կազմեց Մինաս Շահբազյանը, որը գրել էր միայն այգիների վերաբերյալ, առանձնապես չէր ընդգծել խաղողի մասին: Երբ արդեն պրակտիկորեն սկսվել էր այգետունկը, մեծ վեճերի և կասկածների առիթ տվեց: Միայն մեր միջամտություններից հետո որոշվեց պտղատու այգիներին զուգընթաց տնկել նաև խաղող: Դա առանձնապես վերաբերում էր Արագածի սովխոզին, որն այժմ ամենից շատ է խաղող արտադրում:

ուսումնասիրել և նկարել էր: Քարտեզների միջոցով հնարավոր եղավ համոզել, որ նա փաստորեն, լավ հողերը չի տեսել, քանի որ առավել լավ տարածությունները գտնվում են խորքերում և այլն:

Բանն այն է, որ մինչև իմ Մոսկվա գնալը՝ Փիրուզյանը, որն այն ժամանակ սննդարդյունաբերության մինիստրն էր, նախօրոք գրություն էր գրել, խնդրել սովխոզների կազմակերպման համար գումարներ տալ, իսկ մինիստրության ներկայացուցիչները եկել, ուսումնասիրել ու հրաժարվել էին միջոցներ տրամադրելուց:

Այս բոլորից հետո, իհարկե, շատ դժվար էր Զոտովի համար խնդիրը դրականորեն լուծել: Այդ օրը հարցը չորոշվեց, պայմանավորվեցինք հանդիպել մյուս օրը:

Մինչև մինիստրություն գնալը, այցելեցի ընկ. Միկոյանին: Նա պատվիրեց, որ հարցի որոշումից հետո զեկուցեմ իրեն: Ընկ. Միկոյանը լսեց այդ բոլորի մասին և ժպտալով ասաց. «Իսկ Հայաստանում, որտե՞ղ քար չկա»: Երկար չպահեց ինձ, ասաց, որ վաղն առավոտյան լինեմ Զոտովի մոտ:

Երևանից նոր տվյալներ խնդրեցի, տեխնիկատնտեսական հիմնավորումը պահանջեցի և մյուս օրը լրիվ զինված նոր նյութերով՝ գնացի մինիստրություն: Զոտովի սպասարանում 5 րոպե նստելուց հետո ինձ ներս հրավիրեցին: Երբ ներս էի մտնում, մինիստրի մոտից դուրս եկավ այն բաժնի վարիչը, որը նկարներն էր ցույց տվել:

Զոտովը ռուս մարդու դրական պատկերն էր, վերին աստիճանի բարեհամբույր, գեղեցիկ ու բնական մեծ խելքի տեր անձնավորություն: Նրա հետ ամեն անգամ հանդիպելիս, մի առանձին բավականություն էի ստանում: Հետագայում ես շատ անգամներ եմ գործ ունեցել նրա հետ:

Երբ այս անգամ էլ, ներս մտա, տեղից վեր կացավ, սիրալիր ժպիտով բարևեց ու առանց հապաղելու ասաց. «Հրամանը պատրաստ է: Եթե այստեղից մեծ օգուտ չստանաք, Նոյեմբերյանի սովխոզները կծածկեն այդ ծախսերը»: Ես անմիջապես պատասխանեցի. «Խնդրում եմ չանհանգստանալ, այս տնտեսություններն իրենց եկամտաբերությամբ չեն զիջելու Նոյեմբերյանի սովխոզներին: Թող այդ քարերը Ձեզ չվախեցնեն, մենք՝ հայերս, լավ գիտենք նրանց հետ վարվելու ձևերը, դրանք կամ չինանյութ կդառնան, կամ այնպիսի կույտեր, որոնք չեն խանգարի երկրագործությանը»: Մի խոսքով, վստահեցրի, որ ամեն ինչ կարգին կլինի: Այդպես էլ եղավ:

Երբ առավոտյան նա ինձ ընդունեց, հրամանն արդեն պատրաստ էր: Ես, իհարկե, անմիջապես հասկացա, որ ընկ. Միկոյանն արդեն խոսել է Զոտովի հետ, այնուամենայնիվ, չհամբերեցի և հարցրեցի, թե ընկ. Միկոյանը խոսե՞լ է, թե՞ ոչ:

Զոտովն պատասխանեց, որ Անաստաս Իվանովիչն իրեն ասել է, թե «Հայաստանում որտեղ կարող ես գտնել մի այնպիսի վայր, որը քարքարոտ չլինի: Երբ կա արևը և ջուրը, հայ գյուղացին կարող է հրաշքներ գործել»:

Իրոք, Թալինի սովխոզների կազմակերպումը, այդ քարքարոտ հողերի մշակումը, նոր այգիների տնկումը, բնակավայրերի բարեկարգումը փոխեցին շրջանի պատկերը, մարդիկ դարձան ավելի վստահ իրենց վաղվա օրվա նկատմամբ: Միանգամից ավելացան շրջանի եկամուտները: Այդ նախալեռնային շրջանը, որն իր պատմության ընթացքում հաջողություններ չէր տեսել, ունեցավ իր հիանալի այգիները և դարձավ Հանրապետության խաղողագործական շրջաններից մեկը:

Երբ դեռ այգիները նոր էինք հիմնում, մասնագետների մեջ տարակուսանք առաջացավ. այդ տարածություններում կարելի՞ է խաղողի այգիներ տնկել, թե՞ ոչ: Ավելին. առարկողներն ավելի շատ էին, քան կողմնակիցները:

Տեխնիկատնտեսական հիմնավորումը կազմեց Մինաս Շահբազյանը, որը գրել էր միայն այգիների վերաբերյալ, առանձնապես չէր ընդգծել խաղողի մասին: Երբ արդեն պրակտիկորեն սկսվել էր այգետունկը, մեծ վեճերի և կասկածների առիթ տվեց: Միայն մեր միջամտություններից հետո որոշվեց պտղատու այգիներին զուգընթաց տնկել նաև խաղող: Դա առանձնապես վերաբերում էր Արագածի սովխոզին, որն այժմ ամենից շատ է խաղող արտադրում:

Այդ վեճը երկար չարունակվեց, չնայած խաղողի այգիները հիմնադրվեցին երկու, թե երեք տարի անց:

Մի անգամ Հրաչյա Քոչարը եկավ Մինիստրների սովետ և խնդրեց ցույց տալ Թալինի սովխոզները: Ես չգիտեի, որ նա այդ վեճերին տեղյակ էր և շատ էր անհանգստանում, ուզում էր անձամբ տեսնել սովխոզները, հատկապես խաղողի այգիները:

Աշնանային մի չոգ օր աշխատանքից հետո գնացինք Թալինի նոր սովխոզները: Նախ ծանոթացանք Արագածի սովխոզի աշխատանքներին, տնօրեն Խանոյանի հետ, որն իրավամբ շատ մեծ ծառայություն էր մատուցել այդ այգիների տնկման և սովխոզն առաջավոր տնտեսությունների մակարդակին հասցնելու պատվավոր գործին: Խանոյանը մանրամասն պատմեց սովխոզի վիճակի մասին և, որ ամենակարևորն է, հեռանկարի մասին:

Քոչարն իր սովորության համաձայն՝ անընդհատ կատակում էր և զարմացած լսում նրան: Խանոյանը հրավիրեց տուն՝ հաց ուտելու, հրաժարվեցինք, ասելով. «Երբ դու կունենաս քո սեփական գինին, այն ժամանակ կգանք տուն»: Այդ խոսակցությունը լսեցին Արտենիի բրիգադիրները և սովխոզի՝ այն ժամանակվա տնօրենը:

Ուսումնասիրելով Արտենիի այգիները՝ եկանք բանավան: Մեր տպավորությունները շատ լավ էին և, հիրավի, տրամադրություններս բարձր:

Բրիգադիրներից մեկը խորհրդակցելով Պետպլանի նախագահի տեղակալ Լևոն Շահբազյանի հետ՝ դիմեց ինձ, ապա Քոչարին. «Դուք Արագածում հրաժարվեցիք տուն գնալ, պատճառաբանելով, թե դեռ սեփական խաղողից գինի չունի, ես ցանկանում եմ հրավիրել ձեզ իմ տուն, ցույց տալ իմ այգին և նոր խաղողի մաճառով հյուրասիրել»:

Իրոք, այդ բրիգադիրի այգին ցուցադրական այգի էր: Երեք տարվա այգի էր և արդեն բերքատու էր: Ոսկեհատ ողկույզները չարան-չարան կախված էին վազից: Մեր բարձր տպավորությանը չափ ու սահման չկար: Քոչարն այգի մտնելուց հետո երգեց սասունցիների մի երգ:

Տնօրեն Եղիշը, որը նախկինում կոմերիտմիության աշխատող էր եղել, շատ լավ հիշում էր Քոչարին դեռ այն ժամանակներից, երբ Քոչարը քրդական թերթի խմբագիրն էր: Նրանք շատ մտերմացան և առանձնացան ու սկսեցին սասունցիների բարբառով խոսել, կատակել և ուրախանալ:

Այդ երեկոն, Քոչարի բարձր տրամադրությունը, սասունցիների հյուրասիրությունը ինձ վրա անջնջելի տպավորություն թողեցին:

Երբ հարց էր լինում Թալինի շրջանի այդ հատվածում խաղողի այգիների հիմնման մասին, Քոչարը միշտ ասում էր, թե մեր ժողովուրդն ինչքան բարդ ու բազմազան է իր անցյալի պատմությամբ, այնքան էլ բարդ ու բազմազան է այս փոքրիկ երկիրն իր բնակլիմայական պայմաններով և որ դրա համար պետք է ծանոթ լինել շատ մոտիկից և նրանց կյանքի փորձին:

Կասկածից վեր է, որ այստեղ շատ լավ խաղող է լինում. և, իրոք, կյանքը ցույց տվեց, որ դա մեր հանրապետության խաղողագործության շրջաններից մեկն է դարձել: Այստեղ նաև գինիների շատ յուրահատուկ տեսակներ են են ստացվում: Թալինի շրջանի զարգացման համար շատ կարևոր նշանակություն ունեցավ անասնապահական համալիրների կառուցումը, որոնք պետք է արտադրեին հանրապետության խոզի մսի 60-65 տոկոսը:

Արտադրական ձեռնարկությունների կառուցումը, շրջկենտրոնի բարեկարգումը, մշակույթի տան, հանրախանութների ու բազմաթիվ բնակելի շենքերի կառուցումը ամբողջովին փոխեցին հին, խարխուլ, հողածածկ Վերին Թալինի պատկերը:

Կարելի է ասել, որ Վ. Թալինը դարձել է հանրապետության փոքր, բայց գեղեցիկ քաղաքներից մեկը, մանավանդ, երբ հեռվից դիտում ես վերականգնված 7-8-րդ դարերի եկեղեցիների ուրվականների հետ հարմարեցված ճարտարապետական նոր կառույցները, որոնք մի յուրահատուկ տեսք են տալիս Արագածի ստորոտում փռված այսօրվա քաղաքին:

Թալինը մեր այն բնակավայրերից է, որտեղից հին դարերում անցել են Արևելքն Արևմուտքին կապող ճանապարհները: Դեռ մինչև հիմա էլ մնում են քարվանսարաների հետքերը, որտեղ

կանգ են առել մեծ ու փոքր քարավանները: Հավանաբար Թալինն ունեցել է իր յուրահատուկ դերը, այդ են վկայում հին եկեղեցիներն ու քարվանսարաները, հուշարձանները: Բայց Թալինն իր բազմադարյան պատմության ընթացքում այսպիսի մասսայական, համընդհանուր չենություն ու բարգավաճում չի ապրել, ինչպես այժմ է ապրում:

Երբ ավարտեցինք ջրանցքների շինարարությունը, անհրաժեշտ էր վերաբնակեցնել այն լեռնային գյուղերը, որոնք զարգացման հեռանկար չունեին: Այս բնակավայրերը հիմնվել են մեր ժողովրդի ամենածանր պահին՝ 1915-1920 թվականներին: Շատերն Արևմտյան Հայաստանից փախել և տեղավորվել են այս քարքարոտ, բնակության համար անհարմար վայրերում:

Պարզ է, որ մենք բոլորս տրամադրված էինք այդ գյուղերի բնակչությանը վերաբնակեցնել Թալինի նոր սովխոզներում, որտեղ զարգացման համար, ինչ խոսք, կային ավելի մեծ հնարավորություններ: Թալինում կուսակցական շրջկոմի քարտուղար էր աշխատում Գևորգ Կարապետյանը՝ շատ համեստ, բարձր ու առաքինի անձնավորություն: Նա սասունցի է՝ նրանց բնավորությամբ ու սովորություններով և շատ լավ ընկեր:

Երբ առաջին անգամ հանդիպեցի նրան շրջանային կոմիտեում, այն տպավորությունը ստացա, որ ինքը կողմնակից չէ լեռնային գյուղերի վերաբնակեցմանը: Ես երկար ու բարակ բացատրեցի բյուրոյի անդամներին, Կենտրոնական կոմիտեի և կառավարության կարծիքը, որ անհրաժեշտ է լեռնային գյուղերը վերաբնակեցնել:

Բացի գործկոմի նախագահ Բ. Սարգսյանից, բոլորը կասկածամտորեն մոտեցան այդ հարցին՝ պատճառաբանելով, որ գյուղացիները չեն ցանկանում վերաբնակվել՝ ասելով, որ մի քանի տասնամյակների ընթացքում նրանք գաղթել են մի քանի անգամ և այժմ չեն ուզում նորից քանդել իրենց արդեն պապենական դարձած օջախը: Չնայած բոլորն էլ գտնում են, որ այդ տեղերում ապրելը շատ ավելի դժվար է, քան ջրանցքի մոտ գտնվող բնակավայրերում:

Երեկոյան բյուրոյի նիստն ավարտելուց հետո պայմանավոր-

վեցինք, որ ես, Կարապետյանը և Սարգսյանը պետք է գնանք մի քանի գյուղ, խոսենք ու համոզենք գյուղացիներին և կազմակերպենք վերաբնակեցումը:

Հաջորդ օրը երեքով եղանք Ներքին Արթիկում, այժմյան Դավթաշենում, Վերին Բազմաբերդում: Առաջին ժողովը, որտեղ գյուղացիները լսեցին շրջանի գործադիր կոմիտեի նախագահ Բ. Սարգսյանի հաղորդումը, Ներքին Արթիկն էր: Այս անգամ սովորականից շատ գյուղացիներ էին հավաքվել: Ավելին, մեծ հետաքրքրությամբ լսում էին մեր հաղորդումները, ծանոթանում սովխոզների պայմանների հետ: Կարծես ամեն ինչ կարգին էր և մեր բացատրություններից համոզվում էին, որ վերաբնակեցումը կատարվում է հօգուտ իրենց շահերի, որ մենք շահագրգռված ենք, մտահոգված իրենց հեռանկարի, ապագայի համար: Դա շատ լավ էր:

Մի բան, որ աչքի էր զարնում, այն էր, որ գյուղի երիտասարդությունը կողմնակից էր վերաբնակեցմանը, իսկ ավագները դեմ էին: Ստացվում էր այնպես, որ երբ երիտասարդներն էին խոսում, կարծես մեծամասնությունը համաձայն էր, իսկ երբ ավագներն էին խոսում, նորից այնպիսի տպավորություն էր ստացվում, որ մեծամասնությունն առարկում է:

Երկար խոսելուց հետո գյուղի ավագը, մի ծերունի ասաց, որ իրենք իրենց հայրերի ու պապերի հողն ու ջուրը, գերեզմաններն ու տները չեն կարող թողնել և խնդրում են այդպիսի քայլի չդիմել, սասունցիների բարբառով նա սահմանափակեց. «Մենք չընքուզի»:

Գրեթե բոլոր գյուղերում նույն դրությունն էր ու նույն վերաբերմունքը, նույն պատասխանը: Այս բոլորը ստիպեց, որ մենք դիմենք այլ ճանապարհի՝ սովխոզներն աշխատավոր ձեռքերով ապահովելու համար:

Փաստորեն հրաժարվեցինք ամբողջ գյուղը վերաբնակեցնելու մտքից և բոլոր գյուղերից միայն ցանկացողներին, վերաբնակեցման կոմիտեի միջոցով ապահովեցինք սովխոզների պահանջները:

Արդեն անցել է մոտ երեք տասնամյակ, և կյանքը ցույց

տվեց, որ այսօր այդ գյուղերը դարձել են օրինակելի, բարեկարգ, իրենց ակումբներով, դպրոցներով, հիվանդանոցներով և հիանալի բազմահարկ բնակարաններով, իրենց պարտեզներով:

Ով Թալին գնալիս նայել է Ներքին Բազմաբերդին, Դավթաշենին, Մեհրիբանին, լրիվ համոզվել է, որ իրականում ստացվեց այնպես, որ ջրանցքի շրջակա տարածքների հողերի իրացման հետ միասին նոր պայմաններում իրենց հիանալի զարգացումն ապրեցին լեռնային գյուղերի կոլտնտեսություններն ու սովխոզները:

Հիրավի, ամեն մի ազնիվ հայրենասերի անկեղծ ուրախություն է պատճառում այս բոլորը: Եթե հաշվի առնենք, որ մի քանի տարի հետո, երբ կավարտվի Ախուրյանի ջրամբարի կառուցումը, Թալինի լեռնային գյուղերի հողերի մի մասը ոռոգվելու է, և կասկածից վեր է, որ այդ գյուղերում նոր, հիանալի հեռանկարներ են բացվելու:

Այսպիսի հողակլիմայական պայմաններում նման զարգացում կարող են կատարել այն մարդիկ, այն հայրենասերները, որոնք չատ դաժան պայմաններից հետո ձգտել են կերտել նոր բարգավաճ կյանք:

Թալինը մեծ զարգացում կապրի Ախուրյանի ջրամբարի կառուցումից հետո, երբ նրանց խոպան հողերը ջուր կստանան և կվերածվեն այգիների ու բերքատու դաշտերի:

Վերջին տարիներին շրջանի ղեկավար ընտրվեց սասունցի, լավ հայրենասեր, տեղացի Պայքար Խաչատրյանը: Սիրում է իրենց քարերը, հողն ու ջուրը, ճանաչում է մարդկանց և կարողանում է արդյունավետ ուղիներ գտնել շրջանի էկոնոմիկայի զարգացման համար:

* * *

Դեռ 1931 թ. ինձ Կիրովականի մի խումբ կոմերիտականների հետ այն ժամանակվա Ղարաքիլիսայի շրջկոմի կողմից ուղարկել էին Հոկտեմբերյանի (Ղուրդուղլու) շրջանի արդեն ցրված Լուկաչինի անվան կոմունայում աշխատելու: Ես ծնվել և մեծացել եմ Լոռվա գեղեցիկ բնաշխարհում, որտեղ կլիմայական

պայմանները միանգամայն բարենպաստ են մարդկանց ապրելու համար: Առաջին անգամ, երբ եկանք Սարդարապատի այդ խոպանը տեսանք, դժվար է նկարագրել, միայն հարկավոր էր տեսնել, որպեսզի պարզ պատկերացում ունենալ այդ դժոխային պայմանների մասին

Տեղի գյուղացիներն ինչ-որ չափով սովորել էին այդ կլիմայական պայմաններին, բացի դրանից, մի մասն էլ 1920 թվին գաղթել էր Արաքսի աջ ափից և մի կերպ տեղավորվել այս անապատում, որտեղ օձերից ու կարիճներից բացի, ուրիշ կենդանություն չկար: Խմելու համար օգտագործում էին Արաքս գետի պղտոր ջուրը:

Նոր էր ավարտվել Սարդարապատի ջրանցքի շինարարությունը, որով ոռոգվում էին պապակ հողերը: Մշակողները շրջանի բատրակներն էին, որոնք հավաքվել էին և Լուկաչինի անվան կոմունան կազմել: Մի քանի տարի հետո ինչպես մյուս կոմունաներում, այնպես էլ այստեղ որոշվեց կոմունան վերածել սովխոզի: Այդ որոշումից հետո չատ կոմունաների բնակիչները թողել, հեռացել էին և սովխոզում աշխատող ձեռք չէր մնացել: Ահա, թե ինչու տարբեր շրջաններից կոմերիտական բրիգադներ էին կազմել, ուղարկել Ղուրդուղլու Լուկաչինի անվան սովխոզին օգնելու, վար ու ցանք անելու:

Սովխոզի դիրեկտորն այն ժամանակ Արտաշես Գևորգյանն էր, իսկ գլխավոր ագրոնոմը՝ Լիլիա Շահնազարյանը: Ի զարմանք երիտասարդ կոմերիտականիս՝ արդեն կես մետր բարձրացած աշնանացան ցորենը վարում էին, որպեսզի տեղը բամբակ սածիլեին: Հասկանալի է, որ այդ տարածություններից ոչինչ չէր ստացվի, բայց կարգադրված էր բամբակ աճեցնել Հոկտեմբերյանում, Սարդարապատի ջրանցքի տարածքում: Իհարկե, խելացի բան չէր կատարվում:

Աշնանը, բամբակի մշակման համար հատկացված հողերում ցանել էին հացահատիկ, իսկ մնացած խոպան հողերում բամբակ չէր աճի: Եվ ահա ցանված արտերը վարում էին: Ես մի քիչ ավելի երկար մնացի, քան իմ ընկերները և տեսա մեր տնկած բամբակի արդյունքը: Իրականում բամբակ չաճեց, մոլախոտ և

ցորենի մնացորդներն աճեցին և խեղդեցին բամբակի բույսերը: Ջմտածված գործեր շատ են կատարվել մեր պայմաններում: Դրանցից մեկն էլ այս էր:

Բայց վերադառնանք Հոկտեմբերյանին: Հոկտեմբերյանում մինչև Սարդարապատի ջրանքի կառուցումը, ոռոգման ջուր շատ քիչ կար, և մարդիկ շատ աղքատ էին ապրում: Ավելին. այստեղ դժվարությամբ կարելի էր գտնել մալարիայով չհիվանդացած մարդու: Երեխաների տեսքը սարսափելի էր՝ դեղնած, մեծացած որովայնով ու վտիտ: Կային կաղ, վաղուց կուրացած և այլ արատներով մարդիկ:

Ամենևին նպատակ չեմ դրել նկարագրել Ղուրդուղլուի շրջանի ծանր դրությունը. դա համընդհանուր բնույթ ուներ մեր հանրապետության մյուս բոլոր շրջանների համար:

Այժմ Հոկտեմբերյանը դարձել է մեր հանրապետության գեղեցիկ և բարեկարգ քաղաքներից մեկը: Ի դեպ, պետք է ասեմ, որ 1931 թվին, երբ հիմնադրվում էր Հոկտեմբերյան քաղաքը, ես ներկա էի այդ արարողությանը: Առաջին կառույցը, որի հիմքը դրվեց, շրջանային գործադիր կոմիտեի շենքն էր, որը երկար ծառայեց կուսակցական շրջկոմի և գործադիր կոմիտեի համար: Այնպես որ ինձ համար հեշտ է համեմատել եղածը նախկինի հետ: Այժմյան քաղաքի տեղը բացարձակ օձերի ու կարիճների բուն էր: Հիրավի, դժվար է հավատալ և պատկերացնել այդպիսի փոփոխությունները:

Փաստը մնում է փաստ: Հոկտեմբերյանը հանրապետության արդյունաբերական կենտրոններից մեկն է դարձել, այստեղ կառուցվեցին գյուղատնտեսական հումքի վերամշակման ձեռնարկություններ, պահածոների, գերանի վերամշակման, գինու մի քանի և կոնյակի գործարան:

Հոկտեմբերյանցիները հպարտանում են իրենց քաղաքով, իրենց արդյունաբերության արտադրանքով: Հաստոցաշինական գործարանի արտադրանքը հայտնի է մեր երկրի սահմաններից դուրս: Քաղաքին առանձին շուք է տալիս կահույքի կոմբինատը: Գեղեցիկ պողոտաները, պուրակները զարդարված են ժամանակակից կառույցներով: Մշակույթի տունը, հյուրանոցը,

բնակելի շենքերը հաճելի տպավորություն են թողնում ինչպես ծանոթ, այնպես էլ անծանոթ մարդկանց վրա:

Հոկտեմբերյանը, որի բնակչությունը տարիների ընթացքում խմել էր Արաքսի պղտոր ջրերը, այժմ ստանում է Այղր լճի և Ապարանի աղբյուրների ջրատարներով հոսող սառնորակ ջուրը: Իրոք, դժոխքը դարձել է դրախտավայր:

Վերջին տարիներին, երբ ավարտվեց Ապարանի ջրատարի կառուցումը, բացումը վերածվեց համաժողովրդական տոնի: Սարդարապատցիները վերհիշեցին իրենց հին սովորությունները: Այս աղբյուրի բացմանը, բացի քաղաքի բնակիչներից, ներկա էին գրեթե բոլոր գյուղերից ժամանած և այլ քաղաքներում բնակվող նախկին հոկտեմբերյանցիները:

Կուսակցության շրջանային կոմիտեի քարտուղար Վանիկ Թովմասյանը, որը շատ ջանքեր է գործադրել այդ աղբյուրների ջուրը Հոկտեմբերյան բերելու համար, միտինգում շատ հուզիչ ճառ ասաց և ողջունեց բնակիչներին մեծ նվերի համար: Դժվար է նկարագրել այդ ցնծությունը, միայն պետք էր տեսնել պատկերացնելու համար:

Հիրավի, Հոկտեմբերյանը մեր կարգերի ծնունդն է, հետպատերազմյան տարիների բուռն զարգացած քաղաքն է: Իսկ Հոկտեմբերյանի շրջանը իր բարձր, ինտենսիվ գյուղատնտեսությամբ և հատկապես Ախուրյանի ջրամբարի շինարարության ավարտից հետո կդառնա հզոր արդյունաբերական ու գյուղատնտեսական շրջան:

Հոկտեմբերյանի տեսակարար կշիռն ավելի է բարձրանում խոշոր ատոմային կայանի գործարկումից հետո, նոր Մեծամոր քաղաքի կառուցումով: Իրոք, հրաշք է թվում, որ այդ ամայի անապատներում վեր են բարձրացել ժամանակակից քաղաքներ՝ արտադրական ձեռնարկություններով, կուլտուր-լուսավորական հիմնարկներով:

Հոկտեմբերյանը նշանավորվում է նաև նրանով, որ մեր ժողովրդի բարգավաճման խորհրդանիշ-հուշարձանն է այստեղ վեր բարձրացել՝ նշելով նրա հերոսական մարտերը ընդդեմ օտարերկրյա զավթիչների, ցեղասպանների:

Պատահական չէ, որ ամեն մի զբոսաշրջիկ իր պարտքն է համարում այցելել Սարդարապատ՝ տեսնելու հուշարձան-համայիրը, որի ճարտարապետն էր ակադեմիկոս Ռաֆայել Իսրայելյանը: Հուշարձանը խորհրդանշում է մեր ժողովրդի հաղթանակը, որ չկրկնվեն նման զարհուրելի հարձակումներ:

Հոկտեմբերյանն այն շրջաններից է, որի ամեն մի գյուղ իրենից ներկայացնում է փոքր քաղաք՝ կուլտուրայի տներով ու հիվանդանոցներով, դպրոցներով, մանկապարտեզ-մանկամսուրներով: Գրեթե բոլոր տները երկհարկանի են՝ իրենց մառաններով և ավտոտնակներով:

1973 թ. մեր հանրապետություն էր եկել էլեկտրոնային արդյունաբերության մինիստր Ա. Շոկինն իր տիկնոջ հետ:

Սարդարապատի հուշարձանը տեսնելուց հետո, երբ վերադառնում էինք, նա շատ խնդրեց իրեն ցույց տալ մի գյուղացու բնակարան: Որպեսզի չկասկածի, որ մենք ծանոթ բնակարան ենք ցույց տալիս, ես խնդրեցի, որ ինքը մատնացույց անի այն բնակարանը, որը պետք է տեսնեինք:

Ճանապարհին Շոկինը ցույց տվեց մի տուն և խնդրեց, որ ներս մտնենք: Դա Հոկտեմբեր գյուղում էր: Առանց զգուշացնելու՝ բակ մտանք այն ժամանակ, երբ հացատանը լավաշ էին թխում: Հոկտեմբերի 12-ն էր, տնամերձի թարմայից խնկի նման կախված խաղողն արդեն հասել էր: Դա առաջին չչմեցնող տպավորությունը թողեց հյուրերի վրա:

Մոտեցանք հացատանը, որտեղ մի շատ բարեհամբույր ծեր կին իր նորահարսի հետ լավաշ էր թխում: Երբ իմացավ, որ հյուրերը Մոսկվայից են, գործը թողեց և սիրալիր հրավիրեց տուն: Մինչ մենք դիտում էինք բնակարանը, նա հյուրասիրության սեղան պատրաստեց, միաժամանակ երեխային ուղարկեց իր որդու ետևից, որն աշխատում էր մոտակա դաշտում:

Շուտով տղան եկավ: Բարեբախտաբար որդին ծառայել էր բանակում և շատ վարժ խոսում էր ռուսերեն: Շոկինը սկսեց հարցեր տալ, հետաքրքրվել եկամուտների, կոլտնտեսականների կյանքի ու գործերի մասին: Շատ հավանեց զրուցակցին, և ինքն առաջարկեց սեղան նստել՝ չնեղացնելով տանտիրոջը:

Նստեցինք միրգ ուտելու: Միրգը դարձավ հավի խորոված, գինի ու այլ խմիչքներ: Երկար նստեցինք: Իրոք, մեծ հաճույք ստացանք. առաջին հերթին ես հպարտանում էի մեր ժողովրդի հյուրասիրությամբ: Ինչքան հանդիպել եմ Շոկինին, միշտ հիշեցրել է այդ ընդունելության մասին:

Ես ասացի, որ ատոմային կայանի կառուցմամբ Հոկտեմբերյանի տեսակարար կշիռը շատ է բարձրանալու: Այս կայանի կառուցումը շատ վիճաբանությունների և կասկածների տեղիք է տվել, մինչև հիմա էլ մարդիկ կան, որոնք գտնում են, թե ատոմային էլեկտրակայան Հայաստանում չպետք է կառուցվեր:

Ատոմակայանի կառուցման հարցն առաջ է եկել դեռ 1958 թվականին, երբ մեր հանրապետությունում վառելիքի և էլեկտրաէներգիայի հարցը շատ էր սրվել: Հայտնի է, որ հանրապետությունում չկա վառելիքի ոչ մի տեսակ, զուրկ է նավթից ու գազից, ածուխից ու տորֆից, սակավ է անտառներով: Հիդրոէներգետիկ ռեսուրսները խիստ սահմանափակ են: Սևանի կասկադի գործարկումից հետո անհրաժեշտ էր պակասեցնել լճից բաց թողնվող ջրի քանակը, հետևապես նվազելու էր էլեկտրաէներգիայի արտադրությունը: Իսկ Որոտանի կասկադի շինարարությունը դեռ նոր էր սկսվել, որը մինչև հիմա էլ շարունակվում է:

Մի խոսքով, արտադրվող էներգիան էկոնոմիկայի և բնակչության պահանջները չէր բավարարում, իսկ եթե նկատի ունենանք նաև էկոնոմիկայի արագ զարգացման պահանջները, ապա պարզ է, որ հրատապ է դառնում գտնելու էներգիայի մի նոր աղբյուր, որը կարողանար երկար ժամանակ լուծել հանրապետության օրավուր աճող պահանջները:

Ահա այս պայմաններում էր, որ 1960 թ. հարց բարձրացվեց ատոմակայանի կառուցման մասին: Անշուշտ, նորություն էր այդ կայանների կառուցումը, կատարելագործված ռեակտորներ չկային:

Երբ այդպիսի անհրաժեշտություն առաջացավ, ես դիմեցի մեր հայրենակից Ալիխանովին, որը ռեակտորների հեղինակ էր, խնդրեցի նրան՝ կազմակերպել հանդիպում մեծ եղբոր հետ:

Արտյոմը պայմանավորվեց եղբոր՝ Աբրահամի հետ, որպեսզի հանդիպեմ նրան: Վերջինս մեզ հրավիրեց քաղաքից դուրս գտնվող իր ամառանոց: Գնացի այն ժամանակ, երբ Ալիխանովը զրուցում էր մի հաղթանդամ մարդու հետ: Ա. Ալիխանովը ծանոթացրեց. դա ատոմային էներգիայի օգտագործման կոմիտեի նախագահ Ե.Պ. Սլավսկին էր:

Անշուշտ, ինձ հետաքրքրում էր Ալիխանովի կարծիքը՝ մեզ մոտ ատոմային էլեկտրակայան կառուցելու վերաբերյալ: Իսկ նա իմանալով իմ հարցի էությունը՝ հրավիրել էր նաև Սլավսկուն: Հաճելի երեկո էր: Առաջին անգամ էի հանդիպում մեր հայրենակից Աբրահամ Ալիխանովին: Նրա աշխարհահռչակ գիտնական լինելը հայտնի է ամենքին, բայց որ նա այդքան հաճելի, աշխարհիկ մարդ էր, հիացրեց ինձ:

Բանն այն է, որ Ա. Ալիխանովն իմ հարցերից և ոչ մեկին չպատասխանեց, ասելով, թե քանի որ մշակվում է իր ռեակտորը՝ 400 և ավելի կ/վատտ ժամով, կարող է ես մտածեմ ինքը չահագրգռված է դրանով:

Զրույցը տեղի ունեցավ իմ և Սլավսկու միջև: Վերջինս բոլոր փաստարկներով համոզում էր ատոմակայանի օգտավետության, ոչ վնասակարության մասին: Ես շատ անհանգստացած ասացի, որ մեր հանրապետության տարածքը չատ փոքր է և հարցրեցի. «Կարո՞ղ է վտանգ սպառնա շրջապատին և ընդերքին»: Նա ժպտալով պատասխանեց. «Ես ռուս մարդ եմ, եթե այսօր ինձ հարցնեն այդ մասին, ես կարող եմ ասել, որ ատոմակայան կարելի է կառուցել նաև Կարմիր հրապարակում և ոչ մի վտանգ չկա: Ատոմակայանների, այսպես կոչված վտանգավորությունը տեխնիկայից հեռու կանգնած մարդկանց հորինածն է»:

Իհարկե, այն ժամանակ ատոմային կայանների սարքավորումները դեռ լրիվ կատարելագործված չէին և ինչ-որ կասկածների տեղիք էին տալիս, բայց այս ընագավառի ղեկավարները հաստատ համոզված էին, և այդպես էլ ստացվեց:

1960 թվականից հետո աշխարհի այն երկրներում, որտեղ ատոմային տեխնիկան զարգացած էր, նրանք մեծ թափով

սկսեցին կառուցել մեծ կայաններ: Մեր երկրում սկսվեց չատ կայանների նախագծեր կազմվել, այդ թվում նաև մեր կայանի կառուցման նախագիծը:

Աբրահամ Ալիխանովի կարծիքը մեծ նշանակություն ունեցավ, որպեսզի Հայաստանի կառավարությունն ավելի վստահորեն դնի հանրապետությունում կայանի կառուցման անհրաժեշտությունը:

Երբ նախագծողները սկսեցին հետախուզական աշխատանքներ տանել և կայանի տեղը որոշել, մեզ մոտ չատերը մեծ աղմուկ բարձրացրեցին, սկսեցին գրել վերադաս մարմիններին՝ առաջարկելով կայանի կառուցումը տեղափոխել այլ շրջան:

Ցավն այն է, որ այդ անիմաստ աղմուկին միացան և նույնիսկ գլխավորում էին չատ անվանի հումանիտար գիտնականներ: Այդ ժամանակ մեծ դեր խաղաց ակադեմիայի պրեզիդենտ Վ. Համբարձումյանի կարծիքը: Իմ խնդրանքով նա մի քանի տեղ ելույթ ունեցավ և բացատրեց կայանի նշանակությունն ու անհրաժեշտությունը մեր հանրապետության համար:

Չնայած այդ բոլորին՝ ակադեմիայից չատերը նորից գրեցին վերադաս մարմիններին: Բանը հասավ նրան, որ միութենական կառավարությունը ցանկանում էր կայանը տեղափոխել երկրի այլ շրջան: Միայն Հայաստանի կոմկուսի Կենտկոմի միջամտությունից հետո համաձայնվեցին այն կառուցել մեզ մոտ:

Այժմ միանգամայն պարզ է, թե որքան լավ է ունենալ այդպիսի մի հզոր կայան՝ էլեկտրաէներգիայի աղբյուր, որը հնարավորություն է տալիս աննախընթաց զարգացնել հանրապետության էկոնոմիկան՝ չզգալով էլեկտրաէներգիայի պակաս: Իսկ դա չատ կարևոր պայման էր էկոնոմիկայի արագ զարգացման համար:

Ատոմային կայանը հնարավորություն է տալիս կառուցել ջերմոցային խոշոր տնտեսություն՝ օգտագործելով կայանի գոլորշին: Դա կապահովի մեր քաղաքների բնակչության պահանջարկը տարվա բոլոր եղանակներին: Որքան չուտ նախաձեռնվի այդ ջերմոցային խոշոր տնտեսության չինարարական աշխատանքը, այնքան քիչ գոլորշի կկորցնենք մենք:

Կայանի տեղն ընտրված է այնպես, որ հետագայում, եթե անհրաժեշտ լինի, ընդլայնել նրա կարողությունները: Արդարությունը պահանջում է խոսել ատոմային կոմիտեի նախագահ, այժմ միջին մեքենաշինության մինիստրի տեղակալ Ա. Պետրոսյանցի մեծ օգնության մասին: Նա որպես ղեկավար ու մասնագետ՝ հրատարակեց մի քանի պոպուլյար գրքեր, որոնք մեծ նշանակություն ունեցան մարդկանց համոզելու գործում:

Առհասարակ ՍՍՀՄ կառավարությունը, հատկապես Ա. Կոսիգինը, շատ լավ էր պատկերացնում էլեկտրաէներգիայի արտադրության վիճակն Անդրկովկասում, առանձնապես Հայաստանում: Այդ պատճառով էլ որքան գրեցին և բողոքեցին, նա բացարձակապես անուշադրության մատնեց դրանք:

Հիշում եմ մի դեպք: Երբ ես և Վրաստանի Մինիստրների խորհրդի նախագահ Ջավախաշվիլին, գտնվում էինք Կոսիգինի մոտ, նա առաջարկեց մի կայան էլ կառուցել Վրաստանում՝ նկատի ունենալով Անդրկովկասում ստեղծված վիճակը: Վրացի ընկերը հրաժարվեց: Անցան տարիներ, նույն այդ Ջավախաշվիլին շատ սուր դրեց իրենց մոտ ատոմակայան կառուցելու հարցը:

Կրեմլի պալատներից մեկում արտասահմանյան հյուրերի ընդունելություն էր, հանրապետությունների ղեկավարները ևս հրավիրված էին: Կոսիգինին բարևելուց հետո ինձ խնդրեց քիչ ուշ մոտենալ իրեն: Երբ մոտեցա, նրա մոտ կանգնած էր Ջավախաշվիլին:

Ա. Կոսիգինը դիմելով ինձ ասաց. «Դուք գիտեք, որ Գիվի Դմիտրովիչը շատ վճռական հարց է դնում, որ իրենց մոտ նախատեսված է ատոմակայանի շինարարություն, իսկ հիմա մենք հնարավորություն չունենք, բոլոր տեսակի ռեսուրսները չեն ներում: Երբ մենք էինք առաջարկում, նա հրաժարվում էր, պատճառաբանելով, որ կարող է իրենց առողջարանների օդը աղտոտվի: Իսկ հիմա արդեն գտնում է, որ այդ վտանգը չկա, բայց հիմա էլ ուշ է, որովհետև արդեն մոտակա տարիների համար այդպիսի կայանների տեղերը որոշված են»:

Այդ զրույցից հետո մենք Գիվի Դմիտրովիչի հետ միասին

հեռացանք, հիանալով ընկ. Կոսիգինի գործունեության ու հեռատեսության կարողությամբ:

Առհասարակ շատ տաք և եռանդուն աշխատանք կատարեցին մեր հանրապետության էներգետիկայի գլխավոր վարչության աշխատողները, առանձնապես վարչության պետ Ս. Վարդանյանը: Վճռական դերը, իհարկե, պատկանում է Պետպլանի աշխատողներին, հատկապես Լևոն Խաչատրյանին:

Ատոմակայանի շինարարության առիթով և նրա հաշվին Հոկտեմբերյան քաղաքն ավելի է բարեկարգվում և նրան ավելի մեծ շուք է տալիս նոր կամուրջի կառուցումը երկաթգծի վրա, որը միացնում է քաղաքի երկու բաժանված մասերը:

* * *

Մոտ երկու հազար տարվա պատմություն ունի էջմիածինը, որը հին դարերից մեզ հասած քաղաքներից մեկն է: Ցավոք, պետք է նշեմ, որ մինչև 50-ական թվականները, եթե հաշվի չառնենք հիասքանչ եկեղեցիները, էջմիածինը մեծ գյուղի տպավորություն էր թողնում: Բնակելի տներից գերակշռողը կավաշեն, հարթ հողե կտուրներով տներ էին և, երբ ամռան շոգին գիշերները դիտեիր, բոլոր կտուրների վրա հարմարեցված էին սպիտակ սավաններ, և բնակչությունը քնում էր հողե կտուրների վրա:

Այստեղ իր արժանավոր տեղն ունի ճեմարանը, որի շենքերը վանքից և եկեղեցիներից հետո այժմ էլ իրենց ճարտարապետական կառուցվածքով զարդարում են քաղաքը:

Էջմիածինն իր նոր կառույցներով արդեն կարող է մրցել ավելի մեծ քաղաքների հետ: Վերջին տարիներին կառուցվեցին բազմաթիվ պուրակներ ու պողոտաներ, հիանալի ճարտարապետական լուծում ստացավ Կոմիտասի հրապարակը, որի շուրջը տեղավորված են նոր շենքերն ու խոշոր հանրախանութները:

Բուն էջմիածնի կենտրոնում ծառատնկում չէր կատարվել: Բացի վանքապատկան պուրակից և վանքի շրջակա զրոսայգիներից մեր այս պատմական քաղաքում կանաչ տարածք չկար: Այժմ նոր կառույցների հետ միասին կանաչապատվել ու նոր

զբոսայգիներ են գցվել, որոնք միանգամից փոխել են էջմիածնի դեմքը: Այն գեղեցկացել ու հաճելի է դարձել ոչ միայն տեղաբնակների և մեր հանրապետության մարդկանց համար, այլև արտասահմանից հայրենադարձվածների համար, որոնք առանց թաքցնելու իրենց հրճվանքն են արտահայտում ինչպես մամուլում, այնպես էլ անհատական զրույցի ժամանակ:

Էջմիածինը մեր հանրապետության մշակութային, արդյունաբերական կենտրոններից է: Այժմ էջմիածնում ավելի շատ բնակիչ կա, քան 20-ական թվականներին Երևանում է եղել: Քաղաքի կառույցներն իրենց նախկին սահմաններից դուրս են եկել և միացել մեր պատմական Զվարթնոցին:

Ռադիոտեխնիկական գործարաններն իրենց մասնաճյուղերով, որոնք տեղավորված են խոշոր գյուղերում՝ Հայթաղում և այլ տեղերում, պլաստամասսայի խոշոր գործարանը, գինու, պահածոների գործարանները, իհարկե, շատ են բարձրացնում քաղաքի տեսակարար կշիռը հանրապետության էկոնոմիկայում:

Էջմիածնում ռադիոտեխնիկական գործարանները ստեղծվեցին շատ հետաքրքիր պայմաններում: Էջմիածինն այն բնակավայրերից էր, որտեղ կոլտնտեսականները չունեին իրենց տնամերձ հողերը, շատերը չէին աշխատում և այս փոքր քաղաքում առաջացել էր գործազուրկների մի ստվար խումբ: Պլաստմասսայի գործարանը, որի հիմքը դրել էր տեղական արդյունաբերության մինիստրությունը, շատ քիչ աշխատող ուժ էր զբաղեցնում:

Հրատապ խնդիր էր դրվել՝ կազմակերպել նոր ձեռնարկություններ՝ ավելի աշխատատար և քիչ մետաղատար, որովհետև դեռ երկաթգիծ չկար:

Երբ մեզ մոտ էր եկել մինիստր Ալեքսանդր Շոկինը, շրջկոմի քարտուղար Զաքոյանը խնդրեց հանդիպել իրենց շրջանում: Սարդարապատից վերադառնալիս Զաքոյանը ճանապարհին՝ Այդր լճի մոտ, դիմավորեց մեզ:

Երկար զրուցելուց հետո մինիստրին խոստացանք տալ ազատ շենք, որտեղ հնարավոր կլինի առայժմ արտադրություն

կազմակերպել մինչև գործարանի կառուցումը: Մինիստրին շատ էր հետաքրքրում «раземы»-ների արտադրությունը:

Այդպիսի ազատ տարածություններ եղան Հայթաղի և էջմիածնի բամբակի մթերման բազաները, որտեղ էլ կազմակերպվեց երկրի համար այդ շատ կարևոր արտադրությունը: Հետագայում կազմակերպվեց գիտահետազոտական ինստիտուտ իր միավորումներով, կառուցվեցին հիանալի գործարաններ: Էջմիածնի ազատ աշխատուժի հարցն արմատապես լուծվեց:

Էջմիածնի արագ զարգացման համար շատ կարևոր նշանակություն ունեցավ երկաթգծի կառուցումը՝ էջմիածին քաղաքից դեպի կայարան, որը շատ նպաստավոր պայմաններ ստեղծեց ինչպես գյուղատնտեսական մթերքների տեղափոխման, այնպես էլ շրջանի տնտեսությունների համար՝ արդյունաբերական ապրանքների ներմուծման համար:

Սոցիալ-մշակութային կյանքում կարևոր դեր խաղաց պատկերասրահի մասնաճյուղի բացումը: Դա Գևորգյան ճեմարանի շենքում էր, այնտեղ, որտեղ մեծ Կոմիտասը սովորել ու դասախոսել էր: Այստեղ ձևավորված է Կոմիտասին նվիրված հատուկ սրահ, որտեղ դրված է Կոմիտասի դաշնամուրը:

Հին հողատների փոխարեն վեր են խոյացել բազմաթիվ գեղեցիկ շենքեր, որոնք ճարտարապետական բարձր արժեք են ներկայացնում: Վերջին տասնամյակում խոշոր թափ ստացավ բնակարանային շինարարությունը:

Էջմիածին այցելող յուրաքանչյուր մարդ հնարավորություն ունի դիտելու ինչպես պատմական հիանալի հուշարձանները, այնպես էլ ժամանակակից կերպարվեստի հրաշալիքները: Այժմ էջմիածինը գյուղատնտեսական և արդյունաբերական խոշոր շրջան է, որը հանրապետության կյանքում խոշոր դեր է խաղում:

Ավելին, մայրուղու կառուցումը հնարավորություն է տալիս շատերին աշխատել կամ սովորել Երևանում, ապրել էջմիածնում կամ հակառակը շատ մասնագետներ ապրում են Երևանում, աշխատում էջմիածնում: Այնպես որ էջմիածինը մի տեսակ Երևանի արվարձանն է դարձել:

Հասկանալի է, այս պայմաններում որքան է փոխվել, դրական ինչպիսի ազդեցություն է թողել մայրաքաղաքը էջմիածնի բնակչության կուլտուրայի և կենցաղի զարգացման վրա: Տրանսպորտի միջոցների բարելավման պայմաններում էջմիածնի քաղաքացին հեշտությամբ օգտվում է մայրաքաղաքի թատրոններից: Չնայած այստեղ կինոթատրոնները բավականին շատ են, այնուամենայնիվ, անհրաժեշտության դեպքում նրանք հեշտությամբ օգտվում են Երևանից:

* * *

Նախկինում Արարատյան դաշտավայրն իրենից ներկայացնում էր միայն գյուղատնտեսական շրջաններ: Եթե արդյունաբերական ձեռնարկություններ կային, ապա միայն գյուղատնտեսական մթերքների վերամշակման համար, ինչպես նաև՝ գինու և պահածոների գործարաններ:

60-ական թվականների վերջերին սկսվեց արագ թափով կառուցվել արդյունաբերական շատ այլ ձեռնարկություններ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ գյուղատնտեսական աշխատանքի աշխատատար պրոցեսների մեքենայացմանը զուգընթաց, վերջին տարիներին մեր դաշտերից հանվեց բամբակի ցանքը: Այդ ամենի արդյունքով զգալի քանակությամբ աշխատուժ ազատվեց:

Այդ աշխատուժն օգտագործելու, մարդկանց աշխատանքով ապահովելու նպատակով անհրաժեշտություն առաջացավ Արարատյան դաշտավայրի շրջաններում գյուղատնտեսական մթերքների վերամշակման ձեռնարկություններից բացի կառուցել արտադրական այլ ձեռնարկություններ:

Այս տեսակետից շատ հատկանշական է Մասիսի շրջանը: Բոլորովին նոր քաղաք է դարձել Մասիսն իր արդյունաբերական ձեռնարկություններով և մատակարարման բազաներով: Այստեղ են կենտրոնացված Երևանի հիմնական մատակարարման բազաները, շինարարական կոնստրուկցիաների խոշոր կոմբինատը, պահածոների և գինու գործարանները:

70-ական թվականներին մեր հիմնական նպատակն էր

Մասիսը դարձնել բանջարաբուծական շրջան՝ Երևան քաղաքի բնակչությանը մատակարարելու համար, և որ կարևոր է, Երևան քաղաքից պետք է հանվեին բոլոր տեսակի մատակարարման խոշոր բազաները, ունենալ արբանյակ մոտիկ քաղաքին: Այդպես էլ արվեց: Այժմ Մասիսի շրջանը երկրին տալիս է հանրապետությունում արտադրվող բանջարեղենի մեկ երրորդը, ինչպես նաև թարմ կաթնամթերք և շատ կարևոր արդյունաբերական արտադրանք:

Նոր շրջկենտրոնը գյուղական շրջանների մեջ ամենից բարեկարգվածն է գեղեցիկ բնակելի շենքերով, հիվանդանոցով, դպրոցներով ու կինոթատրոններով: Այժմ այս շրջանն աճում է ամենից արագ և, հասկանալի է, նորի իր լավագույն հեռանկարներով: Արդեն սկսված է Մասիս-Արզնի երկաթգծի կառուցման աշխատանքը:

Այս շինարարությամբ լուծվում է մի շատ կարևոր հարց: Հիմնական մայրուղին, որն այժմ անցնում է Երևան քաղաքի միջով մեծ անհանգստություն է պատճառում բնակչությանը: Մասիսի երկաթգծի կառուցումով շրջանցվում է մայրաքաղաքը և դրանով ապահովվում է քաղաքացիների անդորրն ու երկաթուղու անխափան աշխատանքը:

Շատ երկար ժամանակ պահանջվեց, որպեսզի լուծվի այդ կառույցի հարցը: Մեծ ջանքեր թափեցին հանրապետության ղեկավար աշխատողները, հատկապես Մինիստրների խորհրդի նախկին նախագահ Բաղալ Մուրադյանը, Պետպլանի աշխատողներ Մ. Ալավերդյանն ու Լ. Խաչատրյանը:

Հիրավի, Երևան-Աղստաֆա երկաթգծի կառուցումից հետո գոյություն ունեցող երկաթգիծը, որն անցնում էր մայրաքաղքով, չէր ապահովի այսքան բեռների անխափան տեղափոխումը: Միայն շրջանցող երկաթգիծը կարող էր լրիվ ապահովել և աշխատել անխափան:

Միանգամայն պարզ է դառնում քաղաքամերձ Մասիսի շրջանի կարևոր նշանակությունը ինչպես գյուղատնտեսական մթերքների արտադրության ավելացման ու մատակարարման, այնպես էլ արդյունաբերական արտադրանքի թողարկման գործում:

Բավական է ասել, որ այս շրջանում են գտնվում մի քանի թռչնաբուծական համալիրներ և խոզաբուծական մեծ համալիրը. այնպես որ ինտերնացիոնալ շրջան Մասիսի տեսակարար կշիռը շատ բարձր է և որքան գնա, այնքան կբարձրանա, մանավանդ երբ լուծվի արդեն սկսված ազատ հողերի յուրացումը: Դա մեծ հնարավորություն կտա շրջանին ընդարձակելու քաղաքամերձ ցանքատարածությունները, հետևապես զգալիորեն կավելանա գյուղատնտեսական մթերքների արտադրությունը:

Մասիսի այդպես արագ զարգացման գործում իրենց արժանի տեղն ունեն կուսակցական կազմակերպությունները և շրջանային կոմիտեն: Առանձնապես մեծ ակտիվություն հանդես բերեց կուսակցության շրջկոմի նախկին քարտուղար Հենրիկ Սահակյանը:

Մասիսի շրջանի կազմակերպումն ունի մի ուրիշ նպատակ ևս: Շրջանը դառնում է մայրաքաղաքի մեծ մուտքը, որտեղ պետք է ընտրվի և քաղաք ուղարկվի այն, ինչ անհրաժեշտ է մայրաքաղաքին: Մյուս բեռները պետք է ուղարկվեն ըստ իրենց հասցեների: Մի խոսքով, Մասիս կայարանը դառնում է խոշոր հանգուցային կայարան, մանավանդ, երբ ավարտվի Երևան-Աղստաֆա երկաթգծի շինարարությունը:

* * *

Երբ հայացքդ հառում ես մի փոքր հեռու, Արարատյան դաշտավայրի շրջանների՝ Հոկտեմբերյանի, Էջմիածնի, Մասիսի, Արտաշատի և Արարատի վրա, քո առաջ բացվում է մի պարզ ու լուսավոր ապագա:

Արտաշատը մեր հինավուրց պատմական շրջանն է՝ ինտենսիվ գյուղատնտեսությամբ: Մինչև վերջին տասնամյակները Արտաշատը զարգանում էր միակողմանի, միայն գյուղատնտեսությամբ: Արդյունաբերության մասին խոսք անգամ լինել չէր կարող:

Միայն վերջին տասը տարում շատ մեծ փոփոխություններ կատարվեցին այստեղ: Վերակառուցվեց ու մեքենայացվեց գյուղատնտեսությունը: Հին անհատական թմբային այգիներին փոխարինեցին նոր, մեքենայացման համար նպատակահարմար խոշոր զանգվածներ, որոնք շատ հեշտացրեցին գյուղացու աշխատանքը:

Դա հնարավորություն տվեց տնտեսություններին բացի այգեգործությունից՝ լայն չափով զբաղվել նաև բանջարաբուծությամբ և անասնապահությամբ, որոնք իրենց ապրանքային նշանակությամբ հետ չեն մնում այգեգործությունից: Այս բոլորը հնարավորություն ընձեռեցին բազմապատկել տնտեսությունների եկամուտները:

Արտաշատը մինչև 60-ական թվականները ուներ մի քանի պարզունակ գինու գործարաններ, որոնք պատրաստում էին կիսաֆաբրիկատներ ուրիշ գործարանների համար: Ավելի ճիշտ՝ դրանք ոչ թե գործարաններ էին, այլ խաղողի ընդունման և վերամշակման կետեր:

Այժմ Արտաշատում կա մոտ 10 խոշոր գործարան, որոնք պատրաստում են ինչպես թնդեցրած, այնպես էլ սեղանի բարձրորակ գինիներ: Արդեն 10 տարուց ավելի է, ինչ աշխատում են պահածոների խոշոր գործարանը. արտադրական շատ գործարաններ: Դրանցից հիշատակման են արժանի գործիքաշինական փորձնական գործարանը, կահույքի, տրիկոտաժի, մանրահատակի ֆաբրիկաները, որոնք նոր տեսք են տվել Արտաշատ քաղաքին:

Պետք է խոստովանել, որ մեր պատմական մայրաքաղաքի անունը կրող այս շրջկենտրոնը մինչև վերջերս ամենաանբարեկարգ շրջկենտրոններից էր: Միայն վերջին տարիներին առանձնահատուկ ուշադրություն դարձվեց Արտաշատի բարեկարգման վրա, և այժմ այն դարձել է մեր գեղեցիկ քաղաքներից մեկը, որն իր բարձրահարկ շենքերով, կինոյի և դրամատիկ թատրոններով, հիվանդանոցներով ու դպրոցներով կարող է հպարտություն առաջ բերել յուրաքանչյուր հայրենասեր մարդու մոտ:

Ազատի ջրամբարի և Մխչյանի ջրհան կայանի կառուցումից հետո Արտաշատը դարձել է Արարատյան դաշտավայրի ոռոգելի ջրով ամենաապահովված շրջանը, որը, ինչ խոսք, մեծ հնա-

բավորություն է տալիս ավելի ինտենսիվ վարել գյուղատնտեսությունը:

Արտաշատը միշտ համարվել է Հանրապետության ամենաառատ շրջանը: Բայց ցավով պետք է նշել, որ մինչև 1961 թ. ամբողջ շրջանում հազիվ կարելի էր գտնել քարից կառուցված տուն, այնտեղ կառուցված էին չթրծած աղյուսից տափակ տանիքներով տներ, որոնք պարսկական գյուղերի տպավորություն էին թողնում:

Զարմանալին այն է, որ մեր քարերի երկրում, բացի էջմիածնից, Արարատյան դաշտի շրջաններում մի քանի տուն կար քարից կառուցված, մնացածը կավահողե տափակ կտուրներով տներ էին:

60-ական թվականներին Մինիստրների խորհուրդը հատուկ որոշում կայացրեց՝ արգելել կավաշեն տների կառուցումը: Որպեսզի գյուղացիներին օգնած լինենք, պարտավորեցրինք Հայկոոպին՝ այդ շրջաններում վաճառել չինաքար՝ տուֆ, կիր և Հնարավորության սահմաններում նաև չինափայտ: Իհարկե, մեր այդ որոշումը մոգական գավազանի դեր չէր կարող կատարել, որովհետև դարերից եկած սովորությունը դժվար էր միանգամից վերացնել:

Բացի դրանից, քարակերտ տունը, իհարկե, շատ թանկ էր կավաշեն տների համեմատությամբ: Այնուամենայնիվ դրական դեր խաղաց այդ որոշումը:

Հիշում եմ, արտաշատցիները մեծ բողոք էին ուղարկել մեր որոշման դեմ: Մինիստրների խորհրդի՝ այն ժամանակվա նախագահի տեղակալը՝ Բալաբեկ Մարտիրոսյանը, արտաշատցի էր: Բալաբեկին ուղարկեցինք այդ մարդկանց հետ հանդիպման և բացատրելու մեր որոշման նպատակը:

Մարտիրոսյանը գնացել և մի քանի տնտեսություններում ժողովների միջոցով բացատրել էր Մինիստրների սովետի որոշման նշանակությունը, բայց կոնկրետ արդյունքի չէր հասել: Նա Արտաշատից վերադարձավ շատ դժգոհ, զայրացած, ասելով, որ գյուղացիները չեն համաձայնվում մեր որոշման՝ քարից տուն կառուցելու հետ:

Ստիպված եղանք կրկնապատկել չինանյութերի վաճառքն Արտաշատում: Միաժամանակ կազմակերպեցինք, որպեսզի մեր ակտիվիստները տներ կառուցեն մեր ինստիտուտների նախագծերով: Անցավ մեկ տարի, ամեն գյուղում քարից մեկ-երկու տուն կառուցվեց:

Դա եղավ այն խրախուսանքը, որպեսզի ուրիշները ևս իրենց տները կառուցեն Հանրապետության նախագծային ինստիտուտների նախագծերով և միայն քարից, այն էլ՝ երկհարկանի:

Այժմ որքան մեծ ուրախություն ես ապրում, երբ Արարատյան դաշտավայրում նույնիսկ նմուշի համար, կավաշեն տուն չես գտնի, որ մեր գյուղերն իրենց կառույցներով նմանվում են բարեկարգ քաղաքների:

Արտաշատցիները տարբերվում են մյուս շրջաններից: Նրանք կոլտնտեսությունների միջոցների հաշվին կառուցել են տիպային նոր դպրոցներ, հիվանդանոցներ, մանկապարտեզներ, մանկամսուրներ, մշակույթի տներ: Այստեղ ցանկացած բնակարան ունի բոլոր հարմարությունները՝ ռադիո, հեռուստացույց, սառնարան, ջուր, կոյուղի, մի խոսքով այն ամենը, ինչն անհրաժեշտ է մարդուն: Քիչ մարդիկ չեն եղել, որ տեսնելով այդ տները, որոնք պալատների են նմանվում, նախանձով երանի են տալիս նրանց և ցանկանում ունենալ նմանատիպ տներ:

Վերին Արտաշատի ակումբը Թամանյանի որդու նախագծով է կառուցվել, որը Երևանի Սպենդիարյանի անվան օպերային թատրոնի փոքրացած տարբերակն է:

Մի խոսքով, հին կավաշեն գյուղերին փոխարինել են բարեկարգ նոր գյուղերը՝ զարդարված կանաչապատ այգիներով:

Առանց վարանելու կարելի է ասել, որ այս գյուղերը փոքրիկ քաղաքներ են, որտեղ ապրելը, ըստ իս՝ շատ ավելի հաճելի է, քան խոշոր քաղաքներում, որտեղ աղմուկն արդեն անտանելի է դառնում:

Արարատյան դաշտը մեր Հանրապետության սնողն ու կերակրողն է: Այն ավելի մեծ հեռանկարներ ունի նոր ազատ հողերի յուրացման պայմաններում, որի աշխատանքներն սկսվել են 60-ական թվականներից: Այդ մասին հետագայում ավելի

մանրամասը կխոսվի, երբ անդրադառնամ գյուղատնտեսությանը, բայց չեմ կարող այստեղ չնշել մի դեպք, որը հատկանշական է Արտաշատի շրջանի համար:

Հիսունական թվականներին շատ լուրջ դրվեց ազատ և քարքարոտ հողերի յուրացման հարցը: Պատերազմը նոր էր ավարտվել, միջոցները շատ սուղ էին, հնարավոր չէր լայն մասշտաբով սկսել այդ աշխատանքը, սակայն, այնուամենայնիվ, ձեռնամուխ եղանք Արագդայանի հողերի յուրացմանը:

Առաջին հեկտարների մշակումը սկսվեց Արաքսի ձախ ափից, ուղիղ հենց սահմանից, որտեղ տնկվեց շուրջ 30 հեկտար խաղողի այգի, սակայն աղուտների առատության պատճառով հնարավոր չեղավ շարունակել աշխատանքը:

Մի քանի տարի անց հարց բարձրացվեց՝ սկսել նախալեռնային քարքարոտ հողերի յուրացումը, իսկ երբ աղազերծման ավելի լավ միջոցների հնարավորություն լինի, այդ ժամանակ էլ կանդրադառնանք աղուտների յուրացմանը:

Այդպես էլ արվեց: Այժմյան Արմաշի, Սուրենավանի սովխոզների հիմնադրումն սկսվեց 1951 թվականին: Այդ նպատակով այնտեղ Կախանովի ջրանցքի վրա կառուցվեց պոմպակայան, որպեսզի ոռոգվեն այդ երկու սովխոզների հողատարածությունները: Մինչև այս աշխատանքների (հողերի մաքրում, ջրհան կայանի կառուցում) սկսելը՝ կառուցվեց երկու խոշոր բնակավայր: Ձգձգվում էին ջրհան կայանի կառուցումը և հողերի մաքրումը. բնակեցումն այստեղ մեծ դժվարությունների առաջ էր կանգնել:

1954 թ. Կենտրոնական կոմիտեի ղեկավարության փոփոխումից հետո բարձրացավ «քննադատության» մի չտեսնված ալիք, որով մեղադրում էին ղեկավարությանը Արմաշ և Սուրենավան բնակավայրերի կառուցման համար: Գտնում էին, որ այստեղ այգիները չեն կարող օգտակար լինել: Ավելին, շատերն այդ աշխատանքը համարում էին վնասարարություն և պահանջում մեղավորներին պատասխանատվության ենթարկել:

Այս և Թալինի շրջանի նոր հողերի յուրացման գործը Երևանի կուսակցական ակտիվի ժողովում վնասարարություն համարեց





5-րդ թունելախորշի շինհրապարակը

Արփա-Սևանի շինարարները

Ա. Քոչինյանը շնորհավորում է Արփա-Սևանի առաջին թունելախորշի ավարտումը

5-րդ թունելախորշում

5-րդ թունելախորշի շինարարների հետ

Ա. Քոչինյանը շնորհավորում է թունելախորշի ինժեներներին

Տիեզերագնացներ Վալենտինա Տերեշկովայի և Անդրիան Նիկոլաևի դիմավորումը Երևանում

Տիեզերագնաց Լեոնովի դիմավորումը

Աֆրիկայից եկած հյուրերի հետ

Կիրովական քաղաքում գործարանի տեղադրման հարցը լուծելուց հետո

Ծիծեռնակաբերդում

ՍՍՀՄ նախարարների հետ

Արտասահմանյան հյուրերի հետ

Ատոմակայանի մանրակերտի մոտ

ՍՄԿԿ կենտկոմի քաղբյուրոյի անդամ Կիրիլենկոյի դիմավորումը

Ուկրաինայի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Շելեստը Հայաստանում

Ն. Հրաչիկյանը, Ադամիկյանը Իսրոյ Միստոնցյանի և Մարիամ Ներսիսյանը

Հյուրեր Կանադայից

Հովհաննես Բաղրամյանի հետ

Միութենական հանրապետությունների ղեկավարների ժամանումը Երևան

Հովհաննես Բաղրամյանի հետ

Ս. Բուդյոննու հետ

Սովետական Միության մարշալ Ս. Բուդյոնին Սուրեն Թովմասյանի և Ա. Քոչինյանի հետ

Ա. Գրիգորյանը: Այդ օրվանից սկսվեցին աներևակայելի քաշքշուկ և վարչական օրգանների չմտածված անհեթեթ քննությունները, որոնք տևեցին մի քանի տարի, երբ արդեն սովխոզներն առաջին բերքն էին ստանում, և կյանքը ցույց տվեց այդ հողերի յուրացման խոշոր նշանակությունը հանրապետության էկոնոմիկայի զարգացման գործում:

Այժմ, երբ անցել է ավելի քան երկու տասնամյակ, բոլորն էլ հիսունական թվականների «քննադատությունը» համարում են անհեթեթություն: Բայց փաստը մնում է փաստ, որ երկար ժամանակ առանց ուսումնասիրելու և խորանալու մարդկանց մեղադրեցին վնասարարության մեջ:

Քանի որ խոսքը գնում է Արմաշի և Սուրենավանի մասին, ապա պետք է ասել, որ դրանք իրենց դաշտերի այգիների երրորդ տարվա բերքով փակեցին սովխոզների կազմակերպման վրա ծախսված միջոցները և ահա, տասնյակ տարիներ աշխատում են օգուտով՝ ի բարօրություն մեր ժողովրդի:

Արմաշը և Սուրենավանը կատարյալ քաղաքներ են, և այս բազայի վրա այժմ օրեցօր ընդլայնվում է ազատ և անօգտագործելի հողերի յուրացումը: Լայնատարած այգիներն օրինակ հանդիսացան հարևան Ադրբեջանի տնտեսություններին:

Առանձնապես հերոսական աշխատանք կատարվեց Սուրենավանի սովխոզում, որտեղ տնօրեն աշխատեց Վահրամ Բաղալյանը, կամ, ինչպես նրան սովխոզում էին անվանում, Բաղալ Դային: Վահրամը երկրագործ մարդ էր, շատ մեծ ծառայություն ուներ Հայաստանի այգեգործության և պտղաբուծության զարգացման պատվավոր գործում:

Նա սկզբում աշխատում էր Հոկտեմբերյանում, երբ Սարդարապատի ջրանցքը նոր էր կառուցվել, յուրացվում էին Լուկաշինի և Արաքսի սովխոզների հողերը: Վահրամը պրակտիկ մասնակցություն ունեցավ և շատ մեծ աշխատանք կատարեց այգիների հիմնադրման գործում:

Երբ անհրաժեշտ եղավ նոր այգիներ գցել Նոյեմբերյանի Լամբալուի սովխոզում, Վահրամին ուղարկեցին այնտեղ: Նա պատվով կատարեց իր պարտականությունը: Այժմ Նոյեմբերյա-

նի Լամբալուի սովխոզի այգիները համապատասխանում են առաջավոր ագրոտեխնիկային:

Ծանր էր դրությունը Սուրենավանում: Սովխոզի դիրեկտոր Մուղնեցյանը գտնում էր, որ այստեղ այգի չի կարող լինել, որ նման պայմաններում այգիների զարգացման մասին խոսք լինել չի կարող:

Ահա այս ժամանակ էր, որ անհրաժեշտ եղավ Վահրամին տեղափոխել Սուրենավան: Սովխոզի տնօրեն նշանակվելուց երկու տարի հետո այգիների տարածությունները քառապատկվեցին: Առաջին իսկ օրից Վահրամը հույս էր ներշնչում, որ այդ հողերում կարելի է ամեն ինչ աճեցնել, հատկապես խաղող, և այդպես էլ եղավ: Նրա օրինակով շատ մեծ գործ կատարեցին Արամաշի աշխատավորները:

Վահրամը հոգատար, փորձված, իր խոսքի տեր և վերին աստիճանի կարգապահ ու գործարար ղեկավար էր: Նա միջնակարգ կրթություն չուներ, բայց հաշվի առնելով նրա երկար տարիների բեղմնավոր աշխատանքը՝ նրան շնորհեցին պատվավոր ագրոնոմի կոչում:

* * *

Իհարկե, էկոնոմիկայի զարգացման ասպարեզում շատ բան արվեց սովետական իշխանության տարիներին: Բայց դա, կարելի է ասել, կատարվել է ավերակների, անապատների, մոխրակույտերի վրա: Այժմ մեծ հիմք է դրվում նոր, ավելի արագ և բարձր որակով թռիչք կատարել դեպի պայծառ ապագան:

Եթե 50-ական թվականներին համարյա տեխնիկայի բացակայության պայմաններում, սկսել էինք հիմք դնել նոր հողերի յուրացմանը, ապա այժմ մարդը զինված է նոր, հզոր, ամենակարող տեխնիկայով, որն ի վիճակի է, իրոք, հրաշքներ գործել և դրան մենք արդեն ականատես ենք լինում բոլոր բնագավառներում:

Որքան էլ որ տհաճ լինի խոսել այն մասին, որ պատերազմից հետո շատ արագ կերպով սկսվեց լեռնային գյուղերից հոսքը դեպի քաղաքները, միևնույն է, դա իրականություն է և աչք փակել դրա վրա հնարավոր չէ:

Այդպիսի շրջաններից էին Եղեգնաձորը և Ազիզբեկովը: Այս շրջանները հարուստ են իրենց հին և նոր պատմությամբ: Ես ինձ վրա չեմ վերցնում նրանց պատմության նկարագրությունը, միայն մի փոքր հատվածի՝ 30 տարվա որոշ հարցերի մասին կարող եմ խոսել:

Ես առաջին անգամ եղել եմ Դարալագյազում 1935 թվին, երբ կենտրոնական կոմիտեի որոշմամբ ինձ ուղարկեցին Ազիզբեկովի շրջան՝ շրջանային թերթի ղեկավար աշխատանքի: Այդ ժամանակվանից ի վեր շատ մոտ եմ կանգնած եղել Դարալագյազի զարգացման գործին: Ցանկանում եմ մի փոքր ավելին ասել, մեր հանրապետության այդ պատմական հատվածի մասին:

Հայտնի է, որ դարալագյազցիները շատ դժվարությամբ հաշտվեցին կոլխոզային շարժման, կոլտնտեսություններ կազմակերպելու մտքի հետ: Ավելին, բազմաթիվ գյուղերի չափահաս բնակչությունը բացահայտ կռվի ելավ այդ շարժման դեմ: Շատերը, իհարկե, թշնամական տարրերի կողմից որոշակի թյուրիմացության մեջ էին ընկել:

Բայց փաստը մնում է փաստ, որ մինչև 1939 թ. դեռևս մենատնտեսներ կային այդ շրջաններում: Մի կողմից էլ կլիմայական և աշխարհագրական պայմանները շատ մեծ դժվարություններ էին ստեղծում հանրային տնտեսության կազմակերպման համար: Այն ժամանակվա տեխնիկայի ցածր մակարդակի պայմաններում աշխատանքի մեքենայացման ոչ մի հնարավորություն չկար:

Այս բոլորը շատ ծանր պայմաններ էին ստեղծել այս երկու շրջանների զարգացման համար: Բազմաթիվ գյուղերում լիկվիդացվել էին կուսակցական կազմակերպությունները: Մի խոսքով, անհատական տնտեսությունից կոլեկտիվ տնտեսությանն անցնելը շատ ծանր գործընթաց հանդիսացավ, առանձնապես Դարալագյազում՝ Վայոց ձորում:

Հետագայում, իհարկե, նորմալ վիճակ ստեղծվեց այդ շրջաններում, բայց չուտով վրա հասավ Հայրենական պատերազմը և վիճակն ավելի վատացավ: Երկար ժամանակ գրեթե դադարել էր սոցիալ-մշակութային շինարարությունը: Հասկանալի է, որ

այս պայմաններում դժվար էր աշխատավորությանը կապել հողի հետ, իրոք, պայմանները շատ ծանր էին: Անհրաժեշտ եղավ հեռավոր շրջաններում ստեղծել, կառուցել նոր քաղաքներ ու արդյունաբերական ձեռնարկություններ:

Առաջնեկը հանդիսացավ Եղեգնաձորի պահածոների գործարանը, որը սկսեց վերամշակել գյուղացիների կողմից արտադրվող պտուղ-բանջարեղենը: Առանց այն էլ շատ քիչ պտուղ էր արտադրվում, իսկ եղածն էլ հաճախ հնարավոր չէր լինում վաճառել, և գյուղը մեծ վնասներ էր կրում:

60-ական թվականներին սկսվեց պահածոների գործարանի կառուցումը և ավարտելուց հետո սկսեցին վերամշակել գյուղատնտեսական մթերքները: Պահածոների գործարանի կառուցումը մեծ խթան հանդիսացավ այգեգործության և բանջարաբուծության զարգացման համար: Այստեղ մեծ թիվ կազմող չաշխատող բնակչությունը ընդգրկվեց աշխատանքի մեջ: Դա ևս ծանրակշիռ գործոն էր Եղեգնաձորի շրջանի, հատկապես շրջկենտրոնի բնակչության համար:

60-ական թվականներին, երբ այստեղ կուսակցության շրջկոմի առաջին քարտուղար էր աշխատում մալիշկեցի Հովհաննես Հովսեփյանը, շատ մեծ հեղաշրջում կատարվեց շրջանի զարգացման գործում, առաջին հերթին այգեգործության զարգացման բնագավառում:

Ով տեղյակ է Դարալագյազի պայմաններին, նրա համար պարզ է, որ գյուղատնտեսության առաջընթացը հնարավոր չէ առանց ջրաշինարարության, ուստի այստեղ սկսվեց ջրաշինարարական խոշոր, հիրավի, հերոսական աշխատանք, որը հնարավորություն տվեց կրկնապատկել, եռապատկել խաղողի և պտղատու այգիների տարածությունները:

Այս բոլորը հնարավորություն տվեց ընդարձակել գինեգործությունը, համապատասխանաբար բարելավվեց գյուղացիների նյութական դրությունը: Սկսվեց գյուղերի բարեկարգման, վերակառուցման ու կառուցապատման աշխատանքը:

Այժմ այս շրջանի մեծ գյուղերը չեն տարբերվում մերձարևադարձային շրջանների գյուղերից: Այդ քարերի և ապարների մի-

ջավայրում ջրի ու ոռոգման արդյունքով գյուղերը և ոռոգելի տարածությունները նման են կարծես անապատում վառ արևի տակ հիանալի, ջրառատ օազիսի, հաճելի կանաչ այգիներն առանձնահատուկ տպավորություն են թողնում:

Եթե դիտելու լինես մի որևէ բարձունքից, ասենք, Բոլորաբերդից կամ Ծակ սարից, քո առջև բացվում են հիանալի կանաչ դաշտեր և բնակավայրեր՝ Մալիշկան, Գլաձորը, Վերնաշենը, Քեչիչքենդը, Գետափը, Արենին, Աղավնաձորը և, վերջապես, Արփիի ավանը, որի կառուցումն սկսվեց միայն 70-ական թվականներին:

Դարալագյազը երկրաբանական նոր լեռնաշխարհ է և ամեն տեսակի արհավիրքներ այստեղ լինում են: Վերջին 10 տարում մի քանի գյուղեր ավերվեցին, գյուղերում հողի սողանցքներ կատարվեցին: Դրանցից էր Գնիշիկը, որի տեղափոխման համար Արփի գետի ափին սկսեցինք կառուցել նոր բնակավայր և նախօրոք անվանեցինք Արփիի սովխոզ: Այս բանավանը շատ շտապ կառուցվեց, որովհետև պետք էր արագ կերպով ապաբնակեցնել Գնիշիկ գյուղը, որտեղ շատերի բնակարաններն արդեն քանդվել էին:

Այժմ այս բանավանը Եղեգնաձորի գեղեցիկ ավաններից մեկն է, զբաղվում է խաղողագործությամբ և պտղաբուծությամբ: Գյուղը գտնվում է Աղավնաձորի ջրհան կայանի տարածքում և վերին աստիճանի նպատակահարմար է հետագա զարգացման համար:

Գետափի նախկին հողերն այժմ վերածվել են խաղողի լավ այգիների: Կանցնի մի քանի տարի ևս, և այս տնտեսությունը կդառնա մեր հանրապետության առաջավոր տնտեսություններից մեկը:

Ավելի ծանր պայմաններում էր Ռինդի կոլտնտեսությունը: Երբ հաղորդեցին, որ գյուղը քանդվում է, մի օր մեր աշխատողներից մի քանիսի հետ միասին մեկնեցինք Ռինդ: Արդեն երեկո էր, գյուղում նշմարվում էին առանձին քանդված բնակարաններ, մարդիկ բնակարաններում չէին գիշերում, դրսում կամ վրանների տակ էին քնում: Բոլորին ահավոր սարսափ էր համա-

կել: Գյուղացիների հետ խոսելը շատ ծանր էր: Մեծ գյուղ էր, հնարավոր չէր միանգամից կառուցել և տեղափոխել:

Վերաբնակեցնել այլ շրջան կամ քաղաք հնարավոր էր, բայց ոչ իրենք՝ գյուղացիներն էին ցանկանում, ոչ էլ ես: Նկատի ունենալով այդ հողերի մշակման հարցը, անհրաժեշտ էր գյուղը տեղափոխել իրենց հողատարածություններից առավել հարմար մի տեղ, դրանով խնդիրը լուծել և դուրս գալ այդ աղետալի վիճակից: Բարեբախտաբար գյուղացիներն ինձ ճանաչում էին, իսկ ես՝ նրանցից շատ-շատերին, համենայնդեպս, ղեկավարներին՝ սկսած բրիգադիրներից:

Երիտասարդները պահանջում էին փոխադրվել քաղաքներ կամ Արարատյան դաշտավայրի որևէ շրջան, իսկ տարեցները, որոնք լավ գիտեին իրենց հողի, ջրի արժեքը, բնաշխարհի հմայքը, պահանջում էին գյուղից ներքև Թափեր կոչվող վայրում կառուցել նոր գյուղ և տեղափոխվել այնտեղ, չվերացնել պատմական Ռինդը:

Իհարկե, վերջին առաջարկությունը մեզ շատ ավելի նպաստավոր թվաց, մենք էլ համամիտ էինք: Կարծես հարցը լուծվեց շատ դյուրին կերպով, բայց դժվարությունը այդ գաղափարի իրագործումն էր: Սակայն վեճը հանկարծ նորից սկսվեց, հասավ իր գագաթնակետին, և հարց առաջացավ, թե ով պետք է կառուցի գյուղացիների տները:

Մենք առաջարկում էինք միջոցներ տրամադրել իրենց՝ գյուղացիներին, իսկ ամեն մի ընտանիք մեր նախագծով կառուցի իր բնակարանը: Որպեսզի ավելի շատ միջոցներ ստանան, մանավանդ չինանյութ, որոշվեց, որ կառուցումն իրականացնի պետությունը:

Ես քաջ գիտակցում էի, որ Դարալագյազի մեր շինարարական կազմակերպությունները շատ թույլ են, և եթե հանձնարարենք նրանց, այն շատ կձգձգվի և եթե կառուցեն էլ, ապա այն որակը չի ունենա, ինչպիսին մենք էինք ցանկանում:

Մեր ժողովն ընթանում էր առանց նախագահի և արձանագրության, աղբյուրի մոտ՝ նստած գերանների վրա: Գործը հասնում էր անձնական վիրավորանքների, երբ խոսքը վերաբերում

էր կառուցողին: Այստեղ իրար հետ վիճողները նրանք էին, ովքեր չէին ցանկանում նոր գյուղ կառուցել:

Ուշ գիշեր էր, երբ մեծ դժվարությամբ պայմանավորվեցինք, որ գյուղը պետք է կառուցվի Թափերում: Պետությունը միջոցներ և չինանյութ կտրամադրի, իսկ անհատական սեփական բնակարանները պետք է կառուցեն իրենք՝ գյուղացիները: Արտաքուստ կարծես սա ճիշտ որոշում չէր: Բայց փորձը ցույց տվեց, որ այն շատ ճիշտ էր կայացված: Հայ շինականը միշտ կառուցել է և լավ է կառուցել:

Այժմ էլ, երբ պետությունն օգնում է, հնարավորություն է տալիս նրանց, իրենք էլ կառուցեցին այնպիսի բնակարաններ, որ կարող է նախանձ առաջացնել ցանկացած երկրի համար: Ռինդն այժմ մեր հանրապետության լավագույն բնակավայրերից մեկն է: Իր հիանալի այգիներով, բարձրահարկ տներով չքեղություն են հաղորդել Վայոց ձորին: Գյուղացիները կառուցել են առանձին տներ՝ հանրապետության նախագծային ինստիտուտների տրամադրած նախագծերով, բայց ամեն մի տանտեր իր ճաշակն է ներդրել, որ հաճելի տպավորություն է թողնում Ռինդ սոցիալիստական գյուղը:

Ռինդը և, առհասարակ, Եղեգնաձորը զարգացման նոր թափ են ստացել. ինչպես ասացի, Աղավնաձորի բաղմաստիճան ջրհան կայանի կառուցումից հետո: Այս ջրերից օգտվելու են Գետափի, Աղավնաձորի, Արփիի, Ռինդի, Արենիի, Ջիվայի և Ելփինի տնտեսությունները:

Եղեգնաձորի շրջկենտրոնի արագ զարգացումը ևս կապված է արդյունաբերության զարգացման հետ: Առաջին ձեռնարկությունը, որը շատ կարևոր դեր խաղաց աշխատուժի զբաղվածության գործում, Երևանի ռելեի գործարանի մասնաճյուղի կազմակերպումն էր:

Երբ ավարտվեց կուսակցական շրջանային կոմիտեի և շրջանային գործկոմի շենքի շինարարությունը, շրջանի ղեկավարությունն իր նախկին շենքերը տրամադրեց ռելեի գործարանի մասնաճյուղին և այդ չհարմարեցված շենքային պայմաններում շատ արագ կերպով սկսեցին արտադրանք տալ, հետևապես մի

քանի հարյուր մարդ աշխատանք ստացավ: Այժմ այն դարձել է լուրջ ձեռնարկություն և ռելեի արտադրության գործում իր պատվավոր ներդրումն ունի:

Առահասարակ շրջկենտրոնի, Վերնաշենի, Գլաձորի զարգացումը ընթացել է այնպես, որ այդ երեք գյուղերը միացել են և դարձել մի խոշոր բնակավայր, կարելի է հստակորեն ասել՝ մի փոքրիկ գեղեցիկ քաղաք:

Այս երեք գյուղերի արագ զարգացմանը, այգիների ընդարձակմանը նպաստեց Գլաձորի բազմաստիճան ջրհան կայանը: Նախկին պապակ հողերը ոռոգելի դարձան, վեր բարձրացան խաղողի և պտղատու այգիները: Գյուղերն իրենց դեմքը փոխեցին և նախկին հողածածկ, հողե հատակով անասնագոմերի հետ միասին կավաշեն տները փոխարինվել են բազմահարկ և բարեկարգ, գեղեցիկ, ժամանակակից տներով: Գազը, էլեկտրականությունը դարձել են սովորական երևույթ: 60-ական թվականներից բոլոր տներում էլ այն արդեն կա:

Այսպիսի գեղեցիկ բնակավայրերից, ինչ խոսք, ոչ ոք չի հեռանա: Այդպես էլ եղավ: 1970 թվականից հետո գյուղերից բնակչության հոսքը դադարել է: Ավելին, բարձրադիր գյուղերից գալիս և բնակություն են հաստատում այստեղ:

Գյուղացիներին իրենց հողին և ջրին ամրացնելու նպատակով , բացի ջրաշինարարական մեծ ծավալի աշխատանքից, անհրաժեշտ համարեցինք առանձին գյուղերում ստեղծել մայրաքաղաքի խոշոր գործարանների մասնաճյուղեր: Դրանցից է Ելփինի էլեկտրագործարանի մասնաճյուղը:

Նախկինում այս շրջանը շատ էր կտրված մայրաքաղաքից, ճանապարհներ չուներ, տրանսպորտի միջոցները շատ սակավ էին: Փոխադրամիջոցը միայն ձին և ջորին էին: Կապը Երևանի հետ իրագործվում էր Նորաշենի միջոցով՝ երկաթուղով և, ինչ խոսք, շատ էր դժվարացնում:

Այժմ խճուղային ժամանակակից ճանապարհը ստեղծել է բոլոր հնարավորությունները: Երկու ժամվա ճանապարհ է Երևանից Եղեգնաձոր:

Ժամանակին ճանապարհաշինարարության, էլեկտրաֆիկացման գործում մեծ աշխատանք կատարեց կուսակցական շրջկոմի նախկին քարտուղար Հ. Մարտիրոսյանը: Իսկ շրջկենտրոնի տնտեսության զարգացման հիմքը դրեց գործկոմի նախկին նախագահ Մխիթարյանը:

Հետագայում, իհարկե, աշխատանքի ծանրության մեծ բաժինն ընկավ Հ. Հովսեփյանին՝ այս իսկապես լեռնցի, համառ և աշխատասեր մարդուն: Համոզված եմ, որ նրա գործերը դարեր կհիշվեն:

Նախկինում դեռ 30-ական թվականներին, ով Նորաշենից Արփա գյուղ էր մտնում, խոսակցության նյութը Համո դային էր: Նա գյուղի միակ մարդն էր, որ դուրս էր եկել պաշտպանելու սովետական կարգերը, պայքարելու բանդիտների դեմ: Հետագայում Համոն մասնակցեց Հայրենական պատերազմին, վերադարձավ ու ստանձնեց կոլտնտեսության նախագահի պաշտոնը, դարձավ Սոցիալիստական աշխատանքի հերոս, աշխատեց բազմաթիվ այլ տնտեսություններում:

Որտեղ գործերի վիճակը վատանում էր, Համոյին էին ուղարկում այնտեղ և մեկ երկու տարի հետո նորից ուղարկում մեկ այլ վատ վիճակում գտնվող տնտեսություն: Ինչքան էլ ցանկանամ լավն ասել այս մարդու մասին, նա առավելագույնին է արժանի՝ իսկական դարալագյազցի, լեռների ծնունդ, համառ, քաջ, ուրախ, երեխայի միամտությամբ, անսահման նվիրված Հայրենիքին և իր գործին, անաչառ է բոլոր տեսակի թերությունների և հատկապես հակահասարակական երևույթների նկատմամբ: Իսկական ստալինիստ, Ստալինի մեծացրած նկարը փակցված էր իր բնակարանի այնպիսի տեսանելի տեղում, որ յուրաքանչյուրը տեսնի: Կիսագրագետ բայց բնական խելքով իսկական կյանքի մեծ փիլիսոփա էր: Նա Արփա գյուղն իսկական Արենի դարձրեց, և այժմ մեր Հանրապետության առաջավոր տնտեսություններից մեկն է:

Ազիզբեկովի շրջանի համեմատությամբ, Եղեգնաձորը գյուղատնտեսության և, հատկապես, խաղողագործության ու պտղաբուծության զարգացման համար ավելի նպաստավոր պայմաններ ունի: Այս շրջանի զարգացման բախտը նորից որոշել

են արդյունաբերության այնպիսի ճյուղեր, որոնք շատ աշխատուժ են պահանջում, քիչ հումքատար են, որպեսզի դժվարություններ չլինեն հումքի փոխադրման համար: Խաչիկ գյուղի հողերը ոռոգելու համար, եթե նախատեսված ջրհան կայանը կառուցվի ժամանակին, Եղեգնաձորի գյուղատնտեսության զարգացումն ավելի արագ թափ կստանա:

Դեռ քիչ են ուսումնասիրվել Եղեգնաձորի և Ազիզբեկովի մերկ լեռները: Այստեղ շատ ստույգ տվյալներ կան գունավոր և ցրված մետաղների առկայության մասին: Պետք է հույս հայտնել, որ մեր երկրաբանները հետագայում ավելի լուրջ կզբաղվեն Վայոց ձորի ընդերքի հարստությունների հայտնաբերման և շահագործման հարցերով, որոնք, անշուշտ, շատ կբարձրացնեն Դարալագյազի տեսակարար կշիռը հանրապետության էկոնոմիկայի զարգացման գործում:

Մինչև այժմ փոքր-ինչ, շատ պարզ մեթոդներով ուսումնասիրվել է Ղայալուն և Ղազման, որոնք լուրջ խոստումներ են տալիս գունավոր մետաղների պաշարների առկայության մասին:

Երկրի զարգացման պայմաններն այնպիսին են, որ այս գանձերը չեն մնա ընդերքում, ի սպաս կդնեն մարդկության, հասարակության զարգացման գործին:

...

Դարալագյազի դերն ավելի բարձրացավ, երբ սկսեց գործել Ջերմուկի աշխարհահռչակ առողջարանը: Ջերմուկի ջրերի բուժիչ հատկությունն արդեն հայտնի է մեր երկրի սահմաններից դուրս: Այս ջրերի հատկությունները տեղի բնակիչներին հայտնի են եղել դեռ վաղ ժամանակներից:

Բայց իսկական, նպատակային օգտագործումը, փաստորեն, սկսվեց հիսունական թվականներից, պատերազմից անմիջապես հետո, մանավանդ որ Հայրենական պատերազմի հաշմանդամների բուժման համար այդ առողջարանը շատ անհրաժեշտ էր:

Ջերմուկի ջրերի ուսումնասիրության հարցում մեծ աշխատանք կատարեց երկրաբան Դեմյոխինը: Դեռևս 1934 թվին սկսեցին այս ջրերի հետախուզական աշխատանքները: Մինչև

30-ական թվականներն այստեղ ընդերքից շատ քիչ տաք ջուր էր դուրս գալիս, մարդիկ այն օգտագործում էին յուրովի և շատ դեպքում արդյունքի հասնում:

1935 թվին, երբ ես դեռ նոր էի նշանակվել Ազիզբեկովի շրջանային թերթում աշխատանքի, ինձ հայտնի դարձավ, որ կա մի գյուղ՝ Իստիսու, որտեղ կան տաք հանքային ջրեր, որոնք օգնում են ռևատիզմից տառապող հիվանդներին:

Այդ ժամանակ մայրս տառապում էր այդ հիվանդությամբ և այնքան ծանր էր վիճակը, որ չէր կարողանում քայլել: Ստացվեց այնպես, որ անհրաժեշտ եղավ գնալ և տեսնել: Արփի գետի ափին մի փոքրիկ փոս էր, որը միշտ լիքն էր տաք ջրով: Հիվանդները մտնում էին նրա մեջ, մնում այնքան, որքան կարողանում էին,՝ առանց բժշկի, առանց հսկողության: Ի զարմանս ինձ, ում հետ զրուցում էի, բոլորը գոհ էին:

Հետագայում հարթավայրը ուսումնասիրվեց և «Պրիստավի գյուղի» շրջակայքում հայտնաբերվեց ավելի տաք աղբյուր: Պարզվեց, որ այդ ջրերի օգտակարությունն ունի շատ կարևոր նշանակություն բնակչության առողջացման գործում:

Ես այժմ չեմ ուզում կանգ առնել Ջերմուկի բուժիչ հատկությունների մասին: Դա արդեն անվիճելի է և կյանքն է ապացուցել, որ ի չնորհիվ այդ բարձրորակ ջրերի բուժիչ հատկությունների՝ տարեկան առողջարաններից օգտվում է մինչև 20 հազար մարդ:

Ցանկանում եմ կանգ առնել այս առողջարանի կառուցման մի քանի հարցերի վրա, որը, իմ կարծիքով, հետաքրքիր կլինի յուրաքանչյուր քաղաքացու համար:

Երբ սկսվեց Ջերմուկի շինարարությունը, ճանապարհներ չկային, տրանսպորտ չկար, իսկ Ջերմուկը գտնվում է Երևանից ավելի քան 200 կիլոմետր հեռու: Հասկանալի է, որ այս պայմաններում շինարարություն կատարելը շատ դժվար էր, ես կասեի, անասելի դժվար:

Շինարարությունը սկսեց սոցիալական ապահովության մինիստրությունն իր շատ սուղ միջոցների հաշվին: Երկար տարիներ տևեց այդ առողջարանի շինարարությունը: Երևանից տարվում էին բոլոր շինանյութերը, բացի քարից, իսկ տեղափո-

խումը կատարվում էր մեծ մասամբ ջորիներով և էշերով:

Հետագայում, երբ արդեն Ջերմուկը լրիվ քաղաքացիական իրավունք ստացավ, ճանապարհի կառուցման հարց առաջացավ, այն էլ միայն գետի ափով՝ Գնդեվազի խոր ձորերով:

Ճանապարհի կառուցումը փաստորեն կանխորոշում էր Ջերմուկի կառուցապատման հարցը: Նրա առողջարանների և առհասարակ քաղաքի իսկական հայրենասերը կուսակցության կենտրոնական կոմիտեի առաջին քարտուղար Գ. Հարությունովն էր: Նրան շատ էր անհանգստացնում ճանապարհի կառուցումը:

Շատերը, հատկապես նախագծողները, պնդում էին, որ ճանապարհը պետք է կառուցել ոչ թե ձորով, այլ Գնդեվազի միջով՝ հարթավայրով: Երբ քննարկում էինք այս հարցը, որպես տեղին ծանոթ մարդ, Գրիգոր Հարությունովն ինձ հարցրեց. «Խճուղին որտեղի՞ց է նպատակահարմար կառուցել՝ ձորո՞վ, թե՞ բարձունքով»:

Ես պատասխանեցի, որ այս լեռներում ձմեռը սարսափելի քամոտ և ցուրտ է լինում, բարձունքով խճուղին ձմռանը երկար ժամանակ հնարավոր չէր լինի օգտագործել, իսկ ձորով կառուցելը, իրոք, շատ դժվար կլինի, բայց շահագործումը շատ հեշտ կլինի և ձմռանը քամիներն այստեղ վտանգ չեն սպառնում: Կարելի է տարվա բոլոր եղանակներին օգտագործել:

Իհարկե, ինքը՝ Գրիգորը, լավ էր ուսումնասիրել խնդիրը: Նա էլ այդ կարծիքին էր, բայց ավելորդ չհամարեց հարցնել նաև ինձանից: Երբ հայտնեցի իմ կարծիքը, նա հանձնարարեց ինձ կանչել նախագծողներին և հստակորեն նրանց հայտնել, որ ճանապարհը պետք է կառուցվի ձորով:

Այդպես էլ եղավ: Խճուղու կառուցումը հանձնարարվեց մի շատ բարեխիղճ մարդու՝ Անուշավան Հակոբյանին: Դժվար և երկար տևեց ճանապարհի կառուցումը, բայց շատ լավ ճանապարհ դարձավ: Այժմ էլ, ով անցնում է այդ ճանապարհով, հաճույք է ստանում Գնդեվազի պատմական ձորից:

Երբ ավարտվի Արփա-Սևան ամբարտակի կառուցումը, շատ ավելի գեղեցիկ կդառնա այս ճանապարհը, որը մի քանի

կիլոմետրերով կձգվի լճափով: Խոր ձորից փրփրադեզ գետի ափից դուրս ես գալիս մի բարձունք, և այստեղ քո առջև բացվում է հիասքանչ տեսարան՝ կապույտ լիճ՝ Դարալագյազի և Զանգեզուրի լեռների մեջտեղում:

Ճանապարհն ավարտելուց հետո շատ հեշտացան շինարարության աշխատանքները, որի շնորհիվ լայն թափով սկսվեց առողջարանների և կենցաղսպասարկման օբյեկտների կառուցումը:

Սկզբնական շրջանում շատ ծանր էր ֆինանսավորման գործը, միջոցներ չկային առողջարանների կառուցման համար, որի պատճառով ստիպված էինք գերատեսչությունների միջոցով առանձին օբյեկտներ կառուցել: Մանր աշխատանք կատարեցին սննդի, տեղական և սոցիալական ապահովության մինիստրությունները, որոնք կառուցեցին մի շարք շենքեր, որտեղ տեղավորվեցին կենցաղային սպասարկման հիմնարկությունները:

Ջերմուկի շինարարությունը պահանջում էր հատուկ վերաբերմունք և ամենօրյա օգնություն: Չնայած ցուցաբերած օգնությանն ու օժանդակությանը, մինչև 1967 թ. շինարարությունն ընթանում էր շատ դանդաղ, հատկապես կադրերի բացակայության և շինանյութերը ժամանակին չփոխադրելու պատճառով: Ամեն տարի պլանները թերակատարվում էին: Առողջարաններն աշխատում էին շատ անբարեկարգ պայմաններում, փողոցներ չկային, անտառաշերտը ստեղծված չէր, պուրակներ ու զբոսայգիներ չկային:

Ջուրը հրաշալի արդյունք էր տալիս, հիվանդները շատ գոհ էին բուժումից, բայց շատ դժգոհ բարեկարգումից և առհասարակ սպասարկումից: Պուրակի կազմակերպման հարցը շատ երկար ժամանակ խոսակցության առարկա էր դարձել:

Անտառային տնտեսության վարչությունը, որի ղեկավարն էր մի շատ հարգված, պատկառելի անձնավորություն՝ Լևոն Հովսեփյանը, շատ էր չարչարվում, բայց այսպես կոչված, մասնագետներն առարկում էին, որ Ջերմուկի բարձր դիրքի պատճառով իբր բացի տեղի ծառատեսակներից՝ ուրիշ ծառա-

տեսակներ չեն աճի և Ջերմուկի անտառ-պուրակի մասին հարցը ընդհանրապես պետք է հանել օրակարգից և բավարարվել եղածով: Երկար ժամանակ այդ հարցը չէր լուծվում:

Ես գիտեի մի մասնագետի, որն աշխատում էր Ստեփանավանի անտառտնտեսությունում և շատ լավ տնկարաններ էր ստեղծել, հատկապես մշտադալար ծառերի, մասնավորապես սոճիների տեսակներով: Իմ խնդրանքով Լ. Հովսեփյանը Դրեպալոյին Ստեփանավանից տեղափոխեց Ջերմուկ և նշանակեց անտառ-պուրակի կազմակերպման տնօրեն:

Ի զարմանք բոլորի՝ այս աշխատասեր և խելացի մարդը մեկ-երկու տարում ստեղծեց մշտադալար ծառատեսակների ոչ մեծ տնկարան և կատարեց որոշ տնկումներ: 5-րդ տարում արդեն բոլորն էլ համոզվեցին, որ խելացի աշխատանքի դեպքում Ջերմուկում կաճեն և աճում են բազմապիսի ծառատեսակներ: Կիրիլ Սերգեևիչը ստեղծեց այնպիսի մի զբոսայգի, որին ցանկացած առողջարանային քաղաք կարող է նախանձել: Այստեղ աճում են տարատեսակ ծառեր, նույնիսկ սեկվոյա, չեմ խոսում կեչիների և արծաթագույն եղևնիների մասին:

Մի խոսքով, այս զբոսայգին իսկական դրախտավայր է՝ գեղեցիկ ծաղիկներով, զբոսուղիներով, որոնք տանում են դեպի խմելու ջրի գալերեա և ճարտարապետական յուրատեսակ կառույց՝ մշակույթի պալատ:

Այժմ առողջարանային ամբողջ քաղաքը շրջապատված է կովկասյան գեղեցիկ սոճիներով, որոնք առանձին հմայք են տալիս Ջերմուկ քաղաքին, որտեղ հանգստանում և իրենց առողջությունն են վերականգնում տասնյակ հազարավոր հիվանդներ:

Ջերմուկն ավելի գեղեցկացավ նորակառույց հյուրանոցով և կիրճի միջով հոսող Արփա գետի վրա աղեղված գեղեցիկ կամուրջով, որով կիրճի՝ նոր կառուցված բնակարանային թաղամասերով և օդանավակայանով աջ ափը կապեց ձախ ափի հետ: Արփիի կիրճը ամենագեղեցիկն է մեր հանրապետությունում:

Ջերմուկ առողջարան-քաղաքը հիմնականում կառուցվել է

մեր հանրապետության միջոցների հաշվին, սակայն շատ մեծ օգնություն են ցույց տվել Միության մի շարք միներ: Վաթսունական թվականներին մեր հանրապետությունն էր եկել շինարարության մինիստր Իգնատի Նովիկովը:

Մեր խնդրանքով նա եղավ հանրապետության գրեթե բոլոր կառույցներում, այդ թվում՝ Որոտանի կասկադի շինարարությունում և Ջերմուկում, որտեղ մենք մտադիր էինք ցույց տալ Արփա-Սևանի մեծ կառույցի սկիզբը և թույլտվություն խնդրել՝ սկսելու նախապատրաստական աշխատանքները:

Նախագծային աշխատանքներն ավարտվելու վրա էին և մինիստրը պահանջեց նախագիծը, որը ևս կատարվել էր հանրապետության միջոցների հաշվին: Նովիկովն այստեղ ծանոթացավ այդ նախագծի հետ և որոշ չափով ոգևորվեց, երբ պատմեցինք մեր հանրապետության, մեր ժողովրդի հետագա գոյատևման համար դրա նշանակության մասին:

Հայէներգոշինի կառավարիչը տվել էր իր համաձայնությունը՝ նախապատրաստական աշխատանք կատարելու համար: Նույնիսկ զեկուցեց մինիստրին, որ ինքը մինիստրությունից միջոցներ չի պահանջում, նկատի ունենալով, որ հանրապետությունն այդ բոլորը կվճարի իր միջոցներից:

Բարերախտաբար Նովիկովը տվեց իր համաձայնությունը, ընդ որում, շատ փոքր կարգադրությամբ: Նա շատ լավ էր հասկանում, որ այդ կառույցն առանց միութենական կառավարության հաստատման, հնարավոր չի իրականացնել, այդ պատճառով էլ նրա կարգադրությունն այնքան առաձգական էր, որ ինչպես ցանկանաս, այնպես էլ կմեկնաբանես:

Այնուամենայնիվ, այդքանն էլ մեզ բավական էր, որ սկսեինք այդպիսի գիգանտի շինարարության նախապատրաստական աշխատանքները: Հենց այս ժամանակ էլ Իգնատի Տրոֆիմովիչը կարգադրեց Ջերմուկում կառուցել առողջարանների համար: Մենք այդ առողջարանի համար առանձնացրեցինք ամենագեղեցիկ տեղերից մեկը, և այժմ այն վեր է խոյացել Ջերմուկի բարձունքում՝ Արփի կիրճի աջ ափին, գեղեցիկ կամուրջի մոտ:

Ջերմուկի առողջարաններից մեկը, որն ամենագեղեցիկն է, չորրորդ վարչության նոր առողջարանն է, այն նույնպես կամուրջի մոտ է: Այս երկու խոշոր առողջարանները կարծես դարպաս են այդ չքնաղ կամուրջի համար:

Այժմ Ջերմուկում կառուցվում են մի շարք առողջարաններ, որոնք արդեն վեր են բարձրացել և ամբողջովին փոխել Ջերմուկի ընդհանուր տեսքը: Ես կարող եմ սուբյեկտիվ լինել, բայց կարծում եմ որքան սուբյեկտիվ լինեմ, չեմ կարող բոլոր առավելությունները թվել: Դրանցից անհրաժեշտ է նշել բնության կողմից պարգևված ջրվեժը, որը կիրճին մի առանձնահատուկ հմայք է տալիս: Լեռան լանջից հոսող աղբյուրներով, հեքիաթային կիրճն իր քարայրներով ու քարանձավներով, ինչպես նաև արդեն ավարտին մոտեցող Ջերմուկի ջրամբարով՝ իրականում գեղաշուք լճով, իրավամբ, քաղաքը աշխարհի ամենագեղեցիկ առողջարաններից մեկն է լինելու:

Ջերմուկում առողջարանների թիվը կկրկնապատկվի Արփա-Սևանի ավարտից հետո: Ժամանակին երբ սկսվեց այդ կառույցի շինարարությունը, նկատի ենք ունեցել առողջարան-քաղաքի շահերը, և բանվորական ավանը կառուցվել է այնպես, որ շինարարությունն ավարտվելուց, բանվորների մեկնելուց հետո այդ միանգամայն հարմարավետ շենքերը պետք է վերածվեն առողջարանների:

Այդ շենքերը տեղադրվել են ապագա լճի ափին՝ Կեչուտ գյուղի դեմ դիմաց, ուղղակի հիանալի է, մանավանդ այն հիվանդների համար, որոնք բարձրությունից վատ են զգում: Նրանք կտեղավորվեն այս առողջարանում, քանի որ վերջիններս մոտ 250 մետր ցածր են Ջերմուկի հարթավայրից, իսկ հեռավորությունն ընդամենը 3 կիլոմետր է: Արփի գետի ձախ ափին՝ անդունդի եզրին, կառուցվել է քաղաքը, իսկ լճի աջ ափին վեր են խոյացել բարձրահարկ ապագա առողջարանները:

Ջերմուկում իր կարևոր տեղն ունի ջրերի գործարանը, որն իհարկե, մեծ ապագա է խոստանում, եթե այստեղ կառուցվի ապակե տարաների գործարան: Այդ ժամանակ Ջերմուկի ջրի ինքնարժեքը կիջնի, և գործարանը կաշխատի շահույթով: Այժմ

գործարանն աշխատում է վնասներով, որովհետև դատարկ շշերը երկար տարածության վրա փոխադրվում են ավտոտրանսպորտով:

Ջերմուկը հանրապետական ենթակայության քաղաք է, ունի իր շինարարական կազմակերպությունը, որը հնարավորություն է տալիս ավելի արագ կառուցապատել և գեղեցկացնել: Իրոք, շատ բան է արվել Ջերմուկում, կարելի է կատարվածով հպարտանալ, բայց սխալ կլիներ մտածել, որ արդեն ամեն ինչ արվել է:

Դեռ շատ անելիքներ կան, և դեռ երկար ժամանակ կկառուցվի այդ հիանալի առողջարանը: Հուսանք, որ այս հարստությունը՝ ջուրը և լեռնային միանգամայն առողջ կլիման խելացիորեն կօգտագործվեն հետագայում՝ ի բարօրություն մեր ժողովրդի:

* * *

Ազիզբեկովի շրջկենտրոնը, ինչպես ասացի, մեր հանրապետության բարեկարգ շրջկենտրոններից մեկն է, չնայած շատ կարճ՝ ընդամենը 10–15 տարվա պատմություն ունի: Այժմ արդեն բացի հարմարավետ բնակարաններից՝ քաղաքատիպ ավանն ունի իր մշակույթի տունը, իսկ կինոթատրոնը շատ գեղեցիկ դիրքով զարդարում է Արփի գետի կիրճը:

Այստեղ եղած բավականաչափ աշխատուժն օգտագործելու համար հիմնադրվեց հայէլեկտրամիավորման մասնաճյուղը, որտեղ աշխատում են հարյուրավոր պատանիներ և աղջիկներ: Մասնաճյուղ ստեղծվեց նաև նախկին շրջկենտրոնում՝ Ջաուրթափում, որտեղ աշխատում է սովխոզի ազատ աշխատուժը՝ օգուտ բերելով իրենց և երկրին:

Լեռնային այս շրջանը կարող է և պետք է գյուղատնտեսության հետ միասին զարգացնի նաև արդյունաբերությունը:

Դարալագյազի լեռները հարուստ են հանածոներով: Սակայն դրանք, ցավոք, դեռ լրիվ չեն ուսումնասիրվել և դեռևս չեն օգտագործվում: Բայց համոզված եմ, որ հետագայում լուրջ ուսումնասիրման, հետախուզման դեպքում այս շրջանները գու-

նավոր և հազվագյուտ մետաղների հանածոների ծննդավայր կդառնան: Այժմ այստեղ հետախուզություն է կատարվում և նախնական տվյալները միանգամայն գոհացուցիչ են:

Երևան-Գորիս խճուղային մայրուղու կառուցումն ավարտելուց հետո այստեղ ընդհանրապես կյանքն ավելի կաշխուժանա: Վայոց ձորը բոլորովին նոր տեսք կստանա: Ավելին, խճուղու շինարարության ավարտումով Զանգեզուրի երկու շրջանները մայրաքաղաքին ավելի են մոտենում:

* * *

Եթե Ազիզբեկովում և Եղեգնաձորում դրանց ընդհանուր զարգացմանը խիստ նպաստեցին Ջերմուկի և Արփա-Սևանի շինարարությունը, ապա Սիսիանի և Գորիսի շրջանների տնտեսության և սոցիալական զարգացման համար վճռական նշանակություն ունեցավ Որոտանի կասկադի հիդրոկայանների շինարարությունը:

Ճիշտ է, գյուղատնտեսության զարգացման համար այս երկու շրջաններում ավելի լավ պայմաններ կան, քան Դարալագյազում: Այնուամենայնիվ, մինչև հիդրոկայանների շինարարության սկսելն այստեղ, կարծես տնտեսություններն անկատար կյանք էին վարում:

Կտրված լինելով Երևանից՝ շատ դանդաղ էր զարգանում Սիսիանը: Միակ ճանապարհը, որով կապվում էին Սիսիանը և մասամբ էլ Գորիսը, դա Նախիջևանով անցնող շատ անբարեկարգ ճանապարհն էր: Երբ սկսվեց Տաթևհէկի շինարարությունը, հանրապետությունը հնարավորություն ստացավ Վայոց ձորով նոր ճանապարհ կառուցել և բարեկարգել նոր մայրուղի Քոչբեկի լեռնանցքով, որի վերակառուցումը շարունակվում է մինչև հիմա:

Հիրավի, այս շինարարությունը հնարավորություն տվեց կառուցապատել Սիսիանի շրջկենտրոնը, Որոտան գետի վրա նոր կամուրջ կառուցել և միացնել՝ քաղաքի աջ ու ձախ ափերը: Սիսիանը շատ հաճելի քաղաք է դարձել արդյունաբերական նոր ձեռնարկություններով:

Ամենից կարևորը, իհարկե, Շամբի և Սպանդարյանի հիդրոկայանների շինարարությունն է: Որոտանի կասկադի կառուցման շնորհիվ ստեղծվում են երեք խոշոր ջրամբարներ, որոնք կասկադը դարձնում են ավելի հզոր և մշտապես կայուն աշխատող կայաններ:

Այս առիթով կառուցվեցին և կառուցվում են՝ Տոլորս կոչվող ջրամբարի գեղատեսիլ ափին Տոլորսի, Բազարչայի և Բորիսովկայի նոր, գեղեցիկ բնակավայրերը: Պատկերը բոլորովին փոխվել է: Այս գյուղերում կառուցվում են պլանավորված, ժամանակակից բնակարաններ հիդրոկայանների շինարարության հաշվին:

Քանի որ ճանապարհը մնալու էր ջրամբարի տակ, ուստի կառուցվում է ժամանակակից նոր ճանապարհ Բազարչայից մինչև Սիսիան: Այս բոլորը, իհարկե, իր բարերար ազդեցությունն է թողել Սիսիանի գյուղերի և քաղաքի սոցիալ-կուլտուրական զարգացման վրա:

Երբ վերջնականապես կավարտվեն Սպանդարյանի, Տոլորսի և Բազարչայի ջրամբարների կառուցումը, այս չոր, երաշտի ենթակա շրջաններում մի կողմից միկրոկլիմա կստեղծվի, մյուս կողմից ջրամբարները հնարավորություն կտան ոռոգելու Սիսիանի շրջանի բերքատու հողերը, որոնք շատ հաճախ երաշտի պատճառով բերք չեն տալիս:

Հասկանալի է, որ Սիսիանը կդառնա մեր հանրապետության գյուղատնտեսական խոշոր շրջաններից մեկը: Ես նկատի ունեմ բերքատվության և անասունների մթերատվության բարձրացումը: Այժմ էլ Սիսիանը մեր հանրապետության ամենախոշոր շրջաններից է: Ցավոք, կլիմայական անբարենպաստ պայմանները հասցրել էին նրան, որ այս հսկայական շրջանում բնակվում է երեք տասնյակ հազարից մի քիչ ավելի բնակչություն: Այս բոլոր միջոցառումների իրագործումից հետո, Սիսիանը հնարավոր է և պետք է կրկնապատկի, եռապատկի բնակչության թվաքանակը:

Սիսիանում այժմ կառուցվում է ժամանակակից օդանավակայան: Այս ձեռնարկումը ևս կնպաստի բնակչությունը տեղում ամրացնելուն:

Մեր Հանրապետությունում չունենք մի այնպիսի գեղատեսիլ բնակավայր, որտեղ լինի նման գեղեցիկ գետ, ինչպիսին Որոտանն է, որը քաղաքը բաժանում է երկու մասի և քաղաքի զարգացման համար ստեղծում լայն հեռանկարներ:

Մարդաշատ ու մարդաբնակ է դարձել Որոտանի գեղեցիկ կիրճը: Առանց այն էլ այս կիրճի յուրաքանչյուր քար ու սար պատմական հուշարձաններ են, որոնք լեզու դարձած՝ պատմում են մեր հայրենիքի տխուր անցյալի մասին: Այժմ Որոտանի կիրճը դարձել է աշխատավորության բարեկեցության բարձրացման աղբյուր: Կասկադը չունչ տվեց Որոտանի կիրճին, նա լիաթոք է շնչում:

Մոտ ժամանակներում կավարտվի Շամբի նոր հիդրոկայանի շինարարությունը: Իր կառուցվածքով բավական ինքնատիպ կայան է լինելու: Մի քանի կիլոմետր ձգվող բարձր ճնշման թունելի շինարարությունը շատ երկար տևեց: Բայց այժմ, երբ ավարտվել է Տոլորսի ջրամբարի կառուցումը, որը միաժամանակ հանդիսանում է ջրի ռեժիմի կարգավորման միջոց, Սիսիանի Տոլորսի հիդրոկայանի դերն ավելի է մեծանում:

Սիսիանում ստեղծվեցին մի քանի արդյունաբերական ձեռնարկություններ, որոնք չունչ տվեցին քաղաքին, բնակչության ազատ աշխատուժն այստեղ լրիվ զբաղված է:

Այդ ձեռնարկություններից էլեկտրալամպերի գործարանի մասնաճյուղն ամենից կարևորն է, որը կազմակերպվեց շինանյութերի արտադրության անավարտ գործարանի ազատ շենքերում: Այստեղ աշխատում են ոչ միայն սիսիանցիները, այլև Տոլորսի, Աչոտավանի, Բռնակոթի և շրջակա գյուղերի բնակիչները:

Որոտանի կասկադի շինարարությունը նոր էր նախագծվում, երբ առաջին անգամ նախագծողների հետ եղա տեղում՝ տեղանքն ուսումնասիրելու: Բացի շարքային նախագծողներից՝ մեզ ուղեկցում էին «Հիդրոնախագիծ» ինստիտուտի տնօրեն ընկ. Հակոբ Մանուկյանը, գլխավոր ինժեներ Աչոտ Հովհաննիսյանը:

Տաթևհէկի շինարարության նախագիծը կար: Դա արդեն 60-ական թվականների սկզբներին էր: Այստեղ շատ դժվարությամբ էր լուծվում շինարարների համար հողերի առանձնացման հարցը: Այդ նպատակով էլ գնացել էի նախագծողների հետ: Իրոք, Շամբում, որտեղ արդեն կառուցվել էր Տաթևհէկի ջրամբարը, կային մոտակա տնտեսությունների գեղեցիկ, փոքր, բայց շատ կարևոր այգիներ:

Գյուղացիները չէին համաձայնվում վերացնել այգիները: Շինարարներն առանց խնդրի էության մեջ խորանալու առաջարկում էին միայն արժեքը տալ և փակել հաշիվները: Ինչպես ասացի, Սիսիանում հաճախ էր երաշտ լինում, տեղումների քանակը շատ քիչ էր: Տեղումները հիմնականում լինում էին ձմռանը և վաղ գարնանը, իսկ ամբողջ ամռանը, այսինքն բույսերի վեգետացիոն շրջանում տեղումներ չեն լինում:

Շամբի շուրջը գտնվող տնտեսություններն այստեղ մի քանի հեկտար ոռոգելի հողեր ունեն, որտեղ այգիներ են ստեղծվել, իրոք, շատ լավ սալորի, կեռասի, տանձի ու խնձորի հիանալի այգիներ են: Մարդու ափսոսն ավելի շատ է գալիս, երբ նման այգիները ոչնչացվում են, կարևոր չէ, թե ինչպիսի նպատակի համար:

Գյուղացիների հետ երկար զրուցելուց հետո, նրանց առաջարկեցի գյուղի մոտակա հողերը ոռոգելի դարձնել, ավելի երիտասարդ և ավելի օգտավետ նոր այգիներ տնկել ու այդ ժամանակ գյուղերը ոչ միայն չեն տուժի, այլև կօգտվեն, գյուղացիները տվեցին իրենց համաձայնությունը: Գյուղի մոտի հողերը ոռոգելի դարձնելու համար անհրաժեշտ եղավ ջրհան կայան կառուցել:

Հիդրոշինարարները դեռ չէին ավարտել շինարարությունը, գյուղացիները այգիներ հիմնեցին՝ նոր տիպի գեղեցիկ այգիներ, որոնք, փաստորեն, այդ տնտեսությունների հիմնական եկամտի աղբյուր են հանդիսանում:

Երբ գտնվում էինք Սիսիանի շրջանում, կուսակցական շրջկոմի առաջին քարտուղար էր աշխատում Արտավազդ Դիլանյանը: Նա առհասարակ տիպիկ զարգացած գյուղացի էր, շատ էր մտահոգված այն բանով, թե երբ վերացվում է քարշող ուժը և դրան փոխարինում է մեքենան, ինչպե՞ս կարող են ի-

բենց լեռնային պայմաններում գյուղատնտեսություն վարել:

Իհարկե, այն ժամանակվա տրակտորները լեռնային պայմաններում չատ դժվարությամբ էին աշխատում: Դիլանյանի մտահոգությունը միանգամայն տեղին էր, բայց, երբ ստացվեցին նոր մեքենաներ, որոնք հիանալի կերպով աշխատում են Սիսիանի պայմաններում, այլևս նման մտահոգությունը բացառվում է:

Հիշում եմ. Արտավազդը մի հետաքրքիր անեկդոտ պատմեց Սիսիանի գյուղացու չարքաշ կյանքի մասին: Կարծում եմ, հետաքրքիր կլինի ընթերցողի համար, եթե ես այն հակիրճ չարադրեմ:

Բռնակոթում ապրելիս է եղել մի ինչ-որ Մուքի դայի, որն ունեցել է երկու տղա և երկու աղջիկ: Նա տան միակ աշխատողն էր, երեխաները դեռ փոքր էին, չեն կարողացել նրան օգնել: Մուքի դային ապրում էր չատ աղքատ, պարտքերի մեջ խրված: Այլ խոսքով, մի կերպ յոլա էին գնում: Օրերից մի օր, երբ ինքը հողակտորում խոտ է հնձում, մեծ տղան, որն արդեն 14 տարեկան էր, վազելով գալիս է ու ասում, որ մայրը պառկել և զույգ տղա է բերել: Մուքի դային ուրախանալու փոխարեն տղային ասում է. «Ի՞նչ եմ անում զույգ տղան, մինը ջորի պիտի լիներ՝ ծախեի, պարտքերս տայի»:

Այս բոլորն անցել է և վերաբերում է Սիսիանի շրջանի գյուղացիների նախկին կյանքին, որոնք մի կերպ էին իրենց կյանքն անցկացնում: Մինչև 60-ական թվականները Սիսիանի գյուղերը նման էին մեծ ավերակների՝ գետնափոր և անբարեկարգ տներով:

Այժմ Սիսիանի շրջանի գյուղերը, մանավանդ հիդրոկայանների շինարարությունը սկսելուց հետո, դարձել են փոքրիկ քաղաքներ՝ բազմահարկ տներով, չատ լավ արտադրական կառույցներով, մշակույթի տներով, հիվանդանոցներով ու պոլիկլինիկաներով: Բոլոր գյուղերն ունեն բարեկարգ դպրոցներ, որտեղ նոր սերունդը կրթվում և հետ չի մնում աշխարհի զարգացման ընթացքից:

Դրան ավելացնենք նաև այն, որ այստեղ բոլոր գյուղերն ու բնակարաններն ապահովված են էլեկտրականությամբ: Գյուղացին հիմնականում օգտագործում է հեղուկ գազ: Ռադիոն և հեռուստատեսությունը դարձել են սովորական հաճույք: Այս բոլորից հետո պարզ է դառնում, որ մեր կարգերի ստեղծած բարեփոխումները հնարավորություն են տալիս հավատալու, որ մոտ ապագայում շրջանի հողային ու այլ բնական հարստություններն ավելի լավ և խելացի կօգտագործվեն, մարդիկ այլևս չեն ձգտի հեռանալ հարազատ վայրերից:

Մայրաքաղաքից հեռու գտնվող այս լեռնային շրջանի բնակիչները ևս հնարավորություն ունեն, այլ քաղաքների բնակիչների հետ միասին հեռուստացույցով դիտել աշխարհում կատարվող բոլոր անցուդարձը: Ճիշտ է, չատ դժվարությամբ կառուցեցինք հեռուստակայանը, վերահաղորդիչ գիծը, բայց երբ ավարտվել է, այժմ բոլոր դժվարությունները մոռացվել են և քաղցը հուշ են դարձել:

Պատմական Սիսեվանն իր իսկական զարգացման դարն է ապրում, որը մեզ հիացմունք է պատճառում:

Անհրաժեշտ եմ համարում նշել, որ գյուղի սոցիալիստական վերակառուցման և բարեկարգման գործում առաջնակարգ դերը պատկանում է կուսակցությանն ու աշխատավորությանը, բայց ամբողջական չի լինի, եթե չնշենք մի չարք հերոսների և կոլտնտեսության հրամանատարների: Նրանք են՝ Շամբի կոլտնտեսության նախագահ Արմենակը՝ Սոցիալիստական աշխատանքի հերոս, Վաղուտի Ազրոյանը, Բռնակոթի եղիշը, Նորավանի Համասը, Բորիսովկայի Սամոն և չատ ուրիշներ: Նրանք կմտնեն սոցիալիստական շինարարության փառապանծ պատմության մեջ:

* * *

Գորիսը՝ գեղեցիկ հատակագծով կառուցված հին առևտրական քաղաքը, հանդիսանում է Զանգեզուրի զարդը: Այստեղ բնակչությունը չատ բանով է տարբերվում Սիսիանից և մյուս շրջաններից: Առաջին հատկանշական կողմը կենցաղի ու վարվեցողության բարձր կուլտուրան է, որը, իհարկե, գալիս է անցյալից:

Սովետական կարգերի հաստատումից հետո Գորիսն ինչ-որ չափով կորցրել է իր նախկին տեղն ու դիրքը: Մինչև 50-ական թվականները, ինչպես մյուս շրջկենտրոնները, այնպես էլ Գորիս քաղաքը դանդաղ վերափոխվող շրջկենտրոններից էր: Ակսել Բակունցի հայրենիքը շատ դժվարին օրեր է տեսել հին դարերից սկսած մինչև մեր օրերը: Այն նույնպես բուռն զարգացում ապրեց Տաթևհէկի շինարարության ավարտից հետո: Կարծես նորից բուռն կյանքի կոչվեցին Գորիսն ու ամբողջ շրջանը:

Ինչպես Հանրապետության մյուս շրջանները, այնպես էլ Գորիսը պատերազմից հետո շատ ծանր վիճակի մեջ ընկավ: Վերադարձան մարտիկները Մեծ Հայրենականից: Բոլորին հնարավոր չէր ապահովել աշխատանքով և, հատկապես Գորիս քաղաքում ազատ աշխատուժի մեծ քանակություն ստեղծվեց:

Մեզ անհանգստացնող առաջին հարցը Գորիսում ձեռնարկությունների ստեղծումն է եղել: Առաջին ձեռնարկությունը տրիկոտաժի փոքրիկ, պարզունակ ֆաբրիկան էր:

Զգալի և որոշիչ նշանակություն ունեցավ միկրոշարժիչների գործարանի կառուցումը, որը հիմնականում լուծեց զբաղվածության խնդիրը: Այժմ քաղաքի կենտրոնում մի հոյակապ կառույց կա՝ դա միկրոշարժիչների գործարանն է, որը հայտնի է Հանրապետությունում և նրա սահմաններից դուրս:

Մինչև գործարանի շենքի կառուցումը, արտադրությունը կազմակերպվեց գյուղատնտեսական տեխնիկումի հին, չհարմարեցված շենքերում: Մի կողմից շրջկոմի ղեկավարները, մյուս կողմից շրջկոմի քարտուղար Քրիստափոր Պետրոսյանը պահանջում էին արտադրության կազմակերպում, մյուս կողմից չէին կարողանում ազատել տեխնիկումի շենքը, որովհետև տեխնիկումի տնօրեն Բարսեղյանը դիմադրում էր:

Այս պայմանները ստիպեցին մեկնել Գորիս՝ այդ հարցը տեղում լուծելու համար: Ի զարմանս ինձ, շրջանի ղեկավարները քաշվում էին Բարսեղյանից, քանի որ նա բոլորին չանտաժի էր ենթարկում:

Գործարանի շենքի հարցը լուծելուց հետո պարզվեց, որ այս միջոցառումը ևս բավարար չէ Գորիսի պահանջները բավարարելու համար:

Գորիսը, ինչպես ասացի, մշակութային քաղաք է և բացի արդյունաբերական ձեռնարկությունների կառուցումից, անհրաժեշտ էր մտածել մշակութային հիմնարկներ ստեղծելու մասին, մանավանդ, որ այդ տարիներին Զանգեզուրից քիչ երիտասարդներ էին գնում բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորելու:

Եվ ահա հարց առաջացավ բարձրագույն ուսումնական հիմնարկ ստեղծելու մասին, որին մենք անդրադարձանք հետագայում, երբ այդ հնարավորությունները ստեղծվեցին Հանրապետությունում: Դրան կանդրադառնանք հետագայում:

Այժմ Գորիսի շրջանի սոցիալ-կուլտուրական և տնտեսության զարգացման մասին: Ինչպես ասվեց Սիսիանի շրջանի մասին, Որոտանի կասկադի շինարարությունն այս շրջանի համար ևս հանդիսացավ կարևոր, ես կասեի, արագ զարգացման որոշիչ միջոց, նոր փուլ տնտեսության զարգացման համար:

Ինչպես հայտնի է, Գորիսի շրջանի գյուղերը պատմական իրադարձությունների պատճառով կառուցվել և տեղադրվել էին հիմնականում Որոտանի կիրճում՝ հին ժամանակի պայմանների համար՝ անառիկ վայրերում:

Այժմյան պայմանների համար այդ գյուղերը շատ անբարենպաստ տեղերում էին գտնվում: Մարդիկ շատ դժվարությամբ էին իրենց ունեցվածքը տուն տեղափոխել: Մեքենաների համար շարժվելու ոչ մի ճանապարհ չկար: Իրենք՝ գյուղացիները, ծայրահեղ դժվարին պայմաններում էին գտնվում, հնարավորություններն էլ այնքան սուղ էին, որ մարդիկ մի կերպ հաշտվել էին իրենց բախտի հետ:

Երբ սկսվեց Որոտանի կասկադի շինարարությունը, առաջինը կիրճից դուրս գալու ցանկություն հայտնեցին Ցայջի գյուղի աշխատավորները, բայց հարթավայրում ջուր չկար: Առաջնահերթ հարց դրվեց՝ օգնել ջուր հասցնելու հարթավայր, իսկ գյուղացիներն իրենց միջոցներով կիրճի եզրին կկառուցեն նոր տներ և նոր գյուղ:

Այստեղ Հայաստանի կառավարությունն օգնեց նրանց խմելու ջուր բերելու և բնակչությանը Ցայջին ձորից տեղափոխեց

Հարթավայր: Ով տեսել է այս նախկին գյուղերը, այժմ կարող են ասել, որ դրանք քաղաքներ են և նոր տիպի Գորիսին հատուկ ճարտարապետությամբ կառուցված:

Իրոք, մեր Հանրապետությունում Գորիս քաղաքի ճարտարապետությունը տարբերվում է մյուս շրջաններից և քաղաքներից: Ավելին, այստեղ նույնիսկ տեղական շինաքարը մի առանձին շուք է տալիս կառույցներին: Գյուղերը, որոնք կառուցվեցին վերջին տասնամյակներում, փաստորեն ընդօրինակել են Գորիսի շինարարական պրակտիկան և ստացվել է այժմեականի ու հնի զուգակցում, որը մի առանձին տպավորություն է թողնում:

Յայջի գյուղի դրական օրինակը մեծ ազդեցություն թողեց մյուս գյուղերի վրա: Երկրորդը սկսեց կիրճից դուրս գալ պատմական Խնձորեսկը: Դարեր շարունակ քարանձավներում ապրող գյուղը դուրս է գալիս Հարթավայր:

Այս բոլորը շատ լավ էր, բայց եթե կարողանայինք գոնե Խնձորեսկը պահպանել որպես հուշարձան՝ դա շատ լավ կլիներ, որովհետև գյուղի տեղափոխվելուց հետո շատ քիչ ժամանակ անց այնտեղ արդեն հետքեր չէին մնացել և այդ գյուղի մասին կարող են պատմել միայն նրանք, ովքեր տեսել են:

Հետաքրքրականն այն է, որ կիրճից Հարթավայր տեղափոխվելու առաջին օրինակը տվեց գյուղի Հովիվը, որից հետո աստիճանաբար սկսեցին փոխադրվել մյուսները: Այժմ այդ հսկայական գյուղը, որը Հայրենական պատերազմի ժամանակ 200-ից ավելի հրամանատարներ է տվել, մեր Միության բարեկարգ և գեղեցիկ գյուղերից մեկն է:

Ինչպես չասես, որ պատմական Խնձորեսկն այժմ էլ իր տեղը չի զիջում մեր Հանրապետության գյուղերի կառուցապատման և վերակառուցման մեջ:

Հիշում եմ, որ 1946 թ. փետրվարին, երբ տեղի էին ունենում Սովետական Միության Գերագույն խորհրդի ընտրությունները, ես դեռ սովորում էի կուսակցության կենտրոնական կոմիտեին կից բարձրագույն կուսակցական դպրոցում: Արձակուրդում էինք: Այն զուգադիպեց Գերագույն խորհրդի ընտրությունների

նախապատրաստման աշխատանքներին:

Ինձ հանձնարարված էր դեպուտատության թեկնածու պրոֆեսոր Յոյանին ուղեկցել Զանգեզուր, կազմակերպել հանդիպումներ ընտրողների հետ: Ճիշտ է, Յոյանը շատ խոշոր մասնագետ էր, վիրաբույժ, սակայն քաղաքականությունից հեռու կանգնած մարդ էր: Հատուկ զգուշացրել էին, որ նրա ելույթները նախապես ընթերցվի, որպեսզի այն լինի բովանդակալից, իսկ քաղաքական առումով՝ ճիշտ:

Հաճելի էր գործ ունենալ մի զարգացած, կիրթ, բարեխիղճ ու բարձրակարգ բժշկի հետ: Մենք պայմանավորվել էինք, որ Յոյանն առավելապես պետք է խոսեր առողջապահության խնդիրների, շրջանի առողջապահության վիճակի և հեռանկարների մասին, ներկայացներ իր գործունեությունը: Եվ, իրոք, ամենուրեք նրա ելույթները ստացվում էին շատ հաջող:

Զանգեզուրում իրենց հայրենակից Յոյանին ընտրողներն ընդունում էին բարձր խանդավառությամբ: Կուսակցության շրջանային կոմիտեի առաջին քարտուղար Լևոն Սարգսյանը և գործադիր կոմիտեի նախագահ Սողոմոն Կարապետյանը՝ հին կոմունիստ ազնվագույն անձնավորություն, մի երեկո մեզ հրավիրեցին հյուր գնալ Խնձորեսկ, իհարկե, ընտրողների հետ հանդիպում ունենալուց հետո:

Մեքենայով գնացինք մինչև այժմյան գյուղի տեղը, այսինքն կիրճի եզրը, որից հետո մեզ ձիեր տվեցին, նստեցինք ձիերը և իջանք կիրճում գտնվող գյուղը: Իսկ մի որոշ տարածության վրա ձիերը ևս չէին կարողանում գնալ: Մեզ մի կերպ ձեռքներիցս բռնած՝ հասցրեցին մի բնակարան, որտեղ պետք է հյուրասիրեին: Բնակարանը կարգին պատուհաններ չուներ, կահավորված էր գորգերով:

Փաստորեն եկեղեցին և մի քանի տներ էին, որ քարայրներում չէին տեղավորված: Բոլոր բնակիչները բնակվում էին քարայրներում, այն էլ մի քանի կիրճում: Շատ ափսոս, որ այստեղ հնարավոր չեղավ որպես շինություն պահպանել այդ տները: Բայց բոլոր դեպքերում կարելի է պատկերացում ունենալ:

Երեկոն անցավ շատ հետաքրքիր, ուրախ, մանավանդ

շրջկոմի քարտուղար Լևոն Սարգսյանը և Սողոմոն Կարապետյանը ավելի շատ էին ուրախացել իրենց հայրենակցին Գերագույն սովետի դեպուտատ ընտրելու համար:

Հաջորդ գյուղը, որ կիրճից դուրս բերվեց և նորը կառուցվեց՝ Կոռնիձորն էր: Կոռնիձոր անունը արդեն ամեն ինչ ասում է: Դարերի ընթացքում այստեղ մարդիկ ապրել են անասելի դժվարին պայմաններում, կեղեքվել ամեն կողմից և բազմիցս տուժել բնության արհավիրքների հետևանքով:

Այս գյուղը խմելու ջրից զուրկ է եղել, եղած աղբյուրն էլ այնքան վատն էր, որ մարդիկ տառապում էին տարբեր հիվանդություններով: Անասունները ջրում էին բավական հեռու գտնվող Որոտան կամ Ղարալ գետում, որը նույնպես մի քանի կիլոմետր հեռավորության վրա էր գտնվում:

Այժմ գյուղը, ինչպես ասացի, կիրճի անմարդկային պայմաններից տեղափոխվել է և հարթավայրում նոր գյուղաքաղաք կառուցվել՝ գեղեցիկ այգիներով, բազմահարկ տներով: Գյուղն իր զարգացման նոր շրջանն է ապրում, մանավանդ, երբ Որոտան գետի ջուրը ջրհան կայանի միջոցով հասավ գյուղ և ապահովվեց ոռոգման գործը: Գյուղ է բերվել նաև խմելու ջուր: Մի խոսքով, նախկին Կոռնիձորը դարձել է դրախտավայր: Հին գյուղը գյուղացիները այնպես քանդեցին, որ այժմ հնարավոր չէ պատկերացնել, թե երկար տարիներ ձորում մարդիկ ինչպես են ապրել: Կարճ ասած՝ Կոռնիձորի ավերակները դարձան պատմություն:

Երևի Հայաստանում չունենք մեկ այլ շրջան, որտեղ գյուղերը կառուցվել և վերակառուցվել են խելամտորեն ծրագրված նախագծերով ու հատակագծերով, ինչպես Գորիսի շրջանում: Առանց բացառության այս շրջանի բոլոր գյուղերը վերջին երկու տասնամյակում, ավելի ստույգ 60-ական թվականներից հետո են կերպարանափոխվել:

Ուղղակի ապշեցուցիչ է, երբ նայելով այժմյան Շինուհայր գյուղին (անունը նշանակում է չեների հայր), զարմանում ես, թե այստեղ անցյալում գյուղացին ինչպիսի ծանր կյանքով է ապրել: Շինուհայրը Կոռնիձորից տարբերվում է նրանով, որ այստեղ գյուղացիները ապահովված են սառնորակ աղբյուրների խմելու ջրով: Մնացած բոլոր գյուղերում պայմանները ջրի երկու կաթիլի պես նման են իրար:

Որոտանի կիրճի խոր տեղերից մեկում թառ է եղել նախկին Շինուհայրը: Առաջին անգամ այս գյուղը հարթավայր տեղափոխելու միտքն առաջ քաշեց Սուրեն Թովմասյանը, երբ Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտկոմի առաջին քարտուղար էր:

50-ական թվականներին երկուսով մի օր՝ ես և Թովմասյանը, գնացինք Շինուհայր՝ Թովմասյանի ծննդավայրը: Գյուղացիները հարգանքով ընդունեցին մեզ: Խոսակցության ժամանակ հարց բարձրացվեց գյուղը հարթավայր տեղափոխելու մասին, սակայն գյուղացիները կրքոտությամբ առարկում էին:

Այդ ժամանակ գործադիր կոմիտեի նախագահը Պատվական Խաչյանն էր՝ ծնունդով նույն գյուղից, որը նույնպես առարկում էր՝ ակնարկելով, թե կիրճի այգիները ո՞վ կմշակի, եթե գյուղը տեղափոխվի:

Այս հարցի մասին մեր զրույցն այնքան էլ երկար չտևեց, քանի որ խնդիրը դեռ հասունացած չէր: Ոչ մի գյուղ, բացի Յայջիից, կիրճից դուրս չէր եկել, իսկ Յայջին խմելու ջուր չուներ: Գյուղացիները օրինակ էին բերում վերջինիս, որը խմելու ջրից դեռ զուրկ էր, և չէին համաձայնվում կիրճից տեղափոխվել:

Շինուհայրի հարցը շատ հաջող լուծվեց, երբ սկսվեց Տաթևհէկի շինարարությունը: Շինարարական տեղամասերից մեկը պետք է կառուցվեր Շինուհայրի բարձունքի վրա եղած՝ հարթ տարածքում, որտեղ դեռ շատ վաղուց գյուղացիները փորձ էին արել տներ կառուցել կիրճից դուրս գալու համար: Նրանք նույնիսկ կառուցել էին անասնագոմեր, բայց հետագայում հրաժարվել էին և գյուղը մնացել էր նախկին տեղում:

Այդ բարձունքում հետագայում ստեղծվել էր՝ մեքենատրակտորային կայան: Այս հարթավայրում շինարարների համար սկսեցին կառուցել բնակելի շենքեր, հիվանդանոց և դպրոց: Նրանց համար էլ խմելու ջուր բերվեց Սև լճի շրջանից:

Մեքենատրակտորային կայանի նախկին շենքերը հարմարեցրին շինանյութերի արտադրության համար: Այդ նպատակով

կառուցվեցին նաև նոր շենքեր: Այս բոլորից հետո չինուհայրցիներին ոչինչ չէր մնում, բացի ձորից դուրս գալուց և հարթավայրում նոր գյուղ կառուցելուց:

Այժմ, երբ նռարլրի շրջանից նայում ես այս գյուղաքաղաքին, մի առանձին, աչք շոյող պատկեր է ներկայանում՝ իր երկհարկանի բնակելի տներով, արդյունաբերական խոշոր ձեռնարկությամբ: Տաթև ՀԷԿ-ի շինարարությունն ավարտելուց հետո շինարարական արտադրական ձեռնարկության շենքերը վերակառուցվեցին և հարմարեցվեցին ռետինե կոշիկների արտադրության համար: Հիմա այստեղ արտադրվում է բարձր պահանջարկ ունեցող ռետինե հարմարավետ կոշիկներ:

Սոցիալիստական գյուղի լավագույն օրինակներ են Գորիսի բոլոր գյուղերը, հատկապես խոշոր Հալիձորը, Քարահունջը, Տեղը, Վերին Շենը, վերջապես՝ բոլորը: Բայց ամենից շատ փոխվել և գեղեցկացել է Գորիսը: Նախկին առևտրական քաղաքը վերածվել է արդյունաբերական և մշակութային կենտրոնի: Զխախտելով հին հատակագիծը՝ կառուցվել են բազմահարկ տներ, մշակութային օջախներ:

Ամենից նշանավորը մանկավարժական ինստիտուտի մասնաճյուղի ստեղծումն էր, որը Գորիսին նոր տեսք ու իմաստալից չունչ տվեց: Ձևավորվեց բարձրագույն կրթությամբ մտավորականների իսկական բանակ: Բնական է, վերջինս իր բարերար ազդեցությունն է թողել Գորիսի բնակչության կուլտուրական մակարդակի վրա: Մանկավարժական ինստիտուտի մասնաճյուղի կազմակերպման գործում շատ մեծ գործ կատարեցին Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ Վ. Համբարձումյանը, ակադեմիկոսներ Ա. Շահինյանն ու Ս. Մերգելյանը:

Այժմ Զանգեզուրի երիտասարդության մեծ մասը սովորում է Գորիսի մասնաճյուղում և այստեղ կադրեր են պատրաստվում հիմնականում մասսայական դպրոցների համար:

Գորիս քաղաքն ունի բազմաթիվ տեխնիկումներ՝ մասնագիտական կադրեր պատրաստելու համար, առանձնապես գյուղատնտեսության գծով, բայց ամենամեծ փոփոխությունը տեղի ունեցավ մանկավարժական ինստիտուտի մասնաճյուղի կազմա-

կերպումից հետո: Այս ամենը Գորիսի կյանքում նոր հեղափոխություն կատարեց:

Ճիշտ է, շրջկենտրոնի սովխոզի տնօրեն ընկեր Բակունցը գտնում է, որ աշխատող ձեռքերից շատերն են գնում արդյունաբերության մեջ աշխատելու, բայց քանի որ այդ միջոցառումները բարելավում են աշխատավորների նյութական բարեկեցությունը, կուլտուրական մակարդակը և Գորիսը նորից գտել է իր արժանավոր տեղը, շատ է ուրախացել:

Սուրեն Բակունցն այն մարդկանցից է, որ պատերազմից հետո ընտրվել է կոլտնտեսության նախագահ, ապա կոլտնտեսությունը սովխոզ դառնալուց հետո՝ սովխոզի անփոփոխ տնօրեն: Այդ սովխոզը Գորիսի շրջանում և հանրապետությունում ճանաչված տնտեսություն է:

Այս տնտեսության հիանալի հաջողությունները պետք է հիմնականում վերագրել Ս. Բակունցի կազմակերպչական տաղանդին: Որքան հանդիպում ես այս մարդուն, այնքան ավելի մեծ բավականություն ես ստանում նրա բնածին խելքից և կյանքի ճիշտ ուղին, արդարությունը իմանալու տեսակետից:

Մի անգամ, երբ Ա. Միկոյանը եկել էր Հայաստան, խնդրեցինք գնալ Զանգեզուր: Զմերժեց. գնացինք Սիսիան, Գորիս, իսկ մինչ այդ եղել էինք Ղափանում, այնպես որ այս շրջաններին լավ ծանոթացավ և պետք է ասեմ, որ անչափ ուրախացել ու հիացել էր Զանգեզուրի բնաշխարհով, առավել ևս զանգեզուրցիների և դարալագյազցիների ընդունելությունից: Ա. Միկոյանն առաջին անգամ էր այցելում Զանգեզուր և Դարալագյազ:

Ամենուրեք, որտեղ նա եղավ, հանդիպումը վերածվում էր միտինգի, ջերմ ընդունելության: Ա. Միկոյանի վրա մեծ տպավորություն թողեցին վերակառուցված ու շենացած Տեղ և Խնձորեսկ գյուղերը: Տեղից ընկերները ցույց տվեցին Ղարաբաղի գյուղերից մեկը, որտեղ ծնվել էր Ս. Տեր-Գարրիելյանը:

Միկոյանը խոր կսկիծով հիշեց Սահակին, շատ ափսոսաց նրա ողբերգական մահվան համար: Տեղ գյուղից վերադարձանք Խնձորեսկ, որտեղ գյուղացիները մեծ խանդավառությամբ դիմավորեցին նրան: Անաստասը մոտեցավ միջահասակ մի կնոջ

և հարցրեց, թե՞ քանի երեխա ունի: Գյուղացի կինը չատ խիստ կարմրեց ու իրեն չկորցնելով հպարտ պատասխանեց. «Երեք»:

Երբ Միկոյանն ասաց, որ չատ քիչ է, գյուղացի կինը զարմացած հարցրեց. «Իսկ ձեր կինը քանի՞ երեխա է բերել»: Անաստասը պատասխանեց. «Հինգ տղա»: Կոլտնտեսուհին չատ բարձր ծիծաղեց ու ասաց. «Ձեր կինը ռաչիդ է, ես չեմ կարող նրան հասնել» («ռաչիդ» նշանակում է հերոս):

Գորիս քաղաքում չրջանի ղեկավարները, անտառտնտեսության պարտեզում սովխոզի տնօրեն Բակունցի մոտ մեծ հյուրասիրություն կազմակերպեցին: Ես երբեք Միկոյանին այդքան ուրախ, բարձր տրամադրությամբ չէի հանդիպել: Մանավանդ Գորիսի բարբառով Բակունցի կատակելը չատ էր բարձրացրել նրա տրամադրությունը:

Այդ ճաչկերույթը նման էր նիստի, որտեղ ավագը խորհուրդ էր տալիս կրտսերներին: Այդպիսին էին Գորիսում և առհասարակ Զանգեզուրում ու Դարալագյազում տեղի ունեցած հանդիպումները:

Ա. Միկոյանին չատ էր դուր եկել Գորիսի ճարտարապետությունը, չինարարական քարը: Նա այս կառույցները նմանեցնում էր Շուչիին: Երբ զեկուցեցինք, որ մոտ ապագայում ջրաչինարարական խոչոր աչխատանք կկատարվի այդ չրջաններում, չատ ոգևորվեց այդպիսի հեռանկարով:

Անաստաս Միկոյանի հետ հանդիպելն անմոռանալի տպավորություն թողեց աչխատավորության վրա և ինքն էլ անսահման հաճույք ստացավ:

Գորիսը, որպես քաղաք, իր ուրույն տեղն ունի մեր հանրապետությունում, չատ կադրեր է տվել նախկինում և այժմ էլ մեծ դեր է խաղում Զանգեզուրի մչակութային կյանքի զարգացման գործում: Այժմ չատ առաջնակարգ ճանապարհ է կառուցվում Երևանից դեպի Գորիս, որը չատ կհեչտացնի կապը Երևանի հետ: Իսկ գործող օդանավակայանն արդեն իր դրական դերը կատարում է հաջողությամբ. ամռան օրերին օդանավը մի քանի անգամ է գալիս Գորիս-Երևան:

Գորիսի գյուղերը մեծ են, բացի անտառում տեղավորված մի քանի գյուղերից: Ամենուրեք ստեղծվել են քաղաքակիրթ սպասարկում, առողջապահական հիմնարկներ, դպրոցներ և այլն: Այժմ, երբ ավարտվել է ջրանցքի կառուցումը, գյուղատնտեսության զարգացման համար ստեղծվել են հիանալի բարենպաստ պայմաններ: Ջրանցքի կառուցման ավարտից հետո կփոփոխվի գյուղատնտեսական կուլտուրաների կառուցվածքը: Երկրագործության մեջ գլխավորը, գերակչռողը, կհանդիսանան բազմամյա կուլտուրաները, խաղողը և պտղաբուծությունը: Հանրապետությունն ունի մի նոր սքանչելի գոտի՝ այգեպտղաբուծության զարգացման համար:

Միայն անհրաժեչտ է խելացի և բանիմաց կերպով օգտագործել ոռոգելի ջուրը, որպեսզի չլվանա և չտանի հողերը: Ոռոգման գլխավոր մեթոդը պետք է հանդիսանա անձրևացումը: Միայն այդ միջոցով կարելի է խուսափել էրոզիայից: Գորիսի գյուղատնտեսության զարգացման նոր ուղին հիանալի պայմաններ է ստեղծում գինեգործության, առանձնապես չամպայն գինիների պատրաստման համար:

* * *

Ղափանը չատ բանով է տարբերվում Գորիսից և մյուս չրջաններից: Արդյունաբերական այս քաղաքն անտանելի ծանր բնակարանային ու կոմունալ պայմաններում էր գտնվում մինչև 60-ական թվականները: Հնում, կապիտալի պայմաններում միայն օգտագործվել են բնական հարստությունները՝ չստեղծելով մինիմալ պայմաններ աչխատավորության համար:

Սովետական իչխանության տարիներին որոչ աչխատանք է կատարվել բանվորության աչխատանքային պայմանները բարելավելու ուղղությամբ, իսկ աչխատավորության կուլտուրա-կենցաղային պայմանները գրեթե մնում էին նույնը:

Միայն պատերազմից հետո, ինչպես ասացի, 60-ական թվականներից հետո, սկսվեցին բուռն զարգացումն ու փոփոխությունները սոցիալ-մչակութային կյանքում: Արագ փոփոխման պատճառը նախ և առաջ Քաջարանի կոմբինատի գործարկումն

էր, իսկ հիմնականում, լուրջ աշխատանք կատարվեց մեր բանվորական հին քաղաքը բարեկարգելու ուղղությամբ:

Ղափանն այն շրջաններից է, որը դարեր շարունակ ապրել է փոքր գյուղերով, հատկապես աղբրեջանական աղգարնակչությամբ: Եթե Հանրապետությունում խուտորներ կային, ապա միայն Ղափանում էին: 30-ական թվականներին այստեղ գոյություն ուներ ավելի քան 90 բնակավայր: Կային նաև այնպիսիները, որտեղ ապրում էին մի քանի ընտանիքներ: Այժմ հիմնականում վերացվել են այդ մանր գյուղերը: Վերջին մեկ տասնամյակում դրանց բնակիչները լեռներից իջել են և Ողջի գետի ափերին կառուցել նոր բնակավայրեր, որոնք կատարյալ քաղաքատիպ են:

Իհարկե, այդ գործընթացին մեծապես նպաստեց Քաջարանի կոմբինատը: Բնակչության մեծ մասն աշխատում է այդ կոմբինատում, նյութապես լիովին ապահովված են, որը և հնարավորություն ստեղծեց կառուցելու նոր տներ, նոր գյուղեր: Նախկինում շատ ցրված Ղափանի շրջանը դարձել է առավել հավաք, խիտ, իսկ ղեկավարման տեսակետից՝ միանգամայն դյուրին:

Ղափան քաղաքը տեղավորված է լեռներում և հիմնականում Ողջի գետի ափերին: Այս աշխարհագրական դիրքը, ինչ խոսք, որոշ դժվարություններ էր ստեղծում քաղաքաշինության համար, բայց երբ ծրագրվեց գետի ափերի ամրացման հարցը, և բարձրահարկ շենքերի կառուցումը, Ղափանը կառուցապատվեց շատ արագ և, խոստովանում եմ, շատ գեղեցկացավ:

Այժմ քաղաքը մեր Հանրապետության տեսարժան բնակավայրերից մեկն է՝ իր մշակութային օջախներով, հիվանդանոցներով, դպրոցներով, հյուրանոցներով, առևտրական և կենցաղային, մշակութային հիմնարկներով: Երկար ժամանակ Ղափան քաղաքը չուներ կոյուղի, խմելու ջուր, այժմ, երբ այդ խնդիրները լուծվել են, Ղափանի վիճակը բոլորովին փոխվել է:

Քաղաքի դժվար լուծելի հարցը կանանց համար աշխատատեղեր ստեղծելն էր: Եվ ահա 70-ական թվականներին առաջին ձեռնարկությունը, որտեղ պետք է աշխատեին կանայք, դա

էլեկտրալամպերի գործարանի մասնաճյուղն էր: Նախկին էլեկտրականի շենքը տրամադրեցինք մասնաճյուղին և կարճ ժամանակում գործարանի տնօրեն Ռոբերտ Ամիրյանը կազմակերպեց մասնաճյուղը, որտեղ աշխատողների ճնշող մեծամասնությունը կանայք են, երիտասարդ աղջիկներ: Երկար ժամանակ Ղափանում աշխատում էին միայն լեռնագործները, հանքափորները, այժմ աշխատանքի տեղ է ստեղծված նաև կանանց համար:

Դեռևս 50-ական թվականներին կառուցվեց մի փոքր գործարան՝ շրջանում արտադրվող պտուղը վերամշակելու համար: Հետագայում կառուցվեց կահույքի հիանալի գործարան, որը պետք է օգտագործեր Ղափանի արժեքավոր անտառանյութը:

Տնտեսության և աշխատող ուժի օգտագործման համար քիչ դեր չխաղացին ավտովերանորոգման գործարանը, էլեկտրատեխնիկական արդյունաբերության մասնաճյուղը: Կարող ենք վստահորեն ասել, որ այժմ Ղափանում դրականորեն է լուծվել մարդկանց աշխատանքով ապահովելու սոցիալական այդ կարևոր հարցը:

Ղափանի շրջանում գլխավորը, իհարկե, Քաջարանի կոմբինատն է, որը Միության մեջ գունավոր մետալուրգիայի խոշորագույն ձեռնարկությունն է: Մոլիբդենային այս հանքավայրը շատ յուրահատուկ է և նշանակալից: Բացի նրանից, որ տարեկան մեծ քանակությամբ հանքաքար է վերամշակվում և դրանցից կորզվում գունավոր և հազվագյուտ բազմաթիվ մետաղներ, այլև շատ հարուստ պաշարներ ունի: Միգուցե այդ է պատճառը, որ ուրիշ տեղերում օգտագործվող ցածր պարունակություն ունեցող հանքաքարը այստեղ թափվում է, որպես «ավելորդ»:

Այս հարցը մի անգամ չէ, որ դարձել է քննարկման և խոսակցության նյութ: Նույնիսկ բարձրագույն ժողովների և նիստերի ամբիոնից հնչել է մեր ձայնը, որ չի կարելի նման վերաբերմունք ցուցաբերել հարստության նկատմամբ: Բոլոր մեր ջանքերը, սակայն, անցել են ապարդյուն:

Նորից պետք է ասեմ գունավոր մետալուրգիայի միութենական մինիստր Պ. Լոմակոյի մասին: Մի անգամ Գերագույն

սովետի սեսիայի նիստերից մեկում մեր Հանրապետության ներկայացուցիչը Քաջարանի Հանքավայրի օգտագործման մասին ելույթ ունեցավ և ասաց, որ Քաջարանում կատարվում է կատարյալ վնասարարություն: Այդ ելույթից հետո Պ. Լոմակոն եկավ Հայաստան: Մենք միասին գնացինք Ղափան և Քաջարան, որտեղից Սախկալ-Սայի լեռնանցքով անցանք Ագարակ, Մեղրի:

Այս այցելության ժամանակ մարդիկ, տեղի ղեկավարները փաստերով ապացուցում էին, որ ինչպիսի պարունակությամբ հանքաքարը Քաջարանում թափվում է, իսկ դրանից մի քանի անգամ ցածր պարունակությամբ մոլիբդեն և պղինձ պարունակող հանքաքարը Ագարակի կոմբինատում բարձր եկամտաբերությամբ մշակվում է, և երկիրը ստանում է այդ հարստությունը:

Չնայած այդ բոլորին, մինիստրը իր որոշումներից չհրաժարվեց և մինչև այժմ էլ այդ ահավոր գործընթացը շարունակվում է: Բանն այն է, որ հանքաքարի, այսպես կոչված, աղքատ մասը, որը թափվում, օքսիդանում է և հետագայում նրա օգտագործումը դառնում է գրեթե անհնար, դրա համար էլ ցավ է պատճառում, որ բնության կողմից պարգևած այդքան հարստությունը կորչում է բացառապես անտնտեսվարության և որոշ չափով էլ կամակոր ղեկավարության պատճառով: Համոզված եմ, որ հետագայում դրականորեն կլուծվի այս հարցը, կերկարացվի Քաջարանի կոմբինատի կյանքը:

Այդ ձեռնարկությունը մեր Հանրապետության գունավոր մետալուրգիայի դրոշակակիրն է, մեր պարծանքը: Հասկանալի է, թե ինչպիսի ապրումների մեջ էինք, երբ 1970 թվին երկրաշարժ եղավ, էպիկենտրոնը Քաջարանն էր: Քաջ անունը շատ է սազում այստեղի բնակիչներին: Ծովի մակերևույթից 2000 մետրից ավելի բարձրության վրա ապրում են նրանք և երկրին տալիս այդպիսի հարստություն:

Առհասարակ Քաջարանը շատ դժվարությամբ կառուցվեց: Ղափանից Քաջարան դեռևս ճանապարհ չկար: Սարի կապը փակում էր և հնարավոր չէր մեքենայով գնալ աշխատանքի:

Շինանյութի մեծ մասը փոխադրվում էր ձիերով և սայլերով: Շինարարները մի կողմից կոմբինատն էին կառուցում, մյուս կողմից՝ ճանապարհը:

Առաջին ճանապարհը կառուցվեց Սարի կապով: Այստեղ կիրճի բարձրությունը հասնում է մոտ հազար մետրի: Պատերազմից հետո, երբ շինարարական տեխնիկա չկար, ձեռքի ուժով նման ճանապարհի կառուցումը հերոսություն էր: Երբ դրությունը լավացավ, միջոցներ և տեխնիկա տրամադրվեցին, նոր ճանապարհ կառուցվեց Ողջի գետի ձախ ափով, որով էլ Քաջարանը մոտեցվեց Ղափանին:

Քաջարանի կոմբինատի շինարարության գործում, հիրավի, ամենամեծ գործը կատարեց գունավոր մետալուրգիայի վարչության պետ Մ. Սարուխանյանը:

Երկրաշարժի հաջորդ առավոտյան Մինիստրների սովետի նախագահ Բ. Մուրադյանի հետ թռանք Ղափան և այնտեղից մեկնեցինք Քաջարան: Բարեբախտաբար զոհեր չէին եղել, բայց քանդված տներ շատ կային, մանավանդ Քաջարան գյուղում, որն արդեն մտնում էր կոմբինատի տարածքի մեջ:

Երկրաշարժը բնության ահավոր երևույթներից մեկն է, և հասկանալի է, որ մենք հանդիպեցինք մարդկանց, որոնք սարսափահար իրենց բնակարաններից դուրս էին եկել և բակերում, ճանապարհներին մի կերպ տեղավորել էին երեխաներին: Իմ և նախագահի Քաջարան գալը շատ ուրախացրեց բնակչությանը: Մենք սկսեցինք այցելել քանդված տները, գրեթե բոլորի մոտ և, ինչով հնարավոր էր, անմիջապես օգնում էինք, խրախուսում՝ չհուսահատվել:

Բոլորովին պատահմամբ մտանք կոմբինատի տնօրեն Ֆրունզիկի հոր բնակարանը, որը նույնպես շատ էր վնասվել: Նա վշտացել էր՝ բացատրելով, որ ուրիշները կարող են մտածել, թե ինքը միտումնավոր է իր հոր բնակարանը ցույց տալիս: Դա, իհարկե, դատարկ բան էր, քանի որ մենք առանց բացառության նայում էինք բոլոր տները: Պատկերը, իհարկե, զարհուրելի էր, և պահանջվում էր անմիջական օգնություն և կառավարության միջամտությունը:

Մեր ունեցած հնարավորության սահմաններում եղած վրանները տեղափոխեցինք Քաջարան՝ առաջին հերթին ապահովելով շատ տուժածներին: Արագ կերպով տեղափոխվեցին ոչ միայն մեր վրանները, այլև բանակի զորամասերից մեծ քանակությամբ հատուկ վրաններ փոխադրվեցին: Հենց առաջին օրն արդեն բոլորին ապահովեցինք վրաններով և ոչ մի ընտանիք չմնաց բաց երկնքի տակ:

Հասկանալի է, որ դրանով հարցը չէր կարող վերջացած համարվել: Մեր պահանջով ՍՍՀՄ Մինիստրների սովետի նախագահի տեղակալ Ֆ.Նովիկովի ղեկավարությամբ հատուկ հանձնաժողով ժամանեց Քաջարան: Նրանց վրա ծանր տպավորություն էր թողել վրանների տակ ապրող բանվորների վիճակը: Առանց ձգձգելու նախապատրաստվեց ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի որոշման նախագիծը և Նովիկովն այդ նյութերով վերադարձավ Մոսկվա:

ՍՍՀՄ կառավարությունը Նովիկովի զեկուցումից հետո Լ. Բրեժնևի կարգադրությամբ բառացիորեն երկու օրվա ընթացքում որոշում ընդունեց, որի շնորհիվ մենք Քաջարանի համար ստացանք մի քանի հարյուր հավաքովի փայտե տներ, որոնք դեռ մինչև հիմա էլ մնում են: Նոր տները մեծմասամբ, տեղակայեցինք Ողջի գետի հովտում, գետի ափին: Ադրբեջանական Գեղիձորում ապրող բնակչությունը ևս սարերից իջավ ու տեղավորվեց այդ հարմարավետ բնակարաններում:

Կառավարության որոշման համաձայն՝ լուրջ միջոցառումներ մշակվեցին և դրամական-կապիտալ միջոցներ տրվեցին Քաջարանի բարեկարգման և վերակառուցման համար:

Քաջարանն այդ բնական աղետից հետո ապրեց իր նոր վերելքը: Սկսվեց բարձրահարկ շենքերի կառուցումը: Բանվորները հիմնականում ապահովվեցին կոմունալ հարմարավետ բնակարաններով: Ավելին, Ողջի գետի կիրճը՝ Ղափանից մինչև Քաջարան, կառուցապատվեց, նախկին անանցանելի կիրճը դարձավ բնակելի, մարդաբնակ վայր:

Ամենադժվար հիմնախնդիրը կոմբինատի թափոնների կուտակման հարցն էր: Երկար ժամանակ հարցը չէր լուծվում: Մեր

համառ պնդումներից հետո որոշվեց կառուցել թափոնատեղ:

Քաջարանի կոմբինատի թափոնների պահեստավորման գործը շատ էր դժվարացել: Բոլոր մասնագետները գտնում էին, որ հարկավոր է թափոնները Ողջի գետի կիրճից դուրս բերել, բայց Սուրեն Մովսիսյանը պնդում էր օգտագործել գետի հունը, որը, իհարկե, շատ մեծ վտանգ էր սպառնում Ղափան քաղաքին:

Վերջապես երկար ձգձգումներից հետո որոշվեց կառուցել 18–20 կիլոմետր երկարությամբ թափոնատեղ և թափոնները տեղավորել, պահեստավորել Արծվանիկ գյուղի տակ գտնվող չօգտագործվող բլուրների մեջտեղում: Դա, իհարկե, հնարավորություն կտար, որ հետագայում, եթե կոմբինատի ընդլայման հարց ծագեր, այն կարող ենք փոխադրել այստեղ, որն իր կլիմայական բոլոր պայմաններով նպաստավոր է և հեշտությամբ կարելի է՝ հումքը տեղափոխելու համար երկաթգիծ անցկացնել:

Կարծում եմ, այս դեպքում Ղափանը կթևակոխի իր զարգացման նոր փուլը և երկար ժամանակ կմնա մեր հանրապետության գունավոր մետալուրգիայի կենտրոնը:

Առհասարակ Ղափանը մեր հանրապետության գյուղատնտեսական հետամնաց շրջաններից էր: Այժմ այն չի կարելի համարել այդպիսին, քանի որ վերջին տասը տարում նրա գյուղերը ևս կառուցվել և վերափոխվել են հիմնովին: Դավիթ Բեկը, Եղվարդը, Վաչագանն ու Արծվանիկը, կարելի է ասել իրենց մշակութային մակարդակով, ամենևին հետ չեն մնում մյուս առաջավոր տնտեսություններից և գյուղերից, նույնիսկ շատ ավելի բարձր են, քան Շիրակի հարթավայրի գյուղերը:

Ճիշտ է, 50-ական թվականներին բնակչության հոսք սկսվեց բարձրադիր լեռնային գյուղերից դեպի Արարատյան դաշտավայր: Շատերը շրջկենտրոնից, Ծավից և շատ այլ գյուղերից փոխադրվեցին Շահումյանի շրջան: Ուրախալին այն է, որ այժմ այդ հոսքը լրիվ դադարել է, և բնակչությունն ամրացել է իրենց գյուղերում և քաղաքներում՝ Քաջարանում ու Ղափանում: Աշխատասեր, դժվարություններին դիմացող այս ժողովուրդն արժանի է խոր հարգանքի:

Ղափանի տեղացի ղեկավարները շատ նվիրված են իրենց

շրջանին: Չի կարելի չնչել վաչագանցի Վ. Ղազարյանին, որը երկար ժամանակ աշխատում էր կուսակցության շրջկոմի առաջին քարտուղար և շատ բան արեց շրջանի մշակութային և կենցաղային վերափոխումների համար:

Շրջանի ղեկավարներից, ինչ խոսք, մեծ ծառայությունը պատկանում է Ռաֆիկ Մինասյանին: Երկար տարիներ աշխատելով կուսշրջկոմի առաջին քարտուղարի պաշտոնում՝ նա մեծ նվիրվածությամբ բարեկարգեց քաղաքները և այժմ էլ Ղափանի սոցիալ-տնտեսական վերափոխման ամենամեծ հայրենասերն է:

Ուրախալի է, որ այժմ ֆրանսիական շահագործողների բարակներից ոչինչ չի մնացել: Քաղաքը նման է իր գեղեցիկ լեռներին:

Ղափանի բնության գեղեցկության մասին շատերն են գրել, երգել, բայց որքան էլ գեղեցիկ գրվեն, հնարավոր չէ իրական գեղեցկությունը գրիչով արտահայտել: Սիգապանծ սարերը՝ Խուստուփ լեռան խորհրդանիշով, կուսական անտառները, հարուստ կենդանական աշխարհը, բնական հարստությունները նոր շուք են տալիս այս պատմական շրջանին:

Ղափանը ոչ միայն հիմա է նշանակալից մեզ համար: Նա պատմականորեն իր պատվավոր դերը կատարել է՝ պաշտպանելով երկիրն օտարերկրյա բռնակալներից: Բաթթաղի կուսական անտառը, Ծավիի սոսիների հատվածը, Զայդամի ամբողջ զանգվածը մի առանձին գեղեցկություններ են: Եթե նույնիսկ լեռները մերկ են, ապա այստեղ դրանք իրենց հատուկ գեղեցկությունն ունեն:

Քաջարանից Մեղրի ձգվող ճանապարհի աջ կողմում հոսում է մի գետակ, որին տեղացիները անվանում են Սախկալ-սու, այսինքն՝ ջրամորուք: Իրոք, երբ դիտում ես լեռան գագաթից, արագահոս այս գետակը նման է սպիտակ մորուքի, որը կախված է լեռան կզակից: Մի խոսքով, շատ գեղեցիկ է Ղափանի բնությունը:

* * *

Մի քանի անգամ Քաջարանից Մեղրի եմ գնացել: Առաջին անգամ 40–50 թվերին էր, երբ Սարի կապով նոր էին բացել ճանապարհը: Իմ լավ ընկերներից մեկի՝ Ղոնյանի և Ղափանի շրջգործկոմի նախագահ Մանգասարյանի հետ վաղ առավոտյան ճանապարհ ընկանք դեպի Մեղրի:

Ինչպես սպասվում էր, ճանապարհների անբարեկարգ լինելու հետևանքով ուշ երեկոյան հասանք Մեղրու շրջանի Լիճք գյուղը, որտեղ մեզ սպասում էր կուսակցության շրջկոմի քարտուղար Ս. Հովհաննիսյանը: Այս ճանապարհի մեծ մասը, իհարկե, անցանք ոտքով, ավելին, շատ տեղերում հրում էինք մեքենան, որպեսզի ցեխից հաներինք կամ քարի վրայով անց կացնեինք:

Վարորդի անունը Ֆարավոն էր, որը հենց սկզբից խոստովանեց, որ ճանապարհը դժվարանց է, այդպես էլ եղավ: Լիճքում գիշերեցինք, վաղ առավոտյան նորից ճանապարհվեցինք դեպի Մեղրի:

Առհասարակ մեր հանրապետությունը սակավահող է, իսկ Մեղրին կարելի է ասել, որ գրեթե հող չունի գյուղատնտեսական օգտագործման համար: Երևի դա է պատճառը, որ երբ մի քանի հեկտար տարածություն է լինում, այն անվանում են հարթավայր՝ Կարճևան- տապ, Բաղդա-տապ: Բաղդա-տապ կոչվածը ընդամենը 5 հեկտար է: Հասկանալի է, որ այս պայմաններում Մեղրու շրջանի գոյությունը ևս մեծմասամբ կախված էր արդյունաբերության զարգացումից:

Մինչև 1950 թ. Եգոր Հարությունովի ղեկավարությամբ հետախուզվել և հաստատվել էին Մեղրիի պղնձամոլիբդենային հանքավայրի պաշարները: Բայց քանի որ կառուցվում էր Քաջարանի խոշոր կոմբինատը, շատ դժվարությամբ էին համաձայնվում կառուցել Կարճևանի կոմբինատը: Այնուամենայնիվ 50-ական թվականների սկզբին սկսեցին Կարճևանի կոմբինատի կառուցումը: Դեռ նոր էին սկսել շինարարության նախապատրաստական աշխատանքները, երբ 1954 թվականին պլաններից հանեցին և որոշեցին միջոցներ տրամադրել կոնսերվացման համար:

Բոլորիս չատ անհանգստացրեց այդ վիճակը, ստիպված եղանք դիմել կառավարական բարձր մարմիններին: Իմ առաջին քայլը Թևոսյանի հետ խորհրդակցելն էր, մանավանդ, որ ինքն էր ղեկավարում գունավոր մետալուրգիան:

Դրանից առաջ, երբ մինիստր էր, ես նրան հանդիպել էի Կիրովական-Այրում խճուղու կառուցման հարցով, որը, ինչպես նշել եմ, լուծվեց դրականորեն: Այժմ էլ, չատ մեծ հույսով, որ Ագարակի կոմբինատի հարցը ևս կլուծվի դրականորեն, դիմեցի Թևոսյանին:

Խոսակցության սկզբից պարզվեց, որ Թևոսյանը սպասում էր մեր հանդիպմանը: Նա ինձ ընդունեց չատ սիրալիր, բայց դժբախտաբար, հրաժարվեց Ագարակի հարցի լուծումից՝ պատճառաբանելով, որ Ագարակի կոնսերվացման մասին ցուցումը եղել է կենտրոնական կոմիտեից: Առանց նոր կարգադրության հնարավոր չէ այդ հարցը լուծել: Թևոսյանը խորհուրդ տվեց դիմել Գ. Մալենկովին, կամ՝ Ն. Խրուշչովին, նկատի ունենալով, որ միայն նրանք կարող են որոշել Ագարակի կոմբինատի շինարարության հարցը:

Այդ տարիներին չատ դժվար էր պլանների հաստատումից հետո փոփոխություններ կատարելը: Ես հերթագրվեցի Խրուշչովի ու Մալենկովի ընդունարաններում, որն այն ժամանակ Մինիստրների սովետի նախագահն էր: Երկրորդ օրը Կրեմլում ընդունեց Մալենկովը և ասաց հարկավոր է զեկուցել Խրուշչովին, միաժամանակ ավելացնելով, որ ինքը չի առարկում՝ Ագարակի շինարարության համար լրացուցիչ միջոցներ տրամադրելուն:

Մի քանի օր անց Կենտկոմում ինձ ընդունեց Խրուշչովը: Ես ինձ հետ վերցրել էի կոմբինատի բոլոր տվյալները և Հայաստանի քարտեզը: Պետք է խոստովանել, որ նա չատ մանրամասն լսեց իմ հաղորդումը մեր հանրապետության հողակլիմայական վիճակի, հեռանկարների, առանձնապես գյուղատնտեսության չատ սահմանափակ հնարավորությունների մասին, մասնավորապես սահմանամերձ Մեղրու շրջանի մասին:

Պետք է ասել, որ նա զարմացել էր և կարծում էր, թե մեր

հանրապետությունում աճում էին մերձարևադարձային կուլտուրաներ: Երբ պատմեցի կլիմայական պայմանների մասին, Խրուշչովն առանց տատանվելու ասաց. «Ձեր ապագան արդյունաբերության զարգացման մեջ է»:

Թևոսյանը խոստացել էր, որ եթե իրեն հարցնեն, ապա նա կպաշտպանի մեզ: Խրուշչովը վերցրեց հեռախոսափողը և զանգահարեց Թևոսյանին: Առաջին հարցը, որ նա տվեց վերջինիս, հետևյալն էր. «Մեզ հարկավո՞ր չէ այդ գունավոր մետաղը՝ մոլիբդենը»: Թևոսյանը երևի պատասխանեց, որ չատ է հարկավոր: «Իսկ ինչո՞ւ է Հայաստանում կառուցվող կոմբինատը կոնսերվացվում»: Թևոսյանը պատասխանեց. «Միջոցներ չլինելու պատճառով, բայց եթե լինի ցուցում, հնարավոր է միջոցներ գտնել և շարունակել Ագարակի շինարարության աշխատանքը»: «Եթե այդպես է, շինարարությունը վերականգնե՛ք նախահաշվի ցուցակներում և միջոցներ հատկացրեք»,- ասաց Խրուշչովը:

Այդպես էլ եղավ: Ես նորից գնացի Թևոսյանի մոտ: Նա ասաց, որ արդեն կարգադրել է և շինարարությունը նախահաշվային ցուցակներում մտցված է:

Իհարկե, Ագարակը չատ բացառիկ նշանակություն ունեցավ Մեղրու շրջանի սոցիալ-մշակութային զարգացման համար: Նախ՝ կառուցվեց մի քաղաք Կարճևանի հարթավայրում, կոմբինատը զբաղեցրեց մեծ քանակությամբ մարդկանց: Մեղրին այս կոմբինատի շնորհիվ ունեցավ իր տեխնիկական մտավորականությունը, որի կարիքը զգում են չատ շրջաններ:

Կոմբինատի շնորհիվ կառուցվեց խճուղային ճանապարհ Օրդուբաղից Մեղրի, որը չատ հեշտացրեց կապը մայրաքաղաք Երևանի հետ: Մեղրիի շրջկենտրոնում կառուցվեցին նոր բնակելի շենքեր, դպրոցներ, հիվանդանոց, մշակութային այլ օջախներ, կինոթատրոններ և այլն:

Հին Մեղրին, որը նախկինում խոշոր դեր էր խաղացել հայ մշակույթի զարգացման գործում, մինչև Հայրենական պատերազմի վերջը չատ քիչ փոփոխությունների էր ենթարկվել: Պատճառը կտրված լինելն էր քաղաքներից և գյուղատնտեսության զարգացման համար եղած չատ սահմանափակ հնարավորությունները:

Իր կլիմայական պայմաններով շատ առանձնահատուկ է Մեղրու շրջանը: Արևը շատ, ջրազուրկ, մեղմ կլիմա՝ ձմեռային պայմանները միանգամայն նպաստավոր են դեղձի, խաղողի, թզի, սերկևիլի և այլ մերձարևադարձային մշակաբույսերի համար: Այս փոքրիկ շրջանում ինչ միրգ էլ աճեցվում է, ունենում է միայն գերազանց համ ու հոտ: Այդ է պատճառը, որ Մեղրու դեղձի պահածոները հայտնի են ամբողջ աշխարհին:

Մեղրու աշխատավորությունը վերին աստիճանի կարգապահ է, պարտաճանաչ, աշխատասեր: Մեղրիում կարելի է շատ տնտեսություններ գտնել, որոնք շալակով հող են բերել և ժայռի վրա հատկապես թուզ և խաղողի վազ աճեցրել: Նախկինում շատ էր զարգացած չերամապահությունը, բայց վերջին տարիներին չերամից շատերը հրաժարվեցին և դրա փոխարեն աճեցնում են դեղձ ու խաղող: Պատճառը չերամապահության շատ աշխատատար լինելն է և քիչ եկամտաբերությունը:

Երբ կառուցվեց Ագարակի կոմբինատը, Արաքս գետից ջուր վերցրին, որը միաժամանակ ոռոգում է Կարճևան-տապը և Կարճևանի սովխոզի այգիները: Այս միջոցառումը հնարավորություն ընձեռեց նոր մշակաբույսեր աճեցնել Կարճևանում, հատկապես, նուշ և կիտրոն: Կիտրոն աճեցնելու կուլտուրան շատ վաղուց է արմատացել մեղրեցիների կենցաղում: Ցանկացած ընտանիքում կարելի է հանդիպել մի քանի կիտրոնի ծառի, որոնք պահում են բնակարաններում:

Ելնելով այս հանգամանքից և կլիմայական միանգամայն բարենպաստ պայմաններից՝ մասնագետներ ուղարկեցինք Տաջիկստան, այնտեղից կիտրոնի հիբրիդացված ծառեր բերելու և դրսում աճեցնելու: Այժմ Ագարակ ավանի և Կարճևան գյուղի մեջտեղում ստեղծվել է մի հիանալի տնտեսություն, որտեղ դրսում կիտրոն է աճում և բարձր բերք տալիս: Այս գործում շատ դրական աշխատանք կատարեց կուսակցության շրջկոմի նախկին քարտուղար Թևանյանը: Մեղրիի զարգացման գործում շատ մեծ աշխատանք կատարեց նաև Ա. Սարգսյանը, որը երկար տարիներ աշխատեց կուսակցության շրջկոմում որպես քարտուղար:

Այժմ վստահությամբ կարելի է ասել, որ Մեղրիի շրջանի, առանձնապես Արաքսի ափի տնտեսությունները, լրիվ ամրապնդվել են, հատկապես Մեղրու շրջկենտրոնի, Նյուվադիի, Ալտարայի, իսկ լեռնային տնտեսություններից՝ Լիճքի տնտեսությունը:

Այդ նույնը չի կարելի ասել լեռնային տնտեսությունների մասին, օրինակ՝ Տաշտանի կալերի և մի շարք այլ տնտեսությունների մասին, որոնք, ցավոք զարգացման համար ոչ մի հեռանկար չունեն: Կասկածից վեր է, որ Մեղրիի շրջանի հեռանկարը Քաջարանի և Ագարակի միջև նոր ճանապարհի կառուցումն է, այն բոլորովին նոր կյանք կտա Մեղրիի բնակչությանը:

Այս ճանապարհի համար գոյություն ունի նախագիծ, բայց չգիտես ինչու, ՍՍՀՄ գունավոր մետալուրգիայի մինիստրությունը չի ցանկանում կառուցել: Պետք է հույս հայտնել, որ հետագայում այն կկառուցվի, և Ղափանը կստանա Մեղրիի համով մրգերը, իսկ Մեղրին հնարավորություն կստանա ավելի արագ զարգանալու:

Զմոռանամ ասել, որ Ագարակի շինարարությունը երկրորդ անգամ է դադարեցվել: Այս անգամ գունավոր մետալուրգիայի մինիստրության գլխավոր վարչության պետ Միկալենկոյի նախաձեռնությամբ՝ պատճառաբանելով, որ միջոցները քիչ են, հնարավոր չէ Քաջարանը և Ագարակը կառուցել միաժամանակ:

Երկար բանակցություններից հետո, Ա. Կոսիգինի կարգադրությամբ նորից մտցվեց հաշվեկշռային ցուցակների մեջ և միջոցներ տրամադրվեցին կառուցելու: Այժմ կոմբինատը կառուցվում է, ճիշտ է, շատ աղքատ հանքաքարով, բայց նույնիսկ այս պայմաններում կոմբինատն աշխատում է օգուտներով և երկրին տալիս է մոլիբդեն, պղինձ և այլ հազվագյուտ մետաղներ:

Ինչպես վերևում նշեցի, Ագարակի կոմբինատի և Ագարակ բանավանի կառուցումով Մեղրիի շրջանը նոր շունչ առավ և տնտեսապես ու մշակութային առումով շատ առաջադիմեց: Իսկ սոցիալական հարցերը լուծվեցին միանգամայն դրականորեն: Բնակչությամբ փոքր շրջանն ապրում է իր զարգացման նոր, ա-

վելի պայծառ ժամանակաշրջան:

Մեղրին մեր այն շրջաններից է, որտեղ լեռները շատ հարուստ են հանքային հանածոներով: Կգա ժամանակ, որ այդ բոլորը խնայողաբար կօգտագործվի, և Մեղրին իր պատվավոր տեղը կունենա հանրապետության տնտեսության զարգացման մեջ:

Նոր տեխնիկայի պայմաններում Մեղրիի ոռոգելի տարածությունները տարեցտարի ընդլայնվում են և շատ որակով պտղի արտադրությունն ավելանում է:

Այս հանգամանքը ևս նպաստավոր պայման է շրջանի սոցիալ-տնտեսական նորմալ զարգացման համար: Այս շրջանի յուրահատուկ պայմաններում երկար ժամանակ աշխատեցին կուսակցության շրջանային կոմիտեի առաջին քարտուղարներ Հարություն Ղազարյանը, Արշավիր Սարգսյանը և շատ ուրիշներ:

* * *

Արտադրողական ուժերի ճիշտ տեղաբաշխումը մեծ օգուտ բերեց Բայազետ-Կամոյի շրջանին, առանձնապես Կամո քաղաքին: Կամոն, նախկինում լինելով առևտրական քաղաքներից մեկը, վերջին տասնամյակներում իրերի բերումով, ոչ միայն չէր աճում ու զարգանում, այլև գնալով բնակչության թիվը պակասում էր: Քաղաքում որևէ նշանակալից շինարարություն չէր կատարվում: Մի խոսքով, քաղաքը սովետական իշխանության տարիներին առաջադիմելու փոխարեն մնացել էր 20-ական թվականների մակարդակին:

60-ական թվականներից սկսած՝ առանձնակի ուշադրություն նվիրվեց Կամո քաղաքի զարգացմանը և փոփոխություններն այժմ ակնհայտ են: Կամոյի շրջանի գյուղերը, ինչպես հանրապետության մյուս գյուղերը, նորմալ զարգացել և զարգանում էին, միայն քաղաքն էր, որ նույն տեղում էր մնացել:

Կամո քաղաքի զարգացմանն ու առաջընթացին նույնպես նպաստեց արդյունաբերական նոր ձեռնարկությունների կառուցումն ու տեղադրումը: Առաջին կարևոր արտադրական ձեռնարկությունը, որն ուղղակի փոխեց քաղաքի դեմքը, լուրջ

ազդեցություն ունեցավ նրա սոցիալ-տնտեսական վերափոխման վրա, դա կոնդենսատորների նոր գործարանի հիմնադրումն էր, հետագայում նոր տեղամասերի կառուցումը:

Այս գործարանի կազմակերպման գործում մեծ ներդրում կատարեց ՍՍՀՄ ռադիոէլեկտրոնիկայի մինիստր Ալեքսանդր Շոկինը: Երևանի ալյումինի գործարանում արդեն իրացվել էր կոնդենսատորների արտադրության համար արտադրվող փայլաթիթեղը (ֆոլգան) և անհրաժեշտ էր գործարան կառուցել:

Հանրապետության ղեկավարներս ելնելով Կամոյում ստեղծված դրությունից, որտեղ շատ ազատ աշխատուժ կար, հարց էինք դնում գործարանը տեղադրել Կամոյում, իսկ մինիստրությունից եկած բոլոր հանձնաժողովներն ու նախագծողները պնդում էին այն կառուցել Երևանում՝ նկատի ունենալով այստեղ եղած բարձր որակի մասնագետների առկայությունը, շինարարության ավելի պակաս ծախսերը, կոմունիկացիաների գոյությունը:

Մեր բոլոր ջանքերը ոչ մի արդյունք չտվեցին: Մինիստրության ներկայացուցիչներն առարկում էին: Կամոյում գործարան կազմակերպելը՝ պատճառաբանում էին հեռու լինելու հանգամանքով և բարձրագույն կրթությամբ կադրերի պակասով:

Այս վիճակում միակ ելքը մնում էր մինիստրի որոշումը, բայց նախքան որոշելը, խնդրեցինք Ա. Շոկինին գալ Հայաստան, տեսնել պայմանները, ապա նոր որոշել:

Այդպես էլ կատարվեց. Շոկինը ծանոթացավ առաջարկությունների հետ և նույնպես գտնում էր, որ այդպիսի բարդ և նուրբ արտադրությունը հնարավոր չէ կազմակերպել այդպիսի կտրված և հետամնաց տեղում: Այս կարծիքին էր, երբ մեկնեցինք Կամո քաղաք՝ ստուգելու եղած հնարավորությունները:

Կամոյում մենք առաջարկեցինք պատրաստի շենքեր, որտեղ կարելի էր կազմակերպել կոնդենսատորների արտադրություն՝ մինչև գործարանի կառուցումը: Այս պայմանները խիստ կերպով չհազդեցին և քանի որ անհրաժեշտ էր շատ կարճ ժամանակում արտադրել կոնդենսատոր, ապա սա ամենանպատակահարմար առաջարկությունն էր:

Երկար խորհրդակցելուց հետո որոշվեց Կամոյում կառուցել առաջավոր տեխնիկայով հագեցած գործարան: Պետք է խոստովանեմ, որ այստեղ հենց առաջին օրից ուղարկեցինք չատ լավ կադրեր և կարճ ժամանակում արտադրանք տվեցին, այն էլ բարձր որակի: Մի խոսքով, հուսախաբ չարեցին Կամոյի մարդիկ:

Այժմ, երբ այս գործարանում սպիտակ խալաթներով աշխատում է մի քանի հազար մարդ, մի քանի հարյուր ինժեներ, հասկանալի է թե ինչպիսի լուրջ դրական ազդեցություն է ունենալու նման միջոցառումը:

Կամոյի զարգացման համար չափազանց կարևոր նշանակություն ունեցավ Երևանի կաբելի գործարանի մասնաճյուղի կազմակերպումը, որը հետագայում դարձավ առանձին գործարան: Այժմ Կամոյի կաբելի գործարանը հայտնի է Սովետական Միությունում: Այստեղ ևս աշխատում է մի քանի հազար մարդ, ինժեներների և տեխնիկների մեծ կոլեկտիվ: Քաղաքում այլևս չկան մարդիկ, որոնք ցանկանան աշխատել և նրանց համար համապատասխան գործ չլինի:

Կամո քաղաքի համար կարևոր նշանակություն ունեցավ հաստոցաշինական գործարանի հիմնադրումը, որը նույնպես բարձր որակի կադրեր էր պահանջում, և որոնք աստիճանաբար ստեղծվեցին: Եթե այս կարևոր ձեռնարկությունների ցուցակին ավելացնենք նաև կահույքի և տրիկոտաժի ֆաբրիկաները, կարի գործարանը, ավտովերանորոգման գործարանը, այլ խոսքով թվով 16 գործարաններ և տարբեր ձեռնարկություններ, ապա այդ բոլորը որոշելու են քաղաքի արդյունաբերական պատկերը:

Նախօրոք ասեմ, որ վերջին մարդահամարի ժամանակ պարզվեց, որ այդ միջոցառումները տվել են իրենց դրական արդյունքը: 1960 թ. հետո Կամո քաղաքում բնակչության թիվը ոչ միայն չի պակասել, այլև բավական աճել է, հոսքը դեպի այլ քաղաքներ գրեթե չկա: Այժմ Կամո քաղաքը մեր հանրապետության բարեկարգ քաղաքներից է: Գեղեցիկ պողոտաներով, բարձրահարկ շենքերով է կառուցվում Կամոն:

Կամոյի զարդն են դարձել մշակույթի նոր պալատը, հյուրանոցը, հուշարձանները, կանաչ պուրակները և այլն: Մի խոսքով, երբ Մարտունու կողմից նայում ես Կամո քաղաքին, տների թիթեղապատ տանիքները չատ հաճելի տպավորություն են թողնում:

Կամոն իր բնակլիմայական պայմաններով չատ է տարբերվում հանրապետության մյուս քաղաքներից: Շատ խիստ ցամաքային կլիման ստեղծել է առանձնահատուկ բնավորություն և լավագույն սովորություններ, ընդ որում՝ հին սովորություններին նկատմամբ Կամոյի բնակչությունը պահպանողական վերաբերմունք է ունեցել: Այժմ, երբ հանդիպում ես քյավառեցու, մեծ հաճույք ես ստանում նրա հետ զրուցելիս:

Արտակարգ հայրենասիրությունն առանձին տեղ է գտնում յուրաքանչյուր քյավառցու մոտ: Նա մեծ հպարտությամբ է ասում, որ ինքը քյավառցի է և աշխատում է ամեն գնով քեզ ենթարկել իրենց սովորույթներին:

Կամո քաղաքում մեկ խոշոր տնտեսություն կա, դա սովխոզն է, որի անփոփոխ տնօրենն էր Հակոբ Կուռոյանը: Դեռ քաղաքում կարգին մշակութային օջախ չկար, Կուռոյանի նախաձեռնությամբ կառուցվեց մշակույթի տունը: Նա այս սովխոզի տնտեսական հաջողությունների համար արժանացավ Սովետական Միության Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչման: Ով գեթ մի անգամ հանդիպել է Կուռոյանին, նա երբեք չի կարող մոռանալ նրան: Իսկական քյավառցու բարբառով է խոսում, աշխատասեր և բնական խելքի տեր անձնավորություն է:

Մինիստրների սովետում աշխատելու ժամանակ եղա Կամոյի շրջանում, չատ ծանր տպավորություն էին թողել ինչպես քաղաքը, այնպես էլ գյուղերը, ոչ մի տեղ ծառ չէր աճեցվում:

Շրջկոմում հավաքված խոսում էինք ընթացիկ աշխատանքների մասին: Ես հարցրեցի, թե ինչո՞ւ ծառ չեք տնկում, ինչո՞ւ այգիներ չկան գյուղացիների տնամերձերում, կոլտնտեսություններում, սովխոզներում:

Ինչպես սպասում էի, բոլորը միաբերան ասացին. «Ծառ չի էթումա»:

Մարտունու շրջանում արդեն գոյություն ուներ Ծովինարի տնկարանը: Ես օրինակ բերեցի այդ տնկարանը և նրա բազայի վրա արդեն ստեղծված այգիները, հույս ունենալով, որ դրանով կարող եմ համոզել, որ անհրաժեշտ է աճեցնել բազմամյա բուսականություն, ինչպես քաղաքում, այնպես էլ գյուղերում:

Ցավով պետք է նշեմ, որ հավաքվածների կարծիքը մնաց նույնը, պատճառաբանելով, որ Մարտունու շրջանի կլիմայական պայմանները ավելի մեղմ են և նպաստավոր այգեգործության համար, իսկ Կամոյի շրջանում այդ հնարավոր չէ:

Մյուս օրը վաղ առավոտյան գործադիր կոմիտեի նախագահ Թորգոմյանի հետ շրջեցինք ամբողջ քաղաքը և նրա շուրջը գտնվող բլուրները, որոշեցինք որտեղ պետք է կանաչապատել, մանրամասն խոսվեց բույսերի տեսակների մասին:

Ես զգում էի, որ ընկերները մեծ ճնշման տակ համաձայնության նշան էին անում, բայց իրականում չահագրգռվածություն չէին ցուցաբերում: Երկար խոսելուց հետո պահանջեցի, որ գործադիր կոմիտեն առանձնացնի քաղաքի շուրջը գտնվող հողերը և տրամադրի անտառտնտեսությանը, որը և պետք է կանաչապատեր:

Այդպես էլ եղավ: Քաղաքի շուրջը գտնվող տարածությունները կանաչապատեց անտառտնտեսությունը, իսկ քաղաքի ներսում՝ պուրակներում և փողոցներում կատարեցին քաղաքային և շրջանային գործադիր կոմիտեները: Քաղսովետի նախագահ Ժ. Ռափյանը և սովխոզի դիրեկտոր Կուռոյանը, մի քանի տարում, փաստորեն, կանաչապատեցին քաղաքը:

Ինչ վերաբերում է այգիներին, ապա իրենք՝ գյուղացիները, չատ չուտ համոզվեցին, որ իրենց մոտ չատ լավ կաճի խնձորենին, տանձենին, սալորը և այլ տեսակի պտուղներ:

Այժմ Կամոյի շրջանում հիմնվել են չատ լավ պտղատու այգիներ, որոնց պտուղներն իրենց համով և հոտով տարբերվում են մյուս տեղերի մրգերից:

Մեծագույն ուրախություն է պատճառում, երբ բարձունքից նայում ես Բայազետի հարթավայրին: Խոշոր գյուղերը կառուցապատվել են այնպես, որ դրանք մի քաղաք են դարձել, այլևս

գյուղերի մեջ սահմանային տարածություն չի մնացել: Սարուխանը, Հացառատը, Կարմիր գյուղը, Քյուսաջղը, Արծվաքարը, Նորադուղը, մի խոսքով, հարթավայրի գյուղերը փաստորեն միացել են և դարձել մի հսկայական քաղաք:

Արժանավայել տեղ ունեն այս շրջանի զարգացման գործում Անուշավան Մարդոյանը, Աղաբեգ Գևորգյանը, Վարդգես Ծաղիկյանը:

Բայազետցիները չատ են սիրում իրենց տեղական կաղրերին, նրանց չատ օգնում, խրախուսում, մղում են նոր գործերի: Այդ պատճառով էլ Մարդոյանը և Գևորգյանը չատ աշխատանք կատարեցին շրջանի զարգացման, բարգավաճման համար: Ուրախալի է, որ Բայազետից հոսքը դեպի այլ քաղաքներ կտրվել է:

Եթե ստուգես Թիֆլիսում, Աշխաբադում, Արմավիրում առանձին թաղամասեր կան, որոնց բնակիչները ժամանակին տեղափոխվել են Բայազետից: Այժմ Կամոյի շրջանի աշխատողների համար ստեղծվել են բոլոր պայմանները՝ տեղում աշխատելու, ստեղծագործելու, իր հողն ու ջուրը վայելելու: Սարուխանում, Քյուսաջղում արտադրական մասնաճյուղերի կազմակերպումը չատ մեծ օգնություն էր աշխատող մարդկանց զբաղեցնելու համար:

Նախկինում Կամոն չատ հեռու, կտրված շրջան էր համարվում: Լճի ափով կառուցված նոր ճանապարհը մոտեցրել է Կամոյի շրջանը: Նոր ճանապարհով Սևանա գեղատեսիլ լճի ափով անցնելիս մի առանձին հաճույք ես ստանում: Ոչ միայն անջնջելի տպավորություն է թողնում լիճը, այլև պատմական հուշարձանները, որոնք հին ճանապարհով անցնելիս չէին երևում և չատերը չգիտեին Այրիվանքի տեղը: Լճի ափին՝ բարձունքի վրա, կառուցված միջնադարյան այս հուշարձանը այժմ մատչելի է դարձել բոլորին:

Ուրախալին այն է, որ այս ափին կառուցվել է և կառուցվում են բազմաթիվ առողջարաններ, հանգստի տներ, պիոներական ճամբարներ: Այրիվանքի մոտ կառուցված նոր հանգստի տունը՝ իր ճարտարապետությամբ, չատ նման է պատմական հուշարձաններին:

Գնահատելի է, որ ճարտարապետները պահպանելով պատմական ոգին, ճարտարապետական նոր ոճով ստեղծել են հիրավի, նոր կոթողներ: Այստեղ կառուցում են Կամո քաղաքի գործարանները և Երևանի ձեռնարկությունները: Առանձնապես լավ հիմք է դրել «Բազալտ գործարանի կոլեկտիվը:

Կամոյի շրջանի կլիման իրոք շատ է փոխվել: Ես չեմ սխալվի, եթե ասեմ, որ դա մեծ մասամբ բացատրվում է անտառապատմամբ: Նորադուզի հարթավայրում այժմ տնկված է բազմամյա ծառատեսակներ: Դա չէր կարող չանդրադառնալ Նորադուզի կլիմայական պայմանների փոփոխման վրա: Առհասարակ Գավառ գետի հովտում տնկված անտառները բացի գեղեցկությունից՝ փոխել են կլիմայական պայմանները: Այս շրջանում կլիման ավելի մեղմ է դարձել ու հաճելի է մարդկանց համար:

Հիսունական թվականների սկզբին, երբ սկսվեց լճից ազատված տարածքների ծառապատումը, երկար բանավեճ էր գնում ծառատեսակների ընտրության հարցում: Մասնագետներից շատերը գտնում էին, որ մշտադալար բույսերը այս բարձրադիր վայրերում չեն աճի և խուսափում էին տնկելուց:

Առաջին փորձը եղավ Նորադուզի հարթավայրում: Այստեղ տնկվեցին մի քանի հեկտար սոճի, այդ էլ իմ խնդրանքով և Լևոն Հովսեփյանի կարգադրությամբ, որն այն ժամանակ անտառտնտեսության հանրապետական վարչության պետն էր:

Անցավ մի քանի տարի, այդ սոճիները աճեցին և գերազանց արդյունք տվեցին: Իսկ բարդիները, որոնք առաջին տարիներին շատ լավ էին աճում, ստորերկրյա ջրերի հեռանալուց հետո, սկսեցին չորանալ և չհարմարվել ավազուտների չոր կլիմային: Մշտադալար բույսեր աճեցնելը, արմատավորելը այս փորձով հեշտացավ:

Մասնագետների պահպանողական տրամադրությունը փոխվեց որոշումների և կարգադրությունների ուժով կատարել տալով: Գավառ գետի հովիտը և Նորադուզի հարթավայրն այժմ նոր տեսք են ստացել միայն մշտադալար ծառատեսակների տնկումների ավելացմամբ:

Նորադուզի կոլտնտեսության վարչության անփոփոխ նախագահը՝ Շաչիբեկը, տեսնելով մշտադալար ծառատեսակների առավելությունը, նույնիսկ իրենց ազատ տարածություններում տնկել էր տալիս մշտադալար ծառեր: Առհասարակ լճից ազատված տարածությունների ծառապատումը մեծ նշանակություն ունեցավ լճի սպին ծածկելու և նոր տեսք տալու համար: Մշտադալար անտառների տարածություններն անցնում են մի քանի հազար հեկտարից:

Համոզված եմ, որ հետագայում ամբողջ տնկումները կկատարվեն միայն մշտադալար ծառատեսակներով, քանի որ դրանք ավելի հեշտությամբ են հարմարվում ցրտաշունչ կլիմային:

Կամոն իր տնտեսական, սոցիալական, կուլտուրական զարգացման մակարդակով շատ առաջ է անցել մյուս շրջաններից: Քաղաքում ստեղծվել է տեխնիկական մտավորականություն, որն իր բարերար ազդեցությունն է թողնում բնակչության կուլտուրական զարգացման վրա:

Հիվանդանոցները, դպրոցները, սպորտային հրապարակները, մշակույթի տները և պալատները նոր տեսք են տվել շրջանի գյուղերին, որոնք մյուս շրջանների նման չեն, շատ խոշոր են, և բոլորն էլ քաղաքատիպ կառուցվածքով: Կինոն, հեռուստատեսությունը, ռադիոն, հեռախոսը արդեն դարձել են սովորական, առաջին անհրաժեշտության պահանջ բնակչության համար:

Շատ դժվար էր վառելիքի հարցը Սևանի ավազանի շրջանների բնակչության համար: Բնական գազի անցկացումը, ինչպես էլեկտրականության մուտքը կենցաղում, իրոք, մեծ հեղափոխություն էր բնակչության կյանքում: Աթարի ծխից գրեթե ամբողջ բնակչությունը հիվանդ էր տրախոմայով, այժմ ուրախալի է, որ ոչ մի հիվանդ չկա Կամոյի շրջանում:

Մի խոսքով, ամբողջովին փոխվել է կենցաղավարությունը, դարձել քաղաքատիպ: Այս բոլորը մեծ ուրախություն է պատճառում նրանց, ովքեր տեսել են հինը և այժմ մոտիկից նորը:

Անհրաժեշտ է ասել, որ մսի նոր կոմբինատի կառուցմամբ ծրագրվել է կառուցել երկաթգիծ Սևանից դեպի Կամո: Այս բո-

լորը նոր հեռանկար է բացում Կամոյի շրջանի հետագա զարգացման համար: Նկատի ունենալով այստեղի մաքուր և առողջարար օդը՝ շատերը կուզենան ապրել Կամոյում, մանավանդ, որ կապը մայրաքաղաքի հետ հեշտացել է ինչպես խճուղով, այնպես էլ երկաթգծով:

* * *

Գյուղական շրջաններից ամենից շատ բնակչություն ունի Մարտունին: Այս շրջանում բնակչության աճը, համեմատած մյուս շրջանների հետ, շատ բարձր է: Քիչ հողատարածությամբ շատ բնակչություն ունեցող Մարտունու շրջանը նախկինում ծանր օրեր է ապրել մինչև Հայրենական պատերազմը և դրանից հետո: Ավելին, այստեղ կենցաղային կուլտուրան անչափ ցածր էր՝ համեմատած մյուս շրջանների հետ:

Շրջկենտրոնը՝ նախկին Ներքին Ղարանլուղը, ոչնչով չէր տարբերվում մյուս գյուղերից, կարելի է ասել, որ Մարտունու շրջանի բոլոր գյուղերում էլ բնակչությունը ապրում էր գետնափոր անբարեկարգ տներում:

Հայրենական մեծ պատերազմից հետո առաջին քայլը եղավ կառուցել էլեկտրական ու լույս տալ բնակչությանը: Սկսվեց Մատինա ՀԷԿ-ի շինարարությունը: Դա 50-ական թվականների սկիզբն էր: Զարմանալին այն է, որ մարդիկ մեծ հույսեր կապելով էլեկտրականի կառուցման հետ՝ կարծում էին, որ էլեկտրաէներգիան կարող է ապահովել ինչպես իրենց շրջանի կարիքները, այնպես էլ մյուս բնակավայրերին:

Հիշում եմ, երբ կառուցում էին հիդրոէլեկտրականը, երկրում դեռ առկա էր հացի քարտային սիստեմը: Բանվորական ուժ հավաքագրելու համար հացի քարտեր էին բաժանում, փաստորեն, բանվորներն աշխատում էին մի փոր հացով: Շատ դժվարությամբ կառուցվեց այս փոքրիկ կայանը, որի էներգիան բավարարում էր Մատինա գյուղին և շրջկենտրոնին: Այժմ այդ կայանը չի օգտագործվում, քանի որ անցկացվեցին բարձր լարման էլեկտրագծերը:

Մարտունիում աշխատուժի ավելցուկը մինչև հիմա էլ ակն-

հայտ է: Այս խնդրի լուծումը շատ ժամանակ պահանջեց, և պետք է խոստովանեմ, որ ամենադժվար լուծելի հարցը եղավ Մարտունիում նոր ձեռնարկությունների հիմնադրումը: Շրջանը բավական երկար ժամանակ հետամնաց էր,՝ նույնիսկ ծաղրելու համար մարդիկ ասում էին. «Դու հո մարտունեցի՞ չես»:

Զոլաքար գյուղում հնարավոր չէր գտնել տեղական կադրեր, որոնք կարողանային կոլտնտեսությունը ղեկավարել: Մարդիկ կորցրել էին հավատը, չէին աշխատում, բերք չէին ստանում: Մի խոսքով, անտանելի ծանր էր մարտունեցիների վիճակը: Եթե միջակ ապրելակերպի մասին խոսք լինի, ապա կարելի է նշել, միայն Վարդենիկի և Զորագյուղի տնտեսությունները: Այս վիճակը չէր կարող չանդրադառնալ շրջանից բնակիչների հեռանալու վրա:

Այդպես էլ եղավ: Լեռնային վայրերի մի քանի գյուղեր տեղափոխվեցին և վերաբնակվեցին Արարատի շրջանում: Այս միջոցառումը որոշ չափով բարելավեց կոլտնտեսությունների վիճակը: Վերաբնակեցված գյուղերի հողերը բաշխվեցին տեղի տնտեսությունների միջև:

Ինչպես ասացի, տեղում համապատասխան կադրեր չկային տնտեսությունների ղեկավար նշանակելու համար: Փնտրում էինք ուրիշ քաղաքներում և վայրերում՝ գտնելու բնիկ մարտունեցիների և ուղարկելու Մարտունիում աշխատելու: Երկար ժամանակ Զոլաքար գյուղի բնակչությունը, իրոք, թշվառության մեջ էր մի կողմից կոլտնտեսության ղեկավարների անկարողության, մյուս կողմից տեխնիկայի և տղամարդկանց ուժի պակասության հետևանքով:

Կիրովականում էր աշխատում զոլաքարեցի հին կոմունիստ Օսեյանը: Նրան որոշման միջոցով ուղարկեցինք կոլտնտեսության նախագահ աշխատելու: Արդարության դեմ չմեղանչելու համար ասենք, որ այս փորձված և ազնվագույն մարդուն ևս սկզբնական շրջանում չէր հաջողվում կարգավորել աշխատանքը: Միայն մի քանի ամսից հետո կարողացավ իր շուրջը համախմբել գյուղի ակտիվին և վստահություն ձեռք բերել գյուղացիների շրջանում, որից հետո գյուղը դուրս եկավ այդ վիճակից:

Այսպիսի բախտի արժանացան նաև Վարդենիկը, երբ կոլտնտեսության նախագահ նշանակվեց կամ ավելի ճիշտ՝ ընտրվեց Անդրանիկ Հարությունյանը և Ձորագյուղը, որտեղ երկար ժամանակ կոլտնտեսության նախագահ աշխատեց Արամը:

Շրջկենտրոնում առաջին արտադրական ձեռնարկությունը ստեղծվեց գորգագործական արտելի բազայի վրա, որտեղ աշխատում էին բացառապես կանայք: Այնուհետև կառուցվեց պահածոների ոչ մեծ գործարանը՝ նկատի ունենալով «սիգ» ձկան վերամշակումը: Ցավոք, այս գործարանը ոչ մի տարի նորմալ չաշխատեց՝ հումքի բացակայության պատճառով:

Վերջապես միայն վերջին տասնամյակում հնարավոր եղավ ստեղծել մի քանի արտադրական ձեռնարկություն, որոնք որոշ առումով թեթևացրին դրությունը շրջկենտրոնում: Այժմ գործում է «Հայէլեկտրալույսի» մասնաճյուղը, որտեղ մեծ քանակությամբ բանվորներ են աշխատում, հատկապես կանայք և աղջիկներ, իսկ չաշխատող տղամարդիկ ընդգրկվեցին շինարարության մեջ:

70-ական թվականների սկզբին Մարտունիում ծավալվեց մեծ շինարարություն: Մինչ այդ սկսված Արփա-Սևան շինարարության վրա աշխատում էին շատերը: Մի խոսքով, այժմ նախկին պահանջը չկա, ինչպիսին մի 15–20 տարի առաջ էր:

Մարտունիում շինարարության արագ թափը սկսվեց դեռ այն ժամանակ, երբ Գեղամ Ալեքյանը կուսակցության շրջանային կոմիտեի առաջին քարտուղարն էր: Այն տարիներին սկսվեցին շրջկենտրոնի բարեկարգման աշխատանքները, կառուցվեց կինոթատրոնի նոր շենքը, լայն պողոտա բացվեց դեպի լճափ: Այլ կերպ ասած, սկիզբ դրվեց Մարտունու վերակառուցմանը:

Պետք է նշել, որ Ալեքյանի սկսած գործը շարունակեց և ավելի ծավալեց Հենրիկ Սահակյանը: Զարմանալի արագությամբ կառուցվեցին գյուղերը և այդ շինարարության մեջ առաջին օրինակը հանդիսացավ Վերին Ղարանլուղը: Այդ գյուղում մասնագիտությամբ զոոտեխնիկ Միլիտոնը, կառուցեց իր տունը, որի մասին ժամանակին շատ խոսակցություններ էին եղել, թե նա

մեծ տուն է կառուցել: Իսկ այժմ Վերին Ղարանլուղում ամենափոքր տունը Միլիտոնի տունն է: Գյուղացիները կառուցել են այնպիսի բնակարաններ, որ նույնիսկ քաղաքաբնակները նախանձով են նայում:

Շատ մեծ նշանակություն ունեցավ Արփա-Սևան շինարարությունը Վարդենիկի վերակառուցման գործում: Գյուղը կառուցվել էր առանց հատակագծի: Առհասարակ Մարտունու շրջանում չկար մի գյուղ, որը փոքր-ինչ նախապես ծրագրված հատակագծով կառուցված լիներ: Այս հսկայական գյուղն էլ առանց պլանի ցրված էր բազմաթիվ բլուրների վրա և խոր ձորերում:

Ինչպես ասացի, բոլորը գետնափոր տներ էին: Վարդենիկն այս շրջանի, գուցե նաև հանրապետության ամենամեծ գյուղը լինի: Վարդենիկն ունի շուրջ 9000 բնակիչ, երեք դպրոց, մշակույթի լավ տուն և այլն: Կոլտնտեսության նախագահ Սանասարի նախաձեռնությամբ կազմվեց գյուղի հատակագիծը և սկսվեց իսկական կառուցապատումը: Ստեղծվեցին նոր փողոցներ, հրապարակներ: Արտադրական հիմնարկ-ձեռնարկությունների համար հատկացվեց առանձին տարածք, գյուղին միացավ Արփա-Սևանի բանավանը: Իրականում այս հսկա գյուղն այժմ նմանվում է քաղաքի:

Դեռ նոր էր սկսվել պլանով կառուցվել Վարդենիկը, երբ Բաղալ Մուրադյանի հետ այցելեցինք այդ գյուղ: Բնակիչներից շատերը, որոնց տներն ընկնում էին պլանի տակ և քանդման ենթակա էին, բողոքեցին, հույս ունենալով, որ մենք կարող ենք ինչ-որ բանով օգնել կամ դադարեցնել: Բազմություն էր հավաքվել մշակույթի պալատի առջև: Մեր բացատրությունից հետո գյուղացիների մեծամասնությունը հավանություն տալով վերակառուցմանը՝ օգնեցին մեզ պատասխանելու բողոքներին:

Զրույցն ավարտելուց հետո մեզ ուղեկցող ընկերները հրավիրեցին ճաշի, սակայն հրաժարվեցինք գնալ ղեկավար ընկերների տուն և առաջարկեցինք մտնել որևէ նորակառույց տուն՝ տեսնելու հարմարությունները: Փողոցով անցնելու ժամանակ հենց առաջին պատահած տունը մտանք:

Պարզվեց, որ դա Հովվի կառուցած բոլորովին նոր տունն էր: Երբ ներս մտանք, ծանոթացանք նրա կնոջ հետ, նա առանց սպասելու բերեց սեղանին դրեց մեծ կաթսայով ոչխարի մածուն, իսկ կուսակցության սկզբնական կազմակերպության քարտուղարը, մի շատ լավ մարդ, իրենց, թե հարևանի տանից լավաչ բերեց՝ ասելով, թե Հովվի ունեցած հացը հին է: Չեմ կարող չխոստովանել, որ շատ համով մածուն էր և հաճույքով հյուրասիրվեցինք:

Այդ տանը մեր գտնվելու ամբողջ ընթացքում բազմությունը դրսում սպասում էր: Նրանք մեզ ոտքով ուղեկցեցին մինչև գյուղի ծայրը: Իրոք, դա անմոռանալի օր էր ինձ համար: Մի կողմից գյուղի կառուցապատման թափը, գյուղացիների տրամադրությունը, այդպիսի հյուրասիրությունը, գյուղացիների սրտաբուխ վերաբերմունքը շատ էր ուրախացրել:

Վարդենիկը Սևանի շրջանների այգեգործության պիոներն է: Առաջին այգին՝ Ծովինարի տնկարանը, ընկ. (ազգանունը բնագրում չի գրված -**խմբ.**) ղեկավարությամբ հիմնվեց Վարդենիկի տարածքում:

Իրականությունն այն է, որ Ծովինարի տնկարանը կազմակերպվեց Գ. Հարությունովի նախաձեռնությամբ: Հետագայում այս տնկարանում կառուցվեց մի երկհարկանի շենք, որը պետք է լիներ Գրիգոր Հարությունովի ամառանոցը, բայց այնպես ստացվեց, որ այստեղ Գ. Հարությունովը ոչ մի օր չապրեց:

Տնկարանը հեղափոխական նշանակություն ունեցավ այս շրջաններում այգեգործության զարգացման գործում: Բացի նրանից, որ տնկանյութ էր մատակարարում, միաժամանակ պրակտիկ կերպով ցույց էր տալիս այգեգործության առավելությունը: Իսկապես, Ծովինարի ու Վարդենիկի այգիներից հետո, որոնք հիմնել էր տնկարանը, գյուղացիները սկսեցին իրենց տնամերձերում, կոլտնտեսությունների հողամասերում հիմնել նոր պտղատու այգիներ: Այժմ Մարտունու, Կամոյի և Վարդենիսի շրջաններում դժվար թե գտնվի մի տնտեսություն, որ չունենա իր սեփական այգիները:

Առհասարակ սերը դեպի ծառատնկումը սկսվեց նաև լճից

ազատված հողերի իրացմամբ: Մարտունին Սևանա լճի ավազանում ամենամեղմ կլիման ունի: Այստեղ լճափը պաշտպանված է քամիներից: Կլիման անտառապատվելուց հետո ավելի է մեղմացել և հաճելի դարձել:

Ընդհանրապես անտառտնտեսության հանրապետական վարչությունը շատ հրաշալի աշխատանք կատարեց, իսկ մասնավորապես՝ Մարտունիում առավել չափով: Այստեղ իսկական անտառներ են ստեղծվել և պատահական չէ, որ շրջկենտրոնին մոտ հիմնվել է մի քանի առողջարան:

Անտառապատման գործում լավ աշխատեց անտառտնտեսության Մարտունու բաժանմունքի պետ Համբարձումը, որը մեր պահանջով հիմնեց մեծ զանգվածներ, մշտադալար անտառներ, որոնք առանձին գեղեցկություն են ներկայացնում Մարտունուց Վարդենիս տանող նոր կառուցված ճանապարհի երկու կողմերում:

Չի կարելի չնշել, որ մշտադալարների տնկման գործին եռանդով նպաստեցին կուսակցության Մարտունու շրջկոմի առաջին քարտուղար Հենրիկ Սահակյանը և Վարդենիսի շրջկոմի առաջին քարտուղար Յու. Ռզաևը:

Մի խոսքով, արդեն գտնվել են ծառատեսակները, որոնք լավ են աճում և հարմարվել են կլիմային՝ կանաչ գոտի կապելով Սևանի շուրջը: Անհրաժեշտ է այն շարունակել:

Մարտունու շրջանի արագ զարգացմանը որոշակիորեն նպաստեց նաև Արփա-Սևանի շինարարությունը, որի ամենադժվար և բարդ տեղամասը Մարտունու կողմում էր: Այդ պատճառով մեր ուշադրության մեծ մասը բևեռվել էր այս տեղամասի վրա:

Նախ, հենց սկզբից ամենախոր հորատանցքերը 3-րդը և 4-րդն էին, որոնց համար անհրաժեշտ եղավ հոգ տանել և հորատանցքերի շինարարությունը հանձնարարել հատուկ կազմակերպության:

Սկզբնական շրջանում դիմեցինք Ուկրաինային, Դոնբասին, որպեսզի վերցնեն այդ երկու հորատանցքերի շինարարության պարտավորությունը: Նրանք սկզբում համաձայնվեցին, ապա

ծանոթանալով տեղին և երկրաբանական կառուցվածքին՝ հրաժարվեցին:

Մենք ստիպված եղանք դիմել Միության հատուկ մոնտաժային մինիստրությանը, որն ուներ այդպիսի մասնագիտացված կազմակերպություն: Մինիստր ընկեր Ֆուատ Յակուբովսկին իր համաձայնությունը տալով, գործուղեց իրենց մասնագետներին՝ տեղում կոնկրետ, պրակտիկ հարցերը ստուգելու:

Քանի որ դեռևս 3-րդ հորատանցքի Ազիզների տեղամաս գնալու ճանապարհ չկար, ստիպված եղանք սկսել 4-րդ հորատանցքից՝ չնայած ամենախոր հորատանցքը 3-րդն է, որի խորությունը հասնում է մոտ 700 մետրի:

Մոնտաժային մինիստրության մասնագիտացված տրեստի գլխավոր ինժեներ Տեր-Մինասովը շատ պարտաճանաչ և բարեխիղճ մարդ էր, որը և մինչև վերջին աշխատանքները կատարել տվեց իր անձնական մասնակցությամբ: Տեր-Մինասովը շատ էր փափագում տեսնել Արփա-Սևանի կառույցի ավարտը, սակայն այդ չհաջողվեց: Նա կյանքից վաղաժամ հեռացավ: Կարծում եմ՝ նրա հիշատակը չպետք է մոռացվի: Մի խոսքով, արտակարգ նվիրված էր այս շինարարությանը:

Հայհիդրոշին տրեստն այսպիսի աշխատանքների փորձ չուներ և շատ լավ ստացվեց, որ հորատանցքերի շինարարությունը հանձնվեց մասնագիտացված կազմակերպության:

Երբ լեռնագործներն արդեն խորացել էին ավելի քան 200 մետր, մեր հանրապետություն եկավ, իհարկե մեր հրավերով, Ֆ. Յակուբովսկին: Շատ բազմազան հարցեր լուծելուց հետո եղանք Արփա-Սևանի 4-րդ հորատանցքում: Մինիստրը ծանոթացավ գործերի ընդհանուր վիճակին: Շինարարության տեղամասի վարիչը և Մարությանը առաջարկեցին իջնել հանքահոր, տեսնել դրությունը:

Անհրաժեշտ է ասել, որ հանքահորում շատ մեծ քանակությամբ ջուր էր գալիս, որը չափազանց դժվարացնում էր շինարարության աշխատանքները: Այս և մի շարք այլ հանգամանքներ ստիպում էին շինարարության ղեկավարներին ցույց տալ աշխատանքի ծանր պայմաններն իրենց հյուր եկած մինիստրին,

մանավանդ, որ բանվորները այդ պայմաններում շատ քիչ էին վաստակում և դժգոհում էին:

Դրանից մեկ ամիս առաջ ես եղել էի հանքահորում և գիտեի վիճակի մասին: Ես ևս ցանկանում էի, որ Յակուբովսկին տեսներ դժվարությունը: Վերջապես որոշեցինք իջնել հանքահոր, բայց դեռ վերելակը պատրաստ չէր, պետք է իջնեինք տակառի մեջ կանգնելով: Քանի որ խորությունը շատ էր, տակառը պատեպատ խփվելով շատ վտանգավոր վիճակ էր ստեղծում, իսկ անծանոթ մարդու համար միանգամայն անտանելի էր: Հագանք համապատասխան զգեստներ և մի կերպ տեղավորվեցինք տակառի մեջ:

Ես հավատացած էի, որ մեր շատ փորձված շինարար մինիստրի համար այս բոլորը սովորական է, մտածում էի մեր մյուս ընկերների մասին: Բայց բանից պարզվեց, որ Ֆուատը ևս առաջին անգամ էր իջնում հանքահոր, այն էլ տակառի մեջ կանգնած, որը ճոճվելով պատից պատ խփվելով՝ սարսափ էր առաջացնում բոլորիս մոտ, իսկ շատ ավելի նրանց համար, ովքեր առաջին անգամ էին իջնում:

Մեզ իջեցրին մինչև աշխատանքի վայրը, որտեղ աշխատում էր ընդամենը վեց մարդ: Ջուրը բարձրացել էր մինչև բանվորների գոտկատեղը և խանգարում էր աշխատանքին, գործող պոմպերը չէին հասցնում ջրազատել տարածքը:

Մեզ տեսնելիս բանվորները դադարեցրեցին աշխատանքը: Ես ներկայացրի մինիստրին, շատ ուրախացան և սկսեցին իրենց պահանջները առաջադրել, տեղի-անտեղի հարցեր տալ: Մինիստրը շատ հանգիստ տակառի մեջ կանգնած պատասխանում էր և խոստանում օգնել՝ աշխատանքի համար նորմալ պայմաններ ստեղծել, առաջին հերթին ուղարկել ավելի հզոր պոմպեր, որպեսզի ջուրը չխանգարի աշխատանքին:

Կարծում եմ, որ այսպիսի այցելությունները, անշուշտ, մի կողմից շատ են բարձրացնում աշխատողների տրամադրությունը, մյուս կողմից կոնկրետ օգնությունն արագացնում է շինարարության աշխատանքները:

Հանքահորում մթության մեջ չէր երևում, թե ով ինչպիսի

հուզախառով վիճակում էր գտնվում: Բայց երբ մենք դուրս եկանք բաց երկնքի տակ, նայեցինք իրար, պարզ երևաց, որ մեր ընկերներից շատերը խիստ վախեցել էին, նաև ուրախացել, որ ողջ ու առողջ դուրս եկան գետնի տակից:

Իսկ մեր շատ հարգելի Ֆուատը խոստովանեց, որ ինքն առաջին անգամ էր իջնում հանքահոր՝ տակառի մեջ կանգնած, որի հետևանքով շատ էր վախեցել: Իրոք, երեսի գույնը սպիտակել էր:

Այս տեղամասերում շատ ենք եղել և հնարավորին չափով օգնել և խրախուսել աշխատողներին, որպեսզի արագացնեն շինարարության գործը:

Շատ անգամ եմ ես եղել այս երկու հանքահորերում, հետագայում էլ 8, 9, 10, 11, 7 հանքախորշերում, բայց մի անգամ հատուկ այցելություն եմ ունեցել, որի մասին պիտի գրեմ:

70-ական թվականների սկզբին շինարարները շատ էին բողոքում բարձր ջերմաստիճանի պատճառով, որը հնարավորություն չէր տալիս կանոնավոր աշխատել: Շինարարության պետ Ա. Սարգսյանի հետ գնացինք Ազիզների 3-րդ հանքահոր, որպեսզի տեսնեմ 7-րդ հանքախորշը, որտեղ ջերմաստիճանը շատ բարձր էր:

Այս տեղամասի պետը դարալագյազցի մի հերոս տղա է՝ Յուրան, որը հանդիպման առաջին իսկ պահին ասաց, թե ճիշտ է, դժվար է, բայց խոստացել են 7-րդ տեղամասը ավարտել ժամկետից շուտ, ուստի կարիք չկա իջնել տեղամաս:

Քանի որ եկել էի հատուկ դրա համար, զգեստներ խնդրեցի հանքահոր իջնելու համար: 3-րդ հանքահոր իջնելը շատ ժամանակ էր խլում, քանի որ մոտ 700 մետր խորություն ուներ, ապա 7-րդ տեղամաս գնալու համար անհրաժեշտ էր վագոններով գնալ ևս 4 կիլոմետր: Որքան առաջ էինք գնում, այնքան ջերմաստիճանը բարձրանում էր, շոգը՝ սաստկանում: Ի զարմանս ինձ և ընկերներիս՝ Ռուբեն Գևորգյանի, Աբրահամ Սարգսյանի և տեղամասի պետ Յուրայի, ես չէի քրտնում, ինձ համեմատաբար լավ էի զգում:

Երբ հասնք լեռնագործներին, որոնք աշխատում էին միայն

վարտիքներով, բոլորը սկսեցին բողոքել, թե անտանելի է, աշխատելը շատ է դժվարացել, իսկ վարձատրությունը մնացել է նույնը: Բոլորի վրայից ջուր էր հոսում, քրտնել էին անգամ կիսամերկ վիճակում, շատ դժվար էր նույնիսկ կանգնելը, ջերմաստիճանը գրեթե 50 աստիճանի էր հասել: Բոլորս էլ զգում էինք ծանրությունը, բայց ուզած-չուզած խրախուսում էինք: Մեզ անհրաժեշտ էր ավարտել, իսկ այն ժամանակ ամենահետամնաց տեղամասը 7-րդն էր:

Կիսակատակ, կիսալուրջ դիմեցի բանվորներին և ասացի. «Կարելի է նորմալ աշխատել, ձեր բողոքները տեղին չեն: Ա՛յ տեսե՛ք, ես 60 տարեկան եմ, արդեն մի ժամից ավել հագուստով կանգնած եմ ձեզ հետ և չեմ քրտնում, ուրեմն դուք՝ առողջ երիտասարդներդ, կարող եք ավելի դիմանալ և կատարել»:

Բանվորներից մեկը, որն ավելի համարձակ էր խոսում, մոտեցավ հարցրեց թե կարելի է թեև բռնել և զգեստս մի քիչ վեր բարձրացրեց ու բացականչեց. «Տղերք, բոլորովին չի քրտնել»: Սկսեցին ծիծաղել, նկատելի էր ուրախ տրամադրությունը և ամենից կարևորը՝ ենթադրություններ էին անում և ծաղրում իմ ուղեկիցներին:

Մեր ունեցած հնարավորությունների սահմաններում օգնեցինք շինարարներին: Առաջին հերթին կարգավորեցինք օդափոխությունը, որը շատ մեծ նշանակություն ունեցավ ջերմաստիճանը իջեցնելու համար: Այս տեղամասի հորատողները ժամկետից շուտ կատարեցին իրենց առաջադրանքները և որոշ չափով օգնության գնացին 6-րդ տեղամասին:

Արփա-Սևան կառույցը, իրոք, յուրահատուկ էր, ինքնատիպ և պահանջում էր ամենօրյա հոգատարություն ու օգնություն: Կասկածից վեր է, որ առաջիկայում կավարտվի այս կառույցի շինարարական աշխատանքը, և Արփի գետը կփոխի իր հունը, փրփրացող գետը կդառնա ստորերկրյա և առհավետ ջուր կմատակարարի Հայաստանի բնակչությանը:

Մի խոսքով Արփա-Սևանի շինարարության հետ կապված հիշողությունները պահանջում են առանձին և ջերմ խոսքեր ասել: Վերհիշեցի միայն մի քանի դեպքեր՝ կապված Մարտունու շրջանի հետ:

Մարտունին վերափոխվել, կերպարանափոխվել է հիմնովին, այն գեղեցկացել և ուլունքի պես շարվել է լճի ափին, որին նայողը կարող է ասել, թե դարերի ընթացքում այս գյուղերը այսպես էլ եղել են, քանի որ հին գետնափոր տներից անգամ հետք չի մնացել:

Երևանից Մարտունի գնալու ճանապարհին հանդիպող առաջին գյուղը Երանոսն է, որ փռվել է Գեղամա լեռան լանջին, ասես գյուղը ափիդ մեջ լինի, բոլոր տները և փողոցները երևում են: Այնուհետև Ադամխանն է, Ջորագյուղը, Ծակ քարը, Վերին և Ներքին Գետաշենները, Մատինան, Վերին Ղարանլուղը և շրջկենտրոնը, Աստղաձորը, Ջոլաքարը, Վարդենիկը, Ալիչալուն և այլն:

Երբ գիշերը նայում ես այս գյուղերին, էլեկտրական լույսերը մի կողմից լույս են սփռում Գեղամա, Վարդենիսի սիգապանծ լեռներին, մյուս կողմից երբ այդ լույսերն արտացոլվում են լճում, մի առանձին հեքիաթային պատկեր է ներկայացնում:

Մարտունին դարձել է զարգացած շրջաններից մեկը, այստեղ մարդիկ շատ աշխատասեր են և դժվարություններին դիմացող: Մոտ ապագայում Մարտունու շրջանում արդյունաբերական ձեռնարկություններն այնպես խելացի պետք է տեղադրել, որ գյուղատնտեսությանը չխանգարի: Առանց այսպիսի միջոցառման հնարավոր չէ բոլորին աշխատանքով ապահովել, մանավանդ որ օրեցօր ավելանում է գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացման մակարդակը:

Մարտունին Սևանի ավազանի այն շրջաններից է, որը պետք է դառնա մայրաքաղաքի և քաղաքային բնակչության հանգստի վայրը: Այդ է թելադրում նրա հաճելի ու առողջարար կլիման:

* * *

Վարդենիսը՝ նախկին Բասարգեչարի շրջանը, տարածքով Սևանա լճի ավազանի ամենախոշոր շրջանն է՝ ինտերնացիոնալ շրջան, դժվար կլիմայական պայմաններով: Բասարգեչարի՝ Վարդենիսի շրջանի վերափոխումներն ավելի դժվար ընթացան:

Կարելի է ասել, որ գյուղատնտեսական մթերքների վաճառ-

Շմավոն Առուշանյանը, Սեմյոն Բուդյոննին, Ա. Քոչինյանը և Ս. Թովմասյանը Արագածի լանջերին

Ա. Քոչինյանը սահմանապահ զորքերի հրամանատարության հետ

Ա. Քոչինյանը սահմանապահ ուղեկալում



Ա. Քոչինյանը, Ն. Խրուշչովը Վ. Համբարձումյանի մոտ

Ն. Խրուշչովը Կիրովի անվան գործարանում

Հ. Բաղրամյանի, Ն. Խրուշչովի հետ

Ն. Խրուշչովը «Միկոյան» նավի մոտ

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ Պոդգորնին Լենինի չքանշան է հանձնում Ա. Քոչինյանին

Լ. Բրեժնևի դիմավորումը

Լ. Բրեժնևի հետ ԿԿ-ի շենքի բակում

Ծաղկեպսակ է դրվում Լենինի հուշարձանին

Ծաղկեպսակ է դրվում սովետական կարգերի համար զոհվածների հուշարձանին

Լ. Բրեժնևը ԺՏՆ ցուցահանդեսում

Լենինի հրապարակում

Սովետական Հայաստանի 50-ամյակին նվիրված տոնահանդեսի ժամանակ

Սովետական Հայաստանի 50-ամյակին նվիրված հանդիսավոր նիստը

Լ. Բրեժնևը Հայկական ՍՍՀ Ժողտնտեսության նվաճումների ցուցահանդեսում

Լ. Բրեժնևի հանդիպումը Երևանի աշխատավորների հետ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ 50-ԱՄՅԱԿԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՍՄԿԿ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ԱՅՑԸ ԵՐԵՎԱՆ: ՆԿԱՐԱՆՎԱԾ է ՀԿԿ ԿԿ ԲԱԿՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՋ՝ Լ.Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ, Հ.Վ.ՔԱՐՋՈՒՄՅԱՆ, Հ.Մ.ԲԱՐՍԵՂՅԱՆ, Մ.Հ.ՄՈՎՍԻՍՅԱՆ, Ա.Հ.ՍՏԵՓԱՆՅԱՆ, Լ.Գ.ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ, Ե.Թ.ԱՍՅԱՍՏՅԱՆ, Ն.Խ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Գ.Ա.ԱՐՋՈՒՄԱՆՅԱՆ, Լ.Ի.ԲՐԵԺՆԵՎ, Մ.Մ.ՄԵԼՔՈՆՅԱՆ, Ա.Ե.ՔՈՉԻՆՅԱՆ, Բ.Հ.ՄՈՒՐԱՅԱՆ; / 1970թ./:

Ընդունելություն Կրեմլում

ՍՍՀՄ ղեկավարների հետ

ՍՄԿԿ կենտկոմի քարտուղար Ռուսակովի հետ Լենինականի մսի կոմբինատի աշխատողների մոտ

Լենինականի տեքստիլ կոմբինատի բանվորուհիների հետ

Ա. Քոչինյանը Լենինի շքանշան է հանձնում
Մուրադ Մուրադյանին

Արտեմ Ալիխանյանի հետ
(1956 թ.)

Վիկտոր Համբարձումյանի հետ
Ջերմուկում (1963 թ.)

Արամ Խաչատուրյանի հետ

Մարտիրոս Սարյանին հանձնվում է Լենինի շքանշան

Գոհար Գասպարյանի և Վիկտոր Համբարձումյանի հետ

Բ. Մուրադյանի, Վ. Համբարձումյանի և Նադուշ Հարությունյանի հետ

Յա. Զարոբյանի հետ Վ. Համբարձումյանի մոտ

Գեղամ Սարյանի և Տաթևիկ Սազանդարյանի հետ

Վ. Համբարձումյանի հետ

Շելեստի հետ Վիկտոր Համբարձումյանի մոտ

Անտոն և Մարիա Քոչինյանները թոռների հետ (ձախից՝ Գագիկի փոքր որդի Անտոնը, Էդվարդի որդիներ – Հակոբը և Գարեգինը)

Թոռնիկ Հակոբի հետ

Գեղարդի վարդապետի հետ

Մհեր Մկրտչյանի հետ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ
АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ СОВЕТСКОЙ СОЦИАЛИСТИЧЕСКОЙ РЕСПУБЛИКИ
ИНСТИТУТ ИСКУССТВ

Երևան, փ. Աբովյան № 15
Ул. Абовяна

Հեռ. 2-97-02
Тел.

№ _____
«____» _____ 196 г.

Дорогой Антон Ерванович!
Пишу Вам это письмо в институте искусств А.Н. В случайной беседе я узнал, что институт крайне нуждается в автобусе для своих научно-экспериментных работ.
Обращаюсь к Вам с большой и настоятельной просьбой.
Дайте указание о выделении одного автобуса моему родному институту
Хочу быть уверенным, что вы внимательно отнесётесь к моей слёзной просьбе.
Благодарю Вас
Арам Хачатурян
28 марта 1967 г. Ереван.

Центральный Комитет
Коммунистической партии Армении.

Товарищу А. Е. Кочиняну.

Дорогой Антон Ерванович!
Спасибо Вам сердечное за Ваше поздравление, за Ваши добрые пожелания.
Крепко жму руку и шлю Вам мои самые лучшие пожелания.
Дм. Шостакович
12 X 1966. Москва.

Անտոն Քոչինյանը 1990 թվականին

քի գների բարձրացումը չատ օգնեց շրջանի տնտեսական դրության բարելավմանը: Ամենանշանակալիցը ծխախոտի մշակումն էր, որը մեծ դրամական եկամուտներ բերեց ինչպես Վարդենիսի, այնպես էլ Մարտունու շրջաններին: Այս բարձունքի վրա ծխախոտի մշակաբույսը չափազանց բարձր բերք է տալիս և, ինչպես նշեցի, մեծ եկամտաբերություն ապահովում տնտեսություններին:

Ծխախոտի մշակությունը ևս մեծ դժվարությամբ արմատավորվեց, բայց երբ զգացին նրա օգտակարությունը, այլևս խոսք անգամ չէր կարող լինել այլ մշակաբույսերի մասին: Ասենք, որ այս յուրահատուկ կլիմայական պայմաններում տեխնիկական կուլտուրաներից միայն կարելի է ծխախոտ մշակել և բերք ստանալ:

Պարզ է, որ տնտեսությունների եկամուտների ավելացման շնորհիվ մարդիկ սկսեցին լավ ապրել, բնակարաններ կառուցել, ստեղծել կուլտուր-կենցաղային օջախներ:

Վարդենիսի զարգացմանը մեծ չափով նպաստեց Զոդի ոսկու հանքերի ուսումնասիրումը, հետախուզումը և ապա՝ ձեռնարկության կազմակերպումը: Զոդը դարձավ այն միջոցը, որը հնարավորություն տվեց նախ՝ երկաթուղային ճանապարհ կառուցել: Այս մասին ավելի մանրամասն կխոսվի քիչ ավելի ուշ:

Շրջկենտրոնը նախկին Բասարգեչարը, որտեղ ծնվել էին Վիկտոր Համբարձումյանի ծնողները, իրոք, չատ հետամնաց էր և հայտնի էր միայն ամառային չուկայով, որտեղ իրենց անասուններն էին վաճառքի բերում քոչվորները:

Վերջին տասը տարում շրջկենտրոնում կոմունալ չատ շենքեր կառուցվեցին: Բացի դրանից, Զոդի հանքավայրի բանվորը տեղադրվեց Վարդենիսում: Փաստորեն մի նոր քաղաք կառուցվեց: Այժմ հնից մնացել է միայն եկեղեցին: Այժմ կառուցվել են նոր փողոցներ, կինոթատրոն, մշակույթի տուն, դպրոցներ, գարեջրի գործարան: Քաղաքը միացել է Ակունքի հետ և դարձել մի մեծ բարեկարգ բնակավայր:

Վարդենիսը հանրապետության ծայրամասային շրջաններից է և պահանջում է լուրջ և մտածված վերաբերմունք: Անասնա-

պահական այս շրջանը հնարավորություն ունի ավելի արագ զարգանալու, եթե ավելի մեծ ուշադրություն դարձվի ինչպես երկրագործության, այնպես էլ անասնապահության կուլտուրայի բարձրացմանը, նրա մեքենայացմանը:

Վարդենիսի դեմքը, իհարկե, հետագայում որոշելու է հանքային հանածոների օգտագործումը: Զոդի հանքավայրի մասին շատ տարիներ իրար հակասող խոսակցություններ են գնում: Ես համոզված եմ, որ այս հանքավայրը լինելու է մեր երկրի ամենախոշոր ոսկու ծննդավայրերից մեկը:

Պետք է խոստովանեմ, որ Զոդի հանքավայրը բացառիկ է, ունի և՛ ոսկու, և՛ հազվագյուտ մետաղների մեծ պաշարներ, բայց ցավով պետք է նշեմ, որ երկար տարիներ կոմբինատի ղեկավարության և հետազոտողների միջև եղած անսկզբունք վեճերը հասցրել են այն բանին, որ այսօր երկիրը չի ստանում այդ թանկարժեք մետաղները:

Ավելին, Մինիստրների սովետի նախկին նախագահ Գրիգոր Արզումանյանը իր բարեկամի միջոցով ցանկանում էր այս հիանալի հանքավայրը վարկաբեկել: Համոզված եմ, որ արդարությունը կհաղթանակի, և Զոդն իր պատվավոր տեղը կգրավի:

Այժմ լճի ափով լավ խճուղի է կառուցվում Ծովագյուղից Վարդենիս: Մի կողմից երկաթգիծը, մյուս կողմից խճուղին նոր հնարավորություններ են ստեղծում Վարդենիսի և Կրասնոսելսկի տնտեսության հետագա զարգացման համար:

Վարդենիսի շրջանի գյուղերը ևս անճանաչելի են դարձել, մանավանդ, երբ այստեղ մուտք գործեցին բնական գազը, ռադիոն, էլեկտրականությունը, հեռուստատեսությունը և այլն:

Գյուղատնտեսության զարգացման համար նպաստավոր պայմաններ ունի Վարդենիսը: Դրա հետ միասին զարգանում է արդյունաբերությունը: Միջնակարգ դպրոցները համապատասխան կադրեր են պատրաստում: Շրջանը լավ ապահովված է առողջապահական ցանցով: Մի խոսքով զարգացման բոլոր հնարավորություններն ունի Վարդենիսը և մեր պայմաններում ապրում է նոր վերելք:

* * *

Իրերի դրությունը մի քիչ այլ է Կրասնոսելսկի շրջանում, որը նույնպես հանրապետության դժվար շրջաններից է: Լեռնային այս շրջանը շատ է հետ մնացել մյուսներից: Չնայած վերջին հնգամյակում ձեռնարկած միջոցառումներին, համեմատած մյուս շրջանների հետ, Կրասնոսելսկի շրջկենտրոնը ավելի վատ է բարեկարգված: Նույնը չի կարելի ասել կոլտնտեսությունների և սովխոզների մասին: Այստեղ գյուղերը շատ արագ կառուցապատվեցին:

Նախքան պատերազմը՝ այս շրջանի Հին Բաշքենդ գյուղից շատ տնտեսություններ փոխադրվեցին Արարատյան դաշտ և նույնիսկ Հյուսիսային Կովկաս: Հայրենական պատերազմից հետո արտահոսք սկսվեց շրջկենտրոնի կոլտնտեսությունից և առհասարակ մյուս գյուղերից ևս:

Ուրախալին այն է, որ այժմ այդ գործընթացը կանգ է առել, բնակչության թիվը նորմալ աճում է և լրիվ բավարարում է գյուղատնտեսական աշխատանքները ամբողջությամբ և ժամանակին կատարելու համար:

Այնուամենայնիվ, շրջկենտրոնի միակ փողոցը կանոնավոր բարեկարգվել է, կինոթատրոնի, հիվանդանոցի, մշակույթի տան շենքերը նոր տեսք են տվել շրջկենտրոնին: Կոմունալ մինիստրությունը վերջին տարիներին լուրջ ուշադրություն է դարձնում Կրասնոսելսկի շրջանին, որովհետև ղեկավար մարմիններն այդ հարցին կարևոր նշանակություն են տալիս:

Երկար ժամանակ Հին Բաշքենդն ազատ աշխատուժն օգտագործելու նպատակով հարց էր դնում գյուղում կազմակերպել արդյունաբերական ձեռնարկություն: Այս ուղղությամբ առաջին քայլը եղավ գործագործական ոչ մեծ ձեռնարկության ստեղծումը: Հաջորդը՝ Կիրովականի էլեկտրատեխնիկական գործարանի մասնաճյուղի ստեղծումն էր, որը լրիվ բավարարում է քաջ բաշքենդցիների պահանջները:

Երկար ժամանակ տնտեսության ղեկավար էր աշխատում, ինչպես իրենք են անվանում, Արմենակը: Նրա աշխատած տարիներին Բաշքենդի տնտեսությունը շատ բարձր աճ է ունե-

ցել: Այստեղ բնակչությունն այնքան արագ էր աճում, որ բացի Արարատյան դաշտից ու Հյուսիսային Կովկասից, հենց Կրասնոսելսկի շրջանում արդեն երկու խոշոր տնտեսություններ են առաջացել բաշքենդցիներից, դա Օրջոնիկիձե և Նոր Բաշքենդ խոշոր գյուղերն են:

Ահա թե ինչու եմ ասում քաջ: Իրոք աշխատասեր, քաջ ժողովուրդ են բաշքենդցիները: Այս գյուղը տվել է հին հեղափոխականներ, 1920 թ. քաջաբար պաշտպանեցին գյուղը ամեն տեսակ հարձակումներից:

Կրոսնոսելսկի շրջանը հիանալի պայմաններ ունի անասնաբուծության զարգացման համար, որին նպաստում են ամառային և ձմեռային արոտավայրերը:

Չնայած շրջանի բնակլիմայական պայմանները բոլորովին տարբեր են, (Սևանի ափին գտնվող տարբեր գյուղեր տարբեր բնակլիմայական պայմաններ ունեն), այս տարածքը շատ հաճախ է երաշտի ենթարկվում, այնուամենայնիվ, ոչխարաբուծության զարգացման համար հիանալի պայմաններ ունեն: Իսկ հյուսիս-արևելյան կողմում միանգամայն բարենպաստ պայմաններ կան խոշոր եղջերավոր անասնապահության զարգացման համար: Անհրաժեշտ կլինի Շորժայի ավազանի վիճակը այսուհետև արագ բարելավել: Երկաթգծի առկայությունը շատ է նպաստելու լճի հյուսիսարևելյան ափի բարեկարգմանն ու զարգացմանը:

Ներկայում այս ափում շատ կառուցումներ են կատարվել: Այստեղ հիմնադրվել է նկարիչների հանգստյան տունը, որտեղ Հայաստանի նկարիչներից շատերը ամռանը և ուշ աշնանը իրենց հանգիստն անց են կացնում Եռաքարի մոտ՝ լճի ափին: Այստեղ է կառուցվել երիտասարդական զբոսաշրջության բազան, որտեղ աշխարհի բոլոր ծայրամասերից գալիս են իրենց հանգիստն անցկացնելու գեղատեսիլ Սևանի ափին:

Վաղուց արդեն Սևանի ափին գործում է «Արևիկ» պիոներական ճամբարը, որի շինարարությունը սկսեց ժողտնտխորհուրդը Գուրգեն Զոլախյանի նախաձեռնությամբ: Հետագայում կառուցումը շարունակեցին արհմիությունները: Ամեն տարի մի

քանի հազար երեխաներ են հանգստանում Սևանի ափին: Հանգստի տներ և պանսիոնատներ են կառուցվել ֆիզիկայի ինստիտուտի, շինանյութերի արդյունաբերության մինիստրության աշխատողների համար:

Մարկ Գրիգորյանի նախագծով կառուցված առողջապահության մինիստրության 4-րդ վարչության առողջարանը հիանալի տպավորություն է թողնում: Պանսիոնատներ են կառուցվել գյուղատնտեսության, կոմունալ տնտեսության, գյուղտեխնիկայի և մի շարք այլ մինիստրությունների աշխատողների համար:

Մի խոսքով՝ երբեմնի Սևանի խաղաղ ափի անդորրը խախտվել է, դարձել մարդաբնակ և խոշոր առողջարան: Եթե դրան ավելացնենք, որ շատ արագորեն կանաչապատվում է Սևանի շուրջը, ապա հասկանալի է, թե որքան է գեղեցկանում մեր ժողովրդի պաշտամունք հանդիսացող Սևանը:

* * *

Լճի ափամերձ տարածքում շատ են կառուցվել կենցաղային և առևտրական ձեռնարկություններ: Կարծում եմ այդ մասին դեռ կխոսվի, երբ անդրադառնանք Սևանի շրջանի զարգացմանն ու հեռանկարներին:

Քանի որ խոսք է բացվել Սևանի շրջանի մասին, կուզենայի երկու խոսքով կանգ առնել այս շրջանի զարգացման խնդիրների վրա: Սևանը հայտնի է ամբողջ աշխարհին որպես բարձրադիր յուրահատուկ, ինքնատիպ լճերից մեկը: Այս լճի արևմտյան մասում տեղավորված է Սևանի ոչ մեծ շրջանը, բայց քանի որ կոչվում է լճի անունով, շրջանը ևս հայտնի է բոլորին:

Նախկին Ելենովկան փոքրիկ քաղաքատիպ բնակավայր էր՝ քիչ հայտնի: Երբ սկսվեց Սևան-Հրազդանի շինարարությունը, Սևանը առանձնահատուկ տեղ գրավեց: Շինարարական կազմակերպությունը տեղավորված էր Սևան քաղաքում, իսկ կասկադի շինարարությունը, իրոք, յուրահատուկ էր: Այս մեծ կառույցի շինարարությունը փոխեց Սևան քաղաքի պատկերը: Այստեղ սկսեցին կառուցել նոր խոշոր տներ, մշակույթի օջախներ, դպրոցներ, հիվանդանոց և կոմունալ-կենցաղային շատ ձեռնարկություններ:

Սևանի իսկական զարգացումը ևս տեղի ունեցավ հետպատերազմյան տարիներին: Սևանի շրջանում առաջին խոշոր քայլն եղավ հարմարեցված շենքերում չափիչ սարքերի գործարանի հիմնադրումը: Հետո կառուցվեց նոր ժամանակակից գործարան:

Մինչև այս գործարանի կառուցումը, քաղաքում անգործ մարդիկ շատ կային, քանի որ պատերազմից հետո շրջկենտրոնի կոլտնտեսությունը լիկվիդացվել էր: Այս մեքենաշինական գործարանը շատ բան փոխեց, այստեղ սկսեցին աշխատել ոչ միայն սևանցիները, այլև հարևան գյուղերի երիտասարդները:

Այս գեղեցիկ մեքենաշինական գործարանի կողքին վեր խոյացան ապակեթելերի նոր կոմբինատի մասնաշենքերը: Ապակեթելերի գործարանի գործարկումով լուծվեցին Սևան քաղաքի բոլոր տեսակի հարցերը:

Ապակեթելերի գործարանի հիմնական նպատակներից մեկը մեկուսացնող արտադրանք տալու հետ մեկտեղ, պետք է արտադրեր նաև ապակե պլաստիկ նյութ, որը շատ տեղերում կարող է փոխարինել մետաղին: Ցավով պետք է նշեմ, որ միայն առաջին մասը կատարվեց: Արտադրվում է ապակի, ընդ որում՝ մեր ապարներից, դրանցից ստանում են թել և մանվածք: Ավելին, մանվածքային տեղամասն այնքան խոշոր է կառուցվել, որի մեկ քառորդն է օգտագործվում:

Ապակեթելերի գործարանի կառուցումը բոլորովին կերպարանափոխեց Սևան քաղաքը: Այստեղ կառուցվեցին նոր բարձրահարկ շենքեր, բացվեցին նոր փողոցներ, կանաչապատվեցին, ստեղծվեցին նոր պուրակներ, քաղաքային հանգստի այգի և գեղեցիկ հրապարակներ, որոնք հատուկ տեսք են տալիս Սևանին:

Երկաթուղային կայարանը և նրան հաջորդող ոչ մեծ պողոտան առանձին տպավորություն են թողնում: Մշակույթի նոր պալատը, զիշերօթիկ դպրոցը և քաղաքային հիվանդանոցը կառուցվել են ժամանակակից ճարտարապետական ոճով: Հանրապետության տնտեսության համար շատ կարևոր նշանակություն ունի նոր կառուցված ալրաղացը, սառցարանը, ծխախոտի ֆերմենտացիոն ֆաբրիկան և շատ ուրիշ ձեռնարկություններ:

Սևան քաղաքն այժմ իր մեջ ընդգրկում է նախկին Ցամաքաբերդ, Գոմաձոր գյուղերը: Ցամաքաբերդի բարձունքի վրա կառուցվել է, իրոք, շատ գեղեցիկ հյուրանոց, իսկ Ցամաքաբերդի նախկին թերակղզու բարձունքի վրա կառուցվել է Հայկոոպի գեղեցիկ պանսիոնատը, ռեստորանը, որոնք հորիզոնի վրա հմայիչ տեսարան են ներկայացնում:

Նախկին կղզին, որը վերածվել է թերակղզու, դարձել է հանրապետության բնակչության հանգստավայրը: Այստեղ հանգստացողներին սպասարկելու համար կառուցվել են բազմաթիվ ռեստորաններ և ճաշարաններ: Գեղեցիկ է ճարտարապետ Քոչարի նախագծով կառուցված գրողների տունը: Այդ նույն նախագծով կառուցվեց կառավարական ընդունարանը, որն իշխում է լճի վրա, բացվում հորիզոնից մինչև Վարդենիսի լեռնաշղթան:

Երևանից Սևան-Դիլիջան ձգվող մայրուղու վրա կառուցվել են բազմաթիվ ճաշարաններ, ռեստորաններ: Դրանցից ամենագեղեցիկը Աղթամար ռեստորան-հյուրանոցն է, որը լեռան գագաթից իշխում է լճի ամբողջ տարածության վրա: Երբ ընտրում էինք այս ռեստորան-հյուրանոցի տեղը, շատ առաջարկներ եղան ճարտարապետների կողմից, Հայկոոպի նախկին նախագահ Դերենիկ Վարդանյանի խնդրանքով կառուցվեց այդ բարձունքի վրա:

Ճիշտ է, շատերն էին դեմ այդ տեղին, բայց կառավարությունը կանգնեց այժմյան տարբերակի վրա և, ես կարծում եմ, արտահայտած կլինեմ մեծամասնության կարծիքը, եթե ասեմ տեղանքը շատ հաջող է ընտրված:

Այժմ մեծ, հիրավի, հսկայական աշխատանք է տարվում արհմիությունների կողմից նոր պանսիոնատներ կառուցելու ուղղությամբ: Շուտով կավարտվի լճափին կառուցվող Ծովագյուղի պանսիոնատը՝ 100 հոգու համար: Արդեն ավարտվել է «Ինտուրիստի» 250 մեքենայի համար կառուցված մոթելը, որն այս տարի կընդունի տուրիստներ իրենց մեքենաներով: Սևանը նոր կենդանություն է ստացել, աշխույժ, ուրախ կյանք է սկսվել նրա շուրջը:

Սևանի շրջանի գյուղերը շատ չեն, բայց խոշոր են ու բարեկարգ: Սևանի շրջանում է գտնվում նորածին Գագարին քաղաքը, որտեղ արդեն արտադրանք են տալիս ու Հայտնի են դարձել Հանրապետության սահմաններից դուրս:

Գագարինում կան մի շարք ձեռնարկություններ, բայց ամենից նշանակալիցը «Հայէլեկտրալույս» միավորման մասնաճյուղն է: Կար ժամանակ, երբ մարդիկ Սևանը համարում էին բնակության համար քիչ նպատակահարմար վայր: Այժմ այդ բոլոր կարծիքները փարատվել են: Սևանը դարձել է մեր Հանրապետության արդյունաբերական կենտրոններից մեկը և առողջարանը:

Սևանը մեծ հեռանկար ունի զարգացման համար, առանձնապես տուրիզմի գծով: Երևան-Սևան խճուղու, երկաթգծի առկայությունը հնարավորություն են տալիս ամռան ամիսներին ավելի լայն չափով օգտագործել Սևանի օդն ու ջուրը: Երբ երկիրը աղքատ էր, Սևանի օգտագործման մասին քիչ էինք մտածում: Այժմ, երբ վիճակը զգալիորեն բարելավվել է, Սևանը դարձել է իսկական հանգստի վայր և առողջարան:

Երկար տարիներ այս շրջանում ղեկավար աշխատանք է կատարում կուսակցության շրջկոմի առաջին քարտուղար Սուրեն Զաքարյանը: Նա կոմերիտական աշխատանքից անցավ կուսակցական աշխատանքի, ապա սովետական և նորից կուսակցական աշխատանքի: Այնպես որ արդեն 30 տարուց ավելի է՝ շրջանում նա ղեկավար աշխատանքի է և քաջատեղյակ է վերջին երեք տասնամյակներում շրջանում կատարված սոցիալ-տնտեսական բոլոր վերափոխումներին:

Երբ դեռ որոշված չէր Արփա-Սևանի շինարարության հարցը, նախատեսված էր կառուցել ջրընդունիչ թունել, որպեսզի մեծ Սևանի ջրերը կլանի: Դրա համար էլ նոր թունելը շատ ավելի խոր պետք է լիներ, քան գոյություն ունեցողը: Ջրի ընդունող այս ջրանցքը սրանից հետո կարող է վերցնել ևս 40 սանտիմետր բարձրությամբ ջուր, որից հետո լճի մակերեսն ավելի ցածր է լինելու, քան ջրի ընդունող ջրանցքն ու թունելը:

Առաջին քայլը, որ մենք կատարեցինք Սևանա լիճն այս մակարդակին պահպանելու համար, երկրորդ թունելի կառուցումից հրաժարվելն էր: Երբ այս մասին տեղյակ պահեցինք Սևանի շրջանի ակտիվին, մեծագույն ուրախությամբ ընդունեցին, առաջին հերթին Սուրեն Զաքարյանը:

Միայն մի քանի տարի հետո որոշվեց Արփա-Սևան շինարարության հարցը: Սևանի շրջանի գյուղերի զարգացումը և կառուցումը կապված են Սևան հէկի և Սևան-Հրազդան կասկադի կառուցման հետ: Շինարարությունը նյութական մեծ հնարավորություն ստեղծեց՝ կառուցելու բնակարաններ, բարեկարգել գյուղերը և այլն: Կասկածից վեր է, որ այս շրջանների զարգացման վրա բարերար ազդեցություն ունեցավ մայրաքաղաքի հետ կապը: Երևանը շատ լուրջ օգնություն է ցույց տվել մերձակա շրջաններին, այդ թվում Սևանին:

Արփա-Սևանի շինարարության ավարտը մեծ օգուտ կբերի Սևանի շրջանին ևս, դա որոշ չափով կընդլայնի ոռոգելի տարածությունները և Սևանի բերրի հողերը, որոնք շատ էին տուժում երաշտից, ոռոգման դեպքում շատ մեծ օգուտ կտան բերքատվության բարձրացմանը:

* * *

Մեր Հանրապետության հեռու ընկած և, կարելի է ասել, կտրված շրջանը, Շամշադինն է: Անունն էլ մնացել է հին դարերից եկող արևապաշտներից: Գեղեցիկ ու հրապուրիչ բնություն ունի Շամշադինի շրջանը:

Ես մի քիչ ավելի մոտիկից գիտեմ այս շրջանը, որովհետև իմ աշխատանքային գործունեությունը սկսել եմ այս շրջանում: Շատ վառ հիշողություններ են մնացել այս շրջանի բարի, աշխատասեր մարդկանցից: Երբ հանդիպում ես շամշադինցու և բարևում ես ասելով՝ «բարև ձեզ», նա առանց հապաղելու անպայման ավելացնում է՝ «շատ բարև, հազար բարև» և այլն: Մի խոսքով՝ շատ բարեհամբույր մարդիկ են, դրա հետ միասին՝ վերին աստիճանի կարգապահ, չնայած կոլխոզային շարժման ժամանակ շատ էր ըմբոստացել այս շրջանը:

Կենցաղային քաղաքակիրթ վարքագծով Շամշադինը մեր

Հանրապետության գյուղական շրջաններից ամենից բարձրն է, որից հետո գալիս է Մեղրին: Այս շրջանին ևս հատուկ պետք է անդրադառնամ, երբ խոսելու լինենք գյուղատնտեսության մասին:

Այժմ միայն ասեմ, որ այստեղ ևս սկսեցինք հիմնադրել արտադրական ձեռնարկություններ, որոնք որոշ չափով թեթևացրեցին շրջկենտրոնի դրությունը: Սկզբում ստեղծվեց խաղալիքների արտադրության ձեռնարկությունը, ապա մի շարք կենցաղային սպասարկման ձեռնարկություններ, եթե հաշվի չառնենք Թովուզի պահածոների և ծխախոտի վերամշակման և գինու գործարանները:

Շամշադինը այն շրջաններից է, որտեղից Հայրենական պատերազմից հետո շատերը տեղափոխվեցին Արարատյան հարթավայր, հատկապես Մասիսի շրջան: Բայց ի ուրախություն բոլորիս, այժմ այդ արտահոսքը բոլորովին դադարել է:

Շամշադինի խաղողագործության զարգացման աշխատանքներում մեծ ծառայություն ունի կուսակցության շրջկոմի նախկին քարտուղար Արշալույս Փոլադյանը, որը մի քանի տարում կրկնապատկեց, կարելի է ասել եռապատկեց խաղողի այգիների տարածությունները: Հիմնական երկրագործական կուլտուրան այժմ հանդիսանում են ծխախոտը և այգեգործությունը:

Շամշադինի գյուղատնտեսությունը ևս ապրեց և ապրում է իր զարգացման նոր ժամանակաշրջանը, խաղողագործության նոր, արագ զարգացման շրջանը:

Գյուղատնտեսության զարգացումը մեր պայմաններում պայմանավորված է ոռոգման խնդրով: Միայն ջրարբի տարածությունների ընդարձակումով կարելի է հասնել բարձր արդյունքների: Դարերի ընթացքում մեր նախնիները ստեղծեցին ոռոգման տարբեր սիստեմներ, որոնցից մեզ են հասել մեր թվարկությունից առաջ՝ 9-7-րդ դարերում կառուցված Ուրարտական ջրանցքները: Դրանցից մեկը էջմիածնի ջրանցքն է, որն անցնում է Կարմիր բլուրի դիմացով և մինչև հիմա էլ գործում է: Հրազդան գետից վերցվել է ջուրը և թունելի միջոցով դուրս բերվել դեպի էջմիածին: Արտաշատի խոշոր ջրանցքը կառուցվել է Ազատ գետի վրա:

Ավելի մոտ ժամանակներից մնացել է Երևանի Արահայթի և մի շարք այլ ջրանցքներ, իսկ Արարատյան դաշտում՝ Կախանովի ջրանցքը, Դարալագյազում կարելի է նշել Շանգիրովի ջրանցքը, որի միջոցով հեշտությամբ պետք է Որոտանից ջուր վերցնել Սևանի համար և այլն, և այլն:

...1935 թ. հունիսյան օրերից մեկն էր: Բերդ գյուղից ոտքով գնում էի Պառավաքար՝ գյուղատնտեսական աշխատանքները թերթում լուսաբանելու համար նյութեր վերցնելու: Ես արդեն գրել եմ այդ ժամանակ Պառավաքարի մոտ հանդիպած Սիրանուշ մայրիկի վշտալի պատմության մասին:

Հետագա իմ աշխատանքի ընթացքում շատ մեծ ազդեցություն թողեց Սիրանուշ մայրիկի հետ կատարված ծանր, վշտալի դեպքը: Ամենափոքր հնարավորություն ես օգտագործում էի Շամշադինի շրջանում ջրաշինարարական աշխատանքների ծավալման համար, որի մասին ավելի մանրամասն կանգ կառնեմ հետագայում:

* * *

Արդյունաբերության զարգացման մասին խոսելիս հիմնական ուշադրությունը պետք է բևեռել մայրաքաղաք Երևանի վրա, որովհետև Երևանը հանրապետության արդյունաբերության արտադրանքի 60 տոկոսից ավելին էր տալիս: Նույնիսկ վերջին տասնամյակների կատարած աշխատանքից հետո էլ, երբ արդյունաբերական ձեռնարկություններ կառուցվեցին մյուս քաղաքներում և բնակավայրերում, այժմ էլ Երևան քաղաքը հանրապետության արդյունաբերական արտադրանքի 50 տոկոսից ավելին է արտադրում:

Հասկանալի է, որ Երևանի մասին ասելիք շատ կա և որքան հնարավոր է, պետք է ասել միայն այն, որի մասին ոչ գրվել է, ոչ էլ կգրվի: Այնտեղ կարող է նույնիսկ անսիստեմ լինի մեր պատմածը:

Երևանում արդյունաբերության զարգացումը սկսվել է 30-

ական թվականներին, բայց հիմնական զարգացումը կատարվել է 50-ական թվականներից: Ավելին, բնակչության արագ աճը ևս տեղի ունեցավ հետպատերազմյան ժամանակաշրջանում:

Արդյունաբերական, մշակութային ու գիտական հիմնարկների կենտրոնացումը Երևանում ունի իր պատճառները: Նախ և առաջ հասկանալի պատճառով շատ շատերն են ձգտում ապրել մայրաքաղաքում: Երկրորդ՝ Սևան-Հրազդան կասկադի շինարարության ավարտը մեծ հնարավորություն ընձեռեց ավելացնելու էլեկտրաէներգիայի մատակարարումը: Դրա արդյունքում սունկի նման աճեցին ձեռնարկությունները, որոնք բանվորական աշխատող ձեռք էին պահանջում:

Այդ ժամանակ գյուղում մարդկանց նյութական դրությունը բավարար համարել չէր կարելի: Այդ պատճառով էլ շատերը տեղափոխվեցին՝ ապրելու և աշխատելու քաղաքներում, առաջին հերթին Երևանում:

Մի ժամանակ ստեղծվեց այնպիսի դրություն, երբ մայրաքաղաքում չաշխատող մարդկանց թիվը 40000-ից անցնում էր (իհարկե, խոսքը վերաբերվում է այն մարդկանց, որոնք աշխատանք էին փնտրում): Այդ հանգամանքը ստիպեց կենտրոնական կոմիտեին և կառավարությանը՝ մի կողմից նոր ձեռնարկություններ ստեղծել, կառուցել, իսկ արագ լինելու համար ոչ արտադրական հիմնարկների շենքերը ժամանակավորապես հարմարեցնել արտադրության համար, իսկ մյուս կողմից արագորեն ընդլայնել եղած ձեռնարկությունները, մեծացնել կապիտալ շինարարությունը:

Ահա այս պայմաններում էր, որ մայրաքաղաքում սկսվեց հիրավի, մեծածավալ աշխատանք արտադրողական ուժերի զարգացման համար: Հիսունական թվականներին էլեկտրաէներգիայի սակավության պատճառով կառավարությունը չէր թույլատրում էներգատար ձեռնարկություններ կառուցել, որի հետևանքով մենք ստիպված էինք զարգացնել էլեկտրատեխնիկական արդյունաբերությունը, ռադիո և ռադիոէլեկտրոնիկան, մի խոսքով՝ մեքենաշինությունը:

Այնուամենայնիվ, արդյունաբերության, տնտեսության ա-

րագ զարգացման համար առաջին հերթին անհրաժեշտ էր լուծել էներգիայի հարցը: Հիդրոէներգիան արդեն չէր բավարարում: Եղած հիդրոկայանները հազիվ բավարարում էին 50-ական թվականներին արդեն գոյություն ունեցող ձեռնարկություններին: Այդ պատճառով հրատապ խնդիր դրվեց գտնել էներգիայի ուրիշ աղբյուր, բացի դրանից, հանրապետության մյուս գետերի բազայի վրա սկսել էլեկտրակայանների, մասնավորապես Որոտանի կասկադի շինարարությունը:

Էներգետիկայի միակ ռեալ միջոցը մնացել էր կառուցել խոշոր ջերմաէլեկտրակայաններ մազութի կամ, ինչպես ընդունված է ասել, հեղուկ վառելիքի բազայի վրա: Այդպես էլ կատարվեց մեզ մոտ: Քանի որ արդյունաբերության գերակշռող մասը գտնվում էր Երևանում, անհրաժեշտ էր առաջին կայանը կառուցել Երևանում:

Հիսունական թվականների վերջին սկսվեց Երևանի ջերմաէլեկտրակայանի կառուցումը և 60-ական թվականների սկզբներին այն գործարկվեց: Երևանի ջերմաէլեկտրակայանի գործարկումով մեր դրությունը անհամեմատ բարելավվեց, էներգիան անխափան մատակարարվում էր արդյունաբերությանը, ընդհանրապես ժողովրդական տնտեսությանը: Այս բոլորը միանգամայն բարենպաստ պայմաններ ստեղծեցին արդյունաբերության արագ զարգացման համար:

Երևանի հզոր ջերմաէլեկտրակայանի կարողությունը այնպիսինն էր, որ մայրաքաղաքում արտադրական նոր ձեռնարկությունների տեղադրումը կասկած չէր առաջացնում: Այդ պատճառով էլ սկսվեցին մեքենաշինական, քիմիական, թեթև և սննդի արդյունաբերության նոր ձեռնարկությունների կառուցումը և առաջին հերթին գոյություն ունեցող ձեռնարկությունների ընդլայնումը, որն ավելի արդյունավետ էր համարվում այդ ժամանակ:

Ազատ աշխատուժի առկայությունը մեզ ստիպեց այլ նպատակներով կառուցված շենքերից տրամադրել միութենական մինիստրություններին, որպեսզի նրանք կազմակերպեն արտադրական ձեռնարկություններ: Այս ձևով սկսեցինք ֆրեզե-

բային հաստոցների գործարանի կառուցումը: Տեղական արդյունաբերության մինիստրության կողմից կառուցվող կահույքի ֆաբրիկայի չինությունը տրամադրեցինք ՍՍՀՄ հաստոցաշինության մինիստրությանը, որը շատ կարճ ժամանակում կազմակերպեց արտադրությունը: Իհարկե, հետագայում դրանք վերակառուցվեցին և գործարանի համար նոր հարմարավետ տեղամասեր ստեղծվեցին:

Մաթեմատիկական հաշվիչ մեքենաների գիտահետազոտական ինստիտուտն իր արտադրությամբ կազմակերպեցինք միանգամայն անհարմար երեք շենքերում, բայց մեզ ընդառաջեցին, որովհետև հիսունական թվականներին շատ սուր էր դրված հաստոցաշինության զարգացման հարցը: Մեր հանրապետությունում այդ ժամանակ ստեղծվեց 8-10 նոր ձեռնարկություն, որոնք բոլորը հարմարեցված շենքերում էին, ինչպես Զարբախի կոլտնտեսության նախագահների վերապատրաստման դպրոցի շենքը, ֆինանսական տեխնիկումի շենքը և մի շարք այլ կառույցներ:

Փաստ է, որ այդ ճանապարհով ստեղծվել են բազմաթիվ ձեռնարկություններ, որոնք այսօր իրենց պատվավոր տեղն են գրավում ոչ միայն մեր հանրապետությունում, այլև նրա սահմաններից դուրս՝ Միության մեջ:

Սարքաշինության միութենական մինիստրն էր այժմյան Մինիստրների սովետի նախագահի տեղակալ Լեսեչկոն: Կենտրոնական կոմիտեի նախագահության նիստի ժամանակ խոսակցություն բացվեց այն մասին, որ անհրաժեշտ է սարքաշինությունն առաջին հերթին զարգացնել այն հանրապետություններում, որտեղ համապատասխան կադրեր կան, այդ թվում նշվեց նաև մեր հանրապետությունը:

Մինչ այդ ցուցումը, մենք նախաձեռնել էինք սարքաշինական ձեռնարկությունների կազմակերպումը, բայց այն շատ դանդաղ էր ընթանում: Միայն այդ ցուցումից հետո դա նոր թափ ստացավ, ավելի բարյացակամ վերաբերմունք ցուցաբերվեց: Այդ էր պատճառը, որ մի որոշմամբ կազմակերպվեց մաթեմատիկական հաշվիչ մեքենաների ինստիտուտը, Զարբախի գործարանը և շատ ուրիշներ:

Մաթեմատիկական հաշվիչ մեքենաների արտադրության գիտահետազոտական ինստիտուտի առաջին դիրեկտոր մենք առաջարկեցինք Սերգեյ Մերգելյանին: Նրան հրավիրեցին Մոսկվա: Միասին եղանք Միխայիլ Լեսեչկոյի մոտ: Մերգելյանի հետ ունեցած զրույցից հետո մինիստրը և մինիստրության աշխատողները շատ էին ոգևորվել: Մենք բոլորս մեծ հույսեր էինք կապում Մերգելյանի, այդ տաղանդավոր գիտնականի հետ:

Պետք է խոստովանեմ, որ Մերգելյանը երկար չաշխատեց, բայց գիտական և պրակտիկ աշխատանքները լավ հիմքերի վրա դրվեցին: Նրանից հետո ինստիտուտն ապրեց շատ դժվարություններ, բայց Ֆադեյ Սարգսյանի ղեկավարությամբ այն դարձավ Միության առաջավոր ինստիտուտներից մեկը: Ավելին, նրա արտադրանքը հայտնի է մեր երկրի սահմաններից դուրս:

Այս ինստիտուտը, որի արտադրական տեղամասերը կառուցեց ժողտնտխորհուրդը Զոլախյանի նախաձեռնությամբ, այժմ կարող է և լուծում է շատ բարդ և կարևոր խնդիրներ: Կարելի է ասել ոչնչից դարձրեցինք հսկայական ինստիտուտ, որտեղ այժմ աշխատում են մոտ վեց հազար բարձր որակավորում ունեցող կադրեր, գիտնականներ, տեխնիկներ և ինժեներներ:

Երևանի գեղատեսիլ բարձունքում կառուցված մաթեմատիկական հաշվիչ մեքենաների ինստիտուտը հանդիսանում է երևանցիների պարծանքը: Բանն այն է, որ այս ինստիտուտի մշակած կոնստրուկցիաների արտադրություն կազմակերպելու համար միայն մեր հանրապետությունում կառուցվեցին մի քանի գործարաններ՝ Զարբախի գործարանը, Աբովյան քաղաքի մեծ գործարանը: Ճիշտ է, այս գործարանը հետագայում միացավ խոշոր տրանզիստորների գործարանին, և ուղղությունը փոխվեց, այնուամենայնիվ, ինստիտուտի առկայությունը հնարավորություն տվեց արագ կերպով զարգացնել արդյունաբերության առաջավոր այս ճյուղը: Այժմ Կիրովականում կառուցվում է մի խոշոր գործարան, որը պետք է արտադրի մաթեմատիկական հաշվիչ մեքենաների ինստիտուտի կողմից մշակված նոր մեքենաներ:

Ճիշտ է, էլեկտրաէներգիայով ապահովված էր մեր հանրա-

պետությունը, մասնավորապես Երևանը, բայց արդյունաբերության զարգացումը ընթանում էր ոչ էներգատար ճյուղերի հաշվին: Նույնիսկ քիմիական արդյունաբերության զարգացումն ընթանում էր, այսպես կոչված, փոքր քիմիայի արտադրության կազմակերպման հաշվին: 1965-ից մինչև 1970-ական թվականներին կառուցվեցին և գործարկվեցին ռեակտիվների, վիտամինների, դեղագործական խոշոր գործարանները:

Այս բոլորը միասին նոր որակ էին տալիս Երևանի արդյունաբերությանը: Կաուչուկի, Պոլիվինիլացետատի և մի շարք այլ հին գործարանները միայն ընդլայնվում էին: Այդ հին ձեռնարկությունների կողքին զարգանում էին մեծ հեռանկար ունեցող նոր ճյուղեր:

Եթե նախկինում՝ մինչև 1956 թ., Երևանի արդյունաբերության դեմքը որոշվում էր քիմիական, թեթև և սննդի արդյունաբերությամբ, ապա այժմ դրանք իրենց տեղը զիջել են մեքենաշինությանն ու սարքաշինությանը: Լենինի անվան էլեկտրամեքենաշինական, Ջերժինսկու անվան ֆրեզերային հաստոցների, Ջարբախի մաթեմատիկական մեքենաների արտադրության, Հայէլեկտրալույս միավորման, ինչպես նաև մյուս մեքենաշինական ու էլեկտրատեխնիկական գործարանների արտադրությունը գերազանցում է մայրաքաղաքի մյուս ճյուղերին:

Այս փաստը միանգամայն ուրախալի է, որովհետև այս նոր ճյուղերի զարգացումը միաժամանակ հանգեցրեց մի նոր, ավելի ծանրակշիռ գործընթացի՝ գիտահետազոտական ինստիտուտների կազմակերպմանը, որոնք լուրջ միջոց հանդիսացան տեխնիկական գիտության զարգացմանը մեր հանրապետությունում, մասնավորապես Երևանում:

Գիտահետազոտական ինստիտուտների և կոնստրուկտորական բյուրոների կազմակերպումը հնարավորություն տվեց մշակել նոր, առաջավոր կոնստրուկցիաների մեքենաներ և սարքեր, անմիջապես ներդնել արտադրության մեջ ու կազմակերպել դրանց թողարկումը:

Այս հանգամանքը մի կողմից ստիպեց պատրաստել և ունենալ բարձր որակի ինժեներներ և գիտական աշխատողներ,

որոնք հետևելով համաշխարհային առաջընթացին՝ ստեղծում էին նոր տեսակներ, մյուս կողմից նպաստեցին արագորեն ստեղծել բարձրորակ բանվորական կադրեր:

Երևանն այն քաղաքներից է, որը կարող է մեքենաշինության զարգացման իր մակարդակով մրցել մեր երկրի հանրապետությունների շատ մայրաքաղաքների հետ:

Երբ անհրաժեշտ եղավ զարկ տալ հաստոցաշինությանը, ինչպես մայրաքաղաքում, այնպես էլ հանրապետության մյուս քաղաքներում, կազմակերպվեցին հաստոցաշինության մի քանի գիտահետազոտական ինստիտուտ և գործարաններին կից խոշոր կոնստրուկտորական բյուրոներ:

Ինչպես ասվեց, հաստոցաշինության գծով կազմակերպվեցին երկու խոշոր ինստիտուտներ, որոնց տնօրենները գրեթե անփոփոխ աշխատում են: Դրա շնորհիվ այդ ինստիտուտներին որոշ մարդիկ կոչում են տնօրենի ազգանունով՝ Միրզայանի կամ Քանդարյանի ինստիտուտ: Դրանցից մեկը գտնվում է Էջմիածին տանող ճանապարհի վրա, գրեթե Դալմայի այգիների մեջ, իսկ մյուսը գեղեցկացնում է Օրջոնիկիձեի պողոտան:

Այս ինստիտուտները շատ բան են արել Հայաստանում հաստոցաշինության զարգացման պատվավոր գործում: Դրանք ունեն իրենց արտադրական տեղամասը, որտեղ նոր մշակված կամ գոյություն ունեցած հաստոցները կատարելագործվում, արտադրվում, փորձարկվում են, որից հետո հանձնվում հիմնական արտադրության: Քանդարյանի ղեկավարած ինստիտուտը նոր կոնստրուկցիաներ է մշակում ոչ միայն մեր հանրապետության, այլև Միության այլ գործարանների համար:

Մի խոսքով, այս ինստիտուտներն առաջին անհրաժեշտության ձեռնարկություններ են, որոնք կատարում են հսկայական աշխատանք հաստոցաշինության բնագավառում՝ հետ չմնալու համար:

Ջերժինսկու անվան հաստոցաշինական գործարանը հետպատերազմյան ժամակաշրջանում իր կարողություններն ավելացրել է ավելի քան 10 անգամ, իհարկե, գիտահետազոտական ինստիտուտների ակտիվ մասնակցությամբ: Ավելին, այս գոր-

ծարանը պետք է իրացներ մի նոր հաստոց, որը նախագծել էր Մոսկվայի Բաումանի անվան ինստիտուտի դասախոս, մեր հայրենակից Գրիգոր Շահումյանը:

Երևանի երկու ինստիտուտներն էլ ակտիվ մասնակցություն ունեցան նոր հաստոց-կոմբայնի արտադրության գործում: Մեծ առավելություն է ունենալ այդքան գիտական և ինժեներական կադրեր մի քաղաքում: Այս կարևոր բնագավառի զարգացումը զիտակ մարդկանց ձեռքին է և այդ պատճառով էլ համոզված եմ, որ հետագայում ևս հաստոցաշինությունը կզարգանա արագ տեմպերով:

Այսպիսի պատկեր ունի էլեկտրատեխնիկական արդյունաբերության զարգացումը մեր մայրաքաղաքում: Հայտնի է, որ էլեկտրատեխնիկական արդյունաբերության դրոշակակիրը մեղանում Լենինի անվան հայէլեկտրամեքենաշինական գործարանն է, որն այժմ դարձել է մի խոշոր միավորում: Այս գործարանը սկզբից կառուցվում էր որպես օդանավաշինական գործարան, հետագայում որոշ պատճառաբանություններով վերածվեց էլեկտրամեքենաշինական գործարանի, որի առաջին տնօրեն դարձավ Գուրգեն Զոլախյանը:

Էլեկտրատեխնիկական արդյունաբերության զարգացման պրոպագանդիստ եղավ ակադեմիկոս Անդրանիկ Իոսիֆյանը, որն աշխատում էր Մոսկվայում և հանդիսանում էր էլեկտրատեխնիկական արդյունաբերության խոշոր ինստիտուտի տնօրենը:

Գործարանի գործարկումից մի քանի տարի հետո Իոսիֆյանի նախաձեռնությամբ կազմակերպվեց ինստիտուտի մասնաճյուղը, փաստորեն էլեկտրամեքենաշինական գործարանի բազայի վրա, որի դիրեկտորը (մասնաճյուղի) նշանակվեց Ալեքսեևսկին: Մի քանի տարի հետո այդ մասնաճյուղի բազայի վրա կազմակերպվեց գիտահետազոտական խոշոր գլխամասային ինստիտուտ, որի տնօրենն անընդմեջ հանդիսանում է Ալեքսեևսկին:

Մինչև միավորման կազմակերպումը ինստիտուտն ինքնուրույն էր, ուներ իր արտադրական տեղամասերը: Երբ ինստիտուտը բաժանվեց գործարանից, չգիտեմ ինչ պատճառով, մինիստրությունը դադրեցրեց արտադրական տեղամասերի կառուցման ֆինանսավորումը: Հանրապետության ղեկավար մարմիններն իրենց վրա վերցրին այդ կառույցների ֆինանսավորումը և ավարտեցին արտադրական շատ կարևոր տեղամասերի շինարարությունը: Միայն հետագայում մինիստրությունը կրկին ֆինանսավորման գործը վերցրեց իր վրա:

Կասկածից վեր է, որ էլեկտրամեքենաշինական գործարանի ակնառու հաջողությունները մեծ մասամբ պետք է բացատրել ինստիտուտի գիտատեխնիկական օգնությամբ: Ինչպես Զոլախյանի, Մինասյանի, Օհանյանի, այժմ էլ Ամիրյանի ժամանակ այս խոշոր գործարանը քայլել է առաջինների շարքում: Ավելին, վերջին տասնամյակներում գործարանի հզորությունը եռապատկվել է, և այժմ Միության էլեկտրատեխնիկական արդյունաբերության խոշորագույն գործարաններից մեկն է:

Արժե ընդգծել, որ այս գործարանում, որտեղ աշխատում են 10 հազարից ավելի մարդիկ, գերակշռող մասը հայրենադարձներ են, որոնք աշխատանքային սխրանքների փայլուն օրինակներ են տալիս:

Առհասարակ հայրենադարձությունը խոշորագույն միջոց հանդիսացավ մեր հանրապետության տնտեսական, մշակութային շինարարության արագ զարգացման համար: Մենք շատ գործարաններ ունենք, որտեղ աշխատողների մեծամասնությունը նույնպես հայրենադարձներ են և իրենց լիովին արդարացնում են:

Ռադիոէլեկտրոնիկան և ռադիոտեխնիկան մեզ մոտ շատ արագ սկսեց զարգանալ 1960-ական թվականներից սկսած: Այս բնագավառներում ևս պահպանվում էր այն սկզբունքը, որ ձեռնարկության հետ միասին զուգընթաց կազմակերպվում էին գիտահետազոտական հիմնարկներ, գիտահետազոտական ինստիտուտների մասնաճյուղերին կից կառուցվում էին խոշոր արտադրական ցեխեր, տեղամասեր կամ գործարաններ, ինչպես, օրինակ, «էրերունի» միավորումը:

Առհասարակ հետպատերազմյան ժամանակաշրջանը նշա-

նակայից է գիտահետազոտական ինստիտուտների և լաբորատորիաների կազմակերպման տեսակետից, ընդ որում՝ բացարձակ մեծամասնությունը մայրաքաղաք Երևանում:

Գիտական մտքի զարգացման գործում շատ մեծ դեր է խաղացել Գիտությունների ակադեմիան, որը կազմակերպվել էր Հայրենական պատերազմի ծանր օրերին՝ 1943 թվականին: Այդ ժամանակից ի վեր Հանրապետությունում ստեղծված գիտական հիմնարկների մեծ մասն ԳԱ նախաձեռնությունն է եղել, կամ միայն ակադեմիայի խորհրդով:

Գիտական հիմնարկների կազմակերպման գործում մեծ, անգնահատելի դեր խաղաց և այժմ էլ այն կատարում է Գիտությունների ակադեմիայի աշխարհահռչակ պրեզիդենտ Վիկտոր Համբարձումյանը: Գիտության այդպիսի արագ զարգացումը, բնականաբար, իր բարերար ազդեցությունն ունեցավ Հանրապետության տնտեսության, մշակույթի, գրականության և մյուս բնագավառների արագ զարգացման վրա:

Եթե հարցնեք ինձ, թե որն է հետպատերազմյան ժամանակաշրջանի ամենամեծ հաջողությունը, ես այն կհամարեմ գիտատեխնիկական կադրերի պատրաստումը և նրանց ստվար բանակի լավագույն աշխատանքը:

Պատահական չէ, որ մեր Միության մինիստրություններում և Պետպլանում միշտ նոր բարդ ձեռնարկությունների ստեղծման ժամանակ մեր Հանրապետությունը չի բացառվել: Ավելին, շատ արտադրանքներ, որոնք ուրիշ տեղերում դժվարացել են իրացնել, հանձնարարվել է մեր մարդկանց, տեխնիկական բարձր զարգացած հմուտ կադրերին և միշտ էլ հաջողությամբ է պսակվել:

Դրանով պետք է բացատրել, որ սկսած 1960-ական թվականներից՝ Երևանում և Հանրապետության մյուս քաղաքներում սնկի նման աճեցին էլեկտրատեխնիկական, ռադիոէլեկտրոնիկայի, էլեկտրոնիկայի և սարքաշինական բազմաթիվ գործարաններ: Քանի որ նրանք համարակալված ձեռնարկություններ են, չեմ ցանկանում թվարկել: Ես կանգ կառնեմ այն կարևոր ձեռնարկությունների կազմակերպման պատմության վրա, որոնց մասին կարելի է գրել:

Մեքենաշինական և սարքաշինական արդյունաբերության ստեղծման բնագավառում իրենց կարևոր օգնությունն ու աջակցությունն են ցուցաբերել սարքաշինական արդյունաբերության մինիստր Կ. Ռուդնևը, նրա տեղակալ Հարությունովը, ռադիոէլեկտրոնիկայի արդյունաբերության մինիստր Ա. Շոկինը, էլեկտրոնիկայի արդյունաբերության մինիստր Վ. Կալմիկովը և ուրիշներ:

* * *

Երևան քաղաքի մասին շատ է գրվել ու դրվատանքի շատ խոսքեր ասվել: Ցանկանում եմ առանձին ժամանակահատվածների և դեպքերի մասին հակիրճ խոսք ասել: Երևանը՝ ինքը, հուշարձանի նման կանգնած է և ով ցանկանա, կարող է դիտել ու պատկերացում ունենալ նրա մասին:

Իմ կարծիքով, Երևանը մեր երկրի գեղեցիկ քաղաքներից մեկն է և ունի հետագա զարգացման մեծ հեռանկար, քանի որ այն ունի ինչպես նյութական, այնպես էլ բարոյական-քաղաքական լայն պայմաններ: Հայ ժողովուրդն անցյալ դարերում կորցնելով իր բազմաթիվ մայրաքաղաքները, այժմ նոր եռանդով է կառուցում Երևանը, այն համարելով բոլոր մայրաքաղաքների հուշարձան:

Ուղիղ հարյուր տարի առաջ ռուս ճանապարհորդներից մեկը ոմն Մորդովցև, որոշել էր Պետերբուրգից գալ և բարձրանալ Արարատի գագաթը: Իր տպավորությունները գրել է «Դեպի Արարատ» գրքում: Նկարագրելով Երևանը, նա՝ գրում է, որ Երևանում անհնար է ապրել՝ կլիմայական պայմաններից ելնելով: Զարմանում է, որ մարդիկ կարողանում են հարմարվել այսպիսի անտանելի պայմաններին: Մորդովցևը Երևանը համարում է իսկական դժոխք:

Երբ կարդում ես այդ ճանապարհորդական պատմվածքը և նայում այժմյան Երևանին, ակամայից ուրախանում ես և պատկերացնում, թե մարդն ինչեր չի կարող անել: Ասենք, Երևանը 1920-ական, նույնիսկ 1930-ական թվականներին անա-

սելի ծանր տպավորություն էր թողնում հատկապես իր կավաչեն միհարկանի տներով, ծուռումուռ փողոցներով:

Ավելին, դեռ 1917 թվականին «Լոնդոն գազետ» թերթը գրել էր իր տեսարանների կարծիքը Հայաստանի մասին. «Հավանաբար, մի քանի տարի հետո հայերի մասին կլսոսեն որպես անհետացած ժողովուրդ»: Այս նույն կարծիքն էին արտահայտել Ֆրանսիայի և Ամերիկայի շատ քաղաքագետներ:

Ամերիկայի «Ասոշյեյթեդ պրեսսը» գրել էր, որ Երևանը կավե տներով և կեղտոտ փողոցներով գյուղաքաղաք է, ուր այդ գործակալության թղթակիցը երկու օրից ավելի չկարողացավ մնալ: Խավարի և հետամնացության մեջ խարխափող այդ գյուղում ամերիկացին ոչ մի լուսավոր բան չէր կարող տեսնել:

Երևանը հիմնովին փոխվեց պատերազմից հետո, երբ երկիրը նյութական մեծ հնարավորություն ստացավ կառուցելու համար: 50-ական թվականներից հետո քաղաքը մի քանի անգամ մեծացավ և բարեկարգվեց: Հիսունական թվականների սկզբին նախկին Կիրովյան շրջանը բաժանվեց երկու մասի և կազմավորվեց մի նոր՝ 26 կոմիսարների շրջանը: Այն ժամանակ կար մի քանի ձեռնարկություն և 30-ական թվականներին արտասահմանից վերաբնակեցված բնակչություն: Փաստորեն երեք խոշոր ձեռնարկությունների բազայի վրա կազմակերպվեց շրջանը՝ դրանք այլումինի, ժամացույցի և լամպերի գործարաններն էին:

26 կոմիսարների շրջանի բնակչությունն այնքան էր աճել, որ լուրջ անհանգստություն էր պատճառում բոլորիս: Փաստորեն, աշխատանքի տեղ չկար, իսկ քաղաքի մյուս շրջաններում աշխատելը շատ էր դժվար, որովհետև տրանսպորտ չկար: Ահա այդ պատճառով հրատապ խնդիր էր դարձել կազմակերպել, կառուցել նոր ձեռնարկություններ:

Այդ նոր ձեռնարկություններից մեկը եղավ ռելեի գործարանը, որը ևս սկզբում հարմարեցված շենքում կազմակերպվեց: Ռելեի գործարանի հիմնական մասը լամպերի գործարանի համար կառուցվող տեխնիկումի շենքն էր: Դրությունն այնքան էր սրվել, որ ստիպված եղանք տեխնիկումի համար կառուցվող շենքը տրամադրել գործարանին:

Քանի որ շենքը կառուցվում էր ուսումնական հաստատության համար, ձեռնարկությունը ստիպված եղավ վերակառուցել, որի համար 1956–1957 թթ. Միության Մինիստրների սովետը հատկացրեց 10 միլիոն ռուբլի: Արագ հարմարեցվեց և սկսեց արտադրանք տալ:

Հետագայում կառուցվեցին նոր տեղամասեր, և այժմ էլ շարունակվում է կառուցումը: Գործարանը դարձել է մեր երկրի խոշորագույն ձեռնարկություններից մեկը: Այստեղ, իսկապես, հմուտ կազմակերպիչների շնորհք ցուցադրեցին տնօրեն Հովհաննիսյանը, այնուհետև Ան. Կիրակոսյանը և վերջում՝ Այնաջյանը:

Պարզ է, որ հարմարեցված շենքում այդպիսի նոր սարքերի արտադրություն կազմակերպելը պահանջում էր լուրջ գիտելիքներ և արտադրության մեծ փորձ: Թվարկված տնօրենները կարողացան ապահովել այդ պահանջները: Այժմ այս գործարանում աշխատում է մի քանի հազար մարդ և լինելով բնակելի վայրի կենտրոնում, միանգամայն հարմար է բնակչության համար:

Ռելեի գործարանի կազմակերպումով մեծ չափով թեթևացավ դրությունը 26 կոմիսարների շրջանում: Բայց հարցը դեռ լուծված համարել չէր կարելի, քանի որ քաղաքն աճում էր դեպի Քանաքեռի բարձրավանդակը: Դրանից հետո էլ լուրջ միջոցներ ձեռնարկվեցին նոր ձեռնարկությունների ստեղծման համար: Այստեղ հարմարեցված շենքերում կազմակերպվեցին ֆրեզերային հաստոցների արտադրությունը, ավտոմոբիլային բարձիչների գործարանը, լուսատեխնիկական իրերի արտադրության գործարանը:

Ավտոմոբիլային մեքենաների գործարանի կազմակերպումը կատարվել է մեծ դժվարություններով: Այժմյան ավտոգործարանը սկզբից կառուցվում էր որպես ավտոբարձիչների գործարան: Երբ հարց առաջացավ ավտոգործարանի մասին, ՍՍՀՄ Պետպլանում հանդիպեցինք մեծ դիմադրության: Սակայն ավտոբարձիչների արտադրությունը սկսեցին պակասեցնել, քանի որ այդպիսի ավտոբարձիչներ արդեն արտադրում էր Բուլղարիան: Այս պայմաններում մենք հնարավորություն ունեցանք

կառուցվող, դեռ չավարտված չենքում, հավաքել այժմյան «Երազ» տիպի ավտոմոբիլ: Ավտոմինիստրությանը հայտնեցինք, որ մենք կարող ենք արտադրել ավտոմեքենա՝ կառուցվող ավտոբարձիչների գործարանի չենքում:

Այս գործում մեծ դեր խաղաց ժողտնտխորհի աշխատակից, հետագայում ավտոգործարանի տնօրեն Սիմոնյանը: Որքան դժվարությամբ կազմակերպվեց ավտոգործարանը, այնքան արագ զարգացավ:

Երբ գործարանի դիրեկտոր նշանակվեց Ավանյանը, ավտոմեքենաների արտադրությունը գրեթե երկու տարվա ընթացքում կրկնապատկվեց և եռապատկվեց: Վերջին յոթ տարիների ընթացքում գործարանը հագեցվեց նոր մեքենաներով, մամլիչներով, կառուցվեցին նոր խոշոր տեղամասեր, որի արդյունքով այժմ գործարանն աշխատում է իր լրիվ կարողությամբ և երկրի բոլոր ծայրամասերում ու կենտրոնական քաղաքներում աշխատում են «Երազ» մեքենաները, իսկ ավտոբարձիչների գործարանը մնաց իր տեղում: Այդ նպատակով Նորքի զանգվածում կառուցվում է ավտոբարձիչների խոշոր գործարան: (Այստեղ ձեռագիրն ընդհատվում է. –խմբ.)

ԵՐՐՈՐԴ ԳԻՐՔ

* * *

Ծաղկաձոր-Հրազդան քաղաքի մի մասնիկը, հին առողջարան, մեր ժողովրդի արժանավոր զավակներ Օրբելիների ծննդավայր: Որքան հին են դրա վկաները՝ Կեչառիսի եկեղեցին, վանքերը, որոնք, ինչպես հայտնի է, կառուցվել են 12-13-րդ դարերում: Դրանք վկաներն են Ծաղկաձորի պատմական արժեվորման:

Ծաղկաձորը շատ վաղ ժամանակներից ծառայել է որպես ամառանոց, ընդ որում, միայն տիրող, ունևոր խավի համար: 1870-ական թվականներին ռուս ճանապարհորդ Մորդովցևն այցելելով Ծաղկաձոր, իր վերոհիշյալ գրքում նկարագրում է հին Ծաղկաձորի նահանգապետի հանգրվանը, պատմում է այն մասին, որ նահանգապետի շուրջը բացի սպասարկուներից՝ կային մի քանի գյուղացիներ և ուրիշ ոչինչ:

Ծաղկաձորն իսկապես ծաղիկների ձոր է: Բնության այս գեղեցիկ անկյունը հարստացել և գեղեցկացել է նոր մանկական առողջարաններով, հյուրանոցներով և հանգստի տներով: Այստեղ տարեկան հանգստանում են ավելի քան 50 հազար պատանիներ ու աղջիկներ: Այստեղ են տեղավորված բանվորական մի չարք հանգստյան տներ:

Գեղեցկացել ու ծաղկել է մեր սիրելի Ծաղկաձորը:

Ծաղկաձորն ավելի հայտնի է դարձել իր սպորտային բազաներով ինչպես մեր Միությունում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: Այստեղ են գալիս մարզվելու հազարավոր սպորտսմեններ ինչպես մեր Միությունից, այնպես էլ սոցիալիստական մյուս երկրներից՝ Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետությունից, Չեխոսլովակիայից, Հունգարիայից, Ռումինիայից ու Լեհաստանից: Մի խոսքով, սպորտային քաղաքը դարձել է

հանրահայտ և կարող է ուրախություն պատճառել սովետական ամեն մի քաղաքացու:

Ծաղկաձորն իր կլիմայական պայմաններով որքան գեղեցիկ ու հաճելի է ամռանը, երբ 40 կմ հարավ-արևմուտքում գտնվող Երևանում մարդիկ չոզից չնչահեղձ են լինում: Այն կարելի է համարել դրախտավայր օդի զովության և մյուս բարենպաստ պայմանների շնորհիվ: Մարդ հիանում, հրճվում է, երբ տեսնում է այդքան մարդկանց՝ Ծաղկաձորի կլիմայական բարիքներից օգտվողներին:

Ճիշտ չէր լինի, եթե չասեի այն մասին, որ որքան գեղեցիկ ու հաճելի է ծաղիկների այս լեռնաշխարհն ամռանը, նույնքան էլ, միգուցե մի քիչ ավելի գեղեցիկ է ձմռանը, երբ Ծաղկաձորի ծաղիկներին և փարթամ բուսականությանը փոխարինում է սառը, սպիտակ ձյունը:

Նրանք, ովքեր չեն տեսել Ծաղկաձորի ձմեռը, դժվար կպատկերացնեն այն գեղեցկությունը, որ ներկայացնում է Թեղենիսի լեռնաշխարհը: Այժմ այստեղ են գալիս մայրաքաղաքի տասնյակ հազարավոր երիտասարդներ՝ դահուկային մրցումների և զբոսանքի: Հիսունական թվականներից իմ խնդրանքով Աղասի Զարչօղլյանը ֆիզկուլտուրայի ինստիտուտի ուսանողների ձմեռային ճամբակուրդները կազմակերպում էր Ծաղկաձորում: Դա առաջին փորձն էր՝ Ծաղկաձորից, հատկապես ձմռանն օգտվելու համար:

Այն տարիներին մարդիկ հաճույքով էին նայում նրանց, ովքեր գալիս էին Ծաղկաձոր դահուկներով զբոսնելու: Իրոք, երկար ժամանակ ձմռանը հանգստանալու էինք գալիս ես և Աղասի Զարչօղլյանը մեր ընտանիքներով: Հետագայում, իհարկե, շատերը միացան մեզ: Ավելին, արդեն 60-ական թվականներին այս բացատներում մեզ տեղ չէր լինում հանգիստ զբոսնելու: Դա իմ ուրախությունն էր:

Հայտնի է, որ մեր երիտասարդությունը մինչև հիսունական թվականները քիչ էր զբաղվում սպորտով, առանձնապես ձմեռային: Այժմ Ծաղկաձորում դժվար է ազատ տեղ գտնել զբոսնելու համար:

Ծաղկաձոր. հիանալի անուն: Իրականում երբ բարձրանաք Թեղենիս սարը, կտեսնեք այս լեռնաշխարհի ողջ գեղեցկությունը: Ծաղիկների այնպիսի բազմազանություն կա, այնպիսի հարստություն, որ դժվար թե գտնվի որևէ նկարիչ, որ կարողանա վերարտադրել այդ գեղեցկությունը:

Ավելին, Թեղենիսի բարձունքից, երբ նայում ես, քեզ թվում է, թե Արարատը ոտքիդ տակ է, այստեղից երևում են Սևանը և նրա շրջակայքն ու շրջանները: Այսպիսի հեքիաթային տեսարան դժվար է պատկերացնել, որովհետև երևում է Արարատյան դաշտավայրի ողջ համայնապատկերը, Գեղամա լեռնաշղթան, Վարդենիսի սարերը և Կովկասյան փոքր լեռնաշղթան: Որքան բան են կորցնում մեր նկարիչները, երբ չեն տեսնում այդ բոլորը:

Ովքեր բախտ են ունեցել գիշերը Թեղենիսի բարձրունքից տեսնել շրջապատը, ստացել են այնպիսի տպավորություն, որ կարծես աստղերը երկնքից իջել ու շարվել են երկրի վրա: Երբ նայում ես Արարատյան դաշտավայրին, Սևանը գոտևորող շրջակայքի շրջաններին ու բնակավայրերին, նկատում ես շատ վառ լուսավորված են ու զարդարվել են մի կողմից Արզաքանի կիրճով, մյուս կողմից Հրազդան քաղաքով և Մարմարիկի կիրճով: (Այստեղ ձեռագիրն ընդհատվում է.-**խմբ.**)

ՉՈՐՐՈՐԴ ԳԻՐՔ

Գյուղատնտեսություն

Գյուղատնտեսության մասին շատ է գրվել, շատ է խոսվել: Այս բնագավառն ամենակարևորն է տնտեսության զարգացման, մարդկանց կյանքի բարեկեցության բարձրացման համար: Այժմ էլ մեր հասարակության կանոնավոր զարգացումը կախված է գյուղատնտեսության զարգացման մակարդակից: Նոր պայմաններում հսկայական կապիտալ միջոցներ են ծախսվում գյուղատնտեսական մթերքների արտադրությունն ավելացնելու նպատակով:

Մեր հանրապետությունում գյուղատնտեսության զարգացումը կախված է յուրահատուկ պայմաններից: Սովետական իշխանությունը հաստատման առաջին օրերից լուրջ դժվարությունների հանդիպեց գյուղի զարգացման գործում, որը հիմնականում կախված էր ոռոգումից:

Որտեղ կային ոռոգելի տարածքներ, այնտեղ գյուղը կանոնավոր զարգացում էր ապրում, իսկ քանի որ այդպիսի տարածքները քիչ էին, ապա պարզ է, որ աղետալի վիճակում էր գտնվում գյուղատնտեսությունը:

Մեր հանրապետությունը գրեթե զուրկ է վարելահողից: Մեզնում միայն 6 տոկոսն է վարելահող: Ահա այսպիսի պայմաններում, երբ վարելահողերը չնչին քանակությամբ էին և գրեթե չկային ոռոգելի տարածքներ, ապա պարզ է դառնում, թե ինչպիսի դժվարին պայմաններում էր գտնվում գյուղը:

Սովետական իշխանության հաստատման առաջին օրվանից մեր հանրապետությունում սկսվեցին ջրաշինարարական աշխատանքները: 30-ական թվականների սկզբներին ավարտվեց Շիրակի և Սարդարապատի ջրանցքների կառուցումը:

Մինչև Հայրենական մեծ պատերազմի սկսվելն ավարտվեցին Ստալինի անվան, Սիսիանի և այլ ջրանցքների կառուցումը: Հիմնական գետերի վրա, փաստորեն, կառուցվեցին երկրի համար անչափ կարևոր նշանակություն ունեցող ջրանցքներ: Մինչև պատերազմը սկսվեցին Արզնի-Շամիրամի և Թալինի ջրանցքների կառուցումը:

Մեր հանրապետության տնտեսության ռիթմիկ զարգացման հարցերը կարող էր և պետք է լուծեր ջրամատակարարումը: Հենց այդ էր պատճառը, որ Հայրենական պատերազմի ավարտից հետո անմիջապես ձեռնամուխ եղանք ջրաշինարարական աշխատանքներին: Վերսկսվեց Թալինի և Արզնի-Շամիրամ ջրանցքների շինարարությունը:

50-ական թվականներին ավարտվեց Արզնի-Շամիրամ և Թալինի ջրանցքների առաջին հերթի աշխատանքը: Դրանց ավարտումից հետո միայն զգացինք, որ միգուցե ավելի դյուրին էր ջրանցքների կառուցումը, քան ջրանցքի տակ գտնվող հողերի յուրացումը:

Սկզբում այդ դժվարություններին հանդիպեցինք Արզնի-Շամիրամ ջրանցքի առաջին հերթի աշխատանքներն ավարտելուց հետո: Հրազդան գետից մինչև Քասախ գետը ջրանցքի շինարարությունն արդեն ավարտվել էր, բայց ջրին տեր կանգնող չկար, հողերը պատրաստ չէին, նախատեսված նոր սովխոզները կամ բնակավայրերը դեռ չէին կառուցվել: Իսկ դրա հիմնական պատճառներից մեկն էլ այն էր, որ Թալինի ջրանցքի կառուցման ընթացքում սկսվել էր բնակավայրերի, բանվորական ավանների շինարարությունը:

Հասկանալի է, որ մի քանի տարի առաջ կառուցված շենքերում կրկին վերանորոգման կարիք զգացվեց, դա առիթ տվեց որոշ մարդկանց ավելորդ խոսակցություններ բացելու: Հավանաբար խոսակցություններից խուսափելու համար Արզնի-Շամիրամում բնակարանային շինարարությունը ձգձգվեց և, կարելի է ասել, ոռոգելի հողերի յուրացումը ձգձգվեց մի քանի տարի:

Այժմ արդեն ավելորդ է խոսել այդ մասին, քանի որ այդ ջրանցքը վերակենդանացրեց Մարատթափայի և Աչտարակի անապատ դառերը: Այս ջրանցքի տարածքում գտնվող գրեթե բոլորովին չմշակվող հողերի վրա կառուցվեցին վեց նոր սովխոզներ և նախկին գյուղերը վերածվեցին քաղաքատիպ բնակավայրերի: Հիմնվեցին խաղողի և պտղատու նոր այգիներ, նախկին խոպան-անապատն իրոք վերածվեց ծաղկուն այգիների:

Եղվարդը դարեր շարունակ փափագել էր ոռոգելու ջուր ստանալ և իր ամբողջ պատմության ընթացքում օգտվել էր Բուժականի աղբյուրներից սկիզբ առնող փոքրիկ առվակից: Պետք է նշել, որ այդ փոքր առվակից օգտվում էին երեք-չորս գյուղ, այդ թվում այժմյան Արա գյուղը: Երևի դա էր պատճառը, որ եղվարդցիները ջուրը խնայելու իմաստով ասում էին. «Երբ լվացվում ես առվակի վրա, միրուքդ քամիր առվի մեջ, որ մի կաթիլ ջուր չկորչի»: Ահա այդպիսի դժվարին պայմաններում դարերով ապրած գյուղը ստացավ Հրազդան գետի ոռոգելի ջուրը, իսկ Գյումուշի սառնորակ աղբյուրներից՝ խմելու ջուր:

Պարզ է, թե ինչպիսի տնտեսական, բարոյական, կենցաղային նշանակություն ունեցավ ջրաշինարարական այս աշխատանքը: Առհասարակ կարելի է ասել, որ մեր հանրապետությունում, առանձնապես Արարատյան դաշտավայրի նախալեռնային շրջանների համար Սևանի ջուրը փրկություն էր: Առանց այս ջրանցքների և ջրամբարների, որոնց հետո կանդրադառնամ, անհնարին էր վերափոխել մեր մարդկանց, աշխատավորների, ինչպես նյութապես, այնպես էլ կուլտուրական կյանքը:

Միակ հին բնակավայրը Եղվարդ գյուղն էր: Այս խոշոր գյուղում հնարավոր չէր գտնել գեթ մի կարգին բնակարան, բոլորը գետնափոր կամ կլոր քարերից շարված հողատներ էին: Երբ նայում էիր գյուղին, միայն եկեղեցու բարձր, սլացիկ գմբեթն էր երևում: Ծառ գրեթե չկար, միայն Բուժականից հոսող առվի ափերին մի քանի դալկացած ուռենի կար:

Անցել է ընդամենը երեք տասնամյակ, և հնարավոր չի ճանաչել Եղվարդը՝ մեր այժմյան Նաիրիի շրջկենտրոնը: Եղվարդը բարեփոխվել, հատակագծվել, նոր բնակարաններ են կառուցվել, ընդ որում, գրեթե բոլորը երկու, երեք հարկանի: Գյուղը

պատվել է այգիներով, դարձել իսկական դրախտավայր:

Եղվարդը գտնվում է ծովի մակերևույթից 1350 մետր բարձրության վրա, իսկ մեր պայմաններում դա ապրելու ամենաօպտիմալ պայմանն է: Այժմ այստեղ կազմակերպված է մեքենա-փորձարկման խոշոր տնտեսություն, որը , նոր, բացառիկ նյութական հարմարություններ է ստեղծել:

Կազմակերպման առաջին տարիներին, երբ դեռ այգիներից եկամուտ չէին ստանում, տնտեսությունը աշխատում էր վնասով: Իսկ այժմ, երբ այգիները հարուստ պտղաբեր են, տնտեսության մյուս ճյուղերը ևս արդարացնում են, Եղվարդի տնտեսությունը դարձել է հանրապետության եկամտաբեր տնտեսություններից մեկը: Այստեղ կա նաև գինու խոշոր գործարան: Եղվարդը դարձել է շրջանի տնտեսական և մշակութային կենտրոնը: Աննկարագրելի է փոփոխությունն այս շրջանում, բայց շատ ավելին կարվի դեռ հետագայում, քանի որ հնարավորությունները շատ շատ են:

Ջրանցքի տարածքում գտնվող գյուղերից է նախկին Ճատղռանը, այժմյան Նոր Գեղին: Քսան տարի առաջ այս գյուղը նմանվում էր ավերակների, առանձնապես աչքի էր ընկնում բնակչության ցածր կուլտուրան: Ճատղռանն իր վերածնման, զարգացման, իսկական ծաղկման ժամանակն ապրեց, երբ սկսվեց Արզնիի ՀԷԿ-ի շինարարությունը:

Այս գյուղը շինարարության մի տեղամաս էր, որն էլ նպաստեց, որ մարդիկ աշխատեն, նյութական ու կուլտուրական բարեկեցություն ստեղծեն: Ճատղռանում կառուցվեցին նոր բազմահարկ բնակելի շենքեր, ակումբներ: Գյուղացիները հնարավորություն ստացան կառուցել սեփական տներ: Ամբողջ գյուղը մեկ տասնամյակում դուրս եկավ հողատներից և կառուցվեցին բազմահարկ գեղեցիկ շենքեր, որոնք առանձին-առանձին վերցված նման են պալատների:

Հետագայում, այսինքն 50-ական թվականների վերջերին, երբ հարց դրվեց մայրաքաղաքից դուրս տանել գյուղատնտեսական միջնակարգ ուսումնական հաստատությունները, Նոր Գեղիում կառուցվեցին գյուղատնտեսական տեխնիկումի ուսումնական շենքը, հանրակացարանները, դասախոսների համար բնակելի շենք, մեխանիկական արհեստանոցը և շատ այլ կառույցներ: Իհարկե, այս բոլորը հիմնովին փոխեցին Ճատղռանի դեմքը, նախկին ավերակների վրա վեր բարձրացավ բանվորական քաղաքատիպ ավանը:

Ճատղռանի դրությունն ավելի բարելավվեց, երբ սկսեցին գործել Արզնիի ՀԷԿ-ը և Արզնի-Շամիրամ ջրանցքի առաջին հերթը: Այստեղ կազմակերպվեց սովխոզ-տեխնիկում, որը ստացավ լայն հնարավորություն՝ մշակելու նոր այգիներ: Նախկին անապատներում գցվեցին հիանալի պտղատու այգիներ: Ով գեթ մեկ անգամ անցել է այս ճանապարհով Արզնի, Եղվարդ, նա չի կարող անտարբեր գնալ այդ այգիների կողքով:

* * *

Առողջարանային այս վայրում վեր է խոյացել Նոր Հաճընի մի տեղամասը, որն իսկապես փոքր քաղաքի է նմանվում: Արզնի-Շամիրամի և Արզնիի ՀԷԿ-ի արդյունքն է նաև Նոր Գեղիի թռչնաբուծական համալիրը, որն իր կարողությամբ հանրապետության նույնատիպ կառույցների մեջ առաջիններից է:

Ինչ խոսք, Արզնի-Շամիրամ ջրանցքի տարածքում գտնվող բնակավայրերից ամենագեղեցիկը և բարեկարգը ճշգրիտ քարերի արտադրության գործարանի շուրջը կառուցված փոքր գողտրիկ քաղաքն է: Նոր Հաճընը քաղաքն իր տեսակներից ամենակազմակերպվածը և օրինակելին է:

Երբ հնարավորություն ստեղծվեց հիմնադրելու տեխնիկական և ճշգրիտ քարերի վերամշակման գործարանը, Գ. Զոլախյանի հետ միասին սկսեցինք փնտրել քիչ թե շատ հարմար շենք, որպեսզի կազմակերպենք կորունդի վերամշակումը:

Երկար փնտրելուց հետո վերջապես կանգ առանք Արզնի ՀԷԿ-ի տրանսպորտային հավաքակայանի շենքի վրա, նաև այն պատճառով, որ օգտագործենք Արզնիի ՀԷԿ-ի շինարարների կողմից կառուցված ոչ բարեկարգ բնակավայրը, որտեղ արդեն մի քանի տասնյակ մեկ հարկանի տներ կային:

Հայէլեկտրամեքենաշինական գործարանի ցեխի վարիչ

Սարգսյանին նշանակեցինք փաստորեն գոյություն չունեցող գործարանի դիրեկտոր: Այս տաղանդավոր կազմակերպիչը շատ արագ կյանքի կոչեց կորունդի վերամշակման արտադրամասը: Սարգսյանին նշանակելուց անցել էր ընդամենը երեք ամիս, երբ Զոլախյանի հետ միասին եղանք նոր կազմակերպված գործարանում:

Ինձ մեծ ուրախություն պատճառեց, երբ տեսանք հարմարեցված պայմաններում աշխատող բանվորների առաջին արտադրանքը: Ես սխալված չեմ լինի, եթե այժմ ասեմ, որ կոմբինատի դիրեկտոր Սարգսյանը իսկական ստեղծագործող, հիրավի, տաղանդավոր ինժեներ և կազմակերպիչ է:

Առաջին իսկ օրվանից սկսեցինք նոր գործարանի կառուցումը: Դա աղամանդների վերամշակման գործարանն է, որը մեր Միության խոշոր ձեռնարկություններից մեկն է և իր արտադրանքով հայտնի է աշխարհում:

Եղվարդի տարածքը և Քանաքեռի Մուրաղթափան խոնավ տարիներին որոշ բերք էին տալիս, իսկ մնացած ժամանակներում ամայացած, այրված խոպանի էին նմանվում: Այժմ այդ տարածքները ծածկվել են խաղողի, պտղատու այգիներով, իսկ բնակավայրերը թաղված են այգիների մեջ, որի համար էլ շատ հաճախ մարդիկ դրանք անվանում են այգեստաններ:

Խոշոր բնակավայր-սովխոզ դարձավ նոր Քանաքեռը Արզնի-Շամիրամ ջրանցքի առաջին հերթի շահագործումից հետո: Հրազդան գետի աջ ափին կառուցված խոշոր բնակավայրի բնակիչների մեծ մասը Քանաքեռից էր, այդ պատճառով էլ կոչեցին Նոր Քանաքեռ: Այստեղ զուգակցվեցին բարձրահարկ տները երկհարկանի տների հետ, և ճարտարապետական շատ գեղեցիկ համալիր ստացվեց:

Պետք է ընդգծեմ, որ այս բնակավայրերն ունեն իրենց կուլտուր-կենցաղային բոլոր հարմարությունները, դպրոցները, հիվանդանոցը կամ պոլիկլինիկան, մշակույթի տներ կամ ակումբներ, ծառազարդված պուրակներ ու ջրավազաններ: Մի խոսքով դարձել են ժամանակակից ավաններ:

* * *

Շատ ավելի հետաքրքիր է Զովունիի և Քասախի պատմությունը: Այս գյուղերի բնակիչները Ապարանից եկած վերաբնակիչներ են և դրանց անուններով էլ կոչվում են ջրանցքի տարածքում գտնվող ոռոգելի հատվածների բնակավայրերը: Երբ սկսվեց Ապարանի ջրատարի կառուցումը, հարկ եղավ ջրամբարի տարածքում գտնվող երկու խոշոր գյուղերը վերաբնակեցնել: Մեզ դա անհրաժեշտ էր մի կողմից ջրամբարի շինարարության, մյուս կողմից Արզնի-Շամիրամ ջրանցքի առաջին հերթի հողերի յուրացման համար:

Երբ Քասախ և Զովունի գյուղերը տեղափոխեցինք այստեղ, արդեն խաղողի այգիների մեծ մասը տնկված էր և այդ գյուղացիները, փաստորեն, բնակություն հաստատեցին կազմակերպված տնտեսությունների բազայի վրա:

Արդարությունը պահանջում է ասել, որ ճիշտ է, այգիները տնկված էին, բայց մնացել էին անմշակ և արդեն շարքից դուրս էին գալիս: Ապարանի ժողովուրդը շատ աշխատասեր և բարեխիղճ է, մեկ-երկու տարվա ընթացքում կարգավորեցին այգիների վիճակը:

Ապարանում այգեգործություն չկար, բայց միշտ այգիներ մշակելու և այգեգործության հետ շատ լավ ծանոթ լինելու շնորհիվ վերաբնակները շատ արագ կարողացան վերականգնել տնկված այգիները և հիմնել նորը:

Կարող է հարց առաջանալ, թե որտեղ էին սովորել այգիների մշակման ագրոտեխնիկային տիրապետելու ունակությունը, երբ իրենք չունեին: Ճիշտ է, Ապարանում այգիներ չկային, բայց ապարանցիք տարիներ շարունակ մշակել են աշտարակցիների, մասամբ էլ էջմիածինցիների այգիները և սերնդից սերունդ անցնելով՝ այժմ կարելի է ասել, որ ապարանցիները ոչ միայն լավ անասնապահներ են ու երկրագործներ, այլև լավ այգեգործներ: Այդ մասին է խոսում ու հաստատում Քասախ ու Զովունի գյուղերի պրակտիկան:

Քանի որ խոսք եղավ Ապարանի մասին, հարկ եմ համարում մի երկու խոսքով ասել հետևյալը: Ապարանը մեր հանրապե-

տության հետամնաց շրջաններից էր: Համարյա բոլոր գյուղերում մարդիկ ապրում էին հողաշեն, հաճախ նաև գետնափոր տներում: Ցածր էր բերքատվությունը: Մարդիկ վատ էին ապրում: Ուշադրություն չէր դարձվում կուլտուրայի, կենցաղի զարգացմանը:

Ապարանում կատարված առաջին դրական փոփոխությունները սկսվեցին 1952 թվականից, երբ շրջկոմի քարտուղար դարձավ Գևորգ Պետրոսյանը: Գևորգն Ապարանի պատմության մեջ առաջին տեղացի ղեկավարն էր և աչքի էր ընկնում Ապարանի նկատմամբ սրտացավությամբ ու նվիրվածությամբ: Նա մոտ 10 տարի աշխատեց Ապարանի շրջկոմի առաջին քարտուղար: Նրա ջանքերով Ապարանի բոլոր գյուղերը ստացան էլեկտրականություն, խմելու ջուր: Բարձրացան կոլտնտեսությունների եկամուտները: Կառուցվեցին նոր դպրոցներ: Մարդիկ սկսեցին լավ ապրել:

Զովունի գյուղի բնակիչներն իրենց բանվորական ավանը կառուցեցին Հրազդան գետի կիրճի վրա: Երևան քաղաքին հարակից այս գյուղաքաղաքին, եթե երեկոյան Սևանի մայրուղուց նայես, կթվա, Երևանի Լենինի պողոտան է, այնպիսի գեղեցիկ լուսավորություն է անցկացված:

Իրոք, Սևանից վերադառնալիս Հրազդանի կիրճի աջ ափին իրենց լույսերի հեղեղով աչքի են զարնում Նոր Հաճընը, Գետամեջի թռչնաբուծական համալիրը, Զովունին: Հիրավի, մեծ բավականություն է պատճառում այս բոլորը:

Եթե հետադարձ հայացք ենք գցում, տասը-տասնհինգ տարի առաջ այս տարածքին, որը ամայի, օձերի և կարիճների մի բույն էր, հպարտանում ենք ներքուստ, որ այժմ վերածվել է իսկական այգեստանի՝ իր լուսավորված գյուղաքաղաքներով, որտեղ մարդիկ իրենց բարեկեցիկ կյանքն են վայելում:

Սովորությունը մեծ ուժ ունի: Զովունցիները և քասախցիներն այժմ ավելի լավ պայմաններ ունեն ապրուստի համար, բայց չեն կարողանում հրաժարվել իրենց նախկին հողերից: Ամեն տարի ամռանն անասնապահները գնում են Ապարան, իսկ բնակիչների մեծ մասը հանգստի օրերն անց է կացնում այնտեղ,

իրենց գյուղի նախկին տեղում, գեղատեսիլ լճի ափին, սառնորակ աղբյուրների մոտ:

Այս ջրանցքի շրջակա հողերի յուրացման շնորհիվ ստեղծվեցին նոր՝ Պռոշյանի, Երզնկայի, Աշտարակի և, ինչպես նախկինում անվանում էին, 47-րդ սովխոզները:

Հիսունական թվականների վերջերին նոր էր սկսվել այս հողերի յուրացումը: Մեկնեցի Մոսկվա, եղա Ա. Միկոյանի մոտ՝ մեր հանրապետության դրության մասին զեկուցելու: Պատմելու ժամանակ ասացի, որ մոտ ապագայում Երևանից Աշտարակ ձգվող քարքարոտ, չօգտագործվող հողերը կվերածվեն այգիների, արդեն այդ տարածությունների վրա աճել են հարյուրավոր հեկտար խաղողի և պտղատու այգիներ:

Միկոյանը լավ ծանոթ լինելով այդ վայրերին՝ իր կասկածանքը հայտնեց և ժպտաց, ասելով. «Զարմանալի կերպով զարգացած է ձեր երևակայությունը»:

Ճիշտն ասած՝ ոչինչ չպատասխանեցի, բայց ներքուստ վիրավորված զգացի, որ կատարված, հիրավի, հերոսական աշխատանքը կասկածի տակ է առնվում:

Այդ զրույցից անցավ մի քանի տարի: Գերագույն սովետի ընտրությունների ժամանակ Ա. Միկոյանը Երևան եկավ իր ընտրողների հետ հանդիպման: Մեզ՝ ղեկավարներիս նա տվեց առաջին հարցը. «Հնարավո՞ր է Աշտարակ գնալ, վաղուց չեմ տեսել, երևի շատ է փոխվել»:

Ես անմիջապես կռահեցի, որ նա ուզում էր ստուգել, թե որքանով է ճիշտ Երևանից Աշտարակ ընկած տարածությունների վրա այգեստունկը: Ինձ հայտնի էր, որ նա այդ սովորությունն ուներ՝ միշտ ստուգում էր, երբ համոզվում էր, որ աշխատողը գիտակ է և ճշմարիտ, պաշտպանում ու հավատում էր:

Այդ ժամանակ Կենտկոմի առաջին քարտուղար էր աշխատում Յակով Զարոբյանը: Գնացինք Արզնիով, Եղվարդով Աշտարակ և վերադարձանք Երևան: Երիտասարդ այգիները ամենուրեք զարդարել և վերափոխել են դարերից մեզ հասած խոպանը: Ես Միկոյանին այդքան ուրախ չէի տեսել: Երբ վերադարձանք տուն, որտեղ տեղավորված էր բարձր հյուրը, նա ինձ

առանձնացրեց և ժպտալով ասաց. «Երբ Դուք ինձ ասացիք, ես չէի հավատում, միշտ սպասում էի աչքովս տեսնել և համոզվել, մեծ գործ է կատարվել, իրոք, հիանալի այգիներ են»:

Այն ժամանակ դեռ նոր էին հիմնված այգիները, դեռևս բերք չէին տալիս, բնակավայրերը դեռ անբարեկարգ, փաստորեն, կառուցված չէին, իսկ եթե մեր սիրելի Անաստասին հաջողվի գալ Երևան և տեսնել, թե ինչպիսի վերափոխումներ են կատարվել, համոզված եմ, որ ուրախությանը չափ չի լինի:

* * *

Նախկինում Ապարանի անասունների ձմեռանոցի տեղում՝ խճուղու հարևանությամբ, վեր է խոյացել մի գեղեցիկ բնակավայր՝ Պոռչյանի անվան սովխոզը՝ ճանապարհի երկու կողմերում կառուցված բազմահարկ շենքերով, գյուղատնտեսության մեքենայացման ինստիտուտի հարմարավետ կառույցով, արհեստանոցներով, երկու-երեք հարկանի բարեկարգ տներով: Այս սովխոզն այժմ դարձել է առաջավոր տնտեսություն:

Ջտեսնված գեղատեսիլ վայրում է հիմնադրվել այս բնակավայրը, որտեղից տեսանելի են ամբողջ Արարատյան դաշտը, քաղաքներն ու գյուղերը: Արարատ լեռը պետական գերբի նման միշտ առջևում է: Պոռչյան սովխոզի բնակավայրը և այգիներն Աշտարակի դռների յուրացման պերճախոս ապացույցն են: Կազմակերպման առաջին տարիներին շատ բեղմնավոր աշխատանք կատարեց սովխոզի տնօրեն Մակարյանը:

Այս ջրանցքի շրջակա սովխոզներից ամենախոշորը՝ նախկին 47-ը, այժմյան Աշտարակի շրջկենտրոնին միացած սովխոզն է, որի տնօրենն էր երկար տարիների վաստակ ունեցող Վարդան Իսկանդարյանը: Աշտարակին պատկանող անօգտագործելի հողերի վրա հիմնադրվեց այս տնտեսությունը: Իսկ Քասաղ գետի ձախ ափին էլ հիմնադրվեց այդ տնտեսության բնակավայրը: Կառուցված առաջին տներն օրինակ դարձան մյուս բնակիչների համար:

Մի քանի տարվա ընթացքում գետի ձախ ափին կառուցվեց մի նոր քաղաք, որն իր բնակչությամբ գերազանցում է նախ-

կինում Աշտարակի ունեցած բնակչությանը: Այստեղ կառուցվեցին մի քանի գիտահետազոտական ինստիտուտներ, որոնք իրենց աշխատանքով հայտնի են մեր Միության սահմաններից դուրս:

Կարելի է համոզված կերպով ասել, որ այժմ իր գեղեցկությամբ և տեսակարար կշռով Աշտարակն անցել է մեր հանրապետության շատ քաղաքներից:

Արզնի-Շամիրամ ջրանցքի առաջին հերթով Եղվարդի հարթավայրից մինչև Էջմիածին ընկած հողատարածությունները, նախկինում նախալեռնային չրջան կոչվող Աշտարակի և Կոտայքի քարքարոտ դաշտերը, դարձան ոռոգելի: Նախկինում այդ դաշտերում միայն որոշ չափով հացահատիկ էր ցանվում, այն էլ մի տարի բերք էր տալիս, 4–5 տարի ոչինչ չէր ստացվում: Երաշտից հողն այրվում էր: Այժմ այդ տարածությունները մինչև ներքին Զանգուի ջրանցքը վերածվել են խաղողի և պտղատու այգիների:

Հիրավի, ջուրը մեր պայմաններում վերստեղծել է ամեն ինչ: Ջրանցքի կառուցումից հետո այս տարածքների վրա այգիներ հիմնելուց բացի, կառուցվեցին նոր արդյունաբերական ձեռնարկություններ, գիտահետազոտական և այլ հիմնարկներ: Այստեղ է կառուցվել մեքենափորձարկման խոշոր կայանը, մեքենաների վերանորոգման գործարանը, չինանյութերի արտադրության, գյուղտեխնիկայի վերանորոգման խոշոր գործարանները, գյուղմեքենայացման գիտահետազոտական ինստիտուտը, Գիտությունների ակադեմիայի ֆիզիկայի և ռադիոֆիզիկայի ինստիտուտները: Մի խոսքով, այս ամայի, գրեթե անմարդաբնակ տարածությունները վերածվել են այգիների և նոր քաղաքների: Ինչպե՞ս չուրախանա հայրենասերը:

Սասունիկի սովխոզում, որը նույնպես հիմնադրվել է այս հողերի վրա, բնակիչները վերաբնակեցվել են Արագածի լեռան վրա գտնվող փոքր գյուղերից՝ Սասունիկից, Տեղերից կամ, ինչպես ասում են Դղրից և այլն: Այս տնտեսությունը գտնվում է ամենանպաստավոր պայմաններում: Կլիմայական պայմանները թելադրում են ավելի շատ զարգացնել խաղողի մշակումը և, այդպես էլ արվել է:

Նոր բնակավայրերի մասին խոսելիս անհնար է անտարբեր անցնել երկու չատ կարևոր, ըստ էության, յուրահատուկ Քասախ և Զովունի սովխոզների կողքով, որոնք մեծ տեսակարար կշիռ ունեն: Գյուղատնտեսական մթերքների արտադրությունն ավելացնելու համար այս սովխոզների աշխատավորներն իրենց աշխատասիրության շնորհիվ նույնիսկ չնախատեսված հողակտորները մաքրեցին քարերից, դարձրեցին օգտագործելի և հիմնեցին նոր այգիներ:

Արզնի-Շամիրամ ջրանցքի շինարարությունը ժամանակին բաժանվեց երկու հերթի: Երկրորդ հերթի շինարարությունը մեծ թափով սկսվեց 1965 թվից հետո: Այս կառույցի դանդաղ ընթանալու պատճառն այն էր, որ որոշ մարդիկ գտնում էին, թե ջրի պաչարները քիչ են, հետևապես պետք չի չարունակել երկրորդ հերթի շինարարությունը:

Հաստատ համոզված լինելով այդ ջրանցքի չատ օգտակարության մեջ՝ հանրապետության ղեկավարությունը հիմնավորեց և սկսեց ջրանցքի երկրորդ հերթի շինարարությունը: Կյանքը ցույց տվեց, թե որքան ճիչտ էր դրա կառուցումը:

Այս հիանալի կառույցի չուրջ ընկած հողերի ամենաբերրի հատվածը գտնվում է Շամիրամի հարթավայրում: Ավելին, այս մասում ահավոր ծանր պայմաններում էր բնակվում Աչտարակի գյուղերի մեծ մասը: Գյուղացիները մի կերպ քարչ էին տալիս իրենց գոյությունը: Ջրանցքի շինարարության ավարտից հետո այս գյուղերը վերածնվեցին և մի քանի տարվա ընթացքում, իրոք, վերափոխվել են ամեն ինչով, նույնիսկ կենցաղով: Մարդիկ նյութական կատարյալ բարեկեցություն են ստեղծել:

Ուչի, Կարբի, Օհանավան, Ագարակ, Ուջան, Նազրվան, Թալիչ, Շամիրամ, Բյուրական, Զորափ, Կոչ ավանի գյուղերը կառուցվել և վերակառուցվել են, ուղղակի կարելի է ասել, որ անճանաչելի են դարձել: Բացի անհատական գեղեցիկ տներից, որոնք պալատների են նմանվում, այս գյուղերում կառուցվեցին նոր դպրոցներ, մչակույթի տներ, հիվանդանոցներ կամ պոլիկլինիկաներ, դեղատներ, գրադարաններ, մի խոսքով այն ամենը, ինչ անհրաժեչտ է սոցիալիստական գյուղի համար:

Նոր ջրանցքն անցնում է չուրջ 20 հազար հեկտար հողատարածքի միջով: Սկզբում մտածում էինք ստեղծել նոր սովխոզներ ամբողջ տարածության վրա, բայց հետագայում կյանքը ցույց տվեց, որ վերը նչված գյուղերը կարող են հողերի մի զգալի մասն իրացնել, մչակել և այդպես էլ արվեց: Այստեղ նախատեսվում էր կառուցել երեք նոր սովխոզ, մնացած հողերի մեծ մասը բաժանվել է Արագածի գնդատեսիլ լեռնափեչերին փռված գյուղերի վրա, որոնք ի վիճակի են չատ արագ յուրացնել և արդյունք ստանալ:

Արզնի-Շամիրամ ջրանցքի երկրորդ հերթի հողերի յուրացման ժամանակ մենք հաչվի առանք այն սխալները, որոնք ժամանակին թույլ էինք տվել առաջին հերթի հողերի յուրացման ընթացքում: Ջրանցքի շինարարության հետ զուգընթաց սկսվեց հողերը քարերից մաքրելու չատ դժվարին, նույնիսկ կարելի է ասել տաժանակիր աչխատանքը:

Կազմակերպվեցին մելիորատիվ հատուկ ջոկատներ, որոնք երկար ժամանակ աչխատեցին, հողերը քարերից մաքրեցին, հարթեցրին և նախապատրաստեցին գյուղատնտեսության օգտագործման համար: Դրա չնորհիվ էլ Կոչի, Ուջանի, Շամիրամի, Թալիչի, Ավանի, Ագարակի կոլտնտեսություններն ու սովխոզները ջուր ստանալու հենց առաջին տարում, հիմնեցին հարյուրավոր հեկտար այգիներ: Ճիչտ է, այդ այգիները դեռ լրիվ բերքի տակ չեն մտել, բայց արդեն կարելի է տպավորություն ստանալ:

Եթե Արզնի-Շամիրամ ջրանցքի առաջին հերթով ոռոգելի տարածությունները Եղվարդի հարթավայրով միացավ էջմիածնի հարթավայրի հետ և, փաստորեն, կազմեցին մի կանաչ մասսիվ, ապա երկրորդ հերթի ոռոգումով Արագածի ստորոտի քարքարոտ ու խոպան, անօգտագործելի տարածությունները միացան Հոկտեմբերյանի, էջմիածնի, Ոսկեվազի և Աղավնատան այգիների հետ:

Եվ հավանական է՝ մի քանի տարի հետո Արարատյան դաչտից մինչև Արագած լեռան ստորոտը կստեղծվի մի կանաչ գոտի, այգիների մի հիանալի զանգված: Ջրանցքն անցնելով Քասաղի կիրճը, Արագած լեռան վրա կարծես արծաթյա գոտի է

կապում, հասնում մինչև Թալիշ և այնտեղից իջնում մինչև Հոկտեմբերյան: Երևի մեր պայմաններում ոչ մի միջոցառում այնքան մեծ փոփոխություն չմտցնի, որքան կարող է կատարել և կատարում է ջուրը:

Մեր հայրենիքի համար շատ ծանր տարիներին (1915-1920 թթ.) նրիտթուրքական բարբարոսների կազմակերպած ցեղասպանությունից մի կերպ փրկված արևմտահայերը հանգրվանեցին այս վայրերում և այն ժամանակվա միանգամայն անբարենպաստ պայմաններում ստեղծեցին բնակավայրեր այնտեղ, որտեղ մի փոքր աղբյուր է եղել, որով կարողացել են ապահովել մարդկանց և անասունների պահանջմունքները: Նրանք ոռոգման մասին նույնիսկ չեն երազել: Հիմնականում զբաղվել են անասնապահությամբ, ղռերն օգտագործելով որպես ձմեռային արոտավայրեր, իսկ որտեղ փոքր-ինչ հնարավորություն է եղել ոռոգելու, այդտեղ թեկուզ փոքր, բայց այգիներ են հիմնել:

Երբ Ջրանցքի շինարարության աշխատանքն ավարտվեց, գյուղացիները, որոնց մեծ մասը, ինչպես ասացի, եկել էին Սասունից, Վանից, Մուշից, այսինքն Արևմտյան Հայաստանի տարբեր գավառներից, իրենց տեսածին չէին հավատում, թե կարելի է որքան ցանկանան, ջուր վերցնել արտերը կամ այգին ջրելու համար: Այստեղ ոչ միայն հողն էր պապակել և ջուր էր ուզում, միաժամանակ մարդիկ էին պապակել և աչքը ջուր կտրած՝ ջրի էին սպասում: Ջրանցքի շահագործմամբ Աշտարակի, Էջմիածնի, Հոկտեմբերյանի և Թալինի գյուղացին ոռոգելու ջուր ունեցավ:

Ահա, թե այդ շրջանների բնակիչները ինչու և ինչպես կարողացան վերափոխել իրենց գյուղերը: Փոխվեց նաև բնությունը: Նախկին ձմեռանոցները, որտեղ կարող էին արածել միայն այծն ու ոչխարը, այժմ ծաղկուն այգիներ են դարձել: Այստեղ գյուղացիները սկսեցին լավ ապրել: Նույնիսկ կարելի է ասել, հարուստ ապրել: Այժմ Աշտարակի գյուղերում միհարկանի տունը բացառություն է, հիմնականում կառուցվել են երկհարկանի տներ՝ իրենց մառաններով և մեքենաների համար՝ ավտոտնակներով:

Ինչպես չուրախանաս, երբ երեկվա գաղթականն այսօր, իրոք, բարեկեցիկ կյանք է վարում:

Մեր հանրապետությանն անծանոթ մարդիկ շատ են զարմանում, թե ինչպես կարող է հայ գյուղացին ընդամենը երկու տասնամյակում կառուցել այդքան լավ շենքեր, դուրս գալ գետնափոր, խարխուլ տներից և բնակվել միանգամայն հարմարավետ բնակարաններում:

Երկար ժամանակ, հատկապես սահմանամերձ գյուղերում մարդիկ բնակարաններ չէին կառուցում, մի քանի պատճառներով: Առաջին. արևմտահայերը, որոնք մի կերպ փախել էին թուրքական կոտորածներից, սովետական իշխանության հաստատվելուց հետո դեռ չէին վստահում և վախենում էին նոր տուն կառուցել: Երկրորդ. միջոցները դեռևս սակավ էին, և վերջապես, պակասում էր շինարարական փայտը:

Հայրենական մեծ պատերազմից հետո հայ շինականը ամրացավ և սկսեց մտահոգվել նոր բնակարան կառուցելու մասին: Նրանցից շատերը կովել, հաղթանակով վերադարձել էին, տեսել էին Եվրոպայի շատ բարեկարգ բնակավայրեր, որոնք և լավ տպավորություն էին թողել: Վերջապես ամենակարևորը՝ նյութական միջոցների ավելացումն էր:

Վերջին տասնամյակում գյուղատնտեսական մթերքների գների փոփոխումը գյուղացիների համար նյութական մեծ հնարավորություն ստեղծեց: Ավելին, վերջին տարիներին, հատկապես 1965 թվականից հետո, սկսվեցին շինանյութերի նորմալ մատակարարումն ու վաճառքը:

Ահա այս բոլորին եթե ավելացնենք նաև այն, որ ամեն հայ շինական իսկական շինարար է, և ամենուրեք ունենք շինանյութերի անսպառ պաշարներ, ապա պարզ է դառնում, թե ինչպես եղավ, որ մեր գյուղացին այսքան կարճ ժամանակում կարողացավ դուրս գալ հողե գետնափոր տներից և ապրել բառացիորեն պալատանման տներում:

Առհասարակ շինարարությունը մեզանում շատ արագ թափով աճեց, որը, իհարկե, պետության կողմից տրամադրված միջոցների հաշվին էր: Այդ պատճառով էլ դա այնքան զարմանք չի

առաջացնում, որքան գյուղում կատարվող շինարարությունը:

Վերջերս ես գնում էի Ապարան՝ լիճը տեսնելու: Ուշի գյուղը մտնելիս ճանապարհի ձախ կողմում 10-ից 18 հոգի աշխատում էին շինարարության վրա: Ինձ շատ հետաքրքրեց մարդկանց կազմը, որոնք տղամարդիկ էին, կանայք, երեխաներ: Վարորդին խնդրեցի կանգնել: Մեքենայից իջա և մոտեցա շինարարներին, բարևեցի, սկսեցի զրուցել:

Պարզվեց որ բոլորը մի ընտանիքից էին, երեք տղա՝ իրենց ընտանիքներով ու բարեկամներով: Բոլորն էլ հարմարավետ բնակարաններ ունեն, բացի փոքր տղայից, որի համար էլ կառուցում էին այս տունը՝ գրեթե երեք հարկանի:

Ուզում էի հեռանալ, ճանաչեցին և խնդրեցին վերադարձին հանդիպել՝ հյուրընկալվել իրենց մոտ: Ես վերադարձա նույն օրը, շատ ուշ էր և այլևս չհանդիպեցի նրանց: Բայց պատահեց այնպես, որ վեց օրից հետո կրկին գործով մեկնեցի Ապարան, այս անգամ տունն արդեն ավարտված տեսա: Գեղեցիկ շենքի քարային աշխատանքը լրիվ ավարտված էր, մնում էր ներքին հարդարումը: Հետագայում ես պարզեցի, որ նրանք վարպետներ են, որմնադիրներ: Մի խոսքով այս օրինակը ցույց է տալիս, թե ինչի է ընդունակ հայ շինականը: Պետք է խոստովանեմ, որ սա եզակի դեպք չէ, կարելի է ասել, որ դա համընդհանուր երևույթ է:

Այս նույն Արզնի-Շամիրամ ջրանցքի տարածքում հիմնված Պռոշյանի անվան սովխոզում մենք սկսեցինք կառուցել բարձրահարկ մեծ շենքեր: Գյուղացիները սկսեցին առարկել, որ իրենց համար հարկավոր է առանձնատներ կառուցել: Նրանք պնդում էին, որ եթե պետությունը չի անում, ապա թույլ տա, որպեսզի իրենք կառուցեն, միայն առանձին հողամաս հատկացվի:

Իրոք, պետական կազմակերպությունները կառուցեցին մի քանի բարձրահարկ ընակելի շենքեր, որոնք նայում են դեպի Աշտարակ տանող խճուղին: Բացի դրանից, թույլատրեցինք հնարավորություն ունեցողներին կառուցել իրենց սեփական տները:

Եթե այսօր գնանք այդ սովխոզ, խորքերում կտեսնենք գյուղացիների կառուցած սեփական տները՝ միանգամայն հարմարավետ և գեղեցիկ: Այդ տների շուրջը շատ արագ յուրացված հողերն այժմ դարձել են հիանալի տնամերձ այգիներ: Բանն այն է, որ այս տարածքի հողակտորները գյուղացիները մաքրեցին քարերից և դրանցով կառուցեցին բնակարան ու պարսպապատեցին տնամերձ այգին:

Մի խոսքով, այսպիսին է մեր գյուղացին, քարից ամեն ինչ հանում է, մենակ թե ջուր լինի:

* * *

Ջրաշինարարությունը վերջին երեք տասնամյակում գտնվել է ուշադրության կենտրոնում, բայց քանի որ շատ սակավ են մեր գետերի ջրերը, ստիպված աշխատել ենք կառուցել բազմաթիվ մանր ու խոշոր ջրամբարներ՝ կուտակելու գարնան և աշնան ջրերը, որոնք անօգուտ կորչում, գնում էին:

Առաջին խոշոր միջոցառումը Քասաղ գետի ջրերի ամբարման համար Ապարանի ջրամբարի կառուցումն էր, որով, փաստորեն, ոռոգելի դարձան Ապարանի, Աշտարակի և Նաիրիի շրջանների անօգտագործելի հողատարածությունները: Այս ջրամբարի տարողությունը կազմում է մինչև հարյուր միլիոն խորանարդ մետր:

Չնայած այստեղ ջրի կորուստ է լինում, բայց նույնիսկ այդ պայմաններում, 1976 թ ջրամբարում կուտակվեց հարյուր միլիոն խորանարդ մետր ջուր, որից ավելի քան 30 միլիոն խորանարդ մետրը բաց թողնվեց գետով:

Ինչպես Արագած լեռան վրա կապված է արծաթե ջրային գոտի, այնպես էլ Ապարանի ջրամբարից ջուրը թունելով դուրս է գալիս և Արայի լեռան ստորոտով հասնում մինչև Քարաշամբ:

Տարիներ առաջ Քասաղ գետի ջուրն օգտագործում էին միայն Աշտարակի շրջանի գյուղացիները: Ապարանցին իրավունք չուներ այդ ջրից օգտվելու, ասենք հնարավորությունն էլ շատ սահմանափակ էր: Գետը հոսում էր խոր կիրճով և գյուղացին հնարավորություն չուներ ջուր վերցնելու:

Տեխնիկական ցածր մակարդակի պայմաններում ջրհան կայաններ կառուցելը գրեթե բացառված էր: Ավելին, եղած ջուրը

չէր բավարարում Աշտարակի բազմամյա կուլտուրաների մշակմանը: Ավելի առաջ աշտարակցիները պահակներ էին նշանակում ամբողջ գետի երկայնքով, որպեսզի ապարանցիները ջուր չվերցնեին:

Ջրամբարը կառուցելուց հետո դրությունն ամբողջովին փոխվեց: Այժմ Ապարանի գյուղերի մեծ մասը ջուր է ստացել: Կառուցվեցին Երնջատափի և Ափնայի ջրհան կայանները, որոնք ոռոգում են մի քանի հազար հեկտար տարածություն: Ավելին, Դալիչայի ջրերն օգտագործում են Արագած գյուղի ենթաշրջանի գյուղերը: Այսպիսով Ապարանի շրջանի վարելահողերի մեծ մասը ոռոգելի են դարձել:

Իհարկե, այս բոլորը հնարավորություն են տալիս արագ կերպով բարելավել աշխատավորության նյութական դրությունը, կրկնապատկել գյուղատնտեսական մթերքների արտադրությունը, ստանալ կայուն բերք՝ կախված չլինելով բնության կամայականությունից: Արագած լեռան ընդերքից հոսող ամենամեծ գետը Ապարանի ջրամբարով սանձահարվեց և կուտակված ջրերով ոռոգելի դարձան հազարավոր հեկտարներ:

Ապարանի ջրերի օգտագործման և ջրհան կայանների կառուցման պատվավոր գործում մեծ դեր է կատարել Ցոլակ Գևորգյանը՝ Ապարանի ջրային տնտեսության կառավարիչը: Այս փորձված և խելացի մարդը շատ ջանքեր թափեց Ապարանի շրջանի դաշտերի ոռոգման համար:

* * *

Արագածից սկիզբ առնող մյուս խոշոր գետը Մանթաշն է, որի մասին այնքան հարազատորեն և ջերմորեն գրել ու երգել է մեր մեծ վարպետ Ավետիք Իսահակյանը: Այս գետը վաղ գարնանն Արագածի ձյան հալոցքից դառնում է ջրառատ, իսկ ամռանը գրեթե ցամաքում:

Առաջին ջրաշինարարական աշխատանքը սկսվեց 1960-ական թվականներին: Նկատի ունենալով ռելիեֆի և երկրաբանական բարդ կառուցվածքը՝ Մանթաշի ջրամբարի, իրոք հետախուզական բարդ աշխատանքը, հանձնարարվեց Պետական համալսարանի երկրաբաններին:

Անհրաժեշտ է ասել, որ նրանք շատ լավ հետախուզեցին և ներկայացրին շատ բարդ նախագիծ: Ջրամբարի կառուցումը նախատեսվում էր շատ բարձր կետում, որը և դժվարացնում էր շինարարության աշխատանքը: Ճանապարհներ չկային, շինանյութերի տեղափոխումը սկզբնական շրջանում կատարվում էր սայլերով և այլ պրիմիտիվ միջոցներով:

Հասկանալի է, որ այս պայմաններում շատ դժվար էր կառուցել ջրամբարը: Ճանապարհի շինարարությունը և ջրամբարի կառուցումը սկսվեց միաժամանակ:

Մինչև այս ջրամբարի կառուցումը Արթիկի շրջանը գրեթե ամեն տարի տուժում էր երաշտից: Մեր հանրապետությունում կառուցված ջրամբարներից ամենահաջողը Մանթաշի ջրամբարն է, որը ջրի կորուստ չունի, և խնայողաբար են օգտագործվում կուտակված ջրերը:

Այս գետի վրա կառուցվեց մի ուրիշ ջրամբար, որը նույնպես ոռոգում է Արթիկի շրջանի հողերը: Դա Հոռոմի ջրամբարն է, որից ճիշտ է, ջրի որոշ կորուստ է լինում, բայց նույնիսկ այս պայմաններում մեծ օգուտ է տալիս:

Եթե նախկինում Հոռոմի, Փանիկի, Սարատակի, Բենիամինի, Գուսանագյուղի տնտեսությունները գրեթե ամեն տարի տուժում էին երաշտից, զրկված էին շարահերկ կուլտուրաների մշակությունից, ապա այժմ Արթիկի, որոշ չափով նաև Անիի շրջանի տնտեսությունները ցանում են ավելի եկամտաբեր շարահերկ կուլտուրաներ, որի շնորհիվ այդ շրջանների կոլտնտեսությունների և սովխոզների նյութական վիճակը շատ է բարելավվել:

Մանթաշի և Ախուրյան գետերի գարնանային ջրերի հավաքման, կուտակման նպատակով կառուցվեց նաև Կառնուտի, կարելի է ասել, շատ գեղեցիկ ջրամբարը: Արագածից հոսող ջրերի բազայի վրա կառուցվեց Սառնաղբյուրի ջրամբարը, որը սկզբում շատ անհաջող էր, բայց հետագայում լրացուցիչ աշխատանքներից հետո կարգավորվեց և այժմ նորմալ գործում է:

Այսպիսով այս ջրամբարների կառուցումից հետո Շիրակի հարթավայրը և նախալեռնային գոտու վարելահողերը գրեթե

դարձան ոռոգելի և ապահովվեց գյուղատնտեսական կուլտուրաների կայուն, բարձր բերք: Շիրակցու համար այլևս երաշտը սարսափելի չէ: Ավելին. հնարավոր դարձավ մշակելու առավել արժեքավոր կուլտուրաներ, որոնցից ստացված եկամուտը նպաստեց Շիրակի աշխատավորների նյութական բարեկեցության բարձրացմանը:

Կասկածից վեր է, որ այս պայմաններում հնարավոր դարձավ կառուցապատել գյուղերը: Շիրակի գյուղացին հրաժարվեց նախկին խարխուլ գոմ-բնակարաններից: Ի տարբերություն Հանրապետության մյուս շրջանների, Շիրակում մինչև 1960-ական թվականները գյուղացիների բնակարանները միացված էին անասնագոմերի հետ: Անասելի ծանր պայմաններում էր գտնվում Շիրակի բնակիչը:

Արթիկի տուֆի պաչարները գտնվում են այստեղ, բայց մինչև 1960-ական թվականները չատ քիչ տներ կարող էինք գտնել, որոնք կառուցված լինեին Արթիկի գեղեցիկ քարով: Նույնիսկ չէր օգտագործվում Կապսիի և Մարմարաշենի գյուղերի տուֆերը:

Միայն վերջին տասնամյակներում սկսվեց մեծ ծավալի գյուղական շինարարություն, և կարծես մեծ հրաշքով վերակառուցվեցին Շիրակի հարթավայրի և նախալեռնային շրջանների գյուղերը: Այժմ կարելի է գոհունակությամբ նշել, որ ցրտաշունչ Շիրակի ամեն մի գյուղ նմանվում է փոքր քաղաքի՝ իր հիանալի կառույցներով, դպրոցներով, հիվանդանոցներով, մշակույթի տներով, կենցաղ-սպասարկման և սպորտային օբյեկտներով:

Նախկինում Հայաստանի և ոչ մի շրջան այնքան հալածանքի և կոտորածի չի ենթարկվել, որքան Շիրակի բնակչությունը: Այս բոլորից հետո, երբ տեսնում ես վերակառուցված, միաժամանակ և նորակառույց Շիրակը, իհարկե, մեծ հրճվանք ես ապրում:

Ախուրյանի ջրամբարը, մեր Հանրապետության ամենախոշորը պետք է լինի, որը կառուցման ընթացքում է: Ախուրյանի ջրամբարի կառուցման համար երկար տարիներ Թուրքիայի հետ դիվանագիտական բանակցություններ են վարվել:

Ախուրյանի ջրամբարի կառուցման գաղափարն առաջացել էր դեռ երեսնական թվականներին: Մինչև հայրենական պատերազմի սկսվելը որոշ հետախուզական աշխատանք էր տարվել: Երբ սկսվեց Մեծ հայրենականը այդ հարցը գրեթե հանվեց օրակարգից:

Ավելին, պատերազմը վերջանալուց հետո Թուրքերը կտրականապես հրաժարվում էին նույնիսկ բանակցությունները վերսկսել, պատճառաբանելով, որ իրենք ջուր կուտակելու անհրաժեշտություն չունեն, որ եղած ջրերը լրիվ բավարարում են Թուրքերի պահանջները: Մի խոսքով, կտրականապես հրաժարվում էին բանակցություններ վարել այդ հարցի շուրջ:

Առհասարակ չատ դժվար լուծվեց ջրամբարի կառուցման հարցը: Հիսունական թվականներին, երբ կրկին հարց բարձրացրեցինք, Թուրքերն ինչ-որ չափով չահագրգրվածություն ցուցաբերեցին, այս անգամ էլ մեր կենտրոնական ապարատի աշխատողները սկսեցին հրաժարվել:

Հարկ եղավ դիմել այն ժամանակվա Մինիստրների սովետի նախագահի առաջին տեղակալ Ա. Կոսիգինին: Հանգամանորեն բացատրեցինք, որ դրա կառուցմամբ առաջին հերթին չահագրգռված է Հայաստանը, քանի որ դրանով մեր նախալեռնային շրջանների հազարավոր հեկտարներ ոռոգելի կդառնան: Ավելին, Կոսիգինին տեղեկացրինք, որ Արարատյան դաշտի հողերի մեծ տարածություններ չեն մշակվում ջրի պակասության պատճառով, իսկ մի շարք տեղերում չատ ցածր բերք են ստանում՝ ամռանը ջրի պակասի հետևանքով:

Վերջապես ունենալով սովետական կառավարության համաձայնությունը՝ նորից հարց բարձրացվեց Թուրքական կառավարության առջև: Արդեն դիվանագիտական ընդհանուր կլիման չատ բարենպաստ դարձավ, Թուրքերը սահմանապահների միջոցով ցանկություն հայտնեցին հանդիպել մեր ներկայացուցիչների հետ:

Երկու կողմերի ներկայացուցիչների հանդիպումից հետո կարծես սառույցը կոտրվեց, գործը տեղից չարժվեց: Հիսունական թվականներին Թուրքերի ներկայացուցիչները եկան

Երևան, համաձայնություն տվեցին ջրամբարի նախագիծը կազմել: Այնուհետև մեր ներկայացուցիչները մինիստր Բաղրամյանի գլխավորությամբ եղան Ստամբուլում. հիմնական հարցերում համաձայնության եկան, կարծես ամեն ինչ կարգին էր:

1960-ական թվականներին Թուրքիայում կառավարության հաճախակի փոփոխման հետևանքով այս հարցը երկար ժամանակ ընթացք չէր ունենում: Միայն 1970-ական թվականների սկզբներին մեր արտաքին գործերի մինիստրության և ՍՍՀՄ արտաքին տնտեսական կապերի կոմիտեի բազմաթիվ հիշեցումներից հետո Թուրքերը համաձայնվեցին կառուցել ջրամբարը:

Այդ ժամանակ Մինիստրների սովետը որոշում կայացրեց ջրամբարի շինարարությունը սկսել երկու տարի հետո: Այդպես էլ եղավ: 1974 թվականին արդեն սկսվեց շինարարության նախապատրաստական աշխատանքը: Ամենից առաջ սկսվեց գյուղերի տեղահանման գործընթացը: Այդ նպատակով կառուցվեց նոր, շատ գեղեցիկ ու հարմարավետ բնակարաններով մի փոքրիկ քաղաք իր բոլոր հարմարություններով:

1975 թվից սկսվեց ջրամբարի շինարարության աշխատանքը և այժմ արագ թափով առաջ է գնում: Հիրավի, այս ջրամբարն ունի շատ կարևոր նշանակություն, նախ՝ նրանում կուտակված ջրերով մենք կարող ենք ոռոգելի դարձնել Անիի, Թալինի, Արթիկի, Ախուրյանի, Հոկտեմբերյանի և նույնիսկ Աշտարակի որոշ հողեր: Բայանդուրից մինչև Թալիշ կարելի է ոռոգելի դարձնել: Դա իր նշանակությամբ մի նոր Արարատյան դաշտ է:

Բերրի հողերում կարող ենք մշակել ավելի արժեքավոր կուլտուրաներ: Հայ շինականը կազատվի երաշտի արհավիրքներից: Այս քարքարոտ, արտաքինից ոչ պիտանի հողերը կդառնան իսկական դրախտավայր: Այս ջրամբարն իր ծավալով այնպիսին է, որ մեծ ազդեցություն կունենա շրջակա գյուղերի և քաղաքների կլիմայական պայմանների բարելավման վրա: 500 միլիոն խոր. մետր ջրի կուտակումը շատ մեծ պաշար է:

Այս գետերում պաշարները շատ ավելին են, համոզված եմ, որ հետագայում կավելացվի տարողությունը: Ավելին, կկառուցվի Կապսի ջրամբարը Ախուրյան գետի վրա:

Մի խոսքով, մեր հանրապետությունից հոսող գետերից ամենամեծ կորուստը, եթե կարելի է ասել, տեղի էր ունենում Արաքսից: Այժմ այս ջրամբարի ավարտումով գրեթե ջրի բոլոր պաշարները կօգտագործվեն: Ասում են, թե վարպետը իր «Արու-Լալա Մահարին» գրել է Լենինականից Երևան տանող ճանապարհին անապատային տեսարաններից ստացած տպավորության տակ: Այժմ այդ, իրոք, անապատները վերածվել են ծաղկուն, կյանք տվող վայրերի:

* * *

Արարատյան դաշտի և նախալեռնային շրջանների հողատարածությունների մեծ մասը ոռոգվում են Սևանի ջրերով: Այստեղ ևս պրոբլեմատիկ հարց էր՝ պակասացնել Սևանից բաց թողնվող ջրի քանակը, և նոր ջրամբարներ և ջրհան կայաններ կառուցել Սև ջրի և ստորերկրյա ջրերի բազայի վրա: Այդպես էլ կատարվեց:

1960-ական թվականների կեսից շատ արագ թափով սկսվեց Սև ջրի օգտագործումը: Նախ կառուցվեց Այղր լճի ջրհան կայանը՝ Հոկտեմբերյանի և մասամբ էջմիածնի հողերի ոռոգման համար, ապա սկսվեց Արևշատի և Մխչյանի հզոր ջրհան կայանների կառուցումը:

Արևշատի ջրհան կայանի կառուցումով ամբողջովին ապահովվեց էջմիածնի հողերի ոռոգումը, իսկ Մխչյանի մի քանի աստիճան հզոր ջրհան կայանն օգնեց բավարարելու Արտաշատի և Արարատի շրջանների հողերի ոռոգման պահանջը: Բացի դրանից, կառուցվեցին մի շարք փոքր ջրհան կայաններ Արաքսի և Սև ջրի պաշարների հաշվին:

Խոշորագույն միջոցառում հանդիսացավ Ազատ գետի վրա կառուցված ջրամբարը: Այստեղ կուտակվում է մոտ 70 միլիոն խ.մետր ջուր և ոռոգելի դարձնում Գառնիից ցած ընկած բոլոր անօգտագործելի հողերը և լրացուցիչ ջուր է տալիս Արտաշատի շրջանին: Ստալինի անվան ջրանցքի շինարարությունից հետո Արտաշատի և Արարատի շրջանների համար ամենակարևոր մի-

ջոցառումը եղավ Մխչյանի ջրհան կայանի և Ազատի ջրամբարի կառուցումը:

Այս միջոցառումները հնարավորություն տվեցին գրեթե կիսով չափ կրճատել Սևանա լճից բաց թողնվող ջրերի քանակը: Ճիշտ է, հիմնականում հարցը կլուծվի, երբ ավարտվի Արփա-Սևան խոշոր կառույցի աշխատանքը, այնուամենայնիվ, վերը նշված միջոցառումները ևս շատ մեծ օգուտ տվեցին՝ Սևանի ջրի խնայմանը:

Մի խոսքով, այս ջրհան կայանները և ջրամբարները շատ թեթևացրին Սևանի հոգսը:

Նախատեսված է ջրամբար կառուցել նաև Ջիման գետի վրա, որով լիովին կլուծվի Արարատյան հարթավայրի և նախալեռնային շրջանների հողերի ոռոգման խնդիրը:

Եթե տնտեսական տեսակետից մոտենանք՝ ապա ջրամբարների և ջրհան կայանների կառուցման վրա ծախսված միջոցները վերականգնվում են երկուսից-երեք տարում: Սա շատ դրական է և պետք է շարունակել այս պատվավոր և հայրենավեր աշխատանքը:

Ջրամատակարարման բարելավումից հետո կոլխոզների և սովխոզների գյուղատնտեսական մթերքների արտադրությունը վերջին 10 տարում կրկնապատկվել է, իսկ շատ տնտեսություններում եռապատկվել է: Արարատի շրջանից Սուրենավանում և Արմաշում խաղողի արտադրությունն ավելի քան չորս անգամ ավելացել է: Իսկ Քաղցրաշենում և Այգեզարդում ջրամատակարարման բարելավման շնորհիվ կրկնակի բերք են ստանում գյուղատնտեսական բոլոր կուլտուրաներից:

Առհասարակ վերջին երկու տասնամյակում կերպարանափոխվեցին Արարատյան դաշտի գյուղերը և քաղաքները: Նախկին կավե անչուք տներին փոխարինել են բազմահարկ քարակերտ գեղեցիկ տները: Բարեկարգվել են գյուղերը, կառուցվել են նոր ակումբներ և մշակույթի, կենցաղի սպասարկման, առողջապահական և այլ օջախներ:

Հիշում եմ, 1955-1956 թթ. Մինիստրների սովետում քննարկվում էր գյուղերի հատակագծման և կառուցման հարցը: Ամենից շատ խոսվեց Արարատյան դաշտի գյուղերի կառուցման և բարեկարգման մասին: Բանն այն է, որ Արարատյան դաշտի գյուղերը նյութապես ավելի ապահովված էին, բայց բնակիչներն ապրում էին բնակարանային վատ պայմաններում: Ավելին, այստեղ քարակերտ տները միայն եզակի էին, հիմնականում կառուցվել էին չթրծված հում աղյուսից:

Այդ պատճառով էլ Մինիստրների սովետը որոշում ընդունեց Արարատյան հարթավայրում արգելել կավե տների կառուցումը: Համապատասխան կազմակերպություններին ցուցում տրվեց՝ ապահովել շինանյութով:

Այս որոշումից հետո պատասխանատու աշխատողները մեկնեցին շրջաններ, բացատրելու որոշման իմաստը և կազմակերպելու նոր շինարարության գործը: Հասկանալի է, ամեն մի նոր միջոցառում դժվարության էր հանդիպում, մանավանդ, որ դա կապված էր դարերից եկող սովորության հետ:

Մինիստրների սովետի նախագահի տեղակալ Մարտիրոսյան Բալաբեկը գնաց Արտաշատ: Նա այդ շրջանից էր: Մի շարք գյուղերում հավաքել էր մարդկանց, զրուցել նրանց հետ, ամենուրեք մեծ դիմադրության էր հանդիպել: Վերադարձավ Մինիստրների սովետ և պատմեց իր հանդիպումների արդյունքների մասին և կարծիք հայտնեց, որ մեր որոշումը առնվազն վաղաժամ է:

Այդ ժամանակ վերոհիշյալ որոշմանը լրացնող մի այլ որոշում ընդունեցինք՝ ամեն գյուղում կառուցել տալ մեկ կամ երկու տիպային քարաշեն տուն, գյուղացին կհամոզվի և ինքը կսկսի կառուցել: Այս փորձը կատարվեց Արտաշատում և իր դրական արդյունքը տվեց:

Երկար դիմադրությունից հետո հիսունական թվերի վերջերին սկսվեց նոր տների մասսայական շինարարությունը: Այս անգամ, մարդիկ համոզվելով նորի առավելության մեջ, սկսեցին ներկայացնել շինանյութերի մեծ մասշտաբի պահանջարկ: Ավելին, մեր առաջարկած տիպային նախագծերը ամենուրեք վերափոխվեցին, կատարելագործվեցին և ընդլայնվեցին:

Այժմ Արարատյան դաշտում թանգարանի համար նույնիսկ

չես գտնի մի հողաշեն բնակարան, որտեղ ապրելիս լինեն մարդիկ: Եթե կան հողաշեն որոշ տներ, ապա դրանք հացատներ են, որտեղ լավաշ են թխում և այլ ճաշեր պատրաստում:

Բոլոր բնակավայրերն էլ այժմ ունեն ամեն անհրաժեշտը: Կուլտուր-կենցաղային, առողջապահական, լուսավորչական հիմնարկներ կան բոլոր գյուղերում: Էլեկտրականությունը, գազը, հեռուստատեսությունը, ռադիոն, կինոթատրոնները մեծ հեղափոխություն կատարեցին մարդկանց կուլտուրական կյանքում:

Այստեղ, կարելի է ասել, որ գրեթե վերացել է գյուղի և քաղաքի տարբերությունը: Մարդիկ նյութապես ավելի լավ են բավարարված: Կուլտուրական սպասարկման բոլոր միջոցները կան գրեթե բոլոր գյուղերում ու քաղաքներում: Եթե դրան ավելացնենք նաև այն, որ մայրաքաղաքին շատ մոտ են և ունեն փոխադրական միջոցներ, ապա վստահորեն կարելի է ասել, որ ցանկացողը կարող է հեշտությամբ լսել օպերա և վերադառնալ իր տուն:

Գյուղերից օրինակներ շատ կարելի է բերել: Ես ցանկանում եմ բերել միայն մեկ օրինակ, դա Արտաշատի Վերին Արտաշատ գյուղի կոլտնտեսության օրինակն է: Այս գյուղում երկար տարիներ կոլտնտեսության նախագահ աշխատեց նախկին բատրակ (Ազգանունը բնագրում նշված չէ. խմբ.): Տաղանդավոր կազմակերպիչը, լավ հասկանալով և հեռանկարային մտածողություն և նորի զգացողություն ունենալով դեռ քառասունական թվականներին սկսեց մշակույթի տան-թատրոնի կառուցումը: Ակադեմիկոս ճարտարապետ Թամանյանի տղան նախագծեց այդ թատրոնի շենքը, որը Սպենդիարյանի անվան օպերային թատրոնի փոքրացած տարբերակն էր:

Պատերազմից հետո լրիվ ավարտվեց մշակույթի տան շինարարությունը և առաջին անգամ հիսունական թվերի սկզբին օպերային ներկայացում տրվեց այս գեղեցիկ շենքում: Դրանից հետո կոլտնտեսության նախագահ ընտրվեց մի շնորհալի երիտասարդ՝ Պետիկ Պետրոսյանը, որն իր լավ աշխատանքի համար մի քանի անգամ ընտրվեց Գերագույն սովետի նախագահի տեղակալ:

Վերջին տասը տարում գյուղում կոլտնտեսության միջոցների հաշվին կառուցվեցին դպրոցներ, հիվանդանոց, առևտրի և կենցաղի օբեկտներ, գրադարան և այլն: Մի խոսքով, այս բնակավայրը, որը եզակի չէ, նման է եվրոպական փոքր քաղաքի:

* * *

Արտաշատը մեր պատմական մայրաքաղաքի իսկական հուշարձաններից մեկն է: Նոր, ընդամենը երկու տասնամյակի պատմություն ունեն Արտաշատի չրջանի Սուրենավանի և Արմաշի սովխոզները: Դրանք Արարատյան հարթավայրի հարուստ տնտեսություններից են և քաղաքատիպ են՝ իրենց բոլոր հարմարություններով:

Այս տնտեսությունները կազմակերպվեցին Դավալուի խոպան հողերի տարածքում, Արազդայանի հողերի օգտագործման նպատակով: Պետք է խոստովանել, որ մարդկանց հաջողվեց այդ խամ ու խոպան հողերը, որտեղ տիրում էին օձերն ու կարիճները, դարձնել ծաղկուն այգեստան:

Արազդայանի հողերի իրացման համար շատ մեծ գործ կատարեց ջրային տնտեսության նախկին մինիստր Գրիգոր Աղախանյանը, որը ժամանակին ավարտեց Ջրհան կայանի կառուցումը: Հայրենական պատերազմից անմիջապես հետո այդպիսի ջրհան կայանի կառուցումը, ինչ խոսք, շատ դժվար էր: Միջոցներ չկային, սարքավորումներ չունեինք, մի խոսքով, շատ ծանր պայմաններում կառուցվեց այս ջրհան կայանը:

Իսկ Վահրամ Բաղալյանը, իրոք, ռանչպար, տաղանդավոր մարդ էր, նա հիմնեց այնպիսի այգիներ, որոնցով հիմա էլ կարելի է հպարտանալ: Վահրամը շատ սովխոզներ է հիմնադրել Հոկտեմբերյանում, Նոյեմբերյանում, որտեղից փոխադրվեց Սուրենավան և քայքայված տնտեսությունը դարձրեց առաջավոր: Վահրամը կրթություն չուներ, ծխական դպրոց էր ավարտել, բայց կյանքում այնքան բան էր արել, որ մասսաների պահանջով նրան շնորհեցին գյուղատնտեսի կոչում:

Այս հողերը, որ յուրացվեցին մեր մարդկանց ջանքերով, երկրորդ անգամ են կյանքի կոչվում: Դեռ անցյալ դարում Կախա-

նով ազգանունով մի կայվածատեր ցար-թագավորից նվեր էր ստացել Արագդայանի հողերը: Մի քանի տարի նա մշակում է, ոռոգում, սակայն դրենաժներ չի անցկացնում: Արդյունքում ոռոգման ջրերը խառնվեցին ստորերկրյա ջրերին և դրա հետևանքով Արագդայան հարթավայրի ավելի քան 10 հազար հեկտար հողերն աղակալվել էին և մոտ հարյուր տարի չէին օգտագործվում: Կախանովն իր ժամանակին ջրանցք կառուցեց, Արաքսից ջուր վերցրեց: Այժմ այդ ջրանցքն օգտագործվում է Արմաշի և Սուրենավանի ջրհան կայանների համար:

Վահրամ Բաղայյանը լավ գիտեր այս պատմությունը և շատ զգույշ էր մոտենում ոռոգման հարցին և ամենակարևորն էր՝ լուրջ աշխատանք էր տանում ավելորդ ջրերի հեռացման համար: Բաղալկական (նրան այսպես էին անվանում ամենուրեք) Կախանովի նման հիմնեց այգիներ, սկզբից բարձրադիր վայրերում, ապա աստիճանաբար սկսեց հարթավայրի հողերի յուրացման շատ ծանր, բայց պատվաբեր աշխատանքը:

Ներկայումս լուրջ միջոցներ են տրամադրվում աղուտ հողերի յուրացման համար: Համոզված եմ, որ մի քանի տարի հետո Արագդայանի և Արարատյան դաշտի մյուս աղուտ հողերը լրիվ կյուրացվեն: Դա, իհարկե, շատ մեծ ուղերվ է հանրապետությունում գյուղատնտեսական մթերքների ավելացման համար:

Մեր հանրապետության հողային ռելիեֆը այնպիսին է, որ ջրի կուտակումը ջրամբարներում բավական չէ: Անհրաժեշտ եղավ ստեղծել հիդրոտեխնիկական կառույցներ՝ ջուրը խորխորատներից բարձրացնելու, վարելահողերին հասցնելու համար:

Դարեր շարունակ Վայոց ձորով հոսել է Արփի գետը, բայց դրա հովիտներում ապրող մարդիկ չեն կարողացել օգտագործել ոռոգման նպատակով: Միայն սովետական իշխանության տարիներին տեխնիկայի զարգացման պայմաններում հնարավոր եղավ խոր ձորերից, կիրճերից ջրհան կայանների միջոցով ջուրը վեր բարձրացնել և օգտագործել ոռոգման և այլ նպատակներով:

Հայրենական մեծ պատերազմից հետո Դարալագյազից, Եղեգնաձորից և Ազիզբեկովից մի տհաճ հոսանք սկսվեց դեպի

քաղաքներ ու Արարատյան դաշտի շրջաններ: Գյուղացիները հույսները կտրած՝ փաստորեն փախուստի էին դիմում, հեռանկար չտեսնելով հետագա կյանքի, ապրելու համար:

Հիսունական թվականներին սկսեցինք սկզբում կառուցել փոքր ջրհան կայաններ, որոնք հենց առաջին տարին նկատելի արդյունք էին տալիս: Այդպիսի ջրհան կայաններից էին Գլաձորինը, Արենիինը և ուրիշները:

Այս ջրհան կայանները կարծես ուղեցույց դարձան մյուսներին: Գյուղացիները սկսեցին պահանջել ջրհան կայանների կառուցում՝ դրա մեջ տեսնելով իրենց հեռանկարը և ապագան:

60-ական թվականներին շատ եռանդուն աշխատանք կատարեց կուսակցության շրջկոմի առաջին քարտուղար Հովհաննես Հովսեփյանը: Այս դարալագյազցի մարդն իր լեռնցու համառ բնավորությամբ հասավ այն բանին, որ որոշվեց կառուցել Աղավնաձորի երկաստիճան բարդ կառույցներով ջրհան կայանը:

Եղեգնաձորի պայմաններում նման ջրհան կայանի կառուցումն արդեն մեծ նշանակություն ունեցավ գյուղացիների հոսքը դադարեցնելու համար: Ջրհան կայանը Արփի գետից ջուրը երկու հերթով մղում է մինչև բարձրադիր Աղավնաձոր գյուղը, որտեղից ջրանցքներով ջուրը բաժանվում է դեպի աջ և ձախ ու ոռոգում Աղավնաձորի, Գետափի, Ռինդի, Ջիվայի, Ելփինի, Արենիի տնտեսությունների հողերը:

Ավելին, Գնիշիկ գյուղի տեղափոխման կապակցությամբ Արփի գետի հովիտում կառուցվեց մի գեղեցիկ բնակավայր, որտեղ բնակվեցին գնիշիկցիները: Գյուղը սահում էր և այդ պատճառով Գնիշիկ գյուղի բնակիչներին տեղափոխեցինք Արփիի ավանը: Պետք է ասեմ, որ այս նույն բախտը վիճակվել էր նաև Ռինդին: Կառավարությունը Ռինդի բնակիչներին տվեց միայն չինանյութ և գյուղն իջեցրեց Թափեր կոչվող հողամասը, նախկին գյուղից մոտ երկու կիլոմետր դեպի Արփի գետի կիրճը:

Այստեղ շատ քարքարոտ հողեր էին, գրեթե անօգտագործելի, բայց մեկ-երկու տարում բոլոր գյուղացիները, առանց բացառության կառուցեցին երկու-երեք հարկանի հարմարավետ

բնակարաններ, տնամերձերը մաքրեցին քարերից և մեծ մասամբ խաղողի այգիներ գցեցին:

Այժմ առանց սխալվելու կարելի է ասել, որ Ռինդը Դարալագյազի գյուղերից և քաղաքներից ամենագեղեցիկն է: Այս գյուղի տները կանաչի մեջ են կառուցվել, առանձին պալատներ են: Դպրոցը, ակումբը, կենցաղային մյուս կառույցները կատարյալ քաղաքատիպ են: Այս լեռների մեջ Ռինդն օազիսի նման շողում է, կարծես մարգարիտ լինի լեռան մատի վրա:

Աղավնաձորի ջրհան կայանից ամենից շատ օգտվեց Աղավնաձոր գյուղը: Դարերի ընթացքում չէր մշակվել Թափեր կոչված հանդամասը: Շատ քարքարոտ լինելու պատճառով հնարավոր չէր նույնիսկ այգի հիմնել: Ստիպված եղանք հատուկ մելիորատիվ ջոկատ կազմել և քարերից մաքրել այդ հողամասը, ապա հիմնել խաղողի այգի:

Մի խոսքով այս ջրհան կայանների կառուցումը ոչ միայն կրկնապատկեց, եռապատկեց գյուղատնտեսական մթերքների արտադրությունը, այլև դարալագյազցին ամրացավ իր տեղում, հողի հետ կապվեց:

Արտաքուստ այս բոլորը կարծես սովորական հարցեր են: Իրականում, սակայն, մեր ժամանակներում գյուղացուն հողի հետ ամուր կապելը, հեռանկար ստեղծելը, ամրացնելն իր բնակավայրում սոցիալական խոշոր հարց է, և այդպիսի հարցերի լուծումը պատիվ է բերում այս լեռներում աշխատող յուրաքանչյուր մարդու:

Եղեգիսի կիրճը՝ Օրբելյանների հանգրվաններից մեկը, այժմ բոլորովին վերափոխվել, վերակառուցվել, դարձել է մի ծաղկուն հանգստավայր: Եղեգնաձորի շրջանի գետահովիտները միշտ էլ օգտագործվել են: Շինականը խնայողաբար է օգտագործել ոռոգման ջուրը, և այդ բարձրադիր լերկ ու այրված լեռներում ու գետահովիտներում միշտ էլ կանաչ շերտեր են երևան եկել:

Նույնը չի կարելի ասել Ազիզբեկովի շրջանի մասին. որտեղ գետերն այդպիսի նշանակալից հովիտներ չունեն, որպեսզի հնարավոր լիներ օգտագործել: Առաջին ջրաշինարարական աշխատանքը սկսվել էր դեռ 1930-ական թվականներին:

Այդ ժամանակ Ազիզբեկովի շրջանում կուսակցության շրջկոմի առաջին քարտուղար էր աշխատում Շմավոն Առուշանյանը: Պետք է ասել, որ շատ լավ աշխատեց: Հասկանալով ոռոգման կարևորությունը, նա սկսեց Սոլյանի ջրանցքի շինարարությունը: 1930-ական թվականների համար դա դժվար շինարարություն էր, մանավանդ որ ժայռերով պետք է անցներ և մի կարճ՝ մինչև 30 մետր, թունել պետք է կառուցվեր:

Ինձ թվում էր, թե՝ դա շատ խոշոր շինարարություն էր, շրջանային թերթում միշտ գրում էինք ու լուսաբանում դրա ընթացքը: Իրականում մի փոքր ջրանցք էր, որը պետք է ոռոգեր հարյուր հեկտար տարածություն:

Այս հողերի վրա հետագայում հիմնվեց Ազիզբեկովի շրջկենտրոնը, որը դարձավ մեր հանրապետության բարեկարգ, գեղեցիկ շրջկենտրոններից մեկը:

Ջրի սակավությունն այստեղ ավելի շատ է զգացվել, քան այլ տեղերում: Գետերն ու առուները հոսում էին խոր անդունդներով, և հնարավոր չի եղել օգտագործել: Ավելին, դեռ անցյալ դարում Նորաշենի կալվածատերը Որոտան գետի ակունքից ջուրը շրջել էր դեպի Արփի գետը և ոռոգում էր Նախիջևանի դաշտավայրը: Այս ջրից իրավունք չունեին օգտվելու Ղուշչիի և Գնդեվազի գյուղացիները: Արխազանը, Որոտանից եկող առուն մինչև 1940-ական թվականներն օգտագործվում էր միայն Նախիջևանի հողերի ոռոգման համար:

Հիշում եմ այսպիսի մի դեպք, 1936 թ. ամռանը շատ երաշտ էր: Աշխատում էի Ազիզբեկովի շրջանում: Ամրացված էի Ղուշչի գյուղին՝ կոլտնտեսությանը օգնելու համար: Առուն անցնում էր դաշտերի միջով, բայց ղուշչեցիները չէին օգտագործում: Դա ինձ շատ զարմացրեց:

Մի երեկո, ժողովի ժամանակ ես երիտասարդական տաքարյունությամբ ելույթ ունեցա և ամոթանք տվեցի գյուղացիներին, առաջին հերթին կոլտնտեսության նախագահ Հուստիկ Մկրտչյանին: Ես կարծում էի գյուտ եմ արել, շատ ուրախացած կոչ արեցի վաղը մեր ու մանուկ դուրս գան և ոռոգեն ցանքերը: Շատ տխրեցի, երբ իմ ելույթից հետո գրեթե բոլոր գյուղացիները սկսեցին ծիծաղել:

Ինձանից հետո ելույթ ունեցավ Հ. Մկրտչյանը և ասաց հետևյալը. «Իրոք, այս գետը հոսում է մեր արտերի միջով, բայց իրավունք չունենք օգտագործելու: Մինչև սովետական իշխանության հաստատվելը ջուրը պատկանում էր Նորաշենի կալվածատեր Շանգիրովին, իսկ նրանից հետո Նորաշենը մշակում է ավելի արժեքավոր կուլտուրա՝ բամբակ և մենք չենք կարող ջրից օգտվել, դա պետք է Նորաշեն հոսի»:

Մի խոսքով ահավոր վիճակ էր: Հետագայում, իհարկե, թույլ տրվեց օգտագործել, բայց սա շատ քիչ էր: 1970-ական թվականների սկզբներին սկսվեց Ազատեկի ջրհան կայանի շինարարությունը, որը ոռոգում է Ազատեկի, Փոռի, Սարիթափի տնտեսությունների հողերը: Նոր ջրհան կայաններ են կառուցվում և կառուցվելու է Հերհերում, Դայլախլայում և մի շարք այլ տնտեսություններում:

Պետք է ասել, որ ջրհան կայանների շինարարության աշխատանքը Ազիզբեկովում ավելի ուշ սկսեցին, քան Եղեգնաձորում: Այս լեռնային շրջանները շատ արևոտ են, ջուր ունենալու դեպքում կարելի է ամեն ինչ աճեցնել, մանավանդ, որ այս շրջանների աշխարհագրական կառուցվածքը, ռելիեֆն այնպիսին են, որ յուրաքանչյուր գյուղ առանձնահատուկ կլիմայական պայմաններ ունի:

Այս շրջաններում, ջրի առկայության դեպքում կարելի է աճեցնել մերձարևադարձային կուլտուրաներ և խաղող, որի գինին, իրոք, աշխարհահռչակ է: Դարալագյազում նոր ջրամբարների (Հեր-Հերի և Դավիոյանի (Ադրբեջանում) կառուցումով վերջնականապես ու արմատապես լուծվեց Դարալագյազի ոռոգման ջրի հարցը:

Նրանք, ովքեր չգիտեն Դարալագյազը, տեսնելով այդ մերկ, սառը կիրճերը և լեռները, առաջին հայացքից սարսափում են: Գեղեցիկ է, շատ յուրահատուկ գեղեցկություն ունի Դարալագյազը, մանավանդ գարնանը, երբ նույնիսկ քարերն են կանաչում: Այստեղ ամեն ինչ քաղցր է՝ պտուղը, կաթնամթերքը: Առաջին հերթին մարդիկ, լեռնցիները, որոնք հերոսներ են, երբ այսպիսի ծանր պայմաններում ապրում ու աշխատում են և ուրիշներից հետ չեն մնում:

Քաջ, համարձակ մարդիկ են լեռնցիները, իսկ ամենից գնահատելին՝ շատ հյուրասեր: Այսպիսի մարդկանց համար, եթե մի փոքր հնարավորություն ստեղծվի, նրանք պատրաստ են սարեր շրջել: Այդպես էլ արվում է. նոր ջրհան կայանների կառուցումը դարալագյազցիների համար կատարյալ հեղափոխություն էր, հուսով ենք, որ այսուհետև նրանք, իրոք, շատ լավ են ապրելու:

Երբ օդանավից դիտում ես Դարալագյազի այրված, խանձված լեռները, անապատի տպավորություն ես ստանում. որտեղ ջուր կա, կանաչ, փարթամ բուսականություն է աճում: Անասելի գեղեցիկ է այս պատկերը: Պատահական չէ, որ մեր նախնիները վիշապներ են պաշտել՝ ջուր ստանալու համար:

Այնպիսի շրջաններ, ինչպիսին Զանգեզուրի շրջաններն են, առանց ոռոգելու չի կարելի կանոնավոր գյուղատնտեսություն վարել: Զանգեզուրում առաջին ջրանցքը կառուցվեց Սիսիանում: Որոտան գետի ջրով կառուցվեց Սպանդարյանի անվան ջրանցքը: Փոքրիկ ջրանցք է, բայց այն ժամանակ դա շատ մեծ կառույց էր, նույնիսկ կարելի էր համարել հսկա:

Սիսիանի շրջանի հողերի ոռոգման հարցը արմատապես լուծվեց Որոտանի կասկադի շինարարությամբ: Այստեղ կառուցվում են Շամբի, Տոլորսի և Սպանդարյանի խոշոր ջրամբարները, որոնք ունեն երկու նպատակ, նախ՝ Որոտանի կասկադի հիդրոէլեկտրակայանների կայուն աշխատանքի ապահովումը, ապա՝ Սիսիանի և մասամբ էլ Գորիսի շրջանի վարելահողերի ոռոգումը:

Արդեն ավարտվել են Շամբի և Տոլորսի ջրամբարների շինարարությունը, որտեղից ջրհան կայանների միջոցով ոռոգվում են շրջակա տնտեսությունների հողերը: Այս միջոցառումն անմիջապես փոխեց Սիսիանի տնտեսական դրությունը:

Մեր հանրապետության շրջաններից ամենաշատ հող ունի Սիսիանը: Եթե բոլոր հողերը ոռոգվեն, կարելի է այստեղ բնակեցնել մինչև 100 հազար մարդ և ապահովել բարեկեցիկ կյանքով: Կլիմայական հիանալի պայմանները, տրանսպորտային կապի բարելավումը հնարավորություն կտան Սիսիանում, Սյու-

նիրում ավելի շատ բնակչություն ունենալ:

Սիսիանից ժամանակին շատ մարդիկ տեղափոխվեցին, իսկ որտեղ կային խելացի, հայրենասեր, գեկավար մարդիկ, այդ գյուղերից գրեթե ոչ ոք չհեռացավ: Բոնակոթը չի փոփոխվել, որովհետև երկար տարիներ կոլտնտեսության նախագահ աշխատեց քչախոս, ինչպես գյուղում նրան անվանում էին, Եղիշեն, Շաքիում՝ Ա. Խաչատրյանը, Վաղուդիում՝ Ազոյանը: Քանի Սամոն գտնվում էր Բորիսովկայում, ոչ ոք չէր հեռանում, նրա տեղափոխվելուց հետո պատկերը, դժբախտաբար, փոխվեց, գյուղից շատերը հեռացան: Նրանք տաղանդավոր կազմակերպիչներ էին, լավ հայրենասերներ և որ ամենակարևորն է, մեծ վստահություն էին վայելում մարդկանց, հասարակության շրջանում:

(Այստեղ ձեռագիրն ընդհատվում է – խմբ.):

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳԻՐՔ

ԱՆԱՍՏԱՍ ՄԻԿՈՅԱՆԻ ՄԱՍԻՆ

1982 թ., նոյեմբեր

Թոշակի անցնելուց հետո, երբ ավելի եմ շփվում շարքային մարդկանց հետ, շատ ավելորդ, անտեղյակ խոսակցություններ եմ լսում Անաստաս Միկոյանի հասցեին: Այս հանգամանքն ինձ ստիպեց գրել նրա հետ իմ հանդիպումների մասին և, որ ամենակարևորն է, պարզաբանել այն հարցերը, որոնց շուրջը խոսակցություններ եմ լսել, որոշ չափով վերջ տալ թյուրիմացություններին:

Առաջին անգամ Ա. Միկոյանի հետ անմիջական հանդիպում եմ ունեցել 1950 թվականին, երբ նա եկել էր Երևան՝ իր ընտրողների հետ հանդիպում ունենալու:

Մինչ այդ հանդիպումը, աշխատում էի Հայաստանի Կոմերիտմիության Կենտկոմի քարտուղար, շատ հաճախ շաբաթօրյակներ էինք կազմակերպում՝ Երևանի շուրջը կանաչապատելու, անտառատունկ անելու:

Կուսակցության Կենտրոնական կոմիտեի առաջին քարտուղար, շատ հարգելի Գրիգոր Հարությունովը պատմում էր, թե ինչպես մեր նախնիները ջրանցքներ և ջրամբարներ են կառուցել, ոռոգել և կանաչապատել քաղաքներն ու գյուղերը, ամոթ է որ մեր սերունդը այսպիսի անբարեկարգ մայրաքաղաք է պահում:

Այսօր Հաղթանակի զբոսայգին մեր քաղաքի բարեկարգ և հաճելի զբոսայգիներից է, որտեղ կառուցվել էր Ստալինի արձանը, իսկ այժմ՝ Մայր Հայաստանը խորհրդանշող կնոջ արձանը, անհայտ զինվորի հավերժական կրակը: Մի խոսքով,

երևանցիների հանգստի վայրը, որտեղ մի ժամանակ մերկ և անմատչելի ապառաժներ էին:

Գրիգոր Հարությունովը միշտ կրկնում էր, որ այդ անտառի հիմնումն Անաստաս Միկոյանի պահանջով է եղել: Երբ նա Երևան էր եկել՝ Հարությունովին քարտուղար ընտրելու, ամոթանք էր տվել, թե ինչու քաղաքն այսքան կեղտոտ ու փոչոտ է, որ անհրաժեշտ է քաղաքի չուրջն անտառապատել, հոգ տանել քաղաքի կանաչապատման մասին:

Երևանի չուրջը կանաչ գոտի ստեղծելու գաղափարը Միկոյանի մոտ առաջացել էր այն ժամանակ, երբ ՀԿԿ Կենտկոմի պլենումից հետո կուսակցության Կենտրոնական կոմիտեի առաջին քարտուղար էին ընտրել Գրիգոր Հարությունովին: Պլենումի առիթով երեկոյան ժամը 6-ին Երևանի Լենինի հրապարակում տեղի ունեցած աշխատավորների բազմամարդ միտինգում ելույթ ունեցավ Միկոյանը: Նա հաղորդեց Կենտկոմի պլենումի արդյունքների մասին:

Միտինգի ժամանակ, ինչպես շատ հաճախ էր պատահում Երևանում, ուժեղ քամի սկսվեց, ուղղակի փոթորիկ, փոչու ամպը բարձրացավ հրապարակի վրա, մարդիկ գրեթե իրար չէին տեսնում, ամեն ինչ ալեկոծվեց, տախտակներից պատրաստված տրիբունան տեղից հրվեց և քանդվում էր:

Այդ ժամանակ Միկոյանին մի կերպ ժողովրդի միջից դուրս բերեցին և տարան կառավարական տուն, որի պատշգամբից նա շարունակեց իր ելույթը: Այս անգամ նրա ճառի թեման փոխվեց: Պլենումի արդյունքների փոխարեն Միկոյանը սկսեց խոսել Երևանի չուրջը կանաչ գոտիներ ստեղծելու և քաղաքը բարեկարգելու մասին:

Ամեն անգամ Անաստաս Միկոյանի Երևան, Հայաստան գալն իսկական տոն էր, կատարյալ ցնծություն: Այն ժամանակ գալիս էր գնացքով և դիմավորումը տեղի էր ունենում երկաթուղու կայարանում կամ ժամանում էր Թբիլիսի և այնտեղից գալիս ավտոմեքենայով:

Երևանի երկաթգծի կայարանում հավաքվել էր մեծ բազմություն: Դիմավորելու էի գնացել նաև ես՝ որպես կուսակցության Կենտրոնական Կոմիտեի քարտուղար:

Այս անգամ Ա. Միկոյանը եկել էր շատ կարճ ժամանակով, եթե չեմ սխալվում, ընդամենը 3 օրով: Կայարանից Գրիգոր Հարությունովի հետ միասին գնացին տուն և գրեթե անմիջապես մեկնեցին քաղաքը նայելու: Պարզ է, որ Հարությունովը ցույց էր տալիս քաղաքում կատարված աշխատանքը, լսում Միկոյանի դիտողությունները և խորհուրդները:

Հաջորդ օրը տեղի ունեցավ կուսակցության Կենտրոնական Կոմիտեի բյուրոյի նիստ, ուր Միկոյանն իր դիտողություններն արեց քաղաքաշինության հարցերի վերաբերյալ:

Պետք է ասել, որ բավական գոհ էր Հայրենական պատերազմից հետո կատարված աշխատանքից: Այս նիստում էր, որ շատ լուրջ խնդիր դրվեց Զանգվի ձորի բարեկարգման մասին: Զմոռանամ ասել, որ Միկոյանը ոտքով զբոսնեց Ծիծեռնակաբերդում, Զանգվի ձորում, արահետներով իջավ կամուրջի տակ և շատ հավանեց այդ ձորը՝ հանգստի վայր դարձնելու համար: Այդ ժամանակ էր, որ խորհուրդներ էր տալիս Երևանի մեխանիկական աճի դանդաղեցման մասին: Մի շարք խորհուրդներ տվեց արդյունաբերության հետագա զարգացման վերաբերյալ:

Այդ ժամանակից սկսվեց Զանգվի ձորի բարեկարգման աշխատանքը՝ հենապատերի, երկկողմանի ճանապարհների կառուցումը և, վերջապես, Երևանի էլեկտրակայանի շահագործումից հետո ջրավազանների կառուցումը Քանաքեռ ՀԷԿ-ից մինչև մանկական երկաթգիծ: Այս չքնաղ ձորի բարեկարգումը և մարդաշատ դարձնելու արդյունքը հետագայում եղավ «Հրազդանի» մարզադաշտի և սպորտհամալիրների կառուցումը:

Բարեկարգվեց, ծառապատվեց Ծիծեռնակաբերդ կոչվող բլուրը: Այստեղ հետագայում կառուցվեց Եղեռնի հոյակապ հուշարձանը, որին այցելում են ոչ միայն մեր երկրի, այլև շատ և շատ երկրներից Երևան ժամանող զբոսաշրջիկները: Այս բարձունքի վրա են կառուցվում մարզական պալատը և մի շարք սպորտային հրապարակներ: Հիրավի, նախկին Ծիծեռնակաբերդի ապառաժները վերացվել և կանաչապատվել են երևանցիների ջանքերով:

Ավելորդ չհամարեմ ասել, որ Երևանի շուրջը կանաչապատելու հարցերով անմիջապես զբաղվում էին կուսակցության քաղաքային կոմիտեն, շրջկոմները և, իհարկե, քաղաքային սովետը, որտեղ մեծ եռանդով աշխատում էին Սանասար Ղալեչյանը, ապա Լևոն Հովսեփյանը:

Մի անգամ Հանրապետության ղեկավարության նեղ շրջանակում Միկոյանը շատ մեծ գոհունակություն հայտնեց Երևան քաղաքի շուրջը անտառաշերտ ստեղծելու համար և գտավ, որ ոռոգելի հողերի ընդլայնման հետ միասին պետք է հոգ տանել ձորերում պտղատու այգիներ հիմնել ու առանձնապես ընկուզենիների ծառաստան ստեղծելու մասին:

Անաստաս Միկոյանը, չնայած շատ անգամներ է եկել Հայաստան, սակայն շատ շրջաններում չէր եղել, և դժվար էր նրան համոզել, թե որտեղ, որ շրջաններում է կարելի ընկուզենի աճեցնել, քանի որ բազմաթիվ անգամ էր անցել Իջևանի ձորով, և վստահ պատմում էր, որ խճուղու շուրջը ընկուզենիներ տնկեն:

Հիսունական թվականներին Ուզունթալայից սկսած սկսվեց խճուղու երկու կողմերում ընկուզենիների տնկումը, որոնք, իրոք, զարդարում են մայրուղու այդ հատվածը: Պետք է ափսոսալ, որ նախատեսվածը մինչև վերջ չկատարվեց, բայց համոզված եմ, որ այդ, իրոք, լավ, բարի նախաձեռնությունը հետագայում կհասցվի իր իսկական ծաղկմանը:

Աղստև գետի կիրճը, իրոք, շատ գեղեցիկ է, նոր տնկիները խելացի տեղադրելու պարագայում այն ավելի կգեղեցկանա, մանավանդ, երբ արդեն ավարտին է մոտենում Աղստև-Երևան երկաթգծի կառուցումը մինչև Դիլիջանի հատվածը, հետագայում՝ մինչև Երևան:

Քանի որ խոսք եղավ Իջևանի մասին, ավելորդ չեմ համարում Միկոյանի կարծիքն ասել մեր Հանրապետության այդ սահմանամերձ փոքրիկ քաղաքի մասին:

1952 թ. նոր էի նշանակվել Հայաստանի Մինիստրների սովետի նախագահ: Կենտկոմի առաջին քարտուղար Գ. Հարությունովն ինձ գործուղեց Մոսկվա՝ ծանոթանալու միութենական մինիստրությունների և, մասնավորապես, Միկոյանի հետ: Իմ

կարծիքով Միկոյանն ինքն էր պահանջել՝ ինձ գործուղել Մոսկվա: Մեր առաջին հանդիպումն ինձ համար մեծ դաս էր և լուրջ նշանակություն ունեցավ կառավարության աշխատանքը բարելավելու գործում:

Նախ՝ Միկոյանը հարցազրույցի միջոցով ցանկացավ իմանալ, թե որքանով եմ տեղյակ Հանրապետության գործերին: Ընդունելությանը մասնակցում էր Միկոյանի օգնական Բարաբանովը, որը գրեթե սղագրում էր խոսակցությունը, հատկապես ժողովրդական տնտեսության վերաբերյալ թվական տվյալները:

Քանի որ դրանց մեծ մասը հեշտությամբ էի ասում, Բարաբանովը գրանցում էր և, ինչպես ինձ հետո հայտնի դարձավ, դրանք հետագայում ստուգել էին՝ համեմատելով պաշտոնական տվյալների հետ և հաջորդ օրը, նորից հանդիպման ժամանակ խոսեցին մի քանի ուղղումների մասին, որոնց վերաբերյալ իմ բացատրությունները լսելուց հետո ճշտվեցին: Այդ թվերը տարվա ընթացքում փոփոխության էին ենթարկվել, իսկ ես ասել էի փոփոխված թվերը, իրենք ստուգել էին տարեսկզբի տվյալներով:

Երկրորդ օրը կրկին ընդունեց ընկեր Միկոյանը, և որքան հասկացա վերաբերմունքից, գոհ էր իմ՝ տնտեսությունից տեղյակ լինելուց: Մեր զրույցը վերաբերում էր առանձին շրջանների զարգացմանը: Միկոյանը, ինչպես ասացի, առանձնակի ուշադրություն հրավիրեց Իջևանի զարգացման վրա:

Իջևանը Հանրապետության մուտքն է: Հիանալի կլիմայական պայմանները, գեղեցիկ բնությունը թելադրում են, որ Իջևանը բարեկարգ քաղաք դառնա: Վերջապես, պատմականորեն Իջևանն իր ուրույն տեղն ունի:

Այստեղ ծանր արդյունաբերության համար հնարավորությունները սահմանափակ են, մանավանդ՝ դեռևս վճռված չէր երկաթուղու կառուցման հարցը: Այս պայմաններում ամենալավ միջոցը թեթև արդյունաբերության զարգացումն է և առաջնեկը եղավ գորգագործական գործարանի կառուցումը:

Երկար ժամանակ հնարավորություն չէր ստեղծվում Գեր-

մանիայից սարքավորումներ գնել, հատկապես, երբ մի շարք հանրապետություններ միաժամանակ պահանջ էին ներկայացրել այդպիսի գործարանի կառուցման համար:

Մոսկվայում գտնվելու ժամանակ այցելեցի այն ժամանակվա Մինիստրների Խորհրդի նախագահի առաջին տեղակալ Ալեքսեյ Կոսիգինին, որը պետք է մեկներ Գերմանիա՝ որպես պատվիրակության ղեկավար: Իմ խնդիրներից մեկը գորգագործարանի հարցն էր: Կոսիգինը լսելով խնդրանքս, ասաց. «Ձեմ խոստանում դրականապես լուծել, բայց Գառնիկ Դարբինյանին ուղարկեք մեր պատվիրակության հետ, եթե հնարավորություն եղավ, նա Գերմանիայում կձևակերպի սարքավորումների առաքումը»:

Պետք է ասել, որ Կոսիգինը չատ էր հարգում այն ժամանակվա թեթև արդյունաբերության մինիստր Գառնիկ Դարբինյանին: Վերջինս Գերմանիայում պայմանագրեր կնքեց սարքավորումների ստացման համար: Նախքան Դարբինյանի Գերմանիա մեկնելը Հայաստանի կուսակցության Կենտկոմի առաջին քարտուղար Սուրեն Թովմասյանի հետ համաձայնեցրել էինք, որ գործարանը տեղադրվի Իջևանում: Երբ արդեն հարցը դրականապես լուծվել էր, Թովմասյանն առաջարկեց Իջևանի փոխարեն ընտրել Սևանը:

Երկար վիճաբանություններից և Միկոյանի միջամտությունից հետո որոշվեց գործարանը կառուցել Իջևան քաղաքում, որը համարվում է մեր հանրապետության առաջավոր ձեռնարկություններից մեկը: Առհասարակ այդ տարիներին Իջևանը վերակառուցվեց, բարեկարգվեց, ստեղծվեցին չատ գործարաններ, գեղեցիկ բնակելի տներ ու հյուրանոց, կենցաղային սպասարկման չատ օբյեկտներ:

Հիրավի, Իջևանը մեր հանրապետության գողտրիկ ու փոքր քաղաքներից մեկն է, մանավանդ երբ երկաթգիծը կառուցվեց, զարգացման հնարավորություններն ավելի ընդլայնվեցին: Բենտոնիտի գործարանի գործարկումից հետո Իջևանը հայտնի դարձավ Սովետական Միության չատ քաղաքներում:

Իջևանի բարեկարգման գործում մեծ ծառայություն ունի այն

ժամանակվա հանրապետության կոմունալ տնտեսության մինիստր Նունիկ Թուխիկյանը:

1960-ական թվականներին, երբ Միկոյանը պետք է ժամաներ հանդիպելու իր ընտրողների հետ, ցանկություն հայտնեց Թբիլիսիից մեքենայով գալ Երևան: Ընդունված կարգի համաձայն՝ նրան դիմավորեցինք Վրաստանի և Ադրբեջանի սահմանում:

Վրաստանի ղեկավարները Միկոյանին ուղեկցում էին բարձր մակարդակով: Հանրապետության սահմանագլխին կանգնեցինք, նրան ծանոթացրի խաղողագործության զարգացման մեր պլանների հետ: Այդ ժամանակ նոր էինք սկսել թեք լանջերի իրացումը, հիրավի, մեծ աշխատանք էր կատարվում: Իջևանի աշխատավորները հերոսական աշխատանք էին կատարում դարավանդների վրա:

Ավելորդ չէ ասել, որ Իջևանի շրջանում խաղողագործության զարգացման գործում մեծ ծառայություն ունի կուսակցության Իջևանի շրջկոմի նախկին քարտուղար Վլադիմիր Ղալումյանը: Երբ մոտեցանք քաղաքին, Միկոյանն ասաց, որ չատ մեծ փոփոխություններ են կատարվել և իր տեսած Քարվանսարան չէ: Որքան ես կռահում էի, Միկոյանը չատ գոհ մնաց Իջևանից:

Միկոյանը նույն տպավորությունը չստացավ Դիլիջանից: Նա Դիլիջանում եղել էր չատ վաղուց և լավ հիշում էր ամեն ինչ: Այս անգամ նա նշեց, որ փոփոխություն գրեթե չի կատարվել: Ռադիոտեխնիկական գործարանի շինարարությունը ավարտված չէր: Քաղաքում չատ անգործներ կային: Նոր կառույցներ գրեթե չկային: Իրականում Դիլիջանի զարգացմանը մեծ ուշադրություն դարձվեց 1965 թվականից հետո:

Դիլիջանի բարեկարգման, կառուցման գործը չատ արագ կատարվեց, որովհետև նրա բարեկարգման և կառուցման գործին մասնակցություն ունեցան հանրապետության մինիստրությունները, գերատեսչությունները: Դիլիջանը, իրոք, դարձել է հանրապետության գեղեցիկ ու բարեկարգ առողջարաններից մեկը, մանավանդ, երբ ավարտվի երկաթգծի և Սևանի լեռնանցքում խճուղային թունելների կառուցումը:

Դիլիջանը կստանա նոր հնչեղություն, ավելի մատչելի կդառնա աշխատավորական լայն մասսաներին: Ժամանակին՝ քսանական թվականներին, երբ մեծ գրող Մաքսիմ Գորկին անցել էր Դիլիջանով, իր հիացմունքն էր հայտնել այդտեղի բնության վերաբերյալ: Հիրավի, նրա կլիմայական պայմանները անկրկնելի են մարդու առողջության համար: Պատահական չէ, որ կոմպոզիտորների հանգստյան տունն ամբողջ տարին գործում է լրիվ ծանրաբեռնվածությամբ: Այստեղ հանգստանալու են գալիս մեր երկրի բոլոր ծայրերից, ավելին, աշխարհի շատ երաժիշտներ և երաժշտագետներ:

Այս հանգստի գեղեցիկ անկյան կառուցման մեծ ծառայությունը պատկանում է կոմպոզիտորների միության գրեթե անփոփոխ նախագահ, հիանալի կոմպոզիտոր Էդվարդ Միրզոյանին և իր հավատարիմ օգնական Բարկեն Սոսյանին:

Մեր կարծիքով, Դիլիջանը զարգացման նոր թափ կստանա երկաթգծի կառուցումից հետո, որն արդեն կարծես իր ավարտին է հասնում: Անչափ ուրախ պիտի լինել, որ մեր հանրապետության ամենագեղեցիկ անկյուններից մեկը դառնում է ավելի մատչելի և հասանելի բոլորին:

Քանի որ մեր խոսակցությունը Միկոյանի մասին է, կարծում եմ կարելի է ասել, թե ինչով վերջացավ Թբիլիսիից-Երևան ուղևորությունը: Դիլիջանից հետո շատ հետաքրքիր զրույց տեղի ունեցավ Սևանա լճի ափին: Ես պատմեցի, որ երբ Խրուշչովը եկել էր Երևան տոնակատարությանը մասնակցելու համար, նրան ուղեցեցինք Սևան, մանավանդ, որ Սևանի պրոբլեմի հետ կապված լուծելու շատ հարցեր կային: Ես պատմեցի նաև, որ Խրուշչովը չէր ցանկանում Սևանում հյուրասիրվել, ինչպես մենք ենք ասում. «մի կտոր հաց ուտել»: Հրաժարվելու պատճառն այն էր, որ այն ժամանակ հարմար տեղ չունեինք հյուրասիրության համար:

Վերջին հնարավորությունը Միկոյանի անվան հին նավի վրա ճաշի կազմակերպումն էր: Երբ Կենտկոմի քարտուղար Զարոբյանն ասաց, որ հրավիրում ենք նավի վրա հյուրասիրության, Խրուշչովը սարսափելի զայրացավ, թե այդպիսի գեղեցիկ լճի

ափին ինչու հանգստի տներ, ռեստորաններ, առողջարաններ չկան:

Ասացին, որ Խրուշչովն ինձ կանչում է. երբ ես արդեն նավի վրա էի: Մոտեցա նրան և ասացի. «Լսում եմ Ձեզ, ընկ. Խրուշչով»: Բավական է, եթե ասեմ, որ լսեցի գրեթե փողոցային հայհոյանք, թե ինչու մինչև հիմա Սևանի շուրջը չեն կառուցվել համապատասխան առողջարաններ: «Ես,- ասաց նա,- «Միկոյան» նավի վրա հաց չեմ կտրելու»:

Պետք է ասեմ, որ Ն. Խրուշչովին համոզեցինք և նա հյուրասիրվեց հիշյալ նավում: Կարելի է ասել՝ անմոռանալի օր էր:

Այս պատմությունը լսելուց հետո Ա. Միկոյանն ասաց, որ տեղյակ է այդ միջադեպին, իրեն պատմել է Խրուշչովը, և ինքը համամիտ է նրա հետ: Միկոյանի խորհրդով լճի ափը բաժանեցինք տարբեր գերատեսչությունների, մինիստրությունների, որոնք արագ թափով սկսեցին շինարարությունը: Ամենից շուտ շինարարություն սկսեցին արհմիությունները և «Ինտուրիստը»:

Այժմ գեղեցիկ Սևանը լույսի մարգարիտներով է երիզվում: Ամենուրեք ռեստորաններ, հանգստյան տներ և մանկական առողջարաններ: Կասկածից վեր է, որ որքան գնա, Սևանն այնքան մատչելի կդառնա աշխատավորությանը, ավելի լավ կօգտագործեն, կդարձնեն իսկական հանգստավայր:

Սևանա լճի ափի հետ միասին իր արագընթաց վերելքն ապրեց նաև քաղաքը՝ նախկին Ելենովկան: Միկոյանը գտնում էր, որ Սևան քաղաքը պետք է զարգացնել ավելի շատ առողջարանների սպասարկման նպատակով, բայց քանի որ գյուղատնտեսության զարգացման համար չկան հեռանկարներ, ապա անհրաժեշտ կլինի արդյունաբերական որոշ ձեռնարկություններ կառուցել, հատկապես էլեկտրատեխնիկական կամ ռադիոէլեկտրոնիկայի, մի խոսքով այնպիսի ձեռնարկություններ, որոնք կեղտոտ թափոններ չունենան:

Թբիլիսիից Երևան ճանապարհորդության ընթացքում ստացվեց այնպես, որ Սևանից Երևան գալու ժամանակ արդեն մութ էր և ոչինչ չէր երևում: Իրականում Սևան-Երևան ընկած բնակավայրերը դեռ լրիվ լուսավորված չէին: Հայտնի է, որ գյուղե-

րի մեծ մասը գետնափոր տներ էին, և այս պատկերն իրականում չատ վատ տպավորություն էր թողել: Այդ ժամանակ դեռ չէր ավարտվել Հրազդանի կոմբինատը: Հրազդան քաղաքը կատարյալ հետամնաց գյուղի տպավորություն էր թողում:

Մյուս օրը, երբ հավաքվեցինք նախաճաշելու, զրույցի առաջին թեման եղավ Հրազդանի շրջանի զարգացումը: Միկոյանը գտնում էր, որ Երևանից Սևան պետք է կառուցել փոքրիկ քաղաքներ, այսինքն՝ Երևանի արբանյակներ:

Այսօր կարելի է ասել, որ Միկոյանի ցանկությունները լրիվ իրականացվել են: Կառուցվեցին մի չարք, իրոք, զողտրիկ քաղաքներ ու բնակավայրեր, որոնք հետագա զարգացման հիանալի հեռանկարներ ունեն: Արովյանը, Նոր Հաճընը, Զարենցավանը, Արզնին՝ մեր պատմական բերդաքաղաքը, որ դարձել է հանրապետությունում ապակետարաների և բյուրեղապակու արտադրության կենտրոն, Հրազդանը, Գագարին ավանը, վերջապես Սևան քաղաքը և այլն: Այժմ ուղևորը Երևան-Սևան գնալու ժամանակ տեսնում է նախկին մթի ու մղձավանջի փոխարեն իսկական լույսերով հեղեղված ծով:

Տրանսպորտի զարգացման ներկա պայմաններում վերը նշված քաղաքներում աշխատելն ավելի լավ է լինելու, քան մեծ քաղաքում՝ Երևանում: Այդ քաղաքներում կլիմայական պայմանները միանգամայն ընդունելի են, օդը՝ մաքուր: Վերջապես, ձեռնարկությունները նոր տեխնիկայով հագեցած են:

50-ական թվականներին նոր էր ավարտվել Արզնի-Շամիրամ ջրանցքի առաջին հերթի շինարարությունը: Բնական է, դարերի երազանքն Եղվարդի հարթավայրը ոռոգելն էր, կատարյալ անապատը փոխարինվեր այգիներով, կանաչապատ գոտիներով:

Այդ օրերին գործով Մոսկվա էի գնացել, ինչպես միշտ, այս անգամ էլ հայտնեցի Միկոյանի քարտուղարությանը, որ Մոսկվայում եմ և ցանկանում եմ հանդիպել նրան: Կարճ ժամանակ անց քարտուղարությունից օգնական Բարաբանովը հայտնեց, որ Միկոյանը հրավիրում է Կրեմլ: Կես ժամից արդեն Միկոյանի ընդունարանում էի. անմիջապես ընդունեց:

Մեր զրույցը, սովորականի պես այս անգամ էլ վերաբերում էր հանրապետությանը: Առանձնապես հետաքրքրվում էր նորություններով: Զարմանալի հիշողություն ուներ, հարցասեր էր, բոլոր տվյալներն անգիր հիշում էր: Այդ պատճառով էլ նրան զեկուցելու ժամանակ միշտ պետք է լավ իմանալ թվական տվյալները, փոքր սխալն անգամ ուղղում էր: Բոլոր հարցերից բացի՝ ես մեծ ոգևորությամբ պատմեցի Արզնի-Շամիրամ ջրանցքի առաջին հերթի շինարարության ավարտի, ապագա այգիներ հիմնելու մասին:

Կարծում եմ, իմ ոգևորությունը լուրջ տպավորություն էր թողել Միկոյանի վրա: Նա սկսեց ավելի մանրամասն հետաքրքրվել, թե ինչ այգիներ ենք ուզում տնկել այդ՝ դարերով չմշակված, քարքարոտ անապատում: Ինձ հետ ունեի ջրանցքի շրջակա հողերի քարտեզը և մանրամասն մշակված այգիների տեսակները: Միկոյանը հավանություն տվեց այս բոլորին, և երբ ասացի, որ եթե հաջորդ անգամ ժամանի Հայաստան, Երևանից Աշտարակ ճանապարհն արդեն կանաչապատված կտեսնի:

Միկոյանը հեգնելով ասաց. «ճիշտ է, վերջին ժամանակներս հանրապետության մամուլում չատ տարածված բառեր են շոչափվում, «հսկայական», «համաշխարհային ճանաչում» և այլն: Դուք չե՞ք գտնում, որ սկսել եք պարծենալ, փոքր հաջողությունները հսկայական եք համարում, մի փոքր կառույցի ավարտը համաշխարհային եք կոչում»:

Մինչև կյանքի վերջ Միկոյանն ինձ դիմում էր դուք-ով: Մի անգամ ասացի. «Անաստաս Իվանովիչ, որքանո՞վ է հարմար Ձեզանից և՛ տարիքով, և՛ ամեն ինչով փոքր մարդուն դուք-ով եք դիմում»: Անաստասը ժպտալով ասաց. «Երբ Ձեզ Հայաստանի Մինիստրների խորհրդի նախագահությունից ազատեն, խոստանում եմ՝ դիմել դու-ով»:

Իսկ Երևանից Աշտարակ այգիներ հիմնելու մասին փոքր-ինչ հեգնանքով կրկին ասաց. «Որոշ չափազանցություններ եմ նկատում, ես այդ տարածքները լավ գիտեմ: 20-ական թվականներին ոտքով մի անգամ չէ, որ գնացել եմ, կատարյալ անապատներ են: Դրանք յուրացնելու համար երկար ժամանակ

է պետք, տեխնիկա, որը դեռ չի բավարարում, իսկ ամենից կարևորը միջոցներն են, որ այժմ շատ դժվար է հատկացնել»:

Իրոք, ամենավճռականը միջոցների հարցն էր, որի համար էլ ես ընդունելություն էի խնդրել՝ խորհրդակցելու նպատակով, մանավանդ դեռ անփորձ էի այդ հարցերում:

– Անաստաս Իվանովիչ, ես ձեզ մոտ եմ եկել խորհուրդ հարցնելու,– ասացի ես և շարունակեցի,– բոլոր դժվարությունները կարելի է հաղթահարել, եթե միջոցների հարցը լուծվի, և խոստանում եմ Ձեր հաջորդ այցելության ժամանակ ցույց տալ նոր այգիները Երևանից Աչտարակ ճանապարհին: Հավատացեք, պարծենալու բան չկա:

Պետք է ասեմ, որ Արզնի-Շամիրամ ջրանցքի առաջին հերթի հատվածի հողերի իրացման համար արդեն որոշ աշխատանք կատարվել էր Եղվարդի, Աչտարակի, Գետամեջի, Քանաքեռի, Ճատղռանի կոլտնտեսությունների կողմից: Համեմատաբար մատչելի հողերում այգիների համար տեղ էր պատրաստված, բայց տնկումներ կատարելու և հողաշինարարական աշխատանքի համար կոլտնտեսությունները, իրոք, միջոցներ չունեին և աշխատանքը դադարացվել էր:

1950-ական թվականներին Միության անտառարդյունաբերության մինիստրն էր Վ. Ա. Զոտովը: Միկոյանը զանգահարեց նրան և ասաց.

–Հայաստանում ավարտվել է մի նոր ջրանցքի կառուցում՝ մոտ 10.000 հեկտար հողատարածության վրա հնարավոր է այգիներ հիմնել ինչպես խաղողի, այնպես էլ պտղատու, որը շատ կարևոր է անտառարդյունաբերության համար:

Զոտովը վաղուց տեղյակ էր. ես արդեն դիմել էի նրան: Նա մարդ էր ուղարկել տեղում հարցն ուսումնասիրելու, և գրեթե բացասական կարծիք էին ներկայացրել ֆինանսավորման համար:

Զոտովը Միկոյանին ասաց, որ ինքը տեղյակ է, այդ հողերը շատ քարքարոտ են և շատ դժվար է դրանց մշակումը: Իսկ հանրապետությունը մեծ գումարներ է պահանջում:

Միկոյանը պատասխանեց, ասելով, որ Հայաստանում առանց քարի հող չկա, բայց աճեցրած պտուղը բոլորից համովն է: Դա պատճառաբանություն չէ, քարեր հավաքողները և յուրացնողները իրենք են՝ հանրապետության աշխատավորները, որոնց համար դա նորություն չէ:

Պայմանավորվածության համաձայն ես եղա Զոտովի մոտ: Այս անգամ մեր զրույցը տեղի ունեցավ միանգամայն փոխված տրամադրության պայմաններում: Հրավիրեց հանձնաժողովի անդամներին և կտրուկ ասաց, որ պետք է ֆինանսավորել ջրանցքի տարածքում գտնվող հողերի յուրացումը: Հանձնաժողովի անդամները նոր պատճառաբանություններ բերեցին, որ պետական միջոցներից չեն կարող տալ կոլտնտեսություններին:

Այս արգելքը վերացնելու նպատակով վերոհիշյալ տարածքների վրա կազմակերպեցինք հինգ նոր սովխոզ: Սովխոզների կազմակերպումից հետո Միութենական մինիստրությունը հատկացրեց մեր պահանջած գումարը: Դա հնարավորություն տվեց արագացնել այդ հողերի յուրացումը: Կազմակերպեցինք Զովունու, Աչտարակի, Պառչյանի, Նոր Հաճընի և մի շարք ուրիշ սովխոզներ:

Չորս տարի անց՝ 1960-ական թվականների սկզբին Միկոյանը նորից եկավ Երևան՝ իր ընտրողների հետ հանդիպելու նպատակով:

Չէր մոռացել, որ խոստացել էի իր հաջորդ գալու ժամանակ Երևանից Աչտարակ տարածքում այգիներ կամ կանաչապատված կլինեն: Գուցե հենց այդ էր պատճառը, որ օդանավից իջնելուց հետո ավտոմեքենայի մեջ դիմեց ինձ, թե «չե՞ք ցանկանում գնանք Աչտարակ, հետո նոր՝ Երևան»: Մեր խնդրանքով նա համաձայնվեց գալ Երևան, ապա՝ Աչտարակ:

Բանն այն է, որ օդանավակայանից մինչև Երևան հավաքված աշխատավորների ներկայացուցիչները ցնծությամբ էին նրան դիմավորում: Միայն այդ հանգամանքը նկատի ունենալով, պետք է գար իր համար առանձնացված հյուրանոցը, ապա՝ կազմված ծրագրով ծանոթանար հանրապետության գործերի հետ:

Մի շարք միջոցառումներից հետո հաջորդ օրը նորից հիշեց-

րեց Աչտարակի մասին: Աչտարակ գնացինք Արզնիով, նա ծանոթացավ Արզնիի նոր առողջարանին, Նոր Հաճընի սովխոզ-տեխնիկումի, Նոր Գեղիի տնտեսությունների և բնակավայրերի հետ:

Աչտարակից գնացինք Բյուրականի աշխարհահռչակ աստղադիտարան, որտեղ աշխատողները ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի ղեկավարությամբ ջերմ ընդունելություն ցույց տվեցին:

Բյուրականից Երևան վերադառնալիս Միկոյանը մանրամասն դիտեց և ծանոթացավ Աչտարակի, Պառչյանի, Զովունու սովխոզների այգիներին: Պետք է ասել, որ շատ էր զարմացել. այդ ապառաժները մի քանի տարվա ընթացքում վերածվել էին ծաղկուն խաղողի և պտղատու այգիների:

Հենց այս ժամանակ էր, որ Միկոյանի առաջ դրվեց Արզնի-Շամիրամ ջրանցքի երկրորդ հերթի կառուցման հարցը: Չմոռանամ ասել, որ ջրանցքի առաջին հերթի կառուցումից հետո Միության Պետպլանը, փաստորեն, հանել էր շինարարության ֆինանսավորումը: Մի խոսքով, մեծ վտանգ էր սպառնում շինարարությանը:

Այս բոլորից հետո հանրապետության ղեկավարությունը խնդրում էր Միկոյանի օգնությունը՝ ջրանցքի շինարարությունը շարունակելու համար: Այս հարցում շատ արագ և կոնկրետ օգնություն ցուցաբերվեց: Հիանալի ջրանցքը կառուցվեց և շուրջ 30.000 հեկտար խոպան, քարքարոտ հողերը դարձան ոռոգելի և այժմ հանրապետության լավագույն խաղողի և պտղատու այգիներ են տնկվել:

Մոսկվա մեկնելուց առաջ Միկոյանն իր խոր բավականությունը հայտնեց հանրապետությունում կատարված աշխատանքների համար:

Միկոյանը Զանգեզուրում և Դարալագյազում:

Ա. Միկոյանը ծնվել է Լոռվա Սանահին գյուղում, որը մեր ժողովրդի պատմության մեջ իր ուրույն տեղն ունի, մասնավորապես միջնադարում կարևոր դեր է խաղացել հայ մշակույթի

զարգացման գործում: Պատահական չէ, որ Սանահինի վանքի բակում են թաղվել Զաքարյանները և շատ ուրիշ իշխաններ ու իշխանուհիներ:

Ա. Միկոյանը Հայաստանի հետ միշտ կապված է եղել՝ սովորելով Թբիլիսիի Ներսիսյան դպրոցում, այնուհետև էջմիածնում: 1920-ական թվականներին 11-րդ բանակի հետ Հայաստան գալով, նրան չէր վիճակվել տեսնել Զանգեզուրն ու Դարալագյազը:

Որքան հիշում եմ, նույնիսկ Գրիգոր Հարությունովի ժամանակ էլ, նա միշտ ցանկություն էր հայտնել գնալ մեր հանրապետության լեռնային շրջանները, բայց չէր հաջողվել:

Մի անգամ զրույցի ժամանակ ցանկություն հայտնեց, որ ՍՍՀՄ Գերագույն խորհրդի իր ընտրական օկրուգը Երևանից Զանգեզուրի շրջանները փոխադրել, բայց այն ժամանակվա պայմաններում դա հնարավոր չէր:

1960-ական թվականների վերջերին, երբ նորից Գերագույն խորհրդի ընտրություններն էին, Միկոյանը իր ընտրողների հետ հանդիպումից մի քանի օր չուտ ժամանեց Երևան՝ Զանգեզուր գնալու նպատակով:

Ղափան, Գորիս, Սիսիան գնալը Միկոյանի համար շատ նպատակասլաց էր: Նա ասում էր, որ դեռ հեղափոխական շրջանից սկսած՝ շատ է ցանկացել գնալ Զանգեզուր և Դարալագյազ, բայց երբեք չի հաջողվել, այս անգամ երևի, կհաջողվի:

Երևանից օդանավով գնացինք Ղափան: Քաղաքը երբեք այդքան ալեկոծված չէր եղել: Կարելի է ասել, որ օդանավակայանում էին հավաքվել Ղափանի շրջանի գրեթե բոլոր մեծ ու փոքր բնակիչները: Մի քանի տասնյակ հազար բնակչություն էր դիմավորելու եկել իր հարազատ զավակ Միկոյանին:

Ղափանից մեքենաներով մեկնեցինք Քաջարան: Երբ սկսվել էր Քաջարանի հանքավայրի հետազոտումը, հանքավայրի տեղամասը կոչվում էր Փիրդաուտան: Ասում են, որ մի անգամ, երբ Եգոր Հարությունյանը զեկուցում է Միկոյանին հանքավայրի մասին, (չմոռանամ ասել, որ երկար տարիներ Սովետական Միությունում գունավոր մետալուրգիան ղեկավարել է Միկոյանը, այդ պատճառով էլ հանրապետության երկրաբանության

վարչության պետ Հարությունյանը զեկուցել է Ա. Միկոյանին), Միկոյանն ասել է. «Փիրդաուտանի փոխարեն ուրիշ անուն չկա՞ հանքավայրը կոչելու»:

Հենց այստեղ էլ Հարությունյանը ասում է, որ հանքավայրի մոտ կա մի գյուղ, որը կոչվում է Քաջարան: Այդ օրվանից Միկոյանի առաջարկությամբ բոլոր փաստաթղթերը փոխվում են և հանքավայրը վերանվանվում է Քաջարան: Ինչպես գիտենք, Քաջարանը ՍՍՀՄ-ում իր տեսակի մեջ ամենախոշոր հանքավայրն է:

Ղափանից մինչև Քաջարան ձգվող ճանապարհի երկու կողմից մարդկանց խմբերը ողջունում էին երկրի մեծ ղեկավարին, հայ ժողովրդի հարազատ զավակին: Երբեք Ղափանի կիրճն այդքան մարդաշատ չէր եղել:

Հնարավոր չէ նկարագրել այն ցնծությունը, որ տեղի ունեցավ այդ օրը Ղափանում: Շրջանային Կոմիտեի քարտուղար Ռ. Մինասյանին հնարավորություն չտվեցին միտինգում ելույթ ունենալ: Բոլորը ողջունում էին և սրտաբուխ խոսքեր ասում Միկոյանի հասցեին:

Ղափանի գեղեցիկ կիրճն ավելի էր գեղեցկացել՝ լոգունգներով և գույնզգույն դրոշներով: Ղափանից Քաջարան ընդամենը կես ժամվա ճանապարհ է, բայց մեքենաները անցան 2,5 ժամում: Ամեն մի գյուղի բնակչություն իր պարտքն էր համարում կանգնեցնել մեքենաների շարասյունը, ողջունել, համբուրել մեծ հյուրին, բարեմաղթանքներ հայտնել, դրանից հետո միայն հնարավորություն տալ շարունակելու ճանապարհը:

Քաջարանում ծանոթանալով կոմբինատի աշխատանքներին, Միկոյանը շատ գոհ մնաց իրերի դրությունից: Տեղի ունեցավ կարճատև միտինգ, որտեղ Միկոյանը մի քանի շնորհակալական խոսք ասաց, այնուհետև կոմբինատի տնօրենի աշխատասենյակում խոսեց կոմբինատի հեռանկարների մասին:

Երբ կոմբինատի ղեկավարները պատմեցին կոմբինատի ընդլայնման մասին, Միկոյանը հարց տվեց. «Արդյոք չե՞ք կարճացնում այս հրաշալի կոմբինատի կյանքը...»:

Քաջարանից Ղափան վերադառնալիս մարդիկ Միկոյանին

դիմավորում էին նույն ցնծությամբ և ուրախությամբ՝ նվագախմբով, զուռնաներով և հյուրասիրությամբ: Այդպիսի տոնախմբություն երևի Ղափանը չէր տեսել:

Նույն օրը մեկնեցինք Գորիս: Հայտնի է, որ Ղափանից Գորիս ընկած ճանապարհը շատ գեղեցիկ է և անտառներով հարուստ: Ղափանցիների ճանապարհ գցելը եղավ Կարմրաքարում, որից հետո մեզ դիմավորեցին աղրբեջանցիները Շուռնուխում: Նրանք իրենց սովորության համաձայն Միկոյանին դիմավորեցին աղ ու հացով և ոչխարով, որին մորթեցին նրա ոտքերի առաջ, նորից զուռնա-դհոլով, պարելով և այլն:

Մեծ տպավորություն թողեց Տաթևի հէկ-ը, հենց այստեղ էլ Տաթևի հէկ-ից հետո սկսվեց գորիսեցիների դիմավորումը:

Գորիսեցիները յուրահատուկ դիմավորում էին կազմակերպել կուսշրջկոմի քարտուղար Խ. Պետրոսյանի ղեկավարությամբ: Գորիսը, որպես քաղաք, շատ յուրահատուկ տպավորություն թողեց: Այստեղ, ինչպես Ղափանում, փոքր ու մեծ դուրս էին եկել՝ ողջունելու Միկոյանին: Քաղաքում չկանգնեցինք: Գնացինք Տեղ գյուղ, որտեղից շատ լավ երևում է Հայաստանի և Ղարաբաղի սահմանը:

Առանց բացառության բոլոր գյուղերում, ջերմ ընդունելություն, ցնծություն էին ցուցաբերում: Տեղ գյուղից անցանք Կոռնիձոր. Միկոյանը դիտեց նախկին գյուղի փլատակները և նոր, բարեկարգ գյուղը: Կոռնիձորում կարճ ժամանակով մտավ մի կոլխոզնիկի տուն, որը շատ համեստ հյուրասիրություն կազմակերպեց՝ մրգերով, հաց ու պանրով:

Գորիսի շրջանի նոր գյուղերի կառուցվածքն անջնջելի տպավորություն էր թողել: Իրոք, Գորիսի շրջանի նոր գյուղերն իրենց յուրահատուկ ճարտարապետությամբ տարբերվում են հանրապետության գրեթե բոլոր շրջանների գյուղերից: Գորիսում ջրաշինարարական մեծ աշխատանքներ էին կատարվում: Փաստորեն առաջին անգամ ընդարձակ տարածությունները պետք է ոռոգելի դառնային: Դա նույնպես Միկոյանի ջերմ խրախուսանքին արժանացավ:

Հիանալի, կարելի է ասել բացառիկ հիշողություն ունեցող

Միկոյանը չատ էր սիրում մարդկանց հետ զրույցի բռնվել: Խոսել, հարցնել, ծանոթանալ նրանց տրամադրությանը, կյանքի պայմաններին, և եթե որևէ բան դուր չէր գալիս զրույցի ընթացքում, երկար ժամանակ կրկնում ու վերլուծում էր:

Միկոյանի հետ աշխատողները միշտ ասում էին, որ Անաստաս Իվանովիչի հետ զրուցելու կամ զեկուցելու ժամանակ պետք է միշտ զգույշ լինել: Նա ընդունակ է կարդալ քո մտքերը, հենց առաջին բառից գիտի և չի թողնի երկար բացատրես, պատասխանը տալիս է, զրեթե միշտ ճիշտ ու կոնկրետ:

Նորակառույց Խնձորեսկ գյուղից իջանք գյուղի կալերը, որտեղից հիանալի երևում էր նախկին գյուղը, այժմ՝ փլատակները: Ասենք՝ փլատակ էլ չի երևում, որովհետև 80-90 տոկոսը քարայրներ են, անցքերը դեռ մնում են. կարծես Դավիթ Բեկի կամ Մխիթար Սպարապետի զորքը նոր էր անցել այդ կիրճով՝ թշնամուց ազատագրելով Խնձորեսկը:

Գյուղի կալերում մի կին մաղով ցորեն էր մաքրում: Անաստասը մոտեցավ, բարևեց, կինը չատ ամոթխած պատասխանեց բարևին և բերանը չորով ամուր փակեց: Միկոյանը հարցրեց, քանի երեխա ունի: Նա չատ հպարտ պատասխանեց՝ երեք: Միկոյանն ասաց. «Դա չատ քիչ է. ա՛յ իմ կինը հինգ տղա է բերել»: Գեղջկուհին պատասխանեց. «Եթե այդպես է, ուրեմն քո կինը ռաչիդ է»: Միկոյանը հարցրեց. «Դա ինչ է նշանակում: Ես հայերեն լեզվով այդպիսի բան չեմ լսել»: Գեղջկուհին ասաց. «Մեր հիմիկվա լեզվով քաջ է, հերոս է»:

Այդ զրույցից հետո եկանք Գորիս: Քաղաքում ցույց տրվեց ջերմ ընդունելություն: Շրջանի և քաղաքի հեռանկարների հետ ծանոթանալուց հետո Սուրեն Բակունցի հրավերով քաղաքի բարձրադիր մասում ճաշեցինք, և գեղեցիկ Գորիսին հրաժեշտ տվեցինք ու մեկնեցինք Սիսիան:

Սիսիանի շրջկենտրոնն ուսումնասիրելուց հետո մեկնեցինք Դարալագյազ, Ազիզբեկով, Եղեգնաձոր:

Ղափանի և Գորիսի գեղեցիկ անտառներից հետո Վայոց ձորը, իր յուրահատուկ, խստաշունչ գեղեցկությամբ, Լոռու բնությանը սովոր Միկոյանի վրա չչմեցուցիչ տպավորություն էր թողել:

Նախքան Ազիզբեկովի շրջկենտրոն մտնելը Միկոյանը ծանոթացավ Ջերմուկի առողջարանին: Երբ տեսավ առողջարանի պարկը, հիացավ: Այդ ժամանակ նրան ներկայացրեցինք այդու հիմնադիրներից մեկին՝ Կիրիլ Սերգեևիչ Դրեպալոյին:

Կիրիլ Սերգեևիչի խնդրանքով Միկոյանը ծառ տնկեց զրոսայգում: Այժմ այդ ծառն աճել է ի հաճույք հանգստացողների: Դրեպալոն ծնվել էր Ստեփանավանում, ամբողջ կյանքն անց էր կացրել անտառներում և զբաղվել բուսաբուծությամբ: Այս մեծ հայրենասերը, հիրավի, չատ գործ արեց Ջերմուկի կանաչապատման գործում: Այժմ ոչ ոք չի ասում, թե Ջերմուկը բարձր է և այնտեղ ծառ չի աճի: Առավել քան 50 ծառատեսակներ են տնկված առողջարանի զրոսայգում:

Քաղաքային սովետի նախագահ ընկեր Վարդանյանը մանրամասն ծանոթացրեց առողջարաններին և պատմեց հեռանկարների մասին: Ոտքով իջանք ջրվեժը դիտելու: Այս կիրճը, իրոք, հեքիաթային է և Անաստասը չէր կարողանում կտրվել կիրճի գեղեցկությունից, մանավանդ ջրվեժից: Բարձր տրամադրությամբ և մեծ ուրախությամբ նկարվեց ջրվեժի մոտ: Երևի այդ նկարները մնում են Ջերմուկի ընկերների մոտ:

Որքան գնում, այնքան գեղեցկանում է երկնքի տանիքի տակ գտնվող այդ առողջարանը:

Դեռ 1950-ական թվականներին Գրիգոր Հարությունովը լանջի բարձրության վրա կառուցել տվեց մի գեղեցիկ տնակ: Պետք է ասեմ, որ այն ժամանակ չատ դժվարությամբ կառուցվեց՝ ճանապարհ չլինելու պատճառով: Հարությունովը նպատակ ուներ այդ գեղեցիկ տնակում ընդունել բարձրաստիճան հյուրերի, որպեսզի Ջերմուկի համբավը տարածվի մեր հանրապետության սահմաններից դուրս:

Կարևոր նպատակներից մեկն էլ այն էր, որ Ջերմուկի կառուցմանը մասնակցեն միութենական մինիստրություններն ու գերատեսչությունները:

Հասկանալի է, որ մեր հանրապետության միջոցներով կառուցելը չատ ծանր էր և երկար կտևեր:

Չնայած այդ բոլորին՝ Միությունը զրեթե մասնակցություն

չունեցավ առողջարանների կառուցմանը: Ամեն տարի մեր Հանրապետության չնչին գումարներով, 2-3 տասնամյակի ընթացքում, կառուցվեց Ջերմուկը: Այժմ ուղեգրերի 90%-ը գնում է Միության բնակիչներին: Առաջին տարին խնդրում էինք, որ մարդիկ նույնիսկ անվճար ուղեգիր վերցնեն Ջերմուկում հանգստանալու համար:

Հարությունովի ամառանոցը, ինչպես ժողովուրդն էր անվանում, իր դերը կատարեց: Այստեղ հանգստանալու, առողջանալու են գալիս մեր երկրի տարբեր վայրերից, բարձր պաշտոն ունեցող մարդիկ, Սովետական Միության մինիստրներ, մարշալներ, զինծառայողներ, արտասահմանյան հյուրեր: Այսպիսով Ջերմուկը դարձավ աշխարհին հայտնի առողջարան, այժմ ուղեգրի ձեռքբերումը մեծ դժվարության հետ է կապված:

Հաջորդ օրը ավտոմեքենայով ուղևորվեցինք Երևան: Ազիզբեկովի շրջկենտրոնում ընդունելությունը շատ ավելի յուրահատուկ էր: Այստեղ փողոցի վրա բնակվող բնակիչները, առանց բացառության՝ սեղան էին գցել: Խմիչքով, մրգերով, հացով ու մսով և այլ տեսակի ուտելիքներով հյուրասիրում էին իրենց թանկագին հյուրին:

Վայոց ձորը երևի երկար ժամանակ այդպիսի ցնծություն չէր ապրել: Շրջկենտրոն էին եկել հեռավոր գյուղերի բնակիչները՝ իրենց նվագով, մեր ավանդական զուռնայով: Դիմավորող-ողջունողներն այնքան շատ էին, որ հնարավոր չէր որևէ տեղ հավաքվել, այդ պատճառով շրջկենտրոնի գլխավոր փողոցի երկու կողմերում ամբողջ երկարությամբ շարված մարդիկ ողջունում և հյուրասիրում էին:

Ասում են, թե Միկոյանը շատ ուժեղ նյարդեր ունեցող մարդ է: Իրոք, այդպես էր, բայց այս ճանապարհորդության ժամանակ նա իրեն զսպել չէր կարողանում, թաշկինակով արցունքները մաքրելով՝ մեկից մյուսին ձեռքով բարևում էր: Այսպիսի դիմավորման մասին հնարավոր չէ գրել, այն պետք էր տեսնել և պատկերացնել մարդկանց ջերմությունը, հրճվանքն ու ուրախությունը: Ղափանում շատերը բացականչում էին «չարդ տանեմ», նույնը և այս գեղեցիկ ձորի լեռներում ապրող ժողովուրդները:

Այս ճանապարհորդության գլխավոր գործոնը եղավ Եղեգնաձորի շրջանի բնակչության ընդունելությունը: Այստեղ կարծես ավելի մտերմիկ էր, թեկուզ այն պատճառով, որ Եղեգնաձորի շրջանը նախկինում կոչվել էր Միկոյանի անունով:

Ընդունելության լայն ծավալը և առանձնահատկությունը կախված էր կուսակցության շրջկոմի քարտուղար Հովհաննես Հովսեփյանի շնորհքից: Այստեղ ևս փողոցներում սեղաններ էին բացել, որտեղ Միկոյանը չէր հանդիպում, յուրաքանչյուր բնակիչ անցորդներին հրավիրում էր իր սեղանից մի բան ճաշակելու:

Այս ճանապարհորդության առանձնահատկությունը նրանում էր, որ նշված շրջանի ժողովուրդը ընդունում էր իր հարազատ զավակին, իր սիրելի ղեկավարին, որի ազգանունով հայ ժողովուրդը միջազգային ճանաչում էր ստացել, որ Սանահինի թագավորանիստ գյուղում ծնված մի մարդ կարող է դառնալ Սովետական Միության բազմազգ ժողովուրդների պրեզիդենտը: Մեր բազմադարյան պատմության մեջ առաջին անգամ էր, որ ռուսական գահին բարձրացավ հայը: Հիրավի, մեծ հպարտություն է ամեն հայի համար:

Երկար ժամանակ վիճաբանության թեմա էր դարձել, թե արդյո՞ք ճիշտ ենք վարվում, որ արդյունաբերական ձեռնարկություններ ենք հիմնադրում գյուղական շրջկենտրոններում, նույնիսկ խոշոր բնակավայրերում: Կենտրոնական մարմիններում, հատկապես, Պետպլանում, մեզ մեղադրում էին այն բանում, թե մենք միջոցները վատնում ենք, ճիշտ քաղաքականություն չենք վարում, արդյունաբերական ձեռնարկություններ ենք ստեղծում հեռավոր շրջաններում և գյուղերում:

Զանգեզուր և Դարալագյազ այցելությունից հետո Մոսկվայում մեր հանդիպման ժամանակ Միկոյանն ասաց, որ մենք ճիշտ ենք անում, որ այդ վայրերում մարդկանց աշխատանքով ապահովելու նպատակով ստեղծում ենք ոչ մետաղատար գործարաններ:

Միկոյանը լավ գիտեր, որ հանրապետությունում ևս միակարծիք չենք, որ մեր ղեկավարներից շատերը կրկնում էին

Կենտրոնի կարծիքը և խոչընդոտում նոր ձեռնարկությունների կազմակերպմանը:

*Միկոյանի այցելությունից հետո էր, որ Ղափանում, Գորիսում, Ազիզբեկովում, Եղեգնաձորում և մի չարք խոշոր գյուղերում կազմակերպեցինք Երևանի և այլ քաղաքների ձեռնարկությունների մասնաճյուղերը ինչպես, օրինակ, Ղափանում էլեկտրական լամպերի գործարանի մասնաճյուղը, Գորիսի միկրոչարժիչների, Շինուհայրի ռետինատեխնիկական գործարանները, Ազիզբեկովում և Եղեգնաձորում էլեկտրատեխնիկական գործարանների մասնաճյուղերը, որոնք հետագայում դարձան ինքնուրույն ձեռնարկություններ: (Այստեղ ձեռագիրն ընդհատվում է - **խմբ.**):*

ՎԵՑԵՐՈՐԴ ԳԻՐՔ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԻՆՔՆԱՎԱՐ ՄԱՐԶԻ ԵՎ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԻՆՔՆԱՎԱՐ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ես նպատակ չեմ դնում խոսել այս պատմական Հայկական հողերի մասին անցյալի իմաստով, նրա պատմությունը գրել կամ վիճաբանության մեջ մտնել երկու հարևան հանրապետությունների պատմաբանների հետ: Միայն ցանկանում եմ թղթին հանձնել այն, ինչ տեղի ունեցավ Հայրենական պատերազմից հետո՝ 1946-1976 թվականներին:

Հայտնի է, որ 1917 թ. հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, 1917-1920 թթ. հանդիսացան Վրաստանում՝ մենշևիկների, Ադրբեջանում՝ մուսաֆաթականների և Հայաստանում՝ դաշնակցականների ժամանակավոր տիրապետության տարիներ:

Հայաստանն այդ ժամանակ գտնվում էր ամենածանր պայմաններում: Այս փոքր տարածքում, որտեղ իշխում էին դաշնակցականները, բնակչությունն ապրում էր անասելի, աներևակայելի սոցիալ-տնտեսական ծանր պայմաններում՝ քաղց, էկոնոմիկայի ընդհանուր քայքայվածություն: Սրան ավելացան նաև 300.000 գաղթականները, ովքեր հրաչքով փրկվել էին Թուրքական կոտորածներից և փախել էին Արևմտյան Հայաստանից:

Նրանց պետք է խնամեին ու կերակրեին Արևելյան Հայաստանի հայերը, ովքեր, առանց այդ էլ, գտնվում էին չատ ծանր պայմաններում: Սարսափելին այն էր, որ նորմալ մինիմում պայմաններ չլինելու պատճառով, վարակիչ հիվանդությունները հնձում էին մարդկանց, իսկ անճարակ դաշնակցական կառա-

վարիչները ոչինչ չէին կարողանում անել երկիրն այդ աղետալի վիճակից հանելու համար:

Այդ կոչմարային պայմաններում էլ որոշվում էին երեք հանրապետությունների սահմանային հարցերը:

Վրաց մենշևիկները գտնում էին, որ իրենց երկրի սահմաններում պետք է լինեն Թբիլիսի, Քութայիսի, ինչպես նաև Ղարսի մարզից Արդահանի և Օլթիի օկրուգները: Մուսափաթականները պահանջում էին Բաքվի և Ելիզավետպոլի մարզերի տարածքները:

Դաշնակցական Հայաստանում մնում էր նախկին Երևանի մարզը, այն էլ ոչ լրիվ, քանի որ Թուրքերն արդեն գրավել էին ոչ միայն Ղարսի մարզը, այլև Սուրմալուի գավառը: Լրիվ իրենց հսկողության տակ էին վերցրել Նախիջևանի գավառը:

Այսպիսով վրացական մենշևիկները, աղրբեջանցի մուսափաթականները օգտագործեցին ցարական Ռուսաստանի անարդար վարչական-տարածքային բաժանման ժառանգությունը: Մուսափաթականները լսել չէին ցանկանում, որ ցարական Ռուսաստանում հաշվի չի առնված պատմականորեն կազմավորված դրությունը, երբ Ելիզավետպոլի նահանգի մեջ էին մտնում Ղազախի, Ելիզավետպոլի, Շուշիի, Զանգեզուրի գավառների լեռնային մասերը: Ավելին, Երևանի նահանգի մեջ էր մտնում Նախիջևանի գավառը որն ամբողջությամբ տրամադրված էր Թուրքական էմիսիաներին:

Բավական չէր, որ 1915-1920 թթ. Թուրք վանդալներն Արևմտյան Հայաստանից տեղահան արեցին և կոտորեցին 3 միլիոն հայ, այժմ էլ արվում էր ամեն ինչ՝ Բաքվի կոմունան խեղդելու պատրվակով, ոչնչացնել հայությունը Շուշիում, Ելիզավետպոլում, Բաքվում, Զանգեզուրում, ինչպես նաև Վրաստանի հարավային շրջաններում, որտեղից մենշևիկները Թուրքական զորքերին Թույլատրեցին անցնել: Հայտնի է, որ այդ շրջաններում հիմնականում բնակվում էին հայերը: Թուրքական դահիճները Վրաստանի մենշևիկների օրհնանքով, ցեղասպանության պլանով, մեծ քանակությամբ հայերի՝ անմեղ երեխաների, կանանց ու ծերերի, սրի քաշեցին, կոտորեցին:

Հայ բնակչությունը կտրեց Թուրքական զորքերի ճանապարհը՝ ճակատամարտ տալով Սարդարապատում, Ապարանում, Ղարաքիլիսայում, փակեց Դարալագյազի և Զանգեզուրի լեռնանցքները: Թուրքական դահիճներին, մուսափաթականները ճանապարհ տվեցին Նախիջևանով և այդ էր պատճառը, որ նրանց մոտենալու օրերին, տասնյակ հազարավոր հայեր սրի քաշվեցին՝ հենց իրենց ապրած բնակավայրերում:

1918 թվականի սեպտեմբերին միայն Բաքու քաղաքում ոչնչացվեց ավելի քան 30 հազար հայ: Մուսափաթականներն Աղրբեջանում հայերի կոտորածներ կազմակերպեցին Գյանջայում, Շամխորում: Ավելին, 1920 թ. մարտին Շուշի քաղաքի 15 հազար բնակիչներ մեկ գիշերում ոչնչացվեցին և հայական թաղամասերը հրդեհվեցին:

Անդրկովկասում, սովետական կարգերի հաստատումից հետո, ոչնչացվեցին տարածքային սպեցիֆիկ առանձնահատկությունները: Սովետական Հայաստանին միացվեց «Զեղոք գոտու» գրեթե ամբողջ տարածքը, Ղարաբաղի գավառի լեռնային մասը (այժմյան Շամշադինի ու Իջևանի շրջանները) և Զանգեզուրի գավառի արևմտյան մասը:

1923 թ. կազմավորվեց Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը, որի կազմի մեջ մտավ Ղարաբաղի միայն մի մասը, որտեղ բնակվում էին հայեր: Բացի դրանից, Քելբաջարի և Լաչինի շրջաններում կազմավորվեց քրդական գավառ, որտեղ 1926 և 1939 թթ. մարդահամարներով բնակվում էր մի քանի տասնյակ հազար քուրդ, որոնք 1959 թ. մարդահամարի տվյալներով այլևս չեն հիշատակվում:

Պարզ է, որ Ղարաբաղի հարցի այսպիսի «լուծումը» հակասում է դարերով ստեղծված պատմական պայմաններին: Բանն այն է, որ այն ժամանակ Ղարաբաղի հարցի այդպիսի լուծումը բացատրվում էր բնակչության ձգտումով դեպի Քուռի հարթավայրը: Այս նույն սկզբունքով մոռացության էր տրվում Նախիջևանի գավառը:

1921 թ. մարտի 16-ին Մոսկվայում կնքվեց Սովետա-Թուրքական պայմանագիրը, որի համաձայն, Թուրքիայի պահանջով,

Ադրբեջանի կազմի մեջ մտցվեց Երևանի նախկին նահանգից անջատված Նախիջևանի գավառը՝ նրան միացնելով Շարուր-Դարալագյազի գավառի Շարուրի տարածքը: Ըստ որում, այդ պայմանագրում հատուկ նշվում էր, որ Ադրբեջանն իրավունք չունի զիջելու այդ տարածքները իր հարևաններից որևէ մեկին: Իհարկե, այստեղ նկատի է առնվել Հայաստանը:

Օսմանյան Թուրքիան այնքան էր չահագրգռված, որ հետագայում Իրանի հետ պայմանագրով, Արաքս գետի ափերով 9 կմ տարածություն վերցրեց, նրան զիջելով ուրիշ հողեր՝ կրկնակի և եռակի չափերով, որպեսզի Նախիջևանի միջոցով սահմանակից լիներ Ադրբեջանին:

Այսպիսով Թուրքական կառավարությանը հաջողվեց Նախիջևանի գավառը բաժանել Երևանի նահանգից: Դրա արդյունքով Հայաստանի ներսում 1924 թվին կազմավորվեց Նախիջևանի ինքնավար հանրապետությունը: Ահա այսպես ստեղծվեց Անդրկովկասի տարածքային ստատուս քվոն, ինչպիսին ունենք այսօր:

Հայ ժողովուրդը ճաչակելով ցեղասպանության դառը պտուղները, ցրված լինելով երկրագնդով մեկ, ստացավ որբերով լեցուն քայքայված մի երկիր: Ստացվեց այնպես, որ Անդրկովկասի հանրապետություններից Հայաստանն ընկավ ամենածանր դրության մեջ:

1920 թ. նոյեմբերի 29-ին Հայաստանում հաստատվեցին սովետական կարգեր: Այդ օրվանից քաղաքական տեսակետից Հայաստանին տրվեց Սովետական Ադրբեջանին հավասար պայմաններ: Նոր վերաբերմունք ձևավորվեց տարածքային-սահմանային որոշման հարցում:

Սովետական Միության համար տարբերություն չկար, թե Ղարաբաղը կամ Նախիջևանը որ հանրապետության մեջ կմտնեն: Այսպիսի վերաբերմունքը ամբողջովին բխում էր լենինյան ազգային քաղաքականությունից:

Նոր պայմաններում, երբ, ինչպես Ադրբեջանում, այնպես էլ Հայաստանում, հաստատվել էին սովետական կարգեր, երկու հանրապետությունների միջև եղած տարածքային-սահմանների հարցերի լուծման նախաձեռնությամբ հանդես եկան Սովետական Ադրբեջանի ղեկավարները:

1920 թ. նոյեմբերի 30-ին, այսինքն Հայաստանում սովետական հարկերի հաստատումից մեկ օր հետո, Սովետական Ադրբեջանի կառավարության անունից դեկլարացիայով հանդես եկավ կառավարության նախագահ ընկ. Նարիմանովը: Այդ դեկլարացիայում մասնավորապես ասվում էր, որ Սովետական Ադրբեջանն ու նրա կառավարությունն ընդառաջ գնալով դաշնակցության ատելի տիրապետության դեմ Սովետական Հայաստանի աշխատավորության պայքարին, որտեղ իրենց կյանքը զոհեցին հարյուրավոր հեղափոխականներ Զանգեզուրում և Դարալագյազում, սովետական Ադրբեջանի կառավարությունը հայտարարում է, որ այսօրվանից ոչ մի տարածքային հարց երկու դարավոր հարևան ժողովուրդների՝ հայերի և մուսուլմանների, համար արյուն թափելու պատճառ չի կարող հանդիսանալ: Զանգեզուրի և Նախիջևանի գավառների տարածքները հանդիսանում են Սովետական Հայաստանի անբաժանելի մասը, իսկ Լեռնային Ղարաբաղի բնակչությանը տրվում է ինքնորոշվելու իրավունք:

Այդ դեկլարացիայի կապակցությամբ Օրջոնիկիձեն ժամանակին ասել է Նարիմանովի ելույթի մասին և հավանություն է տվել Նախիջևանը և Ղարաբաղը Հայաստանին վերադարձնելուն (1920թ. դեկտեմբերի 2, «Կոմունիստ» թերթ, № 178):

Օրջոնիկիձեն ասել է, որ անտեղյակ մարդու ականջի համար այդ բառերն իրենցից ոչինչ չեն ներկայացնում՝ ինչ-որ Զանգեզուր՝ անպտուղ լեռներ, ոչ հաց, ոչ ջուր, այնտեղ ոչինչ չկա: Ինչ-որ Նախիջևան՝ ճահիճներ, մալարիա, հիվանդություններ, ուրիշ ոչինչ: Ինչ-որ Լեռնային Ղարաբաղ: Ի՞նչ կա այդ Ղարաբաղում: Վերցրեք: Եվ ահա ընկ. Նարիմանովն ասում է. «Վերցրեք Զեզ, վերցրեք այդ անպտուղ հողերը Հայաստանի համար»: Այսպիսով, կարծես թե, Սովետական Ադրբեջանն ազատվում է ավելորդ բեռից:

Ո՛չ: Ասում է հայտնի հեղափոխական Օրջոնիկիձեն: Այդ գավառներում, այդ անպտուղ լեռներում է հայ-մուսուլմանական

հարցի հանգույցը: Այստեղ, Անդրկովկասում սարսափելի կոտորածների աղբյուրը միայն այս հողերի պատճառով է, որ հայ աշխատավորին տրամադրել է մուսուլման աշխատավորի դեմ և հակառակը:

Այսօր, ընդգծեց Օրջոնիկիձեն, Ադրբեջանի կառավարության ղեկավարը ասում է, որ «այդ սարսափելի հարցն այլևս գոյություն չունի: Այլևս թշնամանք չկա հայերի և ադրբեջանցիների միջև: Մուսուլմաններն ու հայերը աշխատավորներ են և այժմվանից նրանք դառնում են բարեկամներ, հարազատներ, եղբայրներ՝ սովետական Կարմիր դրոշի ներքո»: Այս ակտը պատմության մեջ չտեսնված մեծ երևույթ է, նմանը չի տեսել մարդկությունը: (Օրջոնոկիձեի ելույթը չարադրել եմ ազատ, 1956 թ. Հոդվածների ժողովածուից (ռուսերեն), էջ 139-141):

Այսպիսով, 1920 թ. վերջին սովետական իշխանության հաստատումով լուծվեցին Անդրկովկասյան հանրապետությունների միջև գոյություն ունեցող տարածքային-սահմանային հարցերը, հատկապես Ադրբեջանի և Հայաստանի միջև:

Ցավով պետք է նշել, որ հայ ժողովրդի այդ ուրախությունը երկար չտևեց: 1921 թ. փետրվարի սկզբների դեպքերն ամբողջովին փոխեցին, առանց այդ էլ անդամահատված Հայաստանի դրությունը: 1921 թ. դաշնակցական խռովարարները վերցրեցին Հայաստանի մայրաքաղաքը և փաստորեն տիրեցին Սովետական Հայաստանի մեծ մասին: Թուրքերի տիրապետության տակ էր գտնվում Ալեքսանդրապոլն ու Նախիջևանը:

Այդ ժամանակ, 1921 թ. անբարենպաստ պայմաններում էր գտնվում Սովետական Ռուսաստանը:

1921 թ. մարտի 16-ին կնքվեց Ռուս-Թուրքական պայմանագիրը, որով, ինչպես նշված է վերևում, Նախիջևանի գավառն անջատվեց Երևանի մարզից և փաստորեն տրվեց Ադրբեջանին:

Այսպիսով Ռուս-Թուրքական պայմանագրի համաձայն Թուրքական դիվանագիտությունը հասավ այն բանին, որ Թուրքիան սահմանակից լինի Ադրբեջանին և սովետական իշխանության հաստատման առաջին օրերի բոլոր հայտարարություններն ու դեկլարացիաներն ավելորդ դուրս եկան:

Եթե Նախիջևանի հարցում Թուրքերն իրենց սև գործը կատարեցին և Հայաստանի տարածքից այն ամբողջովին անջատեցին, ապա չատ դրամատիկորեն որոշվեց նաև Լեռնային Ղարաբաղի հարցը՝ Ադրբեջանի կառավարության հայտարարությունից հետո, որտեղ ասված էր, որ Լեռնային Ղարաբաղի աշխատավորությունն ինքն է որոշելու իր ինքնավարության հարցը:

Հայաստանում դաշնակցականների խռովություններից հետո (1921 թ. փետրվար-մարտ) իրականում սովետական իշխանություն գոյություն ուներ Հայաստանի միայն մի փոքր տարածքում: Այս պայմաններում Լեռնային Ղարաբաղում հանրաքվե անցկացնելու ոչ մի հնարավորություն չկար:

Հաշվի առնելով 1920 թվականի նոյեմբերի 30-ի Ադրբեջանի կառավարության դեկլարացիան՝ Լեռնային Ղաբաբաղը Հայաստանին պատկանելու մասին, Կովկասյան բյուրոն առաջարկում է Հայաստանի կառավարությանն ուղարկել Ադրբեջանի կառավարության դեկլարացիան՝ Լեռնային Ղարաբաղը Հայաստանին պատկանելու մասին:

Կովկասյան բյուրոն առաջարկում է Վրաստանի և Ադրբեջանի կառավարություններին իրենց ներկայացուցիչներին ուղարկել Զանգեզուր՝ ներկա լինելու, որպես միջնորդների: 1921 թ. հունիսի 9-ին Վարանկովը հեռագիր է ուղարկում Ռուսաստանի Ֆեդերատիվ Հանրապետության արտաքին գործերի մինիստր ընկ. Լիտվինովին: «Ընկ. Օրջոնիիկձեի կարգադրության համաձայն կորոշվեն Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի սոցիալիստական հանրապետությունների սահմանները: Այդ հանրապետությունների ճիշտ սահմանների որոշելը կկատարվի այդ հանրապետությունների կոնֆերանսում, որը տեղի կունենա մոտ ապագայում»: Ղարաբաղը և Զանգեզուրն Ադրբեջանի հեղկոմի որոշմամբ, Զանգեզուրում դաշնակցականների խռովությունը ճնշելուց հետո, կտրվի Հայաստանին, ինչ վերաբերում է Նախիջևանի մարզին, ապա Ռուս-Թուրքական պայմանագրի համաձայն այն անցնում է Ադրբեջանին (այս հեռագիրը չարադրված է ազատ):

1921 թ. հունիսին Լեռնային Ղարաբաղի հարցը քննարկվում է Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեում: Ալեքսանդր Մյասնիկյանի ստորագրությամբ հրատարակվում է հետևյալ դեկլարացիան.

«Ադրբեջանի Սովետական Սոցիալիստական Հանրապետության դեկլարացիայի, Ադրբեջանի և Հայաստանի հեղկոմների համաձայնության հիման վրա, հայտարարվում է, որ Լեռնային Ղարաբաղն այսօրվանից հանդիսանում է Հայաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետության անբաժանելի մասը»:

Այսպիսով, կարծես թե, դաշնակցականների խռովությունների լիկվիդացիայի հետ միասին, օրակարգի հարց է դառնում Լեռնային Ղարաբաղի միացումը Սովետական Հայաստանին:

1921 թ. հունիսին Թբիլիսիում բանակցություններ էր գնում Հայաստանի և Ադրբեջանի սահմանների ճշտման շուրջ: Ցավով պետք է նշել, որ հենց այս ժամանակ էլ Ադրբեջանի ղեկավարների մոտ նկատվում է լուրջ փոփոխություններ՝ իրենց դեկլարացիայի փոփոխման, իրենց խոստումներից հրաժարվելու տենդենց:

Այդ կապակցությամբ 1921 թ. հունիսին Օրջոնիկիձեն և Կիրովը Թբիլիսիից հետևյալ հեռագիր են ուղարկում Ադրբեջանի նախագահ ընկ. Նարիմանովին. «Այժմյան պայմաններում, երբ Զանգեզուրում ստեղծվել է շատ ծանր իրադրություն, Հուսեինովը (Ադրբեջանի արտաքին գործերի մինիստր) մեկնել է, բանակցությունները հետաձգվել են մինչև հունիսի 27-ը»:

Կիրովը և Օրջոնիկիձեն խնդրում են Ղարաբաղի հարցով հրավիրել Ադրբեջանի կոմկուսի քաղբյուրոյի և ժողկոմխորհրդի արտակարգ նիստ, այն հաշվով որ հունիսի 27-ին հնարավոր լինի բանակցությունները վերջացնել: Այնուհետև նրանք գրում են, որ եթե հետաքրքրում է իրենց կարծիքը, ապա Կիրովը և Օրջոնիկիձեն ցանկանում են վերջնականապես վերջացնել բոլոր հակասություններն ու ընդվզումները և հաստատել իսկական բարեկամական փոխհարաբերություններ: Ղարաբաղի հարցում պետք է ղեկավարվել այն սկզբունքով, որ ոչ մի հայկական գյուղ չմնա Ադրբեջանում և ոչ մի մուսուլմանական գյուղ չմտին Հայաստանի տարածքի մեջ:

Անհասկանալի պատճառներով, Լեռնային Ղարաբաղի հարցը նորից դառնում է կուսակցության Կովկասյան քաղբյուրոյի քննարկման հարց:

1920 թ. նոյեմբերի 30-ի Նարիմանովի հայտարարությունից հետո, կարծես թե, ամեն ինչ վերջացած էր և կուսակցության Կովկասյան բյուրոյին մնում էր հաստատել Նարիմանովի դեկլարացիան և հարցը համարել ավարտված:

1921 թ. հուլիսի 4-ին Ռ.Կ(բ)Կ Կովկասյան բյուրոյի պլենումի երեկոյան նիստում քննարկվում է Ղարաբաղի հարցը, որտեղ հայտնվում է երկու տեսակետ: Մեկն այն է, որ Վերին և Ներքին Ղարաբաղը թողնել Ադրբեջանի սահմաններում, որի օգտին քվեարկում են Նարիմանովը, Մախարաձեն և Նազարեթյանը: Դեմ են քվեարկում Օրջոնիկիձեն, Մյասնիկյանը, Կիրովը և Ֆիգատները:

Նարիմանովը պահանջում է ամբողջ Ղարաբաղում, որտեղ բնակչության բացարձակ մեծամասնությունը մուսուլմաններ էին, անցկացնել հանրաքվե: Այս առաջարկին կողմ են քվեարկում Նարիմանովը և Մախարաձեն:

Քննարկվում է նաև Լեռնային Ղարաբաղը Հայաստանի կազմի մեջ մտցնելու հարցը, որին կողմ են քվեարկում Օրջոնիկիձեն, Մյասնիկյանը, Ֆիգատները, Կիրովը և Նազարեթյանը:

Այսպիսով որոշվում է Լեռնային Ղարաբաղը մտցնել է Սովետական Հայաստանի կազմի մեջ և հանրաքվե անցկացնել միայն հայ բնակչության մեջ:

Այդ ժամանակ Նարիմանովն առաջարկում է այդ հարցի քննարկումը տեղափոխել Ռուսաստանի կոմունիստական կուսակցության Կենտկոմ: Ադրբեջանի կոմունիստական կուսակցության քաղաքական և կազմբյուրոն որոշում է ընկ. Բեգզադյանի (Հայաստանի ներկայացուցիչը) հարցադրումը չընդունել, նկատի ունենալով, որ Լեռնային Ղարաբաղը անվերապահորեն տնտեսապես կապված է Ադրբեջանի հետ և այդպես էլ պետք է որոշվի ղարաբաղյան հարցը:

Ադրբեջանի ժողկոմխորհը ևս միանում է այդ որոշմանը և Նարիմանովը ժողկոմխորհի նախագահին խնդրում է հաղորդել կուսակցության Կովկասյան բյուրոյին, որ եթե Լեռնային Ղարաբաղը չմտցվի Ադրբեջանի կազմի մեջ, ապա ժողկոմխորհը իր վրայից վերցնում է պատասխանատվությունը՝ Ադրբեջանում սովետական իշխանության լինելու և չլինելու հարցը:

Այսպիսով Ադրբեջանի ժողկոմխորհը կատեգորիկ կերպով պահանջում է Ղարաբաղը մտցնել Ադրբեջանի կազմի մեջ, հակառակ պարագայում ժողկոմխորհը հրաժարվում է պատասխանատվությունից:

1921 թ. հուլիսի 5-ին կուսակցության կովկասյան բյուրոյի պլենումը, որին մասնակցում էին Ստալինը, Օրջոնիկիձեն, Մախարաձեն, Կիրովը, Նազարեթյանը, Օրախելաչվիլին, Ֆիգատները, Նարիմանովը, Մյասնիկյանը, Հուսեինովը, վերանայում է Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ հուլիսի 4-ի որոշումը:

Օրջոնոկիձեն և Նազարեթյանը հարց են բարձրացնում նախորդ պլենումի որոշման փոփոխման մասին և որոշում են. (չարադրվում է ազատ) ելնելով հայերի և մուսուլմանների միջև խաղաղության պահպանման անհրաժեշտությունից, Վերին և Ներքին Ղարաբաղների միջև եղած տնտեսական կապերից և մշտական կապն Ադրբեջանի հետ, Լեռնային Ղարաբաղը թողնել Ադրբեջանի կազմի մեջ՝ Ղարաբաղին տալով ինքնավար մարզի լայն իրավունքներ: Վարչական կենտրոնը համարել Շուշի քաղաքը, որը մտնում է ինքնավար մարզի մեջ:

Ահա այսպիսին է Լեռնային Ղարաբաղի տանջալից ուղին Հայաստանի և Ադրբեջանի միջև եղած հարաբերությունների պատճառով:

Այս պայմաններում, եթե Սովետական Ադրբեջանի ղեկավարները, Նարիմանովի գլխավորությամբ, իրենց վրայից գցում էին պատասխանատվությունը, ապա Մյասնիկյանն ու Օրջոնիկիձեն Ղարաբաղի կնճռոտ հարցում իրենց պահեցին միանգամայն լոյալ:

Այս հակիրճ չարադրանքից երևում է, որ Լեռնային Ղարաբաղի և Նախիջևանի հարցը որոշվեց ոչ թե պետական և սովետական կարգերի ազգային իրավական սկզբունքով, այլ այդ պրոբլեմի հիմնական լուծումը ևս ենթարկվեց սովետական կարգերի ամրապնդման հիմնական խնդրին:

Հայտնի է, որ սովետական կարգերի, պրոլետարիատի դիկտատուրայի ամրապնդման համար կոմունիստական կուսակցությունը և սովետական իշխանությունը գնացին անհաշիվ զրկանքների և զոհերի, այդ թվում այնպիսի տարածքային կորուստների, ինչպիսին Արևմտյան Ուկրաինան, Արևմտյան Բելոռուսիան, գրեթե Ռուսական Հայաստանի կեսը, Բեսարաբիան և այլն:

Այդ նույն նպատակով էլ Սովետական Ռուսաստանը ստիպված եղավ համաձայնվել Թուրքիայի հետ՝ Նախիջևանի հարցում:

Շատ հետաքրքիր է, որ 1921 թ. մարտի 16-ի Ռուս-Թուրքական պայմանագրով Սովետական Ռուսաստանը մեծ հանդիսավորությամբ համաձայնվեց ազատել Թուրքիային կապիտուլացիայի ռեժիմից:

Լեռնային Ղարաբաղի հարցի քննարկման և լուծման ժամանակ, մեծ փաստարկ էր համարվում այն, որ մարզը տնտեսական սերտ կապերի մեջ էր Ադրբեջանի հետ, որ Լեռնային Ղարաբաղը լինելով հետամնաց ագրարային երկիր, ձգտում էր կապվել ավելի զարգացած Բաքվի հետ:

Բոլորովին անհասկանալի պատճառաբանություն: Հայտնի է, որ այն ժամանակ ոչ միայն Ղարաբաղը, այլև ամբողջ Հայաստանն էր ձգտում դեպի Բաքու և Թբիլիսի, քանի որ հայկական բուրժուազիան գտնվում էր այդ քաղաքներում: Հետևապես, այս պատճառաբանությունները միանգամայն անհիմն էին:

Այդ ժամանակներից անցել է շուրջ հիսուն տարի: Սովետական իշխանության տարիներին Հայաստանը դարձել է զարգացած, առաջավոր սովետական հանրապետություն: Հայ ժողովուրդը սովետական իշխանության տարիներին աճել և ձևավորվել է որպես սոցիալիստական բազմակողմանի զարգացած ազգ: Այս բոլորը լենինյան ազգային քաղաքականության շնորհիվ:

Արդեն շուրջ 60 տարի է Նախիջևանը գտնվում է Ադրբեջանի կազմում և նա «իրավունք» չունի այն դիջելու երրորդ երկրին, այսինքն Հայաստանին: Ավելի քան 60 տարի է անցել այս հարցերի քննարկումից և անարդարացի որոշումից:

Այս տարիների ընթացքում երկու եղբայրական հանրապետությունների միջև ժամանակ առ ժամանակ սառնության պատճառ է եղել Ղարաբաղի և Նախիջևանի հարցը: Հատկապես երեսունական թվականներից Ղարաբաղի աշխատավորությունը բազմիցս դիմել ու բողոքել է, խնդրել նորից անդրադառնալ Լեռնային Ղարաբաղի հարցի որոշմանը:

Ցավով պետք է նշել, որ պատասխանը միշտ եղել է մեղադրանքներ փաթաթելը և ավելին, դիմողներին դաժանաբար հետապնդելը, նացիոնալիզմի մեջ մեղադրելը:

Հասկանալի պատճառով պատերազմի ժամանակ այս հարցերի մասին խոսք լինել չէր կարող: Բայց Հայրենական պատերազմի ավարտից հետո, այն շատ սուր կերպով նորից բարձրացվում է և համախոսականներ ու դիմումներ են ուղարկվում կուսակցության կենտրոնական կոմիտեին, սովետական կառավարությանը: Ինչպես միշտ, այնպես էլ այդ տարիներին, անուշադրության են մատնվում բոլոր այս դիմումներն ու համախոսականները:

Ղարաբաղի հայերի բազմաթիվ դիմում-բողոքները հարկադրում են Հայաստանի կուսակցության կենտրոնական կոմիտեին անդրադառնալ Ղարաբաղի հարցին:

1945 թ. աշնանը, երբ օրակարգի հարց էր դարձել հայրենադարձության հարցը, երբ նախատեսվում էր արտասահմանյան տարբեր երկրներից ընդունել մեծ քանակությամբ հայերի, Հայաստանի կենտրոնական կոմիտեի առաջին քարտուղար Գրիգոր Հարությունովը մի նամակով դիմեց Սովետական Միության կոմկուսի Կենտկոմին և Ստալինին հարց բարձրացնելով հայրենադարձության կապակցությամբ Լեռնային Ղարաբաղը վերադարձնել Հայաստանին: Այդ հարցի դրական լուծման դեպքում հնարավոր կլիներ մեծ քանակությամբ հայրենակիցներ ընդունել:

Սովետական կառավարությունը, կուսակցության կենտրոնական կոմիտեի այն ժամանակվա ղեկավարությունը սկզբունքորեն համաձայնվել էին հայրենադարձություն կազմակերպելու համար: 1946 թ. արդեն Խորհրդային Հայաստանի ներկայացուցիչները մեկնել էին արտասահմանյան տարբեր երկրներ՝ Հայաստան վերադառնալու ցանկություն ունեցող հայերին ընտրելու և ուղարկելու նպատակով:

Պետք է նշել, որ այն ժամանակ արտասահմանից հայրենիք վերադառնալու ցանկությունն անչափ մեծ էր, մոտավոր տվյալներով ցուցակագրվել և ցանկություն էին հայտնել հայրենիք՝ Խորհրդային Հայաստան, գալ ավելի քան 800 հազար մարդ:

Այս հանգամանքից ելնելով Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Գ. Հարությունովը դիմեց Ստալինին, առաջարկելով Հայաստանին միացնել Լեռնային Ղարաբաղը, որտեղ հնարավոր կլիներ արտասահմանից ավելի շատ մարդ ընդունել և բնակեցնել:

Սովետական Միության կոմկուսի Կենտկոմն ստանալով այդ նամակը, տեղյակ է պահում Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի այն ժամանակվա առաջին քարտուղար Բաղիրովին: Բաղիրովն այս հարցում ևս ցույց է տալիս իր բիրտ ավանտյուրիզմը: Լեռնային Ղարաբաղի հարցի մասին նա նամակ է գրում կուսակցության կենտրոնական կոմիտեին և հայտնում, որ իբր Ադրբեջանի Կենտկոմը չի առարկում վերադարձնել Ղարաբաղը, միայն մեկ պայմանով, եթե Հայաստանն Ադրբեջանին տա Բասարգեչարի, Վեդու, Զանգիբասարի, Կրսնոսելսկի, Ամասիայի, Ազիզբեկովի շրջանները:

Երբ Գ. Հարությունովը մերժում է Բաղիրովի մտադրությունը, վերջինս առաջարկում է Հայաստանի տարածքից ադրբեջանցիներին Մուղանի դաշտավայր փոխադրելու մասին, որպեսզի այդ շրջաններում տեղավորեն հայրենադարձներին:

Հայաստանից Ադրբեջան փոխադրվեց մոտ 40 հազար ադրբեջանցի՝ իր հետ տանելով 500 հազար մանր և 200 հազար խոշոր եղջերավոր անասուններ:

Հայրենադարձների մի մասին տեղավորեցին այդ բնակա-

վայրերում: Բայց երկար չտևեց ադրբեջանցիների մնալն Ադրբեջանում: Մեկ-երկու տարուց հետո, գրեթե մեծ մասը, վերադարձան և ավելի ծանր պայմաններ ստեղծվեց հայրենադարձ հայերի համար: Փաստորեն այնպես ստացվեց, որ ադրբեջանցիները հանրային ունեցվածքը տարան և թողեցին Ադրբեջանում և իրենք մերկ ետ վերադարձան: Հայաստանի կառավարությունը ստիպված եղավ օգնելու ադրբեջանցիներին՝ նոր գույք և անասուններ ձեռք բերելու, հանրային տնտեսություն կազմակերպելու համար: Մի խոսքով, մի կողմից հայրենադարձներ արտասահմանից, մյուս կողմից, փախստականներ Ադրբեջանից:

Ինչպես վերևում ասվեց, 60 տարիների ընթացքում ոչ մի օր չի դադարել բողոքը և խնդրանքը Ղարաբաղի հարցի լուծման կապակցությամբ: Այդ հարցն ավելի չիկացավ, երբ Ղրիմի հարցը գրչի մեկ հարվածով լուծվեց: Այս անգամ Լեռնային Ղարաբաղից 48 հազար ստորագրությամբ դիմումների տարափ տեղաց: Դրան միացավ հանրապետության մտավորականությունը: Դիմումներ գրեցին Վիկտոր Համբարձումյանն ու Մարտիրոս Սարյանը, Արամ Խաչատուրյանը և ուրիշներ:

1966 թվականին արդեն դիմումները հանգիստ չէին տալիս կենտրոնական կոմիտեին և սովետական կառավարությանը:

1966 թվականի մարտին Հայաստանի կոմկուսի Կենտկոմում եղած բոլոր դիմումները, այդ թվում 40 հազար ստորագրությամբ, ես ներկայացրի Սովետական Միության կոմկուսի Կենտկոմի քարտուղար Կապիտոնովին:

Կապիտոնովը խնդրեց, որ իր մոտ թողնեմ բոլոր դիմումները և խնդրանքները (չնայած այդ բոլորի պատճենները կային իրենց մոտ) ղեկավարությանը զեկուցելու համար: Մենք նպատակահարմար էինք գտնում, որ Կենտկոմի ղեկավարությանը զեկուցի հենց ինքը՝ կուսակցական մարմինների բաժինը: Այդպես էլ ստացվեց:

Կապիտոնովը զեկուցել էր Կենտրոնական կոմիտեի առաջին քարտուղար Բրեժնևին: Հաջորդ օրը Բրեժնևը կանչեց ինձ և ասաց, որ ինքը գնում է արձակուրդ և հայտնեց, որ այդ հարցի շուրջը խոսակցություն է բացվել քարտուղարության նիստում և

համաձայնվել են կուսակցության Կենտկոմի քարտուղարության որոշմամբ հանձնարարել Անդրկովկասի երեք հանրապետությունների կենտկոմների առաջին քարտուղարներին, այսինքն Մժավանաձեին, Ախունդովին և Քոչինյանին: Բրեժնևին խնդրեցի, որ եթե քննարկվելու է Լեռնային Ղարաբաղի հարցը, ապա Վրաստանի քարտուղարն այստեղ անելիք չունի:

Ընկ. Բրեժնևն իր մոտ հրավիրեց Կենտկոմի քարտուղար Կիրիլենկոյին (այդ ժամանակ բացակայում էր Սուսլովը) ու հանձնարարեց կազմել քարտուղարության որոշումը, որով պետք է հանձնարարվի Ադրբեջանի կուսակցության Կենտկոմի առաջին քարտուղար ընկ. Վ. Յ. Ախունդովին և Հայաստանի Կենտկոմի առաջին քարտուղար Քոչինյանին՝ ներկայացնելու առաջարկություն Լեռնային Ղարաբաղի հարցի վերաբերյալ:

Անհրաժեշտ է նշել, որ ըստ Բրեժնևի կարծիքի, մենք ինչպիսի առաջարկություն էլ ներկայացնենք, քաղբյուրոյի նիստում նրանք պետք է ընդառաջ գնային դարաբաղցիների խնդրանքին:

Իրոք, 1966 թ. ապրիլի սկզբներին, ստացանք Սովետական Միության կոմկուսի Կենտրոնական կոմիտեի քարտուղարության որոշումը Կենտկոմի քարտուղար Կիրիլենկոյի ստորագրությամբ, քանի որ ինչպես վերը նշվեց, Մ. Ա. Սուսլովը գտնվում էր արձակուրդում: Կենտրոնական կոմիտեի քարտուղարության որոշումն ուղարկվել էր Ադրբեջանի կուսակցության Կենտկոմին, Հայաստանի կոմկուսի Կենտկոմին և Լեռնային Ղարաբաղի մարզային կոմիտեին:

Քարտուղարության որոշումը ստանալուց հետո, ես փորձեցի հեռախոսով կապվել ընկ. Ախունդովի հետ: Բանից պարզվեց, որ նա ևս գտնվում էր արձակուրդում: Խոսեցի Կենտկոմի երկրորդ քարտուղար Պ. Ելիստրատովի հետ: Խոսակցության ժամանակ ես զգացի, որ Ելիստրատովը հարցի դրական լուծման ջերմ կողմնակից է:

Ավելին, նա ասաց, որ ինքը խոսել է Լեռնային Ղարաբաղի մարզկոմի առաջին քարտուղար Մելքումյանի հետ և խորհուրդ է տվել այս հարցի քննարկման ժամանակ ավելի համարձակ դիրք բռնել: (Հավանական է, որ Ելիստրատովը ճանաչելով Մել-

քումյանին, նրա չափազանց զգուշությունը, որը վախկոտությունը էր հասնում, այդպիսի խորհուրդ էր տվել: Ինչպես պարզվեց հետագայում, շատ վատ դեր խաղաց Մելքումյանի վախկոտությունը):

Մի քանի օրից արձակուրդից վերադարձավ Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար ընկ. Ախունդովը: Ախունդովին հեռախոսով հարցրեցի, թե նա կարդացե՞լ է կուսակցության Կենտկոմի քարտուղարության որոշումը: Չնայած հենց առաջին օրը կարդացել էր, բայց ինձ ասաց, որ ինքը դեռ չի կարդացել և նման որոշման մասին տեղեկություն չունի:

Անհրաժեշտ է ասել, որ որոշումն ընդունելուց հետո, քաղբյուրոյի գրեթե բոլոր անդամների հետ խոսել էի և նրանք բոլորն էլ գտնում էին, որ արդարացի է Հայաստանին միանալու Լեռնային Ղարաբաղի պահանջը:

Ավելի քան երկու ժամ զրույց ունեցանք Ա. Պ. Կիրիլենկոյի հետ:

Իմ հանգամանալից բացատրությունը լսելուց հետո, նա ասաց, որ Բրեժնևը կարգադրել է ստորագրել այդ որոշումը և, որ ինքն արդեն ստորագրել է: Հետո ավելացրեց. «Ինձ համար այդ հարցը ոչ մի նշանակություն չունի և ես հասկանալ չեմ ցանկանում»:

Հարցին շատ ջերմ մոտեցում ունեցան Մազուրովը, Շելեստը, Վորոնովը, Պոդգոռնին և մի շարք ուրիշներ:

Այսքանից հետո ինձ թվում էր, թե հարցը կքննարկվի և կարող է անարդարությունը վերացվի: Բայց այս կարծիքը երկար չտևեց: Գրեթե ամեն օր զանգահարում էի Ախունդովին և խնդրում կամ ինքը գա Հայաստան, կամ ես գնամ Ադրբեջան, հանդիպենք, քննարկենք, թե ինչ է արվելու, ինչ առաջարկներ ենք ներկայացնելու Կենտկոմի քաղբյուրոյին:

Ախունդովը խորամանկաբար ձգձգում էր մեր հանդիպումը, մինչև Մ. Ա. Սուսլովը վերադառնա արձակուրդից:

Երբ Սուսլովը վերադառնում է արձակուրդից, Ախունդովը նրան զեկուցում է և տեղեկացնում, որ ամեն օր Քոչինյանը զանգահարում և պահանջում է հանդիպում և առաջարկում, որ

Կենտկոմը հետ պահանջի իր որոշումը:

Սուսլովը Ախունդովին խորհուրդ է տալիս որ համաձայնության գա կիրակի օրվա համար Քոչինյանին հանդիպում խոստանալով, իսկ մինչ այդ Կենտկոմը տեղյակ կպահի Հայաստանի Կենտկոմին, Քոչինյանին, քարտուղարության որոշումը հետ պահանջելու մասին:

Զմոռանամ ասել, որքան աշխատեցի հանդիպել Մժավանաձի հետ և խոսել ու խնդրել այս հարցով իր օգնությունը, նա խուսափեց ինձ հետ հանդիպել:

Քաղբյուրոյի երկու անդամների հետ այդ առիթով զրուցելու նպատակով ես մեկնեցի Պիցունդա, որտեղ հանգստանում էին Ա. Միկոյանը, Մազարովը և Մժավանաձեն: Հիմնական նպատակս էր հանդիպել Մժավանաձեի հետ, քանի որ Միկոյանի և Մազուրովի հետ խոսել էի Մոսկվայում: Նրանք ջերմորեն պաշտպանում էին այդ հարցի դրական լուծմանը:

Սուսլովի վերադարձից հետո, Կիրիլենկոն մեկնել էր Սոչի՝ հանգստանալու, որտեղ նա միշտ տոնում էր իր ծննդյան օրը: Մժավանաձեն իմանալով իմ Պիցունդա ժամանելու մասին, մեկնում է Սոչի Կիրիլենկոյի ծննդյան տոնակատարությանը մասնակցելու պատրվակով: Սոչիում էլ կատարվում է չնախատեսված զարհուրելին: Սուսլովը համաձայնեցնելով Բրեժնևի հետ, կարգադրում է հետ պահանջել քարտուղարության որոշումը և հարցը համաձայնեցնում կենտկոմի քարտուղարների, առաջին հերթին Կիրիլենկոյի հետ:

Կենտկոմից կապվում են Կիրիլենկոյի հետ այն ժամանակ, երբ արդեն Մժավանաձեն գտնվում էր նրա մոտ: Կիրիլենկոն տալիս է իր համաձայնությունը հետ կանչելու քարտուղարության որոշումը: Միաժամանակ հայտնում է, որ Մժավանաձեն գտնում է, որ այդպիսի հարց չպետք է քննարկվի, քանի որ նման հարցեր շատ կան և տակից դուրս գալ հնարավոր չէ:

Երբ արդեն պատրաստվել էի մեկնել Բաքու և օդանավը պատրաստ ինձ էր սպասում, զանգահարեցին Սուսլովի քարտուղարությունից: Պահանջեցին հետ վերադարձնել քարտուղարության որոշումը և արգելեցին իմ Բաքու մեկնելը:

Մինչև քարտուղարության որոշման հետ պահանջելը, մեծ մտահոգություն էր պատճառում Լեռնային Ղարաբաղի մարզային կուսակցական և սովետական կազմակերպությունների, առանձնապես ղեկավարների, վերաբերմունքը: Այդ դրությունը պարզելու համար մինիստրների սովետի նախագահ ընկ. Բաղալ Մուրադյանին ուղարկեցին Գորիս՝ հանդիպելու մարզկոմի առաջին քարտուղար ընկ. Մելքումյանի հետ: Նրանք պետք է պայմանավորվեին, որպեսզի մարզային կուսակցական և խորհրդային ղեկավար մարմիններն իրենց կարծիքը հայտնեն Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը Հայաստանի կազմի մեջ մտցնելու մասին:

Մենք համոզված էինք, որ Ղարաբաղի ղեկավար մարմինները վճռական դիրք կբռնեն, դրական կարծիք կտան, մանավանդ իրենց, մարզի ղեկավարներին քաջ հայտնի էր աշխատավորների կարծիքը, նրանց համախոսականները Մոսկվա, Բաքու և Երևան ուղարկելու մասին:

Ավելին, երբ ստացվել էր կուսակցության Կենտկոմի քարտուղարության որոշումը, Ադրբեջանի Կենտկոմի երկրորդ քարտուղար Ելիստրատովը զանգահարել էր Ղարաբաղի մարզկոմի քարտուղար Մելքումյանին և ասել, որ նրանք կարող են իրենց կարծիքը հայտնել, ցույց տալ իրենց վերաբերմունքը այդ հարցի նկատմամբ:

Ելնելով հենց այս դրությունից Բ. Մուրադյանի և Մելքումյանի հանդիպումը կազմակերպեցինք Գորիսում: Այդ հանդիպման ժամանակ ընկեր Մուրադյանի ջանքերն ապարդյուն անցան: Մուրադյանի խնդրանքը, նրա բոլոր բացատրությունները, թե մարզի ղեկավարությունը թող իր կարծիքն ասի, Մելքումյանը կատեգորիկ կերպով հրաժարվեց, պատճառաբանելով, որ Ախունդովը կվերադառնա արձակուրդից և կպատժի իրեն:

Ղարաբաղի մարզի ղեկավարների բռնած դիրքն ավելի բարդացրեց գործը և ծանր պայմաններ ստեղծեց հետագայի համար:

Կուսակցության Կենտկոմի քարտուղարության որոշումը հետ պահանջելուց, Սուսլովի կարգադրությամբ իմ և Ախունդովի հանդիպումն արգելելուց հետո, Հայաստանի կուսակցության

կենտրոնական կոմիտեի ղեկավարությունը հարկադրված էր նամակով դիմել կուսակցության Կենտկոմի քաղբյուրոյին:

Նամակի բովանդակությունն այն էր, որ ժամանակին անարդարացի լուծում է ստացել Լեռնային Ղարաբաղի և Նախիջևանի հարցը: Պատմականորեն հիմնավորելով Նախիջևանի և Ղարաբաղի պատկանելիության հարցը, սովետական իշխանության տարիներին Հայաստանի տնտեսական ու կուլտուրական զարգացման մակարդակը, Լեռնային Ղարաբաղի աղետալի հետամնացությունը և ելնելով սովետական Սահմանադրությունից, անհրաժեշտ էր համարվում, որ կուսակցության Կենտկոմի քաղբյուրոն անդրադառնա այդ հարցին և լուծում տա:

Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտկոմի ղեկավարությունը հարցը դնում էր այսպես, որպեսզի վերջնականապես վերջ դրվի երկու հանրապետությունների՝ Ադրբեջանի և Հայաստանի միջև ազգային անառողջ երևույթներին, իրականում արդարացի լուծում ստանա Ղարաբաղի և Նախիջևանի հարցը՝ դրանք պետք է .մտցնել Հայաստանի տարածքային կազմի մեջ: Եթե այդ երկուսի հարցի լուծումը դժվար է, և ինչ-ինչ պատճառներով հնարավոր չէ, ապա Հայաստանի կոմկուսի Կենտկոմի ղեկավարությունը խնդրում է.

1. Առաջին հերթին լուծել Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի հարցը՝ ընդառաջ գնալով Ղարաբաղի աշխատավորության արդարացի պահանջին, խնդրանքին՝ այն մտցնել Սովետական Հայաստանի կազմի մեջ:

2. Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտկոմը խնդրում է, եթե կուսակցության Կենտկոմի Քաղբյուրոն հնարավոր չի գտնում առաջին խնդրանքը լուծելու, ապա մենք խնդրում ենք, որ Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունը մտցվի Հայաստանի վարչական կազմի մեջ, ինչպես պահանջում է Սովետական Միության Սահմանադրությունը, իսկ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը մնա Ադրբեջանի վարչական կազմում, որը նույնպես Սահմանադրության ոգուն համապատասխանում է:

Նամակի պատճենները կան Կենտկոմի արխիվում, այն կա-

րելի է ամբողջովին մեջ բերել, բայց, իմ կարծիքով, պետք է թղթին հանձնել այն մասը, որի մասին ոչ ոք չգիտի, բացի մեկ-երկու հոգուց:

Այս նամակներով մեկնեցինք Մոսկվա՝ անձնական զրույցներ ունենալու, պարզելու, թե ինչու Սուսլովը հետ կանչեց քարտուղարության որոշումը և ինչու այդքան պարզ և միաժամանակ կնճռոտ հարցն առանց բազմակողմանի ուսումնասիրման և քննարկման, խորտակվեց:

Առանձին հանդիպում ունեցանք (ես և Բ. Մուրադյանը) Կենտկոմի գլխավոր քարտուղար ընկ. Լ. Ի. Բրեժնևի հետ: Բրեժնևը մեզ սփոփիչ որևէ բան չասաց, միայն հայտարարեց, որ ինքը ստացել է մեր նամակը և որոշել է հանձնարարել Գերագույն խորհրդի նախագահության նախագահ ընկ. Պոդգորնուն՝ հաշվի առնել, այն Սահմանադրական հանձնաժողովում ուսումնասիրել և, նոր Սահմանադրության նախագծի քննարկման ժամանակ անպայման հաշվի կառնվի և կլսվի ընկ. Պոդգորնու հաղորդումն այդ հարցի վերաբերյալ:

Մի խոսքով, այդ հարցը փաստորեն խորտակվեց, իմ կարծիքով, անվերադարձ, համենայնդեպս այժմյան պայմաններում:

Մեր պատմածը լրիվ չի լինի, եթե երկու խոսք չասվի Սուսլովի հետ իմ և Բաղալ Մուրադյանի հանդիպման մասին:

Երբ Բրեժնևը հայտնեց, որ այդ հարցն իր կողմից հանձնարարված է Պոդգորնուն և Սահմանադրական հանձնաժողովին, որոշեցինք լինել Կենտկոմի քարտուղար Մ. Ա. Սուսլովի մոտ: Նա մեզ շատ սառը ընդունեց, դեմքին նայելիս, կարծես մոմից պատրաստված լիներ:

Մեր երկար ու բարակ բացատրությունները նրան չէին հետաքրքրում: Նա արդեն, ինչպես ասում են, իր սև գործը կատարել և հիմա ձևի համար հանգիստ, անտարբեր լսում էր մեզ:

Սուսլովը զգալով, որ մեր պահանջներն արդարացի են, մանավանդ, որ հարցը դնում էինք Սահմանադրության համապատասխան դրույթի համաձայն Նախիջևանը Հայաստանին վերադարձնելու տեսանկյունով, նա ստիպված եղավ ասելու, որ այդ հարցը հանձնարարված է Պոդգորնու գլխավորած հանձ-

նաժողովին, որ ինքը այդ ժամանակ կօգնի հարցի դրական լուծմանը: Բայց դա բացարձակ, վերացական խոստում էր՝ մեզանից ազատվելու համար:

Երկրորդ օրը ես հանդիպեցի ընկ. Պոդգորնուն: Նրան արդեն Կենտկոմից հայտնել էին, բայց հարցի բուն էության մասին բոլորովին անտեղյակ էր: Պոդգորնին ասաց, որ Ա. Միկոյանն իրեն բացատրել է, բայց լրիվ չի կարողանում կողմնորոշվել:

Ձեռքիս տակ գտնվող նյութերը խոստացա թողնել իրեն, բայց, քանի որ նրա մոտ էի, խնդրեցի լսել ինձ: Ես հանգամանորեն ներկայացրի հարցի պատմությունը:

Ինձ լսելուց հետո Պոդգորնին շատ զայրացավ, որ մինչև հիմա, այսքան տասնյակ տարիներ անցնելուց հետո, մենք հաշվի ենք առնում քսանական թվականներին Թուրքիայի հետ կնքված պայմանագիրը, որ դա երբեք չի կարող խոչընդոտել մեր երկրի ներքին հարցերը լուծելուն, ելնելով մեր երկրի հիմնական օրենքից, որ ճիշտ կլինի Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունը գտնվի Հայաստանի վարչական կազմում, իսկ Լեռնային Ղարաբաղը՝ Ադրբեջանի կազմում: Այդ դեպքում, ընդգծեց Պոդգորնին, ինքնավարությունը լրիվ արդարացվում է, քանի որ Նախիջևանում ապրողների մեծ մասն ադրբեջանցիներ են, իսկ Լեռնային Ղարաբաղում ապրողների մեծ մասը հայեր են:

Այսպիսով պայմանավորվեցինք, որ Սովետական Միության Սահմանադրության նախագիծը քննարկելու նախօրյակին, Պոդգորնին պետք է հրավիրի Ադրբեջանի և Հայաստանի ղեկավարներին քննարկելու այդ հարցը և նոր ինքը՝ Պոդգորնին, կհանձնարարի իրավաբաններին ներկայացնելու առաջարկություն:

Այս բոլորից հետո, 1967 թ. փոփոխություն կատարվեց Ադրբեջանի Կենտկոմի ղեկավարության մեջ՝ կուսակցության Կենտկոմի առաջին քարտուղար Ախունդովին փոխարինեց Ալիևը:

Եթե Ախունդովը հարցի քննարկման ժամանակ գոնե արտաքնապես իրեն լոյալ, զուսպ էր պահում, ապա միանգամայն հակառակն էր Կենտկոմի նոր քարտուղար Ալիևը:

Ալիևն աշխատանքի անցնելու երկրորդ օրը սկսեց խոսել ու թմբկահարել Լեռնային Ղարաբաղի և Նախիջևանի մասին, հայտարարելով, որ Նախիջևանի և Ղարաբաղի հարցի արծարծումը նացիոնալիզմ է և հարցը բարձրացնողները նացիոնալիստներ են:

Ալիևը ռեակտիվ արագությամբ կարողացավ գրավել Բրեժնևի ու Սուսլովի վստահությունը: Կենտկոմի այդ բարձրագույն ղեկավարներին նա շատ շուտ համոզեց, որ Լեռնային Ղարաբաղի հարցի բարձրացումը նացիոնալիզմ է և, որ Ղարաբաղի աշխատավորները չեն ցանկանում Ադրբեջանի վարչական տարածքից դուրս գալ, որ, իբր այդ բոլորը Հայաստանի ղեկավարների կողմից կազմակերպված գործ է:

Այս բոլորի մասին ես իմացա այն ժամանակ, երբ Սուսլովը մի այլ հարցի մասին խոսելու ժամանակ չմոռացավ ասել, որ «ահա Ադրբեջանի Կենտկոմի քարտուղար Ալիևը գտնում է, որ չկա Նախիջևանի և Ղարաբաղի հարց, որ դա Հայաստանի կուսակցական Կենտկոմի ղեկավարության հորինած գործն է և, որ այդ հարցը Սահմանադրական հանձնաժողովում քննարկելու հարց չէ, ավելի ճիշտ այդպիսի հարց գոյություն չունի, որ այդ հարցից նացիոնալիզմի հոտ է գալիս»:

Ես գիտեի, որ Սուսլովը շատ լավ գիտի հարցի բուն էությունը, այդ պատճառով էլ նորից բացատրելու հարկ չհամարեցի, միայն ասացի, որ եթե մարդիկ կան, որ գտնում են, որ Լեռնային Ղարաբաղի և Նախիջևանի հարցի քննարկումից նացիոնալիզմի հոտ է գալիս, ապա նույն հաջողությամբ կարելի է ասել, որ այդ հարցի չքննարկումից մեծապետական շովինիզմի հոտ է գալիս:

Այնուհետև ասացի, որ խնդրում եմ, ինչպես հանձնարարված է Գերագույն խորհրդի նախագահության նախագահին, թող հրավիրի մեզ և քննարկի այդ հարցը: Իմ կարծիքով այդ ժամանակ հայտնի կդառնա, թե որն է հարցի նացիոնալիստական կողմը: Սուսլովը պատասխանեց, որ եթե ցանկանում եմ, կարող եմ խոսել ընկ. Բրեժնևի հետ:

Մի քանի օրից ընդունելություն խնդրեցի ընկ. Բրեժնևից և

եղա նրա մոտ: Հիմնական խնդիրս Ղարաբաղի և Նախիջևանի հարցի պարզումն էր:

Մի քանի այլ տնտեսական հարցերի քննարկումից հետո, ասացի, որ Սուսլովն այսպիսի հայտարարություն է անում, որ այդ քաղաքական հարցին տարբեր գույներ են կպցնում, որպեսզի մենք հրաժարվենք հարցադրումից: Առաջին պահից, իմ կարծիքով, Բրեժնևը, իրեն լավ զգաց, որ այդ մասին Սուսլովն է խոսել և որ այդպիսի պիտակներ են կպցնում:

Ես ստիպված եղա նկատել, որ դա ընկ. Ալիևի սարքած գործերն են և ասացի. «Խնդրում եմ Ձեր կարգադրությունը հետ չվերցնեք, թողեք, որպեսզի քննարկվի, եթե ես սխալ լինեմ, պատասխանատու եմ»:

Այս անգամ, իմ ներկայությամբ, Բրեժնևը զանգահարեց Պոդգորնուն և ասաց, որ իր հանձնարարությունը մնում է ուժի մեջ, որ անհրաժեշտ է հրավիրել համապատասխան չահագրգռված կողմերին, քննարկել և ներկայացնել Գերագույն սովետի նախագահության նախագահի կարծիքը:

Այդ ժամանակից անցավ մի քանի տարի:

Մեր բարձրացրած հարցի քննարկումը հիմնականում կապվում էր Սահմանադրական հանձնաժողովի աշխատանքի հետ: Բրեժնևի կարծիքով, նոր Սահմանադրության նախագծի քննարկման ժամանակ, կարելի է անդրադառնալ այդ հարցին և հանձնարարեց ունենալ Միության հեղինակավոր իրավաբանների կարծիքը և քննարկել այդ հարցն Ադրբեջանի և Հայաստանի ղեկավարների հետ:

Ցավով պետք է նշել, որ Ալիևը Սուսլովին լավ մշակելուց հետո, անմիջապես անցավ Բրեժնևին: Ալիևը կարողացավ հասնել այն բանին, որ գոյություն չունի Ղարաբաղի և Նախիջևանի հարց, որ այդ բոլորը Հայաստանի ղեկավարների հնարած բանն է, որ դա նացիոնալիզմ է, այդպիսի հարցադրումը խանգարում է ինտերնացիոնալ դաստիարակությանը:

Բանը հասավ այնտեղ, որ իբր Ղարաբաղից եկած նամակները և ստորագրությունները համախոսականները Հայաստանի ղեկավարների կազմակերպած գործն է:

Այս բոլորից հետո, մի անգամ Բրեժնևի հետ ունեցած զրույցի ժամանակ, նա ինձ ասաց, իբր ինքը իմ աշխատանքից գոհ է, բայց իրեն դուր չի գալիս, երբ ես բարձրացնում եմ Ղարաբաղի հարցը, որ իբր Ալիևն իրեն զեկուցել է, որ այդտեղ հարց չկա, միայն իմ կողմից ստեղծածն է: Երբ նրան խնդրեցի ստուգել կուսակցության Կենտկոմում եղած նյութերը և հարցում կատարել նրանց, ովքեր ստորագրել են համախոսականի տակ, ովքեր դիմել են, նա ասաց, որ այլևս այդ հարցին չենք անդրադառնալու մինչև Գերագույն խորհուրդը չներկայացնի իր կարծիքը:

Աշխատանքից ազատվելուց հետո, իմ կարծիքով, ոչ ոք չհետաքրքրվեց և Սահմանադրական հանձնաժողովի նիստերը եղան, անցան, բայց Ղարաբաղի հարցը մնաց նույնը:

Մի քանի տարի հետո ազատեցին նաև Պոդգորնուն և այդ հարցը հանձնվեց արխիվ:

Ալիևը և Դեմիրճյանը հաստատել են, որ իրենք այդպիսի հարց չունեն, որ այդ բոլորն արվել է նախկին ղեկավարության կողմից:

Ալիևը վկայակոչելով Դեմիրճյանին, ասել է, որ ստորագրությունները հավաքել է ոմն Ուլուբաբյանը, իսկ Քոչինյանը թյուրիմացության մեջ է գցել Կենտկոմի քարտուղարությանը՝ որոշում ընդունելու ժամանակ: (Այստեղ ձեռագիրն ընդհատվում է – խմբ.):

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑՆԵՐԻ ՀՈՒՇԵՐ

ՎԱՐԱԶԴԱՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՎԵՐԺԻ ՃԱՄՓՈՐԴԸ

Առաջացած տարիքումս վկա եմ եղել Հայաստանի կուսակցական ու պետական բարձրաստիճան ղեկավարների գործունեությանը՝ ի նպաստ պատմական մեծ վերածնունդ ապրող հայ ժողովրդի նորօրյա արարումների: Դրանց թվին է պատկանում Անտոն Երվանդի Քոչինյանը՝ լոռեցի հայրենակիցների հորջորջմամբ՝ Քոչնանց Անտոնը:

Հարաճուն եղավ նրա վերելքը՝ սկսվելով շրջանային թերթի լրագրողից, կոմերիտմիության տարբեր կազմակերպությունների ղեկավարից, հասնելով Հայաստանի կառավարության նախագահի, վերջում՝ Հայկոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղարի պաշտոնին:

Նրա հետ հանդիպելու առիթ ունեցա, երբ վարչապետ էր: Ներկայացա իր նստավայրը՝ կառավարական տուն: Ներկայացա՝ որպես Հայաստանի ճարտարապետների միության վարչության նախագահ ու պատմական հուշարձանների պահպանության հայկական ընկերության նախագահի տեղակալ (պատվավոր նախագահը Մարտիրոս Սարյանն էր): Դա այն տարին էր, երբ լրացել էր Հայոց Մեծ եղեռնի 50 տարին: Մայր Հայաստանում ու բովանդակ սփյուռքում ծայր էին առել բողոքի ցույցեր՝ պահանջելով, որ իր արդարացի գնահատականը ստանա Թուրքերի իրականացրած ոճրագործությունը: «Մեր հողերը, մեր հողերը» կանչողներից շատերը չգիտեին, որ Թուրքիայում եղեռնը շարունակվում էր, այս անգամ անտերունչ մնացած

հայկական հավատքի ու մշակույթի հուշարձանների նկատմամբ: Իրականացվում էր ստոր մի ծրագիր՝ Թուրքիայի կողմից գրավված Արևմտյան Հայաստանի տարածքում խպառ վերացնել հայերի հիշատակը: Պայթեցվում ու ավերվում էին բազմաթիվ վանքային համալիրներ ու տաճարներ, դրանք վերածվել էին փլատակների կամ լիովին անհետացել:

Հանդիպմանս նպատակն էր վարչապետին իրազեկ դարձնել այդ մասին, խնդրել, որ Հայաստանի կառավարությունը համապատասխան միջազգային ատյաններին դիմում ուղղի, քանզի սփյուռքահայ կազմակերպությունների դիմումներին պատասխան չի տրվում, որովհետև նրանք չէին դիտվում որպես իրավական կողմ, այդ կարգավիճակը չուներին:

– Անտո՛ն Երվանդովիչ,– ասացի,– այդ կարգավիճակը պատկանում է Հայաստանի կառավարությանը: Մինչև ե՞րբ հանդուրժենք Թուրքերի սանձազերծած բարբարոսությունները:

– Իրավացի ես,– պատասխանեց Քոչինյանը,– սակայն երևի տեղյակ ես դրա պատճառներին: Վստահ չենք, որ մեր դիմումին միութենական կառավարությունը ընթացք կտա, որովհետև չի ցանկանա խաթարել սովետաթուրքական հարաբերությունները:

– Գուցե փորձե՞ք,– հուշեցի:

– Համաձայն եմ,– պատասխանեց,– կազմի՛ր և ինձ ներկայացրու՛ մի զեկուցագիր՝ կցելով լուսանկարչական համապատասխան փաստագրեր:

Որոշ ժամանակից հետո ներկայացա իր պահանջածով: Խնդրեց թողնել՝ ծանոթանալու: Մի քանի օր անց նրա քարտուղարը հեռաձայնեց՝ խնդրելով ներկայանալ Անտոն Քոչինյանին:

– Վարազդա՛տ,– մտերմորեն ասաց,– տեղյակ լինելով վերին ատյանների՝ այս հարցերում եղած դիրքին՝ կասկածում եմ, թե ընթացք կտան:

Թեև ստալինյան բռնապետության ժամանակներն անցել էին, սակայն լիովին չէին հաղթահարվել, հին մտայնությունը դեռ իրեն զգալ էր տալիս:

– Հապա ի՞նչ անենք, ինչպե՞ս արդարանանք Մայր հայ-

բենիքի ու սփյուռքի հայության առաջ:

– Այդ առթիվ ոմանց հետ խորհրդակցեցինք, գտանք, որ հարմար կլինի՝ դա կատարվի հասարակական կազմակերպության անունից: Օրինակ՝ նորաստեղծ ձեր ընկերության միջոցով, մանավանդ որ 1965 թվականը հայտարարված է որպես հուշարձանների պահպանության միջազգային տարի:

Պետական մարդիկ ավելի խելոք ու հեռատես են, քան մեզ նման երդվյալ հայրենասերները: Խորհրդակցելով Մարտիրոս Սարյանի հետ՝ գտանք, որ վարչապետի առաջարկը միանգամայն տեղին է, ուստի գործի անցա, կազմեցի նոր զեկուցագիր, կցեցի համապատասխան լուսանկարներ ու Մարտիրոս Սարյանի ստորագրությամբ ուղարկեցի Մոսկվա՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի սովետական մասնաճյուղի հասցեով՝ հուսադրվելով, որ պատշաճ ուշադրության կարժանանա:

Սակայն մեզ սպասում էր հուսախաբություն...

Այդ տարի Մոսկվայում բացվել էր Մարտիրոս Սարյանի գործերի ցուցահանդես՝ գրավելով բազում այցելուներ, որը ուրախացնում էր վարպետին: Սակայն խիստ վրդովվել էր, երբ մեկն իրեն էր մոտեցել ու հայտնել.

– Մարտիրո՛ս Սերգեևիչ, Ձեր դիմումը՝ ուղարկված ՅՈՒՆԵՍԿՕ-ին, քննարկեցինք: Ամբողջովին բաժանում ենք Ձեր վրդովմունքը Թուրքիայում հայկական հուշաձանների ավերումների առթիվ: Սակայն կներեք, հարմար չգտանք ընթացք տալ, քանզի դա կվնասի սովետաթուրքական բարեկամությանը:

Մի կողմ դնելով այդպիսի բարեկամությունը, մեր հայրենասիրական ջանքերը կրկնապատկեցինք՝ օգտվելով առիթից, որ դեռևս հուշարձանների պահպանության միջազգային տարին չէր ավարտվել:

Այդպիսին էր իրադրությունը մեր երկրում այդ տարիներին: Մեր ազգային շահերի պաշտպանության ամեն մի փորձ դեմ էր առնում անհաղթահարելի պատնեշի: Սակայն Հայաստանում ծայր առած վրդովմունքը հետզհետե համաժողովրդական բնույթ էր կրում՝ վերածվելով բուռն ցույցերի: Դրանք մեղմորեն զսպվեցին, ու հանրապետության ղեկավարությունը ճշմարիտ

եզրահանգման եկավ. հարկավոր էր դիմել սովետական վերին ատյաններին, որպեսզի այդ հարցում վերանայեին իրենց վերաբերմունքը, թույլատրեին գոնե մի հուշահամալիր կառուցել՝ ի հիշատակ եղեռնի միլիոնավոր զոհերի: Բարեբախտաբար դրական պատասխան ստացվեց: Դա էլ առիթ ստեղծեց վերստին առնչվել Անտոն Քոչինյանի հետ: Հայաստանի կառավարությանն առընթեր ճարտարապետության և շինարարության պետական կոմիտեին, որի նախագահն էր Գրիգոր Աղաբաբյանը ու Հայաստանի ճարտարապետների միությանը հանձնարարվեց կազմակերպել նախագծերի մրցույթ: Առաջին աշխատանքը մրցութային հանձնաժողովի հավանությանը չարժանացավ: Ընտրելու արժանի ոչ մի նախագիծ չկար, ուստի հայտարարվեց մրցույթի երկրորդ փուլ: Այս անգամ արդյունքները գոհացուցիչ էին: Մրցութային հանձնաժողովը կրկին գործի անցավ՝ հետագա քննարկումից հաջորդաբար հանելով այն նախագծերը, որոնք հավանության չարժանացան: Վերջնական քննարկմանը մնացին երկու նախագիծ, որոնցից մեկը պիտի երաշխավորվեր իրականացման համար: Ճիշտն ասած՝ անձամբ ես դրանցից ոչ մեկը չէի հավանում: Մրցութային հանձնաժողովի անդամներից նույն կարծիքին էին այն տարիների մշակույթի նախարար Ռոբերտ Խաչատրյանը և «Հայպետնախագիծ» ինստիտուտի տնօրեն Կորյուն Հակոբյանը:

Մի երեկո, երբ պիտի տեղի ունենար մրցութային հանձնաժողովի վերջին նիստը՝ քննարկման թողնված երկու նախագծերից մեկը ընտրելու համար, անսպասելի հայտնվեցին Հայկոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Յակով Զարոբյանը, Գերագույն խորհրդի նախագահ Նագուշ Հարությունյանը, վարչապետ Անտոն Քոչինյանը՝ իրենց ուղեկցող ղեկավար աշխատողների մի խմբով: Շարված մի սեղանի շուրջ՝ դիտում էինք վերջնական քննարկմանը դրված նախագծերի երկու մանրակերտները: Չգիտեմ ինչու, Անտոն Քոչինյանն ինձ դիմեց.

– Այս երկուսից դու ո՞րը կընտրեիր:

– Ոչ մեկը, – կտրուկ պատասխանեցի:

– Ինչու՞:

– Նախ երկուսն էլ չեն համապատասխանում մրցութային առաջադրանքին, չեն խորհրդանշում հայրենիքի վերածնության գաղափարը: Սուգը արտահայտող երկու հորինվածքներն էլ անընկալելի են: Եթե սրանցից մեկն ու մեկը իրականացվի, պիտի հեղինակը մոտը կանգնի, որ այցելուներին բացատրի գաղափարը:

– Իսկ դու ո՞րը կընտրեիր:

– Ցավոք, այն հանված է քննարկումից:

Եկողները խնդրեցին այդ նախագիծը ցույց տալ իրենց: Մանրակերտը դրվեց սեղանին: Դիտելուց հետո հարցում արեց Յակով Զարոբյանը.

– Ինչու՞մն է սրա առավելությունը:

– Նախ լիովին համապատասխանում է մրցույթի առաջադրանքին: Երկու բաղադրիչները՝ սուգն ու վերածնունդը, մատուցված են ճարտարապետական պարզ ու մատչելի լեզվով: Մեկը՝ խաչքարաձև խոնարհված կոթողներով, մյուսը՝ չեչտակի վերասլաց սրածայրով: Նախագծում ներդրված գաղափարները պարզ ու մատչելի են ամեն մի դիտողի համար:

Եկողները հավանություն տվին ու մեկնեցին:

Մրցութային հանձնաժողովի անդամները այս անգամ միաձայն հավանություն տվին քննարկումից հանված նախագծին: Մրարը բացելուց հետո պարզվեց, որ նախագծի հեղինակները Արթուր Թարխանյանն ու Սաչուր Քալաչյանն են:

Այդպիսով, Անտոն Քոչինյանը նպաստեց ճիշտ ընտրություն կատարելուն: Մի-ծեռնակարերդի բարձունքում 1968-ին չարք մտած համալիրը, որը մերօրյա հայկական ճարտարապետության լավագույն ստեղծագործության չարքին դասվեց, համընդհանուր հավանության արժանացավ, դարձավ հանուն հայության ուխտատեղի:

Որպես պետական-կուսակցական գործիչ Անտոն Քոչինյանը պատկանում էր Հայաստանի Կոմկուսի առաջին քարտուղար Գրիգոր Հարությունյանի դպրոցին: Օժտված էր շրջահայացությամբ, գիտեր խորամուխ լինել հիմնահարցերում, խուսափել հապշտապ որոշումներ կայացնելուց, մանավանդ՝ իրականաց-

նելուց: Ղեկավարվում էր ժողովրդի իմաստուն խորհրդով՝ «Տասը չափի՛ր, մեկ կտրի՛ր»: Դրա հետ միասին նա օժտված էր կազմակերպչական մեծ շնորհքով ու անսպառ եռանդով: Դա առանձնապես ցայտուն դրսևորվեց, երբ 1969-ին նշվեց իր հայրենակից՝ Ամենայն Հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի ծննդյան 100-ամյակը:

Իր բնույթով համաժողովրդական հոբելյանը գերազանցեց ինչպես «Սասունցի Դավիթ» էպոսի 1000, այնպես էլ Գլաձորի համալսարանի հիմնադրման 700-ամյակների հոբելյաններին:

Հարկ եմ համարում անդրադառնալ նաև նրա գործունեության ևս մի քանի ոլորտների: Իմ ունեցած տպավորությամբ Հայաստանի ոչ մի ղեկավար այնպես չէր ճանաչում Հայաստանը, ինչպես Անտոն Երվանդովիչը: Գիտեր ոչ միայն ամեն տեղի թուփն ու ծառը, կածանն ու ճանապարհը, այլև շրջկենտրոնների ու գյուղերի ղեկավարներին ու նույնիսկ հասարակ մարդկանց, այն էլ՝ անուն-ազգանուններով: Լավատեղյակ էր Հայաստանի բոլոր շրջանների բնակլիմայական պայմաններին, դրանցով թելադրվող գյուղատնտեսական ճյուղերի զարգացմանը, արդյունաբերական այս կամ այն օբյեկտների տեղադրման հնարավորություններին ու դրա հետ կապված՝ քաղաքաշինության զարգացման հիմնախնդիրներին:

Ցավոք, հենց իր հայրենիքում՝ Ալավերդի ու Կիրովական քաղաքներում, իրականացված միջոցառումները՝ վնասաբեր արդյունաբերական համալիրների տեղաբաշխումը, ուղեկցվեցին քաղաքաշինական նորմաների խախտմամբ և հատկապես բնապահպանական առումով թանկ նստեցին բնակչության վրա, այնպես, ինչպես այլումինի գործարանը՝ Երևանում:

Կիրովական քաղաքի հատակագծում քիմիական կոմբինատի չուրջը նախատեսված էր, այսպես կոչված, սանիտարական գոտի, որում արգելվում էր տեղաբաշխել որևիցե շինարարություն: Այս գոտին լիովին ծառատնկման ենթարկվեր: Նշված գոտու մեջ էր մտնում քիմկոմբինատին մոտ գտնվող Փամբակ գետի ձախափնյա տարածքը: Հետագա տարիներին, խախտելով սահմանված կարգը, սանիտարական գոտու որոշ

տարածքներ հետզհետե կառուցապատման ենթարկվեցին, և Փամբակի ձախափնյա մասում առաջացավ մի ընդարձակ բնակելի համալիր: Դրանում բնակեցված հայաստան ներգաղթածները իրավացի բողոքեցին՝ ասելով. «Հայրենիք եկանք, որ թունավորվենք»:

Հարկ եղավ Կիրովականում կազմակերպել ճարտարապետների միության վարչության արտագնա նիստ: Դիտողություն արինք գլխավոր ճարտարապետին, իսկ նա արդարացավ, որ դա կատարված է քաղաքապետարանի կարգադրությամբ, իսկ քաղաքապետը հայտնեց, որ դա թույլատրել է Հայաստանի կառավարությունը, քանզի բուռն զարգացող քաղաքը պահանջ ուներ կառուցապատման նոր տարածքների: Թեկուզ ուշացած, քաղաքի հետագա զարգացման համար սկսեց նվաճվել «Դիմաց» կոչված բարձրադիր տարածքը, որի վրա կառուցապատվեց մի ընդարձակ բնակելի համալիր:

Անտոն Քոչինյանը հետամուտ էր բնական ռեսուրսների նպատակահարմար օգտագործմանը, անտառային զանգվածների պահպանմանը, ծառատունկերով լրացմանն ու թարմացմանը: Էլ ավելի նա հետամուտ էր ջրային պաշարների նպատակահարմար օգտագործմանը, դրանք գյուղատնտեսական կուլտուրաների, հատկապես մրգատու այգիների ու խաղողի տարածքների ընդարձակմանը ծառայեցնելուն:

Հայտնի է, որ Հայաստանի գետերը հոսում են կամ դեպի Վրաստան, կամ էլ Ադրբեջան՝ պակաս չափով օգտակար լինելով Հայաստանին: Անտոն Քոչինյանի նշանաբանն էր հնարավորինս կրճատել ջրերի արտահոսքը Հայաստանից: Այդ կապակցությամբ Հայաստանի կառավարությունը զգալի չափով ավելացրեց ներդրումները ջրամբարների ու ջրհան կայանների համակարգերը ընդարձակելու համար:

Հնագետները Եղեգնաձորի շրջանի Աղավնաձոր գյուղի դաշտում պեղել ու բացել էին միջնադարյան Հայաստանի մի քարավանատան ավերակներ: Այնտեղ մեկնեցի՝ ծանոթանալու, չափագրելու և լուսանկարելու: Ուղեկիցս ասաց, որ այդ գյուղի կարմիր գինին բացառիկ բարձր որակ ունի: Փորձեցի, իրոք,

կարող էր մրցակցել աշխարհի լավագույն գինիներին: Այդ էր պատճառը, որ այնուհետև՝ մինչև այժմ՝ չուրջ կես դար, իմ տան գինին այդ գյուղից եմ բերում: Պատահարար իմացա, որ նույն գինին չատ է հավանում նաև Անտոն Քոչինյանը: Որպեսզի նպաստի ջրապակաս Աղավնաձորում խաղողագործության տարածքների ընդարձակմանը, կարգադրել էր Արփա գետի ափին կառուցել մի հզոր ջրհան կայան, որի օգնությամբ ջուր էր մղվում հարյուր մետրից ավելի բարձր գտնվող սարահարթը: Դա էլ նպաստեց, որպեսզի սարահարթի զգալի տարածություններ պատվեն խաղողի այգիներով՝ տարեցտարի ավելացնելով գյուղի կոլտնտեսության եկամուտները, գնալով էլ ավելի բարձրացնելով Աղավնաձորի գինու համբավը:

Տարբեր առիթներով Անտոն Քոչինյանի հետ մտերմական հանդիպումների առիթներ եմ ունեցել, նույնիսկ սեղանների չուրջը զրուցել ու երգել ենք: Մի օր ասաց.

– Հայրս խիստ պատվիրել էր, որ մարդկանց նկատմամբ լինեմ հոգատար, ոչ մեկին չնեղացնեմ, մանավանդ՝ չվնասեմ:

Նա հավատարիմ էր իր հոր պատվիրանին: Այդ էր պատճառը, որ ժողովուրդը սիրում էր պարզ ու սրտամոտ իր ղեկավարին: Սակայն, ինչպես ամենուր, այնպես էլ մեզ մոտ եղան ստահակներ, որոնք հանդես եկան նրան վարկաբեկելով ու պիտակավորելով:

1974-ին իմ վերջին պաշտոնական հանդիպումն ունեցա Անտոն Երվանդովիչի հետ: Այդ տարի պիտի տեղի ունենար Հայաստանի ճարտարապետների միության հերթական համագումարը: Նախորդ չորս համագումարներում ընտրվել էի վարչության նախագահ, այս անգամ նպատակ ունեի հրաժարվել, քեզնից խոչընդոտում էր իմ մանկավարժական ու գիտահետազոտական գործունեությանը:

Ուշադիր լսեց, դեմքին հավանության նշան չկար.

– Վարազդա՛տ,– ասաց,– ձերոնց բոլորին ես լավ եմ ճանաչում, քեզանից հարմարը դժվար թե ճարվի:

– Կճարվի,– առարկեցի,– ուզողներ չատ կան...

– Դու գիտես,– ասաց,– բայց խորհուրդ չեմ տալիս:

Իր մոտից դուրս եկա, անցա Կարեն Դեմիրճյանի մոտ, որը, որպես քարտուղար, բացի արդյունաբերությունից հովանավորում էր նաև շինարարության ու ճարտարապետության բնագավառները: Նա էլ ուշադիր լսեց, սակայն հավանություն տվեց:

– Վատ չի լինի երիտասարդացնել Հայաստանի ճարտարապետների միության ղեկավարությունը:

Ցավոք սրտի նույն՝ 1974-ին Հայաստանի Կոմկուսի առաջին քարտուղարի պաշտոնից ազատվեց նաև Անտոն Քոչինյանը: Անտեղյակ մնացի, թե ինչու: Պաշտոնանկ արվեց իմաստնացած, փորձառու ու եռանդուն պետական-կուսակցական գործիչը, որ դեռ կարող էր շարունակել իր խիստ օգտակար գործունեությունը՝ ի նպաստ Հայաստանի ու իր սիրելի ժողովրդի:

Պաշտոնանկ արվելուց հետո եռանդուն ու փորձառու Անտոն Քոչինյանին մի այլ, թեկուզ երկրորդական պաշտոն չվստահվեց, մնաց գործազուրկ...

Իմ վերջին հանդիպումը Անտոն Քոչինյանի հետ տեղի ունեցավ Ջրվեժի այգեգործական տարածքի իր հողամասում: Զբաղված էր ծառատունկ անելով, փորում էր ու ցանում, արևի տակ տքնում: Խիստ հուզվեցի, փաթաթվեցինք, համբուրվեցինք... Հրաժեշտ տալիս ասաց.

– Երևանում մեկ-մեկ մո՛տս արի, զրուցենք, նարդի խաղանք, իմ ախոյանը Լևոն Հախվերդյանն է, դու՛ էլ ուժերդ չափիր:

Թեև չատ կուզեի, սակայն այդպիսի առիթ չստեղծվեց:

Սակայն մի տխուր առիթ, այնուամենայնիվ, ծառացավ իմ առաջ՝ նրա թաղմանը մասնակցելը: Ինձանից չորս տարով փոքր Անտոն Քոչինյանին վիճակված էր ինձանից չուտ հրաժեշտ տալ այս աշխարհին: Նա գնաց հավերժի ճամփորդ դառնալու՝ իր հետևից թողնելով բարի հիշատակ և անուն:

ՎԼԱԴԻՄԻՐ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ԱՆՏՈՆ ՔՈՉԻՆՅԱՆԸ ԻՆՉՊԵՍ ՈՐ ԿԱՐ

Երբ ասում են Անտոն Քոչինյան, քո առաջ հառնում է կիրթ ու առաքինի, հայ ժողովրդի նյութ ու ոգուց կերտված, բարի ու զգայուն, ազնվամիտ մարդու չքեղ կերպարը:

Երբ ասում են Անտոն Քոչինյան, մարդն ակամա խանդավառվում ու հպարտանում է իր մեծ հայրենակցի կատարած հայրենաշեն գործերով, հայրենակերտ ձեռնարկումներով:

Երբ ասում են Անտոն Քոչինյան, մարդ ակամայից մտածում է, թե նա դեռ որքա՜ն կարող էր կերտել և արարել, հավելել մնայուն արժեքներ, եթե այդ հնարավորությունն ընձեռվեր նրան: Ամենայն հավանականությամբ նա այդ վիչտը տարավ իր հետ:

Տակավին երիտասարդ տարիքին Անտոն Քոչինյանն արդեն անցել էր կուսակցական ու պետական գործչի երկար ճանապարհ: Նրան ճանաչում, հարգում ու պատկառում էին, ակնածանքով էին վերաբերվում ողջ Հանրապետությունում: Անտոն Քոչինյանին վստահվեց Խորհրդային Հայաստանի Նախարարների խորհրդի նախագահի պատասխանատու պաշտոնը: Նրան վիճակված էր այդ չափազանց պատասխանատու պաշտոնում ամենաերկարակյացը լինել Հանրապետությունում (1952-1966 թթ.): Նա Հանրապետության կառավարության միակ, եզակի նախագահն էր, որ այդ պաշտոնում աշխատեց Կուսակցության Կենտկոմի երեք առաջին քարտուղարների հետ, ինչը բավական պերճախոս փաստ է: Չէ՞ որ դա ամենևին էլ դյուրին գործ չէր: Սակայն Անտոն Քոչինյանի նման երկարակեցությունը կառավարության նախագահի պաշտոնում արդյունք էր նրա՝ Հանրապետության գերազանց իմացությանը, սկզբունքայնությանը, կազմակերպչական մեծ ունակությանը, վարվելակերպի

յուրահատուկ ոճին, անձնական մաքրությանը և վերջապես ժողովրդի մոտ ունեցած ազնվագույն մարդու, իսկական հայրենասերի մեծ հմայքի:

Կարելի է համարձակորեն բարձրաձայնել, որ սկսած անցած դարի 50-ական թվականների սկզբից մինչև իր պաշտոնավարման վերջը, Հանրապետությունում կատարված ազգանվեր բոլոր մեծագործությունների իրականացման ընթացքում Անտոն Քոչինյանը եղել է նախաձեռնողների, իրականացնողների առաջին շարքում:

1966 թվականի փետրվարին Անտոն Քոչինյանն ընտրվեց Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար: Դա առաջին դեպքն էր, երբ Հանրապետության կառավարության երկարամյա նախագահն ընտրվում էր կուսակցական բարձր պաշտոնում: Նա ընտրվեց նաև ԽՄԿԿ Կենտկոմի անդամ: Դա պատահական թռիչք, առաջխաղացում չէր, այլ մեծահմուտ ղեկավարի տեղին, օրինաչափ առաջընթաց, մեծագույն վստահություն, որը բացառում էր մեծամտությունը, փառամոլությունը և ինքնապաշտությունը:

Կուսակցության Կենտկոմի առաջին քարտուղարի պատվավոր ու ծանրագույն պարտականության ստանձնումով Անտոն Քոչինյանի համար բացվեցին նոր հնարավորություններ՝ հայրենաշեն մեծագործությունները լայն չափով ծավալելու, տարիների ընթացքում կուտակած փորձն ու իմաստնությունը գործի դնելու համար: Իրոք, ակնառու են նրա ծառայությունները Հանրապետության կառավարության նախագահ և ապա Կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար աշխատած ժամանակահատվածում: Այդ ընթացքում Հայաստանը մեծագույն զարգացում ապրեց: Կառուցվեցին նոր քաղաքներ, քաղաքատիպ ավաններ, վերափոխվեց, բարգավաճեց ու բարեշինվեց հայ գյուղը:

Հանրապետությունը վերածվեց հսկայածավալ շինհրապարակի: Սկսվեցին խոշորագույն օբյեկտների շինարարությունները: Մեծ թափով շարունակվեց դեռևս Յակով Զարոբյանի հետ նախաձեռնած Արփա-Սևան ջրատարի կառուցումը: Սկսվեցին Երևանի մետրոպոլիտենի, Հայկական ատոմակայանի, Աղստա-

ֆա-Իջևան-Հրազդան, Սևան-Շորժա երկաթուղիների, Երևան-Սևան մայրուղու, Երևանի «Հրազդան» մարզադաշտի, Երևանի «Ռոսիա» կինոթատրոնի և շատ ու շատ այլ օբյեկտների շինարարությունները: Շահագործման հանձնվեց Պուշկինի լեռնանցքի թունելը, սկսվեց Սևանի թունելի շինարարությունը: Նախագծվում էր նաև Մեղրիի թունելի նախագիծը: Զարկ տրվեց միջշրջանային և միջգյուղական ճանապարհների շինարարական աշխատանքներին: Ամենքիս աչքի առաջ մեկը մյուսի հետևից հառնում էին գիտության, կրթության, մշակույթի, առողջապահական օբյեկտներ, հանգստյան տներ և բազում այլ կառույցներ:

Անտոն Քոչինյանը որդիական ջերմ վերաբերմունք ուներ գյուղի նկատմամբ: Նա հաճախ էր կրկնում, որ մենք գյուղ ունեցող ազգ ենք, որ գյուղը ազգի օրրանն է, որ հայ գյուղում օրորոցի բարուրի լացի ձայնը չպետք է կտրվի, որովհետև դա է ազգի հարատևման ճանապարհը, նրա էթնիկական հենքը: Նա հորդորում, պահանջում էր բոլոր ղեկավարներից սատարել գյուղացուն տուն կառուցելու և, ընդհանրապես, նրա սոցիալական վիճակի բարելավմանը ուղղված բոլոր ձեռնարկումներին:

Քոչինյանը բնության մարդ էր, գերազանց գիտեր հանրապետության հողն ու ջուրը, քարն ու թուփը և հատկապես մարդկանց: Նա, այո՛, կարող էր անուն-ազգանունով թվարկել հանրապետության կոլտնտեսությունների նախագահներին, պետական տնտեսությունների տնօրեններին ու արտադրության առաջավորներին: Հանրապետության գերազանց իմացությամբ նա ոչ մի մրցակից չի ունեցել: Տարիների ընթացքում նրա նախաձեռնությամբ իրացվեցին հազարավոր հեկտար քարքարոտ հողեր ու դոներ, լայն թափով սկսվեցին Արարատյան դաշտի աղուտների աղազերծման աշխատանքները, դարավանդակավորման միջոցով օգտագործվեցին տարածքների թեք լանջերը: Հանրապետության շատ շրջաններում հնարավոր եղավ էլեկտրական և հեռախոսային ցանց անցկացնել, ճանապարհներ կառուցել, սոցիալ-կենցաղային օբյեկտներ ստեղծել

սար գնացած անասնապահների համար: Ամենուրեք չարք էին մտնում անասնապահական խոշոր համալիրներ, թռչնաբուծական ֆաբրիկաներ, ջերմոցային տնտեսություններ, գյուղատնտեսական հումք վերամշակող արդյունաբերական ձեռնարկություններ: Զարկ տրվեց ջրամբարների, ջրանցքների և ջրատնտեսական մյուս օբյեկտների կառուցմանը:

Գյուղական բնակչությանը՝ հատկապես երիտասարդությանը, տեղում աշխատանքով ապահովելու նպատակով հանրապետության բազմաթիվ գյուղերում ու ավաններում կազմակերպվեցին արդյունաբերական, շինարարական, կենցաղային և արտադրական բազմաբանակ մասնաճյուղեր:

Ձեռնարկված միջոցառումների իրականացման շնորհիվ հանրապետության տնտեսություններում հնարավոր դարձավ մեծ չափերով ընդարձակել խաղողի և պտղատու այգիները, ճչգրտվեցին և ընդարձակվեցին մշակաբույսերի ցանքատարածությունները, բարձրացավ անասնապահության մթերատվությունը, զգալի չափով ավելացավ գյուղատնտեսական հումքից պատրաստվող արդյունաբերական արտադրանքի տեսականին, քանակը, բարելավվեց որակը:

Բայց դրանք սոսկ կազմակերպչական միջոցառումներ չէին, որ իրականացվում էին հանրապետության իրավասու մարմինների կողմից: Ամեն մի կարևորագույն նախաձեռնություն պահանջում էր իր գիտական ու տնտեսական հիմնավորումը: Շրջաղարձային նշանակություն ունեցավ Կոմկուսի Կենտկոմի և Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության կողմից հրավիրված հանրապետական այն խորհրդակցությունը, որտեղ քննարկվեցին գյուղատնտեսության մեջ գիտության նորագույն նվաճումների և առաջավոր փորձի ներդրման խնդիրները: Ազգային ակադեմիայում հրավիրված խորհրդակցությանը մասնակցում էին կուսակցական ու պետական ղեկավար աշխատողներ, անվանի գիտնականներ, տնտեսության ղեկավարներ, արտադրության առաջավորներ: Խորհրդակցությունում ուշագրավ, իմաստալից ելույթներով հանդես եկան Անտոն Քոչինյանը և Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ Վիկտոր

Համարձումյանը: Միջոցառումն իր դրական ազդեցությունն ունեցավ Հանրապետության գյուղատնտեսական արտադրության հետագա զարգացման գործում: Այդ տարիներին Հանրապետության գյուղի աշխատողների համար պարբերաբար կազմակերպվում էին գիտաարտադրական և տեսական կոնֆերանսներ, նույնատիպ այլ միջոցառումներ:

Անտոն Քոչինյանը մշտական որոնումների մեջ էր: Ուշի ուշով հետևում էր միության մյուս Հանրապետություններում իրականացվող նորություններին, առաջավոր փորձին և աշխատում էր դրանք հնարավորինս ներդնել Հանրապետության ժողովրդական տնտեսության համապատասխան ճյուղերում: Հենց այդ նպատակով էլ Անտոն Քոչինյանի նախաձեռնությամբ և իր անմիջական մասնակցությամբ Հանրապետության ագրոհամալիրի ղեկավարները եղան Մոլդովայում, ուսումնասիրեցին մոլդովացիների առաջավոր փորձը՝ խաղողագործության, այգեգործության, անասնապահության աշխատատար պրոցեսների մեքենայացման և գյուղատնտեսական հումքի վերամշակման գործում: Փոխադարձ այցով մեզ մոտ եկան մոլդովացիները: Առաջավոր փորձի ուսումնասիրման նպատակով Հայաստան ժամանեցին նաև Հարևան Հանրապետությունների ղեկավար աշխատողներ, գիտնականներ, տարբեր մասնագետներ:

Անտոն Քոչինյանը, լինելով մեծ հայրենասեր, հազար թելերով կապված լինելով իր ազգի պատմությանը, գիր ու գրականությանը, մշակույթին, կարողանում էր միշտ մեծ շուքով, արժանավայել կերպով կազմակերպել մեր պետական տոները և ազգային մեծերի հոբելյանական տարելիցները: Մարդիկ երբեք չեն մոռանա Հանճարեղ Թումանյանի և Մեծն Կոմիտասի 100-ամյակներին նվիրված հոբելյանական միջոցառումները, որոնք իրավամբ վերածվեցին համազգային անկրկնելի տոնախմբությունների, որոնց մասնակցում էին նախկին Միության բոլոր Հանրապետություններից և արտասահմանյան շատ երկրներից ժամանած բազմաթիվ հյուրեր, սփյուռքահայեր: Այդ օրերին յուրաքանչյուր հայ մարդ ներքուստ հպարտանում էր,

որ ինքը հայ է, որ իր ժողովուրդը ծնել է Թումանյանի և Կոմիտասի նման հանճարների: Օտարները մոտիկից ճանաչում էին մեր ժողովրդին, վայելում նրա հյուրասիրությունը:

1968 թվականին նույն փառահեղ շքեղությամբ տոնվեց Երևան-Էրեբունի 2750-ամյակը: Դա ազգային ինքնագիտացման, ազգային հպարտության տոնն էր: Դա մեկ անգամ ևս ի լուր աշխարհի ազդարարում էր, որ մենք հին աշխարհի դասական ազգերից ենք, որ մեր հայրենիքի մայրաքաղաքը աշխարհի հնագույն քաղաքներից մեկն է, և մենք՝ հայերս, եղել ենք, կանք, արարում ենք և մեր ներդրումը բերում համամարդկային քաղաքակրթությանը: Մայրաքաղաքի ծննդյան օրը նշող «Էրեբունի-Երևան» տոնակատարությունը դարձավ անվանդական:

Այդ միջոցառումները ներշնչանքի աղբյուր դարձան մեր գրողների, երաժիշտների և մշակույթի շատ գործիչների համար, ստեղծվեցին գրական մեծարժեք գործեր, հորինվեցին նոր, մնայուն ստեղծագործություններ:

Մեծ էին ձեռքբերումները նաև մարզական բնագավառում: Առաջին անգամ 1973 թվականին Երևանի «Արարատ» ֆուտբոլային թիմը հռչակվեց Խորհրդային Միության չեմպիոն և գավաթակիր: Դա փոքր նվաճում չէր, ողջ հայ ժողովուրդը հայրենիքում ու սփյուռքում խանդավառության մեջ էր:

Անտոն Քոչինյանն արտաքուստ հանգիստ, բայց ներքուստ շատ անհանգիստ մարդ էր: Հիշում եմ՝ Աղստաֆա-Իջևան-Հրազդան երկաթուղու կառուցման տարիներին ես աշխատում էի Իջևանի շրջանում՝ իբրև շրջկոմի առաջին քարտուղար. ամեն շաբաթվա երկուշաբթի օրը, որպես կարգ, անձամբ իրեն զեկուցում էի երկաթուղու շինարարության ընթացքի մասին և ստանում նոր հանձնարարություններ: Նա հաճախ էր կրկնում, որ այդ երկաթուղու կառուցումը եղել է Աղասի Խանջյանի և Խորհրդային Հայաստանի մյուս ղեկավարների տարիների իղձն ու ցանկությունը, և այժմ վերջապես իրականություն է դառնում:

Անտոն Քոչինյանը իր մշտատև հետևողականությամբ դարձյալ հսկում էր Հանրապետության քաղաքներում և շրջաններում իրականացվող կարևորագույն կառույցների շինարարա-

կան աշխատանքները: Նույնը իրագործվում էր նաև տնտեսության բոլոր բնագավառներում: Որպես սահմանված կարգ՝ նա չաբաթը 2-3 օր չրջում էր Հանրապետությունում, բանվորի հետ գրուցում հաստոցի մոտ, գյուղացու հետ՝ դաշտում, չինարարի հետ՝ չինհրապարակում: Հաճախ էր լինում գիտական, կրթական և մշակութային օջախներում: Ամռան ամիսներին այցելում էր պիոներական, երիտասարդական և սպորտային ճամբարներ ու բազաներ: Նա խուսափում էր ուղեկցողների ստվար բազմությունից: Այն տարիներին Հանրապետության և ոչ մի գյուղացի, ոչ մի քաղաքացի չէր զարմանա, եթե իրենց բնակավայրում հանկարծ հայտնվեր Հանրապետության առաջին ղեկավարը: Նրա անձնական մանրակրկիտ ուսումնասիրությունները հանգեցնում էին ճչմարիտ եզրակացությունների, հետևապես օգտաչատ որոշումների: Նա մի անսովոր զգացողությամբ տեսնում էր երևույթը, հանրության վիճակը, մարդկային հարաբերությունների ջերմացումն ու օտարացումը:

Զարմացնում էին նրա խոսքի անպաճույճ հստակությունը, կենդանությունն ու թեթևությունը, գեղեցկությունը, վայելչությունն ու հմայքը: Անտոն Քոչինյանը խոսքաչեն մարդ էր: Լինելով բնատուր կիրթ ու գրագետ մարդ՝ նա իր ելույթներում և հատկապես աշխատավոր մարդկանց հետ ունեցած զրույցների ժամանակ հաճախ էր օգտագործում ժողովրդական թևավոր, մեծախորհուրդ ասացվածքներ, մտքի բուն էությունը բացահայտող բարբառային տարողունակ խոսքեր ու դարձվածքներ, ինչպես նաև հումոր, որն ավելի ընկալելի էր դարձնում զրույցը, զրույցի նպատակը: Հաճախ դաշտում ընդմիջման ժամին նա հողի մշակի հետ նստում էր հացի, հետաքրքրվում նրա նիստուկացով, բարի խորհուրդներ տալիս, իսկ անհրաժեշտության դեպքում՝ օգնում ու սատար կանգնում կարիքավորներին:

Անտոն Քոչինյանը մտքի ու գործի մեծ թռիչքների ընդունակ պետական ու կուսակցական գործիչ էր: Նա նոր ու իրական հայեցակետից էր նայում ազգային ու համամարդկային մնայուն արժեքներին: Նա, հարգելով համամարդկայինը, տոգորված էր հայի հայրենասիրությամբ, իր հայրենիքի ու ժողովրդի համար

անում էր այն լավն ու բարին, ինչը հնարավոր էր անցած հասարակարգում: Այո՛, նա արժանահիչատակ Գրիգոր Հարությունյանից հետո այն համարձակ ու խիզախ ղեկավարն էր, որ ամենքին հայտնի այդ տարիներին բարձրացրեց Լեռնային Ղարաբաղի հարցը: Ես այդ մասին ոչ թե լսել կամ կարդացել եմ, այլ երկար զրուցել եմ հետը, անձամբ ճանապարհել եմ նրան հարևան հանրապետություն ու դիմավորել վերադարձին: Նա երբեք հարցի լուծման նկատմամբ ունեցած հույսն ու հավատը չէր կորցնում: Անտոն Քոչինյանը ուշադրության կենտրոնում էր պահում սփյուռքահայության և հայրենիքի միջև կապի ամրապնդման ու զարգացման գերխնդիրը:

Ոչ որպես հուշ, այլ որպես դարձի կոչ Երևան քաղաքում և Հանրապետությունում պատմական Հայաստանի տեղանուններով անվանակոչվեցին չրջաններ, ավաններ ու թաղամասեր: Գրեթե վերացվեցին հայկական բնակավայրերի օտարածին անվանումները:

Նորից ասեմ, որ Անտոն Քոչինյանը մեծ հմայքի տեր մարդ էր: Լայն կապեր ունենալով Խորհրդային Միության ամենատարբեր բնագավառների բարձրաստիճան ղեկավարների հետ, օգտագործելով Բրեժնևի հետ ունեցած վաղեմի մտերմությունը՝ կարողանում էր այդ հնարավորությունները ծառայեցնել ի բարօրություն մեր ժողովրդի, ի նպաստ Հանրապետության բարգավաճման:

Անտոն Քոչինյանը չատ լավ գիտեր, որ Հանրապետության առջև ծառացած ամենաբարդ խնդիրները կարելի է հաջողությամբ լուծել, եթե աշխատանքի յուրաքանչյուր տեղամասում՝ սկսած տնտեսությունից մինչև Հանրապետական գերատեսչությունները, գործի գլուխ լինեն այնպիսի մարդիկ, ովքեր իրենց մասնագիտական իմացությամբ, փորձով, կազմակերպչական ունակություններով և իրենց քաղաքացիական հմայքով և ազնվությամբ կարող են նախաձեռնել և ընդունակ են մինչև վերջ հասցնել սկսած գործը: Նա կադրերի ընտրության գործում անչափ նրբազգաց էր և սկզբունքային: Հարգում ու օգնում էր նախաձեռնող ու աշխատող մարդկանց, կանաչ ճանապարհ

բացում նրանց աշխատանքային եռանդն ու գործունեությունը էլ ավելի ծավալելու համար: Եվ դրա համար մարդիկ հավատում ու հարգում էին նրան, նույնիսկ ամոթ էին զգում նրա նախատիքներից և ոգևորվում, թևավորվում խրախուսանքից:

Անտոն Քոչինյանն անչափ հեռատես ու ճկուն քաղաքականություն էր վարում կյանքում, պետական ու կուսակցական գործունեության ասպարեզում: Նա հավասարակշռությունը, վարմունքի և գնահատանքի տակտը պահպանել գիտեր նույնիսկ ամենածանր ու դժվարին պահերին: Նրա ներկայությունը լցնում էր լսարանը, հանդարտեցնում բորբոքվածներին, ոգեշնչում հուսահատներին: Նա ժողովրդական պարզություն ուներ, մարդիկ հավատում էին նրա անկեղծությանը: Նրանից չէիր լսի անհարկի ու անհարիր արտահայտություն, նրա բնավորության մեջ չկային չարության ու կոշտության շեշտեր: Նա ինքնատիպ մտածողության և գերզգացողության տեր մարդ էր: Աշխատում էր, որ մարդկանց միջև ստեղծվեին բարիդրացիական, փոխվստահության ու գործնական հարաբերություններ: Նա իր լրջությամբ, սկզբունքայնությամբ, համարձակությամբ ու համեստությամբ վառ օրինակ էր իր շրջապատի համար: Նա նույնիսկ թույլ չէր տալիս պաշտոնական փաստաթղթերում, զեկուցումներում ու ճառերում մեջբերումներ կատարել իրենից՝ վկայակոչելով իր անունը: Նրա համեստությունը դիմակավորված չէր, այլ բնավորություն, օրինաչափ դրսևորում: Նրա բնավորությանը խորթ էր ղեկավարի կեղծ դերակատարությունը: Նա մարդագետ մարդ էր, ուրիշի վշտով վշտանալ գիտեր, ուրիշի երջանկությամբ՝ երջանկանալ: Այո՛, կարելի է ասել, որ Անտոն Քոչինյանն իր հայրենասիրությամբ և հայրենաշեն արարումներով արժանի շարունակողն եղավ Ալեքսանդր Միսակյանի, Աղասի Խանջյանի և Գրիգոր Հարությունյանի սկսած գործի:

Անտոն Քոչինյանը մեծ գերդաստանի հայր էր: Նրա ընտանիքի անդամները համեստ ու խոհեմ մարդիկ էին և այդպիսին էլ մնացել են մինչև այսօր: Լինելով արժանապատիվ մարդիկ՝ նրանք միաժամանակ պահպանում են հայրենի լավագույն ավանդույթներն ու սովորությունները: Նրանք երբեք չչարա-

չահեցին և չօգտվեցին նրա անվան հմայքից և հիմա էլ ապրում են համեստ կյանքով: Եվ զարմանալի չէ, որ հորից ժառանգած հայրենասիրությունն ու ժողովրդին նվիրվելու պատգամը խորապես գիտակցած նրա կրտսեր որդին Արցախյան ազատամարտի հենց առաջին օրերից մահապարտների ջոկատում էր, կռվում էր հերոսին և իր հոր բարի հիշատակին վայել հպարտ արժանապատվությամբ:

Անտոն Քոչինյանը հյուրասեր ու մարդամոտ, աղուհացի մարդ էր: Լինելով Լոռու հրաշք բնության զավակը՝ նա լոռեցուն հատուկ համ ու հոտով զրուցել ու հյուրասիրել գիտեր: Չնայած իր բազմազբաղ կյանքին՝ նա սիրով ու նվիրումով, բյուր թելերով կապված էր հայրենի տարերքի հետ, նրան էր նվիրում իր հոգու, մտքի ջերմությունն ու լույսը: Եվ դա էր պատճառը, որ, ի տարբերություն շատերի, նա չհեռացավ Հայաստանից՝ չնայած եղած հնարավորություններին: Նա չէր կարող անել դա. նա պարզապես Հայ էր:

Եվ հիմա, երբ մտովի նժարում ես այդ մեծ հայրենասերի՝ Անտոն Քոչինյանի կյանքն ու գործունեությունը, անվերապահորեն հանգում ես մեկ ճշմարտության, որ նա ապրեց, արարեց ու անմահացավ հանճարեղ լոռեցու պատգամով.

«Անց ենք կենում... միայն անմահ
Գործն է խոսվում լավ ու վատ,
Ախ, երանի՝ ո՛վ մարդ կգա
Ու մարդ կերթա անարատ»:

ԵՂԻՇԵ ԱՍՏԱՏՐՅԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՎԱՅԵԼՈՂ ՂԵԿԱՎԱՐԸ

Անտոն Քոչինյանը Խորհրդային Հայաստանի 70 տարվա (1920-1990թթ.) ղեկավարներից իր բարձր պաշտոններում ամենից երկարակյաց պետական և կուսակցական գործիչն էր:

Նա Խորհրդային Հայաստանի միակ ղեկավարն էր, որը ծնվել, մեծացել ու մինչև վերջին օրը աշխատել էր իր հայրենի երկրում: Նա, ի տարբերություն մյուս ղեկավարների, հայրենիքից դուրս ոչ մի տեղ չէր աշխատել: Երևի այդ էր պատճառը, որ նա հնարավորություն էր ունեցել մանրամասնորեն ծանոթանալու հանրապետության աշխարհագրական, բնակլիմայական պայմաններին, բնակչության կենցաղային սովորույթներին ու կաղրերի անհատական ընդունակություններին: Առանց չափազանցնելու կարելի է նշել, որ նա անձամբ եղել էր հանրապետության համարյա բոլոր բնակավայրերում, ճանաչել էր դրանց քիչ թե շատ աչքի ընկնող բնակիչներին և հատկապես քաղաքային և գյուղական ակտիվին: Նա, լինելով հանգիստ և մարդամոտ բնավորության տեր ղեկավար գործիչ, հանդիսացել է նաև ամենից ժողովրդական և ճանաչված առաջին դեմքերից մեկը:

Անտոն Քոչինյանի հետ առաջին անգամ հանդիպել եմ 1950 թվականի գարնանը, երբ աշխատում էի «Քանաքեռայլումինչին»-ի պետի պաշտոնում: Այդ խոշորագույն չինարարության բազմահազար կոլեկտիվը՝ տոգորված սոցիալիստական պարտավորությունների կատարման եռանդով, օր ու գիշեր լարված աշխատում էր, որպեսզի «Կանաչ» գործարանը շահագործման հանձնի նույն տարվա հուլիս ամսին: Սակայն կառուցվող գործարանի չինարարության պատվիրատուն պատրաստ չէր այդպիսի կարճ ժամկետում իրականացնելու գործարանի

օբյեկտների ընդունման և շահագործման կարևոր գործը և ամեն կերպ համոզում էր հասարակական, պետական և կուսակցական կազմակերպություններին, որ այդպիսի կարճ ժամկետում հնարավոր չէ ավարտել այդ ծավալի չինարարական և մոնտաժային աշխատանքները: Քանի որ կառուցվող գործարանի տնօրեն Յակով Հակոբովը փորձված, կրթված և հանրապետությունում ճանաչված ղեկավար աշատող էր, նրան հաջողվում էր շրջապատին համոզել մեր կոլեկտիվի «բարի ցանկության» անիրականալիությունը, իսկ մեզ՝ միջավայրին և շրջապատին անծանոթ նորեկներիս, չէր կարողանում համոզել: Ինձ և «Զակցվետմետստրոյ» տրեստի կառավարիչ Մնացական Սարուխանյանին մնում էր դիմել ՀԿԿ Կենտկոմի ղեկավարությանը՝ մեր վեճերում պարզություն մտցնելու համար: Սակայն այդ ժամանակ հանրապետության առաջին և երկրորդ դեմքերը բացակայում էին՝ Մոսկվայում համամիութենական միջոցառումների մասնակցելու պատճառով: Դրա հետևանքով մեզ՝ Մ. Սարուխանյանին, Յա. Հակոբովին, տողերիս հեղինակին և չինարարության կուսակցական կոմիտեի քարտուղար Վազգեն Մնացականյանին ու Կենտկոմի ծանր արդյունաբերության բաժնի վարիչ Սուրեն Մելքումյանին կեսգիշերվա ժամը 12-ին ընդունեց ՀԿԿ Կենտկոմի կադրերի գծով քարտուղար Անտոն Քոչինյանը: Համբերատար լսելով բոլոր կողմերի հակասական կարծիքներն ու առաջարկությունները՝ Ա. Քոչինյանը, իհարկե, չէր կարող միանշանակ որոշում ընդունել՝ առանց տեղում իրական դրությունը մասնագիտորեն ուսումնասիրելու և երկու կողմերի հնարավորությունները կշռադատելու: Այդ պատճառով նա հենց մեր ներկայությամբ կապվեց ԽՍՀՄ գունավոր մետալուրգիայի նախարար Պյոտր Լոմակոյի հետ, մանրամասն իրազեկ դարձրեց նրան ենթակա երկու խոշոր կազմակերպությունների վիճահարույց խնդիրների մասին, խնդրեց միջոցներ ձեռնարկել և մասնագիտական ու վարչատնտեսական որոշում ընդունել ալյումինի գործարանը ժամանակին շահագործման հանձնելու համար: Երևան ժամանեց մինիստրության աշխատողների մեծ խումբ՝ նրա մասնագիտացված վարչությունների

և նախագծային ինստիտուտների պատասխանատու մասնագետներով, որոնց գործիմաց և մանրազնին ուսումնասիրության արդյունքում մշակված կոնկրետ միջոցառումները և անհրաժեշտ օգնությունը իրականացնելու հետևանքով նշված ժամկետում գործարանը հանձնվեց շահագործման:

1952 թվականին Հայաստանի տարածքում երեք վարչական մարզեր կազմակերպելու կապակցությամբ Ա. Քոչինյանը ընտրվեց Հանրապետության առավել խոշոր արդյունաբերական, շինարարական, գյուղատնտեսական և, առհասարակ, տնտեսական այլ հնարավորություններով հարուստ և բնակչության քանակով ավելի բազմամարդ Երևանի կուսակցական մարզկոմի առաջին քարտուղարի պաշտոնում: Այդ ժամանակ ես արդեն աշխատում էի ՀԿԿ Կենտկոմի ծանր արդյունաբերության բաժնի վարիչի տեղակալի պաշտոնում: Եվ քանի որ Երևանի մարզում կենտրոնացված էր Հանրապետության տնտեսության ավելի քան երկու երրորդը, Կենտկոմի ղեկավարությունը նպատակահարմար գտավ իմ թեկնածությունն առաջարկել Երևանի մարզկոմի արդյունաբերության, շինարարության և տրանսպորտի միացյալ բաժնի վարիչի պաշտոնում: Սակայն ես, ինչպես և շատերը, համոզված չէի, որ այդ կառուցվածքը կայուն և երկարատև կլինի, այդ պատճառով հիացած չէի այդ առաջարկով: Ա. Քոչինյանը, այդ մասին լսելով, ինձ հրավիրեց իր մոտ և մեղմ ժպիտը դեմքին, բարեկամական քնքշությամբ ասեց.

-Եղիշե՛ Թևոսովիչ, բա չե՞ս ամաչում, որ հրաժարվում ես ինձ հետ աշխատել:

Ինձ ոչինչ չէր մնում անելու, միայն ասացի.

- Անտո՛ն Երվանդովիչ, ես չեմ հրաժարվում Ձեզ հետ աշխատելուց, այլ համոզված չեմ, որ այս նոր կառուցվածքը երկար գոյություն կունենա:

- Ոչինչ, ինչ լինելու է, թող միասին լինի, - ասաց նա:

Ա. Քոչինյանը գյուղատնտեսության բնագավառի բազմազան ճյուղերի զարգացման խնդիրները բավական լավ գիտեր և վարպետորեն միջամտում էր դրանց ժամանակին և մասնագիտորեն լուծելու գործին: Իսկ այս նոր պաշտոնում նա ավելի

չահագրգիռ ուշադրություն էր դարձնում արդյունաբերական և շինարարական օբյեկտների գործունեությանը, էլեկտրակայանների ու գործարանների կառուցման ընթացքին, տնտեսական բնագավառի զարգացման այլ հարցերի լուծմանը: Կարճ ժամանակ անց Ա.Քոչինյանը նշանակվեց Հանրապետության Նախարարների խորհրդի նախագահի պաշտոնում, ես ընտրվեցի մարզկոմի արդյունաբերության, շինարարության և տրանսպորտի գծով քարտուղար, իսկ Գրիգոր Արզումանյանը իմ փոխարեն նշանակվեց բաժնի վարիչ: Հիշարժան է այն փաստը, որ Ա.Քոչինյանը իր բարձր պաշտոնում աշխատելու ժամանակ հաճախ հրավիրում էր համատեղ ծանոթանալու և հարկ եղած դեպքում լուծելու տնտեսական բնագավառի օբյեկտներին վերաբերող հրատապ խնդիրները:

Համատեղ աշխատելու շնորհիվ Քոչինյանի և իմ միջև ստեղծվել էին բարի, գործնական, փոխադարձ հարգալից հարաբերություններ: Եվ երևի այդ էր պատճառը, որ նա նույնիսկ Նախարարների խորհրդի նախագահ աշխատելու տարիներին ինձ հրավիրում էր արդյունաբերական շրջանների և Հանրապետության կարևոր օբյեկտների իրավիճակը միասին ուսումնասիրելու, նրանց աշխատանքի ընթացքում ծագած կարևոր հարցերը որոշելու: Ի. Ստալինի մահից հետո երկրի նոր ղեկավար Ն. Խրուշչովը մտցրեց մի շարք իրավական և կառուցվածքային փոփոխություններ, և մեր Հանրապետության նորաստեղծ երեք վարչական մարզերը լուծարվեցին: Աշխատելով ՀԿԿ Կենտկոմի արդյունաբերության, շինարարության և տրանսպորտի միացյալ բաժնի վարիչի պաշտոնում՝ ես ավելի մոտ և գործնական հարաբերությունների մեջ էի Ա. Քոչինյանի հետ: Դա, գուցե, հետևանք էր նաև նրան, որ Կենտկոմի նորընտիր առաջին քարտուղար Սուրեն Թովմասյանը, ըստ իր համոզմունքի և անցած աշխատանքի փորձի, գտնում էր, որ կուսակցական-քաղաքական գործիչները պետք է զբաղվեն քաղաքական, կազմակերպչական և դաստիարակչական հարցերով և ոչ թե մետաղի, ցեմենտի, անտառանյութի բաշխման հարցերով: Նա ինձ և Յա. Զարոբյանին հեգնում էր, երբ զեկուցում էինք, որ գործարան-

ները կամ չինարարական օբյեկտները լրիվ կարողությամբ չեն աշխատում տարբեր նյութերի պակասության պատճառով: Նա կտրուկ ասում էր.

– Դա Նախարարների խորհրդի և համապատասխան մինիստրությունների գործն է, պահանջե՛ք, որ բարեխղճորեն կատարեն իրենց պարտականությունները:

Իսկապես, գուցե նա իրավացի էր, բայց երկրում ստեղծված կազմակերպչական և տնտեսական իրավիճակում դա չէր ստացվում, պետք էր կուսակցական օրգանների ակտիվ միջամտությունը:

Մի շարք գործարանների գործունեության բարելավման և նոր, ժամանակակից տեխնոլոգիայով գործարաններ կազմակերպելու հարցերով Պետպլանում պայմանավորվելուց հետո մտա Քոչինյանի մոտ՝ տեղեկացնելու մեր պայմանավորված առաջարկությունների կատարման մասին, բայց նա պատրաստվում էր դուրս գնալու և ուրախությամբ ասաց.

–Էս շատ լավ է, մի բարդ խնդիր է առաջացել, գնանք միասին և տեսնենք՝ ինչպես կարելի է լուծել:

Պարզվեց, որ կոլտնտեսության նախագահների վերապատրաստման դպրոցը ֆինանսական և կազմակերպչական ծանր վիճակում է, նախատեսված քանակությամբ նախագահներ վերապատրաստելու կարիքը չկար, այդ խոշոր կազմակերպությունն ու շենքերը սպասարկելը կապված էին մեծ ծախսերի հետ: Եվ երբ տեղում հայտնեցի, որ մեր առաջարկությունների ու բանակցությունների արդյունքում ԽՍՀՄ ռադիոէլեկտրոնային արդյունաբերության մինիստրությունը համաձայնել է և խնդրում է ժամանակավորապես, մինչև նոր շենք կառուցելը, մի որոշ արտադրական տարածք առանձնացնել մաթեմատիկական հաշվիչ մեքենաների փորձնական արտադրություն կազմակերպելու համար, Քոչինյանը ուրախացած բացականչեց.

– Բա սրանից հարմար է՛լ ինչ տեղ ես ուզում, շենքն էլ քեզ մատաղ, էս ամբողջ հոյակապ տարածքն էլ:

Մեծ գործարանի համար իսկապես հարմար տարածք էր, որտեղ հիմնադրվեց և իր զարգացումն ստացավ Երևանի

երբեմնի մաթեմատիկական հաշվիչ մեքենաների օրինակելի և գովասանքի արժանի հզոր գործարանը:

Ա. Քոչինյանը մեծ վաստակ ունի Հանրապետության շատ խոշոր և կարևորագույն գործարանների կառուցման հարցերի լուծման գործում: Նրա երկարատև հետևողական աշխատանքի արդյունքում լուծվեց նաև ավտոգործարանի կառուցման և հետագա զարգացման խնդիրը:

Ա. Քոչինյանի և տողերիս հեղինակի ջանքերով հաջողվեց ԽՄԿԿ քաղբյուրոյի որոշման մեջ մտցնել Աբովյանում ԽՍՀՄ ռադիոէլեկտրոնային արդյունաբերության նախարարության երեք խոշոր գործարանների կառուցման հարցը, որտեղ պետք է աշխատեին մոտ 15 հազար բանվոր ծառայողներ և ինժեներատեխնիկական աշխատողներ:

Ա. Քոչինյանի ծառայությունները մեծ են նաև Զոդի ոսկու հանքավայրի երկրաբանական հետազոտական աշխատանքների և հանքի ու հարստացուցիչ ֆաբրիկայի կառուցման դժվարին ու բարդ հարցերի լուծման բնագավառում: Ոսկու պաշարները որոշելու, երկրաբանական աշխատանքները ավարտելու համար երկարատև ժամանակ և խոշոր գումարներ էին պետք: Բայց միշտ չէր, որ անհրաժեշտ միջոցներ էին պլանավորվում: Քանի որ հերթական տարվա աշխատանքների ֆինանսական ապահովումը վտանգի տակ էր, Քոչինյանի հանձնարարությամբ հարցը պատրաստեցինք՝ ներկայացնելու ԽՍՀՄ Նախարարների խորհուրդ: Միաժամանակ Զոդի երկրաբանական հետազոտությունների խմբի պետ Ս. Մաթևոսյանին հանձնարարեցի լաբորատորիայի ջանքերով հանքաքարից անջատել 40-50 գրամ մաքուր ոսկի՝ երկրի ղեկավարությանը ցույց տալու համար: Մոսկվա մեկնելու նախօրյակին Ա. Քոչինյանի հետ կրկին ծանոթանալով հանքավայրի ամբողջ տարածքի, հորատանցքերի և աշխատանքի իրական արդյունքների հետ՝ պատրաստ մեկնեցինք Մոսկվա՝ հարցերը քննարկելու: Երբ ներս մտանք Կրեմլ, ոսկու նմուշի փորձանոթը հանձնեցի Քոչինյանին: Նա այն դրեց կաշվե թղթապանակի մեջ՝ զեկուցելու ժամանակ Ա. Կոսիգինին ցույց տալու համար: Սակայն կա-

ռավարական չենքի առաջ մեքենայից իջնելու ժամանակ սրվակն անսպասելիորեն ընկավ, և ոսկու հատիկները թափվեցին ասֆալտի վրա: Ստիպված եղանք երկուսով հավաքել ոսկու հատիկները և լցնել սրվակի մեջ: Քանի որ այդ օրը բոլոր հանրապետությունների ղեկավարները հրավիրված էին Կրեմլ՝ բարձր կարգի խորհրդակցության, հենց այդ ոսկի հավաքելու պահին մեզ նկատեցին, քահ-քահ հրճվում էին Ղազախստանի և Ուզբեկստանի ղեկավարները ու բացականչում. «Էս ինչ հրաշք է, հայերը նույնիսկ Կրեմլի ասֆալտապատ մայթում ոսկի են հայթայթում»: Ինչևէ, ԽՍՀՄ Նախարարների խորհրդի ցուցումով ապահովվեց հետազոտության համար անհրաժեշտ գումարը: Բայց բարդանում էր ոսկու հարստացուցիչ ֆաբրիկայի տեղի ընտրության խնդիրը: Նախագծող կազմակերպությունները և նրանց ականավոր մասնագետները պնդում էին, որ ֆաբրիկան պետք է կառուցվի հենց Զոդի հավաքավայրի մոտակայքում, որպեսզի հանքաքարը երկար տարածության վրա չտեղափոխվի, և արտադրանքի ինքնարժեքը դրա հաշվին չբարձրանա: Իսկ մենք (հատկապես Քոչինյանը)՝ իմանալով, որ ոսկու հանքաքարի հարստացման ընթացքում օգտագործվում են խիստ թունավոր նյութեր, պնդում էինք, որ ֆաբրիկան կառուցվի Սևանա լճի տարածքից դուրս, հանրապետության հարավային տարածքի՝ Արազդայանի համեմատաբար ամայի և աղուտ տեղամասում: Հիմա շատ դժվար է պատկերացնել, թե ինչ պայքար էր տարվում Սևանը այդ աղետից փրկելու համար: Քոչինյանի բարձր հեղինակության և համառ պայքարի հետևանքով դրական լուծում ստացան և՛ այդ հարցը, և՛ Հրազդան-Վարդենիս երկաթգծի, և՛ Վարդենիս-Հրազդան կոյուղու մաքրման կայանի կառուցման հարցերը, ինչպես նաև հարստացուցիչ ֆաբրիկայի՝ Արազի տարածքում տեղադրելու խնդիրը:

Մեծ է Անտոն Քոչինյանի ծառայությունը նաև հանրապետության տարածքում երկաթուղային ճանապարհների և Երևանի մետրոպոլիտենի շինարարության հարցում: Հատկապես վերջինիս և Երևան-Սևան-Աղստաֆա երկաթգծի ճյուղի շինարարությունը հունի մեջ դնելու, դրանց ֆինանսավորումն

իրականացնելու համար նա ստիպված էր լինում ոչ միայն հաճախակի լինել վերին օղակներում, ոչ միայն բացատրել դրանց նշանակությունը հանրապետության առաջընթացի և հետագա զարգացման համար, այլև համոզել, խնդրել...

Չի կարելի մոռացության տալ մի հանգամանք ևս: Անտոն Քոչինյանի ջանքերով էր, որ ԽՍՀՄ սպորտկոմիտեն որոշեց լեռնադահուկային սպորտի միութենական նշանակության համալիրը կառուցել հենց Ծաղկաձորում:

Ա. Քոչինյանը մեծ ուշադրություն էր դարձնում նաև անտառապատման հարցերին, հատկապես Սևանի ջրի մակարդակի իջեցման հետևանքով ազատված տարածքների, ավտոճանապարհների շուրջ, ինչպես նաև գյուղատնտեսական կարիքների համար չօգտագործվող տարածքների կանաչապատմանը: Բայց բարձրադիր գոտիներում լինում էին նաև մեծ դժվարություններ: Մի անգամ Լենինականում մեր գործերն ավարտելուց հետո ճանապարհվում ենք Կիրովական: Ջաջուռի լեռնանցքով դեպի Սպիտակ անցնելիս նայում եմ ու զարմանում՝ ինչու մեր Ղարաբաղի լեռների նման կանաչապատ ու անտառապատ չեն: Ասում եմ.

– Անտոն Երվանդովիչ, էս ինչ տխուր, միապաղաղ տեսարան է, ոչ մի ծառ, ոչ մի թուփ:

– Չէ՛, Եղիշե՛ Թևոսովիչ, այս բլուրներն ու սարերը բոլորը անտառապատված են, բայց տնկիները դեռ փոքր են, կանցնի մեկ-երկու տարի, այստեղ կլինի խիտ անտառ:

Մոտավորապես երկու-երեք տարի անց անցնում ենք այդ ճանապարհով, նայում եմ չրջապատին՝ համարյա նույն պատկերն է: Վարորդին ասում եմ.

– Բագրա՛տ, մի քիչ արագ գնա, այստեղ շատ վտանգավոր է:

– Ի՞նչն է վտանգավոր, ի՞նչ է պատահել,– հարցնում է Քոչինյանը:

– Ոնց թե ինչ է պատահել: Այս խիտ անտառներում բազմաթիվ գիշատիչ գազաններ են բազմացել, կարող են մեզ հոչոտել:

Քահ-քահ ծիծաղում ենք, և Քոչինյանը հանգով նախատում է.

– Այ՛ դարարաղցի, հերիք է ինձ ծաղրես: Դու գիտե՞ս՝ էստեղ ինչ բարձրություն է, ծառը չի աճում:

Եվ այդ նույն պահին ռադիոն հաղորդում է ի լուր ողջ մարդկությանը, որ Խորհրդային Միությունը տիեզերք է ուղարկել Յուրի Գագարինին:

– Այ՛ քեզ բան, գնալու են փորփրեն, երկնքի քարերը թափեն մեր գլխին ու երկիրը կործանեն,– ասում է Անտոն Երվանդովիչը:

Նորից հրճվում ու ծիծաղում ենք:

Անտոն Քոչինյանը հանրապետության այն հազվագյուտ ղեկավարներից էր, որ եղել էր Ղարաբաղում, ծանոթ էր նրա բնական պայմաններին և ականավոր գործիչներին: Գուցե այդ էր պատճառը, որ նա ակտիվ հետաքրքրություն էր ցուցաբերում Ղարաբաղի և նրա ժողովրդի բախտորոշ խնդիրների որոշման նկատմամբ: Մենք Ա.Քոչինյանի հետ շատ ենք զբաղվել Ղարաբաղի ակտիվի եռուն գործունեությանը նպաստելու և բուն Հայաստանի մտավորականության՝ այդ ուղղությամբ հարցադրումներին ընթացք տալու ուղղությամբ: Ղարաբաղի ակտիվի և ողջ աշխատավորության համառ պայքարի ու մեր հանրապետության մտավորականության ականավոր ներկայացուցիչների չնորհիվ վերջապես լույս աշխարհ եկավ հույսի մի նշույլ: 1966 թվականի օգոստոսի 8-ին ԽՄԿԿ Կենտկոմի քարտուղարությունը որոշում ընդունեց, որով հանձնարարվում էր Ադրբեջանից Ախունդովին, Ալիխանովին, Իսկենդերովին և Հայաստանից Քոչինյանին, Մուրադյանին, Հարությունյանին համատեղ ջանքերով քննել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Հայաստանի Խորհրդային Հանրապետությանը միացնելու հնարավորությունը և իրենց առաջարկությունները ներկայացնել ԽՄԿԿ Կենտկոմ՝ հարցի վերջնական լուծման համար:

Անտոն Քոչինյանը անհապաղ հրավիրում է Կենտկոմի բյուրոյի նիստ, մեծ եռանդով տեղեկացնում է այդ որոշման բովանդակության և մեր անելիքների մասին: Ադրբեջանական ղեկավարության հետ բանակցություններ վարելու համար համապատասխան նյութեր պատրաստելու նպատակով Կենտկոմի բյուրոյի որոշմամբ ընտրվում է հինգ հոգուց բաղկացած

հանձնաժողով, որի կազմում էր նաև տողերիս հեղինակը: Սակայն չնայած Ա.Քոչինյանի և մեր ցուցաբերած ակտիվությանը և մեծ չահագրգռվածությանը՝ ադրբեջանական կողմը ամեն կերպ հետաձգում էր հանդիպումը, իսկ հետո համոզեց ԽՄԿԿ Կենտկոմի ղեկավարությանը, որպեսզի Ղարաբաղի հարցը հանվի քննարկումից:

... Մի անգամ՝ օդանավակայան գնալու ժամանակ, նկատեցի, որ ճանապարհելու էին գալիս մի քանի նախարարներ, այլ ղեկավար գործիչներ: Հարցրի.

– Անտոն Երվանդովիչ, պե՞տք է, որ ամեն անգամ առաջին դեմքերին հանրապետությունից դուրս գալիս կամ վերադառնալիս մեծ խմբով ղեկավարներ ճանապարհեն կամ դիմավորեն, չի՞ կարելի երկու-երեք հոգով բավարարվել:

– Չէ՛, չէ՛, Եղիշե՛ Թևոսովիչ, դու մեր ժողովրդին չես ճանաչում, նա իր ղեկավարների նկատմամբ անտարբեր է, նույնիսկ անհարգալից, անցած 60 տարվա ընթացքում հազիվ սովորել են օրենք, կառավարություն և ղեկավար հարգելը, հենց որ առիթ ստեղծվի, էլի նույն անհարգալից վերաբերմունքը կչարունակվի...

Նրան այդ անհարգալից վերաբերմունքը չէր սպառնում, նա մնաց և մնում է ժողովրդի կողմից բոլորից շատ սիրված ղեկավարներից մեկը:

ՀՐԱՆՏ ՈՍԿԱՆՅԱՆ

ԻՐ ՀՈՂԻ ՈՒ ԺՈՂՈՎՐԴԻ ՆՎԻՐՅԱԼԸ

Իմ կարծիքով Անտոն Քոչինյանը մեր Հանրապետության այն մեծ քաղաքական-պետական գործիչներից է, որը շատ մեծ ծառայություններ է մատուցել մեր ժողովրդին և պետությանը, որոնք ուրանալը կլինի անմարդկային վարքագիծ: Իրոք, նա իր ամբողջ էությամբ և արմատներով կապված էր մեր հողին, մեր ժողովրդին և հրաշալի գիտեր Հանրապետությունը: Երբ նշանակում էինք որևէ գործարանի տնօրենի կամ կոլխոզի նախագահի, ըստ կանոնակարգի պետք է խորհրդակցեինք Կենտկոմի առաջին քարտուղարի հետ: Նման դեպքերում Անտոն Քոչինյանը հարցնում էր.

– Դա այսինչ գյուղի՞ց է:

Ասում էի՝ այո:

– Ումոնցի՞ց է, ես գիտեմ՝ այնտեղ 2 եղբայր կային, դա որի՞ տղան է:

Նա գերազանց գիտեր գյուղացիներին, բրիգադիրներին, կոլխոզի նախագահներին: Քաղաքներում հայտնի բանվորներին: Օրինակ՝ մի անգամ ինձ հարցնում է.

– Խաչատուրը ո՞նց է:

Ես հետո պարզեցի, որ Խաչատուրը բանվոր էր՝ կոմունիստ՝ նախահեղափոխական ստաժով, ու ամբողջ կյանքում աշխատել էր՝ որպես գծի վարպետ: Անտոն Երվանդովիչը նրան ճանաչում էր, մինչև վերջ էլ ուշադիր էր նրա նկատմամբ՝ համարելով, որ մեծ ծառայություններ ուներ ժողովրդի հանդեպ, և ասում էր.

– Այնպե՛ս արեք, հանկարծ չնեղացնեն:

Երբեք չեմ մոռանա, թե ինչպես մի անգամ զանգահարեց ու ասաց.

– Ձեզ մոտ մի ռայկոմի քարտուղար է եղել, դու այն ժամանակ փոքր երեխա ես եղել, չես ճանաչի, նա Հայրենական պատերազմում վիրավորվել, վերադարձել է, հիմա ո՞նց է:

Ասացի, որ չեմ ճանաչում, չգիտեմ, ժամանակ տա՝ հետաքրքրվեմ, զեկուցեմ:

Զանգ տվեցի և իմացա, որ վիճակը շատ ծանր է, տուն չունի, կինը մահացել է, ինքն էլ հողաշեն քողտիկում է ապրում: Գնացի, տեսա, որ, իսկապես, ինքը պառկած էր երկաթե մահճակալի վրա՝ չինելը վերմակի տեղ գցած վրան, երեխաներն էլ նստած խաչած կարտոֆիլ էին ուտում: Ես շատ վատ զգացի, եկա, կանչեցի այն հիմնարկի պետին, որը բնակելի շենք էր կառուցել և պատրաստվում էր հանձնել, և մեկ ամսում այդ մարդուն ապահովեցինք բնակարանով և աշխատանքով: Այս օրինակով ուզում եմ ասել, որ Անտոն Քոչինյանը անսահման հոգատար էր մարդկանց նկատմամբ, իսկ դա ես համարում եմ կուսակցական գործչի ամենակարևոր վարքագիծը:

Անտոն Քոչինյանը երբեք չէր մոռանում՝ որտեղից էր և ուր էր գնում:

Երբ ես վերադարձա Մոսկվայից, ՀԽՍՀ Գերագույն խորհրդի Զառիթափի ընտրական տեղամասում թափուր տեղեր էին բացվել: Քոչինյանն առաջարկեց, որ դնեն իմ թեկնածությունը, իսկ ես ասացի, որ այդ շրջանի հետ երբեք չեմ առնչվել, ինձ այնտեղ ոչ ոք չի ճանաչում: Պատասխանեց.

– Ա՛յ տղա, ոնց որ ռուս լինես, դու աշխատել ես Կենտկոմի ապարատում, մեր հպարտությունն ես, և Զառիթափում չտեսնված լավ ժողովուրդ է՝ բարձր կրթական ցենզով, առաքինի, այնպես որ հանգիստ գնա՛:

Իսկապես, շատ ջերմ ընդունեցին ու միաձայն ընտրեցին Հայաստանի Գերագույն խորհրդի պատգամավոր:

Նա շատ էր սիրում քայլել: Մենք հաճախակի որսի գնալու անվան տակ քայլում էինք ձորերով, սարերով՝ առանց որևէ կրակոցի, քայլում էինք, քայլում ու զրուցում: Զարմանալի է, բայց գիտեր ամեն մի աղբյուրի և քարի տեղը, իսկ դա ես համարում եմ շատ կարևոր հատկություն երկրի ղեկավարի համար,

որը ոչ միայն տերն է Հանրապետության, այլ նաև պատասխանատու է ժողովրդի առջև և իրեն հյուրի պես չի պահում իր սեփական հայրենիքում:

Անտոն Քոչինյանը իմ հիշողության մեջ մնացել է այն մարդկանցից մեկը, որը ամենաչատ ծառայությունն է մատուցել մեր Հանրապետության արդյունաբերության ստեղծման և զարգացման գործին: Նա երկար տարիներ եղել էր նախարարների խորհրդի նախագահ, շատ գործնական հարաբերություններ էր ստեղծել միութենական բոլոր մարմինների հետ և այդ գործնական կապը միշտ օգտագործում էր ի շահ մեր Հանրապետության:

Կիրովականում պետք է կառուցեինք ճշգրիտ հաստոցների գործարանը: Դժվարություններ շատ կային, պահանջվում էր նաև մասնագիտական արտակարգ ունակություններ: Անտոն Քոչինյանը համոզեց միութենական ղեկավարությանը գործարանի ստեղծման հարցում, և գործարանը կայացավ: Առաջին տնօրենը դարձավ Գաբրիել Գաբրիելյանը, որը մինչ այդ եղել էր Բաքվի Շմիդտի անվան գործարանի տնօրենը, և այնպիսի բարձր որակի հաստոցներ սկսեցին պատրաստել, որ արտադրանքը վաճառվեց անգամ եվրոպական երկրներում:

Մի բան էլ պետք է պատմեմ, որի մասին իրավունք չունեմ լռելու:

Միութենական ղեկավարությունը որոշել էր Կիրովականում կառուցել մոլիբդենի ձուլվածք ստանալու գործարան: Մենք մասնագետներ ուղարկեցինք Ուրալ՝ այն քաղաքը, որտեղ գործում էր նման մի գործարան: Վերադարձան սարսափած, պատմեցին, որ այնտեղ քաղաք չէր, այլ դժոխք, մոլիբդենի փոշին նստած էր քաղաքի վրա և, ինչպես հեքիաթներում էին պատմում, ո՛չ կանաչ կար, ո՛չ էլ ծառ:

Մեզ մոտ էլ արդեն գործարանի կառուցման հարցը համարյա լուծված էր, ձևականության համար քաղխորհուրդը 10 օրում պետք է գործարանի կառուցման համար տեղ հատկացնելու որոշում կայացներ: Շտապ եկա Երևան՝ Անտոն Քոչինյանի մոտ, նկարագրեցի իրողությունը և ցույց տվեցի լուսանկարները: Ինձ

հետ էր նաև Շավարշը Վարդումյան, որն այդ ժամանակ Կիրովականի գործկոմի նախագահն էր ու շատ մեծ ծառայություն ունեցող մարդ: Քննարկման ժամանակ ասացի, որ մենք որոշում չենք կայացնի, Անտոն Քոչինյանն էլ ժպիտով ասաց.

– Մենք էլ կկանչենք, կուսակցական տույժ կտանք:

Որոշումը չկայացրինք: Երբ Մոսկվայից եկան, մենք բացատրեցինք, որ Կիրովականը Հայաստանի առողջարանային քաղաքներից է, և գործարանը կառուցելուց հետո բան չի մնա, պետք է կառուցել մեկ ուրիշ տեղ, երկիրը մեծ է: Այդպես էլ հարցը մարեց, և գործարանը չկառուցվեց: Ես նորից եմ ընդգծում, եթե չլիներ Քոչինյանի ընդգծված, հաստատակամ միջամտությունը, մեզ չէր հաջողվի կանգնեցնել գործարանի կառուցումը:

Հիշում եմ՝ նոր էի աշխատում Կիրովականում, երբ 5–6 բալանոց երկրաշարժ եղավ, քանդվեց լիմոնադի գործարանը, մի քանի մասնավոր տներում ճեղքեր առաջացան, բայց զոհեր չկային: Պաշտոնս պարտավորեցնում էր, որ զանգեի և զեկուցեի դեպքի մասին: Քոչինյանը լսեց և հարցրեց.

– Շա՞տ ես վախեցել:

Ասացի, որ շատ եմ վախեցել: Մի ծաղելով ասաց.

– Այդպես էլ սուտ ասել չսովորեցիր, ուրիշը կասեր՝ չէ, չեմ վախեցել: Կարևորը՝ զոհեր չկան, հիմա Բաղալի հետ կգանք:

Եվ, իսկապես, 4–5 ժամից հետո իրենք արդեն Կիրովականում էին:

Գնացինք գործարան, Բաղալ Մուրադյանն ասաց, որ չուտով կհանձնվի լիմոնադի նոր գործարանը, այնտեղ մանր գործեր են մնացել, կօգնեն, որ մի շաբաթում հանձնեն շահագործման: Ճաքած տների բնակիչները հավաքվեցին մեր շուրջը, շատերին Քոչինյանը ճանաչում էր, կատակներով հանգստացնում էր և վերջում ասաց.

– Կիրովականը Հայաստանի ամենաչատ բնակելի շենքեր կառուցող քաղաքն է, քարտուղարն ու նախագահն էլ այստեղ են,– հետո, շրջվելով մեր կողմը, շարունակեց.

– Ասե՛ք տեսնեմ, ե՞րբ կարող եք լուծել բնակարաններ տալու հարցը:

Վարդումյանը ասաց, որ մեկ շաբաթում կլուծի, քանի որ պատրաստի բնակարաններ կան: Փաստորեն Անտոն Քոչինյանը եկավ, մարդկանց հուզող բոլոր հարցերը լուծեց անմիջապես տեղում: Մեկնելուց հետո էլ ամեն օր զանգում, հետևում էր՝ ինչպես է վիճակը, արդյոք բնակարանները ժամանակի՞ն հանձնվեցին:

Նա խոշոր պետական գործիչ էր, բայց նաև ազգասեր, ջերմ և շրջապատի նկատմամբ ուշադիր մարդ. դա անընդհատ զգում էի մեր համատեղ աշխատանքի ժամանակ:

Մարդու վրա երբեմն ցեխ են շպրտում կամ զրպարտում, բայց կա ժամանակը՝ ամենամեծ դատավորը, որը ամեն ինչ մաքրում է, և մարդը մնում է իր ժողովրդի առջև իր արածով և չարածով, իսկ Անտոն Քոչինյանը այն մարդկանցից է, որը շատ մեծ գործեր է արել հանրապետության համար:

Ինձ շատ դուր էր գալիս նաև այն, որ չէր մոռանում անցյալի երախտավորներին և զայրանում էր, որ մոռանում էին ու չէին գնահատում: Օրինակ՝ մի անգամ գնացել էինք Կիրովականի քիմկոմբինատ, տնօրեն Սուրեն Օհանյանին ասաց.

– Իսկ դու գիտե՞ս, որ այս գործարանի առաջին տնօրենը Մարգարյանն է եղել, որը մեծ ծառայություններ ունի:

Օհանյանը պատասխանեց, որ գիտեն և նրա անունով փողոց են անվանել: Անտոն Քոչինյանը ուրախացավ և ասաց.

– Ճիշտ եք արել, տղա՛ ջան, չի կարելի մոռանալ նման նվիրյալներին:

Քոչինյանն իմ մեջ մնացել է իբրև Մեծ Մարդ, որը խոշոր պետական գործիչ էր և ամենաբարդ հարցերի լուծման ժամանակ էլ չէր մոռանում ամեն մի առանձին մարդու հոգսերը, նրա ցավերը և աշխատում էր օգտակար լինել: Նա մարդկանց մեջ դաստիարակում էր երախտագիտության զգացում այն մարդկանց նկատմամբ, որոնք մեծ ծառայություն են մատուցել մեր ժողովրդին, հայոց պետականության զարգացմանը: Ահա այն դիմանկարը, որը միշտ ապրելու է իմ հուշերում:

ԱԼԵՔՍԱՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՍԱ Է

Անտոն Քոչինյանը մեր սերնդակիցներից է, ճիշտ է՝ ինձնից 4-5 տարով մեծ է, բայց նշանակություն չունի. նույն սերնդի մարդիկ ենք: Ես նրան ճանաչում եմ մինչև պատերազմը, երբ Անտոնը նշանակվեց Ազիզբեկովի շրջանի կոմերիտմիության քարտուղար: Երբ ես վերադարձա պատերազմից, նա արդեն Կիրովյան շրջանի առաջին քարտուղարն էր: Հիմա մեզ մոտ նոր սովորություն է առաջացել. աշխատում են մեր անցած պատմությունը սևացնել: Դա անթույլատրելի է, պատմությունը կայացել է, Քոչինյանը քսան տարուց ավելի ղեկավարել է Հայաստանի Նախարարների խորհուրդը և Կենտրոնական Կոմիտեն: Եղել են ստվերոտ կողմեր, եղել են փառահեղ ու լուսավոր էջեր, խոսքը այստեղ միայն Անտոն Քոչինյանի ծառայության մասին չէ, ես ընդհանրապես եմ ասում, որ չի կարելի անտեսել կամ մոռանալ անցյալը: Ես ճանաչել եմ նրան շատ երկար ժամանակ, եղել անձնական մտերիմ հարաբերությունների մեջ, սկզբունքային վեճեր էլ են եղել, բայց Անտոն Քոչինյանը Խորհրդային Հայաստանի ամենաժողովրդական քաղաքական գործիչն էր, սա ընդգծված եմ ասում: Ես այլ նման քաղաքական գործչի չեմ ճանաչում: Նա ժողովրդական առաջնորդ էր, բայց առանց առաջնորդ լինելու հավակնության կամ ցուցադրման: Պարզ, հասարակ ձևով էր պահում իրեն, որը վայել է ամեն մի աշխատողի, առավել ևս՝ բարձրաստիճան ղեկավարի:

Երևի մեր քաղաքական գործիչներից Գրիգոր Հարությունյանի դպրոցին էր հարում նա (մենք բոլորս, ըստ երևույթին, Գ.Հարությունյանի կաղրերից ենք): Ինչո՞ւմն էր Քոչինյանի ուժը:

Առաջին հերթին կարծում եմ՝ մեր քաղաքական գործիչների մեջ ո՛չ այն ժամանակ և ո՛չ էլ այսօր չկա մեկը, որ Հայաստանը իմանար այնպես, ինչպես նա:

Նա աշխատասենյակից և մեքենայի լուսամուտներից չէր տեսնում մեր երկիրը, Անտոնը գիտեր մեր ժողովրդին, սեփական Հայրենիքը, որին անսահմանորեն սիրահարված էր, գիտեր ամեն մի քարը, ամեն մի թուփը և անկյունը, իսկ Հայաստանը բավականին խոր ծալքեր ունի իր թևերի տակ: Անտոնը այդ ամենը ճանաչում էր: Սա նրա ամենաուժեղ կողմերից մեկն էր:

Երկրորդ և ամենամեծ առավելություններից մեկն էլ այն էր, որ ոչ ոք Հայաստանի ժողովրդի ապրելակերպը այնպես լավ չգիտեր, ինչպես Անտոնը: Նա բնատուր իմաստության և տաղանդի տեր մարդ էր, օժտված էր ժողովրդական իմաստությամբ, որը շատ կարևոր հատկանիշ է մասնավորապես քաղաքական գործչի համար: Դա նրա ընդգծված հատկություններից էր: Նա ժողովրդական մարդ էր և ժողովրդի հետ կարող էր խոսել հասարակ, պարզ և մատչելի լեզվով, որ չրջանն ու որ գյուղն էլ գնար:

Մարդկանց մեծ մասին անձնապես ճանաչում էր, իսկ մնացածին դեմքով գիտեր, բացի այդ նաև անձնական մեծ հմայքի տեր էր: Քոչինյանը վիթխարի հետք թողեց Հայաստանի պատմության մեջ: Մենք այսօր նախորդ սերունդներին դատելու իրավունք, իհարկե, չունենք. պատմությունը այդպիսի ընթացք է ունեցել: Ցավոք սրտի մեր նախորդ քաղաքական գործիչներին չհաջողվեց մեզ ժառանգություն թողնել մեր մեծ, պատմական Հայրենիքը, և ոչ թե նրա համար, որ նրանք չէին ուզում, այլ չկարողացան այդ ողբերգական քառսի մեջ կողմնորոշվել և շատ բաներում տանուլ տվեցին: Քոչինյանը գիտեր այդ ամենը, դրա համար էլ նա շատ թանկ էր գնահատում այն, ինչ ուներ իր ձեռքի տակ: Լավ իմանալով հանրապետությունը՝ նա տիրապետում էր նաև ղեկավարման բոլոր լծակներին և դա օգտագործում էր առանց ցուցադրելու, առանց ինքնաթմբկահարման: Ինձ թվում էր, որ բոլոր մասնագիտությունների մեջ պրոֆեսիոնալ էր: Քոչինյանը այն հազվագյուտ մարդկանցից էր, որոնք օժտված են ղեկավարի բնութագրին հատուկ բազմաթիվ դրական գծերով: Նա մեծ ավանդ ունի Հայաստանի ժողտնտեսությունը հզորացնելու հարցում: Նա ազգային նիհիլիստ չէր և նախորդ սերունդների աշխատանքը չէր ժխտում, օրգանական կապ էր տեսնում սերունդների մեջ և գտնում էր, որ քաղաքական գործչի իմաստությունը կայանում է նրանում, որ սերունդների ջանքով ստեղծված աշխատանքը չի փորձում անձնավորել մի մարդու մեջ: Շատ մեծ աշխատանք կատարեց արտադրողական ուժերի տեղաբաշխման գործում: Հայաստանում կառուցվեցին բազմաթիվ գործարաններ, այդ մասին շատ է խոսվել: Ձեմ ուզում խորանալ: Անտոն Երվանդովիչի տարերքը նաև հայ գյուղն էր՝ «մթնում կորած խրճիթներով»: Նա ուզում էր վերակառուցել այդ գյուղերը և վերակառուցեց, հիմնովին փոխեց հայ գյուղի համայնապատկերը և «մթնում կորած խրճիթների անհյուրընկալ պատերը սև» չքացան մեր սերնդի տեսադաշտից: Շատ էր սիրում գյուղը և շատ մոտիկից էր զբաղվում գյուղի խնդիրներով: Նա վիթխարի աշխատանք ծավալեց հողերի իրացման և հատկացման համար: Նույնն էլ արեց արդյունաբերական ուժերի բաշխման հետ. երևան եկան բազմաթիվ արտադրական միավորումներ: Քոչինյանը նախաձեռնեց այնպիսի գործ, որ անգամ դժվար էր երևակայել: Երբ ծառացավ Սևանի ճակատագրի հարցը, այն ժամանակ Ջարոբյանի հետ միասին սկսեցին 50 կմ երկարությամբ Արփա-Սևան թունելի կառուցումը, իսկ երբ Խրուշչովը եկավ Երևան և կարգադրեց դադարեցնել շինարարությունը, բոլորս էլ հասկացանք, որ թանկարժեք շինարարությունը կասեցվեց, իսկ վերականգնելը շատ դժվար հարց էր: Ես ներկա էի երկու «մեղավորների» խոսակցությանը:

Ջարոբյանը ասաց.

– Անտոն, պետք է գնալ Մոսկվա, Սևանի գլխին մեծ վտանգ կա, անհրաժեշտ է փրկել:

Դժվարությամբ գնաց, բայց լուծեց: Այն, որ շինարարությունը շարունակվեց, դա Քոչինյանի անձնական ծառայությունն էր: Պատճառը նրա կապերն էին, որը ձեռք էր բերել իր մարդկային հմայքով. մեծ հարգանք ունեին նրա նկատմամբ:

Թունելի շնորհիվ Սևանը բարձրացավ 1 մ 20 սմ, նպատակ ունեինք 6 մ հասցնելու, սակայն... այս վերջին 10 տարիներին միանգամից իջեցրին 4 մ:

Քոչինյանը մեծ ուղի էր անցել, աշխատանքային մեծ ճանապարհ:

Նա սերտ կապեր ուներ մտավորականության հետ, հատկապես գրականության, ճարտարապետության, կերպարվեստի, երաժշտության աշխարհի հետ: Նրանց նկատմամբ չափազանց հոգատար էր և ստեղծում էր աշխատանքային ստեղծագործական պայմաններ: Նա այն կարծիքին էր, որ արվեստագետը պետք է կապված լինի հողի հետ, մշակույթը այնտեղից է գալիս, հողի շերտերի տակ է դրված, այնտեղից պետք է հանես:

Իհարկե, անթերի քաղաքական գործիչներ չեն լինում: Անտոնը իր դարաշրջանի մարդն էր և կրում էր դարաշրջանի կնիքը: Ես խորապես համոզված եմ, որ նա ազգային գործիչ էր, նեղ, պնդաճակատ կուսակցականամոլ չէր և լավ գիտեր, որ այսօր այս կուսակցությունն է հնարավորություն տալիս երկիրը ծաղկեցնել, շենացնել և ժողովրդին տանել վերածննդի ճանապարհով, մանավանդ այնպիսի ծանր իրադարձություններից հետո, ինչպիսին ցեղասպանությունը և 1937 թվականն էին, երբ մտավորականության սերուցքն այլևս չկար: Նա գիտեր կոմունիստական վարչակարգի ստվերոտ կողմերը, ու մենք ավելին էինք տեսնում և հասկանում, քան այն մարդիկ, որոնք իրենց այլախոհ էին անվանում: Բայց մենք գտնում էինք, որ ավելի լավ է օգտագործել այդ համակարգի առավելությունները և հանրապետության զարգացման հնարավորությունները, որպեսզի մենք կարողանանք մեր երկիրը շենացնել: Անտոնը այդ առումով իրապես ազգային գործիչ էր: Անտոնը ծանր ապրումներով, մեծ դժվարությամբ կազմակերպեց այնպիսի մեծ գործ, ինչպիսին էր հայրենադարձությունը: Շատ քչերին է հայտնի նաև այն մասին, որ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Պոտսդամի վեհաժողովում դրվեց Հայաստանի հարցը՝ Ղարսի, Իգդիրի, Արդահանի՝ նախինում ցարական Ռուսաստանի տարածքի մեջ մտնող հողերի վերադարձման հարցը: Այն ժամանակ բոլոր

նախնական աշխատանքները կատարված էին, Քոչինյանին էլ նշանակել էին Ղարսի մարզային կոմիտեի քարտուղար, բայց ափսոս, ծրագիրը չիրականացավ: Դրա պատճառը առաջին հերթին պետք է որոնել մեծ պետությունների և մեր հարևանների նուրբ դիվանագիտության մեջ: Հայաստանը միշտ նրանց ձեռքին խաղաքարտ է եղել իրենց խնդիրները լուծելու համար: Մենք այսօր էլ կարող ենք խորհել մեծ պատմիչ Եղիշեի խոսքերով, թե միաբանությունը բարի գործերի մայրն է, անմիաբանությունը չարիք է ժողովրդի համար: Այս միտքը պետք է խորապես ըմբռնել:

Խոր համոզմունքով պիտի ասեմ, որ երբ մեր ազգային քաղաքական գործիչները չոչափել են հարցեր, որոնք կապված են եղել Թուրքիայի կամ Ադրբեջանի հետ, Մոսկվայի միջոցով տապալել են մեզ: Այդպես տապալեցին Գ. Հարությունյանին Ղարաբաղի հարցի համար, այդպես վարվեցին Զարոբյանի հետ՝ ազգային զարթոնքի և Մեծ եղեռնը նշելու համար, նույն ճակատագրին արժանացավ Քոչինյանը, երբ Շելեպինին, որը եկել էր Հայաստան, կառավարության նախագահության կողմից նամակ ներկայացրեց այն մասին, որ անհրաժեշտ է Ղարաբաղի հարցը վերանայել և այն վերադարձնել Հայաստանին: Դրան անմիջապես հետևեցին հետապնդումները, անգամ տարածվեցին վարկաբեկիչ լուրեր: Անտոնն այն մարդը չէր, որ դեմ գնար իր ժողովրդի շահերին. նա դրա համար չէր ծնվել: Ոսկի ունեցողներին հակառակ նա գերադասում էր իշխանություն ունենալ, իսկ հարստությունը կեղտ է, որը այսօր կա, վաղը չկա: Կարևորը մարդու արած և դրած գործն է:

Պատահեց այնպես, որ հայրենադարձությունը Իրանից որոշ ժամանակով դադարեց, մինչդեռ տասնյակ հազարավոր հայեր դուրս էին եկել իրանահպատակությունից և մնացել էին օդի մեջ կախված: Անտոն Երվանդովիչը զանգահարեց և կանչեց իր մոտ: Գնացի մոտը, ասաց.

– Ալեքսան, Գ.Գևորգյանին հայտարարել են անցակալի անձ և հեռացրել են Իրանից, գնա՛, կարգավորի՛ր, դու այդ գործի վարպետն ես:

Ես ծիծաղելով ասացի, թե այդ որ օրվա դիվանագետն եմ, որ այդպիսի հանձնարարություն է տալիս: Այնուհետև արտաքին գործերի նախարարների հետ միասին բանակցությունների միջոցով վերականգնեցինք հայրենադարձությունը Իրանից:

Նա մտահոգ էր հայրենիքի և ժողովրդի համար, և ոչ մի բան չէր վրիպում նրա ուշադրությունից: Մանրախնդիր չէր, որը շատ կարևոր է ղեկավարի համար. դա նրան բնորոշող գծերից մեկն էր: Աչքի տակով նայում էր, թե ով է իր տեղում, ինչպես է աշխատում և ինչ պահանջներ ունի: Մի անգամ էլ կանչեց և ասաց, որ արդյունաբերության բնագավառը շատ մեծ է, այդ խնդրի վրա պետք է Նախարարների խորհրդում մեծ ուշադրություն դարձնել, պետք է դադարենք դոտացիոն հանրապետություն լինելուց: Հետո առաջարկեց տեղափոխվել նախարարների խորհուրդ:

Ես հարցրի.

– Իսկ Դուք համաձայնեցրե՞լ եք Մոսկվայի հետ:

– Ղալմաղալ է անում, բայց ոչինչ, գիտի, որ առաջքաշում է, և դու, գիտեմ՝ կկարողանաս:

Ամբողջ պահուստային ֆոնդերը, ժողովրդին արդյունաբերական և պարենային ապրանքներով ապահովելը, մատակարարման խնդիրները իմ տնօրինության տակ էին: Զանգ էր տալիս.

– Ալեքսա՛ն, իմ օգնության կարիքը չկա՞:

Ասում էի.

– Շնորհակալ եմ, երբ կարիքը լինի, կզգուշացնեմ:

Տակտ, ղեկավարի իմաստություն: Երբեմն երեկոյան երկուսով մտնում էինք խանութները, նայում էր, դիմում էր մարդկանց, հետաքրքրվում էր, հարցնում էր, որ գյուղից է, պապն ով է, քեռին ով է, կատակելով անմիջական զրույցի էր բռնվում, իսկ երբ նստում էինք մեքենան, մեծ գոհունակությամբ նշում էր, որ ժողովուրդը արդեն լավ է ապրում:

Երբ Անտոն Երվանդովիչին նոր էին ընտրել Նախարարների խորհրդի նախագահ, պատահաբար հանդիպում է Ավետիք Իսահակյանին, որը, նկատելով Անտոն Քոչինյանի հոգսաչատ

տրամադրությունը, անհանգստացած հարցնում է, թե ինչն է պատճառը:

– Վարպե՛տ, ինձ շատ անհանգստացնում է ժողովրդի վիճակը, պատերազմը նոր է վերջացել, տնտեսությունը խարխլված է, անապահով մարդիկ շատ կան:

Վարպետը հանգստացնող տոնով ասում է.

– Ա՛յ տղա, սոված հայերից ես վախենում, դու կուշտ հայերից վախեցի՛ր:

Քոչինյանը ուներ նաև մարդկային թուլություններ, և երբեմն իր բարությունը, ընկերական հարաբերությունները օգտագործում էին պատեհապաշտները, որոնք միշտ կան ու կլինեն:

Ղեկավարին հետագայում ո՛չ պետք է աստվածացնել և ո՛չ էլ ուրանալ: Նրա կատարած գործերին պետք է տալ ազնիվ և ճիշտ գնահատական: Սա է ճշմարտությունը:

СУРЕН АРУТЮНЯН

БОЛЬШОЙ ХОЗЯИН АРМЯНСКОГО ДОМА

История - это не просто чередование эпох и времен. Это и бесконечная галерея исторических портретов людей. Причем, каждый из этих портретов высвечивает сложнейшую диалектику своего времени. В этом смысле несомненный интерес представляет личность Антона Ервандовича Кочиняна - 90-летие которого в этом году отмечаем.

Придерживаясь римского принципа "De mortuis-veritas" ("О мертвых - правду"), хочу сказать об А. Е. Кочиняне правду о том, каким я его видел и каким он остался в моей памяти.

Прежде чем взять ручку и начать писать об А. Е. Кочиняне, долго размышлял что писать, какие главные черты характера в нем выделить. Казалось бы знал я его хорошо, общался с ним в разных ситуациях, но тем не менее трудно было начинать. Видимо оттого, что личность А. Е. Кочиняна неординарна, многопланова, так просто о нем не скажешь.

Первое слово, которое пришло на ум при характеристике его личности было мудрость. Да, действительно, пожалуй это слово наиболее емко его характеризует. Принимая какое-либо решение, он не спешил, не торопился, решение созревало лишь тогда, когда он всесторонне взвешивал все "за" и "против". При этом предварительно выслушивал мнение компетентных людей, ученых и специалистов, соответствующих министерств и ведомств. Это было характерно для его стиля работы.

Никогда не видел, чтобы он на возвышенных тонах говорил с кем-либо. Не довелось мне и быть свидетелем, чтобы он

кого-либо унизил или оскорбил. И это у него сочеталось с высокой требовательностью в работе.

В Советской Армении было немало государственных деятелей, имена которых особенно дороги нашим соотечественникам. По справедливости свое достойное место в этом славном ряду занимает А. Е. Кочинян, многие годы проработавший Председателем Совета Министров Армении, а затем первым секретарем ЦК Компартии республики.

Мне пришлось с ним познакомиться и активно общаться в годы, когда я работал секретарем ЦК комсомола Армении. Помню его реплику, когда в 1965 году меня утверждали на бюро ЦК КП Армении в должности второго секретаря ЦК ЛКСМ Армении. Он тогда сказал так: "Его мы не знаем, а отца знали хорошо". Действительно, мой отец в свое время работал заместителем министра сельского хозяйства республики, нередко общался с А. Е. Кочиняном, и это имя в мои юные годы довольно часто склонялось в нашей семье. Проработав в Москве несколько лет в ЦК ВЛКСМ, я возвратился в Ереван на должность второго секретаря ЦК комсомола республики в 1965 году при Якове Никитовиче Заробяне, а уже в 1967 году при Антоне Ервандовиче Кочиняне был избран первым секретарем ЦК комсомола. Кстати, в том же году был избран и кандидатом в члены бюро ЦК Компартии Армении. Это давало мне возможность довольно часто общаться с первым секретарем ЦК КП Армении.

Я никогда не забуду годы моей работы в комсомоле Армении, когда моим наставником был А. Е. Кочинян.

Помню, как не так давно один из руководящих работников Республики Армения мне задал вопрос: "Кого Вы, Сурен Гургенович, относите к числу выдающихся руководителей из числа первых секретарей ЦК?". Мой ответ был таков: "Из числа первых секретарей ЦК я не вижу случайных людей. Все они были люди самобытные, интересные, и каждый из них оставил свой неповторимый след в памяти людей. Я бы

выделил, может быть, две личности - это Григория Артемовича Арутюняна и Антона Ервандовича Кочиняна".

Скажу к этому следующее. А. Е. Кочинян был большим хозяином нашего армянского дома. Он хорошо знал, где что лежит, а самое главное, как никто другой, знал людей, партийные, советские и хозяйственные кадры. Хорошо знал, кто на что способен. Я поражался, что он по именам знал не только директоров заводов, совхозов, председателей колхозов, деятелей науки, культуры и искусства, но и многих рядовых селян и горожан.

Он общался с людьми с лорийской непосредственностью, с какой-то особой теплотой и сердечностью. Часто ездил по районам и городам республики, причем в ходе этих поездок решал многие вопросы, которые волновали селян и горожан. С народом умел говорить на местном наречии, что делало его своим, приближало к людям. Многие до сих пор помнят встречи с ним и об этом говорят с нескрываемым волнением.

Природа одарила его многими способностями, в том числе и такой важной, как умение сходиться с самыми различными людьми. Вот это его качество - умение работать с людьми, используя их сильные стороны для общего дела, независимо от характера, взглядов и убеждений, на мой взгляд, является одной из ценных черт характера Антона Ервандовича Кочиняна.

Без преувеличения можно сказать, что у него сочетались качества политика, дипломата, хозяйственника, администратора и организатора.

А. Е. Кочинян обладал особым даром видеть и понимать проблемы, а самое главное находить пути их решения. Ему может быть как никому другому удавалось решать важные для республики вопросы в Москве. У него были весьма теплые отношения с Л. И. Брежневым, А. Н. Косыгиным, А. П. Кириленко и другими руководителями страны.

Вспоминаю с какой теплотой Алексей Николаевич Косыгин обращался в Антону Ервандовичу, когда он пролетом в Иран сделал остановку в Ереване. Эти связи, естественно, оказывали свое влияние на решение тех или иных вопросов экономического, да и политического характера.

С именем Кочиняна во многом связано становление и развитие экономики, сельского хозяйства, науки и культуры Советской Армении. Масштабы и значимость сделанного в годы деятельности на высших государственных постах А. Е. Кочиняна в полном объеме осознаются сейчас, по прошествии десятилетий. В его бытность ведущими отраслями промышленности республики стали энергетика, машиностроение и металлообработка. Электротехническое машиностроение Армении по объему производства занимало второе место в СССР, а приборостроение и станкостроение - пятое место. В республике производились такие виды продукции, как электронные машины, приборы управления автоматическими системами, вычислительная техника, станки различных видов, автомобили, автопогрузчики, трансформаторы, компрессоры и т.д.

Для решения важной социальной проблемы - обеспечения занятости населения, по инициативе А. Е. Кочиняна осуществлялся курс на расширение географии промышленности, в частности на размещение многих промышленных предприятий в малых городах и районах республики. В различных районах было создано 48 филиалов промышленных предприятий.

А. Е. Кочинян, руководство республики уделяли повседневное внимание формированию молодой смены инженерно-технических работников, рабочего класса. Если в 1965 г. на предприятиях республики работали 198 тыс. рабочих, инженерно-технических работников и служащих, то в конце 1974 г. их было уже более 314 тыс. человек. Героический труд рабочих Армении вложен в сотни сооруженных предприятий, в Армянскую атомную электростанцию, в рукотворное

подземное русло Арпа-Севан, в возведенные новые города и поселки.

Государственного деятеля надо оценивать во весь рост его личности, по совокупности дел, а не по отдельному случаю, который пытаются представить как типичный. Так вот, если оценивать А. Е. Кочиняна по совокупности дел, можно с полным основанием сказать - в его лице мы имеем выдающегося государственного деятеля, который сыграл большую роль в становлении Советской Армении и армянской государственности тех лет.

Когда я пишу эти строки об А. Е. Кочиняне, в голову приходит такая мысль. Велика заслуга этих людей, которые работали в советское время и внесли огромный вклад, чтобы оставить нам в Армении заводы, фабрики, научно-исследовательские институты, вузы, техникумы, дома культуры, построенные и обновленные города и села. А самое главное оставили людей с высоким культурно-техническим уровнем, способными решать самые актуальные задачи в сфере производства, науки и культуры.

Весь вопрос в том, как мы использовали и используем этот потенциал нации. Главное его не растерять.

К числу характерных качеств А. Е. Кочиняна я бы отнес его умение и способность выбирать оптимальную линию поведения. Этот человек не мог впадать в крайности, что весьма важно для большого политика. Не впадая в эмоции и избегая скороспелых выводов, он оставался на почве фактов. На меня А. Е. Кочинян производил впечатление уравновешенного, основательного и доброжелательного человека, не лишенного хоризмы, умел, когда это надо было, терпеть и выжидать. Он был, безусловно, незаурядным человеком и политиком, всегда хорошо выглядел, обладал привлекательной внешностью.

Будучи колоритной личностью, в нем было сконцентрировано много того, самобытного, что характерно для Армении и армянского народа. Я бы сказал - он был человеком глубоко национальным по своему духу и менталитету.

А. Е. Кочинян, имея за плечами опыт работы в качестве первого секретаря ЦК комсомола республики, весьма умело использовал возможности комсомола, молодежи, любил встречаться с молодежью, часто выступал перед ней на различных слетах, съездах и конференциях. Он знал в лицо секретарей райкомов, горкомов комсомола, ценил их деятельность и выдвигал на ответственную партийную, советскую и хозяйственную работу.

Меня до глубины души всегда трогало его внимательное, я бы сказал, отцовское отношение к молодым, растущим кадрам. Умел подмечать их достоинства и недостатки. Именно при нем выросли многие в последующем известные политические и государственные деятели Армении.

Он не давал кадрам, как говорится "застаиваться на корню". Помню в конце 1969 года, находясь у него в кабинете, он мне сказал: "Сурен, жизнь показывает, что когда комсомольские работники на многие годы задерживаются в комсомоле, затем с трудом находят себя на партийной, советской и хозяйственной работе. Хочу тебя в ближайшей перспективе перевести на партийную работу. Как ты на это смотришь, может достаточно в комсомоле работать". Ответил ему так: "Антон Ервандович, я Вам и так благодарен за то огромное доверие, которое мне оказано. Я являюсь первым секретарем ЦК комсомола, кандидатом в члены бюро ЦК Компартии Армении, депутатом Верховного Совета. Считаю, что если в своей жизни избрал путь, по которому иду сейчас, то должен быть готов работать на любом участке, который будет мне доверен". Но потом жизнь повернулась иначе. Буквально через несколько месяцев на съезде ВЛКСМ меня избирают секретарем ЦК комсомола Советского Союза. Расставаться мне с республикой, А. Е. Кочиняном было нелегко.

Вспоминаю, вскоре после избрания в Москве секретарем

ЦК ВЛКСМ, у меня состоялась встреча с А. И. Микояном. На той встрече он произнес запомнившуюся мне фразу:

- Сурен, ты знаешь, недавно по телефону разговаривал с Антоном Ервандовичем. Он переживает в связи с тем, что тебя перевели в Москву. Хотя это и большое выдвижение, впервые наш соотечественник избирается на такую должность в комсомоле, но для него, как он сказал, это - большая потеря.

Вспоминается, Антон Ервандович устроил в доме приемов обед в честь моего отъезда в Москву, на который были приглашены члены бюро ЦК КП Армении и заместители Председателя Совета Министров республики. Запомнился этот обед, на встрече царила весьма теплая и доброжелательная обстановка. Запомнились и слова А. Е. Кочиняна: "Сурен, жив буду, верну тебя в Армению". Но судьба распорядилась иначе. В 1974 году А. Е. Кочинян ушел на пенсию, а мне пришлось в силу сложившихся обстоятельств поработать в Москве еще долгие годы.

Говоря об отношении А. Е. Кочиняна к молодым кадрам, не могу не отметить и такой стиль его работы. Он изучал их не только в официальной обстановке. Часто по приглашению Антона Ервандовича я бывал у них дома на даче. Вспоминаю его гостеприимную семью: супругу, которая была очень приятным и отзывчивым человеком, его дочь Жанну, сыновей, зятя Вову. От этих посещений веяло каким-то особым теплом. Антон Ервандович умел создавать непринужденную обстановку, и человек в его семье не ощущал какой-то скованности.

По жизни Антон Ервандович был жизнелюб и оптимист, любил природу, если позволяло время, иногда ездил на охоту, дарами которой пользовались и мы. Иногда, уже довольно в позднее время, после охоты раздавался звонок у нас на квартире, появлялся водитель Антона Ервандовича и передавал от его имени мясо медведя или косули. В этом весь Антон

Ервандович - его доброта, внимание, забота.

Еще раз о внимании к молодым кадрам. Помню освободилось место главного редактора газеты "Советакан Айастан" после ухода Хачика Овакимяна. В разговоре с Антоном Ервандовичем сказал ему:

- Антон Ервандович, у нас в газете "Авангард" главным редактором работает Лорис Кроян, работает не один десяток лет, человек взвешенный, осмотрительный, за плечами большой опыт журналистской работы. Посмотрите на его кандидатуру.

Не знаю, какую роль сыграла моя рекомендация, но вскоре после этого Л. Кроян был назначен главным редактором газеты "Советакан Айастан".

Припоминаю и такой случай. В Дилижане вакантным было место председателя горисполкома. Предложил Антону Ервандовичу кандидатуру Чепель Надежды, которая многие годы работала первым секретарем горкома комсомола. Обосновал свое предложение. Антон Ервандович внимательно меня выслушал и вскоре на обсуждение бюро ЦК была вынесена эта кандидатура. В ходе обсуждения Антон Ервандович бросил такую реплику: "Это Сурен расставляет свои кадры". Я немного смутился, а Надежда Чепель отреагировала словами: "А я не подведу Сурена Гургеновича". Подобных примеров мог бы привести не мало.

Антон Ервандович часто встречался с секретарями райкомов и горкомов комсомола. И справедливости ради нужно сказать - республиканский комсомольский актив любил и уважал Антона Ервандовича, ценил доверие первого секретаря ЦК КП Армении.

Не могу не отметить еще одну черту Антона Ервандовича. Он был тонким психологом, умел как никто другой показать, что замечает позитивное, как то ненароком мог это отметить, даже в каких-то мелочах. Но это были такие мелочи, что выходил от первого секретаря ЦК окрыленный и согретый.

Могут задать вопрос, а были у него недостатки, ошибки. Отвечаю, что я не знаю политических и государственных деятелей, которые не совершали ошибок, были непогрешимы. Таких людей вообще нет. Весь вопрос в том, какие это ошибки и приводили они к каким либо негативным последствиям в масштабе республики. Все достоинство А. Е. Кочиняна состояло в том, что если он и совершал ошибки весьма незначительные, то умел весьма быстро их исправлять.

Мне в жизни посчастливилось, что пришлось работать под началом мудрого, опытного, внимательного и очень заботливого наставника.

Отдавая дань уважения видному государ ственному деятелю Антону Ервандовичу Кочиняну, мы осмысливаем прошлое и обогащаем настоящее. Возвращаясь к жизни и деятельности таких людей как А. Е. Кочинян, мы, невольно, находим для себя много интересного, полезного и поучительного. Обидно только, что на заключительном этапе своей жизни этот человек был обойден вниманием, которого он заслуживал как достойный сын своего народа.

Бедна та страна, в которой низвергнуты политические авторитеты. Так давайте не низвергать, а восстанавливать авторитеты, воздавать должное людям, которые этого заслуживают своей деятельностью во благо страны, народа и государства. Приятно сознавать, что за последние годы в Армении не мало делается в этом направлении.

Всегда надо помнить - будущее есть у того народа, дети которого идут и "поправляют плиты" на могилах предков.

ՎԼԱԴԻՄԻՐ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՆԱ ԻՐ ՄԵՋ ԿՐՈՒՄ ԷՐ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՎՍԵՄ ԱՐԺԱՆԻՔՆԵՐ

Ինձ համար մեծ պատիվ, միաժամանակ դժվարին պարտավորություն է խոսք ասել մեր ապրած ժամանակի խոշոր կուսակցական ու պետական գործիչ Անտոն Երվանդի Քոչինյանի մասին: Ընդհանրապես մեծությունների մասին դժվար է խոսել, որովհետև նրանք իրենց մեջ կրում են ոչ միայն մարդկային վսեմ արժանիքներ՝ պարզության, համեստության, ազնվության, ճշմարտացիության, խղճի ու պատվի բարձր հատկանիշներ, այլև կրում են մի ամբողջ ժամանակաշրջան: Ավելին, Անտոն Քոչինյանը իր մեջ ամբողջ Հայաստանն էր պահում՝ տոգորված լինելով իր երկրի նկատմամբ բուռն սիրով, իր ժողովրդին ծառայելու անսահման պատրաստակամությամբ: Եվ հենց այդպիսի սիրով էլ քարը քարի վրա դնելով՝ նա գրեց իր ղեկավարած ժամանակաշրջանի պատմությունը, որը չափվում է ավելի քան 30 տարով:

Ես միշտ մտածել եմ, որ ղեկավար լինելու համար բնատուր խելքն ու աշխատասիրությունը, նույնիսկ տաղանդը բավական չեն, հարկավոր է այդ ամենի հետ նաև սիրտ ունենալ: Ահա այդպիսի մեծ սիրտ ուներ Անտոն Քոչինյանը: Իսկ դա գալիս էր նրանից, որ նա հողածին էր և իր իմաստությունը մշտապես քաղում էր հողից: Նա թերևս հանրապետության միակ գործիչն էր, որ Հայաստանի հողը, նրա ամեն մի հողակտորը գիտեր անուններով, գիտեր նաև, թե ով է այդ հողակտորի տերը, այնտեղ ինչ է մշակվում և ինչ կարելի է մշակել, իսկ ավելի շատ գիտեր հողատիրոջը: Սխալված չեմ լինի, եթե ասեմ, որ նրա մեջ ամենալավագույնը հենց զարմանալի զգացողությունն էր

մարդկանց նկատմամբ: Նա իր կողքին մշտապես զգում և տեսնում էր չարքային մարդկանց, հարգում նրանց անձն ու արժանապատվությունը, հաշվի նստում նրանց հետ: Նա կարող էր ամենաչարքային հողագործի մեջ տեսնել ու ճանաչել նրա մեծությունը, իսկ մարդկանց ճանաչել, նշանակում է ամենից առաջ իմանալ նրանց հոգսերը և հոգսրնկեր լինել նրանց: Հենց մարդկանց նկատմամբ սիրո թևերի վրա էր բարձրացել և հանրապետության առաջին դեմքը դարձել Անտոն Քոչինյանը: Ցեմ կարող չընդգծել նաև, որ նա այն սակավաթիվ ղեկավարներից էր, որ կյանքը, նաև սովորական առօրյան լցնում էր բովանդակությամբ, որով էլ չափազանց դյուրին էր դառնում նրա ղեկավարությամբ աշխատելը:

Զարմանալի հիշողության տեր մարդ էր: Երբեմն ինձ էլ են վերագրում հիշողությամբ օժտված լինելու շնորհը, սակայն պիտի ասեմ, որ բնատուր հիշողություն ունենալը նույնպես ոչինչ չի նշանակում, հարկավոր է ձգտել սեփական հոգու մեջ հիշողություն դաստիարակել: Այդ դաստիարակությունը ես ստացել եմ Անտոն Երվանդովիչից: Նա իր ապրած կյանքը հուզիչ էջերով պատմություն չէր դարձնում, այլ կյանքը վերապրում էր՝ այն անցկացնելով ու զտելով ժամանակի քամիչով և դարձնելով այնպիսի հիշողություն, որ կարող էր դաստիարակության դպրոց ու դասագիրք դառնալ: Նա Հայաստանի 926 համայնքներից յուրաքանչյուրում առնվազն 100 մարդ էր ճանաչում ոչ միայն դեմքով, այլև տոհմով, արմատներով, նախասիրություններով, ունակություններով, սովորույթներով, բարքառով, բոլոր մանրամասներով:

Հողին, հողագործին, հայ մարդուն մոտիկ լինելով հանդերձ՝ Անտոն Քոչինյանը մեր ժողովրդի հիշողության մեջ մնալու է նաև որպես մեծ գործերի հեղինակ, Հայաստանի տնտեսության բարձրացման մի չարք արմատական խնդիրների հետամուտ և կազմակերպիչ: Դա նրա գործունեության ամենանկատելի կողմերից է, քանի որ տնտեսական խնդիրների կարևորությունը երբեք չի տարրալուծվել նրա վարած ներքին ու արտաքին քաղաքականության կենսոլորտում: Ընդհակառակը, որակապես

նոր մակարդակի բարձրացան արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը, աննախադեպ չափերի հասան շինարարությունը և էներգետիկան: Հայաստանը մեծ ճանաչում ստացավ գիտության, կրթության և մշակույթի ասպարեզներում, ժողովրդի բարեկեցության աճը Միության մյուս հանրապետությունների համեմատությամբ դարձավ անհասանելի: Նա տնտեսական, սոցիալական ոլորտում և քաղաքականության մեջ կանխատեսելու մարգարեությամբ էր օժտված: Նա հաստատեց տնտեսությունը էներգիայի աղբյուրներով հագեցնելու և մարդկանց կենսամակարդակը բարձրացնելու չարունակական փոխկապակցվածության գաղափարը, և պատահական չէր, որ Այսրկովկասում առաջին ատոմակայանը կառուցվեց Հայաստանում: Այստեղ խոսքը տեղի ընտրության մասին չէ, այլ այն մասին, թե մենք ինչպիսի վիճակում կհայտնվեինք, եթե 90-ականներին չվերագործարկվեր ատոմակայանը կամ չլիներ Որոտանի հիդրոհամակարգը: Ածուխ, նավթ և գազ չունեցող հանրապետությունը էներգիայի ի՞նչ աղբյուրներից պիտի օգտվեր, երբ Սևանն էլ հոգեվարքի մեջ էր, իսկ անտառային պաշարներն էլ սահմանափակ էին: Վերջերս, երբ նորից ասպարեզ նետվեց Հայաստանում գազ և նավթ որոնելու կարգախոսը, մի դիպուկ խոսք ասացի.

– Եթե գազ և նավթ լիներ, Քոչինյանի ժամանակ գտած կլիներին:

Անտոն Քոչինյանը մտահոգված էր նաև արտաքին և ներքին հաղորդակցության ուղիների ընդլայնմամբ ու զարգացմամբ: Դրանք դեպի ծով ելք չունեցող, սահմանափակ երկաթուղային ցանց և լեռնային խիստ կտրտված ռելիեֆ ունեցող հանրապետության համար ավելի քան կենսական անհրաժեշտություն էին: Երբ շահագործման հանձնվեց Պուշկինի լեռնանցքի թունելը, Անտոն Երվանդովիչի նախաձեռնությամբ սկսվել էին նաև Սևանի թունելի շինարարական աշխատանքները, իսկ Մեղրունն արդեն նախագծվում էր: Այդ տարիներին գործողության մեջ դրվեցին և նախագծվեցին մի չարք ջրամբարներ, ոռոգման համակարգեր, ջրագծեր և այլն: Եվ քանի որ դրանց մեծ մասը

տարիների կառույցներ էին, ճիշտ չէր լինի դրանք վերագրել որևէ անհատի կամ ղեկավարի: Օրինակ, երբ խոսում ենք Արփա-Սևան ջրատարի մասին, չպետք է որևէ մեկին առանձնացնել, որովհետև այն սկսվել է Յա. Զարոբյանի օրոք, համարյա ամբողջությամբ կառուցվել է Ա. Քոչինյանի ժամանակ և ավարտվել Կ. Դեմիրճյանի ղեկավարած տարիներին: Ընդհանրապես պետք է վերջ տրվի այն սովորությանը, երբ մի ճշմարտություն հաստատելու համար հերքում են մեկ այլ ճշմարտություն, կամ մեկին մեծարելու համար նսեմացնում են մյուսին: Այս իմաստով մենք պատմությունից սովորելու շատ բան ունենք, քանզի մտածելու տեղիք է տալիս այն հանգամանքը, որ Հայաստանում սեփական հողի վրա անգամ մի թագավորի գերեզման չկա: Իսկ թագավորի պաշտամունք չունեցող երկիրը դժվար թե երկիր դառնա: Մի՞թե դա չի հուշում Մեծ Բրիտանիայի օրինակը, որտեղ թագուհու լինելությունը ազգային մտածելակերպի ամենակարևոր տարրերից է:

Անտոն Քոչինյանի մարդկային իմաստության ամենաբարձր տարրերից մեկն էլ հանգամանքներին հարմարվել կարողանալն էր: Ոչ ոք նրա չափ ներողամիտ չէր: Երբեք որևէ մեկի կամ որևէ երևույթի նկատմամբ ատելությամբ չլցվեց, թեև առիթներ էլ կային, և բարկացնողներն էլ քիչ չէին: Նա համբերությամբ տարավ նաև իրեն չրջապատող մարդկանց թուլությունները: Իմ հիշողությունների գրքում ես այդ իմաստով մի շարք օրինակներ եմ բերել: Չեմ մոռանում, որ իմ գործունեության արշալույսին կանչեց ինձ ու հայրաբար խորհուրդ տվեց.

– Խի՛ստ եղիր այն մարդկանց նկատմամբ, ովքեր դրա կարիքն ունեն, իսկ մյուսներին հայրությունն արա:

Քաջ տիրապետելով պլատոնյան այն սկզբունքին, որ ամենայն իմաստության հիմքը համբերությունն է, նա ներքին դժվարությունների հաղթահարման հետ կարողացավ նաև արտաքին ամպրոպների նկատմամբ հանգստություն պահպանել:

Հումորի շատ նուրբ զգացում ուներ: Հանրահայտ է, որ հումորը կյանքի անհեթեթությունների բարեհոգի հայեցողությունն ու դրա գեղարվեստական արտացոլումն է, ուստի նրա մեջ չպետք է ցինիզմի տարրեր լինեն: Ցավոք, հիմա այդպես չէ: Զէ՞ որ հումորով ներկայացվում են ճշմարտություններ՝ կատակի քողի տակ: Այդ իմաստով Քոչինյանի հումորը ոչ միայն նուրբ էր, այլև բարեկիրթ: Գտնում էր, որ ծիծաղը մարդասիրության արտահայտություն է, ուստի և ոչինչ մարդկանց այնպես չի մերձեցնում, որքան լիաթոք, անմեղ ծիծաղը: Զմոռանանք նաև, որ ծիծաղով մարդը նաև մատնում է իրեն, դառնում այնպիսին, ինչպիսին կա: Հիշում եմ՝ պատմում էր, որ իրենց գյուղից մեկը կոլխոզից փախել և մտել էր Դեբեդ գետի ջրի տակ: Դրանից հետո ամեն առավոտ գլուխը ջրից հանել ու հարցրել է.

– Կոլխոզը դեռ կա՞, – ասել են՝ կա, և խեղճը նորից սուզվել է ջրի տակ: Ո՞վ չգիտեր, որ կոլխոզում հողը տեր չուներ, գյուղացին էլ հող չուներ: Իսկ եթե գյուղացին հող չունի, ուրեմն անտեր է, եթե հողը տեր չունի, ավելի քան անտեր է: Հողի և գյուղացու փոխհարաբերության փիլիսոփայությունը սա է: Երիցս ճիշտ է այն դատողությունը, թե հողը հարստության մայրն է, աշխատանքը՝ հայրը: Եթե մայրը կա, աշխատանք չկա, ուրեմն հողը պտղաբերել չի կարող: Այսպիսին էր նաև հողածին և հողապաշտ Անտոն Քոչինյանի փիլիսոփայությունը: Ես անցել եմ նրա հողապաշտության դասերը, սովորել եմ նրա դպրոցում, և այդ դասերը մշտապես ուղեկցում են ինձ, որովհետև դրանք անցել են արյանս մեջ և մնալու են ընդմիշտ:

Անտոն Քոչինյանը գյուղատնտեսությունը հիանալի գիտեր: Գյուղմասնագետ լինելով՝ ես հաճախ զարմացել եմ նրա գիտելիքների՝ մասնագետին վայել խորության վրա: Առանձնահատուկ վերաբերմունք ուներ խաղողագործության, պտղաբուծության և անտառի նկատմամբ: Այդ ասպարեզներում բնագետի գիտելիքներ ուներ, բնասերի մոլուցք, բնապահպանի եռանդ, բնախույզի աչք և այդ թեմաների չուրջ կարող էր գիտնականների հետ բանավիճել, հողագործներին խորհուրդ տալ: Պետք է ավելացնեմ, որ նրա օրոք սկսվեց անասնապահությունը արդյունաբերական հիմքերի վրա դնելու գործընթացը՝ հաշվի առնելով Հայաստանի սահմանափակ հնարավորությունները:

Կառուցվեցին Թալինի խոզաբուծական, ինչպես նաև անասնապահական և թռչնաբուծական բազմաթիվ համալիրներ չատ շրջաններում:

Անտոն Քոչինյանը նաև խոշոր ազգային գործիչ էր: Իմանալով Հայաստանի ամեն մի քար ու թփի տեղը, ճանաչելով բոլոր հայերին՝ նա հրճվում էր, երբ հայոց հողի վրա մեկը տուն էր կառուցում, երբ մի գյուղ էր շինվում, երբ ճանապարհ էր կառուցվում, ջուր էր անցկացվում: Նրա ժամանակ մեր ղեկավարությունը վերջապես երեսը շրջեց դեպի գյուղը: Բոլորը գիտեին, որ նա հանձնարարել էր գյուղերում ու շրջկենտրոններում տներ կառուցողներին չհարցնել, թե չինանյութերը որտեղից են ձեռք բերել: Շրջանների և գյուղերի ղեկավարները դա գիտեին: Ասում էր.

– Փոխանակ մենք կառուցենք, իրենք են կառուցում. դեռ պիտի նրանց աշխատավարձ էլ տանք:

Դա ոչ բոլորին տրված բնավորության գիծ է, դա մի անձի մեջ հայր ու որդի լինելու ֆենոմենն է: Ընտանիքում հայր լինելը հայի պարտքն է, բայց ժողովրդի հայր լինելու համար մեծ մարդ և մեծ գործիչ պետք է լինել:

Եվ, վերջապես, Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի մասին: Այն ժամանակ, երբ կուսակցության ազգային քաղաքականությունը ամբողջովին ուղղված էր համահարթեցմանը, այսպես կոչված «խորհրդային ժողովուրդ» համընդհանրության ձևավորմանը, նաև ազգային խնդիրների ու լեզվի սոցիալիստական ինտեգրացմանը, Անտոն Քոչինյանը խիզախություն ունեցավ այդ կնճռոտ հարցերը բարձրացնել Մոսկվայի առջև՝ առանձնապես փաստարկելով Ադրբեջանի կազմում Արցախի մնալու անկարելիությունը: Ոչնչից չխորշելով՝ նա հասավ այն բանին, որ հարցը վերևներում քննարկվի: Թերևս խնդիրը հանգուցալուծվեր, եթե չլինեին կուսակցական հրեշները՝ Պոդգորնին, Սուսլովն ու Մժավանաձեն:

Հայտնի է, որ Հայրենական պատերազմից հետո պիտի լուծվեր Արևմտյան Հայաստանի հողերի, մասնավորապես Կարսի ու Էրզրումի հայկական տարածքների վերամիավորման հարցը:

Ըստ կազմված ծրագրի՝ այնտեղ մարզկոմի քարտուղար էր ուղարկվելու Անտոն Քոչինյանը: Իր կյանքի աստեղային ժամը նա համարում էր այդ ծրագրի իրականացումը:

Անտոն Քոչինյանը ինչպես չատերի, այնպես էլ ինձ վրա հսկայական ազդեցություն է թողել: Նա կարող էր անհատի մեջ տեսնել ու բացահայտել այն, ինչին ընդունակ է վերջինս: Կարող էր աննկատ իր փորձը, համոզմունքները, նաև կրքերն ու իղձերը փոխանցել ուրիշին: Ես հորս ոչ ոքի հետ չեմ կարող չփոթել, կամ ասել, որ որևէ մեկին հորիցս ավելի չատ եմ հարգում ու մեծարում, սակայն չեմ կարող մոռանալ Անտոն Երվանդովիչի իրոք հայրական խորհուրդներն ու խրատները: Չի կարելի մոռանալ, թե նա ինչպիսի հոգատարություն ուներ դեպի երիտասարդ կադրերը: Առանձնահատուկ վերաբերմունք ուներ գյուղից եկածների նկատմամբ: Չէ՞ որ ինքն էլ նույն ճանապարհն էր անցել, անցել էր առանց տանող հրթիռի և բարձրացել իր ուղեծիրը, այն ուղեծիրը, որտեղ էլ առաջին մեծության աստղի նման չողչողում է մինչև այժմ: Այդ փայլը գնալով ավելի է պայծառանալու, որովհետև պատմությունը դեռ չատ անելիք ունի գնահատելու նրա մեծ վաստակը, հարազատ ժողովրդին մատուցած նրա լուրջ ծառայությունները:

Հայտնի է, որ մշտապես մեծ ղեկավար մնալ հնարավոր չէ, բայց կարելի է մեծ մարդ մնալ ընդմիշտ: Անտոն Քոչինյանը կար և կլինի այդպիսին, քանի կա հայ ժողովուրդը և հայ մարդու հիշողությունը:

ՓԱՌՔ ԻՐԵՆ:

ԼՅՈՒԴՎԻԳ ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ

ՄԵՐ ՊԱՐՏՔՆ Է ԶՄՈՌԱՆԱԼ ՆՐԱ ԲԱՐԻ ՀԻՇԱՏԱԿԸ

Իմ ծանոթությունը հայ ժողովրդի նշանավոր զավակներից մեկի՝ քաղաքական, պետական գործիչ Անտոն Քոչինյանի հետ կայացել է հիսունյոթ տարի առաջ:

1943 թվին, երբ նա Կիրովի շրջանի շրջկոմի քարտուղարն էր, ես հանդիպեցի նրան փոքր եղբոր՝ Հրաչի աշխատասենյակում: Չեմ կարող մոռանալ, թե ինչպես երկուսիս գրկեց ու բարձրացրեց: Այդ օրվանից ճանաչել և բարեկամացել եմ Քոչինյանների ընտանիքի և անձամբ Անտոն Երվանդովիչի հետ, որի հետ բախտ եմ ունեցել շփվելու շատ երկար տարիներ: Նախ պետք է ասեմ, որ երախտապարտ եմ իմ նկատմամբ իր անձնական վերաբերմունքի համար. իմ կյանքում նրա դերը եղել է վճռական. նա եղել է իմ ուսուցիչը: Նա հայ ժողովրդի ոչ միայն արժանավոր զավակն էր, մեծ հայրենասեր, պետական-քաղաքական մեծ գործիչ, այլ այն մեծ մարդկանցից մեկն էր, որն իրոք ունեցել է շատ մեծ վաստակ մեր հանրապետության բարգավաճման, ժողովրդի կենսամակարդակի բարձրացման մեջ: Նա շատ պաշտոններ է զբաղեցրել, բայց այն քսաներկու տարիները, որոնցից տասնչորսը նա եղել է կառավարության նախագահը, և ութ տարիները, երբ նա ՀՀ ԿԿ առաջին քարտուղարն էր, մեր հանրապետության զարգացման, բարգավաճման տարիներն էին, և դրա մեջ վճռական դերը եղել է Անտոն Քոչինյանինը: Ես կուզեի խոսել նրա բնավորության գծերի մասին: Ավելի բարի և մարդասեր մարդու չեմ հանդիպել: Զարմանալի հիշողության տեր էր: Մի դեպք պատմեմ: Հայրս արհեստավոր էր, մասնակցել էր Տաթևի եկեղեցու վերանորոգմանը և խորհուրդ տվեց՝ մեկնեմ Գորիս, Տաթև: Քոչինյանն առաջարկեց.

«Սպասի՛ր, կգնանք միասին»: Մի օր եկա աշխատանքի, զանգահարեց, ասաց. «Զեռնովի հետ գալիս ենք, միացի՛ր մեզ, հետո էլ կգնաս և Տաթևը կտեսնես»:

Ճանապարհին որտեղ կանգնում էինք, բոլորին ճանաչում էր՝ պապին, տատին, տղային, թոռնիկին: Մեկ էլ կհարցներ.

- Տղաղ դպրոցը ավարտե՞ց, պապդ՝ Հայրապետը, կա՞:

Զարմացել էի, բոլորին որտեղի՞ց էր հիշում, ճանաչում: Հայաստանում չկար մի քար, մի թուփ, մի հող, մի ծառ, որ չճանաչեր: Ես ապշել էի նրա հիշողության և իմացության վրա: Քոչինյանն անսահման սիրում էր մեր երկիրը և իր տաղանդը, շնորհքը և աշխատասիրությունը դնում էր մեր երկրի բարգավաճման համար: Ես շատ բարձր եմ գնահատում նրա վաստակը մեր ժողովրդի, մեր հանրապետության առջև: Մի հասարակ օրինակ բերեմ: Քաղաքում կարագը վերջացել էր, այդ մասին զեկուցեցի իրեն: Անտոն Երվանդովիչը զանգահարեց ոչ թե Մոսկվա, այլ Ուկրաինայի առաջին քարտուղար Շելեստին և ասաց վիճակի մասին: Մեկ շաբաթ հետո այնքան կարագ ուղարկեցին Երևան, որ պահեստներում տեղ չլինելու պատճառով կայարանից կարագը ուղղակի բաչխում էին խանութներին: Ամեն օր հետևում էր, թե իրավիճակը ինչպիսին էր ոչ միայն Երևանում, այլև ամբողջ հանրապետությունում, հարցը լուծում էր անմիջապես:

Իսկ ինչպե՞ս լսել գիտեր մարդկանց, մտնել վիճակի մեջ, թեթևացնել հոգսերը, նրանց վիճակը բարելավել: Զարմանալի մարդ էր:

Մարդուն հատուկ բոլոր գնահատելի հատկանիշները Անտոն Քոչինյանի մոտ կային:

Մեծ ուրախություն էր ապրում ամեն մի նոր դպրոցի բացվելով:

Մի անգամ ներկա էի, թե ինչպես իրեն զեկուցեցին, որ չինարարական հրապարակից քար ու ցեմենտ են գողացել: Ասաց.

- Տարել են չենք կառուցելու, որն էլ կմնա երեխաներին, թոռներին: Մի՛ դարձրեք դա խնդիր կամ պրոբլեմ:

Նրա ամբողջ կյանքը եղել է իր ժողովրդին, իր երկրին ծա-

ռայելու անօրինակ սխրանք: Ես գիտեմ նաև նրա սերը դեպի ընտանիքը, հարազատները, թոռները:

1965 թ. նշվեց Մեծ եղեռնի 50-ամյակը, ու դա չտեսնված երևույթ էր հանրապետության համար: Մեծ էր Յակով Զարոբյանի ավանդը, որովհետև անհնարին էր նշել նման միջոցառում՝ առանց Մոսկվայի և Հայկոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղարի, սակայն հետո ցեղասպանության կոթողի կառուցումը, բացումը, որը տեղի ունեցավ 1967 թ. նոյեմբերի 29-ին, դարձավ Քոչինյանի անխոնջ և փայլուն դիվանագիտական աշխատանքի արդյունքը: Բացման խոսքը ասացի ես, իսկ նա հանդես եկավ ճառով և Կոմիտասի հուզիչ երաժշտության տակ վառեց հավերժական կրակը, որը վառվում է առ այսօր: Զարոբյանի ժամանակ ձևավորվեց նաև մետրոյի գաղափարը՝ ստորգետնյա տրամվայի անվան տակ, իսկ Անտոն Քոչինյանը վերափոխեց նախագծերը՝ դարձնելով մետրոպոլիտեն, և սկսվեց շինարարությունը: Ավելացնեմ, որ մետրոյի շինարարներին մենք հրավիրեցինք Թիֆլիսից՝ Դանդուրովի ղեկավարությամբ, և ես այն ժամանակ կարգադրեցի, որ ուսանողական հանրակացարանների մի զգալի մասը տրամադրեին մետրոյի բանվորներին, որոնք արագ և որակով սկսեցին աշխատանքները:

Նկարիչների տանը ցուցահանդես էր: Իմ ուշադրությունը գրավեց Բեջանյանի փոքրիկ քանդակը՝ «Ջուր ծախող տղան»: Ես խնդրեցի հեղինակին, որ մեծացնի քանդակի չափերը՝ հետագայում Կոմունարների այգու մոտ տեղադրելու համար, որտեղ ժամանակին շատ էին ջուր ծախող տղաները: Երբ այդ մասին ասացի Հասրաթյանին և Քոչինյանին, անմիջապես հավանություն տվեցին, և Բեջանյանի քանդակը տեղադրեցինք այգու մուտքի մոտ, որը հիմա էլ կանգնած է: Զարմանալի է, բայց փաստ. ամեն մի փոքրիկ բանի անմիջապես ընթացք էր տալիս:

Շատ կարևոր հարց էր Երևանի ջրամատակարարման ապահովումը: Մենք շատ բողոքներ էինք ստանում՝ կապված ջրի հետ: Հաճախակի ստիպված դիմում էի Քոչինյանին: Սկսվել էր

Գառնիի ջրամբարի շինարարությունը: Սակայն երկու կարևոր խնդիր կար. մինչև խմելու ջուրը Երևան բերելը գառնեցիները պահանջում էին իրենց ապահովել ոռոգման համար համապատասխան ջրով: Կոմունալ տնտեսության նախարար Բաղրամյանը գտնում էր, որ պոմպակայանի միջոցով կարելի էր գետի ջուրը բարձրացնել և օգտագործել ոռոգման համար, սակայն գյուղացիները համաձայն չէին, պահանջում էին, որ ինքնահոսով տրվեր ջուրը, իսկ որպեսզի ոռոգման ջուրը բերվեր, անհրաժեշտ էր հինգ կմ ջրագիծ անցկացնել, որին դեմ էր նախարարը, և այդ պատճառով հարցը չէր լուծվում: Ստիպված էի դիմել Քոչինյանին և խնդրել, որ միջամտի: Նա անմիջապես կարգադրեց Բաղրամյանին, որ կառուցեն ջրագիծը: Ջրագիծը շտապ կառուցվեց, ավարտվեց Գառնիի ջրամբարի շինարարությունը, որը ապահովեց և բարելավեց Երևանի ջրամատակարարումը: Կառուցվեց նաև Ապարանի ջրատարը:

Չի կարելի մոռանալ նրա արած գործերը մեր հայրենիքի համար Երևանի հետ կապող մայրուղիների կառուցումը, ծառապատումը Երևանում և հանրապետությունում, ո՞ր մեկն ասեմ: Եթե այսօր նա մոռացության տրվի, և հիշատակը ըստ արժանվույն չգնահատվի, մեր կողմից շատ անարդար քայլ կլինի:

1966 թ. փետրվարին ՀԿԿ առաջին քարտուղար ընտրվեց Քոչինյանը, Բաղալ Մուրադյանին նշանակեցին վարչապետ, ես դարձա քաղկոմի առաջին քարտուղար և աշխատեցի այդ պաշտոնում մինչև 1974 թվի նոյեմբեր ամիսը, այսինքն մինչև Քոչինյանի աշխատանքից ազատվելը:

Ես կուզենայի հիշեցնել մի կարևոր հանգամանք՝ կապված Ղարաբաղի հետ: Սկսեմ նրանից, որ Ստալինի պես անհասանելի և դաժան մարդու առջև Ղարաբաղը Հայաստանին միացնելու վերաբերյալ հարցն առաջին անգամ բարձրացրել էր ՀԿԿ առաջին քարտուղար Գրիգոր Հարությունյանը դեռևս 1945 թվականին:

Անտոն Քոչինյանը ոչ միայն բարձրացրեց Ղարաբաղի հարցը, այլև ստեղծեց հանձնաժողով, որի կազմի մեջ մտա ես, սակայն Մոսկվայում Ղարաբաղի հարցը ԽՄԿԿ Կենտկոմում ոչ

միայն չքննվեց, այլ մնաց անպատասխան: Կարծում եմ, որ այդ հարցը որոշակի դեր խաղաց Քոչինյանի հետագա ճակատագրում, ենթադրում եմ, որ Մոսկվան չներեց նրա հարցադրումը:

Մեծ իրադարձություն էր նաև Երևանի 2750-ամյակի տոնակատարությունը: Ես ծնվել, ապրել և մեծացել եմ Երևանում, բայց այնպիսի տոնակատարություն, ինչպիսին էր Էրեբունի-Երևանը, չեմ հիշում: Դա ոչ թե մեր կազմակերպիչների չնորհքն էր, այլ ժողովրդի, որը զարմանալի ցնծությամբ ընդունեց և կատարեց: Մենք կանգնած էինք Էրեբունի թանգարանի առջև, որը, ի դեպ, նույնպես կառուցվել էր էլի իր ժամանակ: Եկել էին շատ հյուրեր՝ մարշալներ Բաղրամյանը, Բաբաջանյանը, գրող Մարիետա Շահինյանը, տաղանդավոր ավիատոր Արտեմ Միկոյանը և այլոք:

Երբ բոլորս կանգնած էինք թանգարանի առջև, մեզ մոտեցավ մի մարդ՝ երկու երեխաների ձեռքը բռնած, և ասաց.

– Ընկե՛ր Քոչինյան, թույլ կտա՞ք՝ ընկեր Ղարիբջանյանին մի բան խնդրեմ,– և չրջվելով դեպի ինձ՝ ասաց,– ընկե՛ր Ղարիբջանյան, երեխեքս պարել են ուզում, իմ տունն այստեղ է, հենց առաջինն է, Դուք էլ ասեք, թող մի նվագ բերեն, համեցեք ինձ մոտ, սեղանը պատրաստ է, լավ կարմիր գինին դրված, խորոված էլ կրակի վրա է, եկեք այս մեծ տոնի առիթով մի-մի բաժակով իրար չնորհավորենք:

Բաղրամյանը ասաց.

– Անտոն Երվանդովիչ, Դուք ի՞նչ կարծիքի եք, իջնե՞նք:

– Իջնենք, – պատասխանեց Անտոն Երվանդովիչը:

Մենք իջանք դեպի տուն, երաժիշտները մոտ էին՝ կանչեցինք: Տեսնել էր պետք, թե այդ ինչ ուրախություն ծավալվեց. բոլորը պարի բռնվեցին, մենք էլ գինին խմեցինք ու բարձրացանք դեպի թանգարան, իսկ երեկոյան Անտոն Քոչինյանը մեծ ընդունելություն կազմակերպեց Գերագույն խորհրդի դահլիճում:

ՍՏԵՓԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

ՆՐԱ ՀԻՇԱՏԱԿԻ ՀԱՆԴԵՊ ԺԱՄԱՆԱԿՆ ԱՆՁՈՐ Է

Հայ ժողովուրդը որքան հին է, այնքան էլ քաղաքական-պետական խոչոր գործիչներով աղքատ: Դա իրողություն է, որը բացատրել կարելի է, բայց հերքել՝ ո՛չ:

Քաղաքական խոչոր գործիչների այդ ոչ ստվար աստղաբույլում է Անտոն Երվանդի Քոչինյանը: Մեր ժողովրդի 20-րդ դարի պատմությունն անհնար է պատկերացնել առանց Ա. Քոչինյանի, որովհետև նա այդ պատմության ամենահմուտ, ամենաերկարակյաց և ամենաերախտաչատ գործիչներից էր: Ավելի քան 30 տարի նա եղել է Խորհրդային Հայաստանի ղեկավարներից և առաջատար դեր է խաղացել մեր հայրենիքի նախադեպը չունեցող բարգավաճման գործում: Նա եղավ Հայաստանի Հանրապետության լավագույն վարչապետը և լավագույն ղեկավարներից մեկը:

Վիթխարի հմայքի և բարության տեր էր: Տղամարդ էր այս բառի ամենատարողունակ առումով: Մարդամոտ էր, ոչ թե հակասություններ ստեղծող, այլ հարթող: Անհնար էր հակակրանք ունենալ նրա անձի հանդեպ: Թե՛ ազգային գործիչ էր և թե՛ միջավայրի մարդ, մարդկանց համախմբող: Ա.Քոչինյանը հողի մարդ էր, հողի ու հայրենիքի բույրով օժտված անհատականություն: Նա Հայաստանը գիտեր այնպես, ինչպես ոչ ոք: Նա մշակ էր, բայց ոչ չարքաշ, նա տքնում էր, բայց ոչ հանուն տքնելու: Ամենակնճռոտ հարցերը ամենակարճ և հնարավորին չափ ոչ հիվանդագին լուծելու գործի մեծ վարպետ էր:

Հայ մարդ էր, նաև՝ լոռեցի՝ թումանյանական սրտաբացությամբ, և նրա նման հավաքների ոգի էր, չնայած երբեք չէր ձգտում տեղ գրավել «խոչոր պլաններում»:

Ինձ բախտ է վիճակվել մոտ մեկ քառորդ դար աշխատել Քոչինյանի հետ և նրա ղեկավարությամբ: Հեշտ ժամանակներ չէին: Նպատակի հստակությունը մարդկանց չէր ապահովագրում փոքր ու մեծ հակասություններից, թյուր ըմբռնումներից և կարծիքների տարընթացություններից: Ա.Քոչինյանի հետ ունեցել եմ ոչ միայն հակասություններ, այլ նաև առճակատումներ, բայց ոչ մի դեպքում՝ հակակրանք, չարություն, որովհետև նրա անձը բացառում էր քենը, չարությունը, թշնամությունը:

Ընթերցողին եմ ներկայացնում մի քանի դրվագներ՝ միտքս հաստատելու համար:

Մեծ եղեռնի 50-ամյակը Երևանում նշվեց, բառիս բուն իմաստով, արտակարգ: Այն նշվեց թե՛ վարչակարգի կողմից և թե՛ նրա դեմ: Եղան մարդաշատ երթեր, հանրահավաքներ, այլևայլ միջոցառումներ:

Ես ՀԼԿԵՄ Կենտկոմի առաջին քարտուղարն էի: Ապրիլի 28-ին ինձ կանչեցին Մոսկվա: Գնացի՝ քաջ գիտենալով, որ ինչ որ պատժի արժանանալու եմ: Բայց կատարվեց անսպասելին: ՀամԼԿԵՄ Կենտկոմի առաջին քարտուղար Ս. Պավլովը ինձ, թե.

– Գիտե՞ս, Երևանում կատարվածը դրսում օգտագործվելու է չար նպատակներով: Դրա առաջը պետք է առնել: Տեղյակ եմ, որ Երևանի երիտասարդությունը վաղուց որոշել է երիտասարդության պալատ կառուցել, բայց ֆինանսների բացակայության պատճառով չի կարողանում: Ճիշտ կլինի, որ այն կառուցվի ՀամԼԿԵՄ միջոցներով, թող այդ լինի կոմերիտմիության նվերը Հայաստանի երիտասարդությանը:

Երիտասարդական պալատի (տան) շինարարությանը ՀամԼԿԵՄ Կենտկոմը նախատեսում էր տրամադրել 10 մլն. ռուբլի: Նախագիծը կազմել էին երիտասարդ, տաղանդավոր ճարտարապետներ Ա. Թարխանյանը, Ս. Խաչիկյանը և Հ. Պողոսյանը: Նրանց նախագիծը պահանջում էր ծախսել 25 մլն ռուբլի: Ս. Պավլովն ասաց, որ Կոմերիտմիության Կենտկոմը այդքան գումար տրամադրել չի կարող: Պետք է օգնի նաև Հայաստանի կառավարությունը: Զանգահարեցի Քուչինյանին: Նա, թե.

– Ստոպա՛, վիճակներս ծանր է:

Երկար լռություն և ապա.

– Բայց նման կառույց ձեռքից բաց թողնել չի կարելի: Համաձայնվի՛ր, մի բան կանենք:

Ա. Քոչինյանը երկիրը կառուցապատելու, բարեկարգելու առանձնահատուկ նվիրում ուներ: Այն, ինչ այսօրվա Հայաստանում կա, դրանց ճնշող մեծամասնության ստեղծման նախաձեռնողն ու մասնակիցը եղել է նա: Խոսքը գնում է թե՛ Արփա-Սևան ջրատարի ու Երևանի մետրոպոլիտենի, թե՛ Երևան-Հրազդան-Իջևան երկաթուղու ու Տաթևի հիդրոհանգույցի և թե՛ հարյուրավոր արդյունաբերական ձեռնարկությունների կառուցման մասին:

Մեծ եղեռնի 50-ամյակի նշումն արյունահեղություն չառաջացրեց, բայց հրապարակից հեռացրեց այն լայնորեն նշելու գաղափարի հեղինակին ու կենտրոնական դեմքին՝ Ցակով Զարոբյանին:

Զգում էինք, որ նրա չուրջը մթնոլորտը գնալով թանձրանում էր: Զնայած Զարոբյանը Բրեժնևի հետ լավ հարաբերությունների մեջ էր և ծառայություն էր մատուցել Խրուշչովին հանելու ու նրա տեղը Բրեժնևին ընտրելու գործում, այնուամենայնիվ Մոսկվան Ցա. Զարոբյանին չներեց եղեռնի տարելիցը ըստ ամենայնի նշելը: Այդ իսկույն նկատեցին Հայաստանում նրա նկատմամբ ոչ բարյացակամ վերաբերմունք ունեցողները և սկսեցին եռանդուն գործունեություն ծավալել Զարոբյանի անկումը արագացնելու համար:

Կենտկոմի բյուրոյի հերթական նիստ էր: Քննարկվում է Սունդուկյանի անվան դրամատիկական թատրոնի աշխատանքներին վերաբերող հարց: Սովորական հարց և բյուրոյի սովորական նիստ: Արտակարգ ոչինչ չկար ու չէր սպասվում: Սակայն այդ օրը բյուրոյի սենյակում կարծես օդն էլ լարված էր, մի ինչոր ջղագրգիռ բան կար: Թատրոնի հարցի քննարկումն իմիջիայլոց բնույթ կրեց: Վարդան Աճեմյանն ամեն կերպ ջանում էր սրել դրությունը, հանրապետության ղեկավարությանը հասկացնել, որ թատրոնի հիմնահարցերը չատ ավելի բարդ են ու խոր արմատներ ունեն, քան բյուրոյում ներկայացվում էր: Բայց ապարդյուն:

Նիստի ավարտին Հովհ. Բաղդասարյանը բյուրոյի անդամներին խնդրեց մնալ:

Մնացինք: Հ. Բաղդասարյանն առաջինը խոսեց և, վկայակոչելով սպորտկոմիտեի նախագահի հետ առնչվող մի տգեղ միջադեպ, Զարոբյանին մեղադրեց անսկզբունքայնության, կոպտության, երկերեսանիության և բազմաթիվ այլ արատների մեջ: Ապա ելույթ ունեցան կենտկոմի մյուս քարտուղարները, Ա. Քոչինյանը: Բոլորը խոսքները մեկ արած Զարոբյանին մեղադրանքներ ներկայացրին: Եթե հիշողությունս չի դավաճանում, միայն Ե. Ասծատրյանը հակառակ դիրքերից հանդես եկավ:

Բյուրոյի կազմում ես ամենաերիտասարդն էի և ենթադրում եմ, որ իմ կարծիքը «դավադրության» մասնակիցների համար էական նշանակություն չուներ: Նրանք հավանաբար նաև չէին կարծում, թե ես ելույթ կունենամ:

Մինչդեռ Զարոբյանի վրա նախապես պլանավորված ու կազմակերպված այդ հարձակումը ինձ խորապես հուզեց: Ես լավ էի հասկանում, որ նրան ներկայացրած մեղադրանքների մեծ մասը չափազանցություն էր, որ դրանք պարզապես ծածկույթ էին ինչ-որ մտադրություններ քողարկելու համար: Խոսեցի 40 րոպե:

Ինձ թվում էր, որ չնայած իր արտաքին չեզոք կեցվածքին, հակազարոբյանական խմբավորման ղեկավարը Ա. Քոչինյանն էր: Դրա համար էլ ելույթս հիմնականում նրա դեմ էր: Մինչև օրս էլ չեմ կարողանում որոշակի գնահատական տալ արարքիս. ճի՞շտ էի, թե՞ սխալ:

* * *

1966 թվի ապրիլի 24-ն է: Օդում տագնապն ու մտավախությունն իրար խառնված՝ ճնշում էին բոլորիս: Տագնապում էինք. չէ՞ որ 1965-ի ապրիլի 24-ին օպերայի թատրոնում կատարվածը հիշողության մեջ դեռևս թարմ էր:

Առավոտյան ժամը 11-ին զանգահարում է Ա. Քոչինյանը, որն արդեն ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար էր:

– Ինչո՞վ ես զբաղված:

– Առանձնապես ոչնչով:

– Դու՛րս արի՝ գնանք մի փոքր շրջենք:

ՀԿԿ կենտկոմի շենքից զբոսնելով Բաղրամյան փողոցով իջանք վար: Հանդիպում էին մարդիկ, ողջունում, Քոչինյանի հետ ինչ որ մտքեր փոխանակում: Մտանք խանութներ, կենցաղսպասարկման տաղավարներ. հարց ու փորձ, դիտողություններ ու պահանջներ, առաջարկություններ ու ցանկություններ:

Նկատեցի, որ Քոչինյանին մոտեցողներից ոչ մեկը նրանից որևէ բան չխնդրեց, ինչ-որ բանից չդժգոհեց: Նրանք պարզապես բավարարված էին, որ փողոցում դեմ դիմաց տեսնում էին երկու ղեկավարների և հնարավորություն ունեին նրանց ողջունել փողոցում հանդիպած ծանոթի կամ բարեկամի նման:

Քոչինյանը արտակարգ դիտողականություն ու դիմացինի մտքերն ու զգացածը կարդալու, նկատելու կարողություն ուներ: Ճիշտ է, ոչ միշտ էր արձագանքում, բայց նրա աչքից ոչինչ չէր վրիպում:

Սկսեց խոսել հարցերի մասին, որոնց վերաբերյալ նրա մոտեցումների հետ ես համաձայն չէի:

Հայրական ջերմությամբ ու փիլիսոփայական անչահախնդրությամբ բացատրում էր դրանց լուծման գործում իր մոտեցումների չարժառիթները և մեղմ ժպիտով ավելացնում.

– Տղա՛ ջան, կապրես ու կհամոզվես, որ ճիշտն այդ էր:

Քայլելով հասանք կառավարական տուն:

Բազմիցս եմ տեսել կենտկոմի մի այլ առաջին քարտուղարի՝ Սուրեն Թովմասյանին, Աբովյան փողոցում զբոսնելիս: Այդ տարիներին ևս բարդ իրադարձություններ էին տեղի ունենում. Խրուշչովը ձգտում էր ստալինյան բռնատիրական համակարգը ժողովրդավարական դարձնել: Ներքաղաքական պայքարը ծայրաստիճան սրված էր: Ճիշտ է, ժողովուրդը փողոց դուրս չէր գալիս, բայց ավելի հանդուրժողական չէր, քան հանրահավաքային խելագար բռնկումներին:

Սակայն Հայաստանի ղեկավարները սեփական ժողովրդից չէին վախենում, նրա հետ չփվում էին անկաշկանդ ու առանց թիկնապահների օղակի...

* * *

Առաջին անգամ երիտասարդ գրողներին և արվեստի աշխատողներին պետք է շնորհվեր Հայաստանի կոմերիտմիության մրցանակ:

Երիտասարդ գրողներից ներկայացված էին Հ. Մաթևոսյանի և Վ.Պետրոսյանի թեկնածությունները: Համ ԼԿԵՄ Կենտկոմում ու մտավորականության որոշակի շրջաններում տիրապետող կարծիքն էր, որ մրցանակը պետք է շնորհվեր Հ. Մաթևոսյանին: Սակայն ՀԿԿ Կենտկոմում ստացվում է հայտնի գրողների ստորագրությամբ մի նամակ, որը պաշտպանում էր Վ. Պետրոսյանի թեկնածությունն ու մերժում Հ. Մաթևոսյանի գրականությունը: Ինձ կանչեցին Կենտկոմի առաջին քարտուղարի մոտ: Իսկույն կռահեցի, թե ինչ խոսակցություն է սպասվում, և մինչև երրորդ հարկ հասնելը ելքը գտա:

– Ա՛յ Ստյոպա,– դիմեց ինձ Քոչինյանը,– մեր հոգսերը քի՞չ են, որ դու նորերն ես ավելացնում: Գրողները գտնում են, որ մրցանակը պետք է շնորհվի Վ.Պետրոսյանին: Շնորհե՛ք ու հարցը փակե՛ք:

– Իսկ ավելի ճիշտ չի՞ լինի, եթե առաջին մրցանակը շնորհենք հայրենական պատերազմում զոհված Թաթուլ Հուրյանին:

– Այ դու ապրես: Գտար: Գլխացավանքից ազատեցիր,– ուրախացած ասաց Քոչինյանը:

* * *

60-ական թվականներին դեպքեր պատահեցին, երբ արտասահման մեկնած առանձին զբոսաշրջիկներ ետ չվերադարձան: Նրանց մեծ մասը լքեց հայրենիքը ոչ թե քաղաքական, այլ նյութական նկատառումներով: Արտասահմանից չվերադարձած երեք եիտասարդների կապակցությամբ ՀԼԿԵՄ Կենտկոմի հաշվետվությունը դարձավ ՀամԼԿԵՄ Կենտկոմի բյուրոյի քննարկման առարկա: Դժվարանում եմ հստակ ասել, թե ում նախաձեռնությամբ էր այս հարցը քննարկման առարկա դարձել՝ Մոսկվայի՞, թե՞ Երևանի:

Մոսկվայից եկավ մի մարդաշատ հանձնաժողով՝ պարզելու,

թե հանրապետության կոմերիտմիության աշխատանքներում եղած որ թերությունների հետևանքով են առանձին հայ երիտասարդներ մնում արտասահմանում: Այդ կապակցությամբ տեղին է հիշատակել հետևյալը:

1946-1949 թթ. սփյուռքահայերի զանգվածային հայրենադարձությունը մեր հարևան հանրապետություններում խանգավառություն չառաջացրեց: Ընդհակառակը, միջոցներ էին ձեռնարկվում այն վարկաբեկելու համար: Հայրենադարձներից մեկը փախել անցել էր սահմանը: Բերիան այդ «խայտառակ» փաստը ներկայացնում է քաղբյուրոյի՝ քննարկմանը: Հայաստանից նիստին մասնակցել էին Գ. Հարությունյանը և Ա. Քոչինյանը: Վերարտադրում եմ վերջինիս պատմածը: «Զեկուցողը Բերիան էր, որն առանց պիտակների մեջ խտրականություն դնելու՝ նետում էր Հայաստանի կոմկուսի ճակատին: Ստալինը ծխամորճը ձեռքին քայլում էր: Երբ զեկուցումն ավարտվեց, դիմեց Հարությունյանին. «Գրիշա՛, արտասահմանից որքա՞ն հայ եք ընդունել»: «Շուրջ 100 հազար, Իոսիֆ Վիսարիոնովիչ»,– պատասխանեց Հարությունյանը: «Քանի՞սն են ետ գնացել արտասահման»: «Մեկ հոգի»,– հետևեց պատասխանը: «Մեկ հոգի»,– կրկնեց Ստալինն ու շարունակեց հետ ու առաջ քայլել: – Եթե 100 հազար հոգու դժոխքից դրախտ տանեն, միևնույնն է կգտնվի մեկը, որը կցանկանա վերադառնալ դժոխք»:

* * *

Հեռագիր եմ ստանում մեկնելու Մոսկվա՝ ՀամԼԿԵՄ Կենտկոմի բյուրոյի նիստին մասնակցելու համար:

Կենտկոմի քատուղար Բ. Պաստուխովը ծանոթացնում է տեղեկանքին, որը քաղաքական սանձարձակ մեղադրանքների ժողովածու էր: Հայ երիտասարդությունը մեղադրվում էր ազգայնամոլության մեջ: Ընթերցումն ավարտելուց հետո գրում եմ դիմում, խնդրում՝ ինձ աշխատանքից ազատեն, պատճառաբանությամբ, որ այն, ինչ այդ տեղեկանքում գրված է, բացարձակ կեղծիք է:

Հաջորդ օրն առավոտյան ՀամԼԿԵՄ Կենտկոմի առաջին

քարտուղար Ս. Պավլովի աշխատասենյակում էի: Արտահայտեցի իմ կասկածներն ու նկատառումները:

Աշխատանքից ազատվելու դիմումս դրեցի սեղանին: Հենց այդ ժամանակ ներս մտավ քարտուղարուհին ու ասաց, որ Պողոսյանին Երևանը Հեռախոսի մոտ է հրավիրում: Կենտկոմի բաժնի վարիչ Ա. Ստեփանյանն էր:

- Ի՞նչ կարծիքի ես, եթե քեզ կուսակցական աշխատանքի տեղափոխենք:

Խոսքը Վեդու շրջանի առաջին քարտուղարի պաշտոնի մասին էր:

- Համաձայն եմ, - պատասխանեցի անվարան:

- Քոչինյանը հանձնարարել է քեզ ասել, որ եթե առաջարկվող աշխատանքը սրտովդ չէ, կարող ես մնալ կոմերիտմիությունում:

- Ո՛չ, համաձայն եմ ու խնդրում եմ Քոչինյանին իմ անունից շնորհակալություն հայտնե՛ք վստահության համար:

Լսափողը դնում եմ ու մտնում Պավլովի աշխատասենյակը.

- Սերգե՛յ Պավլովիչ, ինձ աշխատանք առաջարկեցին, ու համաձայնություն տվեցի:

- Այս զուգադիպությունը, ինձ թվում է, պատահական չէ, - մտորեց նա,- ինչ որ ձեռք գործում է:

- Այլևս նշանակություն չունի: Առաջարկվող աշխատանքը ինձ դուր է գալիս: Ես գնում եմ,- ասացի ես և, ողջագուրվելով Պավլովի հետ, գնացի օդանավակայան:

* * *

1969 թվին խաղողի բացառիկ բերք էր աճել: Գինու գործարանների տարողությունները լցված էին, այլևս տեղ չկար բերքը ընդունելու: Միակ հույսը Այգևանի գինու գործարանն էր: Այդ գործարանն էլ առաջին տարին էր խաղող ընդունում, և շատ հաճախ էր գործը խափանվում: Օր ու գիշեր Այգևանում էի: Մի անգամ՝ վաղ առավոտյան, արթնացրին՝ ասելով, թե Քոչինյանն է եկել: Դուրս եկա բակ: Ինձ տեսնելով՝ Քոչինյանը խոժոռվեց:

- Լսի՛ր, բերքի տիրոջ հերն էլ անիծած, այս ի՞նչ վիճակում ես:

Գունատ էի, չսափրված, հայացքս խամրած:

Քոչինյանի այցը վճռական նշանակություն ունեցավ: Խաղողի մի մասը տեղափոխվեց Հարևան շրջանների գործարաններ, մյուս մասը լցվեց դատարկ ջրավազանները: 45 հազար տոննա խաղող: Հնչտ է ասել:

* * *

Զանգահարում է Քոչինյանի օգնականն ու ասում, թե Կենտկոմի քարտուղարը արդեն դուրս է եկել ու գալիս է Արարատ:

- Երկա՞ր ժամանակով, - հարցնում եմ ես:

- Ո՛չ, երեկոյան մեկնելու է Մոսկվա:

Քոչինյանի հետ գնում ենք ցեմենտ-չիֆերի կոմբինատ, ապա անցնում Սուրենավան ու Արմաշ սովխոզները, որոնց հիմնադրմանը նա անմիջական մասնակցություն էր ունեցել:

Հուշերը նրան 25-30 տարի հետ տարան:

- Գուցե մի քիչ հա՞ց ուտենք,- անհամարձակ հարցնում եմ ես:

- Ինչու՞ չէ, սիրով:

Պատասխանն անսպասելի էր: Շփոթմունքից կարմրեցի, քանի որ «հաց ուտելու» առաջարկությունը նրա օգնականը մերժել էր:

Մեկին ուղարկում ենք ուտելիք բերելու, իսկ մենք շարժվում ենք դեպի Կիրովի խորհտնտեսության այգիները:

Հենց ծառերի տակ սեղան ենք բացում: Ամեն ինչ գնված էր խանութից, որոնք ամիսներով այնտեղ մնացել էին գնորդ չունենալու պատճառով:

Քոչինյանը նայեց դրանց ու ծիծաղելով ասաց.

- Սրանց ուտողի կյանքի անվտանգությունը երաշխավորված չէ, բայց ոչինչ, եկեք փորձենք:

Որոշ ժամանակ անց Ա. Քոչինյանը աշխատանքից ազատվեց: Նրան փոխարինեց Կ. Դեմիրճյանը: Արտաքուստ դրանում արտառոց ոչինչ չկար: Սերնդափոխություն էր: Բայց ոչ միայն: Ընդամենը 60 տարեկան, աշխատելու դեռ վիթխարի եռանդ ու մեծ կենսափորձ ունեցող հսկա անհատականությանը պարտա-

դրվեց «հարկադիր անգործություն»: Իսկ հետագայում փորձեր կատարվեցին նրան ոչ միայն ընդհանրապես մոռացության մատնելու, այլև վարկաբեկելու: Բայց ապարդյուն: Քոչինյանը այն մեծ մարդկանց թվում է, որոնց հանդեպ անզոր են թե՛ քաղաքական մակընթացությունները և թե՛ ինքը՝ ժամանակը:

ՎԼԱԴԻՄԻՐ ԴԱՐԲԻՆՅԱՆ

ԱՆԲԱՍԻՐ, ԱԶՆԻՎ ՈՒ ՇԻՏԱԿ ԱՅՐԸ

Ես 1962 թվականից տեղափոխվեցի կուսակցական աշխատանքի: Ինձ նշանակեցին Հոկտեմբերյանի շրջկոմի քարտուղար: Այդ տարիներին մոտիկից ծանոթացա շրջանի տնտեսության, մշակույթի և այլ հարցերի հետ: Անտոն Քոչինյանն այդ ժամանակ Նախարարների խորհրդի նախագահն էր:

Անտոն Երվանդովիչը գիտեր իր ժողովրդին, իր երկիրը, նա տեսնում էր Հայաստանը ամբողջությամբ, զգում էր նրան: Ինչպես ասում են, հողի ծնունդ էր և հողի իմաստություն կար մեջը: Զարմանալի հիշողություն ուներ, մարդկանց հիշելու պայծառ հիշողություն: Մի դեպք երբեք չեմ մոռանում: 1965 թվականին 44 պատգամավորներով մեկնում էինք Մոսկվա՝ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նիստին մասնակցելու համար: Մեզ հետ էր նաև Անտոն Քոչինյանը, որը խնդրեց՝ բոլորիս համար թուղթ ու գրիչ բերեն, հետո, դիմելով մեզ, ասաց, որ երեք ժամ 30 րոպեում (մինչև ինքնաթիռի՝ Մոսկվայում վայրէջք կատարելը) գրենք մեր իմացած գյուղերի անունները: Ինքն էլ սկսեց գրել և գրեց 780 գյուղի անուն (հին և նոր անվանումներով), իսկ մեզանից մեկը գրեց 100, մյուսները՝ 60, 30 և այլն: Զարմանալին ոչ միայն արտակարգ հիշողությունն էր, այլ նաև կապը, սերը հայկական գյուղի նկատմամբ, ընդ որում, գիտեր նախագահների, գյուղացիներից շատերի անունները: Դա անմոռանալի տպավորություն է թողել ինձ վրա, ու ես միշտ երազել եմ այդ մակարդակին հասնել:

Մի անգամ Քոչինյանը եկել էր Հոկտեմբերյան: Նա այցելեց Խորհրդային և Հայկական գյուղերը: Ընդհանրապես գյուղերի սահմանները դժվար էր զատել. լեռնային գյուղերի նման չէին:

Խորհրդային գյուղի մոտով անցնելիս Քոչինյանը ասաց.

-Էս վարժապետին ասա՛, որ այգիներին լավ չի նայում:

Նա նկատի ուներ կոլխոզի նախագահ Հարությունյանին, որը գյուղի դպրոցի նախկին տնօրենն էր: Ես էլ ասացի.

- Անտո՛ն Երվանդովիչ, այս այգիները Հայկավան գյուղինն են:

- Երկու տարի է՝ աշխատում ես, իսկ գյուղերի սահմանները չգիտես: Ստուգի՛ր և կտեսնես, որ ես ճիշտ եմ:

Երբ ես կանչեցի երկու նախագահներին, պարզեցի, որ ինքն էր ճիշտ: Մի անգամ Հրանտ Թամրազյանի տանը, որտեղ հաճախակի հանդիպում էի Դերենիկ Դեմիրճյանին, Հրաչյա Քոչարին, Գարեգին Սևունցին, որոնք հրաչալի զրուցակիցներ էին, խոսք գնաց Ավարայրի և Սարդարապատի ճակատամարտերի մասին, միանշանակ ասվեց, որ Սարդարապատը ավելի բախտորոշ էր հայ ժողովրդի համար, մանավանդ՝ 1915 թվականից հետո: Հետո, դիմելով ինձ, ասացին, որ մի՞թե չի լինելու մեկը, որ քարե գիրք գրի Սարդարապատի մասին: Ես մտածեցի՝ հերոսամարտը տեղի է ունեցել Հոկտեմբերյանում, որը այժմ հզոր շրջան է, ունի լավ տնտեսություններ...

Սարդարապատի հուշհամալիրը սկսեցինք կառուցել 1967 թվականի օգոստոսին, իսկ ավարտեցինք 1968-ին: Ինչ խանդավառությամբ էր ժողովուրդը մասնակցում կառուցմանը: Մի վարպետի ասացի, որ լավ աշխատանքի համար պարգևատրելու եմ: Իսկ նա ասաց.

- Վա՛յ, ընկե՛ր Դարբինյան, ինձ վիավորում ես, բա ես փողի՞ համար եմ աշխատում: Իմ հերը սասունցի էր, ես իմ նախնիների հանդեպ պարտքս եմ կատարում:

Բացումը տեղի ունեցավ մայիսի 25-ին:

Համալիրի կառուցման ժամանակ շատ նամակներ գրվեցին այն մասին, որ ավելի լավ կլիներ մի երկու բնակելի շենք կառուցեին: Այն ժամանակ 100 հազար ռուբլուն գերազանցող ծախսեր պահանջող կառույցի թույլտվությունը տալիս էր Մոսկվան, Պետպլանը, իսկ Սարդարապատի համալիրի շինարարությունը պահանջում էր 5 մլն. ռուբլի: Աշխատանքը գնում էր երեք

հերթով, շինարարությունը կազմակերպում էի կոլտնտեսությունների միջոցով: Երբ նամակների քանակը շատացավ, մտա Քոչինյանի մոտ ու ասացի.

- Վաղվանից էլ չեմ աշխատելու, հերիք է, ես գիշեր-ցերեկ տանջվում եմ, իսկ այստեղ նամակներ, բողոքներ և զրպարտանքներ են գալիս իմ հասցեին, որի՞ն դիմանամ:

Նա ասաց.

-Ա՛յ տղա, ես էլ կարծում էի, թե դու խիզախ մարդ ես, զրպարտողները այսօր կան, վաղը՝ չկան, իսկ հուշարձանը դարերով ապրելու է, դիմումդ պատռի՛ր, գցի՛ր աղբարկղը ու գնա՛, շարունակի՛ր, աշխատանքները. մենք երկուսս էլ պատասխանատու ենք այս գործի համար:

Բացմանը 300 հազար մարդ էր մասնակցում, հուշահամալիրի շուրջը արդեն բացվել էին վարդերը, ժողովուրդը վարդերը պոկում էր ու գցում Քոչինյանի վրա, կարծես վարդի անձրև էր տեղում: Ինչ խանդավառություն էր ապրում նա, հետո շրջվեց իմ կողմը և ասաց.

- Ա՛յ տղա, դու՞ ես կազմակերպել:

Չէ՛,- ամենայն աղնվությամբ ասացի ես, - ժողովուրդն է մեծարում Ձեզ:

Սկսվեց բացման արարողությունը: Քիչ այն կողմ Շիրազը միտինգ էր անցկացնում: Քոչինյանն ասաց, որ Շիրազին կանչեմ մեզ մոտ: Ես մոտեցա Շիրազին և ասացի, որ այդ շրջանի քարտուղարն եմ, ու Քոչինյանի հետ կանչում ենք՝ նախագահությունում կանգնելու:

- Էդ անկե՞ղծ կսես:

Պատասխանեցի.

- Շատ անկեղծ:

Քոչինյանը շատ ուրախացավ, երբ մոտեցանք, և ասաց.

- Էս հուշարձանը կառուցելով՝ մենք Մասիսն էլ պիտի մերը դարձնենք:

Սարդարապատի հուշահամալիրը կյանքի չէր կոչվի, եթե չլինեին Քոչինյանի թույլտվությունը, աջակցությունը և օգնությունը: Շինարարության ընթացքում ճարտարապետ Ռաֆայել

Իսրայելյանի հետ եղան որոշ անհամաձայնություններ:

Ներկայիս զանգակատան փոխարեն մտածված էր 40 մետրանոց սուր:

Քոչինյանը ասում էր.

– Բաֆֆի, եթե մեր ժողովուրդը 40 մետրանոց սուր ունենար, էս օրը չէր ընկնի: Մենք հավատքով ապրած ժողովուրդ ենք, մի ուրիշ բան մտածիր:

Այդ ուրիշ բանը դարձավ զանգակատունը, որն ավելի ճիշտ լուծում էր, հետո, ըստ նախագծի, թանգարանը լինելու էր 95x10 մ չափի, որը մենք մերժեցինք և կառուցվեց այսօրվա հսկա շենքը:

Հայաստանի գյուղատնտեսության ապրանքների 20 տոկոսը տալիս էր Հոկտեմբերյանը: Մի անգամ դիմեցի Անտոն Քոչինյանին՝ ասելով, որ խեղճ ժողովուրդը խմելու ջուր չունի, Այդը լճի ջուրը պիտանի չէ խմելու համար, լավ կլինի՝ ջուրը բերենք Ապարանից, բայց 60 կմ խողովակներ են պետք, որ չկա հանրապետությունում:

Քոչինյանը ասաց, որ ինձ կուղարկի Մոսկվա՝ Արամ Խաչատուրյանի մոտ, որը այն ժամանակվա Նախարարներ խորհրդի նախագահի մոտ ընկերն էր: Ես մեկնեցի՝ հետս վերցնելով Հոկտեմբերյանի բերք ու բարիքից, բայց այդ ժամանակ Ա. Խաչատուրյանը պառկած էր հիվանդանոցում: Ես ներկայացա, պատմեցի և ասացի խողովակների մասին: Նա իսկույն զանգահարեց Կոսիգինին, և խողովակները հատկացվեցին: Մենք ստացանք խողովակները և Ապարանի ջուրը բերեցինք Հոկտեմբերյան: Դա էլի 1968 թվականին էր, և ջրատարի բացումը վերածվեց տոնախմբության:

Ստեփան Զորյանի մահից հետո նրա ընտրատարածքում Գերագույն խորհրդի դեպուտատ ընտրվեց Պարույր Սևակը, որը Քոչինյանի հետ ուներ ջերմ հարաբերություններ: Քոչինյանը նույնպես անկեղծորեն սիրում էր Սևակին, բարձր գնահատում նրա պոեզիան և օգնեց «Անլռելի զանգակատուն» գրքի տպագրության հարցում, քանի որ պետանվտանգության մարմինները խոչընդոտում էին:

1964 թվականի մայիսի 4-ին ուժեղ կարկուտ եկավ Հոկտեմբերյանում: Խանջյանի անվան և «Նաիրի» սովխոզներին մեծ վնաս հասցվեց: Զանգահարեցի և ասացի.

– Անտոն Երվանդովիչ, մեր տունը քանդվեց:

Կարկուտի չերտը նստել էր 10-15 սմ: Եկավ, նայեց, իսկ մենք, մի քանի հոգով կանգնած, զրուցում էինք: Նա պոկվեց մեր խմբից, հեռացավ բավականին և վերադարձավ՝ աչքերը սրբելով: Հետո ասաց.

– Գիտեք՝ Գրիգոր Արտեմիչը ասում էր՝ կարկուտից սով չի առաջանա: Մի բան կմտածենք:

Եվ, իսկապես, տուժած տնտեսություններին պետական բյուջեից հատկացվեց 30 մլն. ռուբլու օգնություն, որը համարժեք է այսօրվա 30 մլն. դոլարին: Տնտեսությունները վերականգնվեցին:

Քոչինյանն ինձ նշանակեց ներքին գործերի նախարար: Իր հովանավորությամբ միլիցիայի աշխատողների համար կառուցվեցին բնակելի շենքեր, հանգստյան տներ:

Քոչինյանն անբասիր, ազնիվ, չիտակ մարդ էր, կադրային քաղաքականության մեջ գիտեր ըստ արժանվույն գնահատել մարդկանց: Տնտեսությունը գերազանց գիտեր, զարմանալի սիրում էր հողը: Պահանջում էր, որ ընդլայնենք այգիները: Մենք նրանից շատ բան էինք սովորում՝ մարդասիրություն, մարդկանց ընդառաջ գնալու կարողություն: Իմ ճանաչած հայ պետական գործիչներից ամենապայծառ, ամենահայրենասեր անձն էր:

ԷԴՈՒԻՐԱՐԴ ՄԻՐԶՈՅԱՆ

ՄԵԾ ՀԱՅԵՐՆԱՍԵՐԸ

Երկար տարիներ ես ճանաչել և չփվել եմ Անտոն Քոչինյանի հետ, որը շատ մեծ դեր է կատարել ոչ միայն իմ կյանքում և գործունեության մեջ, այլև հանրապետության մշակույթի բնագավառում, հսկայական դեր է կատարել կոմպոզիտորների միության համար:

Առաջին անգամ ես Քոչինյանին հանդիպել եմ 1950 թվականի մարտի 10-ին Երևանի օպերայի թատրոնում: Անաստաս Միկոյանը հանդիպում ուներ իր ընտրողների հետ: Հանդիպումից հետո կայացավ մեծ համերգ, որտեղ ելույթ ունեցան Առնո Բաբաջանյանը, Ալեքսանդր Հարությունյանը, որոնք չորս ձեռքով կատարեցին «Հայկական ռապսոդիան», պարի ուսումնարանի սաները կատարեցին իմ «Լեզգինկան», ելույթ ունեցան արվեստի ուրիշ գործիչներ: Երեկոն ավարտվեց խնջույքով, որը կազմակերպել էր ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Գրիգոր Հարությունյանը: Մասնակցում էին գիտության, արվեստի և գրականության այնպիսի փայլուն դեմքեր, ինչպիսիք էին Վիկտոր Համբարձումյանը, Վավիկ Վարդանյանը, Ա. Սաթյանը, Ե. Սահարունին, Տիգրան Շամիրխանյանը, որը Միկոյանի դասընկերն էր, ու էլի մի շարք նշանավոր մարդիկ: Այնտեղ էր նաև Անտոն Քոչինյանը, որը ինձ վրա մարդամոտ, սիրալիր մարդու տպավորություն թողեց:

1952 թվին նա դարձավ կառավարության նախագահ: Ես այն ժամանակ կոմպոզիտորների միության պատասխանատու քարտուղարն էի, Հայաստանի երաժշտական ֆոնդի նախագահը:

1952-1953 թթ. ես և Առնոն դիմեցինք ԽՍՀՄ կոմպոզիտոր-

ների միության նախագահ Խրենիկովին՝ կոմպոզիտորներին բնակարաններ տրամադրելու խնդրանքով: Նա կարգադրեց հատկացնել 100 հազար ռուբլի՝ շինարարության համար, սակայն Մոսկվայում սկսվեցին տարբեր տեսակի քաշքշուկներ: Մենք դիմեցինք Անտոն Քոչինյանին, նա իսկույն զանգահարեց Մոսկվա և տեղում վերացրեց բոլոր խոչընդոտները: Մենք ոչ միայն ստացանք բնակարաններ, այլ նաև կոմպոզիտորների միության հոյակապ շենքը, իսկ 1964 թվականին Պրագայից բերել տվեցի երգեհոն, որը տեղադրեցինք կոմպոզիտորների միության դահլիճում:

Իմ և Անտոն Երվանդովիչի միջև անմիջական կապ հաստատվեց Դիլիջանում կոմպոզիտորների տան կառուցման ժամանակ: Քանի որ նա անգիր գիտեր հանրապետությունը, իսկ մենք փնտրում էինք, թե որտեղ կարելի է կառուցել, նա որոշիչ դեր կատարեց տեղի ընտրության և հատկացման հարցում:

1961 թվականի ամռանը սկսեցինք շինարարությունը. Մոսկվայում Պետպլանի հետ շինարարության հետ կապված հարցեր եղան, ու անհրաժեշտ էր հաջորդ օրը բերել ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղարի և ԽՍՀՄ կոմպոզիտորների միության նախագահի ստորագրությունները: Մենք իմացանք, որ Քոչինյանը Մոսկվայում է: Ուշ երեկոյան ես և Առնո Բաբաջանյանը գնացինք նրա մոտ: Առնոյի զրիչով ստորագրեց փաստաթուղթը և քմծիծաղելով ասաց.

– Ինչ է, Առնոյին բերել ես որպես ծանր հրետանի:

Հետո գնացինք Խրենիկովի մոտ, նա էլ ստորագրեց, և առավոտյան շուտ մտանք պատասխանատու պաշտոնյայի մոտ: Նա վերցրեց փաստաթուղթը, ուշադիր նայեց և ասաց.

– Որտեղի՞ց այս փաստաթուղթը, այո՛, ստիպված եմ դրական որոշում կայացնել:

1962 թվականին կոմպոզիտորների տունը Դիլիջանում արդեն պատրաստ էր: Բացումը կայացավ 1963 թվականի ամռանը: Անգնահատելի է Անտոն Քոչինյանի ծառայությունը Հայաստանի համար: Նա և՛ հայրենասեր, և՛ գործունյա մարդ էր:

ԷԴՈՒԱՐԴ ԻՍԱԲԵԿՅԱՆ

ԻՐ ՀՈՂԻ ԻՍԿԱԿԱՆ ԾՆՈՒՆԴԸ

Ես չատ եմ սիրում գրողներին, չատերի հետ ընկերություն եմ անում: Նկարչությունից հետո ամենաթանկագին բանը ինձ համար խոսքն է, և Չարենցն ինձ համար Աստված է: Անցյալում մեր գրողները սովորություն ունեին տոն օրերին կառավարության անդամներին հյուր գնալու: Մի անգամ Սերո Խանզադյանը, Հրաչյա Հովհաննիսյանը, Հրանտ Թամրազյանը և Սուրեն Աղաբաբյանը պատրաստվում էին գնալու Քոչինյանի մոտ և ինձ տարան իրենց հետ: Անտոնը ընդունեց մի զարմանալի ջերմ ժպիտով, ժպիտ, որը չէր վերջանում: Ժպիտի մի քսան տեսակ ուներ, և այն չէր իջնում աչքերից. եթե բերանով էլ չէր ժպտում, աչքերով էր ժպտում: Այդպիսի մարդ էր նա: Մինչև սեղանը կպատրաստեին (մեզանից առաջ էլ մարդիկ էին եղել), Սերոն ասաց.

Եկեք տեսնենք՝ ով չատ գյուղերի անուններ կգրի:

Ես տեսա, որ Անտոն Քոչինյանը քթի տակ ծիծաղեց: Բերեցին թուղթ ու մատիտ և բաժանեցին բոլորիս, տվեցին 3-4 րոպե ժամանակ: Սկսեցինք գրել: Ես գրեցի մի 7-8 գյուղի անուն, նույնքան էլ՝ մյուսները, Սերոն մեզնից մի քիչ չատ, իսկ նա գրել էր բոլորիցս 3 անգամ ավելի, այսինքն՝ վայրկյանում՝ մի գյուղ: Հետո ավելացրեց, որ կարող էր գրել 10 անգամ ավելի: Հետագայում ես իմացա, որ Հայաստանում չկար գյուղ, ուր ինքը եղած չլիներ, հատկապես երբ Նախարարների խորհրդի նախագահ էր: 14 տարի լինել ՀԽՍՀ Նախարարների խորհրդի նախագահ, 8 տարի ՀԿԿ Կենտկոմի 1-ին քարտուղար... Մի ահավոր պատասխանատու և դժվար կյանք, ու երբ նրան հարցնում էին արած աշխատանքի մասին, նա մեծ հարգանքով պատմում էր Գրիգոր

Արտեմիչի մասին: Ասում էր, որ այդպիսի մարդ և ղեկավար ոչ մի հանրապետություն չի ունեցել:

- Աստված էր ուղարկել նրան: Ինչ տեսնում ես Երևանում, շրջակայքում՝ չամպայնի և գարեջրի գործարանները, կոնյակի գործարանը, կառավարական շենքերը և այլն, ինքն էր կառուցել կամ սկսել, մենք ընդամենը շարունակել ենք:

Իմ առաջին հանդիպումից հետո անցավ որոշ ժամանակ, ինձ նշանակեցին պատկերասրահի տնօրեն: Հիշում եմ՝ մի անգամ գնացի մոտը: Շատ խնդիրներ ունեի, մի կես ժամ խոսեցի, ինքն էլ ժպիտով լսում էր: Ես էլ վրդովվեցի՝ ասելով.

-Անտո՛ն Երվանդովիչ, բան չեք ասում՝ ճի՞շտ եմ, թե՞ սխալ, տեղի՞ն է ասածս, թե՞ ոչ:

Նա էլ պատասխանեց.

- Ա՛յ տղա, հերթ տվեցիր, որ ես խոսեմ, հիմա կոնկրետ ասա՛ ի՞նչ ես ուզում:

Ես ասացի, որ պատկերասրահի նկարները ձմռանը կծկվում են և փչանում ցրտից, իսկ ամռանը չոգից լայնանում են: Կտավների համար դա մահացու բան է, բոլորը սկսում են ճաքել:

Հարցրեց.

- Ի՞նչ կարող ենք անել:

Ես ասացի, որ մենք ի վիճակի չենք չենքը տաքացնելու, մշակույթի նախարարությունն էլ չի կարող աջակցել, մնում էր մեր չենքի ջեռուցումը միացնել Նախարարների խորհրդի չենքին: Նա իսկույն կողմնորոշվեց, թե ինչպես կարելի է միացնել, և անմիջապես զանգահարեց Նախարարների խորհուրդ: Ես էլ ասացի, որ եթե այս հարցը լուծվի, մեզ համար հրաշք կլինի:

Նա պատասխանեց.

- Դու գնա՛, այդ հարցը կլուծվի:

Պատկերասրահը ջեռուցվեց մինչև 1992 թվականը:

Մի անգամ Հրազդանում էի, այնտեղ մի գետ կա՝ Մարմարիկ անունով: Այդ գետը գարնան ամիսներին այնքան ավազ է բերում լցնում, որ մնացած բոլոր ամիսներին զբաղվում են ավազը հանելով: Ես էլ ընդունելություն խնդրեցի ու գնացի մոտը:

- Ի՞նչ կա, Թանգարանի հե՞տ է կապված:

Ասացի, որ ուրիշ հարցով եմ եկել, տեսել եմ մի այսպիսի բան՝ կապված Մարմարիկ գետի հետ:

Ասաց.

– Սիրելի՛ս, ես այդ մասին գիտեմ և մտածել եմ՝ ինչպես ավազից մաքրել. հողային աշխատանքները ահռելի են, միջոցներ չուննենք, բայց մի բան կմտածեմ, այդպես չենք թողնի:

Սակայն չարաթը ուրբաթից շուտ եկավ: Նրան ազատեցին աշխատանքից, և էլ ոչ ոք չզբաղվեց այդ հարցով: Աշխատանքից ազատվելուց հետո նա ընկավ շատ ծանր վիճակի մեջ: Ինքն այլ աշխատանքի չէր կարող տեղավորվել, իրեն պետք է առաջարկեին, իսկ իրեն ոչ միայն չառաջարկեցին, այլ միտումնավոր մոռացության տվեցին, և նա դա տարավ զուսպ ու արիաբար: Այդ ժամանակ նա 61 տարեկան էր, առողջ և աշխատունակ: Ի միջի այլոց, ես և նա նույն թվականի ծնվածներ էինք, սակայն նա 4–5 ամսով մեծ էր ինձնից, և միշտ ասում էր.

– Ես քո մեծ ախպերն եմ, ինչ ասեմ՝ պիտի լսես:

Երբ աշխատանքից ազատելուց հետո Անտոն Երվանդովիչին հրավիրում էին հանդիսավոր արարողությունների կամ ինչ-որ միջոցառումների, զանգում էր ու ասում, որ միասին գնանք: Ես էլ ուրախությամբ գնում էի, մի քիչ շուտ մտնում, տեղ էի զբաղեցնում, որ ինքը մտներ և անմիջապես նստեր, ու երբ բեմից տեսնում էին, դա ոմանց դուր չէր գալիս, ուզում էին, որ նա կանգներ ու իր համար տեղ փնտրեր... Ես ոչ միայն ուրախությամբ էի ընկերանում նրան, այլ նրան տեսնելը հրաչքի պես մի բան էր ինձ համար: Նա ուրիշ մարդ էր:

Մի օր չհամբերեցի, հարցրի.

– Ի՞նչ է, ուզում ես նորից քարտուղար կամ Նախարարների խորհրդի նախագահ նշանակեն, մի գո՛րծ արա, էսպես անգործ ո՞նց կլինի:

Ինքն էլ փղի առողջություն ուներ, ու ձեռքերն այնքան ուժեղ էին, որ բարևելիս ասում էի.

– Կամա՛ց սեղմիր:

– Ա՛խր, Անտո՛ն Երվանդովիչ, այսքան գործ կա, մանավանդ Հայաստանը ափիդ պես գիտես՝ անտառտնտեսություն, գյուղատնտեսություն, արդյունարերություն և այլն:

Նա ինձ պատասխանեց.

– Իրենք գիտեն, որ ես անգործ եմ, չէ՞, որ աշխատանք չեն առաջարկում, ես ի՞նչ անեմ, գնամ խնդրե՞մ...:

Միակ լավ բանը այն էր, որ իրեն հատկացրել էին ծառայողական մեքենա (սահմանափակ ժամանակով), դա էլ՝ Ալեքսան Կիրակոսյանի շնորհիվ: Վարորդը նրան լավ գիտեր և Անտոն Երվանդովիչին տանում էր այնտեղ, որտեղ ուզում էր, իսկ նրան հրավիրում էին մարզերից, գյուղերից, և մենք միասին հյուրընկալվում էինք, ընդունելություններ էին կազմակերպում իր պատվին, ու հաճախակի լսում էի, թե ինչպիսի ջերմությամբ և հարգանքով գյուղացիները ասում էին. «Մեր թագավորը եկել է»: Գալիս, հավաքվում էին մեր շուրջը: Մի անգամ մոտեցանք մի գյուղի կոլտնտեսության գրասենյակին, տեսանք մի փոքր հոտի չափ ոչխարներ: Ասում եմ.

– Անտո՛ն Երվանդովիչ, էս նախագահի մոտ էսքան ոչխար ինչի՞ են հավաքել:

– Վա՛յ, ես հասկացա,– ասաց նա,– հետ դարձիր,– դիմեց վարորդին:

– Ախր ո՞նց հետ դառնամ, մեզ սպասում են, Անտո՛ն Երվանդովիչ:

– Ուրեմն գնա՛, նրանց ասա՛, եթե մեկ հատից ավելի թողնեն, ես չեմ իջնի մեքենայից, և կգաս ու ինձ կտանես տուն:

Նախագահը շտապ մոտեցավ և ասաց, որ գյուղացիներն են բերել, ուզում են մի լավ բան արած լինեն...

Հանդիպումների ժամանակ կթվորուհուց սկսած մինչև պառավ կին, ծեր կոլտնտեսականից մինչև երիտասարդը անսահման հարգանքով էին լցված Քոչինյանի նկատմամբ. սեր էի զգում նրանց աչքերի մեջ, բոլորի աչքերի մեջ սեր էի տեսնում:

Երբ տեսա, որ իրեն մտադիր էլ չեն որևէ աշխատանք տալու, մի օր խոսակցության մեջ ասացի, որ մի հոդակտոր վերցնի:

– Ես դրա մասին մտածել եմ, արդեն ջրվեժում հոդակտոր են խոստացել:

Հողակտորը ստանալուց հետո երկու տարում տունը կառուցեց՝ համատեղ մչակելով հողամասը: Նա վաճառեց մեքենան, բայց կային նաև մարդիկ, որոնք օգնեցին չինարարությունը ավարտելուն: Առավոտից մինչև իրիկուն բահը ձեռքին էր: Էնքան ծառ տնկեց, խաղողի մատեր, հատկապես Սոչիից բերված «Իզաբելլա» տեսակի խաղողը: Ասում էր.

– Ա՛յ, սրանից երբ գինին լինի, խմես, ուշքդ կգնա:

Ասում են՝ ընկույզ տնկողը պտուղը չի ուտում. դա հիմարություն է: Հինգ տարի հետո բարեկամները արդեն գալիս, հավաքում, տանում էին: Միրգ էր ունենում, որ կարծես նկարած էին, իսկ ինչ ծաղիկներ էր տնկել տան շուրջը, ես այդ տեսակի ծաղիկներ չեմ տեսել. մի արտակարգ, մի չտեսնված բան էր: Իր պարապությունն էլ դրանով վերջացավ: Մի հսկա շուն ուներ՝ անունը Բերդ՝ առյուծի նման: Ասում էր.

– Շանը մոտ մի՛ գնա, դա շուն չէ, դև է:

Կամաց-կամաց արդեն գալիս էին մոտը, չէր լինում շաբաթ, որ սեղան չբացեր, ամեն մեկը մի բան էր բերում, ու դառնում էր քեֆ: Բոլորս էլ շատ լավ էինք զգում նրա կողքին, նա էլ, իսկապես, մեծ ախպոր պես էր վարվում ինձ հետ: Մի հատ մաուզեր ուներ, ստացել էր անվանական ատրճանակ: Ես էլ իգդիրեցի, որ զենքը տեսա, քիչ մնաց նվաղեի, այնքան սիրուն էր, արծաթից պոչով, բռնակով, մի խելագարվելու բան: Ասացի.

– Տու՛ր ինձ, խնդրում եմ:

Ասաց.

– Չեմ տա, ես էլ եմ զենք սիրում, տե՛ս՝ քանի հատ ունեմ, բոլորն էլ նվերներ են և կապված հայտնի մարդկանց ու հիշողությունների հետ:

Անտոն Քոչինյանը մեր ազգի պատմության մեջ մնաց որպես իմաստուն, հայրենասեր, չինարար ու բարի Մեծ Մարդ:

ՄՈՒՐԱԴ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԵՌԱՏԵՍ ԵՎ ԻՄԱՍՏՈՒՆ ՄԱՐԴԸ

Անտոն Քոչինյանի հետ իմ հանդիպումը առաջին անգամ տեղի ունեցավ 1960 թվականին, երբ նա եկավ Լենինական՝ մասնակցելու Գ.Ղարիբջանյանի առաջին քարտուղար ընտրելու արարողությունը: Այդ ժամանակ ես աշխատում էի միկրոշարժիչների գործարանում՝ որպես տնօրեն, որտեղ էլ կայացավ մեր հաջորդ հանդիպումը: Անտոն Քոչինյանը, Սուրեն Մովսիսյանը, Ստեփան Թումանյանը եկան գործարան: Գործարանում մի արտադրամաս կար, որը որոշված էր եղել կառուցել վաղուց, սակայն չէր իրագործվել, իսկ մենք կառուցեցինք, ու երբ նրանք տեսան, Մովսիսյանը հարցրեց.

– Քանի տարի գումարը տրված էր, բայց չէր կառուցվում, այդ ինչպե՞ս կառուցեցիր:

– Ճիշտ է, գումարը կար, բայց իրացման գումարը տրված չէր, ես էլ օգտագործեցի կապիտալ վերանորոգման փողերը,- պատասխանեցի ես:

– Բա չե՞ս վախենում, որ դրա համար քեզ կարող են պատժել:

– Ինչքան ուզում եք, պատժե՛ք, արդեն արել եմ:

Այդ ժամանակ Անտոն Քոչինյանը ասաց.

– Լսի՛ր, Սուրե՛ն, տղան լավ գործ է արել, չնորհակալություն հայտնե՛ք և ոչ թե պատժեք:

Որոշ ժամանակ անց ինձ նշանակեցին քաղաքային կոմիտեի արտադրության և տրանսպորտի բաժնի վարիչ: Երկու տարի անց ինձ Երևանից զանգահարեց Գ. Ղարիբջանյանը, ասաց, որ գնամ և հանդիպեմ Ալբերտ Ստեփանյանի, Գեղամ Հարությունյանի հետ: Երևանում իմացա, որ ուզում են ինձ ընտրել Լենինականի քաղկոմի 2-րդ քարտուղար: Ինձ տարան Անտոն

Քոչինյանի մոտ: Նա, ընդհանրապես, մարդկանց ջերմ էր ընդունում, ինձ նույնպես ընդունեց, ինչպես հայրը որդուն և ասաց.

– Տղա՛ ջան, դու շատ լավ մարդկանց զավակ ես (նա չէր ճանաչում իմ ծնողներին, բայց արդեն գիտեր, որ հայրս սասունցի էր, մայրս՝ մշեցի), քեզ հավատում եմ, գնա՛, աշխատի՛ր:

– Քանի որ վստահում եք, ինչ ինձանից կախված է, կանեմ,– պատասխանեցի ես:

– Մեկ տարի էլ չէի աշխատել, երբ նա եկավ Լենինական, հրավիրեց բյուրոյի նիստ և ասաց.

– Եկել եմ ձեզ ասելու, որ ընկեր Ղարիբջանյանը տեղափոխվում է Երևան, և այսօր պետք է ընտրեք նոր քարտուղար: Ու՞մ թեկնածությունն եք առաջարկում:

Քար լռություն էր, ամեն մեկը մտքում ուզում էր՝ ինքը լիներ: Անտոն Երվանդովիչը ասաց.

– Դե՛, եթե դուք թեկնածու չունեք, ես ունեմ: Առաջարկում եմ ընտրել ընկեր Մուրադ Մուրադյանին:

Նորից քար լռություն: Ես խնդրեցի, որ իմ թեկնածությունը հանեն, բայց Անտոն Երվանդովիչը ասաց, որ որոշումը կայացրել է բյուրոն, և ինքն էլ գտնում է, որ ես ամենահարմար թեկնածուն եմ:

Համատեղ աշխատանքի ընթացքում ես միշտ զգացել եմ նրա հովանավորությունը իմ նկատմամբ: Այդ տարիներին շատ ու շատ գործեր կատարվեցին: Ավարտվեց հղկող հաստոցների գործարանի շինարարությունը, և այն շահագործման հանձնվեց: Ստեղծվեց նոր էլեկտրատեխնիկական գործարան: Շահագործման հանձնվեց 150-200 հազար քմ բնակելի տարածք, տարեկան երկուական դպրոց և մանկապարտեզ: Բացվեց պոլիտեխնիկական ինստիտուտի Լենինականի մասնաճյուղը, քաղաքը սկսեց մեծ թափով բարեկարգվել: Անտոն Քոչինյանի անմիջական օգնությամբ շինարարության և բարեկարգման հարցերում ֆինանսական խնդիրներ չէին առաջանում: Հիշում եմ՝ Մոսկվայից եկան մեզ մոտ՝ Լենինականում քիմիական մեծ ձեռնարկություն դնելու լուրջ առաջարկությամբ: Ճիշտն ասած, ես ոգևորությամբ ընդունեցի, առանց խորը մտածելու: Երբ

զեկուցեցի Անտոն Երվանդովիչին, ասաց.

– Տղա՛ ջան, այդպիսի բան չանես:

Իսկ ես չարունակում էի, թե մեծ ֆինանսներ են դնում, աշխատատեղեր կբացվեն:

Նա ասաց.

– Միակ քաղաքը, որ մաքուր է օդի տեսակետից, Լենինականն է, քիմիական արդյունաբերությունը դնում ես, որ օդը կեղտոտե՞ս, ժողովրդին թունավորե՞ս:

Շատ հեռատես և իմաստուն մարդ էր:

Նա երբեք ճնշում չէր գործադրում իր ենթակաների, շրջապատի վրա: Դրա վառ օրինակն էր «Մայր Հայաստան» արձանի տեղադրումը: Հայտարարվեց մրցույթ, Անտոն Քոչինյանին շատ դուր եկավ Արա Սարգսյանի ներկայացրած գործը, բայց այն մրցույթով չանցավ, և տեղադրվեց ներկա արձանը, իսկ Արա Սարգսյանի «Մայր Հայաստան»-ը իմ խնդրանքով տեղադրեցինք Լենինականում՝ որպես անհատ զինվորի հիշատակին նվիրված հուշարձան:

Անտոն Քոչինյանը օգնեց մեզ կառուցելու երկաթգծի կայարանի նոր շենքը: Լենինականը մի կիրճ ուներ, որը քաղաքը բաժանում էր 2 մասի: Որպեսզի քաղաքի մի մասից մյուս մասը մտնեին, պետք է իջնեին կիրճը, հրապարակով պտտվեին ու նորից բարձրանային, իսկ եթե կամուրջ լիներ, ապա քաղաքի երկու մասերը անմիջապես կապված կլինեին: Ես կամուրջի համար մի քանի անգամ դիմեցի Բադալ Մուրադյանին, սակայն մերժեց՝ ասելով, որ փող չկա: Մի անգամ Գերագույն խորհրդի նստաշրջանից հետո վերադառնում էինք Մոսկվայից, Անտոն Քոչինյանը ինքնաթիռի մեջ սկսեց ննջել, ես և Բադալ Հմայակովիչը հերթական անգամ սկսեցինք վիճաբանել կամուրջի հարցով: Հանկարծ աչքերը բացեց և ասաց.

– Բադա՛լ, ինչու՞ ես նեղացնում գյումրեցուն:

Մուրադյանը պատասխանեց.

– Անտո՛ն Երվանդովիչ, կյանքս կերավ, կամուրջ է ուզում կառուցել, հիմա կամուրջ սարքելու ժամանա՞կ է:

– Բադալ, եթե Մուրադը ասում է, ուրեմն իրավացի է, եթե

չանես, գալու է ինձ մոտ, որ ես ասեմ՝ դու անես:

Հոյակապ կամուրջ կառուցվեց, որը այնքան անհրաժեշտ էր Գյումրիի համար:

Ամեն անգամ, երբ Քոչինյանը գալիս էր Շիրակի մարզ, դիմավորում էի Մարալիկում, ու մտնում էինք տարբեր գյուղեր, նայում էր, մասնագիտական շատ խորհուրդներ էր տալիս, հատկապես նոր հողերի յուրացման, նոր տեսակների ներդրման, բերքահավաքի ժամանակ բերքի պահպանման հարցերում: Նա ճանաչում էր հանրապետության ամեն մի քարը, հողը, գյուղերը, գյուղացիներին գիտեր անունով ու գերդաստանով: Մենք ճանապարհը շարունակում էինք Ամասիա, Ղուկասյան, այնտեղից Սպիտակ, հետո Կիրովական: Եթե ուզում էր, որ ես հետը ճանապարհը շարունակեի, մնում էի, եթե ոչ, ապա Կիրովականի քաղկոմի 1-ին քարտուղար Թարջումանյանին ասում էի.

– Ակտով ընկեր Քոչինյանին հանձնում եմ Ձեզ,– բայց հիմնականում մենք շարունակում էինք մեր ճանապարհը դեպի Իջևան, Դիլիջան, Սևան ու վերադառնում Երևան:

Ճանապարհին նայում էր գյուղացիների տներին ու այնպես էր ուրախանում, կարծես իր սեփականությունը լիներ: Ոգևորված ասում էր.

– Տե՛ս է, հայը գետնի տակից դուրս է եկել ու հիմա ապրում է 2-3 հարկանի տներում, իսկ երբեմն ասում են, որ գյուղացիները չինարարական հրապարակներից ցեմենտ ու քար են գողանում, նման դեպքերում միշտ ասել եմ, ու հիմա էլ քեզ եմ ասում. տուն են կառուցում, այլ ոչ թե քանդում:

Արփա-Սևան թունելի կառուցման ժամանակ մոտիկ բնակավայրերում շատ տներ կառուցվեցին, և նա հատուկ կարգադրություն էր արել միլիցիային, որ ստուգումներ չանեն քարի ու ցեմենտի համար:

Կառուցվել էին այնպիսի մայրուղիներ, ինչպիսիք էին Երևան-Արտաշատ, Երևան-Սևան, Երևան-Հոկտեմբերյան: Երևան-Լենինական ճանապարհը անցնում էր Մարալիկով, որն արդեն իր չափանիշներով չէր բավարարում ժամանակի պահանջներին: Ես առաջարկությամբ մտա կառավարություն՝

նոր մայրուղու կառուցման համար, որի կարիքը շատ մեծ էր: Անտոն Քոչինյանը տվեց իր հավանությունը և ասաց, որ առաջարկությունը ներկայացնեմ գրավոր:

Նախագծվեց առաջին կարգի ճանապարհ՝ Հոկտեմբերյանով դեպի Լենինական: Մեծ թափով սկսվեց շինարարությունը, կառուցվեց համարյա 20 կմ երկկողմանի ճանապարհ: Բաղալ Մուրադյանին աշխատանքից ազատելուց հետո եկավ Գրիգոր Արզումանյանը և հրամայեց դադարացնել աշխատանքները: Երբ Անտոն Քոչինյանին ասացի, նա զուսպ դժկամությամբ ասաց, որ ես զբաղվեմ այդ հարցով, ու այդպես էլ աշխատանքը մնաց կիսատ: Ես շատ ափսոսում եմ, որ շինարարությունը չավարտվեց, քանի որ բավականին կրճատվում էր դեպի Լենինական տանող ճանապարհը, ավելին, այն հանրապետության համար ուներ ստրատեգիական նշանակություն:

Ինչ հրճվանք ապրեց Քոչինյանը, երբ բացվեց Պուշկինյան լեռնանցքի թունելը, ինչքան ժողովուրդ էր հավաքվել ԽՍՀՄ տարբեր հանրապետություններից և արտասահմանից:

Վերջերս հեռուստացույցով իմ ելույթի մեջ չեչտեցի, որ Երևանի մետրոպոլիտենը կառուցվել է Անտոն Երվանդովիչի շնորհիվ, ընդ որում, այն ժամանակ Մոսկվան թույլ էր տվել միայն ստորգետնյա արագաչարժ տրամվայի կառուցումը, իսկ նա հրաման տվեց, որ նախագծերը անեն մետրոպոլիտենի չափերով, որովհետև գիտեր, որ հետագայում պետք է դառնա մետրոպոլիտեն, և այդպես էլ եղավ: Փաստորեն թե՛ թույլտվությունը, թե՛ նախագծերն ու առաջին աշխատանքները, թունելախորշերի կառուցումը եղան Անտոն Քոչինյանի ժամանակ:

Քոչինյանը մեր հիշողության մեջ մնաց որպես ազգային քաղաքական գործիչ, որի ժամանակ Հայաստանը ծաղկեց և բարգավաճեց, կառուցվեց և հզորացավ:

ԼԵՎՈՆ ՀԱԽՎԵՐԴՅԱՆ

ՏԱՐԻՆԵՐԻ ՀԵՌՎԻՑ ԱՅՆ, ԻՆՉ ԱՆՀՆԱՐ Է ՄՈՌԱՆԱԼ

1969-ի ամառն էր, օգոստոս ամիսը, անտանելի չոգ: Քրտնամլսած տուն ընկա: Կինս՝ Սոնան, թե. «Քոչինյանը քեզ չտապ կանչում է»: Զանգահարեցի: Քոչինյանը թե. «Շուտ արի՛ Կենտկոմ, իմ կաբինետը»: Շորերս փոխեցի և չտապեցի:

Հևիհև ներս մտա: Ընթանում էր Հ. Թումանյանի ծննդյան 100-ամյակն անցկացնող հոբելյանական հանձնաժողովի նիստը, որը վարում էր նախագահ Անտոն Քոչինյանը, նրա աջ և ձախ կողմերում՝ Հայաստանի նախարարների խորհրդի նախագահը, ինչպես նաև հանձնաժողովի նախագահի տեղակալ Լարիսա Ստեփանյանը և Կենտկոմի գաղափարական գծով քարտուղար, հանձնաժողովի անդամ Ռոբերտ Խաչատրյանը:

Բոլորն էլ խստահայաց և խոժոռադեմ:

- Արի՛, արի՛,- ասաց Քոչինյանը,- տեսնենք, թե ինչքան ես նստեցրել Թումանյանի հոբելյանը:

Ես հոբելյանական հանձնաժողովի քարտուղարն էի 1968-ի մարտից:

- Ինչքա՞ն:

- Յոթ միլիոն:

- Այդքան քի՞չ, - ասացի ես:

- Он еще и издивается,- *սովորության համեմատ ուսը թափ տալով բարկացավ Խաչատրյանը:*

- Я вовсе не издиваюсь,- *ասացի ես և անցա հայերենի: - Այսքան տարի Թումանյան ենք հրատարակում և բեմադրում: Այդ գործերին հասնող հոնորարի քանի՞ տոկոս ենք վերադարձնում իրեն: Զնչին մասը:*

Նկատեցի, որ իմ պատասխանը դուր եկավ Քոչինյանին:

Առանց այդ էլ զգում էի, որ նա այնքան էլ բարկացած չէ ինձ վրա, ինչպես ցույց է տալիս ըստ ստեղծված իրավիճակի:

Այստեղ մի նախապատմություն պետք է անեմ, որ հարկավոր է ամբողջ իրադրությունը հասկանալու համար: Երբ 1968-ի սկզբին Ա.Քոչինյանի նախագահությամբ կազմվեց Թումանյանի ծննդյան 100-ամյակն անցկացնող հոբելյանական հանձնաժողով, ես նշանակվեցի հանձնաժողովի քարտուղար (թերևս այն պատճառով, որ ես լավ ընդունելություն գտած «Թումանյանի աշխարհը» մենագրության (1966) հեղինակն էի): Ի պաշտոնե ես պարտավոր էի հոբելյանի հետ կապված ամեն մի հարց համաձայնեցնել Քոչինյանի հետ: Նա էլ, առանց այն էլ բազմազբաղ մարդ, ժամանակ չուներ բոլոր հարցերով զբաղվելու: Հետո հոգնեց իմ հաճախադեպ այցելություններից: Ու մի օր էլ ասաց. «Լևո՛ն, տեսնում եմ, որ քո առաջարկները խելամիտ բաներ են, կարգադրություններն արա իմ անունից, ասա՝ ես եմ հանձնարարել»:

Ես թև առա, սկսեցի աջ ու ձախ կարգադրություններ անել հանձնաժողովի նախագահ Քոչինյանի անունից: Բայց, իհարկե, ոչ բոլոր դեպքերում: Ասենք, իրենից պետք էր համաձայնություն առնել Դսեղ գյուղի անունը վերականգնելու համար, որ 1939-ից Թումանյանի անունով էր կոչվում: Երկար միտք արեց՝ բա չե՞ն ասի, թե հոբելյանի առիթով իր անունը չահարկում ենք: Եվ կատարեց իմաստուն որոշում՝ ամբողջ շրջանը կոչեց Թումանյանի անունով, իսկ ծննդավայր գյուղի անունը վերականգնեց:

Բայց նվազ կարևոր հարցերը ես կարգադրում էի Քոչինյանի անունից: Այսպես հոբելյանական ծախսերն ուռճացան և հասան յոթ միլիոնի:

Ահա և նստած ենք վերը ասածս թունդ խորհրդակցությանը:

Քոչինյանը հարցերց, թե որո՞նք են հոբելյանական ամենամեծ ծախսերը: Պարզվեց, որ ամենամեծը Դսեղ-երկաթուղային կայարան խճուղային ճանապարհի կառուցումն էր:

Քոչինյանն այստեղ բարկացավ. «Հապա մեր բազմաթիվ հյուրերը, հոբելյանական հանձնաժողովի անդամներն ի՞նչ ճանապարհով պիտի հասնեն Դսեղ: Այդ խճուղու կառուցման

ծախսերն անմիջապես հանեցե՛ք հորելյանական ծախսերի միջից»:

Ճարներն ինչ, հանեցին:

– Ո՞րն է ծախսերի մյուս մեծ հոդվածը:

– Մոսկվայի Մեծ թատրոնի 10-օրյա վարձակալություն հորելյանական օրերին: Այդ օրերին, – բացատրեց նախարարների խորհրդի նախագահի տեղակալ, – պետք է ցուցադրվեն «Անուշ», «Այմաստ» և «Սայաթ-Նովա» օպերաները:

Քոչինյանը հարց տվեց., որ եթե չլիներ Թումանյանի հորելյանը, այդ օպերաները չէ՞ր կարելի ցուցադրել Մեծ թատրոնի բեմում:

Պատասխանը չէր կարող բացասական լինել:

– Դե, ուրեմն, – հետևեց Քոչինյանի եզրակացությունը, – այդ գումարը նույնպես հանեցեք հորելյանական ծախսերի միջից:

Թեև դժկամությամբ, ընդդիմախոսներն այդպես էլ վարվեցին, և կարծես թե խեղճացան:

– Ուրիշ ի՞նչ մեծ ծախսեր մնացին:

– Կերպարվեստի տարեկան ցուցահանդեսի բոլոր գումարները Հախվերդյանը ձեր անունից տրամադրել է Թումանյանական թեմաների՝ քանդակներ, կոմպոզիցիոն կտավներ, դիմանկարներ, բնանկարներ: Ոչ մի ժամանակակից թեմա:

– Ինչ կա որ, – հետևեց պատասխանը, – թող այս տարվա կերպարվեստի ցուցահանդեսը նվիրված լինի Լոռվա բնաշխարհին, Թումանյանի կերպարներին ու շրջապատին: Քի՞չ բան կա նկարելու և քանդակելու: Ժամանակակից թեմաները թող հաջորդ ցուցահանդեսի համար արվեն:

Քոչինյանի (նաև իմ) ընդդիմախոսներն այստեղ էլ համոզիչ առարկություններ չունեցան: Ես այստեղ հասկացա, թե ինչ ասել է Կենտկոմի առաջին քարտուղար, որին առարկելը դյուրին բան չէր նույնիսկ Ռոբերտ Խաչատրյանի և Լարիսա Ստեփանյանի նման մարդկանց համար: Եվ նրանք անցան հաջորդ մեղադրանքին, որ վերաբերում էր տարվա հրատարակչական ծրագրերին:

– Շահագործելով ձեր հեղինակությունը՝ Հախվերդյանն այս տարվա հրատարակչական ծրագրերը լցրել է Թումանյանական գրքերով:

Եվ տվեցին մի չարք գրքերի անուններ. ռուսաց լեզվով՝ «Թումանյան. Ռուսաստանի և ռուս կուլտուրայի մասին» (Հոդվածներ), «Թումանյան. «Շունն ու կատուն», «Մուկիկի մահը», «Մի կաթիլ մեղրը» (Կորնեյ Չուկովսկու առաջաբանով), Լ.Հախվերդյանի 2 մամուլանոց ակնարկը 5 լեզվով (ռուսերեն, գերմաներեն, ֆրանսերեն, անգլերեն, հայերեն), «Հայոց լեռներում» բանաստեղծությունը 8 լեզվով և այլն:

Քոչինյանը լսեց-լսեց ուշադիր, ապա հարցրեց, թե սրանցից ո՞րն եք համարում ավելորդ:

Ընդդիմախոսներս ասացին, թե ոչ մեկը, բայց Հախվերդյանի կամայական միջամտությունների պատճառով ժամանակակից գրողների որոշ գործեր դուրս են մնացել ծրագրերից: Հանձնաժողովի քարտուղարը չահագործել է հանձնաժողովի նախագահի վստահությունը, նրա անունից արել է կարգադրություններ, որոնց պատճառով տուժել է ժամանակակից գրականությունը: Դա ևս մեծ տպավորություն չթողեց Քոչինյանի վրա: Այստեղ ևս նա մեջքիս կանգնեց, թե ոչինչ, դրանք էլ եկող տարի կտպագրենք, թող համբերեն՝ հանուն Թումանյանի: Հետո ավելացրեց, որ խնդրում է՝ շատ մեղքեր չբարդեն իր земляк-ի վրա:

Ապա դարձավ Լարիսա Ստեփանյանին՝ պարզելու, թե հիմա ինչքան կկազմեն հորելյանական ծախսերը:

Դուրս եկավ առաջինի համեմատ բավականաչափ համեստ մի թիվ, որ նախնական թվի կեսն էլ չէր կազմում:

– Այդպես էլ կգրեք Մոսկվա:

Այսպես բարեհաջող ավարտվեց ժամեր տևած խորհրդակցությունը: Ես թեթևացած չունչ քաշեցի:

Ռոբերտ Խաչատրյանի և Լարիսա Ստեփանյանի պաշտպանությունը պարտություն կրեց, բայց ինձ թվում է, որ առաջինը դա չմոռացավ, և տուժողը հորելյարը եղավ: Պատմեմ կարգով:

Որ Ռ.Խաչատրյանը զարգացած, խելացի մարդ էր և չնոր-

հայի հոնտոր, ամենքը գիտեին: Դա լավ երևաց Մոսկվայի Մեծ Թատրոնում հոկտեմբերի 3-ին կայացած հոբելյանական նիստում նրա տված զկուցումից, փայլուն, բայց և չափազանց գաղափարական, ինչպես սազական էր Կենտկոմի գաղափարական գծով քարտուղարին:

Բայց նա զլացավ անել մի շատ կարևոր բան, որ ես մինչև օրս էլ չեմ մոռանում ու չեմ ներում նրան: Դա մոռանալու բան չէ, մինչև հիմա էլ սրտիս մեծ ցավ է մնացել:

1969-ի կեսերին էր, երբ ես ընդունելություն խնդրեցի Քոչինյանից մի շատ կարևոր հարցի վերաբերյալ, ասաց, որ բնավ ժամանակ չունի: Հարցրեց՝ ի՞նչն խնդրի չուրջը: Ասացի՝ շատ կարևոր խնդրի: Դժվարությամբ համաձայնեց ընդունել ինձ՝ չափազանց զբաղված լինելու պատճառով: Ես հասկանում էի Քոչինյանին: Թումանյանի հոբելյանական գործերի առատությունը ոմանց մեջ դժկամություն էր առաջացնում: Նույնիսկ ասվում էր, թե, իհարկե, Քոչինյանը լոռեցի է, Հախվերդյանն էլ (ես ծնվել եմ Ղարաքիլիսայում), և լոռեցիները շատ են ուռճացնում՝ իրենց հայրենակցի հոբելյանը: Այս ամոթալի մտայնության լուրերը հասնում էին Քոչինյանին, ինձ՝ նույնպես, բայց ես, լցված Թումանյանի մեծության գիտակությամբ և ուժեղ թիկունք ունենալով՝ բանի տեղ չէի դնում նման փոքրոգի մտայնությանը:

Ի վերջո Քոչինյանը տեղի տվեց իմ խնդրանքին և հրավիրեց իր մոտ: Հաջորդ օրը պայմանավորված ժամին ներկայացա:

Այցելությանս նպատակը հետևյալն էր: Ստալինյան բռնությունների ահավոր տարիներին Թբիլիսիի Խոջիվանքի հայկական մեծ ու մեծաչուք գերեզմանատունը քանդվել, հողին էր հավասարեցվել, քաղաքի կենտրոնում գտնվող վանքի (Հարանց վանք) փառավոր եկեղեցին՝ նույնպես: Անեղծ պահպանվել էին երեք նշանավոր գրողների՝ Րաֆֆու, Սունդուկյանի, Թումանյանի շիրիմները և սրանց մոտ տեղափոխվել Ղազարոս Աղայանի, Պերճ Պռոշյանի, Մուրացանի, Գևորգ Հախվերդյանի, Ծերենցի, Մակար Եկմալյանի, Ջիվանու, Վանո Խոջաբեկյանի և ուրիշ հայտնի գրողների, արվեստագետների ու գործիչների

(թվով 28) գերեզմանները՝ շարված իրար կողքի: Ինչքան էլ զարհուրելի՝ արվել էր այդ սև գործը պատմության սև տարիներին:

Սա անցած պատմություն է, որի մեջ խորանալը մեզ շատ հեռու կտանի:

Իմ առաջարկի էությունը հետևյալն էր. ի կատար ածել Թումանյանի վերջին կամքը՝ թաղվել Դսեղի կողքին գտնվող Դիդ բլրակի վրա, որտեղից փառահեղ տեսարան է բացվում Լոռվա ամբողջ բնաշխարհի վրա: Օգտվելով պատեհ առիթից՝ ես առաջարկեցի Հայաստան տեղափոխել հայոց մյուս մեծերի շիրիմները նույնպես: Դա պետք է կազմակերպվեր այնպես, որ իբր արվում է վրացական իշխանությունների բարի կամքով և առաջարկությամբ: Նրանք կողմնակից կլինեին դրան, կարելի էր չկասկածել, միայն թե գործը պետք է ի կատար ածվեր նրբորեն: Վրաց ղեկավար շրջանները գոհունակությամբ կընդառաջեին այս առաջարկին, թեև դա ցույց չեին տա: Ուրիշ ե՞րբ առիթ կներկայանար մեր մեծերի աճյունները Հայաստան տեղափոխելու համար:

Մյուս առաջարկս այն էր, որ այն փողոցը, ուր գտնվում է Թումանյանի տունը, ոչ մեծ մի փողոց, որ մինչև հեղափոխությունը կոչվում էր Վոզնեսենսկայա, իսկ այժմ կրում է Դավիթաշվիլու անունը, դառնա Թումանյանի անվան: Եվ երրորդ, որ Թումանյանի ապրած տան պատին, որի վրա կա հուշատախտակ, փակցվի նրա բարելիֆը:

Քոչինյանը լսեց-լսեց, մտքերի մեջ ընկավ: Ես շարունակեցի խորացնել իմ առաջարկի էությունը, որ գոյություն ունի «հանգուցյալի վերջին կամք» հասկացությունը, որ Նվարդ Թումանյանն իր հուշերի գրքում վկայել է Դիդ բլուրի վրա թաղվելու հայրական վերջին կամքը, և հարմար առիթ է Րաֆֆու և մյուսների շիրիմները ևս Հայաստան տեղափոխելու համար: Այլևս այսպիսի առիթ չէր ներկայանա:

Քոչինյանն ընդհատեց ինձ և ասաց, որ Ռոբերտ Խաչատրյանը և ես մեկնենք Թիֆլիս և բանակցենք Վրաստանի ղեկավարների հետ:

– Ես էլ եմ կարծում, որ նրանք դեմ չեն լինի: Ես կխոսեմ Խաչատրյանի հետ, որ դուք մեկնեք Թիֆլիս:

Սա եղավ ճակատագրական սխալ: Դրանից հետո ես բազմիցս կապվեցի Ռ.Խաչատրյանի հետ Թիֆլիս մեկնելու համար: Նա խոստացավ և հետաձգեց չարունակ, այնքան, որ Թիֆլիս մեկնելը կորցրեց իմաստը: Թե ինչն էր պատճառը՝ չգիտեմ, բայց իմ ջանքերը ջուրն ընկան:

Իմ, և ոչ միայն իմ, նվիրական բաղձանքը մնաց անկա-տար: Թումանյանը և մեր մյուս մեծերը մնացին Խոջիվանքի մեծ գերեզմանատան մի անկյունում՝ մոռացված ու լքված:

Ես սա ոչ ոքի չեմ ներում, ինձ նույնպես, որ չկարողացանք գլուխ բերել համազգային նշանակության այդ նվիրական գործը, որ կարող էր ի կատար ածվել:

Սա է իրողությունը, և իմ ամենամեծ վշտերից մեկը, որ կտանեմ ինձ հետ...

* * *

Մտաբերելու շատ բան կա: Երևի պիտի ամեն ինչ թղթին հանձնել, բայց կան բաներ, որ կուզենայի մտաբերել:

Հորելյանական հանձնաժողովի վերջին նիստին, որ կայացավ 1969-ի սեպտեմբերի սկզբին, ինձ նեղացրին թերացումներիս համար: Ես էլ, բնականաբար, վրդովվեցի:

– Քիչ մնաց, հոբելյանը մի ամսից կավարտվի, և ես ազատ չունչ կքաշեմ:

Քոչինյանը ծիծաղեց.

– Սրանից հետո էնպիսի գործի կդնենք քեզ, որ չունչ քաշելու ժամանակ չունենանս...

Ես սարսափահար տեղիցս վեր թռա:

– Զե՛մ ուզում, Անտոն Երվանդովիչ, առանց այն էլ արվեստի ինստիտուտում գործեր շատ ունեմ: Զե՛մ ուզում...

Բոլորը ծիծաղեցին, Քոչինյանը՝ նույնպես:

– Էդքան չու՞տ հոգնեցիր մեզանից: Բա ես երկու տարին այսքան եռանդով ինչպե՞ս աշխատեցիր:

– Թումանյանն ուրիշ: Նա մեր մշակույթի հայրն է, ոնց որ իմ

հարազատ հայրը: Նրան ինչքան կամենաք՝ կծառայեմ, իսկ պաշտոն՝ ոչ մի դեպքում, ես ի՞նչ մեղք եմ գործել...

Բոլորը ծիծաղեցին: Իմ պատասխանը դուր եկավ մարդկանց և կարծես բարձրացրեց իմ մարդկային համարումը նրանց աչքում:

Իմ պաշտոնի հարցը միանգամից փակվեց...

ՋԻՄ ԹՈՐՈՍՅԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՋԱՏԱԳՈՎԸ

Ինձ համար լավ առիթ է ստեղծվել. հիշելու եմ Անտոն Քոչինյանին, որովհետև իմ հիշողության մեջ մնացել է նրա անկեղծ, պարզ և անմիջական մարդու կերպարը: Լինելով պետական բարձր պաշտոնյա՝ նա նաև պարզ անձնավորություն էր, բարի, անմիջական մարդու տպավորություն էր թողնում:

Հիշում եմ՝ 1961 թվականն էր, ես դեռ շատ երիտասարդ էի, երբ ինձ ասացին, որ կանչում են Քոչինյանի մոտ: Ճիշտն ասած՝ սկզբում ես վախեցի. մտածում էի՝ ինչ կապ ունեմ Քոչինյանի հետ: Նա կառավարության նախագահն էր, ես էլ Մոսկվայի ճարտարապետության ակադեմիան ավարտելուց հետո մի քանի տարի էր, որ գտնվում էի Երևանում: Իմ ամբողջ ուշադրությունը թուղթն էր, մատիտը, գծագրերը: Մտածմունքների մեջ եկա կառավարության շենք, ինձ այնտեղ ասացին, որ բարձրանամ վերև: Նա շատ ջերմ բարևեց, հրավիրեց նստելու և ասաց, որ շուտով նշելու ենք Մաշտոցի 1600-ամյակը, և անհրաժեշտ է, որ միասին գնանք Օշական՝ տեսնելու՝ ինչպես պետք է բարեկարգենք, ինչպես պետք է ճանապարհը կարգի գցենք, որովհետև հյուրեր պիտի ունենանք: Առաջարկը շատ ոգևորիչ էր, մանավանդ որ այն ժամանակ Մ. Մաշտոցի մասին խոսելը, անգամ նրա ծննդյան օրը պետականորեն նշելն արդեն համարձակ քայլ էր: Այդ ժամանակ կային արդեն ճանաչված և փորձառու շատ ճարտարապետներ, և, ճիշտն ասած, ես շատ զարմացա, որ ընտրությունը կանգ է առել ինձ վրա:

Մենք ուղևորվեցինք Օշական: Ճանապարհին ցույց էր տալիս, թե որտեղ են առաջ քարեր եղել, հիմա ինչքան ծառ են տնկել և այլն: Ինձ համար դա շատ հուզիչ էր, քանի որ տեսնում էի նրա մտահոգությունը հանրապետության յուրաքանչյուր հողակտորի համար: Ոգևորությամբ զրոսնելով՝ հասանք Աշտարակ և Օշական տանող ճանապարհների խաչմերուկը, որտեղից ես՝ որպես ճարտարապետ, պետք է իմ առաջարկությունը անեի: Ես առաջարկեցի ճանապարհը լայնացնել, ծառեր տնկել, ինչպես Երևան-Էջմիածին մայրուղին է: Վերադարձին նույնպես խոսեցինք Մաշտոցի 1600-ամյակի տոնակատարության մասին: Քոչինյանը ասաց, որ բոլոր առաջարկներս գրի առնեմ ու ներկայացնեմ իրեն: Միաժամանակ անց ես ներկայացա և ասացի, թե ամեն ինչ գրել եմ, բայց մի փոքր խնդրանք ևս ունեմ: Առաջարկեցի բացի բարեկարգումից և ծառատունկից որևէ հուշարձանատիպ բան արվի այնտեղ, որպես ուղեցույց մի քար դրվի այն հատվածում, որտեղ Օշականի բուն ճանապարհն է սկսվում: Նա պատասխանեց, որ եթե այդպիսի փոքր բան է խնդրանքս՝ անեմ: Գործերի բերումով Քոչինյանը մեկնեց Մոսկվա, ես էլ ոգևորված որոշ գծագրեր արեցի և ստացվեց այն, ինչն արդեն երկար տարիներ կարծես ուղեցույց է դարձել հազարավոր ուխտագնացների համար: 10 մետրանոց քարակոթողներից մեկի վրա փորագրված է այբուբենը, մյուսի վրա ժամանակակից սերնդի ձոնն է Մաշտոցին, և հուշարձանը որևէ զարդ չունի, որ ուշադրությունը իր վրա վերցնի: Հիմնականը տառն է, բառը, այսինքն՝ այն, ինչ որ բուն Մաշտոցի հետ է կապված, և մեկ էլ հավերժության նշանը: Գծագրերը արեցի մեծ ոգևորությամբ: Դա փոքր բան էր ճարտարապետի համար, բայց ինձ համար կարևորը ոչ թե ծավալն էր կամ չափերը, այլ էությունը, որ կապվում էր Մաշտոցի անվան հետ: Տեղն ընտրեցի այնպես, որ քարակոթողները նայում էին Օշականին, Արարատին և Արարատյան դաշտավայրին: Կարողացա համոզել շինարարներին, որ սկսենք շինարարությունը, քանի որ չկար նախահաշիվ, պաշտոնական թույլտվություն: Տղաներն էլ հայրենասերներ էին, ու սկսեցինք: Քարակոթողները մոտավորապես 3 մետր բարձրացել էին, երբ Քոչինյանը վերադարձավ: Ինչպես և ինչ էին ասել՝ չգիտեմ: Կանչեց և ասաց.

– Ա՛յ Ջիմ, ես քեզ լուրջ մարդու տեղ էի դրել, այնինչ

ինքնակամ բաներ ես արել: Իմ տեղակալն ասաց, որ 10 մետրանոց հուշարձան ես դրել, գոնե 8 մետրանոց լիներ: Դու ինձ դժվար կացության մեջ ես դրել:

Ճիշտն ասած՝ ես շատ վատ զգացի: Կանչեց շինարարության նախարար Կանեցյանին և լուսավորության նախարար Սիմոնյանին (երկուսն էլ շատ հաճելի մարդիկ էին): Հանձնարարեց, որ տեսնեն իմ «ինքնագործունեությունը», և աշխատանքը հենց այդտեղ էլ ավարտենք: Ես հետո մոտեցա իրենց և խնդրեցի, որ ինձ էլ տանեն իրենց հետ: Տեղում շատ խնդրեցի, որ իրենք Քոչինյանին ասեն, որ քանդելն ավելի ճիշտ կլինի, քանի որ այդքան կարճ հուշասյունները անհեթեթ կթվային: Այդ ժամանակ մեզ մոտեցավ մի ահռելի մեքենա: Տեսա Անտոն Քոչինյանին, որը նախարարներին ուղարկեց և ինձ կանչեց իր մոտ: Ես այնքան չփոթված էի, որ անհեթեթ հարց տվի.

– Իսկ այդտեղ տեղ կա՞:

Նա ծիծաղելով ասաց.

– Ա՛յ տղա, սա կարծես ավտոբուս լինի:

Ես շատ հուզված նստեցի, որովհետև հասկացա, որ եկել էր ինձ համար: Ապա ասաց.

– Ինչ է, դու կարծում ես, որ միայն դու՞ ես հայրենասեր: Վերջերս, երբ Խրուշչովը եկել էր, «չայկա» անվանվող մի բան կար Աբովյանի ճանապարհին, որը կոպեկների արժողության բան էր, բայց դրա համար մեծ խոսակցություն եղավ: Հիմա նորից նման խոսակցություն թույլ տալ չենք կարող:

Ես զգացի այդ մեծ մարդու հոգու ողջ անհանգստությունը: Նրան թվացել էր, որ վիրավորել է մի երիտասարդ մասնագետի, և նա՝ կառավարության նախագահը, որ ազատ վայրկյան չուներ, գործերը թողել էր մի կողմ և չէր սպասել հաջորդ օրվան, հենց տեղում եկել էր տեսնելու իրականությունը:

– Ուրեմն այսպես կանենք,– վերջապես ասաց նա,– միջոցառման ղեկավարը Զարոբյանն է, իսկ այն, ինչ որ արել ես, միջոցառման ցանկի մեջ չկա: Դա փոքր բան չէ, պետք է զեկուցվի, ինքը ինչ կասի, այնպես էլ կլինի: Կխնդրեմ Զարոբյանին՝ գա, տեսնի ճանապարհը, քեզ էլ լուր կտանք, որ ներկայացնես

հուշարձանը: Տեսնելով իմ հուզված վիճակը՝ ասաց.

– Գնանք տեսնենք՝ ծիրանի ծառերը կպե՞լ են, թե՞ չէ, տեսնենք՝ ինչքան են մեծացել:

Նա խոսում էր ոչ թե հրամայական տոնով, ինչպես հաճախ ղեկավարներն էին խոսում, այլ հայրաբար, մեղմ ու ջերմ: Երևան վերադառնալուց հետո ես զգացի, որ Անտոն Քոչինյանը ոչ թե մերժեց ինձ, այլ ինչ-ինչ պատճառով անհնարին էր իմ մտահղացումն իրականացնել: Եթե Զարոբյանը թույլատրի, ուրեմն ինքը կընդունի: Երկար մտածելուց հետո նախնական գծագիրը, որ ունեի, որտեղ հուշասյունները ունեին 2 մետր լայնք և 10 մետր բարձրություն, փոխեցի և գծեցի երկրորդ գծագիրը, որտեղ լայնքը թողեցի նույնը, բարձրությունը արեցի 8 մետր, ինչպես ասում էր Լարիսա Ստեփանյանը: Երրորդ գծագիրը արեցի էլի 2 մետր լանքով, բայց ոչ թե 10 մետր բարձրությամբ, ինչպես ես էի ուզում, այլ՝ 12 մետր: Միտքս այն էր, որ մարդ հոգեբանորեն միշտ գնում է միջին տարբերակին: Ես էլ մտածեցի փորձել այն: Գեղեցիկ գծագրված նախագիծ պատրաստեցի և սկսեցի սպասել: Զանգահարեց Աղաբաբյան Գրիգորը, որն այն ժամանակ Պետշինի նախագահն էր, հիանալի մի անձնավորություն, ասաց, որ նշված ժամին լինեմ այնտեղ: Իմացավ, որ մեքենա չունեմ, եկավ իմ հետևից, ես էլ վերցրի գծագրերը, և մեկնեցինք Օշական: Ի դեպ, ասեմ, որ շինարարները համարյա բոլորն էլ օշականցիներ էին: Նրանց մոտ այնպիսի զգացողություն կար, որ Մաշտոցը միայն իրենցն էր, ու գյուղի երեխաների կեսի անունը Մեսրոպ էր: Շատ հուզիչ էր: Գյուղից էլ դույլերով գինի էին բերում վարպետների համար, սրանք խմում էին ու ոգևորված աշխատում: Մեկ էլ մի քանի մեքենաներ հայտնվեցին: Մեկից դուրս եկավ Զարոբյանը, մյուսից՝ Քոչինյանը, երրորդից՝ Լարիսա Ստեփանյանը: Զարոբյանը ռուսերենով դիմեց ինձ՝ ասելով, որ պատմեմ բանն ինչ է: Ես պատասխանեցի, որ այդպիսի մեծ միջոցառման համար ես ուզում էի ստեղծել ինչքան հնարավոր էր գեղեցիկ գործ, բայց չէի համաձայնեցրել ոչ ոքի հետ, որի պատճառով էլ ստեղծվել էր այդ տհաճ իրավիճակը: Ես ներկայացրեցի տարբերակները՝ ասելով, որ 1-ին տարբերակը ար-

վել է Լ. Ստեփանյանի խորհրդով և այն 8 մետրանոց է: Զարոբյանը վրդովված ասաց.

– Ի՞նչ 8 մետր, Լարիս՛ա, դու որտեղի՞ց վերցրիր 8 մետրը: Կարող էր լինել և 9, 10 մետր:

Լարիսա Ստեփանյանը լռեց: Ես շարունակեցի՝ ասելով, որ առաջարկում եմ 12 մետրանոց: Զարոբյանը լսում էր ու ծխում: Հետո ասաց.

– Լարիս՛ա, Դուք ուզում եք 8 մետր, իսկ ճարտարապետը՝ շատ բարձր, լավագույնը կլինի միջինը:

Ասաց, նստեց մեքենան ու գնաց: Բանվորները ուրախացած ուռռա՜ գոռացին, որովհետև ոչ միայն չարգելեցին, այլև ստացվեց այն տարբերակը, որը մենք ուզում էինք: Հետաքրքիրն այն էր, որ այդ պահին պատահաբար նայեցի Անտոն Քոչինյանին և նրա դեմքին նկատեցի թեթև ժպիտ: Ես հասկացա, որ այդ իմաստուն մարդը հասու եղավ իմ փոքրիկ խորամանկությանը և հոգու խորքում գուցե և խրախուսեց ինձ: Հուշարձանի բացման հետ կապված մի գեղեցիկ դեպք էլ եղավ: Սիլվա Կապուտիկյանին խնդրեցի Մաշտոցին նվիրված մի քանի տող գրել: Համաձայնեց, բայց մի քանի օր անց զանգահարեց և ասաց, որ մեկնում է Մոսկվա, բայց մի տղա կա. իր ընկերներից, որը ավելի լավ կգրի, քան ինքը: Ստացվեց մի անսպասելի բան: Այդ երիտասարդը Պարույր Սևակն էր, որի հետ առաջին իսկ հանդիպումից դարձանք շատ մտերիմ ընկերներ, և այդ ընկերությունը շարունակվեց մինչև նրա ողբերգական մահը: Այսօր էլ մտերիմ եմ նրա տղայի հետ, և Պարույրի ծննդյան ու մահվան օրերը նշում ենք միասին: Պարույրն առաջին հայացքից թվում էր ըմբոստ, կարծես թե անհաչտ, բայց դա այդպես չէր, նա բացառիկ հարգանք ուներ ղեկավարների հանդեպ, իսկ Քոչինյանի հանդեպ՝ առանձնահատուկ հարգանք: Պարույրը քարի վրա նշեց, թե որ մասում պետք է գրվի մաշտոցյան հանրահայտ պատգամը: «Տաչած խոսքը պետք է քարեղեն խոսք լինի, որ մնա»,– ասաց նա, իսկ Պարույրի ամեն մի խոսքը Մաշտոցի մասին կարծես թե քարեղեն քանդակ էր:

Մի անգամ Քոչինյանը կանչեց իր մոտ և շատ լուրջ

առաջարկեց, որ ես դառնամ Երևանի գլխավոր ճարտարապետը: Ես առանձնապես չէի ուզում, սակայն, այնուամենայնիվ, հանձն առա այդ գործը 1971 թ. վերջին և 10 տարի մնացի այդ պաշտոնում: Հետո շատ առիթներ եղան հանդիպելու Անտոն Քոչինյանի հետ: Մի օր Անտոն Քոչինյանը կանչել էր քաղաքապետին, շինարարության նախարարին և ինձ: Խոսակցությունը այն մասին էր, թե քաղաքը որ ուղղությամբ պետք է ընդարձակվի: Քաղաքապետը և նախարարը ասում էին՝ դեպի հարավ, Քոչինյանը դեմ էր, ասում էր, որ դեպի հարավ օգտակար հողեր են, և շոգ է, ավելի արդյունավետ կլինի՝ դեպի հյուսիս: Քննարկումը կիսատ մնաց, Քոչինյանը կեսկատակ, կեսլուրջ ասաց.

– Դե լավ, ձեր հե՛րն էլ անիծած:

Հետո միանգամից շրջվեց իմ կողմը և ասաց.

– Բացի Ջիմից:

Հետո, երբ դուրս էինք գալիս, ինձ ասաց.

– Գիտե՞ս՝ ինչու ես այդպես ասացի, որովհետև շատ եմ հարգել քո հայրիկին:

Երբ Քոչինյանը երիտասարդ է եղել, հայրս այն ժամանակ հանրապետության արդարադատության նախարարն էր, գլխավոր դատախազը:

Անցան տարիներ, Անտոն Քոչինյանը այլևս չէր աշխատում: Մի անգամ իմ աշխատասենյակը մտավ մի երիտասարդ և ներկայացավ՝ ասելով, որ նրա վարորդն է: Ես անհանգիստ հարցրի, թե որտեղ է նա, վերջինս պատասխանեց՝ մեքենայի մեջ: Ես արագ դուրս թռա սենյակից՝ հասցնելով քարտուղարին ասել, որ Քոչինյանն է գալիս, մի բան պատրաստի: Մոտեցա, դուռը բացեցի, Քոչինյանը դուրս եկավ ժպտաղեմ, ես իրեն թևանցուկ արեցի և խնդրեցի վերև բարձրանալ: Սեղանին արդեն միրգ և կոնյակ էր դրված:

– Գիտե՞ս Ջի՛մ, – սկսեց նա, – ես հիմա չեմ աշխատում, բնություն և հող սիրող մարդ եմ, ինձ մի հողամաս է պետք, որ փոքր տուն կառուցեմ և հողի հետ աշխատեմ:

Իմ պաշտոնական հնարավորությունները թույլ չէին տալիս հողատարածությունները հատկացնել, բայց ես չէի կարող

մերժել նրան և ասացի.

– Շատ լավ, ես ամեն ինչ կանեմ:

Նրան ճանապարհելուց հետո իսկույն զանգահարեցի Մ. Մուրադյանին, որը քաղխորհրդի գործկոմի նախագահն էր: Պիտի ասեմ, որ նա հիանալի քաղաքապետ էր և բացարձակ հարգանք ուներ Անտոն Երվանդովիչի նկատմամբ: Պատմեցի նրան և ասացի, որ անհարմար զգացի Քոչինյանին ասելու, որ դա իմ իրավունքներից վեր է, ու որոշեցինք մի բան մտածել հողակտոր հատկացնելու համար: Հարցը կարգավորվեց, և արդեն բավական ժամանակ էր անցել, երբ նորից հանդիպեցի նրան: Ջերմ զրույցի ժամանակ ասաց.

– Տունը կառուցեցի, այգի ստեղծեցի, բա չե՞ս ուզում գալ տեսնել:

Ես շատ ափսոսում եմ, որ ժամանակ չգտա գնալու նրա մոտ: Այս պատմությունները հիշողությանս մեջ են, և ես հիշում եմ նրան ինչպես մի մարդու, որը նվիրված էր հանրապետության շինարարությանը, որը մտահոգ էր ճարտարապետության՝ որպես արվեստ կայանալուն, որ այն լինի ազգային, որովհետև եթե ազգային չէ, ապա դա մերը չէ:

ԴՄԻՏՐԻ ԱԴԱԲԱՇՅԱՆ

ՀԵՏԵՎՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԻՔԸ

1971 թ. հունիսին ինձ նշանակեցին Հայաստանի ավիացիայի վարչության պետ, և մեր առաջին հանդիպումը Անտոն Քոչինյանի հետ կայացավ իր աշխատասենյակում, որտեղ Սերգեյ Սերգեևիչ Պավլովը, որը այն ժամանակ ԽՍՀՄ քաղաքացիական ավիացիայի նախարարի տեղակալն էր, ներկայացրեց ինձ: Անտոն Քոչինյանի մասին մինչ այդ տարբեր բաներ էի լսել, բայց հանդիպման ժամանակ շատ մեծ տպավորություն ստացա: Առաջին իսկ վայրկյանից ընդունեց շատ ջերմ և հարցրեց.

– Տղա՛ ջան, իսկ դու գիտե՞ս՝ ազգանունդ ինչ է նշանակում:

Ես ռուսերեն պատասխանեցի՝ ոչ:

Նա ասաց.

– Հնում գյուղական խորհրդի նախագահին էին այդպես անվանում:

Երկրորդ հանդիպումն արդեն ՀԿԿ բյուրոյի նիստում էր, որտեղ բյուրոյի անդամները իրենց հավանությունը տվեցին՝ ինձ այդ պաշտոնին նշանակելու համար: Անտոն Քոչինյանը իրեն պահում էր շատ պաշտոնական, սակայն զգացի՝ որքան ազատ կարող էին արտահայտվել ներկաները քննարկվող թեմայի վերաբերյալ:

Մի անգամ հեռախոսազանգով ինձ հրավիրեցին Պետչին՝ մասնակցելու օդանավակայանի նոր շենքի նախագծերի քննարկմանը: Դահլիճում կազմակերպել էին ցուցահանդես, որն իր մեջ ընդգկում էր վեց նախագիծ: Ամեն մեկը ներկայացնում էր իր խմբի նախագիծը, վերջում Անտոն Քոչինյանը ասաց.

– Եկեք լսենք այս ջահելին, թե ինչ կասի:

Ես վերցրի ցուցափայտը և ամեն մի նախագծի թերություն-

ները բոլորին մատչելի ձևով բացատրեցի: Իմ ելույթից հետո լռություն էր, մի քանի ծանր և լարված րոպեներից հետո նա ասաց.

– Ա՛յ, ես նոր հասկացա, որ այս աշխատանքները ուսանողական են, իսկ Դուք կարո՞ղ եք այս բոլորից ընտրել խելքին չատ թե քիչ մոտ երկու նախագիծ:

Ես ցույց տվեցի երկուսը, որոնք բոլորից մոտ էին «օդանավակայան» հասկացությանը: Անտոն Քոչինյանը տեղում առաջարկեց երեք խմբից ստեղծել մի խումբ և կազմել նոր նախագիծ: Ես զարմացած էի, թե ինչ արագությամբ նա կողմնորոշվեց և ընդունեց գործի համար ամենահաջող որոշումը: Այնուհետև ես զեկույցներով նրան տեղյակ էի պահում աշխատանքի ընթացքի մասին: 1972 թվականի գարնանը որպես պատվիրակության անդամ, մեկնեցի Գերմանիայի Դաշնային Հանրապետություն՝ երկու երկրների միջև ավիացիայի գծով միջպետական հարաբերություններ ստեղծելու: Այնտեղ ես մանրամասն ուսումնասիրեցի Քյոլն-Բոնն և Մայնի Ֆրանկֆուրտ օդանավակայանների կառույցները և խնդրեցի գլխավոր ինժեներներից համապատասխան նախագծերը: Երևանում նախագծերը ուսումնասիրվեցին, և հետևանքում Զվարթնոցի նոր նախագիծը պատրաստ էր: Այն ժամանակ դա Խորհրդային Միության ճարտարապետության մեջ նոր խոսք էր, քանի որ ֆանտաստիկ տեսք ուներ: Անտոն Քոչինյանը տվեց իր հավանությունը, և ներկայացրինք Մոսկվայի «Աէրոպրոեկտ» ինստիտուտի տնօրեն Իվան Ֆիրսովին, որն ասաց.

– Դա երիտասարդական ամսագրից վերցրած լուսանկար է, որի նմանը չի կառուցվի անգամ 21-րդ դարում: Գնացե՛ք և կառուցե՛ք սովորական տուփ,– ու հրաժարվեց ստորագրելուց:

Այստեղ ես նորից գնահատեցի, թե ինչպիսի թեթևությամբ և արագությամբ Անտոն Քոչինյանը ընկալում էր գաղափարները, գնահատում ու վստահում առաջարկողին: Ես պատմեցի նրան Ֆիրսովի հետ հանդիպման արդյունքների մասին: Քոչինյանի խորհրդով նախագծով մտա ԽՍՀՄ քաղաքացիական ավիացիայի նախարարի տեղակալ Լեոնիդ Սվերչնիկովի մոտ:

Նա նախագծի կարճ ուսումնասիրությունից հետո ասաց.

– Այնպիսի մարդիկ, ինչպիսին է Ֆիրսովը, ոչնչացնում են Միության ճարտարապետությունը, այդ պատճառով էլ բոլոր օդանավակայանները տուփեր են,– և ստորագրեց:

Այստեղ նույնպես զգացվեց Անտոն Երվանդովիչի ներկայությունը, քանի որ արդեն խոսել էր նախարարի հետ և հայտնել իր դրական կարծիքը: Ինստիտուտում մանրամասնորեն մշակվեց նախագծի վերջնական տարբերակը, և զուգահեռաբար սկսվեց շինարարությունը:

Մեր համատեղ աշխատանքը Անտոն Քոչինյանի հետ եղավ այն, որ Հայաստանի տարածքում կառուցվեցին «Էրեբունի», «Լենինական», «Գորիս», «Սիսիան» օդանավակայանները: Մի դեպք պատմեմ: Մինչև իմ պաշտոնի անցնելը որոշվել էր ներկայիս «Էրեբունի» օդանավակայանը, որը նախկինում անվանվում էր «Հարավային» օդանավակայան, փակել և տարածքը հանձնել քաղխորհրդին: 1971 թվականի հուլիս ամսին մոտ երկժամյա հանդիպում ունեցա Անտոն Քոչինյանի հետ, հանգամանալից ներկայացրի մեր ավիացիայի զարգացման հեռանկարները, այդ թվում նաև «Հարավային» օդանավակայանի մասին խոսեցի, ասացի, որ փակելը չատ մեծ սխալ կլինի, քանի որ մենք ուզում ենք զարգացնել տեղական ներքին գծերը, վերազինել ժամանակակից օդանավերով, որոնց համար «Հարավային» օդանավակայանի դիրքը (քամիների տեսակետից), մոտիկությունը քաղաքին, ռազմական նշանակությունը չատ կարևոր են: Նա հավանություն տվեց օդանավակայանի վերանորոգմանը և վերազինմանը՝ նորից ապացուցելով իր՝ իրադարձությունը ճիշտ գնահատելու ընդունակությունը, փոխեց նախկին որոշումը և ընդունեց իմ առաջարկությունը, բայց իրականում կառուցվեցին նոր չենքը, թռիչքի և վայրէջքի գծերը: «Էրեբունի» օդանավակայանի դաշտը արդեն պատրաստ էր ընդունելու առաջին «ՅԱԿ-40» մակնիշի օդանավները՝ թվով 25 հատ, որոնք կապելու էին Հայաստանի բոլոր շրջանները: Օդանավները սկսեցին թռչել տարբեր ուղղություններով, բայց չատ չուտ պարզվեց, որ օդանավակայանները, որոնք համապատաս-

խանում էին «ԱՆ-2»-ին, «ՅԱԿ-40»-ի համար պիտանի չեն: Ստիպված էինք մի շարք օդանավակայանների հին հողային տարածքները հանձնել և նոր տարածքներ վերցնել: Նախնական աշխատանքները ոչ միայն բարդ էին, այլև կապված էին բյուրոկրատական քաշքշուկների հետ, որը շատ ժամանակ էր խլում: Հարցը արագացնելու և ընդհանուր պրոբլեմին հիմնական լուծում տալու համար դիմեցի Անտոն Քոչինյանին և հանդիպման ժամանակ հրավիրեցի «ԱՆ-2»-ով ինձ հետ թռչել Գորիս և Սիսիան՝ օդից ծանոթանալու և ուսումնասիրելու մեր առաջարկած նոր դիրքերը և հողակտորները: Այդ օրը նա, նստելով իմ և երկրորդ օդաչուի միջև ամրացված երկաթե կլոր խողովակի վրա, շարժիչի աղմուկի, շոգի, ցնցումների և տարուբերման մեջ անցկացրեց մոտավորապես 6 ժամ: Գտավ հարցի լուծումը, տվեց համապատասխան կարգադրությունները, և մենք կարողացանք շուտափույթ լուծել բոլոր հարցերը: Աշխատանքային շատ լավ միջադեպեր կարելի է հիշել՝ կապված նրա հետ, սակայն կուզեի պատմել մի հանդիպման մասին, որը ավելի շատ բնութագրում է մեր հասարակությանը:

1980 թ. նոյեմբերի 29-ն էր:

Օպերայի շենքում նշվում էր Խորհրդային Հայաստանի 60-ամյակը: Միջոցառումից հետո, երբ մասնակիցները դուրս էին գալիս դահլիճից, ես նկատեցի ճեմասրահում միայնակ կանգնած Անտոն Քոչինյանին և տեսա, թե ինչպես այն մարդիկ, որոնք ժամանակին շատ լավ ճանաչում էին նրան ու նրա թևի տակ հայտնվեցին Հայաստանի էլիտայի մեջ, այժմ անցնում էին անտարբեր, անգամ առանց ողջունելու:

Ես, զգալով նրա մենակությունը և հոգեվիճակը, մոտեցա, ջերմ բարևեցի, սկսեցինք զրուցել միջոցառումից ստացած տպավորություններից: Ես հասկացա, որ նա ամաչում էր այդ մարդկանց համար, որոնք երեկ քծնում, իսկ այսօր չէին նկատում իրեն:

Մի քանի րոպեից հետո նա խնդրեց, որ ես իրեն ճանապարհեմ շենքից դուրս: Իմ պատրաստակամությունը հայտնեցի իրեն ճանապարհելու մինչև տուն, և մենք, միասին զրուցելով,

անչտապ հասանք տուն:

Ես Անտոն Քոչինյանի մեջ տեսել եմ Մեծ մարդու, Մեծ Հայրենասերի, մի տղամարդու, որը չէր վախենում ընդունել կտրուկ որոշումներ՝ իր վրա վերցնելով հետևանքների ամբողջ պատասխանատվություն: Ամբողջ հոգով ցավում էր ժողովրդի համար, ղեկավարվում էր երկրի զարգացման շահերով: Լինելով խոշոր քաղաքական գործիչ՝ նա միշտ մնաց դիմացինին ընկալող, հասարակ և մարդամոտ մարդ, մեծ անհատականություն:

ԱՆԱՀԻՏ ՍԱՀԻՆՅԱՆ

ՆՎԻՐՅԱԼ ԶԱՎԱԿԸ ԵՐԿՐԻ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԻ

Վաղ առավոտյան հնչեց հեռախոսազանգը: Լսում եմ տղամարդու անծանոթ մի ձայն. «Լսափողը չդնե՛ք, Անտոն Երվանդովիչը ուզում է Ձեզ հետ խոսել»: Տեղումս քարացա. Անտոն Երվանդովիչը՝ հանրապետության ղեկավարը, ուզում է ինձ հետ խոսել... Ի՞նչ ունի ինձ ասելու: Ես նրան որևէ խնդրանք չեմ ներկայացրել: Եթե անգամ ներկայացրած լինեի, դիմողին պատասխանում են սովորաբար իր մարդիկ, եթե պատասխանում են՝ բանավոր, ավելի հաճախ՝ գրավոր:

– Բա՛րև Ձեզ, – լսում եմ նրա ձայնը այնքան հստակ, այնքան մոտիկ ու մտերիմ, – ես հենց նոր սեղանիս վրա դրված այսօրվա թերթում կարդացի Ձեր ակնարկն հացն անխղճաբար չռայլելու մասին: Կարևոր հարց եք բարձրացրել, այսօրվա վերաբերմունքը հացի նկատմամբ հային բնորոշ, հային վայել վերաբերմունք չէ: Հացը մեզանում սրբացած է եղել, համարվել է Աստծո բարձրագույն պարգև...

Հացը ջրի գին ուներ, ջրի գին՝ այն ժամանակվա հասկացողությամբ, և ամենահամեստ միջոցների տեր բազմանդամ ընտանիքն իսկ երկրորդ օրվա հաց չէր ուտում, նախորդ օրից մնացած հացը նետվում էր աղբարկղ, առավոտյան գնվում էր թարմը: Եվ օրական տոննաներով հաց էր աղբարկղ նետվում: Հետագայում այս խնդիրը դարձավ հանրապետական ուշադրության առարկա, և վերևից հացը տնտեսելու հրահանգ տրվեց, ողջ երկրով մեկ մամուլն սկսեց լայնորեն քննարկել այս խնդիրը, բայց, կարծեմ, անօգուտ: Հացը շարունակում էր ջրի գին ունենալ, ամենահամեստ միջոցների տեր բազմանդամ ընտանիքն իսկ չէր զրկում իրեն թարմ հաց ուտելու հաճույքից:

Հանրապետության գլուխն անցնելով՝ Քոչինյանը կարգ սահմանեց. տարին մեկ-երկու անգամ հավաքում էր գրողներին, հանրապետության տնտեսության վիճակը վերլուծաբար ներկայացնում՝ ինչ ուղղություններով են զարգացվում, ինչ սխալներ են թույլ տրվել, ինչ է արվում շտկելու համար, ինչ պետք է անել, կամ ինչ են փորձում անել:

Այդպիսի մի հավաքույթի ժամանակ շատ մտահոգ, անկեղծորեն, ինչպես տան գլուխը կխոստովաներ յուրայիններին, ասաց.

– Սխալ էր, որ հանրապետությունում առաջնությունը քիմիական արդյունաբերությանը տրվեց, դա քիչ աշխատատար է, շատ էլեկտրաէներգիա կլանող: Սևանը զոհն էր հենց այս սխալի: Աշխատում ենք սխալն ուղղել, այսուհետև շեշտը դնելու ենք հաստոցաշինության և սարքաշինության վրա:

Այդ նպատակին հետամուտ՝ ստեղծվեց Զարենցավան քաղաքը:

Մեկ այլ անգամ, առավել մտահոգ, դիմեց մեզ՝ ասելով.

– Դուք գիտե՞ք, որ հանրապետության սահմանամերձ շրջանները լցվել են աղբբեջանցի վերաբնակներով:

Լսել էինք, գիտեինք, որ շրջանների ապիկար ղեկավարները կաշառակերությամբ նրանց թույլ են տալիս գալ, տներ գնել, հող ձեռք բերել, արդյունաբերական ձեռնարկություններում աշխատանք ստանալ, հիմնավորվել այստեղ: Այդ արված էր դրսից թելադրված, պանթուրքական հեռահար նպատակներով: Այդ երևույթն արդեն իսկ վտանգավոր չափեր էր ընդունել և հանրապետության ղեկավարին խորապես մտահոգում էր, մինչդեռ շատերս չգիտեինք, չէինք պատկերացնում: Պատահական չէր, որ հանրապետության ղեկավարը այդ մասին իրազեկ էր դարձնում գրողներին. թող գիտենան, իրենց հերթին խորհեն այս մասին՝ իբրև երկրի տերեր, և իրենցից կախված կարելին անեն վտանգը կանխելու համար: Ինքը՝ հանրապետության ղեկավարը, բացեիբաց չէր կարող «եղբայրական» ժողովրդին արգելել գալ և հաստատվել «եղբայրական» Հայաստանում, քանզի Խորհրդային Միության քաղաքականության հիմքում դրված էր

ժողովուրդների եղբայրության սրբազնագույն հոչակված կարգախոսը, և այն ոտնահարելը դիտվում էր իրրև ոճիրների ոճիր այդ եղբայրական սրբազան դաշինքի դեմ, հաճախ և որին զոհ էին դառնում հանրապետությունների, ամենից ավելի Հայաստանի Հանրապետության ղեկավարները՝ սկսած Աղասի Խանջյանից մինչև Զարոբյան:

Եղավ այնպես, որ ես մի օր զգացի Անտոն Քոչինյանի անմիջական օգնության կարիքը: Իմ «Կարոտ» վեպի տպագրությունը խափանվել էր ավելի քան ութ տարի: Առանց հիմնավոր պատճառաբանության հրատարակիչները հրաժարվում էին ավարտին հասցնել գրքի տպագրությունը: Օգտվելով հերթական անգամ Անտոն Քոչինյանի մոտ գրողներին զրույցի հրավիրելու առիթից՝ մոտեցա նրան և ընդունելություն խնդրեցի: Շաբաթվա վերջին օրն էր, նա ժամ նշանակեց՝ երկուշաբթի՝ առավոտյան ժամը 9-ին: Զէր մոռացել անցաթուղթ իջեցնել, երկուշաբթի առավոտյան ժամը 9-ին ինձ ընդունեց: Պատմեցի գրքի ողիսականը, խնդրեցի, որ անձամբ ինքը կարդա, թեև գիտեի, թե որքան սուղ էր իր ժամանակը, և հազիվ թե կարողանար դա անել: Ավելացրի, որ եթե կարդա և գտնի, որ չպիտի տպագրվի, գիրքը հրատարակչություններից հետ կվերցնեմ և կդադարեմ տպագրության մասին մտածել: Կարծում էի՝ մեկնումեկին կկանչի, կհանձնարարի կարդալ և զեկուցել իրեն: Բայց որքան մեծ եղավ զարմանքս, որ հանձն առավ անձամբ կարդալ: Հեռացա՝ վերաբերմունքից չոյված, անչափ գոհ, բայց դարձյալ վստահ չէի, որ խոստացածը անելու բան է: Սակայն հրաչքը կատարվեց: Մարո Մարգարյանի հետ նստած զրուցում էինք, երբ հնչեց դռան զանգը, ներս մտավ ինձ անծանոթ մի երիտասարդ, Մարո Մարգարյանը չչնջաց.

– Անտոն Երվանդովիչի օգնականն է...

Երիտասարդը, չեմքից առաջ չգալով, ասաց.

– Անտոն Երվանդովիչը ցածում՝ մեքենայի մեջ, սպասում է, Զեր վեպը պետք է տաք՝ տանեմ իրեն:

Սեղանիս վրա դրված էր, տվեցի, տարավ: Մեկ ամիս անց հանդիպեցինք: Կարդացել էր:

– Զտապագրելու պատճառ չեմ տեսնում, – ասաց, կանչեց բաժնի վարիչին՝ Սուրեն Ավետիսյանին, և հանձնարարեց իր անունից հրատարակիչներին ասել, որ գրքի տպագրությանը ընթացք տան, ինչը արվեց կայծակի արագությամբ, և չուտով գիրքը հասավ ընթերցողին:

Ինչպե՞ս կարող եմ այս մոռանալ:

Քոչինյանը Հայաստանի Հանրապետության խորհրդային շրջանի ղեկավարներից, կարծում եմ, ամենամատչելին ու ամենամարդամոտն էր: Նա անջնջելի պայծառ հետք է թողել հիշողությանս մեջ իրրև գործիչ և ամենից ավելի՝ իրրև այս հողի ու ջրի հարազատ ծնունդ, նվիրյալ զավակ՝ երկրի և ժողովրդի:

ՍՈՒՐԵՆ ՕՀԱՆՅԱՆ

ՆՐԱ ԽՈՍՔԻՆ ՀԱՎԱՏՈՒՄ ԷԻՆ

Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի քիմիական ֆակուլտետը ավարտելուց հետո ինձ գործուղեցին Կիրովականի քիմիական կոմբինատ՝ որպես ինժեներ-տեխնոլոգ: 1963 թ. ՀԿԿ առաջին քարտուղար Յակով Զարոբյանի աշխատասենյակում առաջին անգամ հանդիպեցի Անտոն Քոչինյանին, երբ որոշել էին ինձ նշանակել քիմկոմբինատի տնօրեն: Մինչև 1969 թ. աշխատեցի տնօրենի պաշտոնում: Այդ ընթացքում քիմկոմբինատը զարգանում էր մեծ թափով: Առաջին անգամ մենք թողարկեցինք արհեստական կորունդի արտադրությունը, որն ամենամեծն էր ԽՍՀՄ-ում: Թողարկեցինք դեցեդեա, չնորհիվ նոր տեխնոլոգիաների՝ ամիակի արտադրությունը հզորացավ 3 անգամ: Անտոն Երվանդովիչը պարբերաբար այցելում էր կոմբինատ սկզբում՝ որպես Նախարարների խորհրդի նախագահ, իսկ 1966 թ.՝ որպես ՀԿԿ առաջին քարտուղար: Քիմիայի զարգացմանը նա առաջնահերթ նշանակություն էր տալիս և ասում էր՝ միայն քիմիան կարող է ոչնչից ստեղծել նյութ, որը Հայաստանի համար շատ կարևոր նշանակություն ունի:

Գերագույն խորհրդի հերթական նիստի ժամանակ, երբ ես արդեն պատգամավոր էի և նախագահության անդամ, քննարկվեց Գուգարքի շրջանային կենտրոնի տեղի հարցը: Առաջարկվում էր կենտրոնը դարձնել Մեղրուտը, սակայն ես՝ համարելով, որ դա նույն Կիրովականն է, առաջարկեցի Համզաչիմանը, որը Հայաստանի խոշոր գյուղերից մեկն էր, ուներ զարգացման հնարավորություն: Նույն կարծիքին էր նաև Իջևանի շրջկոմի առաջին քարտուղար Վլադիմիր Ղալումյանը: Քանի որ Մեղրուտի առաջարկը արված էր եղել Քոչինյանի կողմից, իսկ նա

նիստին չէր մասնակցում, հարցը հանվեց քննարկումից:

Մեկ ամիս անց՝ հերթական նիստի ժամանակ, Քոչինյանը մասնակցեց նիստին, և նորից հարցը քննարկվեց: Նա հանգամանորեն կարողացավ ապացուցել Մեղրուտի առավելությունը կենտրոն դառնալու համար, որից հետո բոլորս եկանք ընդհանուր հայտարարի:

Հիշում եմ, երբ ես Կիրովականի քաղկոմի առաջին քարտուղարն էի, հայրենադարձների կողմից դժգոհություններ կային՝ կապված իրենց կենցաղի հետ: Անտոն Քոչինյանը հերթական այցելության ժամանակ ցանկացավ հանդիպել հայրենադարձների մի խմբի հետ, չնայած նրան, որ նրա շրջապատը խորհուրդ չէր տալիս՝ ասելով, որ բոլորն էլ ապահովված են աշխատանքով, բնակարանով և այլն, բայց նա ստիպեց, որ ամպայման հանդիպի: Հանդիպումը կայացավ «Դիմաց» թաղամասում, հայրենադարձներից մեկի տանը, որտեղ Անտոն Քոչինյանը պատասխանեց նրանց հուզող բոլոր հարցերին, վերջում հանգամանալից բացատրեց հայրենիքի հոգսերն ու դժվարությունները և ասաց, որ չնորհիվ իրենց՝ հզորանում է մեր երկիրը: Պետք էր տեսնել, թե ներկա գտնվողները ինչ հիացմունքով էին լսում իրեն: Բնակարանի տերը հուզմունքով ասաց, որ Քոչինյանի խոսքը լսում էր որպես աղոթք: Հանդիպումն անցավ հիանալի:

Մոսկվայում Պետպլանի աշխատողներն անգամ գիտեին, որ Քոչինյանը հարցերը պատշաճ լուծելու համար հասնում էր մինչև անմիջական կատարողին (գլխավոր մասնագետ, բաժնի աշխատող և այլն) և այդ բանը չէր համարում իր արժանապատվությանը դեմ մի բան: Մի անգամ գնացքով Մոսկվա մեկնելիս Անտոն Քոչինյանին մենք Կիրովականում դիմավորեցինք և իր առաջարկությամբ ճանապարհեցինք մինչև Ալավերդի: Ճրույցի ժամանակ խոսք գնաց Ստալինի մասին, և ինձ շատ հետաքրքրեց՝ հանդիպե՞լ են իրար, ու նա մի դեպք պատմեց:

Երբ իրեն նոր էին նշանակել Նախարարների խորհրդի նախագահ, իրեն և ՀԿԿ առաջին քարտուղար Գրիգոր Հարությունյանին հրավիրել էին Մոսկվա՝ Կենտկոմ: Բանն այն էր, որ

մոտ 100 հազար հայրենադարձված հայերից մի քանի ընտանիքներ դիմել էին Մոսկվա՝ Կոմկուսի Կենտկոմ՝ հետ վերադառնալու խնդրանքով: Քննարկվելու էր հայրենադարձության ընթացքի մասին հարցը: Գիշերը վերջապես նրանց կանչում են Կրեմլ: Այնտեղ Ստալինի անձնական քարտուղարի՝ Պոսկրեբիշևի մոտ նորից երկար սպասելու ժամանակ իմանում են, որ խիստ որոշում է կայացվել՝ անսպասելի հետևանքներով: Վերջապես, երբ հրավիրում են Ստալինի մոտ, տեսնում են՝ երկար սեղանի վերջում Բերիան զեկուցում է, իսկ Ստալինը քայլում է և ծխում իր ծխամորճը: Բերիան, դիմելով Հարությունյանին, վրացերեն ասել է. «Այդ ինչպե՞ս եք վարվում հայրենադարձների հետ, որ նրանք պահանջում են վերադառնալ»: Տիրում է քար լռություն, իսկ Ստալինը, կարծես թե ինքն իր հետ խոսելով, ասում է. «Եթե հավաքեն 100 հազար հոգու և հարցնեն՝ ով է ուզում դրախտ, ով դժոխք, անպայման կգտնվեն մի քանի հոգի, որոնք կգերադասեն դժոխքը»: Բերիան, անմիջապես ըմբռնելով Ստալինի միտքը, իսկույն փոխում է տոնը և ընդունվում է մեղմ որոշում:

Մեր համատեղ աշխատանքի ընթացքում ինձ միշտ զարմացնում էր Քոչինյանի իմացությունը ուզած բնագավառում: Գործի բերումով, երբ անցնում էինք Կիրովականով, Դիլիջանով կամ Ստեփանավանով, նա կարող էր պատմել ամեն մի բլուրի մասին, որտեղ ինչ հանքեր են եղել և կան, որ չրջանում ինչ է մշակվել և մշակվում հիմա: Քոչինյանը մնաց իմ հիշողության մեջ որպես մեծ հայրենասեր, խոշոր ազգային-քաղաքական գործիչ, որի աշխատանքային լուման անգնահատելի է մեր հանրապետության համար:

ԳՐԻԳՈՐ ՀԱՍՐԱԹՅԱՆ

ԽՈՐՀՐԴԱՎՈՐԻ ԲԱՐՁՈՒՆՔՆԵՐՈՒՄ

Անտոն Քոչինյանի հետ մեր համատեղ աշխատանքը միշտ եղել է պաշտոնական հարաբերությունների մեջ, բայց ոչ երբեք մտերիմ: Այս համառոտ գնահատանքի խոսքը մի փորձ է Քոչինյանի վաստակի մասին: Նրա մեջ թերևս կարող են լինել անճշտություններ, որոնք, սակայն, ոչ թե կանխամտածված են, այլ, թերևս, անհատական վերաբերմունքի հետևանք: Արժանահիշատակ ուղի է անցել Անտոն Քոչինյանը՝ կոմերիտմիության չրջկոմի քարտուղարից մինչև երիտասարդության առաջնորդի դիրքը: Այնուհետ՝ Հայաստան երկրի կառավարության նախագահի և ապա՝ Հանրապետության կուսակցության ղեկավարի բարձունքները: Այս վերընթաց պաշտոնավարության մեջ ամենավառ բոնկումը դրսևորել է Նախարարների խորհրդի նախագահ աշխատած ժամանակ: Հենց այդ էլ բավական է նրան համարելու վաստակաչատ պետական գործիչ և հարգանքով հիշելու նրա անձն ու վաստակը: Նախարարների խորհրդի նախագահ աշխատած տարիներին Քոչինյանը երբեք չդարձավ իշխանության տիրակալ, այլ մնաց որպես հայրենի երկրի սպասավոր ու նվիրյալ:

Մեծ է նրա վաստակը երկրի տնտեսական ներուժի զորացման ասպարեզում: Հիշարժան է նրա ծառայությունը հատկապես խոպան տարածքների ու սարալանջերի անտառապատման, անջրդի հողերը ոռոգելի դարձնելու, ճահճապատ հողատարածքների իրացման, ճանապարհաշինության ու լեռնանցքներում թունելների կառուցման բնագավառներում: Մեծ է ու անուրանալի նրա դերը նաև Արփա-Սևան թունելի կառուցման, հատկապես Մոսկվայում դիմաղիր ուժերի հաղթահարման և

աշխատանքներն անխափան շարունակելու գործում: Քոչինյանի գլխավոր արժանիքներից մեկն էլ այն էր, որ նա ուշադիր լսում էր մարդկանց և խոշորածավալ հարցերի լուծման ժամանակ որսում գլխավորն ու կարևորը և պաշտպան կանգնում դրանց իրականացմանը:

Նա իր բնատուր աշխարհընկալման զորության լույսով կարողանում էր առնչվել մարդկային հոգու և խղճի ոլորտներին, որի շնորհիվ էլ ուներ խաղաղասեր, բարեհոգի ու ընդառաջող բնավորություն, պաշտպան էր հայրենիքը զորացնող ու զարդարող ամեն մի փառաբանելի նախաձեռնության: Բավական է հիշել, թե նա 1970 թ. ինչպիսի պատրաստակամությամբ ընդունեց քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի՝ այն ժամանակներում երազանք թվացող առաջարկը Երևանում մետրոպոլիտեն կառուցելու մասին, այն էլ քաղբյուրոյի արգելող պայմանների դեպքում: Նախ միութենական տրանսպորտի շինարարության նախարարի առաջին տեղակալ, իսկ հետագայում նախարար Սասնովին հրավիրեց Երևան, որի այցով փաստորեն լուծվեց երևանյան մետրոպոլիտենի նախագծման թույլտվության հարցը: Ճիշտ է, հարցի դրական լուծման համար այն ժամանակավորապես անվանվեց ստորգետնյա արագընթաց էլեկտրաքարշ:

Երևանում մետրո կառուցելու գաղափարը քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեում ծագեց 1969 թվականին, իսկ նախագծման աշխատանքները սկսվեցին 1970 թվականից: 1971 թվականին արդեն միութենական պետպլանի կողմից հաստատվեց ու ձեռնարկվեց ստորգետնյա արագընթաց էլեկտրաքարշի, բայց իրականում մետրոյի կառուցումը:

Ոչ ոք այնպես պաշտպան չի եղել Երևանյան մետրոպոլիտենի կառուցման գաղափարին, ինչպես Անտոն Քոչինյանն ու Բաղալ Մուրադյանը, որոնք միութենական պետպլանում հիմնավորեցին մետրոպոլիտենի անհրաժեշտությունն ու չահավետությունը: Երբ 1964 թվականին Նախարարների խորհրդում մայրաքաղաքի բնակարանային շինարարության հետագա տեղաբաշխման նախագծի քննարկման ժամանակ որոշ պաշտոնա-

տար անձինք դեմ եղան Նորքի զանգվածի մեծամասշտաբ կառուցապատման առաջարկին, Քոչինյանը, հակառակ բոլոր դիմադիր կարծիքների, զարմանալիորեն արագ կողմնորոշվեց՝ ասելով, որ քաղաքի այդ հատվածը մոտ ապագայում կդառնա մեր մայրաքաղաքի ամենաբարենպաստ բնակատեղին, և շատ չանցած մարդիկ կպայքարեն այնտեղ բնակվելու համար: Եվ հարցը լուծվեց դրականորեն: Առաջին հայացքից նա այն տպավորությունն էր թողնում, որ պարզ անձնավորություն էր, սակայն իրականում բարդ անհատականություն էր, որը շատ ավելի զգալու բան է, քան բացատրելու: Եվ չնայած իր կրթական պաշարների պակասին, օժտված լինելով բնածին ընդունակություններով՝ նա ձեռք էր բերել կիրառական փիլիսոփայության և իմաստնության արժեքավոր հսկայական ներուժ, հարուստ կենսափորձ և դեկավարման հմտություն: Այդ ամենի շնորհիվ նա տարիներ շարունակ անդադար խթանում էր տասնյակ գիտահետազոտական և նախագծային ինստիտուտների և կոնստրուկտորական բյուրոների ստեղծման գործընթացը, նրանցում ներգրավելով հազարավոր տարբեր մասնագիտությունների տեր շնորհաշատ ու տաղանդավոր երիտասարդների, հայ ժողովրդի մտավոր կարողությունները համաշխարհային գիտական մտքին ավելի հաղորդակից դարձնելու և Հայաստան երկրի ապագան, ի վերջո, հենց այդ ուղղությամբ զարգացնելու հեռահար նպատակով:

Իր էությամբ լինելով հայրենասեր ու ազգային գործիչ՝ Քոչինյանը հոգով ու սրտով խրված էր հայոց աշխարհի ու նրա ժողովրդի մեջ, լավատեղյակ էր հայկական իրականության ողջ անցուդարձին:

1971 թվին ժողովրդական վերահսկողության հանրապետական կոմիտեի կողմից զեկուցագիր է նարկայացվել Կենտրոնական կոմիտե, որ Երևանում, պլանավորված գործերից բացի, նաև շատ ուրիշ կառույցներ ու բարեկարգման աշխատանքներ են կատարվել՝ այդ ամենը համարելով որպես պետական միջոցների վատնում և չռայլում: Քոչինյանը բոլորովին այլ մոտեցում ուներ: Հարցի քննարկման հաջորդ օրը նա իր իրավասու ան-

ձանց հրավիրեց իր մոտ և, գնահատելով կատարվածը, նաև պատգամեց այսուհետև ավելին անել, քան արվել է, և ավելի շատ կառուցել, քան կառուցվել է:

Երբ մեծանուն Երվանդ Քոչարը ձեռնամուխ եղավ Վարդան Մամիկոնյանի արձանի ստեղծմանը, Քոչինյանը, անտեսելով քաղաքական արգելքները, տվեց իր համաձայնությունը և մինչև վերջ պաշտպան կանգնեց արձանի ավարտման ու տեղադրման գործին:

1966 թվականին Լեռնային Ղարաբաղից 136 ընտանիքներ դիմում էին ներկայացրել՝ Երևանում մշտական բնակություն հաստատելու խնդրանքով: Հարցի քննարկման ժամանակ համընդհանուր կարծիք եղավ բավարարել դիմորդների խնդրանքը, սակայն Քոչինյանը խստահայաց մերժեց այդ կարծիքը՝ ասելով. «Ղարաբաղը չի կարելի դատարկել, այլապես կդառնա Նախիջևանին բախտակից»:

Նա իրապես մտահոգ էր Ղարաբաղի ճակատագրով, և չնայած ապարդյուն եղավ վերին իշխանություններին ներկայացրած պաշտոնական պահանջը Ղարաբաղը Հայաստանին միավորելու մասին, բայց և այնպես քաղաքական բարձրաղիր ատյաններում թարմացավ ու վերականգնվեց ղարաբաղյան մշտարթուն հարցը:

Անտոն Քոչինյանն իր էությամբ իրոք որ ազգային գործիչ էր և բնավորությամբ չափավոր, համեստ, ոչ թե ինքնասիրահար ու ցուցամոլ, այլ ժողովրդական խառնվածքի տեր, գործնական, որին բնորոշ էր նաև երախտագիտությունը: Նա մտադիր էր Մծբնակաբերդի զբոսայգին և մայրաքաղաքի փողոցներից մեկը կոչել Կենտրոնական Կոմիտեի նախկին առաջին քարտուղար Գրիգոր Հարությունյանի անունով: Անտոն Քոչինյանը՝ որպես Նախարարների խորհրդի նախագահ, պարզապես գտնված անձնավորություն էր, անփոխարինելի, և ընդհանուր գործը շատ կչահեր, եթե չձգտեր դառնալ կուսակցության Կենտրոնական Կոմիտեի առաջին քարտուղար: Եվ դա ամենից առաջ ոչ թե գործի ծանրությունը, այլ երկրի բարոյաքաղաքական վիճակը կայուն պահելու առումով:

1971-1972 թվականներից սկսած ժամանակը գործում էր ի վնաս Քոչինյանի. անկասկիածորեն աճում էր ընդդիմադիր ուժերի հակամարտությունը՝ ապագան դարձնելով չարագույժ, բայց նա անտեսեց իրեն սպառնացող վտանգը և շարունակեց աշխատել «ընդդիմադիրների» հետ, լիահույս, որ ժամանակի մեջ կմաքրվի նրանց հոգու մաղձը, մոռանալով, որ բարությունը պայքարի ելած ուժերի կողմից հաճախ գնահատվում է որպես արատ ու թուլություն, քանզի այդ ուժերն ամենևին էլ համակված չէին ազգի մտքի ու հոգու վեհացման, ազնիվ ու առաքինի կյանքի հաստատման մտահոգությամբ, նրանք պարզապես ախտահարված էին վայելքամոլությամբ և փառամոլությամբ: Նրա կողմից թույլ տրված վրիպումները, թերություններն ու սխալները տեղի ունեցան ոչ այնքան իր, որքան նրա քաղաքական ու պետական վարչակազմի մարդկանց մեղքով, որոնք նրան փաստորեն դրել էին երերուն վիճակի մեջ, որոշ չափով զրկել իրեն հատուկ վճռականությունից: Նա միայն ուշ զգաց, որ ամեն ինչ արդեն սահում է դեպի անհայտություն, որն էլ ավելի վերափոխեց նրա ներքնաշխարհը. Քոչինյանն այլևս այն չէր, ինչ եղել էր:

Խախտվեց տասնյակ տարիների աշխատանքով ու տառապանքով վաստակած հեղինակությունը: Վաթսուն տարեկան հասակում փոքրոգիորեն նրան արդեն զրկեցին աշխատելու իրավունքից, որպեսզի նա չհասներ այնպիսի բարձունքների, որոնք գործչին դարձնում են ժամանակի խորհրդանիշը: Այս բոլորով Անտոն Քոչինյանն արժանավոր, լայն ճանաչում ունեցող պետական գործիչ էր՝ ճանաչված, թե՛ ամբողջ երկրում և թե՛ աշխարհասփյուռ հայության մեջ:

Անուրանալի է նրա ծանրակշիռ վաստակը հայ շինականի կյանքի ու կենցաղի և տնտեսական իրավիճակի վերափոխման գործում: Նա որդիական սեր էր տածում գյուղի և նրա մարդկանց նկատմամբ, ապրում էր բոլորի հոգսերով և հարազատի նման պաշտպանում յուրաքանչյուրի շահերը: Նա զարգացրեց ու առաջ մղեց հողագործ մարդկանց կենցաղավարության կուլտուրան, քաղաքակիրթ կյանք վարելու նրանց հայացքներն ու

նյութական միջոցները: Նրա վարած քաղաքականության շնորհիվ Հայաստան երկրի գյուղերում դժվար է գտնել մեկին, որ Քոչինյանի բարյացակամ հովանու ներքո կառուցած ու տեր դարձած չլինի քարակերտ ու հարմարավետ թիթեղածածկ տան:

Հայ չինականը երբեք չի մոռանա նրա այս փառաբանելի ծառայությունը: Եվ իրոք, նա հայրենիքի նվիրյալն էր և ոչ թե իշխող քաղաքականության կույր սիրահարը:

Խաղաղասեր էր նա և հարգալից մարդկանց նկատմամբ: Վերամբարձ չէր խոսքն ու կեցվածքը, օժտված էր իրեն դիմացինից վեր չդասելու բնատուր խոհեմությամբ: Նա մարդկանց հետ շփվելիս երբեք չէր ցուցադրում սեփական անձը: Ահա թե ինչու չափազանց դյուրին ու հաճելի էր նրա հետ աշխատելը: Մենք բոլորս նրա խղճի հյուրընկալն էինք՝ վայելելով նրա՝ դեպի իրեն ձգող ու մերձեցնող հմայքը:

Շատերն են ցանկանում ու երազում լինել այդպիսին, բայց քչերին է վիճակված սավառնել խորհրդավորի բարձունքներում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ 3
ՆԱ ԿԱՌՈՒՑՈՒՄ ԷՐ ԻՐ ԵՐԿԻՐԸ 73

ԱՌԱՋԻՆ ԳԻՐՔ 77
ԵՐԿՐՈՐԴ ԳԻՐՔ 179
ԵՐՐՈՐԴ ԳԻՐՔ 345
ՉՈՐՐՈՐԴ ԳԻՐՔ 349
Գյուղատնտեսություն 349
ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳԻՐՔ 383
Անաստաս Միկոյանի մասին. 1982 թ., նոյեմբեր 383
ՎԵՑԵՐՈՐԴ ԳԻՐՔ 405
Երկու խոսք Լևոնային Ղարաբաղի ինքնավար մարզի և Նախիջևանի ինքնավար հանրապետության մասին 405

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑՆԵՐԻ ՀՈՒՇԵՐ 429
ՎԱՐԱԶԴԱՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ. *Հավերժի ճամբորդը* 429
ՎԼԱԴԻՄԻՐ ՂԱԼՈՒՄՅԱՆ. *Անտոն Քոչինյանը ինչպես որ կար* 438
ԵՂԻՇԵ ԱՍՄԱՏՐՅԱՆ. *Ժողովրդականություն վայելող ղեկավարը* 448
ՀՐԱՆՏ ՈՍԿԱՆՅԱՆ. *Իր հողի ու ժողովրդի նվիրյալը* 458
ԱԼԵՔՍԱՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ. *Ճշմարտությունը սա է* 463
СУРЕН АРУТЮНЯН. *Большой хозяин армянского дома* 470
ՎԼԱԴԻՄԻՐ ՄՈՎՍԻՍՅԱՆ. *Նա իր մեջ կրում էր մարդկային վսեմ արժանիքներ* 479
ԼՅՈՒԴՎԻԳ ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ. *Մեր պարտքն է չմոռանալ նրա բարի հիշատակը* 486
ՍՏԵՓԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ. *Նրա հիշատակի հանդեպ ժամանակն անզոր է* 491
ՎԼԱԴԻՄԻՐ ԴԱՐԲԻՆՅԱՆ. *Անբասիր, ազնիվ ու չիտակ այրը* 501
ԷԴՈՒԱՐԴ ՄԻՐԶՈՅԱՆ. *Մեծ հայրենասերը* 506
ԷԴՈՒԱՐԴ ԻՍԱԲԵԿՅԱՆ. *Իր հողի իսկական ծնունդը* 508
ՄՈՒՐԱԴ ՄՈՒՐԱԴՅԱՆ. *Հեռատես և իմաստուն մարդը* 513
ԼԵՎՈՆ ՀԱԽՎԵՐԴՅԱՆ. *Տարիների հեռվից այն, ինչ անհնար չէ մոռանալ* 518
ՋԻՄ ԹՈՐՈՍՅԱՆ. *Ազգային մշակույթի ջատագովը* 526
ԴՄԻՏՐԻ ԱԴԱԲԱՇՅԱՆ. *Հետևողական գործիչը* 533
ԱՆԱՀԻՏ ՍԱՀԻՆՅԱՆ. *Նվիրյալ զավակը երկրի և ժողովրդի* 538
ՍՈՒՐԵՆ ՕՀԱՆՅԱՆ. *Նրա խոսքին հավատում էին* 542
ԳՐԻԳՈՐ ՀԱՍՐԱԹՅԱՆ. *Խորհրդավորի բարձունքներում* 545

ԱՆՏՈՆ ԵՐՎԱՆԴԻ ՔՈՉԻՆՅԱՆ

ԱՆԱՎԱՐՏ ՀՈՒՇԵՐ

АНТОН ЕРВАНДОВИЧ КОЧИНЯН

НЕОКОНЧЕННЫЕ ВОСПОМИНАНИЯ

Սրբագրիչ՝ Վահանդուխտ Դերձյան
Համ. չարվածքը՝ Մարկենա Բաբայանի
Համ. ձևավորումը՝ Աննա Աղուզումցյանի

Ստորագրված է տպագրության՝ 20.09.2008 թ.:
Չափս՝ 60x84 1/16: Թուղթ՝ օֆսեթ: Տպագրություն՝ օֆսեթ:
Տպագր. 34.5 մամուլ + 56 էջ ներդիր:
Տպաքանակ՝ 1000: Պատվեր՝ 74:

ԵՊՀ տպագրատուն, Երևան, Աբովյան 52